

**Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՄԱՏԱՆԱԴԱՐԱՆ**

**ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ  
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԵՐԵՎԱՆ 2014

Հայ միջնադարյան գրականության մեջ հունական առասպելների հիշատակումների և վերապատումների հաշվառումը որևէ էական նորություն չի բերում բուն հունական առասպելաբանությանը, մանավանդ որ դրանց զգալի մասն ավանդված է թարգմանություններում, որոնցից էլ սերում են ինքնուրույն երկերում հիշատակումների և վերապատումների մեծ մասը: Այս գրքի նպատակն այլ է՝ հասկանալ, թե որքան էր այդ առասպելաբանությունները ծանոթ միջնադարյան հայ ընթերցողին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	8
ԱՌԱՋԱԲԱՆ .....	10
1. Առասպելները հին Հունաստանում.....	10
2. Հին հունական առասպելները քրիստոնյա հեղինակների մոտ .....	12
3. Հին հունական առասպելները հայ հին մատենագրության մեջ .....	14
4. Աստվածերի և առասպելների այլ գործող անձանց անունները.....	17
ԲՆԱԳՐԵՐ .....	38
1. Հարյուրաձեռքները, տիտանները, զիզանտները, Կերբերոսը, Զիմերան և Գորգոնները .....	38
2. Ուրանոսի ամորձատումը և Ափրոդիտեի ծնունդը .....	39
3. Կիկլոպներ.....	40
4. Ուրանոսի և Գեայի զավակները .....	41
5. Ջևսի ծնունդը .....	42
6. Ջևսի գերեզմանը Կրետեում.....	46
7. Ատլաս .....	48
8. Կենտավրոսներ .....	49
9. Առասպելական երաժիշտներ .....	49
10. Թամիրիս երաժիշտը.....	51
11. Հերայի կրած պատիժը, Հեփեստոսի հաշմվելը, Ափրոդիտե և Արես .....	52
12. Աթենայի ծնունդը .....	56
13. Էլևսիսի հիմնումն Ատտիկեում .....	58
14. Լետո և Տիտիոս .....	59
15. Ապոլլոն և Գափսե .....	60
16. Արեոպագոսի դատարանը.....	62
17. Օրիոն.....	63
18. Դեմետեր, Պերսեփոնե և Տրիպտոլեմոս .....	64
19. Ջևս և Պերսեփոնե-Փերեփատտե .....	67
20. Գիզանտների ապստամբությունն աստվածների դեմ .....	67
21. Պրոմեթևս և Հեփեստոս .....	69
22. Ջրհեղեղ և Գեկալիոն .....	73
23. Գրեկներ և հելլենների անվան ծագումը .....	74
24. Իոն և հույների անվան ծագումը.....	76
25. Օտոս և Էփիալտես .....	76
26. Փրիքսոսի և Հելլեի փախուստն Ինոյից .....	80
27. Կորնթոսի հիմնումը .....	80
28. Մալմոնես և Տիրո .....	81
29. Մելամպուս գուշակը.....	82
30. Արգոնավորդներ .....	83
31. Պելիասի սպանությունը Մեդեայի ձեռքով.....	84

32. Մեդեայի վրիժառությունը Յասոնից.....	86
33. Մեդեայի որդի Մեդուսը .....	87
34. Սիկիոնի առաջին թագավորները .....	88
35. Արգոսի առաջին թագավորները .....	90
36. Ջևս և Ինաքոսի դուստր Իո.....	92
37. Ասորեստանի թագավոր Բելուսը.....	94
38. Դանաոսի դուստրերն ու Եգիպտոսի որդիները .....	94
39. Բելլերոփոնտես և Բիմերա.....	96
40. Ջևս և Դանայե. Պերսևսի ծնունդը.....	99
41. Պերսևս և Գորգոն Մեդուսա.....	100
42. Եվրիսթևսի թագավորելը Սիկենեում .....	101
43. Հերակլեսի ծնունդը .....	101
44. Հերակլեսը և Թեսպիոսի հիսուն դուստրերը.....	102
45. Հերակլեսի խելագարությունը .....	103
46. Հերակլես և Նեմեական առյուծ .....	104
47. Հերակլես և Լերնեյան հիդրա .....	105
48. Դիոմեդեսի զամբիկները.....	106
49. Ամազոններ .....	106
50. Գերիոնը և Հերակլեսի սյուները .....	112
51. Հերակլեսի մենամարտն Անտեոսի հետ.....	114
52. Հերակլես և Բուսիրիս.....	115
53. Թեսևսի և Պիրիթոսի արկածները.....	116
54. Կերբերոս և Հերակլես.....	117
55. Կերկոպներ և Հերակլես.....	118
56. Հերակլեսն ավերում է Տրոյան.....	119
57. Հերակլես և Ավգե, Տելեփոսի ծնունդը .....	119
58. Հերակլեսը և Թիոդամասի եզները.....	120
59. Հերակլես և Դեյանիրա. Հերակլեսի վախճանը .....	121
60. Հերակլեսի աստվածացումը.....	124
61. Հերակլյանների վերադարձը Պելոպոննեսոս և Արիստոդեմոսի շանթահարումը .....	125
62. Պելոպոննեսոսի քաղաքների բաժանումը Հերակլյանների միջև .....	127
63. Կադմոսի ծնունդը. փյունիկյան տառերի ներմուծումը Հունաստան .....	128
64. Եվրոպե և Ջևս .....	131
65. Սարպեդոնը Լիկիայում .....	131
66. Մինոսն ու Հռադամանթիսը` դատավորներ.....	132
67. Պասիփայեն և ցուլը. Մինոտավրոսի ծնունդը.....	134
68. Թեբեի հիմնումը.....	137
69. Կադմոս և սպարտոսներ.....	138
70. Ջևս և Սեմելե. Դիոնիսոսի ծնունդը .....	140
71. Դիոնիսոսի դաստիարակությունը .....	142
72. Աթամասի և Ինոյի խելագարությունը.....	143
73. Դիոնիսոսը և ողբերգությունը.....	144
74. Ակտեոն .....	146

75. Դիոնիսոսն ու խաղողի որթը .....	147
76. Դիոնիսոսի պատառոտվելը տիտաններից .....	148
77. Դիոնիսոս և Պենթևս .....	151
78. Դիոնիսոսի աստվածացումը .....	151
79. Լաբդակոսն ու Լիկոսը Թեբեի գահին .....	151
80. Չեթոս և Ամփիոն, Արիոն երաժիշտը.....	152
81. Թեբեի պարսպապատումը.....	153
82. Նիոբե և Լետո .....	155
83. Թեբե ուղարկված Սփինքսը .....	155
84. Էդիպոսի ողբերգությունը.....	156
85. Արգոսի պատերազմը Թեբեի հետ .....	157
86. Գուշակ Տիրեսիասի կերպարանափոխությունը .....	158
87. Թեբեի պատերազմի մանրամասներ.....	158
88. Էտեոկլեսի և Պոլիմեդեսի մենամարտը .....	160
89. Ամփիարասոս և Ադրաստոս .....	160
90. Էպիգոնները Թեբեի դեմ .....	161
91. Չևսը և Կալլիստոն. Արկասի ծնունդը .....	161
92. Ատալանտե և Հիպպոմենես .....	161
93. Ասկլեպիոսի շանթահարումը.....	162
94. Չևս և Լեդա.....	162
95. Դարդանիա և Տրոյա.....	163
96. Գանիմեդեսի առևանգումը.....	164
97. Իլիոնի հիմնումն ու Պրիամոսի թագավորելը .....	167
98. Էակոս .....	168
99. Աքիլլեսի ծնունդն ու դաստիարակությունը.....	168
100. Կեկրոպս .....	170
101. Հունական գրերի վերագրումը Կեկրոպսին .....	173
102. Փենիքսի կուրացումը .....	174
103. Աթենայի և Պոսեյդոնի մրցակցությունն Աթենքի համար .....	174
104. Կեկրոպսի որդի Էրիսիքթոնը.....	175
105. Փայեթոն .....	175
106. Միռաս, Ադոնիսի ծնունդը.....	176
107. Ատթիս և Ատտիկեի անվանակոչումը .....	178
108. Կրանասի հետնորդներն Աթենքի գահին .....	179
109. Էրիքթոնիոսի ծնունդը .....	180
110. Պանդիոնի դուստրերը, Տրիպտոլեմոս .....	181
111. Իկարիոս .....	182
112. Պրոկնեի և Փիլոմելայի ողբերգությունը.....	183
113. Էրեքթևսի թագավորելը. Օրիթիա և Բորեաս .....	184
114. Եվմոլպոս.....	185
115. Աթենքի յոթներորդից տասներորդ թագավորները .....	186
116. Թեսևսն Ատտիկեում .....	187
117. Դեդալոս և Իկարոս .....	188

118. Թեսեսն ու Մարաթոնայն ցուրը .....	190
119. Մեղեայի վտարումն Աթենքից .....	190
120. Թեսես և Արիադնե .....	191
121. Դեդալոսի փախուստը և Մինոսի սպանությունը .....	191
122. Փեդրա և Հիպպոլիտոս .....	192
123. Իքսիոն և Հերա .....	192
124. Կենտավրոսների և լապիթեսների կռիվը .....	193
125. Թեսեսն առևանգում է Հեղինեին .....	194
126. Թեսեսի և Պիրիթոսի արկածները Հադեսի թագավորությունում .....	194
127. Տանտալոսի պատիժը .....	195
128. Պելոպսի փղոսկրյա ուսը .....	196
129. Պելոպսի ամուսնությունն ու թագավորելը. Պելոպյաններ .....	198
130. Ատրևսի և Թիեստեսի թագավորելը .....	200
131. Ագամեմնոն և Մենելաոս. Օրեստեսի ծնունդը .....	200
132. Պարիսն առևանգում է Հեղինեին .....	201
133. Հեղինեն Պրոտևսի մոտ. կերպարանափոխվող Պրոտևսը և նրա որդիները .....	202
134. Ոդիսևս և Պալամեդես .....	203
135. Իփիգենիան Ավլիսում և Տավրիսում .....	205
136. Ափրոդիտեի վիրավորվելը .....	209
137. Դիոմեդեսի վիրավորվելը Պարիսի նետով .....	209
138. Պատրոկլոսի սպանվելը .....	212
139. Աքիլեսը և Սկամանդրոս գետը .....	213
140. Հեկտորի սպանվելը .....	215
141. Աքիլես և Թերսիտես .....	215
142. Մեմնոնը Տրոյայի պաշտպան. Չարմայր .....	217
143. Տրոյայի առումը. Պոլիքսենե .....	222
144. Օրեստեսի թագավորելը Միկենեում և Պյուռոսի սպանությունը .....	223
145. Կիկլոպների կղզին .....	224
146. Ոդիսևս և Պոլիփեմոս .....	225
147. Կիրկեի կղզին .....	226
148. Սիրեններ .....	227
149. Սկիլլա և Քարիբդիս .....	228
150. Կալիպսոյի կղզում .....	230
151. Պենելոպեի փեսացուները .....	231
152. Պանի ծնունդը .....	231
153. Հռոմի հիմնադրումը .....	232
154. Նարկիսոս .....	238
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	239
1. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ .....	239
1.1. Աստվածները և նրանց հատկանիշները .....	239
1.1.1. Չևս-Արամազդ .....	239

1.1.2. Կրոնոս-Բել-Ներրովթ .....	240
1.1.3. Հերակլես .....	241
1.1.4. Ապոլլոն .....	242
1.1.5. Ասկլեպիոս .....	242
1.1.6. Անահիտ .....	243
1.1.7. Տարբեր աստվածներ .....	244
1.2. Պատկերներ, բազիլիսներ, մեհյաններ .....	246
1.3 Ծեսեր .....	256
1.4 Եզովպոսյան առակներ.....	262
1.5. Աստվածները որպես բնական երևույթների և եղանակի այլաբանություն .....	266
1.6. Յոթնյակ Աթենան .....	273
1.7. Ջևա Պիկոս .....	274
2. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ ԻԼԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ .....	275
2.1 Հոմերոսի «Իլիական»-ի դրվագներ քերականական և այլ երկերում .....	281
3. ՕԼԻՄՊՈՍԸ ՑՆՑԵԼԸ .....	286
4. ԿԱՆԴԱՎԼԷՍ ԵՎ ԳԻԳԵՍ, ՄԻԴԱՍ, ԱԲԱՐԻՍ .....	287
5. ԱԼԿԻՈՆ .....	289
6. ՀԱՅԿԻ ԹՈՌ ԿԱԴՄՈՍԸ.....	290
ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ .....	294

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հին հունական առասպելաբանությունը հին հույների կերտած առասպելների համակարգն է իրենց աստվածների, հերոսների, աշխարհի ստեղծման, ինչպես նաև կրոնական արարողությունների ու ծեսերի ակունքների մասին. այն մաս էր հին հունական հեթանոսական կրոնի:

Առասպելաբանությունը, որ սկզբնապես բանահյուսության նյութ էր կազմում, մ.թ.ա. 8-րդ դարից սկսած մարմնավորվել է ամենատարբեր գրական ստեղծագործություններում, ինչպես նաև կերպարվեստի գործերում, հիմնականում՝ պատկերազարդ խեցեղենում: Հելլենիզմի դարաշրջանում գրվել են նաև առասպելների ամբողջական համակարգված ժողովածուներ, որոնցից միայն մեկը՝ Կեղծ-Ապոլլոդորոսի «Դիցաբանական գրադարան»-ը (մ.թ. 1-ին կամ 2-րդ դ.) ամենից ամբողջական և դասակարգված ձևով ներկայացնում է ողջ առասպելաբանությունը:

Հունաստանը գրավելով (մ.թ.ա. 146 թ. Կորնթոսի ճակատամարտից հետո)՝ Հռոմը սկսեց ենթարկվել նրա համակողմանի մշակութային ազդեցությունը, յուրացնել նաև հույների առասպելների համակարգը և այն միաձուլել սեփական ոչ այնքան հարուստ առասպելաբանությանը: Ի հայտ եկան սինկրետիկ աստվածություններ. կարևորագույն հռոմեական աստվածներն ընդունեցին համապատասխան հունական աստվածների բնորոշ գծերը. այսպես, գերագույն աստված Յուպիտերը նույնացվեց Զևսի հետ, իսկ «Անհաղթ Արևի» (Sol Invictus) պաշտամունքը՝ Ապոլլոնի պաշտամունքի հետ. հետևաբար Ապոլլոնը նույնացվում էր նաև հունական Հելիոսի հետ: Հռոմեական պանթեոնն իր մեջ ներառեց նաև որոշ արևելյան աստվածությունների, օրինակ՝ Միթրայի (Միհրի) պաշտամունքը:

Հունական առասպելների մեջ կարևորագույն Իլիական պատերազմն ու հարակից իրադարձությունները մեծ հետաքրքրություն էին վայելում Հռոմում, քանի որ Տրոյայի հերոս էնեասը գնացել է Իտալիա, և նրա հետնորդները դարձել են Հռոմի առասպելական հիմնադիրները, ինչպես պատմում է Վերգիլիոսն «Էնեական»-ում (որի երկրորդ գիրքը պարունակում է Տրոյայի գրավման պատմությունը):

Դժվար է գերագնահատել հին հունական առասպելների դերը համաշխարհային մշակույթի գանձարանում: Բյուզանդիայում, ինչպես նաև նրա մշակութային ոլորտում գտնվող քրիստոնյա Արևելքում, հունական առասպելաբանությունն ու գրականությունը շարունակում էին ընկալվել որպես հունական դասական ժառանգություն, և դրանց ուսումնասիրությունը երբեք չի դադարել: Արևմտյան Եվրոպայում Վերածնունդը հենց անտիկ, հունահռոմեական մշակույթի վերածնունդն էր: Օվիդիոսի պոեզիան մեծ ազդեցություն էր գործում բանաստեղծների ու թատերագիրների երևակայության վրա, նկարիչները սովորական աստվածաշնչյան թեմաներին զուգահեռ պատկերման նյութ էին դարձրել հեթանոսական սյուժեները: Հունական առասպելների հանդեպ հետաքրքրությունը հարատևել է նաև նոր ժամանակներում:

Հունական առասպելներն ինչ-որ չափով ծանոթ էին հայ միջնադարյան մատենագիրներին, հիմնականում՝ ուշ անտիկ և վաղ քրիստոնյա հույն հեղինակների թարգմանություն միջոցով, և որոշ տարածում էին գտել նաև ինքնուրույն ստեղծագործություններում, բայց այդ ծանոթությունը երբեք խորը և ճշգրիտ չի եղել: Ինչպես թարգմանիչները, այնպես էլ հայ հեղինակները, նաև հետագա գրիչները, առասպելների համառոտ պատումները, հիշատակումները կամ լոկ դրանց մասին ակնարկները թարգմանելիս, վերապատմելիս և ընդօրինակելիս, հաճախ ճիշտ են վերարտադրել պատմություններն ու դրանցում հանդիպող ծանոթ և անծանոթ անունները, բայց երբեմն էլ սխալվել են՝ հիմնականում աղավաղելով քիչ ծանոթ անունները կամ նույնիսկ պատմությունների առանձին մանրամասներ: Սույն գրքում հավաքված նյութը վկայում է, որ



միջնադարյան հայ ընթերցողը հանդիպում էր հին հունական առասպելական շարքի ամենատարբեր օղակների նմուշների, որոնք միշտ էլ, որ նրան ծանոթ ու հասկանալի էին:

Քանի որ հայ հին գրականության մերօրյա ընթերցողին էլ հունական առասպելների վերապատումներից կամ հիշատակումներից շատերը կարող են բացատրություն արժանի թվալ, մենք հրատարակված թարգմանական և ինքնուրույն բնագրերից քաղել ենք դրանք պարունակող հատվածները և ներկայացրել հին հունական գրականության մեջ դրանց հայտնի պատումների համեմատությամբ ու զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ: Թարգմանական երկերի պարագայում բերել ենք նաև հատվածների հունարեն սկզբնագրերը (եթե դրանք պահպանվել են): Հունարեն հատվածների և հայերեն թարգմանության միջև փոքր տարբերությունների դեպքում աշխարհաբար թարգմանության մեջ անդրադարձել ենք դրանց՝ հունարենի համարժեքները բերելով կոր փակագծերում: Եթե տարբերություններն ավելի զգալի են, հունարեն հատվածները ներկայացրել ենք առանձին, անմիջապես հայերեն հատվածներից հետո («Համառ.» նշումով)՝ դրանք ևս ուղեկցելով աշխարհաբար թարգմանությամբ: Աշխարհաբար բոլոր թարգմանությունները մերն են: Դրանց մեջ երբեմն ուղղանկյուն փակագծերով բառեր ենք ավելացրել՝ բնագիրն ավելի հասկանալի դարձնելու համար:

Հավաքած նյութը խմբավորել ենք ըստ 154 համարակալված դրվագների. յուրաքանչյուր դրվագ պարունակում է մեկ կամ մի քանի քաղվածք, որոնք ծավալուն չեն. մեկ-երկու նախադասություն, երբեմն՝ թերի նախադասություն, իսկ Գրիգոր Նազիանզացու ճառերում հանդիպում են մեկ բառից բաղկացած ակնարկներ: Մի քիչ ավելի երկար են Կեղծ-Նոննոսի հատվածները:

Դրվագները դասավորել ենք հիմնականում Ապոլլոդորոսի «Դիցաբանական գրադարան»-ում առասպելների դասավորությանը համընթաց, ուստի առաջին դրվագը նվիրված է Ուրանոսի և Գեայի զավակներին, իսկ նախավերջինը՝ Հռոմի հիմնադրմանը: Միայն մեկ՝ Նարկիսոսի առասպելը տեղ չի գտել Ապոլլոդորոսի համակարգում, ուստի այն գետեղել ենք վերջում:

Յուրաքանչյուր դրվագ ունի նախաբան, որում համառոտ շարադրված է հունական առասպելի դասական տարբերակը՝ Ապոլլոդորոսի համապատասխան գլխի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ աղբյուրների հիշատակությամբ:

Դրվագների ներսում քաղվածքները դասավորել ենք հնարավորինս ժամանակագրական կարգով, սակայն միմյանցից բացահայտ ազդված հատվածներն անմիջապես հաջորդում են միմյանց:

Աստվածներին, նրանց պատկերներին, նրանց հետ առնչվող ծեսերին և այլ հարակից հարցերի նվիրված նյութերը գետեղել ենք հավելվածներում, որոնցում տեղ ենք հատկացրել նաև Իլիական պատերազմի ամբողջական պատումներին, քանի որ դրանք չեն համապատասխանում գրքի՝ ավելի փոքր դրվագների սկզբունքով կառուցված համակարգին:

## ԱՌԱՋԱԲԱՆ

### 1. Առասպելները հին Հունաստանում

Առասպելներն ու լեգենդները հին Հունաստանում ամփոփում էին մարդկանց հնագույն պատկերացումներն աշխարհի ստեղծման և իրենց երկրի ծագման, նախնիների հերոսական անցյալի մասին. դրանք իրական պատմության արժեք ունեին: Հերոսական անցյալի մասին պատմությունները հունական քաղաքակրթության բրոնզեդարյան շրջանի հեռավոր արձագանք են: Դա Միկենյան Հունաստանի քաղաքակրթությունն էր (մոտ մ.թ.ա. 1600–1100), որը կործանվեց այսպես կոչված «դորիական նվաճման» հետևանքով. այդպես են տասնիններորդ դարի սկզբից ի վեր պատմագիտության մեջ անվանում հունական ցեղերի այն տեղաշարժերը, որոնց արդյունքում Հունաստանի արևմուտքում փոքրիկ Դորիս գավառի բնակչությունը գրավեց Պելոպոննեսոսի զգալի մասն ու նրանից հարավ ընկած կղզիները, և ձևավորվեց դասական շրջանի Հունաստանի բարբառային ու մշակութային քարտեզը: «Դորիական նվաճման» առասպելական մարմնավորումը Պելոպոննեսոսից վտարված՝ Հերակլեսի հետագա սերունդների՝ Հերակլիդների կամ Հերակլյանների վերադարձն է (հմտ. դրվագ 61):

Բանավոր ավանդության մեջ եղած՝ հաճախ միմյանց հակասող առասպելների զանգվածն առաջին անգամ համակարգված ձևով արտացոլվել է մոտ մ.թ.ա. 8–7-րդ դարերում՝ Հոմերոսի պոեմներում ու Հեսիոդոսի «Թեոգոնիայում» (քառույց աստվածների ծնունդը՝ կառուցված ծննդաբանական սկզբունքով, և տիեզերքի վրա նրանց իշխանության հաստատումը). համակարգումն ավարտին են հասցրել մ.թ.ա. 6–5-րդ դարերի պատմիչ-առասպելագիրները:

Հին էպոսը չի սպառվում «Իլիականով» և «Ոդիսականով». առաջինն արտացոլում է Տրոյական պատերազմի վերջին՝ տասներորդ տարվա լույսի քանի օրվա իրադարձությունները, երկրորդը նկարագրում է Տրոյայի պատերազմին մասնակցած հույն հերոսներից միայն մեկին՝ Ոդիսևսի տունդարձը, չնայած երկու պոեմն էլ տրոյական առասպելի շատ ավելի լայն համայնապատկեր են ներկայացնում, և նրանցում առկա, իսկ երբեմն սոսկ ակնարկված են բազում հարակից պատմություններ: Հոմերոսի օրինակը ոգեշնչել է հաջորդ դարում ապրող պոետներին՝ գրելու տրոյական առասպելի՝ Հոմերոսի մոտ չարտացոլված դրվագների մասին և լրացնելու այդ բացը, և ի հայտ է եկել Հոմերոսի գրվածքներին ասես իբրև շրջանակ ծառայող էպիկական՝ այսպես կոչված «կիկլիկ» պոեմների շարքը (հունարեն κύκλος – «շրջանակ» բառից), որ պատմում էր ողջ Տրոյական պատերազմի պատմությունը: Դրանք, «Իլիականի» և «Ոդիսականի» նման, բանահյուսական էպիկական երգերի վրա հիմնված գրական վերամշակումներ են, սակայն գեղարվեստական առումով գիշում են Հոմերոսին և այդ պատճառով պահպանվել են միայն ոմն Պրոկլոսի կազմած համառոտ ամփոփումների կազմում:

Իրենց պատմիչ համարող վաղագույն արձակագիր-առասպելագիրներից՝ այսպես կոչված «լոգոգրափոսներից» (λογόγραφοι) ոմանք սահմանափակվում էին որոշակի գավառի տեղական պատմությամբ, մյուսներն աշխատում էին իրենց երկերում ընդգրկել հունական աշխարհի տարբեր շրջաններ: Առասպելը նրանց համար իրական պատմություն էր: Թեպետ նրանք քիչ էին հոգում իրենց պատմածի երբեմն հրաշապատում բնույթի մասին, սակայն մեծ կարևորություն էին տալիս ժամանակագրությանը՝ հեսիոդոսյան ոգով մշակելով և զարգացնելով հերոսների ծննդաբանությունը, հարթելով հակասություններն ու կապակցված պատմումներ շարադրելով: Սրանով նրանք դառնում էին էպիկական պոեզիայի ժառանգներ:

Առասպելական պատմումների բյուրեղացմանը նպաստել են նաև մ.թ.ա. 5-րդ դարի մեծ ողբերգիկներ Էսքիլոսը (մ.թ.ա. մոտ. 525/524–456/455 թթ.), Սոփոկլեսը (մ.թ.ա. մոտ. 497/496–406/405 թթ.) և Եվրիպիդեսը (մ.թ.ա. մոտ. 480–406 թթ.), որոնք մշակել են հերոսական թեմա-

ները՝ Հատկապես Արգոսի ու Թեբեի իշխող ընտանիքներին և Տրոյայի պատերազմին վերաբերող: Նրանք երբեմն փոփոխություններ են մտցրել ավանդական սյուժեների մեջ՝ իրենց նորամուծություններով նպաստելով ավանդույթյան զարգացմանը:

Հելլենիստական և հռոմեական դարաշրջաններում գիտելիքների զարգացմանը զուգընթաց պարզունակ հավատն առասպելների հավաստիություն հանդեպ նվազել է, ի հայտ են եկել քննադատներ<sup>1</sup>. առասպելները դիտվում էին որպես այլաբանություն<sup>2</sup>, աստիճանաբար վերածվում էին գեղարվեստական թեմաների գանձարանի և գնահատելի դառնում զուտ իրենց էսթետիկական արժանիքների համար: Հելլենիստական առասպելագիրները քննադատական վերաբերմունք էին ցուցաբերում առասպելների հանդեպ և առասպելագրությունը պատմությունից զատ բնագավառ համարում: Առանձին առասպելներ կամ ողջ շարքեր կազմում էին գրական ստեղծագործությունների սյուժե ու արտացոլվում կերպարվեստի գործերում: Այդ շրջանում գրվել են առասպելական շարքերի համակարգված շարադրանքներ, սակայն քչերն են պահպանվել. դրանք ամփոփում են որոշակի թեմաների նվիրված առասպելներ՝ համաստեղությունների ծագման, կերպարանափոխությունների մասին և այլն: Գրվում էին նաև ուսյալ բնույթի բանաստեղծական գործեր, որոնց նպատակը «հնագիտություն» էր՝ հունական հնավանդ պատմությունների պահպանումը. այդպիսի գործ է մ.թ.ա. 3-րդ դարի հեղինակ Ապոլլոնիոս Հոտոսցու «Արգոնավտիկա» պոեմը:

Անտիկ դարաշրջանից պահպանված միակ հավաքածուն, որտեղ ամբողջական ու դասակարգված ձևով ներկայացված է ողջ հունական դիցաբանությունը՝ աստվածների ծնունդից մինչև Տրոյական պատերազմի ավարտն ու հույների տունդարձը, Կեղծ-Ապոլլոնորոսի «Դիցաբանական գրադարանն» է: Այն մեզ է հասել մ.թ.ա. 3-րդ դարի քերական, մի քանի գրվածքների հեղինակ, Ալեքսանդրիայի գիտնական Ապոլլոնորոս Աթենացու անունով, սակայն թվագրվում է մոտ մ.թ. 1-ին կամ 2-րդ դարով: «Դիցաբանական գրադարանի» հետ համեմատելի գործ է հունական աղբյուրների վրա հիմնված՝ Հիգինուսի լատիներեն «Առասպելները» (*Fabulae*, մոտ մ.թ. 2-րդ դար), որտեղ, սակայն, ներկայացված բազմաթիվ առասպելներն ու ծննդաբանությունները դասավորված են անկանոն ձևով:

Բացի հունական առասպելների հիմնական աղբյուրներից շատ առասպելներ, դրանց այլևայլ տարբերակներ, ամբողջական վերապատմումներ, զուտ ակնարկներ, գործող անձանց կամ մանրամասների հիշատակումներ են սփռված հին հունական ողջ գրականության մեջ: Օրինակ՝ Պլուտարքոսի (մոտ մ.թ. 46–120 թթ.) «Զուգահեռ կենսագրություններ»-ի հերոսները ոչ միայն պատմական անձինք են, այլև առասպելական կերպարներ, ինչպես Աթենքի առասպելական հիմնադիր Թեսևսը, իսկ առասպելների բազում մանրամասներ հայտնի են Պավսանիասի (մ.թ. 2-րդ դ.) «Հունաստանի նկարագրություն»-ից:

<sup>1</sup> Օրինակ՝ Եվհեմերոսը (մ.թ.ա. 4–3-րդ դդ.) կարծում էր, որ աստվածները սկզբնապես հերոսներ և նվաճողներ են եղել, որոնք վաստակել են իրենց ենթակաների պաշտամունքը: Նա իրական պատմական հիմք էր փնտրում առասպելական իրադարձությունների մեջ: Ասենք, Չևսն, ըստ նրա, պաշտվում է որպես աստվածների թագավոր, քանի որ իր իշխանության օրոք խոշոր նվաճող է եղել և մարդկությանը մեծագույն բարիքներ բերել: Եվհեմերոսյան այս մեթոդը հետագայում կիրառում էին քրիստոնեության ջատագովները՝ հեթանոսական պատմությունների դեմ իրենց պայքարում: Անհավատության սկիզբը դրել էր արդեն փիլիսոփա Քսենոփանեսը (մ.թ.ա. 560–478 թթ.)՝ օլիմպոսյան աստվածների և աստվածուհիների անբարոյականության և հոգիների վերաբնակեցման մասին ուսմունքի իր քննադատությամբ: Կրոնի քննադատությանը խորացել է հատկապես Աթենքի և Սպարտայի միջև սկսվող Պելոպոննեսյան պատերազմի (մ.թ.ա. 431–404 թթ.) հետևանքով առաջ եկած քաղաքական ու բարոյական ճգնաժամի պայմաններում:

<sup>2</sup> Այդպիսի մոտեցման դրսևորումներ ավելի վաղ էլ կային. օրինակ՝ արդեն Հերոդոտոսը (մ.թ.ա. 5-րդ դարի կես) գրում էր, որ Հերակլեսի՝ Ատլասի փոխարեն երկինքը պահելն աստղագիտության բնագավառում նրա հմտության այլաբանություն էր, իսկ նրա կրած առյուծի մորթին խորհրդանշում էր բարոյական անխոցելիությունը, որին նա հասել էր փիլիսոփայություն ուսումնասիրելու շնորհիվ (*Fragmenta Historicorum Graecorum*, ed. Müller, 1841–1870, vol. 2, 24a, 1–6, 24b, 1–9):

## 2. Հին հունական առասպելները քրիստոնյա հեղինակների մոտ

Վաղ քրիստոնյա հեղինակները՝ եկեղեցու հայրերը, հին հունական հեթանոսության դեմ պայքարում հաճախ հիշատակել են առասպելական պատմություններ կամ դրանց գործող անձանց՝ վերապատմելով առանձին դրվագներ: Նրանց գիտելիքների աղբյուրը դարձրին էր, քանի որ Բյուզանդիայի պատմության ողջ ընթացքում կրթությունը մնում էր աշխարհիկ և պահպանում էր անտիկ ավանդույթները: Դպրոցում կարգում և մեկնաբանում էին Հոմերոսի, Հեսիոդոսի, Պինդարոսի, Հերոդոտոսի, Թուկիդիդեսի, Իսոկրատեսի, Դեմոսթենեսի, Լիսիասի, Պլատոնի, Արիստոտելի և այլ դասականների երկերը:

Բյուզանդացիների ինքնագիտակցության մեջ իրենք քաղաքական առումով հռոմեացիներ էին<sup>1</sup>, իսկ աշխարհայացքային առումով՝ քրիստոնյաներ: Նրանց բառապաշարում «հույն», «հունական» բառերը նշանակում էին առհասարակ հեթանոսներ, այն ամենն, ինչ քրիստոնեական կամ հրեական չէ: Օրինակ՝ Եվսեբիոս Կեսարացու գրվածքներում հստակ չէ, արդյո՞ք «հելլեններ» նշանակում է հույներ՝ հույներ որպես հեթանոսներ, թե՞ ընդհանրապես ոչ հույն հեթանոսներ<sup>2</sup>:

Այնուամենայնիվ հունարենը մնում էր բյուզանդացիների մայրենի լեզուն՝ իհարկե, ժամանակի ընթացքում փոփոխվելով, իսկ հունական մշակույթը նրանք ընկալում էին որպես իրենց դասական ժառանգություն: Անդրադարձները հունական գրականությանը, փիլիսոփայությանը, կրոնական պատկերացումներին և առասպելների բոլոր շրջաններին բյուզանդական գրականության անկապտելի մասն են կազմել:

Ներկայացնենք մի քանի հայտնի վաղ քրիստոնյա մատենագիրներին:

Նորադարձ քրիստոնյա Կղեմես Ալեքսանդրացին (մոտ 150–215 թթ.) հեթանոսներին դարձի բերելու նպատակով իր գրած «Խրատ հեթանոսներին» երկում, հույն փիլիսոփաների հայացքները, հեթանոսական պատկերացումներն ու առասպելները վիճարկելիս, դրանց մասին բազմաթիվ կարևոր, երբեմն բացառիկ տեղեկություններ է հաղորդել:

Երեք կապադոկիացի հայրերից մեկը՝ Գրիգոր Նազիանզացի (329–390 թթ.), ճարտասանություն և փիլիսոփայություն էր ուսանել Կեսարիայի Նազիանզի, Ալեքսանդրիայի և Աթենքի հռետորական դպրոցներում: Նրա երկերում կարելի է գտնել ինչպես հեթանոս հեղինակների հետ կրքոտ վեճեր, այնպես էլ նրանց կերտած գեղարվեստական արժեքների գնահատումներ:

Մեծ աստվածաբան, վանական կյանքի կանոնակարգիչ Բարսեղ Կեսարացի (329–379 թթ.) Նազիանզացու հետ Կոստանդնուպոլսում լսել էր հեթանոս հռետոր Լիբանիոսի դասախոսությունները, իսկ հետո հաճախել էր Աթենքի դպրոցը, որտեղ նրանց դասընկերն էր եղել ապագա կայսր Հուլիանոս Ուրացողը (361–363 թթ.): Այդ կրթությունը մեծ ազդեցություն է գործել Բարսեղի հայացքների վրա: «Մանուկներին, թե ինչպես օգուտ քաղեն հունական գրականու-

<sup>1</sup> Այդպես էլ կոչում էին իրենց՝ Ῥωμαῖοι «հռոմեացիներ»․ այստեղից՝ հայերեն «հռոմ» ցեղանունը հույների և «հռոմ լեզու» անվանումը հունարենի համար: Օրինակ՝ Մագիստրոս, Քերակ. Ե.2 (Դավիթ քերականից մեջբերման մեջ)․ «հագներգություն ըստ հռոմին լսի գալագներգություն» նախադասության մեջ խոսքը միանշանակ հունարենի մասին է, քանի որ Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» հունարեն սկզբնագրում գտնում ենք համապատասխան բառերը: Հմմտ. Դիոն. Թրակ., Քերակ. 4.3-10. «Հագներգություն է մասն քերպածաց ներպարառեալ ստորադրություն: Եւ ոգեալ է հագներգություն ի հագներոյ կարկատուն բան...» («Հագներգությունը (ռափսոփան) պոեմի մաս է, որ պարունակում է որևէ թեմա: Եվ այն հագներգություն է կոչվում կարկատուն խոսքեր կցմցելու պատճառով»): Իսկ հունարենում երկրորդ մասը մի քիչ տարբեր է, հավանաբար աղավաղված. 1.8.4-5. Ῥαψωδία ἐστὶ μέρος ποιήματος ἐμπειριεληφός τινα ὑπόθεσιν. Εἴρηται δὲ ῥαψωδία ἢ οἶονεὶ ῥαβδωδία τις οὖσα... («... Եվ այն հագներգություն է կոչվում որպես մի տեսակ գավազաներգություն...»)․ ῥάβδος նշանակում է «ցուպ», իսկ այս սխալ բացատրությունը հիմնված է գուտ բառերի արտաքին նմանության վրա: Մեկ այլ օրինակ. Յովիաննես Երզնկացի, Քերակ. 126. «ողբերգություն ի հայումս «նոխագերգություն» ասի ըստ յունականին», իսկ Եսայի Նչեցի, Քերակ. 41. «ի հռոմին ողբերգություն «նոխագերգություն» ասի»: Իրոք, τράγωδα բարդ բառը նշանակում է արու այծի՝ նոխագի (τράγος) երգ (ὄδη):

<sup>2</sup> A. Kaldellis, *Hellenism in Byzantium, The Transformations of Greek Identity and the Reception of the Classical Tradition*, Cambridge University Press, 2008, p. 130: Հմմտ. նաև Ἑλληνας («հելլեններ») բառի «հեթանոսներ» իմաստով կիրառությունը Գրիգոր Նազիանզացու մոտ. հենց այդպես է հասկացել հայ թարգմանիչը, տես դրվագ 5:

թյունից» նամակում<sup>1</sup> նա հորդորում էր երիտասարդ քրիստոնյաներին ուսումնասիրել դասական գրականությունը, սակայն նաև նշում, որ հեթանոս հեղինակներին պետք է կարգալ, երբ նրանք սովորեցնում են, թե ինչն է լավ, ազնիվ ու ճշմարիտ, և պետք է մերժել, երբ չարն են սովորեցնում: Այսպիսով Բարսեղը հիմնավորել է ճիշտ ընտրված դասականների տեղը քրիստոնյաների կրթություն մեջ՝ հաշվի առնելով նրանց էթիկական, այլ ոչ ճանաչողական կամ էսթետիկական արժեքը:

Ինչ վերաբերում է քրիստոնյա ժամանակագիրներին, ապա նրանք շատ հարցերում հետևել են հունական ժամանակագրության ավանդույթներին. օրինակ՝ Ափրիկանոսն ու Եվսեբիոսը որդեգրել են հունական պատմությունը կարգավորող օլիմպիադների համակարգը, որ մշակել էին Տիմոստը (մ.թ.ա. մոտ 345–250 թթ.) ու գիտական ժամանակագրության հիմնադիր Էրատոսթենեսը (մ.թ.ա. մոտ 276–195 թթ.): Սակայն հունական մշակույթի հետ զաղափարական պայքարում քրիստոնյա ժամանակագիրները ցանկանում էին ցույց տալ նրա ուղ լինելը և ձգտում սկսել պատմությունը «սկզբից», այլ ոչ նրանց պես «մեջտեղից», քանի որ հելլենիստական ժամանակագիրների երկերում առաջին թվագրվող քաղաքակրթությունն էր համարվել Ասորեստանը, և պատմությունը սկսվում էր Նինոսի գահակալումից<sup>2</sup>: Տեսնելով նախնական պատմության հարցերում հունական աղբյուրների սղությունն ու անվստահելիությունը՝ քրիստոնյա ժամանակագիրները դիմել են մ.թ.ա. 3-րդ դարի եգիպտական և բաբելական գրվածքներին. Բերոսոսոսի՝ Անտիոքոս Ա Սոտերի պատվերով գրած «Բաբելականք»-ին և Մանեթոնի՝ Պտղոմեոս Բ Եղբայրասերի պատվիրած «Եգիպտականք»-ին: Երկուսն էլ հունագիր հեղինակներ էին, հունական կրթություն ստացած քրմեր, որոնք իրենց երկերը հիմնել էին տաճարական դիվանների վրա: Բացի այդ, քրիստոնեական ժամանակագրությունը «հազարամյակի» հրեա-քրիստոնեական ուսմունքի կրողն էր, որի համաձայն ողջ մարդկության պատմությունը պետք էր տեղադրել վեցհազարամյա կաղապարի մեջ<sup>3</sup>:

Այսպիսով հին աշխարհի առաջին համակարգված ամբողջական պատմությունը՝ Եվսեբիոսի «ժամանակագրությունը» («Քրոնիկոն»-ը)<sup>4</sup>, սկսվում է հեղինակին մատչելի ամենահին պահպանված տեղեկություններից և հասնում մինչև իր ժամանակները՝ 325 թ.: Նրանում խոսվում է քաղզեացիների (այսինքն՝ բաբելացիների), ասորեստանցիների, մարերի, լիբիացիների, պարսիկների, հրեաների, եգիպտացիների ու հույների քաղաքակրթություններին առնչվող կարևոր իրադարձությունների և անձանց մասին, իսկ վերջում կցված են հունական օլիմպիադների («ողոմպիադ») ու քաղաք-պետությունների, մակեդոնացիների և հռոմեացիների իշխանավորների ցանկեր: Հույների պատմության հնագույն շրջանն առասպելական պատմություն է, իսկ քաղաքների առաջին թագավորները՝ առասպելական թագավորներ: Առասպելների որոշ անիրական

<sup>1</sup> Հունարեն բնագիրն անգլերեն հանդիպակալ թարգմանությամբ տե՛ս Address to Young Men on Reading Greek Literature, in: Saint Basil, *The Letters*, IV, ed. by T.E. Page, E. Capps & W.H.D. Rose, London – Cambridge Mass., 1934, pp. 378–435 (Loeb Classical Library): Բարսեղը այս նամակը գրել է կյանքի վերջում:

<sup>2</sup> Այդ մասին վկայել է 5-րդ դարի քրիստոնյա լատինագիր պատմիչ Օրոսիոսը (մոտ 375–418-ից հետո) (Oros. Hist. 1.1): Եվսեբիոսն «Ավետարանական պատրաստություն» երկում ուղիղ խոսում է այդ մասին (Eus. Praep. Evang. 10.10.19.1–20.1). «Պետք է նշել, որ երբ հույները երբևիցե որևէ հնությանը աչքի ընկնող բան են պատմում, պարզվում է, որ դա տեղի է ունեցել Մովսեսից հետո՝ ջրհեղեղներ և հրդեհներ, Պրոմեթևսը, Իոն, Եվրոպեն, սպարտոսները, Կորայի առևանգումը, խորհրդածեսեր, օրենսդրություններ, Դիոնիսոսի գործերը, Պերսեսը, Հերակլեսի սխարանքները, Արգոնավորդները, կենսավորումները, Սինոտավրոսը, Իլիոնի իրադարձությունները, Հերակլյանների վերադարձը, հոնիացիների գաղթելը և օլիմպիական խաղերը»:

<sup>3</sup> W. Adler, *Time Immemorial, Archaic History and Its Sources in Christian Chronography from Julius Africanus to George Syncellus*, Washington, D.C., 1951, p. 18–29.

<sup>4</sup> Այդ երկի հունարեն սկզբնագրի միայն բեկորներ կան, մեծ մասամբ՝ 8-րդ դարի ժամանակագիր Գեորգիոս Սինկելլոսի *Ecloga chronographica* երկում: Երկրորդ հատորը կազմող ժամանակագրական աղյուսակները պահպանվել են Հիերոնիմոսի (347–420 թթ.) լատիներեն Աստվածաշնչի թարգմանության Վուլգատա տարբերակի հեղինակի լատիներեն թարգմանությամբ (R. Helm, *Eusebius Werke 7: Die Chronik des Hieronymus, Die Griechischen Christlichen Schriftsteller der Ersten Jahrhunderte* 47 (1956)), իսկ ողջ երկը՝ միայն հայերեն թարգմանությամբ (մեկ ձեռագրով՝ ՄՄ 1904, ԺԳ դ.):

տարրեր նրա մոտ ռացիոնալիստական մեկնաբանություն են արժանացել՝ որպես իրական տարրերի այլաբանություն (տե՛ս դրվագ 18, 26, 39, 41, 64, 67, 70):

### 3. Հին հունական առասպելները հայ հին մատենագրության մեջ

Հայ միջնադարյան գրականություն մեջ՝ ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն, հանդիպում են հունական առասպելների հիշատակումներ, ակնարկներ, երբեմն էլ՝ ամբողջական դրվագների վերապատումներ: Ինքնուրույն գրվածքներում այդպիսի հատվածների գերակշիռ մասը սերում է թարգմանություններից, սակայն կան և բացառություններ, որոնց թվում՝ ինչպես ճշգրիտ պատումներ, այնպես էլ աղավաղված անուններով ու խճողված սյուժեներով տարբերակներ: Այդ աղավաղումների պատասխանատուն երբեմն հեղինակներն իրենք են, բայց հաճախ՝ նաև գրիչները:

Բավական մեծ թվով պատումներ ավանդված են միայն թարգմանական երկերում<sup>1</sup>: Նման հատվածներ պարունակող թարգմանական գործեր են 4-րդ դարի հեղինակավոր քրիստոնյա մատենագիրներ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ը և Գրիգոր Նազիանզացու մի քանի ճառ, Նազիանզացու 6-րդ դարի քրիստոնյա մեկնիչ Կեղծ-Նոննոսի՝ նրա ճառերում<sup>2</sup> հիշատակվող առասպելների մեկնությունը, Կեղծ-Կալլիսթենեսի հրաշապատում «Պատմություն Աղեքսանդրի» երկը (3-րդ դ., Թեբե քաղաքի՝ Ալեքսանդրի գրավման դրվագում հիշատակվում են Թեբեի հետ առնչվող մի շարք առասպելներ, որոնք հունարեն  $\alpha$  խմբագրության մեջ մաս են կազմում Թեբեի մասին մի պոեմի), 1-ին դարի հունագիր հրեա փիլիսոփա և Աստվածաշնչի մեկնաբան Փիլոն Ալեքսանդրացու, Պլատոնի (մ.թ.ա. 427–347 թթ.), Ալեքսանդրիայի Նորպատոնական դպրոցի ներկայացուցիչ՝ Արիստոտելի 6-րդ դարի մեկնիչ Դավիթ Անհաղթի երկերը (հայկական միջավայրում նա ընկալվել է որպես 5-րդ դարի փիլիսոփա և կրել Անհաղթ մականունը), 1-ին դարի ալեքսանդրացի ճարտասան Թեոն Ալեքսանդրացու նախակրթությունները, կիսաթարգմանական «Պիտոլից գիրքը» (նրանում արծարծվող առասպելական սյուժեները հունարեն նախորինակի՝ Ափթոնիոսի նախակրթությունների վերապատումն են), Միխայել Ասորու «Ժամանակագրություն»-ը՝ Վարդան Արևելցու խմբագրությամբ (ուստի դրա շատ հատվածներ թարգմանությունն չեն, իսկ հին պատմության բաժնում Միխայելի աղբյուրը նույն Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ի ասորերեն թարգմանությունն է) և ուրիշներ: Վաղ քրիստոնեական «Բարոյախաւս» ժողովածուն (2-րդ դ.) պատմում է սիրենների («յուշկապարիկք») մասին (դրվագ 148): Բոլորը հայ գրականության սկզբնավորմանը նախորդող հեղինակներ ու երկեր են, բացի 6-րդ դարի երկու հեղինակից: Միակ ուշ երկը Միխայել Ասորու «Ժամանակագրություն»-ն է (12-րդ դ.):

<sup>1</sup> Սույն գրքի ութսու մ դրվագ՝ 1, 3, 4, 8, 14, 16, 17, 18, 20, 23, 27, 28, 29, 30, 33, 37, 42, 45, 46, 48, 52, 54, 55, 58, 61, 62, 64, 65, 66, 68, 69, 71, 72, 74, 77, 78, 79, 81, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 94, 98, 99, 102, 104, 105, 109, 111, 112, 114, 116, 118, 119, 120, 121, 122, 123, 125, 126, 127, 128, 130, 131, 136, 138, 144, 145, 146, 147, 149, 150, 152:

<sup>2</sup> Նազիանզացու այդ ճառերը հինգն են՝ Հուլիանոս կայսեր դեմ գրված երկուսը (ճառեր 4 և 5, տե՛ս Գրիգոր Նազ., ճառ 4, 5), Բարսեղ Կեսարացու դամբանականը (ճառ 43, տե՛ս, Գրիգոր Նազ., Ի Բաս.), հայկական ձեռագրերում Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ժողովածուի երկրորդ միավոր կազմող «Նորին ի յայտնութիւն տեառն»՝ «Դարձեալ իմ Յիսուս և դարձեալ խորհուրդ...» սկսվածքով չիրատարակված ճառը (ճառ 39, տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 75, Մ 946, 3ա-25բ, Մ 2600, 10բ-16բ) և նույն ժողովածուի «ԺԱ» միավորը կազմող «Նորին ի Կիպրիանոս եպիսկոպոս և վկայ յանդաստանն եկեալ յետ միոյ ատուր յիշատակին»՝ «Փոքր ինչ և Կիպրիանոս գերծանէր ի մէնջ...» սկսվածքով չիրատարակված ճառը (ճառ 24, տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրության մեջ, էջ 77, Մ 946, 278բ-301բ, Մ 2600, 221բ-240բ): Ճառեր 4-ը և 5-ը «Որք յեգիպտոսն են» ձեռագիր ժողովածուի «Ը» և «Թ» միավորներն են (անդ, էջ 81-82): Ճառ 24-ին («Փոքր ինչ և Կիպրիանոս...») վերաբերող չորս կարճ պատմությունները հունարեն ավանդության մեջ զուգահեռ չունեն և, Բ. Կուլիի համոզմամբ, թարգմանություն չեն, այլ գրուած են հայերեն, B. Coulie, “Les versions orientales des commentaires mythologiques du Pseudo-Nonnos et la reception de la mythologie classique,” *La diffusion dell’ eredità classica nell’ età tardoantica e medievale. Il “Romanzo di Alessandro e altri scritti*, a cura di Rosa Bianca Finazzi e Alfredo Valvo, Edizioni dell’Orso, 1998 (pp. 113-123) p. 117:

Այս շարքում բացառիկ բնագիր է Կեղծ-Նոննոսի մեկնությունը (գրվել է մոտ 6-րդ դարի սկզբին<sup>1</sup> և թարգմանվել հունաբան դպրոցի գործունեություններից երրորդ շրջանում, հավանաբար նույն դարի երկրորդ կեսին<sup>2</sup>), որի գլուխների մեծ մասն այս կամ այն առասպելի համառոտ, բայց ամբողջական պատում է: Երբեմն այդ պատումները զերծ չեն սխալներից<sup>3</sup>: Դրանք բացատրում են Նազիրանցացու՝ համապատասխան առասպելների կամ դրանց գործող անձանց շատ կարճ, գրեթե ակնարկի ձև ունեցող հիշատակումները, որոնք նա արել է մերժողական դիրքերից: Առասպելական նյութեր պարունակելու առումով թվով երկրորդը Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ն է՝ հայերեն «դասական» շրջանի ամենավաղ թարգմանված (430-ական թթ.<sup>4</sup>) երկերից մեկը. ինչպես վերն արդեն ասվել է, այս երկում առասպելական հատվածները հանդես են գալիս որպես Հունաստանի հնագույն պատմության փաստեր:

Վաթսուկեց գրված վկայված են ինչպես թարգմանություններում, այնպես էլ ինքնուրույն գործերում<sup>5</sup>: Վերջիններում այդ դրվագները մեծ մասամբ քաղված են թարգմանական երկերից: Օրինակ՝ Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ն աղբյուր է ծառայել Փիլոն Տիրակացու<sup>6</sup> և Սամուել Անեցու<sup>7</sup> համար: Թովմա Արծրունին էլ է հետևել Եվսեբիոսին<sup>8</sup>, սակայն երբեմն ղեկավար է մատնացույց անել նրա այս կամ այն տեղեկության աղբյուրը (դրվագ 5, 11, 21, 43, 44, 60, հավել. 1.1.5): Բացի այդ, նրա հաղորդած տեղեկությունները հաճախ սխալաշատ են: Զևս-Արամազդի գոտու մասին խոսելիս Արծրունին հետևել է Փիլոն Ալեքսանդրացուն (հավել. 1.1.1):

Նշմարվում է նաև թարգմանական ու ինքնուրույն երկերի հետևյալ խումբն իր ենթախմբերով՝ Եվսեբիոսի «Ժամանակագրություն» – Միխայել Ասորի – Վարդան Արևելցի – Մխիթար Այրիվանցի (դրվագ 6, 24, 56, 63, 117, 129), Միխայել Ասորի – Մխիթար Այրիվանցի (դրվագ 9, 34, 100, 107, 153), Եվսեբիոսի «Ժամանակագրություն» – Միխայել Ասորի – Վարդան Արևելցի (դրվագ 22, 51, 59), Միխայել Ասորի – Վարդան Արևելցի – Մխիթար Այրիվանցի (դրվագ 49 ամազոնների մասին):

Կիսաթարգմանական «Պիտոյից գրքի» երրորդ՝ «Յաղագս եղծման» բաժնի նախակրթություններում, որոնք Ափթոնիոսի ճարտասանական վարժությունների վերաշարադրանքն են (դրվագ 31, 57, 82, հավել. 4), պատմվում է, թե ինչպես Մեղեան խաբեությունը սպանեց Պելիասին (դրվագ 31): Այդ սյուժեի սկզբնաղբյուրը Եվրիպիդեսի «Պելիադներ» ողբերգությունն է: Այն չի պահպանվել, ինչպես և Ափթոնիոսի՝ նախօրինակ ծառայած նախակրթությունը<sup>9</sup>: Պատ-

<sup>1</sup> Pseudo-nonniani in IV orationes Gregorii Nazianzeni commentarii, editi a J. Nimmo Smith, collationibus versionum syriacum a S. Brock, versionisque armeniacae a B. Coulie additis, Brepols-Turnhout, 1992 (Corpus Christianorum Series Graeca 27, Corpus Nazianzenum 2), Introduction, p. 3.

<sup>2</sup> Յ. Մանանդեան, *Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վենետիկ, 1928, էջ 236–246. երրորդ շրջանը քվարկվել է 576–578-ից մինչև 7-րդ դարի կեսերը (անդ, էջ 202, 208) կամ 510 և 600 թթ. միջև (С.С. Арешатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, Ереван, 1973, сс. 185-188):

<sup>3</sup> Pseudo-nonniani in IV orationes Gregorii Nazianzeni commentarii, p. 8.

<sup>4</sup> Գ. Տեր-Սևրտյան, «Հայ մատենագրության հնագույն թվականները», *Հայագիտական ուսումնասիրություններ*, Երևան, 1979, էջ 388-395, С.С. Арешатян, *Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)*, с. 38:

<sup>5</sup> Դրվագներ 2, 5, 6, 7, 9, 10, 11, 12, 13, 15, 21, 22, 24, 25, 26, 32, 34, 35, 36, 38, 39, 40, 41, 43, 44, 47, 49, 50, 51, 53, 56, 59, 60, 63, 67, 70, 73, 75, 76 (տիտաններ և Դիոնիսոս), 80, 85, 82, 95, 96, 97, 100, 101, 106, 107, 108, 110, 113, 115, 117, 124, 129, 132, 134, 135, 137 (Պարիս և Դիոմեդես), 139, 141, 142 (Զարմայր), 143, 151, 153:

<sup>6</sup> Այս անունով է հանդես գալիս «Մատենագիրք հայոց»-ի Ե հատորում նախկինում «Անանուն ժամանակագրություն» (աշխատասիրութեամբ Բ. Սարգիսեանի, Վենետիկ, 1904) կոչվող երկի հեղինակը: Դրվագներն են՝ 9, 26, 39, 41, 47, 53, 67, 85, 95, 117, 123:

<sup>7</sup> Դրվագներ 34, 35, 38, 95, 100, 108, 110, 113, 115, 142:

<sup>8</sup> Դրվագ 7, 39, 63, 75, 129, 142:

<sup>9</sup> Ափթոնիոսի նախակրթությունների ժողովածուն մեզ է հասել համառոտված տեսքով, այնպես որ յուրաքանչյուր տեսակի համար մնացել է մեկական մուշ-վարժություն. նրա գրած մոտ հարյուր նախակրթություն առանձին ժողովածու են կազմում, որ վերագրվել է Նիկողայոս Մյուսացուն, մի շարք նախակրթություններ էլ հայտնվել են Ափթոնիոսի ուսուցիչ Լիբանիոսի նախակրթությունների ժողովածուի մեջ: Այսպիսով «Պիտոյից գրքի»՝ Ափթոնիոսի հետևորդները գրված երեսունմեկ նախակրթությունից երկուսի նախօրինակները գտնում ենք Ափթոնիոսի ձեռնարկում, հինգհինգ՝ Լիբանիոսի (դրանցից երեքը պետք է որ Ափթոնիոսի հեղինակածը լինեն, իսկ երկուսն ամենայն հավանականությամբ Ափթոնիոսի չափապանված վերաշարադրանքների նախօրինակներն են), տասնինն-

մությունը հայտնի է գանազան աղբյուրներից (Diod. 4.51.5–52.2, Paus. 8.11.2–3, Zenobius, Cent. iv.92, Cicero De senectute 23.83, Ovid. Met. 7.297–349, Hyg. Fab. 24) և հաստատում է «Պիտոյից գրքի» պատումի հարազատությունը: Այդ պատումն իր հերթին աղբյուր է ծառայել Հովհան Օձնեցու և Մագիստրոսի համար: Իսկ նույն «Պիտոյից գրքի» մի թարգմանական հատվածում Հեկտորի սպանությունը հիշատակումը (գրվազ 140) անկախ է հունարեն սկզբնաղբյուրում բերված օրինակից (գուցեև այդ սկզբնաղբյուրի խմբագրման հետևանքով):

Մովսես Խորենացու՝ առասպելներին վերաբերող աղբյուրները տարբեր են. նա պատմում է, թե ինչպես Պրոմեթևսը կրակը փախցրեց աստվածներից և տվեց այն մարդկանց՝ Դավիթ Անհաղթի հետևությունը (գրվազ 21), ինչպես Պասիփայեն ունեցավ Մինոտավրոս որդուն՝ Եվսեբիոսի կամ Փիլոնի հետևությունը (գրվազ 67), վշտից քար դարձած Նիոբեի մասին՝ «Պիտոյից գրքի» հետևությունը (գրվազ 82), կենտավրոսների և լապիթեսների կռվի մասին՝ «Ալեքսանդրի պատմության» հետևությունը (գրվազ 124), թե ինչպես էր Աքիլլեսը վազում Սկամանդրոս գետի մեջ՝ նույն աղբյուրի հետևությունը (գրվազ 139), Աքիլլեսի և Թերսիտեսի մասին՝ Թեոն Ալեքսանդրացու ճարտասանական երկի հետևությունը (գրվազ 141):

Դրվազ 23-ում, որ նվիրված է հույների անվան բացատրությանը, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ից մեջբերել ենք մի հատված, որ բավական ճշգրիտ թարգմանված է Եպիփան Կիպրացու «Հերձվածների դեմ» երկից: Եզնիկի նույնպիսի մի հատված մեջբերել ենք հավելված 1.2-ում:

Տարբեր երկերում նույն թեմային նվիրված գրվազների համեմատությունը երբեմն բացահայտում է ուշագրավ բնագրային կապեր: Օրինակ, Դանաոսի դուստրերի և Եգիպտոսի որդիների մասին խոսելիս (գրվազ 38), Վարդան Արևելցին օգտվել է Եվսեբիոսից, բայց նաև աչքի առաջ է ունեցել Փիլոնին՝ Լինկեսի (որդիներից մեկի) մասին խոսելիս:

Միայն ինքնուրույն գործերում է խոսվում հետևյալ առասպելների մասին. արագավազ Ատալանտեի ամուսնությունը պատմության երկու ակնարկ Գրիգոր Մագիստրոսի նամակներում (գրվազ 92), Ասկլեպիոսի շանթահար մեռնելու հիշատակումը Վարդան Արևելցու մի ճառում (գրվազ 93), Միխայել Ասորուց և Վարդան Արևելցու պատմական երկից քերականության մեկնությունների մեջ թափանցած այն թյուր տեղեկությունը, թե իբր Կեկրոպան է ստեղծել (այլ ոչ Կադմոսը) հույների գիրը (գրվազ 101), Աթենքին տիրելու համար Աթենայի և Պոսեյդոնի վեճի նկարագրությունը Մագիստրոսի նամակներում (գրվազ 103), ակնարկ Նարկիսոսի առասպելին Մագիստրոսի նամակներում: 92, 93, 103 և 154-րդ գրվազների պարագայում տեղեկությունների որոշակի աղբյուր հնարավոր չէ մատնացուցց անել:

Այլ դեպքերում ակնհայտ է (գրվազ 19, 76), որ Մագիստրոսն օգտվել է հունարեն աղբյուրներից, մասնավորապես՝ Կղեմես Ալեքսանդրացու «Խրատ հեթանոսներին» երկից:

Գրիգոր Մագիստրոսը, Թրակացու «Քերականություն»-ը մեկնելիս (գրվազ 137), Հոմերոսի «Իլիական»-ին արած նրա ակնարկն ընդլայնում է ավելի երկար մեջբերումով, սակայն այստեղ շփոթություն է սպրդել (գուցե դա գրչական սխալ է), քանի որ Դիոմեդեսի՝ Պարիսին հասցեագրված խոսքի տարբեր հատվածներ ներկայացված են որպես երկխոսություն նրա և Պարիսի միջև: Այդ սխալ մեկնաբանությունը կրկնել և զարգացրել են հետագա մեկնիչներ Վարդան Արևելցին, Եսայի Նչեցին, Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին, Առաքել Սյունեցին և Դավիթ Զեյթունցին:

Է՛լ ավելի շատ սխալներ են կուտակվել, Հոմերոսից սերող ճիշտ մանրամասների հետ կողք-կողքի, քերականական մեկնությունների նույն շարքում, «հասարակ» վանկի առիթով Թրակացու՝ Հոմերոսից մեջբերած երեք հատվածի բացատրություններում. այսպես, «Տրոյացի Պրիամոսը, որի որդին հափշտակել էր հույն թագավորներից մեկին՝ սպարտացի Մենելաոսի կնոջը, և հույները

---

ըն՝ Նիկողայոսի ժողովածուի մեջ (ընդ որում դրանցից մեկի նախօրինակը նույնությամբ առկա է նաև Լիբանիոսի մոտ), իսկ ևս հինգի՝ այդ թվում և «Եղծ գՄեդեայ» նախակրթության նախօրինակներն առհասարակ չեն պահպանվել, տե՛ս Գրիգ Կիպրոյից, աշխատասիրության Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 253–254, նաև *Книга хриуи*, перевод с древнеармянского, предисловие и комментарии Гоар Мурадян, Ереван, 2000, с. 13–15, 275–277:



եկել էին Տրոյայի հետ պատերազմելու, դիմում է Հեղինեին...» պատմության փոխարեն այդ բնագրերում ունենք. «Տրոյացի Պրիամոսի կնոջը հափշտակել էին հույները, և նրա որդի Պարիսը, քննելով իր դեմ եկածներին գործերը, ասաց աղջկան...», իսկ «աղմուկը» («խառնիչները») մեկնիչների մոտ դարձել է «խառնոյ», «խառնելոյ իրի ջուր», «հաց և սեաւ գինի» (հավել. 1.2):

Նույն քերականական մեկնություններում Ակրիսիոսի՝ իր դուստր Դանայեին բանտարկելու դրվագում (դրվագ 40) Ակրիսիոսի անունն աղավաղվել-դարձել է «Կրեսոս», իսկ Դանայեինը՝ «Դինայե»: Առաքել Սյունեցու մոտ վերջինս արդեն աստվածաշնչյան Հակոբի դուստր Դինան է (որին պղծեց երկրի իշխանի որդի Սյուքեմը, տե՛ս Ծնն. 17), իսկ անօրենի անունը դարձել է «Կրիսպոս»:

Առաքել Սյունեցու՝ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրական»-ի մեկնության մեջ Օտոսն ու էփրայտեսը, որ Հոմերոսի մոտ վայրենի հսկաներ են, դարձել են իմաստասերներ (դրվագ 25):

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» երրորդ գրքի տասնիններորդ գլուխն ամբողջովին նվիրված է Իլիական պատերազմին, Տրոյայի ավերմանը, հույների ու տրոյացի գեղերի կանանց՝ Իտալիայում հայտնվելուն և երկար ժամանակ անց նրանցից սերած Հոմոնուլուսի ձեռքով Հոմի հիմնադրմանը. նշվում է, որ պատումը քաղված է Ստեփանոս Սյունեցու գրվածքներից: Այդ բնագրի համարյա նույնական տարբերակը, սակայն որպես ինքնուրույն միավոր, պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի 437 ձեռագրում (ԺԳ դ., թթ. 115բ–16ա): Ըստ այս պատումի՝ Իլիական պատերազմը տևել է տասնհինգ տարի, մինչդեռ հայտնի էր տասը տարվա ճիշտ տարբերակը (դրվագ 132): Պրտեր Քաուլին, որ առաջին անգամ այդ ձեռագիրը գիտական շրջանառության մեջ է դրել, նշում է պատումի կոթողայնությունը՝ էպիկական գունավորման ուժգնացումը չափազանցումներով, գործողության վայրերի խառնաշփոթը՝ Իլիոնը գտնվում է ոչ թե հյուսիս-արևմտյան Անատոլիայում, Հելլեսպոնտոսի մուտքի մոտ, այլ մակեդոնացիներից արևմուտք, «Եվրոպայի երկրում», իսկ Իլիոնի իշխանն այցելում է Թեսալոնիկե քաղաքը (ինչը ժամանակային առումով անհնար էր, քանի որ այդ քաղաքը հիմնադրվել է մ.թ. 316 թ.), կնոջն առևանգելը աղջիկ փախցնելու սովորական սյուժետով փոխարինելը և նախնական պատմության հետ մի շարք այլ անհամապատասխանություններ<sup>1</sup>: Քաուլին ենթադրում է, որ այս բնագիրը թարգմանություն է հունարենից<sup>2</sup>:

#### 4. Աստվածերի և առասպելների այլ գործող անձանց անունները

Հունական շատ առասպելների գործող անձինք աստվածներն են կամ այլ առասպելական էակներ. նրանց անունները հայերեն թարգմանական և ինքնուրույն գրվածքներում տարբեր կերպ են արտացոլվել:

Ա. Անունները հիմնականում հունարեն ձևերի ճիշտ վերարտադրություն են.

Աթենա (Αθηνᾶ)	դրվագ 12	Եւսեբիոս, Դավիթ, Նոննոս, Խաչատուր Կեչառեցի, Անանիա Նարեկացի, Մազիստրոս, Հովհաննես Երզնկացի, Առաքել Սյունեցի
---------------	----------	---

<sup>1</sup> Պ. Քաուլի, «Տրոյական պատերազմի և Հոմի հիմնադրման պատմության մի յուրօրինակ հայերեն տարբերակ», *Շնորհի ի վերուստ. առասպել, ծես, պարունություն, հողվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին*, Երևան, 2008 (էջ 51–61), էջ 57–58: Քաուլից ցավոք վրիպել է այն փաստը, որ իր քննարկած և աշխարհաբար թարգմանած բնագիրը համարյա նույնական է Մովսես Կաղանկատվացու երկի երրորդ գրքի 19-րդ գլխի հետ:

<sup>2</sup> Անդ, էջ 59:

	դրվագ 57	Պիտ.
	դրվագ 109	Եւսեբիոս
	Հավել. 1.1.7	Մագիստրոս
	Հավել. 1.2	Խորենացի, Ասողիկ
	Հավել. 1.6	Դաւիթ, Անանիա Նարեկացի, Մագիստրոս
	Հավել. 1.7	Մագիստրոս
Աթինա <sup>1</sup>	Հավել. 1.1.7	Սոկրատէս
Ապողոն / Ապողոլն (Ἀπόλλων)	դրվագ 9	Միխայել Ասորի, Միւրիթար Այրիվանեցի
	դրվագ 14	Եւսեբիոս, Նոննոս
	դրվագ 15	Նոննոս, Մագիստրոս, Վարդան Արևելցի, Առաքել Սյունեցի
	դրվագ 57	Պիտ.
	դրվագ 76	Մագիստրոս
	դրվագ 82	Պիտ.
	դրվագ 94	Վարք Անտոնի
Ասկղեպիրոս (Ἀσκληπιός)	Հավել. 1.1.5	Նոննոս, Թովմա Արծրունի
Ասկղիպիրոս <sup>2</sup>	Հավել. 1.1.7	Սոկրատէս
Արէս (Ἄρης)	դրվագ 11	Գրիգոր Նազ.
	դրվագ 16	Միխայել Ասորի
	դրվագ 25	Գրիգոր Նազ., Նոննոս
	դրվագ 93	Վարդան Արևելցի
	Հավել. 1.1.7	Փիլոն, Օձնեցի
	Հավել. 1.2	Մագիստրոս
	Հավել. 1.1.4	Վարք Անտոնի, Մովսէս Կաղանկատուացի
	Հավել. 1.1.7	Եղիշէ, Ստեփանոս Սիւնեցի, Մագիստրոս
	Հավել. 1.2	Եզնիկ, Խորենացի, Մագիստրոս
Արտեմիս / Արտեմիդէ <sup>3</sup> (Ἄρτεμις)	դրվագ 14	Նոննոս
	դրվագ 17	Նոննոս
	դրվագ 74	Պատմ. Աղեքսանդրի, Նոննոս

<sup>1</sup> «Աթենա» / «Աթինա» տարբերակները բացատրվում են նրանով, որ η տառը (Αθηνᾶ բառում) սկզբնապես արտասանվել է որպես ε (երկար e), իսկ միջնադարում հնչյունափոխվել է ե հնչել որպես i:

<sup>2</sup> «Ասկղեպիրոս» / «Ասկղիպիրոս» տարբերակները բացատրվում են «Աթենա» / «Աթինա» տարբերակների նման:

<sup>3</sup> «Արտեմիս» ձևը համապատասխանում է հունարեն անվան ուղղական հոլովին (Ἄρτεμις), իսկ «Արտեմիդէ» տարբերակում՝ անվան Ἀρτεμιδ- հիմքին, որը երևում է միայն թեք հոլովներում, անհարկի ավելացված է իգական «-է» վերջավորությունը (այդ դեպքում վերջավորությունը հատուկ է առաջին հոլովման գոյականներին, մինչդեռ խնդրո առարկա անունը երրորդ հոլովման է):

	դրվագ 82	Պիտ.
	Հավել. 1.1.7	Եղիշէ, Մագիստրոս
	Հավել. 1.2	Խորենացի, Ուխտանէս, Մխիթար Անեցի, Մագիստրոս, Դաւիթ Բաղիշեցի
	Հավել. 1.3.2	Նոննոս
Ափրոդիտէս / Ափրոդիտէ / Ափրոդիտա <sup>1</sup> (Αφροδίτη)	դրվագ 2	Նոննոս, Մագիստրոս
	դրվագ 136	Փիլոն, Նոննոս
	Հավել. 1.1.7	Սոկրատէս, Եղիշէ
	Հավել. 1.2	Խորենացի, Ասողիկ, Մագիստրոս, Դաւիթ Բաղիշեցի
	Հավել. 1.3.3	Մովսէս Կաղանկատուացի
Դեմետեր / Դեմետռ (Δημήτηρ)	դրվագ 18	Նոննոս
	դրվագ 36	Եւսեբիոս
	Հավել. 1.1.7	Մագիստրոս
	Հավել. 1.2	Մագիստրոս
Դիոնիսոս / Դիովնիսոս / Դիոնիւսոս (Διώνυσος)	դրվագ 19	Եւսեբիոս
	դրվագ 40	Եւսեբիոս
	դրվագ 70	Եւսեբիոս, Նոննոս
	դրվագ 71	Գրիգոր Նազ., Նոննոս
	դրվագ 72	Մագիստրոս, Երզնկացի
	դրվագ 75	Եւսեբիոս, Միխայէլ Ասորի, Մագիստրոս
	դրվագ 76	Նոննոս
	Հավել. 1.1.7	Սոկրատէս, Մագիստրոս
Զևս (Ζεύς)	դրվագ 5	Նոննոս, Պլատոն
	դրվագ 6	Նոննոս, Միխայէլ Ասորի, Վարդան Արևելցի
	դրվագ 11	Նոննոս
	դրվագ 25	Նոննոս
	դրվագ 28	Նոննոս

<sup>1</sup> Անվան «Ափրոդիտէ» և «Ափրոդիտա» ձևերն օրինաչափ են. հունարենում անունն իգական սեռի է և հոլովվում է առաջին հոլովումով, որի ուղղական հոլովին հատուկ են α և η վերջավորությունները (Αφροδίτη ձևն ավելի սովորական է): «Ափրոդիտէս» ձևը համապատասխանում է հունարեն սեռական Αφροδίτης հոլովածին, ինչը տարօրինակ է:

	դրվագ 36	Նոննոս
	դրվագ 40	Նոննոս
	դրվագ 43	Նոննոս, Փիլոն Տիրակացի
	դրվագ 70	Նոննոս
	դրվագ 93	Վարդան Արևելցի
	դրվագ 94	Նոննոս
	դրվագ 96	Նոննոս
	դրվագ 109	Նոննոս
Դիոս <sup>1</sup>	Հավել. 1.1.7	Սոկրատէս, Օձնեցի
	դրվագ 5	Թովմա Արծրունի
	դրվագ 6	Միխայել Ասորի
	Հավել. 1.1.1	Եւսեբիոս
	Հավել. 1.1.7	Ստեփանոս Սիւնեցի, Օձնեցի
	Հավել. 1.2	Խորենացի, Ասողիկ, Անանիա Նարեկացի, Դաւիթ Բաղիշեցի
	Հավել. 1.3.1	Նոննոս
	Հավել. 1.4.1	Նոննոս
	Հավել. 1.7	Փիլոն Տիրակացի
	դրվագ 6	Միխայել Ասորի, Վարդան Արևելցի
Դիայ (ուղղական Հոլով)	Հավել. 3	Մազիստրոս
Դիայ (սեռական Հոլով)	դրվագ 5	Թովմա Արծրունի
	դրվագ 91	Եւսեբիոս
Դիաւ (գործիական Հոլով)	Հավել. 1.2	Եզնիկ
Կրոնոս / Կռոնոս (Κρόνος)	դրվագ 2	Գրիգոր Նազ., Նոննոս
	դրվագ 5	Նոննոս, Գրիգոր Նազ.
	Հավել. 1.1.7	Օձնեցի, Մազիստրոս
	Հավել. 1.2	Եզնիկ, Մազիստրոս
	Հավել. 1.7	Եւսեբիոս, Փիլոն Տիրակացի
	Հավել. 3	Մազիստրոս
	դրվագ 4	Պլատոն
	դրվագ 5	Թովմա Արծրունի
Կրոնոս և Զրուան՝ տարբեր գործող անձինք <sup>2</sup>		

<sup>1</sup> «Ձևս»-ի փոխարեն՝ հունարեն «Ձևս» անվան սեռական Διός հոլովածնից. «-նս» վերջավորությունը ստեղծում է հունարեն ուղղական հոլովածնի պատրանք: Ձևսի անվան հունարեն թեք հոլովների «Գի» հիմքից են նաև հաջորդ՝ «Դիա», «Դիայ» և «Դիաւ» տարբերակները:

<sup>2</sup> Հմմտ. «Զրուան»՝ որպես Կրոնոսի հայկական համարժեք (Բ):

Հերակլես / Հերակղես / Երակղես / Եռակղես (Ηρακλής)	դրվագ 3	Եւսեբիոս
	դրվագ 10	Միխայել Ասորի
	դրվագ 11	Նոննոս
	դրվագ 14	Եւսեբիոս
	դրվագ 19	Եւսեբիոս, Թեոն
	դրվագ 21	Նոննոս
	դրվագ 30	Եւսեբիոս
	դրվագ 43	Պատմ. Աղեքսանդրի, Փիլոն Տիրակացի, Թովմա Արծրունի
	դրվագ 44	Թեոն, Գրիգոր Նազ., Նոննոս, Թովմա Արծրունի
	դրվագ 45	Պատմ. Աղեքսանդրի, Գրիգոր Նազ., Նոննոս
	դրվագ 46	Նոննոս
	դրվագ 50	Գրիգոր Նազ., Նոննոս, Փիլոն, Անանիա
	դրվագ 51	Եւսեբիոս, Միխայել Ասորի, Վարդան
	դրվագ 52	Թեոն
	դրվագ 53	Եւսեբիոս, Փիլոն Տիրակացի
	դրվագ 54	Նոննոս
	դրվագ 55	Նոննոս
	դրվագ 56	Եւսեբիոս, Միխայել Ասորի, Վարդան Արևելցի, Միխիթար Այրիվանեցի
	դրվագ 57	Պիտ.
	դրվագ 58	Նոննոս
	դրվագ 59	Պատմ. Աղեքսանդրի, Պորփյուր, Դավիթ, Նոննոս, Եւսեբիոս, Վարդան Արևելցի, Միխայել Ասորի
	դրվագ 60	Պատմ. Աղեքսանդրի
	դրվագ 94	Վարք Անտոնի
	դրվագ 115	Եւսեբիոս
	դրվագ 126	Նոննոս
	դրվագ 133	Նոննոս
	Հավել. 1.1.3	Եւսեբիոս, Խորենացի, Ասողիկ, Յովհաննէս Դրասխ., Դավիթ Բաղիչեցի
	Հավել. 1.1.7	Ստեփանոս Սիւնեցի, Մաղիստրոս

	Հավել. 1.2	Խորենացի, Մազիստրոս
	Հավել. 2	Մովսէս Կաղանկատուացի, լրացում՝ Մ 437 ձ.
Իռակղոս <sup>1</sup>	Հավել. 1.1.7	Սոկրատէս
Հեռա (Ἥρα)	դրվագ 4	Պլատոն
Հերա	դրվագ 11	Գրիգոր Նազ., Նոննոս
	դրվագ 36	Նոննոս
	դրվագ 70	Նոննոս
	դրվագ 94	Նոննոս
	Հավել. 1.5	Նոննոս
Երա	Հավել. 1.5	Գրիգոր Նազ.
Հերմէս (Ἑρμῆς)	Հավել. 1.1.7	Փիլոն, Եղիշէ, Օձնեցի
Հեփեստոս / Եփեստոս (Ἥφαιστος)	դրվագ 11	Գրիգոր Նազ., Փիլոն, Թովմա Արծրունի, Մազիստրոս
	դրվագ 12	Նոննոս, Խաչատուր Կեչառեցի
	դրվագ 21	Խորենացի, Մազիստրոս, Թովմա Արծրունի
	դրվագ 49	Պատմ. Աղեքսանդրի
	դրվագ 76	Մազիստրոս
	դրվագ 109	Եւսեբիոս
	Հավել. 1.2	Խորենացի, Ասողիկ, Մազիստրոս, Դաւիթ Բաղիշեցի
Հոէ / Ռէ (Ρέα)	դրվագ 4	Պլատոն
	դրվագ 5	Նոննոս, Թովմա Արծրունի, Մազիստրոս
Րէա	Հավել. 1.2	Եզնիկ
Ղեսոյ / Ղեսոս (Λητώ)	դրվագ 14	Եւսեբիոս, Նոննոս
	դրվագ 74	Պատմ. Աղեքսանդրի
Լեսով	դրվագ 82	Պլտ.
Պերսեփոնէ (Περσεφόνη)	դրվագ 18	Նոննոս
	դրվագ 54	Նոննոս
	դրվագ 126	Նոննոս
Պիլոտոն (Πλούτων)	դրվագ 18	Նոննոս
	դրվագ 126	Նոննոս
Պոսիդոն (Ποσειδών)	դրվագ 34	Եւսեբիոս

<sup>1</sup> «Իռակղոս» տարբերակի «ի»-ն բացատրվում է Ἡρακλῆς անվան մեջ առաջին դ-ի ուշ արտասանությամբ որպէս i, իսկ «h»-ի բացակայությունը՝ ևս ուշ արտասանությամբ, երբ թավ հազագն այլևս որպէս h չէր հնչում ու պարզապէս չէր արտասանվում:

	դրվագ 37	Եւսեբիոս
	դրվագ 49	Պատմ. Աղեքսանդրի
	դրվագ 114	Թեոն
	դրվագ 118	Նոննոս
	Հավել. 1.1.7	Մազիստրոս
Ովկիանոս և Տեթիւս (Ὠκεανός τε καὶ Τηθύς)	Հավել. 1.5	Պլատոն, Գրիգոր Նազ., Նոննոս
Սեմելէ / Սեմելա / Սեմեղի (Σεμέλη)	դրվագ 70	Պատմ. Աղեքսանդրի, Նոննոս, Մազիստրոս
Փոռկիւս (Φόρκυς)	դրվագ 4	Պլատոն

Բ. Որոշ անուններ փոխարինված են իրենց հայկական համարժեքներով.

Անասիտ	<i>փ/ս.</i> Հերա	Հավել. 1.2	Պատմ. Աղեքսանդրի, Դավիթ Բաղիչեցի
Աստղիկ	<i>փ/ս.</i> Ափրոդիտե	դրվագ 11	Գրիգոր Նազ.
		դրվագ 96	Մազիստրոս
		դրվագ 93	Վարդան Արևելցի
		Հավել. 1.2	Պատմութիւն Հռիփսիմեանց
		Հավել. 1.5	Փիլոն
Արամազդ	<i>փ/ս.</i> Զևս <sup>1</sup>	դրվագ 3	Եւսեբիոս, Նոննոս
		դրվագ 4	Պլատոն
		դրվագ 5	Փիլոն, Գրիգոր Նազ.
		դրվագ 6	Գրիգոր Նազ.
		դրվագ 11	Գրիգոր Նազ., Փիլոն
		դրվագ 12	Դավիթ, Նոննոս, Հովհաննես Երզնկացի, Առաքել Սյունեցի
		դրվագ 20	Նոննոս
		դրվագ 21	Նոննոս
		դրվագ 28	Նոննոս
		դրվագ 36	Նոննոս
		դրվագ 40	Գրիգոր Նազ.
		դրվագ 43	Նոննոս, Պատմ. Աղեքսանդրի
		դրվագ 49	Պատմ. Աղեքսանդրի

<sup>1</sup> Հետևյալ հատվածում Զևսն ու Արամազդը տարբեր անձինք են. «...մեռանէր Զևս՝ ի կղզիս արգելեալ շանթակէզ լիներ Ասկղիպիդէս, Արամազդ և Արես՝ առեալ զփառս իրեանց, դիմէին յանդունդս...» (դրվագ 93՝ Վարդան):

		դրվագ 52	Թեոն
		դրվագ 59	Նոննոս
		դրվագ 68	Պլատոն, Եւսեբիոս
		դրվագ 70	Պատմ. Աղեքսանդրի, Նոննոս,
		դրվագ 76	Մազխատրոս
		դրվագ 94	Գրիգոր Նազ., Վարք Անտոնի
		դրվագ 96	Նոննոս, Մազխատրոս
		դրվագ 98	Նոննոս
		դրվագ 127	Նոննոս
		Հավել. 1.1.1	Պատմ. Աղեքսանդրի, Փիլոն, Թովմա Արծրունի
		Հավել. 1.1.7	Փիլոն, Մազխատրոս
		Հավել. 1.2	Պատմ. Աղեքսանդրի, Ուխտանէս, Պատմուլթիւն Հռիփսիմեանց, Խորենացի, Ահարոն Վանանդեցի, Մազխատրոս,
		Հավել. 1.3.1	Նոննոս, Գէորգ
		Հավել. 1.4.1	Վարդան Այգեկցի
		Հավել. 1.5	Պատմ. Աղեքսանդրի
		Հավել. 1.6	Մազխատրոս
		Հավել. 3	Մազխատրոս
Արամազդ Պիկկոս	Վիս. Զևս Պիկկոս	դրվագ 12	Մազխատրոս
		Հավել. 1.7	Մազխատրոս
Արամազդեան	Վիս. Զևսեան/ աստուածային	դրվագ 149	Նոննոս
Որմիզդ	Վիս. Զևս	Հավել. 1.4.1	Առակք Ոլոմպիանայ
Զրուան	Վիս. Կրոնոս	դրվագ 2	Փիլոն
		դրվագ 5	Փիլոն, Նոննոս, Գրիգոր Նազ.
Զրուանեան	Վիս. Կրոնեան	Հավել. 3	Պատմ. Աղեքսանդրի

Գ. Երբեմն աստվածների և այլ առասպելական անձանց անունների համարժեքները նշվում են հենց բնագրերում.

Աստղիկ = Ափրոդիտէս

Հավել. 1.2 Վլթանէս



Զևս = Արամազդ	դրվագ 6	Մխիթար Այրիվանեցի
	դրվագ 5	Թովմա Արծրունի
	Հավել. 1.1.1	Եւսեբիոս
	Հավել. 1.2	Ագաթ.
	Հավել. 3	Մագիստրոս
Զևս (Դիոս տարբերակով) = Արամազդ = Բեւ	Հավել. 1.1.1	Եւսեբիոս
Որմիզդ = Արամազդ	Հավել. 1.2	Վրթանէս
Նեբրովթ = Բէղ = Բահաղ = Դիոս = Որմիզդ = Արամազդ	Հավել. 1.1.7	Օձնեցի
Կրոնոս = Բեւ = Նեբրովթ	Հավել. 1.1.2	Խորենացի, Դաւիթ Բաղիշեցի
Կռոնոս = Բելոս	դրվագ 5	Թովմա Արծրունի
Հերակլէս = Վահագն	Հավել. 1.2	Բուզանդ, Խորենացի
Հեփեսոս = Ռաման / Ռեման	Հավել. 1.2	Մխիթար Անեցի, Վարդան
Արեգակն = Վահագն	Հավել. 1.2	Վարդան
Լուսին = Արտեմիս	Հավել. 1.5	Փիլոն
Երկին = Կռոնոս	Հավել. 1.2	Վարդան
Երկիր = Դեմետր / Դեմետրա	Հավել. 1.2	Վարդան
	Հավել. 1.5	Փիլոն, Նարեկացի
Աւդ = Ադոնիս	Հավել. 1.2	Վարդան
Աւդ = Հերա	Հավել. 1.5	Փիլոն
Զուր = Պիսիդոն / Պոսիդոնա	Հավել. 1.2	Վարդան
	Հավել. 1.5	Փիլոն, Նարեկացի
Ծով = Պիսիդովնայ	Հավել. 1.5	Փիլոն
Հուր = Հեփեսոս	Հավել. 1.2	Վարդան
	Հավել. 1.5	Փիլոն
Հեփեսոս = արեգակն	Հավել. 1.5	Ղևոնդ

Դ. Աստվածների և առասպելական էակների որոշ անուններ թարգմանվել են հայերեն<sup>1</sup>:

Աղջիկ	Վիրա	դրվագ 18	Նոննոս
		դրվագ 53	Եւսեբիոս

<sup>1</sup> Ստորև բերվող աղյուսակում բնագրերից քաղված, այբբենական կարգով դասավորված անունների դիմաց ներկայացված են նրանց հունական համարժեքները:

		դրվագ 110	Եւսեբիոս
		Հավել. 1.5	Փիլոն
ամբիժ անարատ	<i>Վիս. Փեբոս</i>	դրվագ 68	Ալեքսանդրի պատմություն
Արեգակն	<i>Վիս. Հելիոս</i>	դրվագ 67	Հովհաննես Երզնկացի, Եսայի Նչեցի, Առաքել Սյունեցի
		Հավել. 1.2	Խորենացի
Արմաւ	<i>Վիս. Փենիքս</i>	դրվագ 102	Պլատոն
Երկին	<i>Վիս. Ուրանոս</i>	դրվագ 2	Գրիգոր Նազ.
		դրվագ 4	Պլատոն
		դրվագ 5	Նոննոս
Երկիր	<i>Վիս. Գեա</i>	դրվագ 4	Պլատոն
		դրվագ 15	Նոննոս
Երաժիշտ	<i>Վիս. մուսա</i>	դրվագ 10	Փիլոն
Իշացուլ	<i>Վիս. կենտավրոս</i>	դրվագ 123	Եւսեբիոս, Փիլոն Տիրակացի
Հայկ	<i>Վիս. գիգանտ</i>	դրվագ 19	Թեոն
Հայկ	<i>Վիս. Օրիոն</i>	դրվագ 17	Աստվածաշունչ
Հարս	<i>Վիս. նիմփա</i>	դրվագ 106	Նոննոս
Հիւսիս	<i>Վիս. Բորեաս</i>	դրվագ 112	Թեոն
Հռչակեալ	<i>Վիս. Էնկելադոս</i>	դրվագ 1	Գրիգոր Նազ.
յուշկապարիկ	<i>Վիս. կենտավրոս</i>	դրվագ 115	Եւսեբիոս
		դրվագ 123	Պատմ. Ալեքսանդրի, Խորենացի
յուշկապարիկ / պարիկ	<i>Վիս. սիրեն</i>	դրվագ 147	Դավիթ, Բարոյախոս, Փիլոն
Որ զեզն եզեն	<i>Վիս. Բիւթենաս</i>	դրվագ 58	Գրիգոր Նազ.
պարիկ	<i>Վիս. կենտավրոս</i>	դրվագ 8	Թեոն
Սարդենի	<i>Վիս. Դափնէ</i>	դրվագ 15	Գրիգոր Նազ.
սկայ	<i>Վիս. գիգանտ</i>	դրվագ 19	Եվսեբիոս
վարդապետ	<i>Վիս. Դեդալոս</i>	դրվագ 121	Թեոն
Քած	<i>Վիս. Սկիւլլա</i>	դրվագ 149	Նոննոս
քուն	<i>Վիս. Հիպնոս</i>	դրվագ 11	Նոննոս

*Հետեյալ աղյուսակը լրացնում է նախորդը. այստեղ հունական անուններին հետևում են նրանց հայկական համարժեքները.*

Բիւթենաս (Βουθίνας<sup>1</sup>) – որ զեզն եզեն

<sup>1</sup> Βουθίνας Հերակլեսի մակդիրն է՝ βούς («կով» կամ «եզ») և θοίνη («ճաշ») բառերից, այսինքն՝ «եզնակեր»:

Բորեաս (Βορέας) – Հիւսիս  
 Գեա (Γή) – Երկիր  
 Գիգանտ (Γίγας) – Հայկ, սկայ  
 Դեդալոս (Δαίδαλος<sup>1</sup>) – վարդապետ  
 Դափնէ (Δάφνη) – Սարգենի  
 Էնկելադոս (Ἐγκέλαδος) – Հռչակեալ<sup>2</sup>  
 Կենտաւրոս (Κένταυρος) – Իշացուլ, յուշկապարիկ, պարիկ  
 Հելիոս (Ἥλιος) – Արեգակն  
 Հիպնոս (Ἵπνος) – քուն  
 մուսա (μοῦσα) – Երաժիշտ  
 նիմփա (νύμφη) – Հարս  
 Ուրանոս (Οὐρανός) – Երկին  
 սիրեն (σειρήν) – յուշկապարիկ / պարիկ  
 Սկիւլլա (Σκύλλα) – Քաժ  
 Փեբոս (Φοῖβος) – անբիժ անարատ  
 Փենիքս (Φοίνιξ) – Արմաւ  
 Օրիոն (Ὠρίων) – Հայկ

Ե. Հունական առասպելների գործող անձանց անուններն ու տեղանունները երբեմն աղավաղվել են

*Որոշ դեպքերում այդօրինակ հատուկ անուններն աղավաղվել են աննշան, իսկ երբեմն՝ անճանաչելի դառնալու աստիճանի (ստորև բերվող աղյուսակում այբբենական կարգով ներկայացված են բնագրերում առկա ձևերը, իսկ զրանց ղիմաց նույն անունների ճիշտ ձևերն են՝ կամ բնագրերից, կամ մեր վերականգնած)։*

Աղելփիւնոս	փ/ւ. Դիլփական	դրվագ 69	Նոննոս
յԱդիս	փ/ւ. Ի Դելփիս	դրվագ 144	Եւսեբիոս
աթուրացիք	փ/ւ. ասորեստանեայք	դրվագ 142	Միխայել Ասորի
Ադոնիդ	փ/ւ. Ադոնիս	դրվագ 106	Թեոդորետոս
Ալիւան / Ալիւոն	փ/ւ. Իլիոն	դրվագ 49	Միխայել Ասորի, Վարդան Արևելցի
ալկիմոն	փ/ւ. ալկիոն	Հավել. 5	Բարոյախաւս
Ակտիա	փ/ւ. Ատթիս	դրվագ 107	Եւսեբիոս
Աղկեմոն	փ/ւ. Ակլեմոն	դրվագ 55	Նոննոս
Աղկմէոլնէ	փ/ւ. Աղկմենէ	դրվագ 43	Նոննոս
ամազուկեայք	փ/ւ. ամազոնք	դրվագ 49	Պատմ. Աղեքսանդրի
ամազուկնք / ամազուկնիք	փ/ւ. ամազոնք	դրվագ 49	Միխայել Ասորի, Միխիթար Այրիվանեցի

<sup>1</sup> Այդ անունը բառացի նշանակում է «հմուտ», «վարպետ». տե՛ս նաև Գ. Մուրադյան, «Օտար անունների արտահայտումները հունարան թարգմանություններում», *Աշխատանք (Հայագիտական պարբերագիրք)*, Ա, Երևան, 1995, էջ 151-165:

<sup>2</sup> Այս «թարգմանությունը» հիմնված է անվան՝ որպես ἐν μαΐαδανίγῃσιν և κέλαδος («աղմուկ») բաղադրիչներից բաղկացած լինելու մեկնաբանության վրա:

Անիաս	<i>փ/ս.</i> Ենիաս	գրվագ 153	Միխայել Ասորի
անոսացի	<i>փ/ս.</i> կնոսացի	գրվագ 67	Փիլոն Տիրակացի
անտրիկէցի	<i>փ/ս.</i> ատտրիկեցի	գրվագ 67	Փիլոն Տիրակացի
Անտրոզէ	<i>փ/ս.</i> Անդրոզէոս	գրվագ 67	Փիլոն Տիրակացի
Ասկղիպիրադէս	<i>փ/ս.</i> Ասկղիպիոս	գրվագ 100	Միխայել Ասորի
Ասկղիպիրէս	<i>փ/ս.</i> Ասկղիպիոս	գրվագ 93	Վարդան
Աստեղանտեայ	<i>փ/ս.</i> Ատալանտեայ	գրվագ 96	Մագիստրոս
Ատրեայ	<i>փ/ս.</i> Աստրեայ	գրվագ 119	Եւսեբիոս
Արքիաթոս	<i>փ/ս.</i> Էրիքթոնիոս	գրվագ 108	Միխայել Ասորի
յԱւգունեալ	<i>փ/ս.</i> յԱյդունեայ	գրվագ 53	Փիլոն Տիրակացի
Բեղորոփոնտ	<i>փ/ս.</i> Բելերոփոնտես / Բեղեռովփոնտոս	գրվագ 39	Եւսեբիոս
Բաղերեփոնտ		գրվագ 39	Փիլոն
Բլեռովփոնտէս		գրվագ 39	Նոննոս
Բևըիա	<i>փ/ս.</i> Մեդես	գրվագ 31	Թեոն
Բիլոն / Բիդոն / Բիւղոն	<i>փ/ս.</i> Պելիոն	գրվագ 25	Դավիթ, Մագիստրոս, Կարապետ Սասնեցի, Առաքել Սյունեցի
բիւթենացիք	<i>փ/ս.</i> Թեբայեցիք	գրվագ 45	Նոննոս
Բուսիրոս	<i>փ/ս.</i> Բուսիրիս	գրվագ 52	Եւսեբիոս
Բուրսիս	<i>փ/ս.</i> Բուսիրիս	գրվագ 52	Թեոն
Գաղիրոն	<i>փ/ս.</i> Գաղիրա	գրվագ 50	Նոննոս
Դանաէս <sup>1</sup>		գրվագ 40	Եւսեբիոս
Դեզեղ	<i>փ/ս.</i> Դեզաղ	գրվագ 117	Վարդան
Դեղեղ	<i>փ/ս.</i> Դեզաղ	գրվագ 67	Եղիշէ, Գտիչք
Դեղփոս	<i>փ/ս.</i> Դելոս	գրվագ 104	Եւսեբիոս
Դինա	<i>փ/ս.</i> Դանայէ	գրվագ 40	Մագիստրոս, Յովհաննէս Երզնկացի, Եսայի Նչեցի, Առաքել Սյունեցի
Դիոնէս	<i>փ/ս.</i> Դիոնիսոս	գրվագ 3	Եւսեբիոս
Դիոնէսիոս	<i>փ/ս.</i> Դիոնիսոս	գրվագ 60	Պատմ. Աղեքսանդրի
		գրվագ 76	Մագիստրոս
		գրվագ 78	Պատմ. Աղեքսանդրի
Դիոնեսիոս	<i>փ/ս.</i> Դիոնիսոս	գրվագ 70	Պատմ. Աղեքսանդրի
		գրվագ 75	Պատմ. Աղեքսանդրի

<sup>1</sup> Սա հունարեն Δανός սեռական հոլովածնի տառացի ընդօրինակում է:

		դրվազ 76	Մազիստրոս, Վարդան
Դիոնիսիոս	<i>փխ.</i> Դիոնիսոս	դրվազ 72	Եսայի Նչեցի, Առաքել
		դրվազ 75	Եւսեբիոս
Դրօացիք	<i>փխ.</i> տրոացիք (°)	դրվազ 142	Ներսէս Պալիանենց
Եզրիպտացիք	<i>փխ.</i> Եպիբոնացիք (°)	դրվազ 90	Եւսեբիոս
Եկիոս	<i>փխ.</i> Էգլես	դրվազ 33	Եւսեբիոս
Եղոս	<i>փխ.</i> Իլոս	դրվազ 129	Նոննոս
Ենտորոս	<i>փխ.</i> Հեկտոր	դրվազ 138	Պլատոն
Եւզրիպոս / Ի- զրիպոս	<i>փխ.</i> Էզրիպոս	դրվազ 83, 84	Պատմ. Աղեքսանդրի, Պլատոն
Եւնոմիոս Ալի- կատրացի	<i>փխ.</i> Եւնոմոս Լոկրացի	դրվազ 84	Մազիստրոս
Եւսեպոս	<i>փխ.</i> Եւմոլպոս	դրվազ 9	Փիլոն Տիրակացի
Եփրա / Բուրիա	<i>փխ.</i> Էփիրա	դրվազ 27	Միխայել Ասորի
Զինթոս	<i>փխ.</i> Զեթոս	դրվազ 84	Նոննոս
Թամիրոս	<i>փխ.</i> Թամիրիս	դրվազ 45	Միխայել Ասորի
Թերես	<i>փխ.</i> Թեսես	դրվազ 122	Պլատոն
Թերմաղոն	<i>փխ.</i> Թերմոդոն	դրվազ 49	Պատմ. Աղեքսանդրի
Թլեսոս	<i>փխ.</i> Թեսես	դրվազ 120	Նոննոս
Իզիոս / Իչոս	<i>փխ.</i> Իլոս	դրվազ 97	Եւսեբիոս, Եղիշե, Միխայել Ասորի
Իմենաղոս / Ի Մենաղայ	<i>փխ.</i> Մենեղատոս	դրվազ 131	Միխայել Ասորի
Իտիկէ	<i>փխ.</i> Ատտիկէ	դրվազ 100	Միխայել Ասորի
Իւրեփս	<i>փխ.</i> Հիրիես	դրվազ 17	Նոննոս
Լինգոս	<i>փխ.</i> Լինկլես / Ղինկլես	դրվազ 38	Վարդան Արևելցի, Մխիթար Այրի- վանեցի
Լիոն	<i>փխ.</i> Իլիոն	դրվազ 56	Մխիթար Այրիվանեցի
Կաղմէս	<i>փխ.</i> Կաղմոս	դրվազ 63	Դավիթ Զեյթունցի
Կալիփոս	<i>փխ.</i> Կալիփոս	դրվազ 150	Թեսոն
Կանտուղէս	<i>փխ.</i> Կանդաւղէս / Կանդաւլէս	Հավել. 2	Պիտ.
Կարանոս	<i>փխ.</i> Կրանատոս	դրվազ 107	Եւսեբիոս
Կարոս	<i>փխ.</i> Իկարոս	դրվազ 117	Միխայել Ասորի
Կեկրոպեանք	<i>փխ.</i> Կերկոպք	դրվազ 55	Նոննոս

Կեկրովպոս <sup>1</sup>	<i>փ/ս.</i> Կեկրովպոս	դրվագ 100	Նոննոս
Կերիոս	<i>փ/ս.</i> Աստերիոս	դրվագ 64	Եւսեբիոս
Կիկրոփոս	<i>փ/ս.</i> Կեկրոփոս	դրվագ 100	Միխայել Ասորի
Կերմոս	<i>փ/ս.</i> Կրեոն	դրվագ 32	Թեոն
Կիպրոս	<i>փ/ս.</i> Կիպրիոս, այս- ինքն՝ կիպրոսուհի	դրվագ 69	Պատմ. Աղեքսանդրի
Կիւպեղէ	<i>փ/ս.</i> Կիբելե	դրվագ 5	Եւսեբիոս
Կղաւղկա	<i>փ/ս.</i> Գլաւկէ	դրվագ 32	Թեոն
Կովկէղայ	<i>փ/ս.</i> Կովկաղայ	դրվագ 121	Եւսեբիոս
Կուղինիկէս	<i>փ/ս.</i> Պողինիկէս	դրվագ 88	Պատմ. Աղեքսանդրի
Կրեսոս / Կրիւսոս / Կրիսպոս	<i>փ/ս.</i> Ակրիսիոս	դրվագ 40	Մազիստրոս, Յովհաննէս Երզնկացի, Եսայի Նչեցի, Առաքել Սյունեցի
Կրետայ	<i>փ/ս.</i> Կրեոնտեայ / Կրէովնեայ	դրվագ 84	Պատմ. Աղեքսանդրի
Կրոնոս / Կրաւնոս	<i>փ/ս.</i> Կրանաոս	դրվագ 107	Միխայել Ասորի, Մխիթար Այրի- վանեցի
Կրոպեաւ	<i>փ/ս.</i> Կեկրոպեաւ	Հավել. 1.2	Եզնիկ
Հեդրաս	<i>փ/ս.</i> Հիդրա	դրվագ 47	Միքայէլ Ասորի
Հերմէս	<i>փ/ս.</i> Հոմերոս	Հավել. 3	Մազիստրոս
Հուսիփովտացի	<i>փ/ս.</i> Իրափիփովտացի	դրվագ 70	Պատմ. Աղեքսանդրի
Հռոմելոս	<i>փ/ս.</i> Հռոմուլոս	Հավել. 2	Մովսէս Կաղանկատուացի
Ղաւոմեղէս	<i>փ/ս.</i> Ղաւոմեղոն	դրվագ 97	Եւսեբիոս
Ղետայ	<i>փ/ս.</i> Ղեդայ	դրվագ 94	Նոննոս
Ղիոն	<i>փ/ս.</i> Իղիոն	Հավել. 2	Մովսէս Կաղանկատուացի
Ղոմպոս / Ուոմպիոս / Ուոմ- պիոս	<i>փ/ս.</i> Ուլիմպոս	Հավել. 3	Մազիստրոս
Մաւտանէս	<i>փ/ս.</i> Տաւտանէս	դրվագ 142	Թովմա Արծրունի
Մենեղոս	<i>փ/ս.</i> Մենեղաոս	դրվագ 142	Եւսեբիոս
Մենով	<i>փ/ս.</i> Մինոս	դրվագ 67	Եղիշէ, Գտիչք
Մէդպով	<i>փ/ս.</i> Եւմոդպաւ	դրվագ 114	Եւսեբիոս
Մենտէ Կողքիացի	<i>փ/ս.</i> Մեդեա Կողքի- ացի	դրվագ 30	Եւսեբիոս
Մինատոռոս	<i>փ/ս.</i> Ամինտոր	դրվագ 102	Պլատոն

<sup>1</sup> Հունարեն սեռական Κέκροπος հոլովածն ընկալվել է որպէս ուղիղ ձև, իսկ դրանից էլ կերտվել է «Կեկրովպոսի» սեռականը:

Մողոն	<i>փ/ս.</i> Մողլիոնէ	գրվազ 25	Նոննոս
Մոսթոս / Մէնթիոս / Մէնթոս	<i>փ/ս.</i> Մենեսթևս	գրվազ 116	Միխայել Ասորի
մուկենացիք	<i>փ/ս.</i> միկենացիք	գրվազ 62	Միխայել Ասորի
Յովղիդէ	<i>փ/ս.</i> Աւղիդէ	գրվազ 135	Նոննոս
Նինէս	<i>փ/ս.</i> Մինոս	գրվազ 117	Միխայել Ասորի
նուսիանս	<i>փ/ս.</i> սուսիանս (չոչ-ցիների)	գրվազ 142	Եւսեբիոս
Ովգիգոս	<i>փ/ս.</i> Ոգիգիոս	գրվազ 3	Եւսեբիոս
Որփիս	<i>փ/ս.</i> Որփևս	գրվազ 84	Մազիստրոս
Ուղկէս	<i>փ/ս.</i> Էտէոկղէս	գրվազ 88	Պատմ. Աղեքսանդրի
Ուգիգեան	<i>փ/ս.</i> Ովգիգեան	գրվազ 88	Պատմ. Աղեքսանդրի
Պալապոս / Պալամպոս / Պելապոս	<i>փ/ս.</i> Պելոպս	գրվազ 129	Միխայել Ասորի, Վարդան Արևելցի
Պալոմպիս	<i>փ/ս.</i> Պելոպս	գրվազ 62	Միխայել Ասորի
Պայն	<i>փ/ս.</i> Պան	գրվազ 152	Գրիգոր Նազ.
Պանթևս	<i>փ/ս.</i> Պենթևս	գրվազ 35	Եւսեբիոս
Պարէս / Պարէտ	<i>փ/ս.</i> Պարիս	գրվազ 137	Մազիստրոս, Յովհաննէս Ծործորեցի, Դավիթ Զեյթունցի
Պաւղիքսենէս	<i>փ/ս.</i> Պաւղիքսենէս	գրվազ 143	Նոննոս
Պեղղոպոս <sup>1</sup>	<i>փ/ս.</i> Պեղոփս	գրվազ 128	Գրիգոր Նազ., Նոննոս
Պերինթոս	<i>փ/ս.</i> Պիրիթուս	գրվազ 126	Նոննոս
Պէգասիոս	<i>փ/ս.</i> Պեգասոս	գրվազ 39	Աղեքսանդրի պատմություն
Պէլաս	<i>փ/ս.</i> Պելիաս	գրվազ 31	Մազիստրոս
Պիպկոս	<i>փ/ս.</i> Պիկոս	Հավել. 1.7	Փիլոն Տիրակացի
Պիսիդոն	<i>փ/ս.</i> Պոսեյդոն / Պոսիդոն	գրվազ 103	Մազիստրոս
	<i>փ/ս.</i> Պոսեյդոն / Պոսիդոն	Հավել. 1.2	Վարդան
	<i>փ/ս.</i> Պոսեյդոն / Պոսիդոն	Հավել. 1.5	Նարեկացի, Մազիստրոս
Պիւռոս	<i>փ/ս.</i> Պիւռոս	գրվազ 144	Եւսեբիոս

<sup>1</sup> Հունարեն սեռական Πέλοπος հորվածուն ընկալվել է որպես ուղիղ ձև, իսկ դրանից էլ կերտվել է «Պեղղոպոսի» սեռականը:

Պղոտին	փ/ս. Պղոտոն	Հավել. 1.5	Առաքել
Պղիփիկէս	փ/ս. Պաղիփիդէս	Հավել. 2	Մովսէս Կաղանկատուացու լրացում՝ Մ 437 ձ.
Պողիկէս	փ/ս. Պողինիկէս	դրվագ 85	Պատմ. Աղեքսանդրի
Պողոպիդեանք	փ/ս. Պեղոպիդեանք	դրվագ 43	Եւսեբիոս
Պոմպենէս	փ/ս. Հիպպոմենէս	դրվագ 96	Մագիստրոս
Պոնոպաւլիս	փ/ս. Պեղոպոնէս	Հավել. 2	Եղիշէ
պոնիփական / պիփոնիական / պոնիփական / պոնիփական / պոնիփական / պոնիփական	փ/ս. պոնիփական	Հավել. 2	Դաւիթ, Առաքել, Մագիստրոս
Պրոմիթէս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 7	Եւսեբիոս, Թովմա Արծրունի
Պրոմիթէս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Դավիթ
Պրոմեթէոս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Խորենացի
Պրոմիդէս, Պրոմեդէս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Մագիստրոս
Պրոմիդեա, Պրոմիդաս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Առաքել Սյունեցի
Պրամիթէս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Միխայել Ասորի, Միթար Այրիվանեցի
Պրովմիթէս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	դրվագ 20՝ Նոնոս
Պրոմիթոս	փ/ս. Պրոմեթէս	դրվագ 21	Թովմա Արծրունի
ռապիթաց	փ/ս. լապիթաց	դրվագ 123	Փիլոն Տիրակացի
Սասիոյ	փ/ս. Սասիոյ	դրվագ 100	Նոնոս
Սելովմացուցն	փ/ս. Սեմէղեայ	դրվագ 75	Միխայել Ասորի
Սեստոս	փ/ս. Ոսա	դրվագ 25	Մագիստրոս
Ոսիա	փ/ս. Ոսա	դրվագ 25	Կարապետ Սասնեցի
Ոստոս	փ/ս. Ոսա	դրվագ 25	Առաքել Սյունեցի
Ըստոս	փ/ս. Ոտոս	դրվագ 25	Կարապետ Սասնեցի
Ովս	փ/ս. Ոսա	դրվագ 25	Նոնոս
Ունէոս	փ/ս. Էնէս	դրվագ 59	Նոնոս
Սայիդ	փ/ս. Սիդոն	դրվագ 63	Միխայել Ասորի
Սիկոն	փ/ս. Սիկիոն	դրվագ 34	Եւսեբիոս
Սուր	փ/ս. Տիւրոս	դրվագ 63	Միխայել Ասորի
Սոփեստրոս	փ/ս. սոփեստէս	դրվագ 21	Առաքել Սյունեցի



Սպարիոն	<i>փ/ս.</i> Հեսպերիոն	դրվագ 49	Մովսէս Կաղանկատուացի
Ստենարոն	<i>փ/ս.</i> Տենարոն	դրվագ 84	Եւսեբիոս
Ստիւգացի	<i>փ/ս.</i> Գիգես	դրվագ 1	Գրիգոր Նազ.
Ստոս	<i>փ/ս.</i> Ոտոս	դրվագ 25	Մազիստրոս
Տանասթէս	<i>փ/ս.</i> Մենեսթևս	Հավել 2	Մովսէս Կաղանկատուացու լրացում՝ Մ 437 ձ.
Տիտքոս	<i>փ/ս.</i> Տիտիւոս	դրվագ 14	Թեոն
Տիտոնիս / Տիթո- լոն / Տիթոլու- նիս / Տիթոնիոս	<i>փ/ս.</i> Տիթոնոս	դրվագ 142	Միխայել Ասորի
Տիւրիա	<i>փ/ս.</i> Տրոյա	դրվագ 19	Թեոն
Տուգևս	<i>փ/ս.</i> Տիւղևս	դրվագ 89	Պատմ. Աղեքսանդրի
Տրիպտոլոմէոս	<i>փ/ս.</i> Տրիպտոլեմոս	դրվագ 18	Եւսեբիոս
Տրիպտոլոմոս / Տրիպտոլոմէոս	<i>փ/ս.</i> Տրիպտոլեմոս	դրվագ 18	Նոննոս
Տրւայ	<i>փ/ս.</i> Տրովայ	դրվագ 143	Գրիգոր Նազ.
Փալտէս / Փալտոս	<i>փ/ս.</i> Եփիալտէս	դրվագ 25	Կարապետ Սասնեցի, Առաքել Սյու- նեցի
Փասիփա	<i>փ/ս.</i> Պասիփայե	դրվագ 67	Եսայի Նչեցի
Փերափտէ	<i>փ/ս.</i> Փերեփատտէ	դրվագ 19	Մազիստրոս
Փիլագրա... Պաղղանէ	<i>փ/ս.</i> Փլեգրա, Պալլենե	դրվագ 19	Թեոն
Փիւրա	<i>փ/ս.</i> Էփիւրա	դրվագ 27	Եւսեբիոս
Փորոն	<i>փ/ս.</i> Փորոնևս	դրվագ 35	Եւսեբիոս
Քարիդեայն	<i>փ/ս.</i> Քարիբդեայն	դրվագ 149	Գրիգոր Նազ.
Քերէ	<i>փ/ս.</i> Մաքերևսէ	դրվագ 144	Եւսեբիոս

*(Ստորև բերվող աղյուսակը լրացնում է նախորդը. նրանում այբբենական կարգով ներկայացված են անունների ճիշտ ձևերը, իսկ դրանց դիմաց՝ բնագրերում առկա աղավաղված տարբերակները).*

Ադոնիս (Ἄδωνις) – Ադոնիզ  
ալկիոն (ἄλκυον) – ալկիմոն  
Ակլեմոն (Ἀκλήμων) – Աղկեմոն  
Ակրիսիոս (Ἀκρίσιος) – Կրեսոս / Կրիւսոս / Կրիսպոս  
Աղկմենէ (Ἀλκμήνη) – Աղկմէովնէ  
ամազոնք (Ἀμαζών) – ամազոնեայք, ամազոնք / ամազոնիք  
Ամինտոր (Ἀμύντωρ) – Մինատուոս  
յԱյդոնեայ (Ἄιδωνεύς) – յԱւգոնեայ  
Անդրոգէոս (Ἀνδρογέος) – Անտրոգէ

Ասկլիպիոս (Ἀσκληπίος) – Ասկլիպիադէս, Ասկլիպիդէս  
 ասորեստանեայք (Ἀσσύριος) – ասորացիք  
 Աստերիոս (Ἀστέριος) – Կերիոս  
 Աստրեայ (Ἀστράϊου) – Ատրեայ  
 Ատալանտեայ (Ἀταλάντη) – Աստեղանտեայ  
 Ատթիս (Ἄτθις) – Ակտիա  
 ատտրիկեցի (Ἄττικος) – անտրիկեցի  
 Ատտիկէ (Ἄττική) – Իտիկէ  
 Աւղիդէ (Ἀὐλίδς) – Յովղիդէ  
 Բելերոփոնտես / Բելեռովփոնտոս (Βελλεροφόντης) – Բելորոփոնտ, Բաղերեփոնտ, Բլեռովփոն-  
 տէս  
 Թեբայեցիք (Θηβαῖοι) – բիւթենացիք  
 Բուսիրիս (Βούσιρις) – Բուսիրոս, Բուրսիս  
 Փադիրա (Γάδειρα) – Փադիրոն  
 Փիգէս (Γύγης) – Ստիւգացի  
 Փլաւկէ (Γλαύκη) – Կղաւղկա  
 Դանայէ (Δανάη) – Դինա  
 Դելոս (Δῆλος) – Դելփոս  
 Դելփական (Δελφίνιος) – Աղելփիւնոս  
 Ի Դելփիս (ἐν Δελφοῖς) – յԱղիս  
 Դեդաղ (Δαίδαλος) – Դեդեղ, Դեդեղ  
 Դիոնիսոս (Διώνυσος) – Դիոնէս, Դիոնեսիրոս, Դիոնէսիոս, Դիոնիսիոս  
 Ենիաս (Αἰνέας) – Անիաս  
 Եպիգոնացիք (Επίγονοι) – Եգիպտացիք  
 Եւմոլպոս – Եւսեպոս (Εὐμόλπος)  
 Եւմոլպաւ (μετὰ Εὐμόλπου) – Մէլպոլ  
 Եւնոմոս Լոկրացի (Εὐνομος Λοκρός) – Եւնոմիոս Ալիկատրացի  
 Եփիալտոս (Εφιάλτος) – Փալտէս / Փալտոս  
 Զեթոս (Ζήθος) – Զինթոս  
 Էգէս (Αἰγεύς) – Եկիոս  
 Էդիպոս (Οἰδίπους) – Եդէպոս / Իդիպոս  
 Էնէս (Οἰνεύς) – Ունէս  
 Էտէոկղէս (Ἐτεόκλης) – Ուղկէս  
 Էրիքթոնիոս (Εριχθόνιος) – Արքիաթոս  
 Էփիրա (Εφύρα) – Եփրա / Բուրիա, Փիրա  
 Թամիրիս (Θάμυρις) – Թամիրոս  
 Թեսսա (Θησεύς) – Թերես, Թեսոս  
 Թերմաղոն (Θερμώδων) – Թերմողոն  
 Իկարոս (Ίκαρος) – Կարոս  
 Իլիոն (Ίλιον) – Ալիւան / Ալիուան, Լիոն  
 Իլոս (Ίλιος) – Եղոս, Իղիոս / Իչոս  
 Իդիոն (Ίλιον) – Ղիոն  
 Իրափիոփտացի (Εἰραφιώτης) – Հուափիոփտացի  
 Լապիթաց (Λαπίθαι) – Լապիթաց  
 Լինկէս / Ղինկէս (Λυγκεύς) – Լինգոս  
 Կարմոս (Κάμδος) – Կարմէս  
 Կալիփոս (Καλυψώ) – Կալիփոսէ  
 Կանդաւղէս / Կանդաւլէս (Κανδαύλης) – Կանտուղէս  
 առ Կեկրոպեաւ (Κέκροπος) – առ Կրոպեաւ

Կեկրովպս (Κέκροψ) – Կեկրովպոս  
 Կեկրոփս<sup>1</sup> (Κέκροψ) – Կիկրոփս  
 Կերկոպք (Κέρκωπες) – Կեկրոպեանք  
 Կիբելե (Κυβέλη) – Կիւպեղէ  
 Կիպրիս (Κυπρίς), ալսինքն՝ կիպրոսուհի – Կիպրոս  
 Կնոսացի (Κνώσσιος) – անոսացի  
 Կովկաղայ (Κωκάλου) – Կովկէղայ  
 Կրանաոս (Κραναός) – Կարանոս, Կրոնոս / Կրաւնոս  
 Կրեոն (Κρέων) – Կերմոսի  
 Կրեոնտեայ / Կրէոնեայ (Κρέοντος) – Կրետայ  
 Հեկտոր (Έκτωρ) – Ենտորոս  
 Հեսպերիոն (έσπέριον) – Սպարիոն  
 Հիդրա (Ύδρα) – Հեդրաս  
 Հիպոմենէս (Ίππομένης) – Պոմպենէս  
 Հիրիևս (Ύριεύς) – Իւրեփս<sup>2</sup>  
 Հոմերոս (Όμηρος) – Հերմէս  
 Հոմոլոլոս (Ρωμόλος) – Հոմոմելոս  
 Ղաւոմեդոն (Λαομέδων) – Ղաւոմեդէս  
 Ղեղայ (Λήδα) – Ղետայ  
 Մաքբերևս (Μαχαιρέυς) – Քեր  
 Մեդեա (Μήδεια) – Բուդիա  
 Մեդեա Կողքիացի (Μήδεια Κολχίς) – Մենտէ Կողքիաց  
 Մենեղաոս (Μενέλαος) – Իմենաղոս / Ի Մենաղայ, Մենեղոս  
 Մենեսթևս (Μενεσθέυς) – Մոսթոս / Մէնթիոս / Մէնթոս, Տանասթէս  
 Մինոս (Μίνως) – Նինէս, Մենով  
 միկենացիք (Μυκηναῖοι) – մուկենացիք  
 Մոլիոնէ (Μολιόνη) – Մոլոն  
 Ոլիմպոս (Όλυμπος) – Ղոմպոս / Ոլոմպիոս / Ոլոմպիոս  
 Ոսա (Όσσα) – Սեսոս, Ոսիա, Ոսոս, Ովս  
 Ովգիգեան (Ωγύγιος) – Ուգիգեան  
 Ոտոս (Ότος) – Ոսոս, Սոսոս  
 Որփևս (Ορφεύς) – Որփիս  
 Պայն (Πάν) – Պան  
 Պասիփայե (Πασιφάη) – Փասիփա  
 Պարիս (Πάρις) – Պարէս / Պարէտ  
 Պաւղիփիգէս (Πολυφείδης) – Պոլիփիլէս  
 Պաւղիքսենէ (Πολυξένη) – Պաւղիքսենէս  
 Պեգասոս (Πήγασος) – Պէգասիոս  
 Պելիաս (Πελίας) – Պէլաս  
 Պելիոն (Πήλιον) – Բիլոն / Բիդոն / Բիւդոն  
 Պելոպս (Πέλοψ) – Պալպոս / Պալամպոս / Պելպոս, Պալոմպիս  
 Պելոպիգեանք (Πελοπίδης) – Պոլոպիգեանք  
 Պելոպոննէս (Πελοπόννησος) – Պոնոպաւլիս  
 Պելոփս (Πέλοψ) – Պելդդոպոս

<sup>1</sup> «Կեկրովպս» և «Կեկրոփս» երկու տարբերակն էլ կարելի է դիտել որպէս հունարեն Κέκροψ անվան ճիշտ վերարտադրություն. ψ տառը կարող է համապատասխանել քաղաձայնների կ' πς, կ' φς (ինչպէս նաև βς) խմբերին:

<sup>2</sup> «Իւրեփս» ձևը թերևս ճիշտ չէ համարել Կրիւս անվան աղավաղված տարբերակ, քանի որ այն հնչել է «Հյուրիևս»/«Յուրիևս». «ևս» - «եփս» անցումը միանգամայն հասկանալի է:

Պենթևս (Πενθεύς) – Պանթևս  
 Պիկոս (Πείκος) – Պիպկոս  
 Պիրիթոս (Πειρίθου) – Պերինթոս  
 Պիււոս (Πύρρος) – Պիււաս  
 Պոլինիկէս (Πολυνείκης) – Կուլինիկէս, Պողիկէս  
 Պոսեյդոն / Պոսիդոն (Ποσειδών) – Պիսիդոն  
 պրիամական (πριαμικός) – պրիմիական / պրիմէական / պրիմէական / պրոմիական / պրոմէական  
 Պրոմէթէս (Προμηθεύς) – Պրոմիթէս, Պրիմիթէս, Պրոմեթէոս, Պրոմիդէս, Պրոմեդէս, Պրիմիդէս, Պրիմիդէս, Պրիմիդէս, Պրիմիդէս, Պրիմիդէս, Պրիմիդէս  
 Սախոյ (Σάξ) – Սասիոյ  
 Սեմէդեայ (Σεμέλη) – Սելովմացլոցն  
 Սիդոն (Σιδών) – Սայիդ  
 Սիկիոն (Σικυών) – Սիկոն  
 սուսիանս (Σουσιανούς) – նուսիանս (Հոգնակի Հայցական)  
 սոփեստէս (σοφιστής) – սոփեստրոս  
 Տաւտանէս (Ταυτάνης) – Մաւտանէս  
 Տենարոն (Ταίναρον) – Ստենարոն  
 Տիթոնոս (Τιθωνός) – Տիտոնիս / Տիթոլոն / Տիթոլոնիս / Տիթոնիոս  
 Տիտիւոս (Τιτυός) – Տիտքոս  
 Տիւդէս (Τυδεύς) – Տուդէս  
 Տիւրոսի (Τύρος) – Սուր  
 Տրիպտոլեմոս (Τριπτόλεμος) – Տրիպտոլոմէոս, Տրիպտոլոմոս / Տրիպտոլոմէոս  
 տրոացիք (Τρῶες) – Դրոացիք  
 Տրոյա (Τροία) – Տիւրիա  
 Տրովայ (Τροία) – Տրւայ  
 Փերեփատէ (Φερεφάττη) – Փերափտէ  
 Փլեգրա, Պալլենե (Φλέγρα... Παλλήνη) – Փիլագրա... Պաղղանէ  
 Փորոնէս (Φορωνεύς) – Փորոն  
 Քարիբդեայն (Χάρυβδις) – Քարիդեայն

Անունները աղավաղումները կարող են բացատրվել զանազան պատճառներով՝ հունարենի արտասանութեան փոփոխութեամբ, քերականական ձևերի սխալ մեկնաբանութեամբ և պարզապէս անծանոթ բառերի ընդօրինակման ժամանակ տառերի շփոթութեամբ<sup>1</sup>: Այդ առումով որևէ օրինաչափութիւն չի ընկալուել և մատնացուցց անել:

Երբեմն փոխվել կամ շփոթվել են նաև անունների հունական վերջավորութիւնները. օրինակ<sup>2</sup>

«էս»-ի փոխարեն «ոս». Իռակղոս, սոփեստրոս, Փալտոս,  
 «ոս»-ի փոխարեն «էս»՝ Կաղմէս,  
 «ոս»-ի փոխարեն «իոս»՝ Դիոնեսիոս, Դիոնիսիոս, Ոլոմպիոս, Ոլոմպիոս, Եւնոմիոս, Պէգասիոս,  
 «իոս»-ի փոխարեն «ոս»՝ Ուլգիգոս,  
 «ոս»-ի փոխարեն «աս»՝ Պիււաս,  
 «լս»-ն ամենից շատ է փոփոխութեան ենթարկվել՝ փոխարինվելով «ոս»-ով, «իս»-ով, «էս»-ով, «էոս»-ով, «աս»-ով կամ պարզապէս բացթողնվելով. Թևսոս (Թեսևս), Լինգոս (Լինկևս), Ուր-

<sup>1</sup> Միխայել Ասորու բնագրում առկա է նաև ասորերենի միջնորդութեան գործոնը:  
<sup>2</sup> Բերված օրինակներում կան և այլ աղավաղումներ. դրանք հատուկ չենք նշում:

փիս, Պրոմիթէս, Պրոմեթէոս, Պռոմիդէս, Պռոմեդէս, Պռիմիդեա, Պռիմիդաս, Պռոմիթոս, Ունէոս (էնէս), Տանասթէս (Մենեսթէս), Փորոն (Փորոնէս),

վերջավորութիւնը զանց է առնվել՝ Դեդեդ, Դեդեդ (Դեդալոս), Դիոնէս, Անտրոգէ (Անդրոգէոս), Բեդորոփոնա, Բադերեփոնա (Բելերոփոնտես),

որպէս անվան ուղիղ ձև օգտագործվել է հունարեն սեռական հոլովածեր՝

ա. իգականի «է»-ին կցվել է «ս», և արդյունքում ստացվել է «Հերակլէս»-ին հիշեցնող «էս» վերջավորութիւնը՝ Դանաէս, Պաւղիքսենէս, Ափրոզիտէս,

բ. հունարեն երրորդ հոլովման սեռականի «ոս»-ն ընկալվել է որպէս երկրորդ հոլովման ուղղականի «ոս»՝ Ենտորոս (Հեկտոր), Կեկրովպոս (Կեկրոպս), Պեղղոպոս (Պեղոփս), և այլն:

## ԲՆԱԳՐԵՐ

### 1. Հարյուրաձեռքները, տիտանները, գիգանտները, Կերբերոսը, Քիմերան և Գորգոնները

Առասպելները պատմում են Ուրանոսից ու Գեայից ծնված հարյուրաձեռք և հիսունգլխանի հսկաներ Բրիարեոսի, Գիեսի ու Կոստոսի (Hes. *Theog.* 147–153, Apollod. 1.1.1 [1.1]), տիտանների (Hes. *Theog.* 207–210, Apollod. 1.1.3 [1.2]), գիգանտների (Hes. *Theog.* 185–186, Apollod. 1.6.1 [1.34]), Տիփոնից ու Եքիդնայից ծնված Կերբերոսի (Hes. *Theog.* 310–312), Հիդրայի (Hes. *Theog.* 313–315), Քիմերայի (Hes. *Theog.* 319–322, Hom. *Il.* 16.328–329, Apollod. 2.3.1 [2.31]) և Փորկոսից ու Կետոյից (սրանք Գեայի ու Պոնոսի զավակներն էին) ծնված Գորգոնների (Hes. *Theog.* 274–278, Apollod. 1.2.6 [1.10]) մասին:

Գրիգոր Նազ. ճառ 4.115 [140-141] = PG 35.653.4-30.

Բարևո՞ք երգել զԵսիրողայ զԱստուածածնութիւնն նոցա և որ անդ են զպատերազմունսն և զփախուստսն, զՏիտանսն, զՀսկայսն, Հանդերձ ահաւոր անուամբքն և իրաւքն, զԲրիարէոս, Ստիւգացի, զՀռչակեալ, զվիշապոտունսն նոցա, զՀանթազգեստ աստուածսն և որք ի նոցանէ ի վերայ առաքեալք էին նետք միանգամայն և գերեզմանք Հանդիպեցելոցն, զդառինսն նոցա զծնունդսն և զյառաջարկութիւնս, Հիւզրէ, Քիմեռուէ, Կերբերոսք, Գորգոնեսք, պատուաւիրութիւնն ամենայն չարի. այսոքիկ եղիցին Եսիրողայ բարեացն լսելեաց առաջի եղեալք:

Καλὸν προσάδεσθαι τὴν Ἑσιόδου Θεογονίαν αὐτοῖς καὶ τοὺς ἐκεῖ πολέμους καὶ κλόνους, τοὺς Τιτᾶνας, τοὺς Γίγαντας, μετὰ τῶν φοβερῶν ὀνομάτων τε καὶ πραγμάτων; Κότος, Βριάρεως, Γύγης, Ἐγκέλαδος, οἱ δρακοντόποδες ὕμῶν, οἱ κεραυνοφόροι θεοὶ, αἱ τούτοις ἐπαφιέμεναι νῆσοι, βέλη τε ὁμοῦ καὶ τάφοι τοῖς ἀπαντήσασιν τὰ πικρὰ τούτων γεννήματα καὶ προβλήματα, Ὕδραι, Χίμαιραι, Κέρβεροι, Γοργόνες, φιλοτιμία παντὸς κακοῦ. Ταῦτα ἔστω τῶν Ἑσιόδου καλῶν ταῖς ἀκοαῖς προτιθέμενα.

Լա՞վ է արդյոք, որ Հեսիրողոսը երգել է նրանց համար աստվածների ծննդաբանությունը և այնտեղ տեղի ունեցած պատերազմներն ու խժըժությունները, տիտաններին, գիգանտներին, ահավոր անուններով և գործերով, Բրիարեոսին, Ստիգացուն (Գիգեսին), Հռչակվածին (Հսկելադոսին), նրանց (ձեր) վիշապոտններին, շանթազգեստ (շանթակիր) աստվածներին և նրանց վրա նետված (+ կղզիները), հարձակվողների համար՝ միանգամից նետերն ու գերեզմանները, նրանց դառը ծնունդներն ու գոյացումները՝ Հիդրան (Հիդրաները), Քիմերան (Քիմերաները), Կերբերոսները, Գորգոնները, ամեն չարի փառասիրությունը. Հեսիրողոսի բարիքներից թող սրանք առաջադրվեն ականջներին:

Պլատոն, Օրին. 234 = Plat. *Leg.* 795.c.5-7.

Բայց զԳերիոնէի եթէ ոք զբնութիւնն ունելով, և կամ զԲրիարէի բնաւորեալ իցէ՝ հարիւր ձեռաւքն հարիւր նետք ոստուցանել հնարաւոր գոլով:

Γηρυόνοῦ δέ γε εἴ τις φύσιν ἔχων ἢ καὶ τὴν Βριάρεω φύοιτο, ταῖς ἑκατὸν χερσὶν ἑκατὸν δεῖ βέλη ρίπτειν δυνατόν εἶναι.

Եթե մեկն ունենար Գերիոնեսի<sup>1</sup> կամ Բրիարեոսի բնությունը, նա պետք է կարողանար հարյուր ձեռքով հարյուր նետ արձակել:

<sup>1</sup> Գերիոնեսի կովերը բերելը Հերակլեսի տասներորդ սխրանքն էր (տե՛ս դրվագ 50): Առասպելի տարբերակներում այդ հրեշը երեք մարդու սերտաճած մարմին ուներ (Apollod. 2.5.10 [2.106]), կամ երեք գլուխ (Hes. *Th.* 287):

## 2. Ուրանոսի ամորձատոււնը և Ափրոդիտեի ծնունդը

Ուրանոսն իր հսկա ու զարհուրելի գավակներին թաքցնում էր երկրի ընդերքում, և դրանից նեղված Գեան իր որդի Կրոնոսին սուր գերանդի տվեց, որով նա կտրեց իր հայր Ուրանոսի ամորձիքն ու ծովը գցեց: Առնանդամի շուրջը ջուրը փրփրեց, և այդ փրփուրից ծնվեց Ափրոդիտեն, որն ափ դուրս եկավ Կիպրոսում (Hes. *Theog.* 154–200, Apollod. 1.1.4 [1.3]):

Փիլոն, Նախախնամութիւն 73.

Երկնի Զրուան որդի է, ուստի զբարի ծննդա- [Մեջբերում Հեսիոդոսից]. Զրվանը (Կրոնոսը) կանսն, բարի շնորհ հատուցման փոխանակ Երկնքի (Ուրանոսի) որդին է, որից լավ սե- ծննդեանն հատուցանելով հօրն: րունդներ կան, ուստի իր ծննդեան դիմաց հորը շնորհահատույց եղավ:

Գրիգոր Նազ., Մ 2600, 12ա, Մ 946, 6ա = PG 36.337.35-36.

Եւ ոչ Ափրոդիտեայ պոռնկա- Սὺδὲ Ἀφροδίτης πορνικὰ μυσ- Եւ արդյո՞ք ոչ Ափրոդիտեի կան խորհուրդքն գարչելոյն, տήρια, τῆς αἰσχρῶς ὡς αὐτοὶ պոռնկական խորհրածեսերը, ով, որպէս նոքին իսկ ասեն, և ե- λέγουσι, καὶ γεννωμένης καὶ ինչպես ասում են, գարչելի և՛ ղելոյ և պատուեցելոյն: τιμωμένης. ծնվել է, և՛ պաշտվում է:

Նոննոս 1.5 [7] = Nonnos 39.5.1-10

Ասի թէ յերկաւորեացն երկնի Ափրոդիտէս ընկալաւ զլինելութիւնն, զի Կրոնոս ասէ որդի էր երկնի, առեալ գերանդի եհատ գերկաւորիսն հաւր իւրոյ և ընկեց ի ծով, և յայնմանէ հաւաքեալ փրփուր՝ բացանեալ լինի Ափրոդիտէս, ուստի և զանունն ընկալաւ, որ է փրփրածին, իբրու թէ ի փրփրոյ և ի յածմանէ ծնեալ. վասն որոյ և ասաց «գարչաբար ծնելոյն և պատուեցելոյն», զի և պատիւքն նորա և տաւնքն ի ձեռն գարչագործութեան և հեշտախտութեան և պոռնկութեան կատարեալ լինէին, և նոյն ինքն Ափրոդիտէս պոռնկութեան է վերատեսուչ:

λέγεται γὰρ ὅτι ἐκ τῶν αἰδοίων τοῦ Οὐρανοῦ ἔσχε τὴν γέννησιν ἢ Ἀφροδίτη. ὁ γὰρ Κρόνος, φησὶν, ὁ υἱὸς τοῦ Οὐρανοῦ, λαβὼν τὸ δρέπανον ἀπέκοψε τοῦ πατρὸς τὰ αἰδοῖα καὶ ἔρριψε εἰς τὴν θάλασσαν. καὶ ταῦτα τὰ αἰδοῖα πεσόντα καὶ ἀφρὸν συνάξαντα ἀπεκύησαν τὴν Ἀφροδίτην, διὸ καὶ Ἀφροδίτη καλεῖται, ὡς ἐκ τοῦ ἀφροῦ καὶ τῆς καταδύσεως γενομένη. διὸ εἶπεν “αἰσχρῶς γεννωμένης καὶ τιμωμένης”. ὁμοίως γὰρ καὶ αἱ τιμαὶ αἱ περὶ αὐτὴν καὶ αἱ ἑορταὶ δι’ αἰσχρουργίας καὶ ἠδυπαθείας καὶ πορνείας ἐτελοῦντο, ὡς καὶ τῆς πορνείας αὐτῆς ἐφόρου τῆς Ἀφροδίτης.

Ափրոդիտեն, ասում են, Ուրանոսի ամորձիքից է ստացել իր ծնունդը, քանի որ Կրոնոսն, ասում է, Ուրանոսի որդին, գերանդի վերցնելով կտրեց իր հոր ամորձիքն ու ծովը գցեց, և դրանից փրփուր հավաքվեց, և ծնվեց Ափրոդիտեն, որտեղից և ստացավ իր անունը, այսինքն՝ փրփրածին (*չիք*), իբր փրփուրից և զեզերելուց (իջնելուց) ծնված: Դրա համար էլ ասաց. «որը գարչելի և՛ ծնվել է, և՛ պաշտվում է», քանի որ նրա պաշտամունքն ու տոները կատարվում էին գարչելի արարքներով, ցանկասիրությամբ և պոռնկությամբ, Ափրոդիտեն ինքն էլ պոռնկության վերատեսուչն է:

Գրիգոր Նազ., ճառ 4.121.3-5 [150] = PG 35.660.44-46.

Ո՞րպէս ոչ հաւանեցուցանէ Քրոնոս զԵրկնի ի բաց հատա- Πῶς δὲ οὐ πείσει Κρόνος Οὐρανὸν ἐκτεμῶν, ἴν’ ἄγονος ᾗ Ինչպե՞ս չի համոզի Կրոնոսը, կտրելով Երկնքի (Ուրանոսի)

նելով գերկուորեակսն, զի ան-  
ծնունդ իցէ յաստուածոց, և  
տայցէ ալեաց կատարել աստ-  
ուած փրփրածնեալ:

θεῶν, καὶ δῶ κύμασιν ἀποτελέ-  
σαι θεὸν, ἄφροῦ γέννημα;

ամորձիքը, որպեսզի զրկվի  
աստվածներ աշխարհ բերելուց  
և ալիքներին հնարավորու-  
թյուն տա փրփրածին աստված  
ստեղծելու:

Նոննոս 3.81 [62] = Nonnos 4.88.1-5.

Երկին հայր լինէր Կռովնոսի,  
և Կռովնի ոչ կամեցեալ լինել  
նմա այլու՞մ որդւոյ, առեալ գե-  
րանդի՝ ի բաց հատանէ գպատ-  
կառանս հաւրն և ընկենու ի  
ծով: Եւ փրփրոյ ելոյ շուրջ  
գնովա՛ւ՝ ծնանի Ափրողիտէս ի  
փրփոյ անտի. ուստի և անուա-  
նեցաւ Ափրողիտէս, որ է  
փրփրածին:

Οὐρανὸς γίνεται Κρόνου πατήρ.  
ὁ Κρόνος οὖν μὴ βουλόμενος  
γενέσθαι αὐτῷ ἕτερον παῖδα,  
λαβὼν δρέπανον ἐκτέμνει τὰ αἰ-  
δοῖα τοῦ πατρός, καὶ ρίπτει τὰ  
αἰδοῖα εἰς τὴν θάλασσαν. Καὶ  
ἄφροῦ γενομένου ἐγεννήθη ἡ  
Ἀφροδίτη ἐκ τοῦ ἄφροῦ· ἔνθεν  
καὶ Ἀφροδίτη ὠνομάσθη ὡς ἐκ  
τοῦ ἄφροῦ.<sup>1</sup>

Երկինքը (Ուրանոսը) Կրոնոսի  
հայրն էր, և Կրոնոսը, չցանկա-  
նալով, որ նա այլ որդի ունենա,  
վերցրեց գերանդին, կտրեց հոր  
ամոթույքն ու ծովը նետեց: Եվ  
երբ նրա շուրջը փրփուր գոյա-  
ցավ, այդ փրփուրից ծնվեց  
Ափրողիտեն. ուստի և կոչվեց  
Ափրողիտե, որ նշանակում է  
փրփրածին (իբր փրփուրից):

Գրիգոր Մագիստրոս 47 (ԽԹ).4.

... իբրու զԱփրողիտէս, որ ի փրփրոյ և յա-  
րենէ ծնեալ:

... ինչպես Ափրողիտեն, որ ծնվել է փրփուրից և  
արյունից:

### 3. Կիկլոպներ

Ուրանոսն ու Գեան ծնեցին ճակատի մեջտեղում մեկ կտր աչք ունեցող կիկլոպներին՝ Բրոն-  
տեսին, Ստերոպեսին և Արգեսին: Նրանք Չևսին շանթ ու ամպրոպ էին տալիս (Hes. *Theog.* 140–  
146, Apollod. 1.1.2 [1.1], 1.2.1 [1.7]):

Եւսեբիոս, Փրոնիկոն Ա. 82.

Բէղոս էր ասէ ասորեստանեաց թագաւոր. և առ  
նովաւ կիկլոպայքն՝ փայլատակունս և շանթս  
հրացանս Արամազդայ մարտուցելոյ ընդ տի-  
տանացիսն նպաստ ի կռիւ լինէին: Եւ թագա-  
ւորք տիտանացւոց ճանաչէին ի ժամանակին.  
յորոց մի էր Ովգիգոս արքայ: Եւ յետ սակաւ  
բանից գնովիւմբ ածեալ՝ ասէ, թէ սկայք դիմե-  
ցին ի վերայ դից և սատակեցան, գաւրավիզն  
աւգնականութեան դիցն լեալ Հերակլի և Դիո-  
նէսի՝ որ էին ի տիտանացն:

Բելոսն, ասում է [պատմագիր Կաստորը], Ասո-  
րեստանի թագավորն էր, և նրա օրոք կիկլոպ-  
ները տիտանների դեմ մարտնչող Արամազդին  
(Չևսին) կայծակներ ու հուր ցանող շանթեր  
էին մատակարարում: Եվ այդ ժամանակ ճանաչ-  
ված էին տիտանների թագավորները, որոնցից  
մեկն Օգիգոս արքան էր: Եվ նրանց մասին մի  
քիչ խոսելուց հետո ասում է, որ գիգանտները  
հարձակվեցին աստվածների վրա և սպանվե-  
ցին, քանի որ աստվածներին գորավիզ եղան  
Հերակլեսն ու Դիոնիսոսը, որոնք տիտաններից  
էին:

<sup>1</sup> Ափրողիտեի անունը կապվում է «փրփուր» բառի հետ, քանի որ ἄφρο՛ς նշանակում է «փրփուր»:



Գրիգոր Նազ., ճառ 4.108.6-7 [130] = PG 35.644.26-27.

Յորո՞ց քեզ գէնքդ, քաջդ: Ո՞չ ի Կիւղղոպացւոցն, յորոց դարբնելն:

παρὰ τίνων σοι τὰ ὄπλα, ὧ γενναϊότατε; Οὐ τῶν Κυκλώπων, ἐξ ὧν τὸ χαλκεύειν;

Ումի՞ց է գենքդ, ո՛վ քաջ, մի՞թե կիւղղոպներից, որոնցից դարբնությունն է:

Նոննոս 3.58 [49] = Nonnos 4.65.4-10.

Ի Սիկլիա կղզւոջ առ լեռնակողմամբքն լինել ասին կիւղղովպեանքն՝ Հովուական կենցաղով կեալ ճաՀաւորեալք, և մանաւանդ՝ բռնութեամբ: Եւ ասին մարդակերք գոլ սոքա, որք և զընկերսն Ողիւսեայ կերան: Այլ երեք ասացեալ լինին ի սոցունց արտունանկեալքն՝ դարբինք արուեստիւ, որք ի ձեռն իւրեանց արուեստին գորտումն և զփայլատակումն Արամազդայ կազմեցին: Եւ ասին արտունանկեալք սոքա՝ Բուովնտէս, Ստերովպէս, Արգէս: Եւ կիւղղովպեանք անուանէին, որպէս Եսիրովոս ասէ, զի մի ակն ունէին բոլորեալ, և որպէս այլք՝ զի ի բոլոր կղզւոջ բնակէին:

Ἐν τῇ Σικελίᾳ τῇ νήσῳ περὶ τὰ ὄρεινὰ αὐτῆς λέγονται γενέσθαι οἱ Κύκλωπες, ποιμενικὸν μὲν βίον ἐπιτηδεύοντες, ζῶντες δὲ βιαιότερον. Λέγονται δὲ οὗτοι ἀνθρωποφάγοι εἶναι καὶ κατεδηδοκέναι τοὺς τοῦ Ὀδυσσεύος ἐταίρους. τρεῖς δὲ αὐτῶν λέγονται οἱ ἐξοχώτατοι, Βρόντης, Στερόπη, Ἄργης. λέγονται δὲ οὗτοι αὐτοὶ καὶ ἐξοχώτατοι χαλκεῖς τὴν τέχνην, οἵτινες διὰ τῆς οἰκειᾶς τέχνης τὴν βροντὴν καὶ τὴν ἀστρατὴν τῷ Διὶ κατεσκεύασαν. Κύκλωπες δὲ ἐλέγοντο, ὡς μὲν Ἡσίοδος, ὅτι ἕνα εἶχον κυκλοτερῆ ὀφθαλμὸν ἐν τῇ ὄψει, ὡς δὲ Τηλέφατος, ὅτι κυκλοτερῆ τινα νῆσον ὠκοῦν.

Ասում են՝ Սիկլիա կղզու լեռներում կան կիւղղուներ, որ ապրում են հովվական կյանքով և Հատկապես՝ բռնությամբ: Ասում են՝ սրանք մարդակեր են և կերել են Ողիւսեայ ընկերներին: Սրանցից երեքն, ասում են, աչքի են ընկնում դարբնական արվեստով. նրանք իրենց արվեստի օգնությամբ պատրաստել են Արամազդի (Զևսի) ամպրոպն ու կայծակը: Այդ աչքի ընկնողներն են Բրոնտեսը, Ստերովպեսը, Արգեսը<sup>1</sup>: Եվ կոչվում էին կիւղղուներ, ինչպես Հեսիրոսն է ասում, որովհետև մեկ կլոր աչք ունեին (+ դեմքին), և ինչպես ուրիշները (Տելեփատոսը)՝ որովհետև բնակվում էին (+ ինչ-որ) կլոր կղզում:

#### 4. Ուրանոսի և Գեայի զավակները

Ուրանոսից ու Գեայից ի թիվս այլոց ծնվեցին Օվկիանոսն ու Տեթիսը (Hes. *Theog.* 132–136, Apollod. 1.1.3 [1.2]), նաև՝ Կրոնոսն ու Հռեան (Hes. *Theog.* 135, 137–138, Apollod. 1.1.3 [1.2]), Պոնոսից ու Գեայից՝ Փորկոսը (Hes. *Theog.* 136, 237–238, Apollod. 1.2.6 [1.10]), Կրոնոսից ու Հռեայից՝ Չևսն ու Հերան և ուրիշներ (Hes. *Theog.* 453–457, Apollod. 1.1.5-6 [1.4-5]):

Պլատոն, Տիմէոս 106 = Plat. *Tim.* 40.e.3-41.a.3.

Երկրի և Երկնի մանկունք՝ Ովկիանոս և Տեթիւս եղեն. և սոցա Փոռկիւս և Կռոնոս և Ռէա, և որչափ յետ սոցունց: Իսկ ի Կռոնոսէ և ի Ռէայէ՝ Արամազդ և Հեռա, և ամենքին

Γῆς τε καὶ Οὐρανοῦ παῖδες Ὠκεανός τε καὶ Τηθύς ἐγενέσθην, τούτων δὲ Φόρκυς Κρόνος τε καὶ Ῥέα καὶ ὅσοι μετὰ τούτων, ἐκ δὲ Κρόνου καὶ Ῥέας Ζεὺς Ἥρα τε καὶ πάντες ὅσοις ἴσμεν

Երկրի (Գեայի) և Երկնքի (Ուրանոսի) զավակներն Օվկիանոսն ու Տեթիսն էին. նրանցն են նաև Փորկիսը, Կրոնոսն ու Հռեան և նրանք, որ սրանցից հետո են: Կրոնոսից և Հռեայից

<sup>1</sup> «Սրանցից երեքն... Արգեսը» հատվածի ներսում հույներնում մասերի դասավորությունը տարբեր է:

զոր գիտեմք ասացեալ եղ- ̐δελφοὺς λεγομένους αὐτῶν,  
բարքն սոցունց և տակաւին ̐τι τε τούτων ἄλλους ἐκγόνους.  
սոցա այլ ծնունդք:

յից՝ Արամազդը (Զևսը) ու Հե-  
րան և այն բոլորը, որոնց ճա-  
նաչում ենք որպէս սրանց եղ-  
բայրներ, ինչպէս նաև՝ սրանց  
մյուս սերունդները:

## 5. Չևսի ծնունդը

Կրոնոսը խոշոր էր Հռեայից ծնված իր զավակներին, և, երբ ծնվեց Զևսը, Հռեան Կրոնոսին խաբեց՝ մանկան փոխարեն քար տալով, որը նա կլանեց: Իսկ Զևսին Հռեան ծնեց Կրետե կղզում: Զևսը խորամանկութեամբ հորը ստիպեց դուրս փսխել իր քույրերին ու եղբայրներին (Hes. *Theog.* 459–500, Apollod. 1.1.5-1.2.1 [1.4-6]), այնուհետև Պոսէյդոնի և Պլուտոնի օգնութեամբ կռվեց Կրոնոսի ու տիտանների դեմ, հաղթեց և նրանց Տարտարոսը գցեց (Hes. *Theog.* 629–718, Apollod. 1.2.1 [1.7]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 66-68.

Ի Կրետէ թագաւորեաց նախ Կրէս անդստին յաշխարհէն, յորմէ Կրետէ անուանեցաւ. զորմէ ասեն լինել մի ի կուրետայց, որք զԴիոս թաքուցին և սնուցին: Սոքա շինեցին քաղաք ի Կրետէ և զտաճարն Կիւպեղեայ մաւր Արամազդայ:

Կրետում սկզբից թագավորեց այդ երկրի ծնունդ Կրետը, որից Կրետեն ստացավ իր անունը. նրա մասին ասում են, որ կուրետներից մեկն էր, որոնք Զևսին թաքցնելով սնուցեցին: Սրանք շինեցին մի քաղաք Կրետեում և Արամազդի մայր Կիբելեի տաճարը:

Հմմտ. Sync. 145.19-23.

έβασίλευσε Κρήτης Κρής αὐτόχθων, ὄν ἕνα λέγουσι τῶν Κουρήτων, παρ' οἷς ὁ παρ' Ἑλλησι λεγόμενος ψευδώνυμος θεὸς Ζεὺς κρυφθεὶς ἀνετράφη, καὶ Κρήτης ἐτυράνησεν. ἐξ αὐτοῦ τοῦ Κρητὸς ἡ νῆσος ὠνομάσθη Κρήτη. τοὺς αὐτοῦς φασὶ Κούρητας κτίσαι πόλιν Κνωσὸν ἐν Κρήτη καὶ ἱερὸν Κυβέλης μητρός.

Կրետում թագավորեց հողածին Կրետը, ով, ասում են, կուրետներից մեկն էր, որոնց մոտ թաքնված՝ սնուցվեց հուլյների կողմից Զևս կոչվող սուտանուն աստվածը և թագավորեց Կրետեում: Այս Կրետի անունով կղզին կոչվեց Կրետե: Ասում են, որ նույն կուրետները Կրետեում հիմնեցին Կնոսոս քաղաքը և մայր Կիբելեի տաճարը:

Փիլոն, Նախախնամութիւն 73.

(Եսիոդոս) Երկնի Զրուան որդի է, ուստի զբարի ծննդականն, բարի շնորհ հատուցման փոխանակ ծննդեանն հատուցանելով հաւրն: Իսկ Արամազդ ի Զրուանայ ի բաց հանեալ զթագաւորութիւնն, ի Տարտարոսս էարկ զնա:

[Մեջբերում Հեսիոդոսից]<sup>1</sup>. Զրվանը (Կրոնոսը) Ուրանոսի որդին է, որից լավ սերունդներ կան. ուստի իր ծննդեան դիմաց հորը շնորհահատույց եղավ: Իսկ Արամազդը (Զևսը), խլելով Զրվանից (Կրոնոսից) թագավորութունը, Տարտարոսը նետեց նրան:

Գրիգոր Նազ., «Ի յայտնութիւն Տեառն», ձեռ. ՄՊ2600, 11բ, ՄՊ946, 5ա = PG 36.337.14-19.

Ո՞չ Արամազդա այսոքիկ Օὐ Διὸς ταῦτα γοναὶ καὶ κλο- Արդյո՞ք սրանք սերունդներն

<sup>1</sup> Հեսիոդոսի մեզ հասած երկերի և կորսվածների բեկորների մեջ այսպիսի հատված չի պահպանվել:

ծնունդը և գողութիւնը կրէ-  
տացուց բռնաւորի, թէպէտ և  
հեթանոսացն չթուի հաճոյ, և  
ն՞չ կուրետացն հնչմունք և  
կայթմունք և կաքաւք զի-  
նուք, դաստուծոյ լալոյ ձայն  
թագուցանելով, զի յորդրատ-  
եաց հաւրէն դանխլասցի, քան-  
զի դժնդակ էր, իբրև գմա-  
նուկն լալով, և իբրև գքար  
կլեալ:

Նոննոս 1.1 [3-4] = Nonnos 39.1.1-21.

ԶԱրամազդ աստուածաբանքն  
հեղդենացուց ի Կրովնոսէ ա-  
սեն ծնեալ, և ծնանելով կեց-  
եալ այսպէս՝ Կրովնոս ընդ  
Հռէի ամուսնացեալ և նորին  
եղեալ բնակակից, գմանկունսն  
գորս ծնանէր, առեալ սա՛ կլա-  
նէր, և այսպէս բազում անգամ  
այսմ իրի լինելով՝ անգաւակ  
մնացեալ լինէր Հռէ: Արդ՝ յոր-  
ժամ գԱրամազդ ծնաւ, երկու-  
ցեալ, թէ գուցէ և գայս կլանի-  
ցէ և կորուսցէ, վէմ պատեալ ի  
խանձարուրս, իբր թէ տղայ,  
ետ ցԿրոնոս զի կլանիցէ, և  
գԱրամազդ արտադրեալ՝ պա-  
հեաց ի Կրետէ և կարգեաց առ  
տղային զկորիւբանտսն և  
զկուրետսն՝ կաքաւել և զի-  
նուք թնդիւնս առնել, զի լի-  
նիցին հնչմունք այսպիսիք  
հնարաւորք, մինչ և գողանալ  
և մուրեցուցանել գձայն լա-  
լոյ մանկանն, զի մի գիտացցէ  
Կրոնոս զթաքուստ մանկանն  
և<sup>1</sup> առեալ կլանիցէ գնա... Իսկ  
կրետացուց բռնաւորին ասաց,  
քանզի առասպելաբանքն<sup>2</sup> եղ-

պա՛, τοῦ Κρητῶν δὲ τυράννου  
κᾶν Ἑλληνας ἀπαρέσκονται,  
οὐδὲ Κουρήτων ἦχοι, καὶ κρό-  
τοι, καὶ ὄρχήσεις ἔνοπλοι, θεοῦ  
κλαίοντος ἠχὴν συγκαλύπτου-  
σαι, ἵνα πατέρα λάθῃ μισότεκ-  
νον. δεινὸν γὰρ ἦν ὡς παιδίον  
κλαυθμυρίζεσθαι, τὸν ὡς λίθον  
καταποθέντα.

Τὸν Δία οἱ θεολόγοι τῶν Ἑλλή-  
νων ἐκ Κρόνου λέγουσι γεννη-  
θῆναι, καὶ γεννηθέντα περισω-  
θῆναι τοιῶσδε. ὁ Κρόνος τῆ  
Ῥέα γενόμενος σύνοικος, ἅπερ  
ἔτικτεν αὐτῷ παιδιά, λαμβάνων  
κατέπιεν. καὶ οὕτως ἐπὶ πολ-  
λῶν τούτου γινομένου, ἄτεκνος  
ἔμενεν ἡ Ῥέα. ὅτε οὖν ἐγέννησε  
τὸν Δία, φοβουμένη μήπως καὶ  
τὸ βρέφος τοῦτο καταποθὲν ἀ-  
πόληται, λίθον μὲν σπαργανώ-  
σασα δέδωκε τῷ Κρόνῳ ὡς βρέ-  
φος καταπιεῖν, τὸν δὲ Δία ὑπε-  
χέθετο ἐν τῇ Κρήτῃ. καὶ παρέσ-  
τησε τῷ βρέφει τοὺς Κορύ-  
βαντας καὶ τοὺς Κουρήτας ὀρ-  
χεῖσθαι καὶ κροτεῖν καὶ κτυπεῖν  
τὰ ὄπλα αὐτῶν, καὶ γίνεσθαι τι-  
να ἦχον τὸν δυνάμενον ὑπο-  
κλέπτειν καὶ παρακρούειν τὸν  
ἐξ τοῦ κλαυθμοῦ τοῦ παιδίου  
ἦχον, ἵνα μὴ μαθῶν ὁ Κρόνος  
ποῦ κέκρυπται λαβῶν καταπίῃ...  
Κρητῶν δὲ τυράννου εἶπεν ὅτι  
οἱ μὲν θεολόγοι τῶν Ἑλλήνων  
θεὸν λέγουσι γενέσθαι καὶ τὸν  
Κρόνον καὶ τὸν Δία.

ու գաղտնի գործերը չեն Արա-  
մազդի (Զևսի)՝ Կրետեի բռնա-  
կալի, թեկուզ և հեթանոսները  
(հելլենները) դժգոհեն, և ն՞չ  
կուրետների ձայներն ու աղ-  
մուկը և զինված պարերը՝  
աստծո լացի ձայնը ծածկելով,  
որպեսզի թաքնվի որդիատյաց  
հորից, քանի որ սարսափելի էր  
որպես մանուկ լացողն ու որ-  
պես քար կլանվածը:

Հուշն աստվածաբաններն ա-  
սում են, որ Արամազդը (Զևսը)  
ծնվել է Կրոնոսից և, ծնվելով,  
այսպես է փրկվել. Կրոնոսն, ա-  
մուսնանալով և կենակցելով  
Հռեայի հետ, այն մանուկնե-  
րին, որ նա իրենից ծնում էր,  
վերցնում կուլ էր տալիս, և քա-  
նի որ դա բազմիցս այդպես ե-  
ղավ, Հռեան անգավակ էր  
մնում: Ուրեմն, երբ ծնեց Արա-  
մազդին (Զևսին), վախենալով,  
որ սրան էլ կուլ կտա և կկոր-  
ծանի, մի քար բարուրելով որ-  
պես մանուկ, տվեց Կրոնոսին,  
որ կուլ տա, իսկ Արամազդին  
(Զևսին) դուրս տանելով թաքց-  
րեց Կրետեում և մանկան մոտ  
կարգեց կորիբանտներին ու  
կուրետներին<sup>3</sup>, որ պարեն և (+  
իրենց) զենքերը շրխկացնեն,  
որպեսզի այդպիսի աղմուկը  
թաքուն պահի և հեռացնի  
մանկան լացի ձայնը, և Կրոնո-  
սը չիմանա, թե որտեղ է թաքն-  
ված մանուկը, չբռնի կուլ տա...  
Իսկ [Գրիգորն] ասաց՝ «Կրետեի  
բռնակալի», քանի որ հուշների

<sup>1</sup> Մ598 թէ ուր է մանուկն քազուցեալ:

<sup>2</sup> Մ598 աստուածաբանքն:

<sup>3</sup> Կորիբանտները կիսաստվածներ էին՝ Հռեայի, Դիոնիսոսի կամ վայրի բնության ու լեռների քրակական աստվածուհի Կիբելեի ուղեկիցները: Կուրետները պատանի ռազմիկ կիսաստվածներ էին (թվով երկուսից տասը)՝ հավանաբար կապված նաև բերրիության հետ, քանի որ նրանք կորիբանտների հետ ուղեկցում էին բնության «մեծ մայր» Հռեա-Կիբելեին (MC, s.v. Κυρеты [299]): Նրանց վարմունքը (գեների աղմուկով մանկան լացը խլացնելը) արձագանք է նորածնի օրորոցից շար ոգիներին քշելու իրական սովորույթի (Frazer I, 8): Կրետեում Զևսի քրները կուրետների ծեսերի ժա-

դենացւոց աստուած ասեն ե-  
ղեալ զԱրամազդ...

աստվածաբաններն ասում են,  
որ (+ և՛ Կրոնոսը և՛) Արա-  
մազդն (Ջևան) աստված էր...:

Յովհաննէս Երզնկացի, Ճառք Բ, էջ 56.

Նեմիական լախուրն [ձաւնէին] կորիբանդացն, Նեմեական լախուրը<sup>1</sup> ձոնում էին կորիբանո-  
որպէս թէ ի նոցա պատճառ բուսաւ: ներին՝ իբր նրանց պատճառով է աճել:

Գրիգոր Նազ., ճառ 4.115. [142] = PG 35.653.28-30.

... որ դամենեսեանն կլանէր ո՛ πάντας καταπίνων τοὺς ἄλ- ... նա, որ կուլ էր տալիս մյուս  
զայլսն և ապա ի վեր փսխէր λους, εἶτ' ἀναδιδούς θεοὺς, ἵνα բոլորին և ապա դուրս էր  
զաստուածսն, զի լինիցի հայր γένηται πατήρ ἀνδρῶν τε θεῶν փսխում աստվածներին, որ-  
արանց և աստուածոց... τε. պեսզի դառնա մարդկանց և  
աստվածների հայրը:

Գրիգոր Նազ., ճառ 4.121.6-7 [151] = PG 35.661.1-2.

Կրոնի Արամազդ ի վերայ յա- Κρόνω Ζεὺς ἐπανιστάμενος, Արամազդը (Ջևար), ընդօրինա-  
րուցեալ ըստ նմանութեան κατὰ μίμησιν τοῦ πατρὸς, ὁ կելով հորը, ապստամբելով  
հաւրն, քաղցր քարն և դառն γλυκὺς λίθος καὶ πικρὸς τυ- Կրոնոսի դեմ, քաղցր քար էր և  
բռնաւորասպանն... ραννοκτόνος. դառը բռնապետասպան:

Նոննոս 3.82 [62] = Nonnos 4.89.1-11.

Ջևա իմացեալ, թէ այնպէս դա- Ὁ Ζεὺς μαθὼν ὅτι τοιοῦτός ἐσ- Ջևան իմանալով, թե Կրոնոսն  
ւակակեր է Կրովնոս՝ յառնէ ի τιν ὁ Κρόνος τεκνοφάγος, ἐπαν- այսպիսի զավակակեր է, ապս-  
վերայ նորա, և հանէ ի նմանէ ιστᾶται αὐτῷ, καὶ ἀποσπᾷ ἀπ' տամբեց նրա դեմ ու խլեց  
զթագաւորութիւնն, և ընկենու αὐτοῦ τὴν βασιλείαν, καὶ ποιεῖ նրանից թագաւորությունը և  
զնա յիշխանութենէն, ըստ ո- ἐκπεσεῖν τῆς ἀρχῆς τὸν Κρόνον ἵδιον πατέρα. Κατὰ μίμησιν ինչպես որ նա էր  
րում և նա յարեաւ ի վերայ δὲ εἶπε τοῦ πατρὸς ὅτι καὶ ὁ ապստամբել իր հայր Երկնքի  
հաւրն իւրոյ Երկնի, և առ Κρόνος ἐπανέστη τῷ Οὐρανῷ, (Ուրանոսի) դեմ (ու կտրել  
զթագաւորութիւնն: Այլ քաղց- καὶ ἔξετεμεν αὐτοῦ τὰ αἰδοῖα, նրա աճութույքը) և առել թա-  
րագոյն քար կոչէ վարդապետ καὶ ἔλαβε τὴν βασιλείαν. Γλυ- գավորությունը: Իսկ վարդա-  
զՋևա, և զնոյն՝ դառնագոյն κὺν δὲ λίθον καλεῖ τὸν Δία καὶ պետը<sup>2</sup> (չ/ք) քաղցր քար է կո-  
գոռոգասպան. քար՝ քանզի, որ- τὸν αὐτὸν πικρὸν τυραννοκτό- ռում Ջևան և նրան իսկ՝ դա-  
պէս ասացի. քար ետ Ռէ Կրով- νον. Λίθον μὲν ἐπειδὴ, ὡς εἶπον, ուր բռնապետասպան: Քար՝ ո-  
նեայ կլանել փոխանակ Ջևաի, ἢ Ῥέα λίθον δέδωκε τῷ Κρόνω րովհետև, ինչպես ասացի,

մանակ զհնավառ, աղմկալից պարեր էին պարում: Հմմտ. Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 102. «Կուրեւտացիք և կորիբանդեցիք ի Կնոստն բնակեցան. որք զհնուք զգեղեցիկ կաքաւսն գտին» = Sync. 175.9-10. Κορυῆτες καὶ Κορύβαντες Κνωσσὸν ὄκισαν, οἱ τὴν ἐν ὄπλοις εὐροθμον κίνησιν εὐρόντες – «Կնոստուր բնակեցնում էին կուրետներն ու կորիբանտները, որոնք հայտնագործեցին գեներով գեղեցիկ պարը (զուգակշիռ շարժումը)»: Միխայել Ասորի Ա 45. «Եւ կորիտացիք և կորիբանդեցիք զգինուք կաքաւսն գտին» – «Եվ կուրետներն ու կորիբանտները հայտնագործեցին գեներով պարերը»:  
<sup>1</sup> Հմմտ. Գրիգոր Նազիանզացի, «Ի Կիլարիանոս», ձ. ՄՄ 946, 300բ-301ա. «Ոչ ոստ ձիթենոյ ողոմպիական. ոչ ինչ որ դեղփիականք իսաղալիկք. ոչ իսթեմական շոճի, ոչ նեմեական լախուր, որովք երիտասարդք թշուառք պատուեցան»: Նոննոս 5.4 [81]. «Ոչ նեմիական լախուր. Լախուրն իստ է պարտիզական անուշահոտ և անուշահամ, որ յունարէն սեղիմա անուանի: Սովաւ պսակէին վաւաշուսքն զգեղեցիկ մանկունսն, զոր թշուառականս անուանեաց»:  
<sup>2</sup> Գրիգոր Նազիանզացիին:

րեալ է վերայ Կրովնի, կամ զի փոխանակ նորա կլեալն ետ նմա վերաբերել զյառաջագոյն կլեալսն:

καταπιεῖν ἀντὶ τοῦ Διός. Τυραννοκτόνον δὲ καλεῖ ἢ ὅτι ἐπανέστη τῷ Κρόνῳ ὁ Ζεὺς, ἢ ὅτι ὁ τούτου λίθος ἐποίησεν αὐτὸν ἐμέσαι καὶ οὐς πρότερον κατέπιεν.

Հռեան քար էր տվել Կրոնոսին Զևսի փոխարեն կուլ տալու, և բռնապետասպան (+ է անվանում) կամ որովհետև ապստամբեց Կրոնոսի դեմ, կամ էլ՝ նրա փոխարեն կուլ գնացածը (քարը) ստիպեց նրան փսիել (+ նաև) մինչ այդ կուլ տվածներին:

Պղատոն, Եւթիփոն 17-18 = Plat. *Euthph.* 5.e.5-6.a.3.

Քանզի ինքեանք մարդիկ հանդիպին կարծելով զԶևս՝ աստուածոցն արիագոյն և արդարագոյն. և սա խոստովանին զհայրն իւր կապել, զի գուտերսն կլանէր ոչ իրաւամբ. և զնա իսկ զհաւրն իւր զերկաւորիսն հատուցանել վասն այլոց այսպիսեացս:

αὐτοὶ γὰρ οἱ ἄνθρωποι τυγχάνουσι νομίζοντες τὸν Δία τῶν θεῶν ἄριστον καὶ δικαιοτάτον, καὶ τοῦτον ὁμολογοῦσι τὸν αὐτοῦ πατέρα δῆσαι ὅτι τοὺς υἱεῖς κατέπιεν οὐκ ἐν δίκῃ, κάκεινόν γε αὖ τὸν αὐτοῦ πατέρα ἐκτεμεῖν δι' ἕτερα τοιαῦτα.

Քանզի մարդիկ իրենք, պատահում է, կարծում են, որ Զևսն աստվածներից ամենաքաջն ու ամենարդարն է. և խոստովանում են, որ սա կապեց իր հորը, քանի որ նա անիրավաբար կուլ էր տվել որդիներին, և հենց նա էր կտրել իր հոր ամորձիքը՝ ուրիշ նման բաների համար:

Թովմա Արծրունի Ա [54].

Եւ քանզի առեալ էր Կրոնեայ իւր կին զԲեա յազգէ Զրուանայ, և յինքն գրաւեալ զԹագաւորութիւնն և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել, Զրուանայ դաշնաւորել երդամբ՝ մինչև որ ի կնոջն Ըռեա որ ի Զրուանայ զարմիցն էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յեզիպտոս, և անտի և անդ ոչ ոք զաւրէր Զրուանայ թագաւորել:

Եվ քանի որ Կրոնոսը կնության էր առել Հռեային՝ Զրվանի տոհմից<sup>1</sup> և գրավել էր թագավորությունը, ոչ ոքի թուլ էլ էր տալիս թագավորել. Զրվանի հետ երդամբ դաշինք կնքելով՝ հենց ծնվելու ժամանակ սպանեց Զրվանի տոհմից Հռեա կնոջ ծնած արու [զավակներին], բացի միայն Դիոս անունով մի մանկանից, որին մայրը գաղտնաբար փրկեց, ինչպես շատ ժամանակ անց՝ Մովսեսին Եգիպտոսում, և դրանից հետո Զրվանի [տոհմից այլևս] ոչ ոք էլ կարող թագավորել:

Թովմա Արծրունի 2 [66].

Ասեն սկիզբն աստուծոց զհին ոմն Բելոս, հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ... Իսկ այլք զԿրոնոս ոմն անուն՝ լինել հայր Արամազդայ, ևս մաւտաւոր ժամանակով, որ զՋրհեղեղին իրս գուշակեաց:

Ասում են՝ աստվածների սկզբնավորողը ոմն հին Բելոսն է՝ հայրը Զևսի, որ հայերեն կոչվում է Արամազդ... Իսկ ուրիշները, ևս մոտավոր ժամանակով, ասում են, թե Արամազդի հայրը ոմն Կրոնոսն է, որը գուշակեց Ջրհեղեղի հետ կապված իրադարձությունները:

<sup>1</sup> Այստեղ շփոթութիւն կա, քանի որ Զրվանը սովորաբար հենց Կրոնոսի համարժեքն է:

զՌեչայն... արձագան<sup>1</sup> առն կրուցեալ:

Հոեային... երբ նրա ամուսինը կուլ տվեց քա-  
րը (°):

## 6. Չևսի գերեզմանը Կրետեում

Մ.թ.ա. IV դարից սկսած զանազան աղբյուրներում հանդիպում է մի տեղեկություն՝ իբր Կրետեում գտնվում է Չևսի գերեզմանը (Luc. *De sacr.* 10, *Tim.* 6, *Zeus trag.* 45, *Philops.* 3)<sup>2</sup>: Հետագայում այդ թեման շատ է արժարժվել՝ որպես կրետացիների առասպելամոլության ցայտուն արտահայտություն<sup>3</sup>: Օրինակ, Կալլիմաքոսը (մ.թ.ա. III դ.) «Հիմն Չևսին»-ում գրում է. «Ստախոս են միշտ կրետացիք, անգամ, ո՛վ տեր, գերեզման են / Քեզ մոզոնել, բայց չես մեռել դու, որ միշտ կաս»: Գերեզմանի մասին Կալլիմաքոսի հաղորդումը, առանց շեշտելու կրետացիների ստախոսությունը, կրկնել են մի շարք վաղ քրիստոնյա հեղինակներ՝ Տատիանոսը, Աթենագորասը, Կղեմես Ալեքսանդրացին, Թեոփիլոս Անտիոքացին, Օրիգենեսը՝ Կելսոսին քննադատող իր գրվածքում (բոլորը՝ III դարի հեղինակներ)<sup>4</sup>: Օրինակ՝ Օրիգենեսը վիճարկում է Կելսոսի այն մեղադրանքը, որ չնայած քրիստոնյաները հեթանոսներին ծաղրում են Կրետեում թաղված Չևսին պաշտելու համար, իրենք էլ են պաշտում գերեզմանից դուրս եկածին՝ τὸν ἀπὸ τάφου (Orig. *Contra Celsum* 3.43): Մ.թ. 3-րդ դարի փիլիսոփա Պորփյուրիոսն իր «Պյութագորասի կյանքը» երկում բերում է Կրետեում Չևսի գերեզմանին գրած արձանագրությունը՝ «Աստ հանգչի մահացած Չանը, որին կոչում են Չևս» (Porph. *VP* 17): Եկեղեցու հայրերը մերժում էին հունական հեթանոսական կրոնն ու նրա հետ կապված առասպելները և յուրովի մեկնաբանում դրանք: Եվսեբիոսի «Ավետարանական պատրաստության» մեջ կարդում ենք Դիոդորոս Սիկիլացու (որին նա բարձր էր գնահատում իբրև գիտունի) մի հատված (Diod. Sic. 3.61.1-2)՝ աստվածների հայր Չևսից տարբեր մեկ այլ Չևսի մասին: Դրա արձագանքները թափանցել են հայ մատենագիրների երկերը:

Eus. *Praep. Evang.* 2.2.47.1-49.1.

Τὸν δὲ Κρόνον διαφέροντα πλεονεξία καὶ ἀσεβεί-  
α γῆμαι τὴν ἀδελφὴν Ῥέαν, ἐξ ἧς γεννῆσαι τὸν  
Δῖα. γεγονέναι δὲ καὶ ἕτερον Δῖα, τὸν ἀδελφὸν  
μὲν Οὐρανοῦ, τῆς δὲ Κρήτης βασιλεύσαντα, τῆ  
δόξῃ πολὺ λειπόμενον τοῦ μεταγενεστέρου. Τοῦ-  
τον μὲν οὖν βασιλεύσαι τοῦ σύμπαντος κόσμου,  
τὸν δὲ τῆς Κρήτης καὶ δέκα παῖδας γεννῆσαι τοὺς  
ὀνομασθέντας Κουρήτας. δείκνυσθαι δὲ αὐτοῦ  
φασιν εἰσέτι νῦν τάφον ἐν Κρήτῃ.

Իսկ Կրոնոսը, որ աչքի էր ընկնում լիտիու-  
թյամբ և ամբարշտությամբ, ամուսնացավ իր  
քույր Հոեայի հետ, ումից ունեցավ Չևսին: Ե-  
ղել էր և մեկ ուրիշ Չևս՝ Ուրանոսի եղբայրը,  
որ թագավորեց Կրետեում՝ փառքով շատ զիջե-  
լով հետագայում ծնվածին: Ուրեմն սա թագա-  
վորեց ամբողջ աշխարհին, իսկ այն մեկը՝ Կրե-  
տեին և ունեցավ տասը որդի, որ կոչվեցին  
Կուրետներ: Ասում են, թե նրա գերեզմանը  
այժմ էլ ցույց են տալիս Կրետեում:

<sup>1</sup> Խորհրդավոր բան է, որի իմաստը բառարանները չեն բացատրում:

<sup>2</sup> Կրետեում այդպիսի տարօրինակ հավատալիքի առաջացումը (չէ՞ որ աստվածներն անմահ են) բացատրում են գերագույն աստված Չևսի և տարեցտարի մեռնող ու վերածնվող՝ պողպեղության տեղական աստվածության նույնացումով, տե՛ս M. Kokolakis, “Zeus’ Tomb. An Object of Pride and Reproach,” *Kernos* 8, 1995, pp. 123-137; N. Postlethwaite, “The Death of Zeus Kretagenes,” *Kernos* 12, 1999, pp. 85-98:

<sup>3</sup> M. Kokolakis, op. cit., p. 125:

<sup>4</sup> Տե՛ս M. Kokolakis, op. cit., p. 128-129:

Դարձեալ ամենայն լինի յազազս վաւաշոտութեան և անմաքրութեան Արամազդ, աստուածոց պետ և իշխան և միայն հանդերձ ամենեքումբք էիւքն ի վեր ձգէ դաստուածան, բայց ինքն յամենեցունց ոչ ի վայր քարշի. դարձեալ Արամազդայ գերեզմանն ի Կրետէ ցուցանի:

πάλιν τὰ πάντα γίνεται δι' ἀσέλγειαν καὶ ἀκαθαρσίαν ὁ Ζεὺς, ὁ τῶν θεῶν μῆστωρ καὶ ὕπατος, καὶ μόνος μὲν πάντας σὺν πᾶσι τοῖς οὖσιν ἀνέλκων θεοῦς, αὐτὸς δὲ ὑπὸ πάντων οὐ καθελκόμενος. Πάλιν τοῦ Διὸς τάφος ἐν τῇ Κρήτῃ δείκνυται.

Կրկին վավաշոտությունից ու անմաքրությունից դրդված՝ աստվածների պետ և իշխան Արամազդը (Ջևսը) դառնում է ամեն ինչ. նա միայնակ վեր է ձգում բոլոր աստվածներին՝ բոլոր հակների հետ միասին, իսկ իրեն ամենքը ցած չեն քաշում<sup>1</sup>: Դարձյալ Կրետեում ցույց է տրվում Արամազդի գերեզմանը:

Նոննոս 4.24 [73] = Nonnos 5.25.

Ասի Ջևս ի Կրետէ սնանիլ և անդ մեռանիլ և ի շիրմի դնանիլ, յորոյ վերայ գրեալ է, թէ «աստ է աստուածն Արամազդ եղեալ», քանզի յանդիմանի, թէ մարդ էր և մահկանացու, և կայ ի Կրետէ:

Λέγεται ὁ Ζεὺς ἐκεῖ τραφῆναι ἐν τῇ Κρήτῃ καὶ ἀποθανεῖν, καὶ εἶναι τάφον ἐν ᾧ ἐπιγέγραπται κεῖσθαι ἐκεῖσε τὸν Δία... ἐλέγχονται γὰρ ὅτι ἄνθρωπος ἦν καὶ τέθνηκε καὶ κεῖται ἐν τῇ Κρήτῃ.

Ասում են՝ Ջևսը դաստիարակվել է Կրետեում և այնտեղ մեռել ու գերեզման դրվել, որի վրա գրված է՝ «այստեղ հանգչում է Արամազդ (Ջևս) աստվածը (չէք)»։ Քանզի ցույց է տրվում, թե մարդ էր և մահկանացու և հանգչում է Կրետեում:

Միխայել Ասորի Ա. [57].

Ի տասն և իններորդ ամի Սամփսոնի մեռաւ Ջևս, և թաղեցաւ ի Կրետէս. գոր ասեն կեցեալ ամս ութ հարիւր ութսուն. և վասն շատակեցութեան Ջևս կոչեաց յանուն աստեղըն զի ի ծնողացն Դիայ կոչէր:

Սամսոնի տասնիններորդ տարում Ջևսը մեռավ և թաղվեց Կրետեում. նրա մասին ասում են, թե ապրել է ութ հարյուր ութսուն տարի. և ծնողներից Դիա կոչվածը երկարակեցության համար անվանվեց աստղի անունով Ջևս:

Միխայել Ասորի Բ [38-39].

Յիննևտասներորդ ամին Սամփսոնի մեռաւ Ջևս և թաղեցաւ ի Կրիտիս՝ կեցեալ ամս ութ հարիւր ութսուն. և վասն բազմակեցութեանն Ջևս կոչեցաւ յանուն աստեղն, որ նախ Դիոս կոչէր ի ծնողացն:

Սամսոնի տասնիններորդ տարում Ջևսը մեռավ և թաղվեց Կրետեում՝ ապրելով ութ հարյուր ութսուն տարի. և ծնողներից Դիոս կոչվածը երկարակեցության համար կոչվեց աստղի անունով Ջևս:

<sup>1</sup> Ջևսն «Իլիական»-ում գովերգում է իր ուժը. «Եթե փորձեք, դուք, աստվածներ, բոլորդ էլ կհամոզվեք. / Եթե ոսկե շղթա կախեք դուք երկնքից և այն բռնեք / Ու ցած քաշեք միահամուն՝ դիցուհիներ և աստվածներ, / Չի հաջողվի ձեզ երկնքից երկրի վրա ցած բերել ինձ՝ / Մեծն Ջևսին Խորհդական, որքան էլ շատ ճիգ գործադրեք: / Իսկ եթե ես մտածեի և ուզեի այն վեր ձգել, / Կձգեի ես այն վերև, իսկ նրա հետ՝ ծով ու ցամաք, / Այնուհետև Օլիմպոսի գագաթի շուրջ կկապեի / Ես այդ շղթան, և այդ ամենն օդում կախված կթողնեի: / Ահա այդքան ուժեղ եմ ես աստվածներից և մարդկանցից» (Hom. II. 8.18-27):

Վարդան, Հաւաքումն Ժ [22].

Յաւուրս սորա (Սամփսոնի) մեռաւ Զևս և թաղեցաւ ի Կրետէ, զոր ասեն կեցեալ ամս ութհարիւր և յիսուն, զի յաղագս բազմակեցուցեանն Զևս կոչեցաւ, որ ի ծննդենէ Դիա ասիւր:

Սրա (Սամսոնի) օրոք Զևսը մեռավ և թաղվեց Կրետեում. նրա մասին ասում են, թե ապրել է ութ հարյուր հիսուն տարի, քանի որ ծնված օրվանից Դիա կոչվածը երկարակեցության համար անվանվեց Զևս:

Վարդան, Ճառք 312.

Մեռանէր Զևս՝ ի կղզիս արգելեալ:

Մեռավ Զևսը՝ կղզում փակված:

Մխիթար Այրիվանեցի 36.

Մեռաւ Զևս, որ է Արամազդ, ի Կրիտէ 880 ամաց:

Մեռավ Զևսը, որ Արամազդն է, Կրետեում, 880 տարեկան հասակում:

### 7. Ատլաս

Յապետոսն<sup>1</sup> ու Օվկիանոսի Ասիան ունեցան որդիներ՝ Ատլասին, որ պահում է երկինքը, և խելամիտ Պրոմէթէսին (Hes. *Theog.* 509-510, 517-519, Apollod. 1.2.3 [1.8]): Եւսեբիոս Կեսարացին Ատլասին աստղագետ է (άστρολόγος) համարում (Eus. *Praep. Evang.* 2.2.46.4):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 94 = Afric. apud Sync. 175.4-6.

Ատղաս Պրոմիթեայ եղբայր աստեղագէտ ճարտար երևէր և վասն իմաստութեան զերկինս կրել համբաւէր: Իսկ Եւրիպիդէս լեռոն ի վերոյ քան զամպս ասէր լինել զԱտղասայ:

Ἄτλας ὁ Προμηθέως ἀδελφὸς ἄριστος ἀστρολόγος διέλαμπεν, ὡς ἐπιστήμης ἔνεκεν τὸν οὐρανὸν αὐτὸν φέρειν πεφήμεσται. Εὐριπίδης δὲ τὸν Ἄτλαντα ὄρος εἶναι φησιν ὑπερνεφέες.

Պրոմեթէսի եղբայր Ատլասը փայլում էր որպէս հմուտ աստղագետ և իր իմաստության շնորհիվ հայտնի էր իբրև երկինքը կրող: Իսկ Եվրիպիդեսն ասում էր, որ Ատլասն ամպերից բարձր մի լեռ է<sup>2</sup>:

Թովմա Արծրունի Դ [77].

Պրոմիթէս այր իմաստուն երևեցաւ... առ սովաւ Ատղաս աստեղագէտ երևեցաւ:

Հայտնվեց իմաստուն այր Պրոմեթէսը ... սրա օրոք հայտնվեց Ատլաս աստղագետը:

<sup>1</sup> Յապետոսն Ուրանոսից և Գեայից ծնված տիտաններից մեկն էր (տե՛ս դրվագ 1): Նրան հիշատակել է Խորենացին (Մովսէս Խորենացի Ա 6. «ի Բերոսեանն Սիբիլայ. «Յառաջ քան զքրոնոս, ասէ, և զբազմաբարբառն լինել ձայն ազգի մարդկան, և զկնի նաւարկութեանն Քսիստոքրեայ ի Հայս՝ Ջրուանն և Տիտանն և Յապետոսք լինէին իշխանք երկրի»»: Այս հատվածի աղբյուրն է՝ Sibyl. 3.105–110. αὐτὰρ ἐπεὶ πύργος τ' ἔπεσεν γλῶσσαι τ' ἀνθρώπων παντοδαπαῖς φωναῖσι διέστρεφον, αὐτὰρ ἅπανα γαῖα βροτῶν πληροῦτο μεριζομένων βασιλεῶν, καὶ τότε δὴ δεκάτη γενεὴ μερόπων ἀνθρώπων, ἔξ οὗ περ κατακλισμὸς ἐπὶ προτέρους γένετ' ἄνδραος. καὶ βασιλευσε Κρόνος καὶ Τίτάν Ἰαπετός τε - «Բայց երբ աշտարակն ընկավ և մարդկանց լեզուները դարձել էին զանազան խոսվածքներ, երբ մահկանացուների ամբողջ երկիրը լցվեց բաժանված թագավորություններով, այդժամ էր հստակախոս մարդկանց տասներորդ սերունդը, որից հետո ջրհեղեղը պատահեց նախկին մարդկանց. և թագավորեցին Կրոնոսը, Տիտանն ու Յապետոսը»: Խորենացու «Յապետոսք» ձևում սխալմամբ միմյանց են կցվել «Յապետոս» անունն ու հետադասաբար («և») շաղկապը:

<sup>2</sup> Եվրիպիդեսի պահպանված երկերում այդպիսի դրվագ չկա:



## 8. Կենտավրոսներ

Չպահպանված «Տիտանների կռիվը» էպիկական պոեմում պատմվել է, որ Կրոնոսը ձիու կերպարանքով մերձեցավ Օվկիանոսի դուստր Փիլիրայի հետ, և ծնվեց կենտավրոս Զիրոնը, որը կիսով չափ ձի էր (մեջբերված Sch. Ap. Rhod. *Argon.* 1.554 [48.1–2], տե՛ս նաև Apollod. 1.2.4 [1.9]): Հավանաբար այս կես-մարդ-կես-ձի արարածների մասին պատկերացումն առաջ է եկել, երբ հույներն առաջին անգամ հանդիպել են հեծյալների. «Իլիական»-ում ձիերը միայն կառք են քաշում (Βορυχοβιτ, 149):

Թեոն 106. = Theon 96.7–8.

Պարիկք կարծեցան յառաջ ի վերայ ձիոց հեծեալք:	Κένταυροι μὲν ὑπελήφθησαν οἱ πρῶτοι ἐπὶ ἵπποις ὀχοούμενοι ὀφθέντες.	Առաջին ձի հեծածները պարիկներ (կենտավրոսներ) են թվացել:
---	---	--

## 9. Առասպելական երաժիշտներ

Կալլիոպե մուսայի<sup>1</sup> որդիներն էին Լինոսը (Հերակլեսը նրանից սովորեց կիթառ նվագելով երգել (Apollod. 2.4.9 [2.63]), իսկ հետագայում զայրույթի պահին սպանեց նրան) և Օրփևսը, որը կիթառ էր նվագում, երգելով քարեր ու ծառեր շարժում (Apollod. 1.3.2 [1.14]) և դյուքում անբան կենդանիների (Eur. *Ba.* 561–562, Ap. Rhod. *Argon.* 1.26–27, Diod. Sic. 4.25.2, Eratosth. *Catast.* 24, Conon 45 apud Phot. *Bibl.* 186.140a20–31, Hor. *Carm.* 1.12.7–12, Sen. *Her. Oet.* 1036–1060, *Her. Fur.* 572–576 և այլն): Ապոլլոնիոս Հռոդոսցին, Հորացիուսն ու Սենեկան ավելացնում են, որ նա փոխում կամ դադարեցնում էր գետերի հոսանքը (Ap. Rhod. *Argon.* 1.27): Ապոլլոդորոսը հիշատակում է Եվմոլպոս անունով սրնգահարին (Apollod. E3.24): Եվմոլպոսի որդին (Sch. Arist. *Ran.* 1033, Diod. 1.3.4) կիսաառասպելական Մուսեոսը, համարվում էր զանազան բանաստեղծական (հատկապես Էլևսիսում Դեմետերի գաղտնաձեռնի առնչվող) գրվածքների հեղինակ (Diod. Sic. 4.25):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126 = Sync. 190.25.

Ղինոս վարդապետ Հերակլի	Λίνος διδάσκαλος Ἡρακλέους ἐγνωνίζετο.	Ճանաչվեց Հերակլեսի ուսուցիչ Լինոսը:
------------------------	--	-------------------------------------

Միխայել Ասորի Ա. 55.

Յաւուրս Գեղէովնի Որփիւս թրակացին, և Ղինոս վարդապետն Հերակլի երեւէին, Թամիրոս Փիլամոնեայ <sup>2</sup> :	Գեղեոնի օրոք Հայտնվել էին Օրփևս թրակացին, Հերակլեսի ուսուցիչ Լինոսը և Փիլամոնի որդի Թամիրիսը:
--	---

<sup>1</sup> Ինը մուսաները Չևսի և տիտանոսի Մենեոսի (հիշողության մարմնավորման) դուստրերն էին: Նրանք հովանավորում էին գիտությունն ու արվեստը. Կալլիոպեն՝ էպիկական պոեզիան, Կլիոն՝ պատմությունը, Մելպոմենեն՝ ողբերգությունը, Եվտերպեն՝ երաժշտությունը, Էրատոն՝ սիրերգությունն ու հարսանեկան երգերը, Տերպսիքորեն՝ պարն և քնարական պոեզիան, Ուրանիան՝ աստղագիտությունը, Թալիան՝ կատակերգությունը, Պոլիմնիան՝ աստվածներին ու հերոսներին նվիրված հիմները:

<sup>2</sup> Միխայել Ասորի ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Թերացի Լինոսը, Չեթոսն ու Ամփիոնը հայտնի էին որպես երաժիշտներ» (*Chronique de Michel le Syrien*, ed. et traduite en français par J.-B. Chabot, t. premier, Paris, 1899 (Bruxelles, 1963<sup>2</sup>), livre III, chapitre VIII, p. 45): Փիլամոնի որդի Թամիրիսի մասին տե՛ս դրվագ 10:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126 = Sync. 183.24.

Որփեւ թրակացի ճանաչէր. Օրֆեւս Յրձձ Էցնորիւտո. Հայտնի էր Օրփեւ թրակացին, որի աշակերտը Եվմոլպոսի որդի Մուսեոսն էր:

Փիլոն Տիրակացի 934.

Որփեւ թրակացի, որ աշակերտ Մուսոյ Եւսեւ Օրփեւ թրակացին, որի աշակերտը Եվմոլպոսի որդի Մուսեոսն էր:

Գրիգոր Նազ., ճառ 4.115.12-13 [141]. = PG 35.653.13-15.

Որփեւ մերձ լիցի Հանդերձ Օրֆեւս քարաւն և որ զամենեսեան ճգէր երգովն: Օրֆեւս քարաւն և որ ճգէր երգովն: Օրֆեւս քարաւն և որ ճգէր երգովն:

Նոննոս 3.70 [57] = Nonnos 4.77.1-3.

Որփեւ երաժիշտ ոմն եղև ազգաւ թրակացի. ասի, եթէ կանխաւ այնպէս երգէր, որպէս զի Հետեւել երգոյն զծառս կաղնիս և զանբան կենդանիս, և զբարինս և զգետս: Օրֆեւս յէրոնէս, Օրֆեւս յէրոնէս, Օրֆեւս յէրոնէս:

Դաւիթ, Սահմանք ժէ [132]. = Dav. Prol. 63.26-27.

... զԵրաժշտականն՝ թրակացիք, վասն զի անտի էր Որփեւս, զորմէ ասեն նախ գտանել զԵրաժշտականն: Երաժշտականն յՕրֆեւս, յՕրֆեւս, յՕրֆեւս:

Գրիգոր Մագիստրոս 14 (ՀԵ).7.

Գիտեմք և զձկունս զկնի Որփեայ շրջեալ: Գիտենք նաև, որ Օրփեւսի Հետեւից ձկներ էին շրջում:

Գրիգոր Մագիստրոս 30 (ԾԱ).11.

Եւ սակս երաժշտացն է բանս այնոցիկ, որք մերկ երգով զձկունսն խանձացուցանէին և զծառս կաղնիս, ուր և կամէին փոփոխէին: Եվ խոսքս այն երաժիշտների մասին է, որ սոսկ երգով ձկներին էին զրավում և, ուր կամենում էին, կաղնի ծառեր էին տեղափոխում:

Միխայէլ Ասորի Ա. 55.

Յերեսուն երեք ամին Գեղէովնի... Թագաւորէ ի Թեբայիս Ապոլլոն երաժիշտ. որ (ասեն) նուագաւքն շարժէր զբարինսն: Գեղեոնի երեսուներեքերորդ տարում Թեբայիսում Թագաւորէ Ապոլլոն երաժիշտը, որն, ասում են, նվագելով քարեր էր շարժում:

Միխայել Ասորի Բ 36.

Յերեսուն և յերեք ամին Գեղէովնի ... թագաւորեաց ի Թաբայիմ Ապողոն երաժիշտ, որ ասեն, թէ շարժէր զքարինսն նուազաւք զեղեցկաւք:

Գեղեոնի երեսուներեքերորդ տարում Թաբայիսում թագավորեց Ապոլլոն երաժիշտը, որն, ասում են, զեղեցիկ նվագելով քարեր էր շարժում:

Մխիթար Այրիվանեցի 35.

Թագաւորեաց ի Թաբայիդ Ապողոն երաժիշտ, որ յերգելն շարժէր քարինս:

Թաբայիսում թագավորեց Ապոլլոն երաժիշտը, որը երգելով քարեր էր շարժում:

Խաչատուր Կեչառեցու կաֆա (Աղեքսանդրի պատմութիւն Ա. 162-3).

Այս է Որփեսան թրակացի, / Որ նըկարեալ կայր ի վիմի, / Որ ի գարնուլն երաժըշտի, / Խայտան գազանքն յանտառի: / Որփիւր, հընչեցեալ ասեմ, / Ըզքընար ըզքո խաւսեցո՛, / Ձգազանդ յանտառից խայտամամբ / արուեստիւրդ քո խաղացո՛, / Ձերաժշտական տաւիղդ / հանապազ ասեմ յարգեցո՛, / Ձայնէ բառ-բանիւրդ քո, / հաւասար զերկիր բերկրեցո՛:

Սա է թրակացի Օրփեսը, ով պատկերված էր քարի վրա, որի նվագելուց անտառի գազանները հրճվում են: Օրփես, ասում եմ քեզ, նվագելով քնարդ խոսեցրո՛ւ, անտառների գազաններին քո արվեստով հրճվանք պատճառիր, քո երաժշտական տավիղն անընդհատ պատվիր, երգի՛ր քո բերանով, ամբողջ երկիրն ուրախացրո՛ւ:

«Մեկնութիւն Սահմանաց Դաւթի», Ժէ.21.

Որփես գուսան, որ զամենայն ազգի հաւի և կենդանոյ ձայն ածէր, և հայնց քաղցր ձայն ածէր, որ ամենայն վայրիք ի նորա քաղցր ձայնն գային:

Օրփես գուսանը, որ ամեն տեսակի թռչնի և կենդանու ձայն էր հանում, և այնպիսի քաղցր ձայն էր հանում, որ բոլոր վայրի կենդանիները նրա քաղցր ձայնին մոտ էին գալիս:

### 10. Թամիրիս երաժիշտը

Ապոլլոնի որդի Փիլամոնի և Արգիոպե նիմփայի<sup>1</sup> որդին՝ թրակացի կիթառերգու Թամիրիսը մուսաների հետ երաժշտական մրցության բռնվեց. մուսաները նրան գերազանցեցին և գրկեցին աչքերից ու կիթառերգության շնորհքից: Այս պատմությունը հայտնի է Հոմերոսի «Իլիական»-ից (Hom. II. 2.594-600) և բազմաթիվ այլ աղբյուրներից (օրինակ՝ Apollod. 1.3.3 [1.16]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 191.4.

Թամիրիս Փիլամոնեայ ընդ Թάμυρις ό Φιλάμμω-այն ժամանակս էր:

Փիլամոնի որդի Թամիրիսն այն ժամանակ էր (ծաղկում էր):

Փիլոն, Նախախնամութիւն 74.

Արդ արդեօք ո՞չ արդարագոյն էր թրակացւոյն Արգյո՞ք լիովին արդար չէր թրակացի Թամի-

<sup>1</sup> Նիմփաները գեղեցիկ կանանց կերպարանքով ոգիներ էին, բնության զանազան տարերքների մարմնավորում. նրանց նախասիրությունը երգն ու պարն էր:

Թամիրայ, զի ոչ ընդ երաժիշտս յաղագս երգոց հակառակեաց՝ կուրանալ...

րիսի դեպքը. մի<sup>6</sup>թե նա չկուրացալ, քանի որ երգերով մրցեց երաժիշտների (մուսաների) չեառ:

Յովհան Որոտնեցի, Հաւաքումն 246

Իսկ զԹրակացին Թամիրայ կուրացուցին, զոր ոչ ինչ հակառակ երգեաց:

Իսկ Թրակացի Թամիրիսին կուրացրին, քանի որ նա ի պատասխան ոչինչ չերգեց:

Միխայէլ Ասորի Ա. 55.

Յաւուրս Գեղէովնի Որփիւս Թրակացին, և Ղիւնոս վարդապետն Հերակլի երևէին, Թամիրոս Փիլամոնեայ:

Գեղեոնի օրոք Հայտնվեցին Օրփիւս Թրակացին, Հերակլեսի ուսուցիչ Լինոսը և Փիլամոնի որդի Թամիրիսը:

11. Հերայի կրած պատիժը, Հեփեսոսի հաշմվելը, Ափրոդիտե և Արես

Ըստ Հոմերոսի (Hom. II. 15.18–28)՝ Չևսը Հերային կախեց Օլիմպոսից՝ ոտքերից սալեր կապելով, որովհետև նա փոթորիկ էր ուղարկել Տրոյան ավերելուց հետո<sup>1</sup> ծովում գտնվող Հերակլեսին: Չևսը նաև երկնքից ցած նետեց Հեփեսոսին, քանզի նա օգնության էր եկել կապված Հերային (Hom. II. 1.589–593): Այլ ավանդության համաձայն՝ Հեփեսոսին երկնքից ցած նետեց Հերան, քանի որ ամաչում էր նրա կաղությունից, և ոտքերը հաշմված աստծուն փրկեց Թետիսը՝ տանելով ծովի խորքը (Hom. II. 18.394–399): Հեփեսոսի դարբնոցը տեղադրում էին Էգեյան ծովի Լեմնոս կղզում, քանի որ այնտեղ գործող հրաբուխներ կային: Հեփեսոսի կին Ափրոդիտեն հավատարիմ չէր նրան. նա սիրում էր պատերազմի աստված Արեսին, և Հեփեսոսը սիրեկաններին բռնեց իր պատրաստած երկաթե ցանցով (Hom. Od. 8.266–358):

Գրիգոր Նազ., Ճառ 4.116.14-17 [143] = PG 35.656.4-8.

Զիա՞րդ և նոյն ինքն ըստ ձեզ Հերա, մեծին Արամազդայ քոյր և կին, երբեմն յաւարդ և յամպսղ կախեալ, երկաթի սայլիւք ի վայր ձգեալ, և ոսկեղինաւք պատուեալ շղթայիւք:

Πῶς δὲ ἢ αὐτὴ καθ' ὑμᾶς Ἥρα, ἢ τοῦ μεγάλου Διὸς ἀδελφὴ καὶ ὁμόζυγος, νῦν μὲν ἐν αἰθέρι καὶ νεφέλαις κρεμαμένη, καὶ σιδηροῖς ἄκμοσι καθελκομένη, καὶ χρυσαῖς τιμωμένη χειροπέδαις.

Ինչպե՞ս և ձեր պատմածով ինքը Հերան՝ մեծ Արամազդի (Զևսի) քույրն ու կինը, մի ժամանակ կախված է եղել օդում և ամպերում, երկաթյա սայլերով ցած ձգված և ոսկե շղթաների արժանացած:

Նոննոս 3.75 [59-60] = Nonnos 4.82.1-10.

Հերաս, որպէս բազում անգամ գիտացաք, նախանձայոյզ էր Հերակղեայ: Արդ սորա դառնալով ի Տրովադա, յորժամ

Ἡ Ἥρα, ὡς πολλάκις ἴσμεν, ἐζηλοτύπει τὸν Ἡρακλέα. τοῦτον οὖν αὐτὸν μετὰ τὸ ὑποστρέφειν ἐκ τῆς Τροίας, ὅταν μετὰ Τελα-

Հերան, ինչպես բազմիցս համոզվել ենք, խանդում էր Հերակլեսին: Ուրեմն, երբ սա վերադառնում էր Տրոադայից,

<sup>1</sup> Խոսքը տրոյական պատերազմի մասին չէ, այլ դրան նախորդած մեկ այլ իրադարձության. Հերակլեսի՝ Տրոյայի դեմ արշավանքի: Պատճառն այն էր, որ նա ծովափրեշից ազատել էր Տրոյայի արքա Լաոմեդոնի դուստր Հեսիոնեին, իսկ Լաոմեդոնը հրաժարվել էր փոխարենը Հերակլեսին տալ իր խոստացած այն զամբիկները, որոնք Չևսը տվել էր իրեն ի հատուցում Գանիմեդեսի առևանգման:

Հանդերձ Տեղամոնիւ աւերեաց  
զնա՝ խառնակեաց և նաւակո-  
ծովիւն արար ի ծովու, իսկ ի  
հողմոյ հրամայելով խոռվե-  
ցուցանել և զնաւն Հերակղի, և  
զքունն յորդորելով մատչել  
առ Զևս և ննջեցուցանել զնա,  
զի մի հսկուն գոլով՝ աւզնեսցէ  
Հերակղի: Իսկ իմացեալ յետ  
քնոյն Արամազդայ զհնարսն  
Հերայ պատուհասէ զնա այս-  
պէս. երկուս շանթս կապեալ  
գոտից նորա, և զձեռսն կա-  
պեալ անլոյծ կապանաւք, կախ-  
եալ զերկնից՝ այնպէս պատու-  
հասակոծ արար զնա:

μῶνος ἐπόρθησεν αὐτήν, διετά-  
ραξε καὶ ἐχείμασεν ἐν τῇ θα-  
λάσῃ, τοῖς μὲν ἀνέμοις προσ-  
τάξασα ταράξει τὸ σκάφος τοῦ  
Ἡρακλέους, τῷ δὲ Ὑπνῷ παρα-  
κελευσαμένη προσελθεῖν τῷ Διὶ  
καὶ ἐφυπνῶσαι αὐτόν, ἵνα μὴ ἐ-  
γρηγορῶς βοήθησῃ χειμαζομέ-  
νῳ τῷ Ἡρακλεῖ. Μαθὼν δὲ μετὰ  
τὸν ὕπνον ὁ Ζεὺς τὸ κατασκευ-  
ασμα τῆς Ἥρας, τιμωρεῖται αὐ-  
τὴν οὕτω· δύο ἄκμονας δήσας  
αὐτῇ περὶ τοὺς πόδας, περὶ δὲ  
τὰς χεῖρας πέδας ἀδιάλυτους, ἐ-  
κρέμασεν αὐτὴν ἀπὸ τοῦ οὐ-  
ρανοῦ, τιμωρούμενος αὐτήν.

Տեղամոնի հետ այն ավերելուց  
հետո, Հերան խառնակուծյուն  
արեց և նավաբեկուծյուն գոր-  
ծեց ծովում՝ քամուն հրամայե-  
լով անհանգստացնել Հերակղե-  
սի նավը, իսկ Հիպնոսին պատ-  
վիրելով մոտենալ Զևսին և  
քնեցնել նրան, որպեսզի, ար-  
թուն լինելով, (+ փոթորիկ մեջ  
ընկած) Հերակղեսին չօգնի:  
Զևսը, քնելուց հետո իմանա-  
լով Հերայի դավերը, այսպես  
պատժեց նրան. երկու շանթ  
(սալ) կապելով նրա ոտքերից,  
ձեռքերից էլ՝ անքակտելի կա-  
պանքներ, երկնքից կախեց.  
այսպես պատժեց նրան:

Գրիգոր Նազ., ճառ 4.116.29-32 [144] = PG 35.656.21-26.

Զի՞նչ ... Արէս ... ոսկեղինին  
Աստղիկան անհանճարաբար սե-  
ղեխն, և շնացող առանց զգու-  
շանալոյ և երկոքումբք ոտիւք  
կաղին ըմբռնելն, և գտեսա-  
րան աստուածոցն ի վերայ նո-  
ցա անամալթուլթեանն հաւա-  
քել և փոքր ձևով թողուլ:

Τίς... Ἄρης... τῆς χρυσοῦς Ἀφρο-  
δίτης ἀφύης ἐραστῆς, καὶ μοιχὸς  
περίσκεπτος καὶ τῷ Ἀμφιγυ-  
ήεντι κρατούμενος, καὶ θέατρον  
τῶν θεῶν ἐφ' ἑαυτῷ συλλέγων  
ἀσχημονοῦντι, καὶ μικροῖς χρή-  
μασιν ἀφιεμένος;

Ի՞նչ ... Արեսը ... ոսկեղեն  
Աստղիկի (Ափրոդիտեի) հի-  
մար սիրահարն ու անշրջահա-  
յաց սիրեկանը և երկու ոտքից  
կաղից բռնվելը (բռնվածը), և  
աստվածների ծաղրն ու իրենց  
(իր)՝ անամոթուլթյան (անամո-  
թի) վրա հավաքելը (հավաքա-  
ծը) և փոքր ձևով (վարձով<sup>1</sup>)  
արձակվելը (արձակվածը):

Նոննոս 3.79 [61] = Nonnos 4.86.

Ափրոդիտէս կին էր Եփեսոսո-  
սի, յոր տափացեալ Արեսի՝  
շնացաւ ընդ նմա: Այլ Եփես-  
ոսս իմացեալ, որ էր դարբին  
արուեստիւ՝ որոգայթս եղ Ա-  
րեսի, և անկեալ յորոգայթն  
ըմբռնեցաւ, յանդիմանեալ ի  
շնուլթեանն Ափրոդիտեայ, և  
ոչ ելոյծ զնա Հեփեսոսս, մինչ-  
և կոչեաց զաստուածսն և  
հրապարակեաց զնոսս: Իսկ  
աստուածոցն եկեալ և տեսեալ՝  
ծիծաղելով ծիծաղեցան ի վե-  
րայ նոցա: Յայնժամ փոքր ինչ

Ἀφροδίτη γυνὴ ἦν τοῦ Ἡφαίσ-  
του. ταύτης ἠράσθη ὁ Ἄρης, καὶ  
ἐμοίχευσεν αὐτήν. ὁ δὲ Ἥ-  
φαιστος μαθὼν τοῦτο, καὶ χαλ-  
κεὺς ὢν τὴν τέχνην, πάγας τί-  
θησι τῷ Ἄρει ἐρχομένῳ ἐπὶ τῇ  
μοιχείᾳ τῆς Ἀφροδίτης. καὶ ἐμ-  
πίπτει εἰς τὰς πάγας καὶ κατέ-  
χεται, καὶ φωρᾶται μοιχεύων  
τὴν Ἀφροδίτην. καὶ οὐκ ἔλυσεν  
αὐτοὺς ὁ Ἥφαιστος ἕως οὗ ἐ-  
κάλεσε τοὺς θεοὺς καὶ ἐδημο-  
σίευσεν αὐτούς. καὶ τότε οἱ θεοὶ  
ἐλθόντες καὶ ἰδόντες, πολλὸν

Ափրոդիտեն Հեփեսոսոսի կինն  
էր: Արեսը, նրան սիրահարվե-  
լով, շնացավ նրա հետ: Հեփես-  
ոսսն էլ, որի արհեստը դար-  
բնուծյունն էր, Արեսի համար  
(+ որ գնում էր Ափրոդիտեի  
հետ շնանալու) որոգայթ պատ-  
րաստեց, և նա ընկավ որո-  
գայթն ու բռնվեց՝ բացահայտ-  
վելով Ափրոդիտեի հետ շնանա-  
լիս: Եվ Հեփեսոսոսը բաց չթո-  
ղեց նրան, մինչև չկանչեց  
աստվածներին և հայտնի  
չդարձրեց նրանց [արարքը]:

<sup>1</sup> Ըստ երևույթին, չորհասուն-ի փոխարեն քարգնամիչը կարիսցել է սչիմասն:

փրկանս տուեալ Արեսի՝ լուծեալ լինի: Այլ անդամալոյծ կոչի Հեփեսոսս, քանզի կաղ էր:

ἐγέλασαν ἐπ’ αὐτοῖς γέλωτα. καὶ τότε λύεται ὁ Ἄρης, μικρά τινα λύτρα δούς. Ἀμφιγύην δὲ τὸν Ἥφαιστον καλεῖ ὡς χολόν.

Իսկ աստվածները գաղով ու տեսնելով՝ շատ ծիծաղեցին նրանց վրա: Այնժամ մի փոքր փրկաբեր սաղով՝ Արեսն ազատվեց: Իսկ Հեփեսոսը կոչվում է անդամալոյծ (Հեփեսոսսին [Գրիգորը] կոչում է երկու ոտքից կաղ), քանի որ կաղ էր:

Գրիգոր Նազ., ճառ 5.32. 8-9, 11-13 [202] = PG 35.705. 4-5, 7-11

Երկոքումբք ոտիւք կաղ Հեփեսոսս, այլ արագագոյն ի շնացողացն գիւտ... Դարձեալ կապեալ Արէս յաղաքս շնութեանն Հանդերձ երկիւղիւն և ահիւն և դողմամբքն և վիրաւք վասն յանդհնութեանն. դարձեալ Աստղիկ բող գարշելի և խառնակութեանց գարշելեաց սպասաւոր...

ἀμφιγυήεις Ἥφαιστος, ἀλλὰ ταχὺς εἰς μοιχῶν εὕρεσιν... πάλιν δεσμώτης Ἄρης διὰ μοιχείαν μετὰ τοῦ δαίμου, καὶ τοῦ φόβου, καὶ τῶν κυδοιμῶν, καὶ τραυματίας διὰ θρασύτητα, πάλιν Ἄφροδίτη πόρνη γενομένη τε αἰσχυρῶς, καὶ γάμων αἰσχυρῶν ὑπηρέτις.

Երկու ոտքից կաղ էր Հեփեսոսը, սակայն շատ արագ գտնում էր շնացողներին... Դարձյալ շնության համար կապված է Արեսը՝ ահով ու սարսափով և տուժած հանդհնության համար, դարձյալ Աստղիկը (Ափրոդիտեսն) գարշելի պոռնիկ է և գարշելի խառնակության սպասավոր...

Նոննոս 4.20 [72] = Nonnos 5.21.

Կաղ էր Հեփեսոսս, վասն որոյ և ամփիւղիէս կոչիւր, և փիւղ բարձն ասի: Այլ էր արուեստիւ դարբին, որ և գտեալ գշնութիւն կնոջ իւրոյ Ափրոդիտեայ՝ կազմէր Հնարիւք որոգայթ Արեսի: Այլ աստուած մրաթաթաւ կոչէ գնա և ծխաւեալ, քանզի և մուրն տեսակ ինչ է ծխոյ թանձրագունի. այլ կարծրարուեստ կոչեն գնա քերդողքն, քանզի փառաւոր ունէր գարուեստն դարբնական... Այլ կապանաւոր Արէս վասն շնութեան ի դոյն յարէ պատմութիւնն, զի շնալով Արէս ընդ Ափրոդիտեայ՝ կապեցաւ որոգայթիւք ի Հեփեսոսեայ:

Χωλὸς ἦν ὁ Ἥφαιστος, διὸ καὶ ἀμφιγυήεις ἦν δὲ χαλκεὺς τὴν τέχνην. τούτου γυνή ἦν ἡ Ἄφροδίτη, καὶ αὐτὴν ἐμοιχεύετο ὁ Ἄρης. εὕρισκε οὖν ὁ Ἥφαιστος τὴν μοιχείαν γενομένην, στήσας πάγας. θεὸν δὲ αὐτὸν λέγει κατηθαλωμένον καὶ κεκαπνισμένον, αἰθάλη γὰρ εἶδος καπνοῦ παχύτερου. ἐκεκάπνιστο δέ, ὡς χαλκεὺς. κλυτοτέχνην δὲ αὐτὸν καλοῦσιν οἱ ποιηταί, ἐπειδὴ ἔνδοξον εἶχε τέχνην ταύτην τὴν χαλκευτικὴν... Τὸ δὲ Δεσμώτης Ἄρης διὰ μοιχείαν τῆς αὐτῆς ἐξήρηται ἱστορίας. μοιχεύων γὰρ ὁ Ἄρης τὴν Ἄφροδίτην ἐδέθη ταῖς πάγαις ὑπὸ τοῦ Ἥφαιστου.

Հեփեսոսը կաղ էր, ինչի համար կոչվում էր «ամփիւղիէս», և «փիւղ» նշանակում է «ազդր» (չիք և «փիւղ» նշանակում է «ազդր»): Արհեստով դարբին էր. հայտնաբերելով իր կին Ափրոդիտեի շնությունը՝ Արեսի համար խորամանկությամբ որոգայթ պատրաստեց: Իսկ [Գրիգորը] նրան անվանում է «մրաթաթավ ու ծխոտված աստված», քանի որ մուրն էլ ավելի թանձր ծխի մի տեսակ է (+ իսկ նա ծխոտվել էր որպես դարբին). իսկ բանաստեղծները նրան կոչում են «կարծրարուեստ» (արվեստով հռչակված), քանի որ նա տիրապետում էր փառաւոր դարբնական արվեստին... Իսկ «կապված Արեսը» շնության պատճառով է կցված նույն պատմությանը. չէ՞ որ, Ափրոդիտեի հետ շնանալով, Արեսը Հեփեսոսսի ձեռքով կապվեց որոգայթով:

Եւ Հոմերոսնի զկատարելագոյն ծայրիցն քերթողականութեան պարգևէին վասն որո՞յ. զի զՀեփեստոս կաղ պատմեաց, և ի բաց ձգեալ զոտանէն՝ յաստուածային սեմոցն... զԱրամազդ՝ իբր զքոյր, միանգամայն և զկին, երկուս մեծամեծս ածեալ յանլոյծ խշտի, ոչ յամեաց իբր զխեղդանէ կախեալ... Իբր զի կարի յոյժ կարացեալ ինչ վճարել, պանծալի իմն պատմէ, ասելով. / Թէ ոչ յիշես, յորժամ կախելով էիր ի բարձու զոտանէ, / և սալս երկուս արկի զոտիցդ, և ի ձեռս կապանս արկի, / ոսկիս առանց հատանելոյ. իսկ դու յարփին և յամպս / կախեալ կայիր, և աղաչէին աստուածք յերկայնն յՈլիւմպոսի, / և լուծանել ոչ կարէին<sup>1</sup>:

Թովմա Արծրունի 2 [74–75].

Եւ մեք զայլս ի բանիցն առասպելականաց ... առ ի յեղծումն առցուք, զոր աւանդեցին խաւարայած արևելականք՝ Զրադաշտ և Մանիթոպ իւրեանց հաւանելոցն, որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյ, մասն ինչ մարդկան շնորհեալ և զյոլովն ինքեան ունել, և զՀեփեստես ասեն կաղ յերկոցուց ոտիցն, և կայծակնավարս. ունի ի ձեռնն աքցանս և կռանս, և նստեալ դարբնէ մարդկան: Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՞րդ իցէ աստուած կիսակտուրն և ի կաղէն գողացեալն: Դարձեալ զի երկիրպագէ հրոյ, և ոչ արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՞րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի:

Գրիգոր Մագիստրոս 1.916.

զՀեփեստոս գտակ հրոյ, զիւր խեղ անդամն ի դարբնոցին...

Եվ ինչի՞ համար էին Հոմերոսին պարգևում բանաստեղծության բարձունքների կատարելությունը. որովհետև պատմեց, թե Հեփեստոսը կաղ էր և ոտքերից բռնված դուրս գցվեց աստվածային շեմքից... Արամազդը (Զևսը) քրոջն ու միատամանակ կնոջը՝ երկու մեծերին մտցնելով չքանդվող մահճի մեջ, չհապաղեց պարանից կախել... Իբր կարողացել էր մի մեծ բան անել, պարծենալով պատմում է՝ ասելով. «Ձե՞ս հիշում, երբ բարձրից կախված էիր ոտքից, և ոտքերիդ երկու սալ էի ամրացրել, իսկ ձեռքերիդ ոսկի անլուծանելի կապանք էի գցել, դու էլ կախված էիր եթերում ու ամպերում, և մեծ Օլիմպոսի վրա աստվածներն աղաչում էին (զայրացել էին) և չէին կարողանում քանդել:

Եվ մենք պատմելու ենք ուրիշ առասպելական պատմություններ և եղծելու այն, ինչ որ աւանդեցին խավարում խարխափող արևելցիք՝ Զրադաշտն ու Մանեթոսն իրենց հավատացողներին. նրանք ասում են, թե Հեփեստոսը գողացել է կրակն աստուծոց<sup>2</sup>, մի մասը շնորհել մարդկանց, իսկ մեծ մասը վերցրել իրեն: Եվ ասում են, որ Հեփեստոսը երկու ոտքից կաղ էր, կայծակ վարսերով. ձեռքում աքցան ու կռան էր բռնում և նստած դարբնում մարդկանց համար: Արդ, եթե կաղը գողացավ Որմիզդի կեսը, և սա չիմացավ, ապա ինչպե՞ս աստված կլինի կիսվածն ու կաղից գողացվածը: Դարձեալ, երկրպագում է կրակը և ոչ արեգակը, որ Հեփեստոսն է, ասելով, թե աստծո մաս է. ինչպե՞ս է լինում, որ գողին ու ապիկարին իբրև աստուած է երկրպագում:

Հուրը հայտնաբերող Հեփեստոսին, նրա խեղ անդամները դարբնոցում...

<sup>1</sup> Հմմտ. Hom. II. 15.18-23. ἢ οὐ μέμνη ὅτε τ' ἐκρέμω ὑψόθεν, ἐκ δὲ ποδοῖν / ἄκμονας ἦκα δύω, περὶ χερσὶ δὲ δεσμὸν ἴηλα / χρύσειον ἄρρηκτον; σὺ δ' ἐν αἰθέρι καὶ νεφέλῃσιν / ἐκρέμω· ἠλάστεον δὲ θεοὶ κατὰ μακρὸν Ὀλυμπον, / λῦσαι δ' οὐκ ἐδύναντο...  
<sup>2</sup> Կրակն աստվածներից մարդկանց համար գողացավ Պրոմեթևսը. տե՛ս դրվագ 21:

## 12. Աթենայի ծնունդը

Ըստ Հեսիոդոսի (Hes. *Theog.* 886–900)՝ Չևսը Հերայից առաջ ամուսնացել էր Օվկիանոսի դուստր Մետիսի հետ և, երբ նա պիտի ծնունդ տար Աթենային, Չևսը կուլ տվեց նրան, քանի որ մայր Գեան ասել էր, թե նա ծնելու է նաև մի որդի, որը դառնալու է երկնքի տիրակալը: Իսկ երբ եկավ ծննդյան ժամանակը, Չևսը խիստ գլխացավ ունեցավ. Պրոմեթևսը (Eur. *Ion* 454–457) կամ Հեփեստոսը (Pind. *Ol.* 7.35–38) նրա գլուխը կացնով ճեղքեց, և Տրիտոն գետի մոտ Չևսի գազաթից դուրս ցատկեց զինավառ Աթենան: Նա կրում էր «Տրիտոնգենիա» (Hom. *Il.* 4.515, Hes. *Theog.* 895) մակդիրը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 82.

Ա.Ս. Տրիտոնիդէ լճիւ երևեցաւ կոյս մի, զոր Տրիտոնիս լճի մոտ հայտնվեց մի կույս, որին հելլենք Աթենայ անուանեցին:

Հմմտ. Sync. 146.23–24.

Τριτόνιδι λίμνη Ἀθηνᾶ παρ' Ἑλλησιν ὠνομάσθη. Տրիտոնիս լճի մոտ Աթենան հույներից անուն ստացավ:

Դաւիթ, Սահմանք ԺԴ [114.9–10] = Dav. *Prolog.* 53.18–23.

Եւթն թիւը կոյս լի, որպէս Աթենայ և ժամանակ... Արդ այսպէս և Աթենայ կոյս լի, վասն զի ասեն արտաքինքն զԱթենայէ, թէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ:

ὁ δὲ ἑπτὰ ἀριθμὸς λέγεται καὶ καιρὸς καὶ Ἀθηνᾶ... Ἀθηνᾶ δὲ λέγεται, ἐπειδὴ ὥσπερ μυθεύουσιν τὴν Ἀθηνᾶν παρθένον εἶναι καὶ ἀμήτορα. ἐκ τῆς κεφαλῆς γὰρ τοῦ Διὸς, ὡς μυθεύουσιν, ἐξῆλθε.

Յոթ թիւը կույս է կոչվում, ինչպես՝ Աթենան և ժամանակը (յոթ թիւը կոչվում է և՛ ժամանակ և՛ Աթենա)... Արդ այսպես Աթենան «կույս» (+ և անմայր) է կոչվում, քանի որ հեթանոսներն (չիք) ասում են Աթենայի մասին, որ ծնվել է (դուրս է եկել) Արամազդի (Ջևսի) գլխից:

Նոննոս 1.4 [7] = Nonnos 39.4.37–41.

Արդ ասացուք, թէ յորժամ եղև գլուխ նորա երկնի. յորժամ ունէր ի նմա զԱթենա, քանզի ասի թէ Աթենա ի գլխոյն Արամազդայ ծնաւ. վասն զի անդ ունէր զնա յղացեալ, և առեալ ի Հեփեստոսէ տապար՝ եհերձ զգլուխն և ծնաւ Աթենա:

ποτὲ οὖν γέγονεν ἡ κεφαλὴ αὐτοῦ κεφαλὴ ὠδίνων ὅτε ἐν αὐτῇ εἶχε τὴν Ἀθηνᾶν. λέγεται γὰρ ὅτι ἡ Ἀθηνᾶ ἐκ τῆς κεφαλῆς τοῦ Διὸς ἐγεννήθη. ἐκεῖ γὰρ αὐτὴν ὠδίνεν ὁ Ζεὺς καὶ λαβὼν παρὰ τοῦ Ἡφαίστου μετὰ ἀξίνης κατὰ τῆς κεφαλῆς ὁ Ζεὺς ἔτεκεν ἐξ αὐτῆς τὴν Ἀθηνᾶν.

Այժմ ասենք, թե (չիք) երբ եղավ, որ նրա գլուխը երկնեց. երբ իր մեջ ուներ Աթենային, քանզի ասում են, որ Աթենան ծնվել է Արամազդի (Ջևսի) գլխից: Քանի որ այնտեղ նրան ուներ հղիացած (երկնում էր Ջևսը), Հեփեստոսից կացին վերցնելով (կացնով գլխին [հարված] ստանալով)՝ գլուխը ճեղքեց և ծնեց (+ նրանից) Աթենային:



Նոննոս 4.22 [72–73] = Nonnos 5.22.1–7.

Զևս կամեցեալ յուղղոցն իւրմէ բացածնանիլ զԱթեննա՝ կարաւտանայ գործակցի ումեմն, զի հատանելով և գանելով զգլուխն՝ բացածնուցէ: Արդ՝ բան յառաջաբերեալ լինի յաղագս այսորիկ Հեփեսոսեայ. և նա ոչ այլազգ յանձն առնու հերձուլ զգլուխն Արամագղայ. եթէ ոչ զծնեալ կոյսն արասցէ արամբի. և Զևս յայտցիկ ներէ. և առեալ Հեփեսոսեայ զառջառահատ տապարն, հերձեալ հատանէր զգլուխն Արամագղայ, և արտաքս ելանէ Աթեննա:

Օ Ζεύς βουλόμενος ἀποκυῖσαι ἐκ τοῦ ἐγκεφάλου αὐτοῦ τὴν Ἀθηνᾶν, ἐδεῖτο συνεργοῦ τοῦ λαβόντος καὶ πλῆξαντος τὴν κεφαλὴν ἵνα ἀποκυηθεῖη. καὶ λόγους προσφέρει τῷ Ἡφαίστῳ περὶ τούτου. ὁ δὲ Ἡφαιστος οὐκ ἄλλως εἶλετο σχίσει τὴν κεφαλὴν τοῦ Διός, εἰ μὴ τὴν γεννωμένην ἀποπαρθενεύσῃ· καὶ ἠνέσχετο ὁ Ζεὺς. Λαβὼν οὖν ὁ Ἡφαιστος τὸν βουπλῆγα, τέμνει τὴν κεφαλὴν τοῦ Διός. καὶ ἐξέρχεται ἡ Ἀθηνᾶ.

Զևսը, կամենալով իր ուղեղից ծնել Աթենային, կարիք ուներ մի գործակցի, որպեսզի նա հարվածի ու ճեղքի իր գլուխը, և ինքը ծնունդ տա: Ուստի այդ մասին հայտնեց Հեփեսոսին: Նա էլ հանձն չէր առնում ճեղքել Արամագղի (Զևսի) գլուխը, բայց միայն եթե ինքը ծնված կույսին կուսությունից զրկի: Եվ Զևսը դրան ներողամտորեն վերաբերվեց: Վերցնելով եզ մորթելու կացին՝ Հեփեսոսը ճեղքեց-բացեց Արամագղի գլուխը, և դուրս եկավ Աթենան:

Խաչատուր Կեչառեցու բարառնություն (Աղեքսանդրի պատմութիւն Ա.) 355.

[Թէ զանձն իւր զրկեալ և տառապեալ որպէս ողբայր Ոլոմպիադա մայրն Աղեքսանդրի]. Այժմ պիտոյ է ինձ տապարն Հեփեսոսի՝ առ ի հերձանել զգլուխ ծնաւղիս Աթենայ:

[Աղեքսանդրի մայր Օլիմպիադան ողբում էր իր զրկյալ ու տառապյալ հոգին.] Այժմ պետք է ինձ Հեփեսոսի կացինը՝ ճեղքելու համար իմ՝ Աթենային ծնողի գլուխը:

Անանիա Նարեկացի, Ներբողեան 640.

Այս ամին գուգաթուեսցի և Աթենայ իւրով անլծորդ ևթնեկիւն, որ և սա կոյս կոչիւր ըստ հեթանոսական առասպելաբան բաշաղանաց:

Այս տարվան թող հավասարվի և Աթենան իր չբաժանվող յոթնյակով. նա նաև կույս էր կոչվում՝ համաձայն հեթանոսական առասպելներ պատմող բարբաղանքների:

Գրիգոր Մագիստրոս 12. (ԾԸ).11.

Եաւթնեակն Աթենայ կուսածին յուղղոյն Արամագղայ Պիկկոսին, պատանի գոլով, ոչ ծնեալ և ոչ ծնիցեալ...

Յոթնյակ Աթենան՝ կուսական եղանակով ծնված Պիկկոս Արամագղի (Զևսի) ուղեղից, պատանի լինելով, ոչ ծնելով, ոչ էլ ծնվելով...

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. Զ.110.

Քանզի թիւս այս ևթնեակ ասի կոյս և ծնեալ գսա ասեն յուղղոյն Արամագղայ, գոր և ոմանք Աթենա անուանեն, և ի բազմաց պատուեալ եղև ի հեթանոսականացն կոյսս:

Քանզի այս յոթ թիվը կույս է կոչվում, և ասում են, թե այն Արամագղի (Զևսի) ուղեղից է ծնվել, և ոմանք էլ այն Աթենա են անվանում, և այս կույսին պատվում են հեթանոսներից շատերը:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 165.

Քանզի թերևս այս է. և թնեակ ասի կոյս, և ոմանք գսա ասեն յուղղոյն Արամազդայ, զոր և ոմանք զԱթենայ անուանեն, և ի բազմաց պատուեալ եղև ի հեթանոսականացն կոյս:

Քանզի թերևս այս յոթ թիվը կույս է կոչվում, և ոմանք ասում են, թե այն Արամազդի (Զևսի) ուղեղից է, ոմանք էլ այն Աթենա են անվանում, և այս կույսին պատվում են հեթանոսներից շատերը:

Առաքել, Լուծումն 587–588.

Հ. Զինչ է որ ասէ՝ թէ եաւթն թիւն կոյս է և ժամանակ ասի: Պ. Արդ՝ երկու անուն ունի, այսինքն կոյս և ժամանակ. որպէս Աթենայ, զի արտաքինքն ասէին թէ Աթենա կոյս էր. զի ոչ ունէր հայր և մայր, այլ յԱրամազդայ գլխոյն ծնաւ:

Հարց. Ի՞նչ է նշանակում «յոթ թիվը կույս է և կոչվում է ժամանակ»: Պատասխան. Երկու անուն ունի՝ կույս և ժամանակ, որպէս՝ Աթենա. որովհետև հեթանոսներն ասում էին, թե Աթենան կույս էր, քանի որ հայր և մայր չուներ, այլ ծնվել էր Արամազդի գլխից:

Դաւիթ, Ստորոգ. Թ [220] = Dav. in Cat. 126.

Տրիտածին:

Τριτογενής.

Տրիտոնից ծնված:

### 13. Էլևսիսի հիմնումն Ատտիկեում

Պավսանիասը հաղորդում է, որ Էլևսիս<sup>1</sup> քաղաքն իր անունը ստացավ հերոս Էլևսիսից, որի հայրն Օգիգոսն էր (Paus. 1.38.7): Ատտիկեի առաջին թագավոր Կեկրոպսի օրոք նախկինում Ակտե կոչվող գավառը կոչվեց Կեկրոպիա (Apollod. 3.14.1 [3.177]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 82.

Ովգիգէս յԱտտիկէ զԵղևսիսն է շինեաց, որ յառաջն կոչիւր Ակտէ, որպէս և այլ բազում քաղաքս:

Օգիգոսը շինեց Էլևսիսն Ատտիկեում, որ առաջ կոչվում էր Ակտե, ինչպես և շատ ուրիշ քաղաքներ:

Հմմտ. Sync. 71.4–5.

Ἦγυρος αὐτόχθων πρῶτος βασιλεὺς Ἀκτῆς τῆς νῦν Ἀττικῆς...

Օգիգոս Հողածին, Ակտեի՝ այժմյան Ատտիկեի առաջին թագավոր...

Հմմտ. Sync. 71.17.

ἐπὶ Ἦγυρον, ὃς ἔκτισεν Ἐλευσίνα...

Օգիգոսի դեմ, որը հիմնեց Էլևսիսը...

<sup>1</sup> Ներկայումս՝ Էլևսիսն բնակավայրն է Ատտիկեում, Աթենքից 18 կմ հյուսիս-արևմուտք: Հայտնի էր որպես մեծ ողբերգակ Էսքիլոսի ծննդավայրը, նաև՝ այդտեղ անցկացվող Դեմետրի խորհրդածեստով: Խիստ գաղտնի այդ արարողության ընթացքին ու մանրամասներին կարող էին ծանոթանալ միայն «հաղորդակցվածները» (ինիցիացիա անցածները):

Հմտ. Sync. 146.23–24.

ᾠγυγος ἐν Ἄκτῃ...

Օգիգոսն Ակտեում...

Վարդան, Հաւաքումն Ը [18].

Ովգեգիս շինեաց գելևսինեա յԱտտիկէ:

Օգիգոսը շինեց էլևսինսն Ատտիկեում:

#### 14. Լետո և Տիտիոս

Չևսի որդի հսկա Տիտիոսը տեսավ Պիթոն<sup>1</sup> եկած Լետո աստվածուհուն, կրքով բռնվեց և նրան դեպի իրեն քաշեց: Նա էլ օգնության կանչեց իր զավակներ Ապոլլոնին ու Արտեմիսին, և նրանք նետահարեցին Տիտիոսին (Apollod. 1.4.1 [1.23]): Ըստ Հոմերոսի՝ մեռյալների աշխարհ իջած Ուդիսևսը տեսնում է, որ Տիտիոսը մեկնված է գետնին ու ինը պլեթրոն<sup>2</sup> տարածք է զբաղեցրել, և երկու անգղ կոցուծ են նրա լյարդը (Hom. Od. 11.576–581):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118 = Sync. 189.18-20.

Տիտիոսի ժամանակակից էր Տանտաղ... Առ Տիտեաւ Ղե-տով կին. յորմէ և Ապոլլովն, որ և ընդ Հերակղի Աղմէտեայ ծառայեաց:

Τιτὸς συνεχρόνισε Ταντάλω. κατὰ δὲ Τιτὸν Λητώ, ἀφ’ ἧς Ἀπόλλων, ὃς καὶ σὺν Ἡρακλεῖ τῷ Ἀδμήτῳ ἐδοῦλευσε.

Տիտիոսին (Տիտիոսը) ժամանակակից էր Տանտալոսը (Տանտալոսին)... Տիտիոսի ժամանակ Լետո կինն էր, որից և Ապոլլոնն էր, որը Հերակլեսի հետ ծառայեց Աղմեսոսին<sup>3</sup>:

Թեոն 106 = Theon 95.23–27.

Տինա և Եփորոս վարի չորրորդումն իմն այնու յեղանակաւ, զի Տիտքոս էր Պեոպեայ ճոխ՝ արտաւրէն և բռնաւոր և Պիթոն գազանածև գրնութիւն ունէր, և վիշապ և կոչէին:

καὶ μέντοι καὶ Ἔφορος ἐν τῇ τετάρτῃ χρῆται τούτῳ τῷ τρό- πῳ, ὅτι ἄρα Τιτὸς μὲν ἦν Πα- νοπέως δυνάστης, ἀνὴρ παράνο- μος καὶ βίαιος, Πύθων δὲ θη- ριάδης τὴν φύσιν, δράκων ἐπι- καλοῦμενος.

Ահա Եփորոսը չորրորդ [գրքում] այսպես է վարվում, քանի որ Տիտիոսը Պանոպիսի իշխանն էր՝ օրինազանց և բռնակալ, իսկ Պիթոնը գազա- նակերպ էր բնությամբ և կոչ- վում էր վիշապ:

Գրիգոր Նազ., ճառ 5.38.6 [212] = PG 35.713.30.

...գՏիտիոս...

...Տիտոզ...

...Տիտիոսին...

<sup>1</sup> Դելփիի մյուս անունն է:

<sup>2</sup> 1 պլեթրոն = 30.83 մ. 9 պլեթրոնը մոտ 280 մ է:

<sup>3</sup> Ապոլլոնը սպանել էր Չևսի համար շանթեր պատրաստած կիկլոպներին և դրա համար պատիժ էր կրում՝ ծառայելով մահկանացուի՝ Փերեի արքա Արմեսոսին (Sch. Eur. Alc. 1, Apollod. 3.10.4 [3.122]): Հերակլեսն այդ իրադարձությանը մասնակից չի եղել, սակայն նա մեկ այլ ծառայություն է մատուցել Արմեսոսին. Ապոլլոնը մոյրաներից պահանջել էր մահվան շեմին Աղմեսոսին ազատել մահից, եթե որևէ մեկը համաձայնի նրա փոխարեն մեռնել: Երբ օրը եկավ, հայրն ու մայրն այդ առաջարկը չընդունեցին, և համաձայնեց մեռնել նրա երիտասարդ կին Ալկեստիսը, սակայն Հերակլեսը կռվեց Հադեսի հետ և կնոջն Արմեսոսին վերադարձրեց (Apollod. 1.9.15 [1.106]): Իսկ Եվրիպիդեսի «Ալկեստիս» ողբերգության մեջ Հերակլեսը գոտեմարտում է ոչ թե Հադեսի, այլ մահվան աստված Թանատոսի հետ:

Նոննոս 4.32 [76–77] = Nonnos 5.32.10–14.

Տրտիւնս ցանկացաւ Ղետայ, և տուփեալ՝ բուռն եհար զգլխաւինդ վարչամակէն: Ապա Արտեմիս և Ապողոն մանկունք գոլով Ղետոսի՝ նետիւք վիրաւորեցին զնա, և սպանին, և այժմ է ի դժոխս և ունի զնետոսն կառուցեալսն ի նա, և այսոքիւք պատուհասեալ լինի:

Τιτυδὸς ἠράσθη τῆς Λητοῦς καὶ ἐρασθεὶς ἐκράτησεν αὐτὴν ἀπὸ τοῦ κρηδέμνου. Εἶτα Ἄρτεμις καὶ Ἀπόλλων, παῖδες ὄντες τῆς Λητοῦς, κατετόξευσαν αὐτὸν καὶ ἀνείλον. καὶ νῦν, φησὶν, ἐν τῷ Ἄιδῃ ἔχει τὰ βέλη ἐμπεπαρμένα καὶ κολάζεται ἐκ τούτου.

Տրտիսուք ցանկացաւ Ղետոյին և, կրքով լցված, ձեռքը գցեց գլխաշորին: Այդ ժամանակ Արտեմիսն ու Ապոլլոնը, որ Ղետոյի զավակներն էին, նետահարեցին ու սպանեցին նրան, և այժմ դժոխքում նա իր մեջ խրված նետեր ունի ու դրանցով պատվում է:

### 15. Ապոլլոն և Դափնե

Դափնեն աղբյուրների նիմփա էր. Ապոլլոնը սիրահարվել ու հետապնդում էր նրան: Երկիրը ճեղքվեց և ընդունեց Դափնեին, իսկ փոխարէնը դափնի ծառն աճեց (*Rhetorica anonyma*, *Περὶ τῶν ὀκτῶ μερῶν τοῦ ῥητορικοῦ λόγου* 3.591.17-22, *Hyg. Fab.* 2):

Գրիգոր Նազ., ճառ 5.32.5 [202] = PG 35.704.47.

Դարձեալ Սարգենի տունկ է առասպելեալ ողբացեալ:

Πάλιν ἡ Δάφνη φυτὸν ἐστὶν μῦθος θρηνοῦμενον.

Դարձյալ Սարգենին (Դափնեն) բույս է՝ առասպելում ողբի առարկա դարձած:

Նոննոս 4.19 [71] = Nonnos 5.18.

Դափնէ աղջիկ էր ի Ղատոն գետոյ և յերկրէ զծնունդն բարբախտեալ. նա ասէ գեղեցիկ գոլով տեսակաւ՝ ի տուփանս շարժեաց զԱպողովն: Այլ Ապողոն շարժեցեալ ի տուփանսն՝ զհետ լինէր Դափնեայ շողաշարիլ ընդ նմա: Իսկ աղջիկն գկուսուլթիւնն պահել կամելով, առ մայրն ըղձացեալ աւգնել կոչէր. և երկրի բացեալ զգիրկս իւր՝ ընդունէր զաղջիկն, և զբաղեցուցանել կամելով զաստուածն՝ տունկ ելուզանէր համանուն աղջկանն. զոր առեալ Ապողոնի՝ նովառ առ եռոտանեալսն պսակի, զբաղնլով տուփականան ինքեան Դափնեալ:

Δάφνη, φησί, κόρη ὑπῆρχεν ἐκ Λάδωνος τοῦ ποταμοῦ καὶ Γῆς τὴν γένεσιν εὐτυχήσασα. αὕτη, φησί, περικαλλὴς τε οὖσα τῷ εἶδει καὶ ὠραιζομένη ταῖς ὄψεσιν, εἰς ἔρωτα ἐκίνησε τὸν Ἀπόλλωνα. ὁ δὲ Ἀπόλλων, φησί, κινούμενος ἐκ τοῦ ἔρωτος, ἐπεδίωκε τὴν Δάφνην, εἰ πῶς ἰσχύσει συγγενέσθαι τῇ κόρῃ. ἢ οὖν κόρη, τὴν παρθενίαν ἐθέλουσα φυλάξαι, τῇ οἰκείᾳ μητρὶ τῇ Γῆ προσηύξατο βοηθῆσαι αὐτῇ. ἢ δὲ Γῆ διανοίξασα τοὺς ἑαυτῆς κόλπους ἐδέξατο τὴν παῖδα· καὶ ψυχαγωγῆσαι θέλουσα τὸν θεόν, φυτὸν ἀνῆκεν ὁμώνυμον τῇ κόρῃ, ὃ λαβὼν ὁ Ἀπόλλων στέφεται παρὰ τὸν τρίποδα, ψυχαγωγούμενος ὑπὲρ τῆς ἐρωμένης αὐτῷ Δάφνης.

Դափնեն (ասում է [Գրիգորը]) մի աղջիկ էր, որ բախտ էր ունեցել ծնվելու Լադոն գետից ու Երկրից (Գեայից): Նա, ասում է, արտաքինով գեղեցիկ էր (+ ու փթթող դեմքով) և Ապոլլոնի մեջ ցանկուլթիւն առաջացրեց: Ապոլլոնը, ասում է, տուփանքով լցված, հետապնդում էր Դափնեին նրա հետ մերձենալու նպատակով: Իսկ աղջիկը, ցանկանալով կուսուլթյունը պահել, մորն (իր մայր Գեային) օգնուլթեան կանչեց: Երկիրը (Գեան), բացելով իր գիրկը, ընդունեց աղջկան և, ցանկանալով աստծուն սիրտիել, աղջկա անունով մի ծառ աճեցրեց: Ապոլլոնը դավերցրեց և եռոտանու մոտ դրանով պսակվում է՝ սիրտիվելով իր տարփանքի առարկա Դափնեի համար:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. Ե.2.

Հազներգութիւնն ըստ հոռոմին լսի գաւազան-  
երգութիւնն, վասն զի սարգենի գաւազանաւ,  
զոր փոխանակ սուզելոյ կուսին, որպէս ասեն,  
բուսոյց երկիր, պար գոլով Ապոլոնի երգեն  
զհոմերական քերդածան<sup>1</sup> վասն խնդրելոյ շնոր-  
հին, որ ի Հոմերոնէ ասացեալ քերդածացն, որ  
զանխլացեալ յաղագս միայարութեանն. բաժա-  
նումն գործեցաւ յաղագս զիւր ուսման ման-  
կանց յերկուս գիրս՝ յԻդիակոն և յՈդիսիակոն  
ի քսան և չորս ճառս:

Հազներգութիւնն Հունարեն հնչում է որպէս  
գավազաներգութիւնն, քանի որ դափնու գա-  
վազանով, որը զետնասույզ եղած կույսի փո-  
խարեն, ինչպէս ասում են, աճեցրեց երկիրը,  
Ապոլլոնի պար գալու ժամանակ երգում են Հո-  
մերոսի պոեմները՝ փնտրելու համար Հոմերոսի  
հորինած պոեմների շնորհքը, որը թաքնված է  
շարունակականութեան պատճառով. բաժանում  
արվեց երկու գրքում՝ «Իլիական»-ում և «Ոդի-  
սական»-ում, քսանչորսական գլխի, որպէսզի  
մանուկները հեշտ սովորեն:

Յովհաննէս Երզնկացի, Ճառք Բ, էջ 56.

Սարգէ և Տաֆնի [ձաւնէին] Ապոլոնի:

Սարգենին և դափնին ձոնում էին Ապոլլոնին:

Վարդան, Քերակ. 83-84.

Իսկ հազներգութիւնն «կատակերգութիւն»  
առ մեզ ասի ի մեր բառս, իսկ ի յունացի բառն՝  
«գաւազաներգութիւն», որ է առասպելաբա-  
նութիւն, որպէս ասեն յառասպելն՝ զԱպոլոն  
աստուածն ողորմեալ երիտասարդին՝ որ վասն  
կուսին էր տխրեալ, և ետ նմա սարգենի մա-  
հակ, այսինքն՝ գործիք ծնծղայլից և կամ այլ  
ինչ ի հնչողականաց և զՀոմերոնի գքերթածան  
երկու գիրս, որ են ԻԴ ճառս դրուատած: Եւ ա-  
սաց նմա՝ ձայնիւ մխիթարիլ ի վշտացն, զոր  
վասն կուսին ունէր: Եւ այսու պատճառաւ  
գերծոյց զկուսութիւն աղջկանն:

Հազներգութիւնն մեզ մոտ մեր լեզվով կոչ-  
վում է «կատակերգութիւն», իսկ հունարեն՝  
«գավազաներգութիւն», ինչն առասպելաբա-  
նութիւնն է. ինչպէս առասպելում են պատ-  
մում, թե Ապոլլոն աստվածը, զթալով երիտա-  
սարդին, որը տխրել էր կույսի համար, նրան  
տվեց դափնու մահակ, այսինքն՝ ծնծղա կամ  
ինչ-որ մի այլ հնչող գործիք, և Հոմերոսի եր-  
կու պոեմները, որոնք քսանչորս գլխից բաղ-  
կացած գովերգութիւն են: Եվ ասաց, որ նա  
ձայնով մխիթարվեց կույսի համար իր ունե-  
ցած վշտից: Եվ այս պատճառով փրկեց աղջկա  
կուսութիւնն:

Առաքել Սիւնեցի, Քերակ. 97-98.

Հազներգութիւնն ըստ հոռոմին «գաւազաներ-  
գութիւն» ասէ, այսինքն՝ որ հազնի ծառոյն  
գաւազան շինեալ, զայն ի ձեռն առնուին և  
զհոմերական տաղն երգէին ուրախութեամբ:  
«Սարգենի մահակաւ», այսինքն՝ զի ասեն, թէ  
Ապոլլոն աստուածն հետ կուսի միոյ էած, որ

Հազներգութիւնն Հունարեն կոչում է «գա-  
վազաներգութիւն», այսինքն, բարդի ծառից  
գավազան սարքելով, այն ձեռքն էին վերցնում  
և Հոմերոսի պոեմներն էին երգում ուրախու-  
թեամբ: «Դափնու մահակով», այսինքն՝ որով-  
հետև ասում են, թե Ապոլլոն աստվածն ընկավ

<sup>1</sup> Հմմտ. Դիոն. Թրակ., Քերակ. 4.7–10. «Եւ ոգեալ է հազներգութիւն ի հազնելոյ կարկատուն բանս, և կամ ի սարդե-  
նի մահակէ պար գոլով երգել զհոմերական քերդածան» = Ars grammatica 1.1.8.4-6. Εἴρηται δὲ ῥαυφοδία οἰοῦναι  
ῥαβφοδία τὸ οὖσα, ἀπὸ τοῦ δαφνίνης ῥάβδῳ περιερχομένου ἄδειν τὰ Ὀμήρου ποιήματα – «Եվ այն հազներգություն է  
կոչվում՝ կարկատուն խոսքեր կցնցելու պատճառով (որպես գավազաներգություն)՝ դափնու գավազանով պար  
գալով (շրջելով) Հոմերոսի պոեմները երգելու պատճառով»: Փաստորեն Մագիստրոսն իր մեկնության մեջ մեջբե-  
րում է Թրակացու հունարեն բնագրի «հազներգություն որպես գավազաներգություն» բացատրությունը, որն ար-  
տացողված չէ քարգմանության մեջ:

չնայր և իւր կին առնէր զնա: Իսկ կոյսն այն փախեալ, և այլ աստուածքն խղճացին կուսին և զերկիր բացին, և կոյսն յերկիր մտաւ և զերծաւ: Եւ յայն պատուուածոյն այս անուշահոտ ծառս բուսաւ՝ սարղենիս, զոր «Հագնի» ասէին: Այս բուսաւ ի յիշատակ կուսին՝ որպէս կուսութիւն միշտ կանաչ է և ոչ թառամի, և սրբութիւնն անուշահոտ է, այսպէս և ծառն այն միշտ կանաչ է և անուշահոտ: Եւ յայն ծառէն գաւազան գուգեցին, վասն այն յամենայն տարի զայն գաւազանն ի ձեռն առնուին, և զայս երգս երգէին, և ի մէկ մէկի յուս ելանէին և զայս երգս երգէին: Եւ զայս երգս ի ԻԴ ճառ արարին և յերկու գիրք բաժանեցին՝ ԺԲ ճառ ի մին գլուխ և ԺԲ ի մին գլուխ, որ զանխուլ և թաքուն և յերկար չերեւէր և տղայքն յուսահատէին և չկարգային: Մի գրոցն անունն է Ելիակոն, և միւսոյն՝ Յօզիսակոն: Եւ այս էր նոցա Հագներգութիւնն, զի պարէին Հագնելով, այսինքն՝ զՀագազն շնչին և զոտս փոփոխելով, ի պարն Հագնի մահակաւ երգէին և տաւնէին Ապողինայ և յիշատակ կուսին:

մի կուսի Հետեից, որպեսզի շնանար և իր կինը դարձներ նրան: Իսկ այն կուսը փախավ, և մյուս աստվածները գթացին կուսին ու բացեցին երկիրը, և կուսը գետնի տակ մտավ ու փրկվեց: Եվ այն պատուածքից բուսնեց այս անուշահոտ ծառը՝ դափնին, որը «բարգի» էին անվանում: Այն բուսնեց կուսի հիշատակին, քանի որ կուսությունը միշտ կանաչ է և չի թառամում, և սրբությունն անուշահոտ է. այսպէս էլ այն ծառը միշտ կանաչ է և անուշահոտ: Եվ այն ծառից գավազան պատրաստեցին, և նրա համար ամեն տարի այն գավազանն իրենց ձեռքն էին առնում և երգում էին այս երգերը, և միմյանց ուսերի վրա էին բարձրանում և այս երգերն էին երգում: Եվ այս երգերը դարձրին քսանչորս գլուխ և բաժանեցին երկու գրքի՝ մեկը տասներկու գլուխ և մյուսը տասներկու գլուխ, որպեսզի անհայտ, թաքուն ու երկար չլիար և մանուկները հուսահատվեին ու չկարգային: Մի գրքի անունն է՝ «Իլիական», մյուսինը՝ «Ոդիսական»: Եվ այսպիսին էր նրանց Հագներգությունը, որ պարում էին Հագնելով, այսինքն՝ փոփոխելով շունչն ու ոտքերը. պարի ժամանակ բարդու մահակով էին երգում և տոնում էին Ապոլլոնի ու կուսի հիշատակը:

## 16. Արեոպագոսի դատարանը

Պավսանիասը պատմում է (Paus. 1.28.5), որ Աթենքի Արեոպագոսը («Արեսի բլուրը») այդպես կոչվեց, քանի որ առաջին անգամ այդտեղ դատվեց Արեսը: Նրան դատի էր տվել Պոսեյդոնը՝ իր որդի Հալիռոթիոսին սպանելու համար (Apollod. 3.14.2 [3.180]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106.

Արիոս պագոս շինեցաւ:

Շինվեց Արեոպագոսը:

Հմմտ. Sync. 179.27.

Ἀρειος πάγος ἐκλήθη καὶ δικαστήριον κατέστη.

Արեոպագոսը ստացավ իր անունը, և դատարանի հիմնադրվեց:

Միխայէլ Ասորի Ա 49.

Ի սոյն ժամանակս Աւրոպագոս (2 օրինակ՝ Արիսպագոս) կոչեցաւ դատարանն:

Այդ ժամանակ դատարանը կոչվեց Արեոպագոս:

Միխայել Ասորի Բ 32.

Աստ շինեցաւ տաճարն Ապողոնի յԱթէնս, և Այստեղ, Աթենքում, կառուցվեց Ապոլլոնի կոչեցաւ Արիսպագոս՝ որ է տուն դատաստանի: տաճարը և կոչվեց Արիսպագոս, որ նշանակում է՝ դատաստանի տուն:

### 17. Օրիոն

Ծովի վրայով քայող հսկա որսորդ Օրիոնը սպանվեց, որովհետև Արտեմիսին հրավիրել էր սկավառակ նետելու (Apollod. 1.4.5 [1.27]): Ջուսն Օրիոնին ու նրան խայթած կարիճին համաստեղությունների վերածեց (Eratosth. *Catast.* 32):

Յոթ ԻԸ 31.

Խելամո՞ւտ իցես կարգի բազմաստեղաց. և քո բացեա՞լ իցէ զպատրուակ Հայկին: *συνήκας δὲ δεσμὸν Πλειάδος καὶ φραγμὸν Ὠρίωνος ἤνοιξας;* Հասկացե՞լ ես Համաստեղությունների կարգը (կապը) և բացե՞լ ես Հայկի (Օրիոնի) քողը:

Եսայի ԺԳ 10.

Ջի աստեղք երկնից Հայկիւն Հանդերձ, և ամենայն զարդուն երկնից լոյս մի տացեն. և խաւարեսցի արեգակն ի ծագել իւրում, և լուսին մի տացէ զլոյս իւր: *οἱ γὰρ ἀστέρες τοῦ οὐρανοῦ καὶ ὁ Ὠρίων καὶ πᾶς ὁ κόσμος τοῦ οὐρανοῦ τὸ φῶς οὐ δώσουσιν καὶ σκοτισθήσεται τοῦ ἡλίου ἀνατέλλοντος, καὶ ἡ σελήνη οὐ δώσει τὸ φῶς αὐτῆς.* Քանզի երկնքի աստղերը Հայկով (Օրիոնով) ու երկնքի բոլոր լուսատուներով Հանդերձ լույս չեն տա, և կխավարի արեգակն իր ծագելու ժամանակ, և լուսինն իր լույսը չի տա:

Գրիգոր Նար., Մեկն Ո՞վ.

Փայլեսցուք ընդ դասս անմարմնոց, / Իբրեւ Փայլենք անմարմինների դասերի Հետ, / Հայկի զՀայկն գեղեցիկ փայլելով: պես գեղեցիկ փայլելով:

Գրիգոր Նազ., Ի Բաս. 166 = Greg. Naz. *in Bas.* 8.2.1-2.

Բայց դու ինձ ասա գեղջիւրասպանսն զՈրիովնաս և զԱքստիովնաս զչարաղևս որսորդս: *Σὺ δέ μοι λέγε τὰς ἐλαφιβόλους σου καὶ τοὺς Ὠρίωνας καὶ τοὺς Ἀκταίωνας, τοὺς κακοδαίμονας θηρευτάς.* Բայց դու ինձ ասա եղջերու սպանող Օրիոնների և Ակտեոնների<sup>1</sup> մասին՝ այդ դժբախտ որսորդների:

Նոնոս 2.6 [17] = Nonnos 43.2.11-17.

Այլ Ովրիոն ասի ի պատահման աստուածոցն առ մորթով արջառոյն, զոր եզեն Իւրեփս՝ թագաւոր թեբէացոց առ ի Հիւրըն- *Καὶ ὁ Ὠρίων δὲ οὗτός ἐστιν ὁ καταστηριχθεὶς. ἔστι δὲ οὗτος ὁ ἐκ τοῦ οὐρῆσαι τοὺς θεοὺς ἐν τῇ βύρσῃ τοῦ βοῦς τοῦ σφαγέντος* Օրիոնի մասին ասվում է աստվածների Հետ եղած՝ Հորթի մորթու պատահարի առիթով, որին աստվածներին Հյուրընկա-

<sup>1</sup> Ակտեոնի մասին տե՛ս դրվագ 74:

կալուծիւն աստուածոցն. քան-  
զի յայնժամ էր ծնեալ և լեալ:  
Այս Ովրիոն եղև սպանանող  
գազանաց, այլ և տուհեալ Ար-  
տեմիդեայ, վասն որոյ բարկա-  
ցեալ աստուածուհին՝ յարոյց  
կարիճ ընդդէմ նորա, ուստի  
ընկալեալ Հարուածս՝ մեռաւ,  
վասն որոյ և յերկինս նկարեալ  
եղև առ կարծին:

ὕπὸ τοῦ Ὑριέως, τοῦ Θηβῶν  
βασιλέως, ἐπὶ τῇ φιλοξενίᾳ τῶν  
θεῶν γεννηθεὶς. γενόμενος δὲ  
οὗτος ὁ Ὠρίων καὶ ὧν θηρολέ-  
της ἠράσθη τῆς Ἀρτέμιδος. Εἶτα  
ἢ θεὸς ὀργισθεῖσα ἀνῆκε σκορ-  
πίον κατ' αὐτοῦ. καὶ κρουσθεὶς  
ἀπέθανε, διὸ ἐστὶν ἐν τῷ  
οὐρανῷ μετὰ τοῦ Σκορπίου.

Լեւու ժամանակ մորթեց թեբեա-  
ցիների թագավոր Հիրիւսը, քա-  
նի որ հորթն այդ ժամանակ  
ծնվեց (Եվ այս Օրիոնն աստղի  
վերածվեց: Սա ծնվել է Հյուսիս-  
սիրուծյան ժամանակ Թեբեի  
թագավոր Հիրիւսի մորթած եզի  
կաշվի մեջ աստվածների միգե-  
լուց)<sup>1</sup>: Այս Օրիոնը գազաններ  
էր սպանում. նաև կրքով լցվեց  
Արտեմիսի հանդեպ, ինչի հա-  
մար աստվածուհին, բարկանա-  
լով, նրա դեմ մի կարիճ ուղար-  
կեց, որից խայթված նա մեռավ.  
Գրա համար երկնքում պատ-  
կերվեց կարիճի հետ:

## 18. Դեմետեր, Պերսեփոնե և Տրիպտղեմոս

Պլուտոնը<sup>2</sup>, սիրահարվելով Չուսի և Դեմետերի դուստր Կորա-Պերսեփոնեին, Չուսի օգնու-  
թյամբ ծածուկ առևանգեց նրան: Մայրը երկրով մեկ փնտրում էր աղջկան և եկավ Էլլուսիս, որի  
թագավորն էր Կելեոսը: Նրա ավագ որդի Տրիպտղեմոսի համար պտղաբերության աստվածու-  
հի Դեմետերը թևավոր վիշապներով մի կառք պատրաստեց ու նրան ցորեն տվեց: Երկնքով ըն-  
թանալով՝ նա այն ցանեց աշխարհով մեկ (Apollod. 5.1-2 [29-32]): Այս պատմության հիմնական  
աղբյուրը Դեմետերին նվիրված հոմերոսյան հիմնն է (*HH Dem.*): Տրիպտղեմոսի մասին պատ-  
մել է Պավսանիասը (Paus. 1.38.7):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 185.23-26.

Եղևսինեայ Կելէոս թագաւո-  
րեաց, մինչ Տրիպտղոմէոսն  
էր. գորմէ ասէ Փիլոքորոս,  
երկայն նաւու շրջել, և ցո-  
րեան բաշխել. և կարծել թէ  
թռչուն աւճ իցէ նաւն, քանզի  
ձկն այնպիսի իմն էր:

Ἐλευσίνος πόλεως Κελεὸς ἐβα-  
σίλευσε, καθ' ὃν Τριπτόλεμος  
ἦν, ὃν φησὶν ὁ Φιλόχορος μακ-  
ρῷ πλοίῳ προσβαλόντα ταῖς πό-  
λεσι τὸν σῖτον διδόναι, ὑπονοεῖ-  
σθαι δὲ περωτὸν ὄφιν εἶναι τὴν  
ναῦν· ἔχειν δὲ τι καὶ τοῦ σχήμα-  
τος.

Էլևսիսում թագավորեց Կելեո-  
սը, որի ժամանակ Տրիպտղե-  
մոսն էր, ում մասին Փիլոքո-  
րոսն ասում է, որ նա երկար  
նավով շրջում (քաղաքների  
մոտ կառանում) էր և ցորեն  
բաշխում. և թվում էր, թե նա-  
վը թևավոր օձ է, քանի որ  
այդպիսի ձև ունեւր:

Գրիգոր Նազ., ճառ 5.31.16-17 [201] = PG 35.704.34-36.

Կործանեա՛ զՏրիպտղեմոսս  
քո և զԿելէոսս և զխորհրդա-  
կանս վիշապս:

Κατάβαλε τοὺς Τριπτολέμους  
σου, καὶ τοὺς Κελεοὺς, καὶ τοὺς  
μυστικούς δράκοντας.

Դե՛ն գցիր քո Տրիպտղեմոս-  
ներին ու Կելեոսներին և  
խորհրդավոր վիշապներին:

<sup>1</sup> Հմմտ. Hyg. Fab. 195, Astron. 2.34, Ov. Fasti 5.495ff., Serv. Verg. Aen. 10.763 ff.:

<sup>2</sup> «Պլուտոնը» ստորերկրյա թագավորության աստված Հադեսի մյուս անունն է:



Դեմետեր ունէր դուստր զՊերսեփովնէ. զնա յափշտակեաց Պղուտոն: Եւ շրջելով Դեմետրի և խնդրելով զդուստրն՝ եկն յԱտտիկէ և իջավանի առ Տրիպտոլոմոսի ումեմն ի գեաւղն, որ կոչի Եղևսինէ: Արդ՝ իմացեալ առ ի Տրիպտոլոմոսէ, թէ Պղուտովն յափշտակեաց զՊերսեփովնէ՝ յաղագս երախտեացն ետ Տրիպտոլոմոսի զսերմանիս ցորենոյ և գարւոյ, պատուէր տուեալ ոչ մախալ, այլ շրջել և ցրուել զսերմանսն ամենայն մարդկան, զի ուսցին զսերմանելն և զերկրագործել և ուտել զպտուղս ընտանիս. քանզի յառաջագոյն ուտէին կաղինս վայրենիս ի տնկոց անտի. վասն որոյ, քանզի կաղնոյն յունարէն փրգոս ասեն՝ ուտելոյն ասացաւ փաղին: Այլ ասի թէ Տրիպտոլոմոսս առեալ կառս վիշապաց թեաւորս և ընդ նմին առեալ և զԿեղդէոս՝ այնպէս յածեալ լինէր, զսերմանսն պատուասիրութեամբ բաշխելով:

Ἡ Δημήτηρ εἶχε θυγατέρα τὴν Περσεφόνην. ταύτην ἤρπασεν ὁ Πλούτων. Περιούσα δὲ ἡ Δημήτηρ καὶ ζητοῦσα τὴν θυγατέρα, ἦλθεν εἰς τὴν Ἀττικὴν, καὶ καταλύει παρὰ Τριπτολέμῳ τινὶ ἐν κόμῃ Ἐλευσίνι οὕτω καλομένη. Μανθάνει οὖν αὕτη παρὰ τοῦ Τριπτολέμου ὅτι ὁ Πλούτων ἤρπασε τὴν Περσεφόνην. καὶ ὑπὲρ ταύτης τῆς εὐεργεσίας δίδωσι τῷ Τριπτολέμῳ τὰ σπέρματα, λέγω δὴ σῖτον καὶ κριθήν, ἐντειλαμένη μὴ φθονῆσαι, ἀλλὰ περιελθεῖν καὶ σκορπίσαι τὰ σπέρματα πᾶσιν ἀνθρώποις. ἵνα μάθωσι τὸ σπείρειν καὶ γεωργεῖν καὶ ἐσθίειν τοὺς ἡμέρους καρπούς. πάλαι γὰρ ἦσθιον τοὺς βαλάνους ἐκ τῶν φηγῶν ἔνθεν ἀπὸ τῆς φηγοῦ τὸ φαγεῖν εἴρηται. Λέγεται δὲ ὅτι ὁ Τριπτόλεμος, λαβὼν ἄρμα δρακόντων πετρωτῶν, συμπαραλαβὼν καὶ τὸν Κελεόν, οὕτως ἐπλανᾶτο φιλοτιμούμενος τὰ σπέρματα.

Դեմետերն ունէր Պերսեփոնէ դուստրը. նրան առևանգեց Պղուտոնը: Դեմետերը, շրջելով ու փնտրելով դուստրը, եկավ Ատտիկէ և իջևանեց ոմն Տրիպտոլեմոսի մոտ մի գյուղում, որ կոչվում է Էլևսիս: Այդ ժամանակ, տեղեկանալով Տրիպտոլեմոսից, որ Պղուտոնն է առևանգել Պերսեփոնէին, այդ բարեգործության համար Տրիպտոլեմոսին տվեց ցորենի և գարու սերմեր՝ պատվիրելով խարդախություն չանել, այլ շրջել և տարածել սերմերը բոլոր մարդկանց, որպեսզի սովորեն ցանել ու հողը մշակել և մշակովի պտուղներ ուտել: Քանզի մինչ այդ վայրի կաղին էին ուտում ծառերից. այդ պատճառով, քանի որ կաղնին հունարեն (χρη) կոչվում է «փեգոս», ուտելը կոչվեց «փագեյն»: Նաև պատմում են, որ Տրիպտոլեմոսը, վերցնելով վիշապներով թեավոր (թեավոր վիշապների) կառքը, վերցնելով նաև Կելեոսին, այդպես շրջում էր՝ սերմերը հպարտությամբ բաշխելով:

Գրիգոր Նազ., ձեռ. Մ2600, 11բ-12ա, Մ 946, 5բ = PG 36.337.23-30.

Եւ ո՛չ աղջիկ ոք մեզ յափշտակի և Դեմետր յածի, և Կեղէասս ոմանս ի ներքս ածէ, և Տրիպտոլոմոսս<sup>1</sup> և վիշապս, և է ինչ գորս առնէ և այլ գոր կրէ, քանզի ամաչեն տըւնջեան տալ զգիշերոյ ձաւնեալն և առնել զանամաւթուլիւնն խորհուրդ: Գիտէ և Եղևսիս գայսոսիկ, և լուեցելոցն, և լուեցուցչացն արժանեացն տեսաւղբ:

Οὐδὲ Κόρη τις ἡμῖν ἀρπάζεται καὶ Δημήτηρ πλανᾶται καὶ Κελεοῦς τινας ἐπεισάγει καὶ τοῦ Τριπτολέμου, καὶ δράκοντας, καὶ τὰ μὲν ποιεῖ τὰ δὲ πάσχει. Αἰσχύνομαι γὰρ ἡμέρα δοῦναι τὴν νυκτὸς τελετὴν καὶ ποιεῖν τὴν ἀσχημοσύνην μυστήριον. Οἶδεν Ἐλευσίς ταῦτα καὶ τῶν σιωπομένων, καὶ σιωπῆς ὄντως ἀξίων ἐπόπτει.

Արդյո՞ք ինչ-որ աղջիկ (Կորս<sup>2</sup>) մեզ մոտ չի առևանգվում, և Դեմետերը՝ դեգերում. և մեղտեղ է բերում Կելեոսներին ու Տրիպտոլեմոսներին և վիշապներին, և ինչ-որ բաներ անում, այլ բաների էլ՝ ենթարկվում: Քանզի ամաչում են (ամաչում եմ) լույս սփռել գիշերվա տոնակատարութան և անամթուլթյունը խորհուրդ դարձնելու

<sup>1</sup> Այսպես Մ2600 ձեռագրում է, իսկ Մ946-ում՝ «Տրիպտոլոմոսս»:

<sup>2</sup> Կորս (Κόρη) անունը նշանակում է՝ «աղջիկ»:

վրա: Էլևսինն էլ գիտե այդ բաները, նաև՝ լուողներին և լուության արժանիներին տեսնողները (գիտողները<sup>1</sup>):

Նոննոս 1.3 [4-5] = Nonnos 39.3.1-18.

Դեմետեր, աստուած գուրով ծնաւ դուստր յԱրամազդայ, գոր կոչէին Աղջիկ և Պերսեփոնէ. սմա տուփեալ<sup>2</sup> Պրուսոն՝ յափշտակեաց և էջ ի դժոխս: Արդ՝ Դեմետեր շրջելով խնդրէր զԱղջիկն, և բազում յածեալ՝ եկն յԱտտիկէ. իսկ գտեղին, յոր եկն՝ կոչեաց Եղևսինն, որ նշանակէ գգալն անդանաւր. այլ ուսաւ առ ի Կեղէնսէ և ի Տրիպտոլոմէնսէ, թէ Աղջիկն յափշտակեալ առ ի Պրուսոսն, և է ի դժոխս: Արդ իմացեալ գայս աստուածուհին՝ դադարեաց ի յածմանէն, և փոխարինելով զարսն յաղաքս շնորհիս այսորիկ, ետ նոցա սերմանիս ցորենոյ և գարունոյ և այլոց հնդից, քանզի ասի սերմանական պտղոց գու վերատեսուչ Դեմետեր: Այլ տուեալ զսերմանիսն՝ ետ և վիշապս և կառս թեւաւորս առ ի շրջել և բաշխել ամենեցուն զցորեանն և զգարին, զի ոչ ևս գիտէին մարդիկ ուսել հաց կամ վարել ցորենով, այլ ճարակական կենցաղով կէին. սակայն ոչ միայն զցորեանն, այլ և զամենայն սերմանական պտուղսն ետ, և զմիտեւորնս կատարեաց և ուսոյց նոցա, թէ որպէս պարտ է կատարել և կատարեալ լինել...

Մ Դημήτηρ θεὸς εἶναι λεγομένη τίκτει θυγατέρα ἀπὸ τοῦ Διός, ἦντινα ἐκάλουν καὶ Κόρην καὶ Περσεφόνην. ταύτης ἐράσθη ὁ Πλούτων, καὶ ἐρασθεὶς ἤρπασε, καὶ κατήλθεν ἐν τῷ Ἄϊδι. ἡ οὖν Δημήτηρ περιεὶ ζητοῦσα τὴν Κόρην, καὶ πολλὰ πλανηθεῖσα ἤλθεν ἐν τῇ Ἄττικῇ. ἐλθοῦσα δὲ τὸν μὲν τόπον ἐν ᾧ ἤλθεν ἐκάλεσεν Ἐλευσίνα παρὰ τὸ ἐληλυθέναι, ἔμαθε δὲ παρὰ τοῦ Κελεοῦ καὶ τοῦ Τριπτολέμου ὅτι ἡ Κόρη ἠρπάγη παρὰ τοῦ Πλούτωνος καὶ ἔστιν ἐν τῇ Ἄϊδι. μαθοῦσα οὖν ἡ θεὸς ταῦτα, ἔληξε τῆς πλάνης. ἀμειβομένη δὲ τοὺς ἄνδρας ὑπὲρ τῆς χάριτος ταύτης, δέδωκεν αὐτοῖς τὰ σπέρματα, τὸν σῖτον καὶ τὴν κριθὴν καὶ τὰ ὄσπρεα. Λέγεται γὰρ τῶν σπερματικῶν καρπῶν εἶναι ἔφορος ἡ Δημήτηρ. δοῦσα δὲ τὰ σπέρματα, δέδωκε καὶ δράκοντας καὶ ἄρματα πτερωτὰ πρὸς τὸ περιεῶθειν καὶ δοῦναι πᾶσι τὸν σῖτον καὶ τὴν κριθὴν. οὕτω γὰρ ἤδειςαν οἱ ἄνθρωποι ἐσθίειν ἄρτον ἢ χρῆσθαι σίτῳ, ἀλλὰ νομαδικὸν βίον ἔζων. οὐ μόνον δὲ τὸν σῖτον ἀλλὰ καὶ πάντας τοὺς σπερματικὸς καρποὺς δέδωκε, καὶ τὰ μυστήρια ἐτέλεσεν αὐτοῦς, καὶ ἔδειξε πῶς δεῖ τελεῖν καὶ τελεῖσθαι...

Դեմետերը, աստված լինելով, Արամազդից (Զևսից) ծնեց մի դուստր, որին անվանում էին Աղջիկ (Կորա) և Պերսեփոնե: Պրուսոնը, կրքով լցվելով սրա հանդեպ, առևանգեց և իջավ դժոխք: Ուրեմն Դեմետերը շրջելով Աղջկան (Կորային) էր փնտրում և, շատ դեգերելով, եկավ Ատտիկե: Իսկ այն տեղը, որտեղ եկավ, կոչեց Էլևսիս, որ նշանակում է՝ «գալ այդտեղ»<sup>3</sup>: Իսկ Կելեսոսից և Տրիպտոլեմոսից իմացավ, որ Կորան առևանգվել է Պրուսոսից և գտնվում է Հաբսում: Իմանալով այս բաները՝ աստվածուհին դադարեցրեց իր դեգերումները և, հասուցելով այրերին այդ ծառայության համար, տվեց նրանց ցորենի, գարու և այլ (չ/ք) ընդեղենի սերմեր: Քանզի ասում են, որ Դեմետերը ցանովի պտուղներին հսկողն է: Եվ սերմերը տալով՝ տվեց նաև վիշապներ ու թեւավոր կառքեր՝ շրջելու և բուրրին բաշխելու ցորենն ու գարին, քանի որ մարդիկ դեռ չգիտեին հաց ուտել և ցորեն օգտագործել, այլ ապրում էին խոտածարակ կյանքով: Սակայն տվեց ոչ միայն ցորեն, այլև բուրր ցանովի պտուղները, և խորհրդածես կատարեց ու սովորեցրեց նրանց, թե ինչպես պետք է դրանք կատարել և հաղորդակցվել:

<sup>1</sup> Դեմետերին և Պերսեփոնեին նվիրված Էլևսիյան խորհրդածեսի ժամանակ հաղորդվածության ամենաբարձր կարգավիճակը «դիտողներին» էր:  
<sup>2</sup> Մ598 տոմարացու  
<sup>3</sup> Էլևսինա անունը հիշեցնում է Էլևսոսու բայածը, որ «գալ» (έρχομαι) բայի ապառնին է. այստեղ վկայակոչված է դրան նման Էլևսոսնա բայածը (նույն բայի պերֆեկտի ինֆինիտիվն է):

Պղատոն, Օրին. 218 = Plat. *Leg.* 782.b.3-6.

Զրա՛րդ հաւատամք որթոց իսկ յայտնել երբեք՝ յառաջագոյն ոչ գոլով. սապէս և ձիթենիք, և գԴեմեառայ իսկ և զաղկանն ձիր, զՏրիպտոդեմոս ոմն այսպիսեացն լինել պաշտաւնեայ ...

Τί οὖν; πιστεύομεν ἀμπέλους τε φανῆναί ποῦ ποτε πρότερον οὐκ οὔσας; ὡσαύτως δὲ καὶ ἐλάας καὶ τὰ Δήμητρος τε καὶ Κόρης δῶρα; Τριπτόλεμόν τέ τινα τῶν τοιούτων γενέσθαι διάκονον;

Ուրեմն ի՞նչ, հավատո՞ւմ ենք, որ որթերը մեկ օր հայտնվել են՝ նախկինում չլինելով. այդպես էլ՝ ձիթենիներն ու Դեմետերի [հացահատիկը] և աղջկա (Կորայի) շնորհը, և որ մի Տրիպտոդեմոս այսպիսի բաների սպասավորն էր ...

### 19. Չևս և Պերսեփոննե-Փերեփատտե

Պերսեփոննեն Չևսից ունեցավ Դիոնիսոս-Իսկրոսին, Չագրևսին կամ Սաբազիոսին (Hesych. s.v. Zagreus, Sch. Eur. *Or.* 952, Aristoph. *Ran.* 326, Diod. Sic. 4.4.1, Arrian. *Alex.* 2.16.3):

Նոննոս 4.30 [75] = Nonnos 5.30.2-3.

Պերսեփոննէ ծնաւ Զագրէոս <ի> Դիոնիսոսս յԱրամագրայ յղացեալ զնա...

Περσεφόνη γεννᾷ τὸν Ζαγρέα Διόνυσον, ἐκ τοῦ Διὸς συλλαβοῦσα αὐτόν.

Պերսեփոննեն ծնեց Զագրևս-Դիոնիսոսին՝ Զևսից հղիանալով նրանով:

Գրիգոր Մագիստրոս 36 (Չ).6

Ոչ թողից չասել և զխարդաւանական երկպառակուլութիւն մոլուլթեանն, որ առ Փերափատայ ի ձեռն հաւրն գործիւր:

Չեմ չըջանցի լուսթյամբ մոլուցքի այն նենդ բռնուլթյունը, որ Փերեփատտեի հանդեպ գործվեց հոր կողմից:

Հմմտ. Clem. Alex. *Protr.* 2.16.1-2 = Eus. *Praep. Evang.* 2.3.19-20.

κυεῖ μὲν ἡ Δημήτηρ, ἀνατρέφεται δὲ ἡ Κόρη, μίγνυται δ' αἰθίς ὁ γεννήσας οὗτοσὶ Ζεὺς τῆ Φερεφάττη τῆ ἰδίᾳ θυγατρὶ μετὰ τὴν μητέρα τὴν Δηῶ, ἐκλαθόμενος τοῦ προτέρου μύσους, καὶ μίγνυται δράκων γενόμενος.

Դեմետերը հղիանում է, աղջիկը մեծանում է. կրկին այս Զևսը, որ ծնողն էր, խառնակվում է իր դուստր Փերեփատտեի հետ՝ նրա մայր Դեմետերից հետո, մոռանալով նախորդ պղծության մասին. նա խառնակվում է վիշապի կերպարանքով:

### 20. Գիզանտների ապստամբությունն աստվածների դեմ

Գեայի և Ուրանոսի որդիներ հսկա և գորեղ գիզանտները՝ ծնված Փլեգրեոն կամ Պալլենեոն<sup>1</sup>, ապստամբեցին աստվածների դեմ (այս առասպելի հիմնական աղբյուրը մեզ չհասած «Տիտանների կռիվը» էպիկական պոեմն էր). նրանք երկինք էին նետում քարեր ու այրվող կաղնիներ: Կռվին մասնակցում էին Ապոլլոնը, Դիոնիսոսը, Հեկատեն, Հեփեստոսը, Աթենան ու Ար-

<sup>1</sup> Փլեգրեն և Պալլենեն համարվել են կամ տարբեր տեղանուններ, կամ էլ նույն վայրը՝ հյուսիս-արևելյան Հունաստանի Քալկիդիկե թերակղզու արևմտյան ելուստի վրա, որ կոչվել է Փլեգրե, հետո՝ Պալլենե:

տեմիսը: Չնսը գիգանտներին շանթահարում էր, իսկ Հերակլեսը նետերով վերջ էր տալիս նրանց կյանքին (Apollod. 1.6.1-2 [1.34-38]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա. 82.

Եւ թագաւորք տիտանացւոց ճանաչէին ի ժամանակին. յորոց մի էր Ուրիզոս արքայ: Եւ յետ սակաւ բանից զնովիմբ ածեալ՝ ասէ, թէ սկայք դիմեցին ի վերայ դից և սատակեցան, զաւրավիզն աւգնականութեան դիցն լեալ Հերակլի և Դիոնիսի, որ էին ի տիտանացն:

Եվ տիտանների թագավորները ճանաչված էին ժամանակին. դրանցից մեկն էր Օւրիզոս արքան: Եվ մի քանի խոսք նրա մասին պատմելուց հետո ասում է, որ գիգանտները դուրս եկան աստվածների դեմ և սպանվեցին, իսկ աստվածներին գորավիզ էին Հերակլեսն ու Դիոնիսոսը, որոնք տիտաններից էին<sup>1</sup>:

Փիլ. լին. 2.82 (165-166).

... զՆեբրովթ՝ սկայ որսորդ ընդդէմ Աստուծոյ ... զաւրէն հսկայի գերկրայինսս յարգելով և պատուելով քան գերկնայինսն, զայն որ ի վերայ հսկայիցն և տիտանեանցն առասպելն է՝ ճշմարիտ առնեն...

Նեբրովթին՝ աստծուն ընդդիմացած հսկա որսորդին, ... որ հսկայի պես երկրային բաները երկնայիններից շատ էր հարգում և պատվում. հսկաներին (գիգանտներին) և տիտաններին վերաբերող առասպելը ճշմարիտ են համարում...

Թեոն 106 = Theon 95.27-96.1.

Եւ զվայրաւքն որ ի վաղնջուցն Փիլագրա, բայց այժմ Պաղղանէ անուանեալ՝ բնակեալ էին մարգակերպք (ուղղելի է մարգակերք), որ կոչէին Հայկք. զորս Հերակլէս ասի ըմբռնել զՏիւրիա առնուովն. և վասն յաղթելոյ այնց որ ընդ Հերակլեայն էին իբրև զի սակաւ էին՝ Հայկիցն բազմացն և ամբարշտելոցն, աստուածոց գոյժ (ուղղելի է գործ) ամենեցուն թուէր լինել իրք կռուին:

οἱ δὲ περὶ τὴν πάλαι μὲν Φλέγραν, νῦν δὲ Παλλήνην ὀνομαζομένην κατοικοῦντες ἦσαν ἄνθρωποι ὠμοὶ καὶ ἱερόσυλοι καὶ ἀνθρωποφάγοι, οἱ καλοῦμενοι Γίγαντες, οὓς Ἡρακλῆς λέγεται χειρώσασθαι τὴν Τροίαν ἐλών, καὶ διὰ τὸ κρατῆσαι τοὺς περὶ τὸν Ἡρακλέα ὀλίγους ὄντας τῶν Γιγάντων πολλῶν ὄντων καὶ ἀσεβῶν θεῶν ἔργον ἄπασιν ἐδόκει γεγονέναι τὸ περὶ τὴν μάχην.

Եվ այն շրջաններում, որ հնուց կոչվում էին Փլեգրա, իսկ այժմ՝ Պալլենե, բնակվում էին մարգակերպներ (վայրենի, գող ու մարգակեր մարդիկ), որ կոչվում էին հայկեր (գիգանտներ)<sup>2</sup>, որոնց, ասում են, Հերակլեսը գերեց Տրոյան առնելուց հետո<sup>3</sup>, և քանի որ Հերակլեսի մարդիկ սակավաթիվ լինելով հաղթեցին, չնայած գիգանտները շատ էին ու ամբարշտ, բոլորին թվում էր, թե այդ կռիվն աստվածների գործն է:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.26-28 [203] = PG 35.705.26-28.

Ծաղր առնեմ... որք ի մոլութենէն կրճատեալքն են և կամ յաւշատեալքն աստուածք:

Γελῶ... τοὺς ὑπὸ μανίας περικεκομμένους ἢ διεσπασμένους θεοῦς.

Ծիծաղում եմ ... մոլության պատճառով կտրտված և (կամ) պատառոտված աստվածների վրա:

<sup>1</sup> Վերջին՝ «որոնք տիտաններից էին» խոսքերը որևէ հիմք չունեն առասպելներում և ինչ-որ թյուր պատկերացման արտահայտություն են:  
<sup>2</sup> Հմմտ. Փիլ. լին. 1.82. «ի հայկից (gigantes) ծնունդ», «հայկաշափք» (Ավգ.՝ «Հայկին, հավանաբար Հերակլեսին, նմանվողներ»), Ագաթանգեղոս ԾՁ [1670]. «հայկաբար» – γιγαντιαίως (Agath. 124.16):  
<sup>3</sup> Հմմտ. դրվագ 56:

Նոննոս 4.30 [75-76] = Nonnos 5.30.10-13.

... բայց որ յաղագս հսկայիցն. քանզի սոցա կամելով մարտնչել ընդ աստուածսն, և նոքա ճակատեալ՝ յաղթեցին և խոցոտեցին զսոսա. և յետոյ Արամազդ շանդահարութեամբ եկէզ զսոսա:

ή περί τῶν Γιγάντων. οὗτοι γὰρ πολεμεῖν ἐθέλοντες τοῖς θεοῖς, οἱ θεοὶ ἀντιστρατευσάμενοι ἐπολέμησαν καὶ κατέκοψαν αὐτούς, ὕστερον δὲ τοῦ Διὸς καὶ τὸν κεραυνὸν ἐπιπέμψαντος αὐτοῖς καὶ καταφλέξαντος αὐτούς.

... բայց զիգանտների մասին [պատմությունը]. սրանք ցանկացան կռվել աստվածների դեմ, իսկ նրանք (աստվածները) դիմակայեցին և կոտորեցին նրանց, և հետո Արամազդը (Զևսը) նրանց շանթահարեց-այրեց:

Նոննոս 3.80 [62-63] = Nonnos 4.87.

Իսկ Աթենա և Հերա, հոգալով յաղագս եղղենացւոցն՝ մարտնչելն ընդ Ափրոդիտեայ և ընդ Արեսի, որք հոգային յաղագս տրովացւոցն. ասասցես արդեք մարտ լեալ առ հսկայիցն ընդ աստուածսն, և տիտանացն՝ ընդ Դիոնիւսեայ:

Ἀθηνᾶ μὲν καὶ Ἥρα φροντίζουσαι τῶν Ἑλλήνων ἐπολέμουν πρὸς Ἀφροδίτην καὶ Ἄρεα φροντίζοντας τῶν Τρώων. εἵποισ δὲ πολέμους καὶ τοὺς ἀπὸ τῶν Γιγάντων πρὸς τοὺς θεοὺς καὶ τοὺς ἀπὸ τῶν Τιτάνων πρὸς τὸν Διόνυσον.

Իսկ Աթենան ու Հերան, հոգալով հույների մասին, կռվում էին Ափրոդիտեի և Արեսի հետ, որոնք հոգում էին տրոյացիների մասին: Հիշատակի՛ր նաև հսկաների կռիվն աստվածների դեմ և տիտանների՝ Դիոնիսոսի:

## 21. Պրոմեթևս և Հեփեստոս

Ըստ Հեսիոդոսի՝ Չևսը մարդկանց գրկել էր կրակից՝ բարկացած Պրոմեթևսի խաբեությունից. սա ոսկորներից բաժանված ցլի միսը ծածկել էր կաշվով ու ստամոքսով, իսկ ոսկորների կույտը՝ ճարպով և Չևսին առաջարկել ընտրել իր բաժինը: Չևսն ընտրել էր երկրորդն ու զայրացել (Hes. *Theog.* 537–551), Պրոմեթևսին գամել Կովկաս լեռան վրա, և ամեն օր մի արծիվ գալիս էր ու նրա լյարդը կտցահարում (իսկ գիշերվա ընթացքում լյարդն աճում էր), մինչև որ Հերակլեսն ազատեց Պրոմեթևսին: Նա Չևսից գաղտնի մարդկանց կրակ տվեց (Hes. *Theog.* 563-569, Apollod. 1.7.1 [1.45]): Կրակի հետ էր առնչվում նաև Հեփեստոսը. հմմտ. «Իլիական»-ում. գոհաբերվող կենդանու փորը խոցեցին «և պահեցին Հեփեստոսի վրա» (Hom. *Il.* 2.426): Հույները Հեփեստոսին նույնացնում էին եգիպտական Փթահ աստծո հետ<sup>1</sup>, որն ավանդաբար առաջինն էր Եգիպտոսում քաղաքների իշխանությանը նախորդած աստվածների և կիսաստվածների շարքում: Ըստ Ապոլլոդորոսի (և մի շարք այլ՝ մ.թ.ա. IV դարից ուշ գրված աղբյուրների)՝ Պրոմեթևսը նախ հողից ու ջրից քանդակեց մարդկանց: Մինչդեռ հնագույն աղբյուրներում նա ոչ թե մարդկային ցեղի ստեղծողն էր, այլ սոսկ բարերարը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա. 200.

Առաջին մարդ առ ի յեգիպտացւոց՝ Հեփեստոս, որ և հրոյ գտակ լինէր նոցա:

Եգիպտացիների մոտ առաջին մարդը Հեփեստոսն էր, որը նաև նրանց համար կրակի հայտնագործողն էր:

<sup>1</sup> Տե՛ս Encyclopaedia Britannica Deluxe Edition, 2004 CD-ROM, s.v. “Ptah”: Անգամ առաջարկվել է Հեփեստոսի անվան մի նոր ստուգաբանություն, ըստ որի՝ այն ծագում է Փթահի անունից. տե՛ս V. Blažek, “Hephaistos vs. Ptah,” *New Perspectives on Myth: Proceedings of the Second Annual Conference of the International Association for Comparative Mythology, Ravenstein (the Netherlands), 19-21 August, 2008*, eds Wim M.J. van Binsbergen & Eric Venbrux, Haarlem (the Netherlands): Papers in Intercultural Philosophy and Transcontinental Comparative Studies (PIP-TraCS), No. 5, 2010, pp. 243-252:

Հմմտ. Sync. 19.2.

Αἰγυπτίων ἀ΄ ἐβαίλευσεν Ἦφαιστος.

Եգիպտացիներին առաջինը թագավորեց Հեփեսոսը:

Դաւիթ, Սահմանք Բ [22.31-24.4] = Dav. Prol. 9.33-10.2.

Զայսուիկ ասեն՝ զբաժանումն պարգևեալ մեզ ի ձեռն Պոլիմիթեայ երևելական հրոյ: Եւ պարտ է գիտել, եթէ որք առասպելաբանեն՝ ասեն, թէ Պոլիմիթեա գողացաւ երբեմն յաստուածոցն հուր և շնորհեաց մարդկան, որ է այլաբանութիւն:

ταῦτά φησι, τὴν διαιρετικὴν δεδωρηθεῖσθαι ἡμῖν διὰ Προμηθεὸς σὺν φανοτάτῳ πυρί: ἰστέον γὰρ ὅτι μυθεύοντες λέγουσιν ὅτι ὁ Προμηθεὺς ἔκλεψεν ἐκ τῶν θεῶν τὸ πῦρ καὶ ἐδωρήσατο τοῖς ἀνθρώποις: τοῦτο γὰρ ἀλληγορεῖται.

Այս բանն է ասում [Պլատոնը], թե բաժանումը շնորհվել է մեզ Պրոմեթևսի պայծառ կրակի միջոցով (Պրոմեթևսի միջոցով, պայծառ կրակով հանդերձ)<sup>1</sup>: Եվ պետք է իմանալ, որ առասպելներ պատմողներն ասում են, թե Պրոմեթևսը մի օր կրակը գողացավ աստվածներից և պարգևեց մարդկանց, ինչն այլաբանություն է:

Մովսէս Խորենացի Ա 7 [27.13-16].

Զի առաջին ասեն իւրեանց մարդ լեալ զՀեփեսոսս և գտակ հրոյ: (Եւ ընդէ՞ր սա գտակ հրոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զհուր և շնորհեալ մարդկան, – որ է այլաբանութիւն):

Քանզի ասում են, թե իրենց [եգիպտացիներին] առաջին մարդը, նաև կրակի հայտնագործողը Հեփեսոսն էր (և ինչո՞ւ է սա կրակի հայտնագործողը, կամ էլ՝ Պրոմեթևսը, որ կրակը գողացավ աստվածներից և պարգևեց մարդկանց, ինչն այլաբանություն է):

Գրիգոր Մագիստրոս 47 (ԽԹ).3.

... զհուր Հեփեսոսեալ հանդերձ պատուեալ, կամ եթէ Պոլիմիթեայ գողացեալ զնա:

... պատվելով կրակը Հեփեսոսով հանդերձ, կամ էլ՝ թե Պրոմեթևսն էր այն գողացել:

Գրիգոր Մագիստրոս 16 (ՀԴ).5 = Clem. Alex. Protr. 2.18.1. = Eus. Praep. Evang. 2.3.25.5.

... ի շամբուրս հարեալ ի վերայ Հեփեսոսեայ:

ὀβελίσκοις περιτείραντες "ὕπειρεχον Ἦφαιστοίῳ."<sup>2</sup>

... շամփուրներին քաշելով Հեփեսոսսի վրա:

Գրիգոր Մագիստրոս 21 (Բ).28.

... կայծակն հրափայլութեան վեհագոյն քան զՊրոմեթեայն և զՀեփեսոսսին ցածուցեալ:

... ցածրացնելով Պրոմեթևսին ու Հեփեսոսսին գերազանցող հրավառությունը:

Գրիգոր Մագիստրոս 26 (ՀԱ).18.

... ի Հեփեսոսեայ հրացեալ:

... Հեփեսոսից այրվելով:

<sup>1</sup> Plat. Phileb. 16c:

<sup>2</sup> Մեջբերում է Հոմերոսից. σπλάγχνα δ' ἄρ' ἀμπείραντες ὑπείρεχον Ἦφαιστοίῳ. (Hom. Il. 2.426):

Գրիգոր Մագիստրոս 34 (ՀԹ).5.

...կենդանւոյն ի վերայ եղեալ Հեփեստեայ:

... ողջ դնելով Հեփեստոսի վրա:

Գրիգոր Մագիստրոս 80 (ԻԹ).7.

Սա մինչ տակաւին մանուկ տղայն էր, պատրանաւք խաբամբ խաղուց խաբեցին տիտանքն, և զենեալ յաւշամբ, ի սան ամանեալ, եղին ի վերայ Հեփեստեայ, իսկ յանդամոցն ի շամփուրս հարեալ, ի վերայ ունելով հրատին:

Քանի դեռ սա (Դիոնիսոսը) մանուկ էր, տիտանները նրան խորամանկությամբ խաբեցին և, պատառոտելով, զցելով կաթսայի մեջ, դրեցին Հեփեստոսի վրա, անդամներն էլ, քաշելով շամփուրներին, դրեցին կրակի վրա:

Առաքել, Լուծումն 237.

Իսկ զբաժանումն ասէ Պղատոն, զայսոսիկ ասեմ զբաժանումն պարզեալ մեզ ի ձեռն Պոլիմիդեայ երևելական հրոյն. այսինքն Պոլիմիդեա մարդ է և արուեստիւ դարբին, և ետես յիւր արուեստէն, զի հուրն զամենայն ինչ տրոհէր, և բաժանէր յիրերաց զհոմասեռս և զայլասեռս, և ի հրոյն ուսաւ զբաժանողական հնարս, և ի նմանէ եղև սկիզբն բաժանողական. վասն որոյ ասէ Պղատոն առ Սոփեստրոս աշակերտն իւր, զայսոսիկ ասեմք բաժանումն պարզեալ ի ձեռն Պոլիմիդեայ երևելական հրոյն. այսինքն Պոլիմիդաս ի հրոյն ուսաւ և պարզեաց մեզ:

Իսկ բաժանման մասին Պլատոնն ասում է. այսպիսի բաժանումը, ասում եմ, շնորհվել է մեզ Պրոմեթևսի պայծառ կրակի միջոցով. այսինքն՝ Պրոմեթևսը մարդ էր և արհեստով դարբին, և տեսավ իր արհեստի շնորհով, որ կրակն ամեն ինչ տրոհում էր և համասեռ ու տարասեռ բաներն իրարից բաժանում. և նա կրակից սովորեց բաժանման մեթոդները, և դրանով բաժանման սկիզբը դրվեց: Դրա համար Պլատոնն ասում է իր աշակերտ սոփեստեսին<sup>1</sup>. «Այս բանն ենք ասում, թե բաժանումը շնորհվել է մեզ Պրոմեթևսի պայծառ կրակի միջոցով», այսինքն՝ Պրոմեթևսը կրակից սովորեց և պարզեաց մեզ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 90 = Sync. 174.22-23.

Զայսու ժամանակաւ էր ըստ ոմանց Պրոմեթևս, յորմէ զմարդիկ կազմեալս յիշատակեն, իբր զի իմաստուն էր, զանասնաբարոյս և զյոյժ անզգամս ի մարդկութիւն և ի գիտութիւն փոխակերպէր:

Τούτοις τοῖς χρόνοις, ὡς φασι, Προμηθεὺς ἦν, ὃς ἐμυθεύετο πλάττειν ἀνθρώπους ἐξ ἀπαιδευσίας καὶ ἀλογίας εἰς παιδευσιν μετάγων.

Այս ժամանակ էր ըստ ոմանց Պրոմեթևսը, որի ձեռքով, ինչպես պատմվում է, մարդիկ ստեղծվել են. քանի որ նա իմաստուն էր, անասնաբարո (չիք քանի որ նա իմաստուն էր, անասնաբարո) և խիստ անզրազետ (անզրազետությունից) մարդկանց մարդկային կերպարանքի (չիք մարդկային կերպարանքի) ու զրագիտություն բերեց:

<sup>1</sup> Առաքելի այս հատվածը Դավիթ Անհաղթի վերը բերված խոսքերի մեկնությունն է. այնտեղ մեջբերվածից քիչ անաչ հիշատակված է Պլատոնի «Սոփեստես» տրամախոսությունը. տե՛ս Դավիթ, Սահմանք Բ [22.25]:

Միխայել Ասորի Ա. 44.

Ջայսու ժամանակաւ էր Պրամիթևս իմաստասէր՝ որ ստեղծանել ասեն զմարդիկ, զի իմաստութեամբ ի գիտութիւն ածէր զտգէտսն<sup>1</sup>:

Այս ժամանակ էր Պրոմեթևս իմաստասերը, որն, ասում են, ստեղծեց մարդկանց, քանի որ տգետներին իմաստությամբ դեպի գիտություն տարավ:

Միսիթար Այրիվանեցի 33.

Իսկ Պրամիթևս զգար և զկոճատ եգիտ:

Իսկ Պրոմեթևսը հայտնագործեց զույգ ու կենս (թվերը):

Գրիգոր Նազ., ճառ 5.38.11-12 [213] = PG 35.713.37.

... ոչ հաւուք լեարդն ծախեալ...

... οὐδὲ ὄρνισι τὸ ἦπαρ κειρόμενος...

... ոչ էլ թռչունների քրքրած լյարդը...

Նոննոս 4.33 [77] = Nonnos 5.33.1-7.

Պռովմիթևսս այս ասի, թէ գողացաւ զհուր յաստուածոցն և շնորհեաց մարդկան, և եթէ ի միս գոհիցն պատրեաց զԱրամագը, և ի բարկութիւն շարժեաց զնա կրկին: Ջսա կամեցեալ պատուհասել՝ եղ արծուի ուտել զլեարդ նորա. և ի գիշերի դարձեալ ողջանայր, և միւս անգամ արծուին սկսանէր ուտել ի վաղիւն, մինչև եկեալ Հերակղեայ՝ նետիւք խոցոտեաց զարծուին:

Ὁ Προμηθεὺς οὗτος λέγεται κλέψαι τὸ πῦρ παρὰ τῶν θεῶν, καὶ ἐνεγκεῖν εἰς ἀνθρώπους, καὶ ὅτι περὶ τὰ κρέα τῆς θυσίας ἀπατήσας τὸν Δία, εἰς ὄργας ἐκίνησεν αὐτὸν διττάς. τοῦτον θέλων τιμωρήσασθαι, ἐποίησεν αὐτὸν κατεσθίειν αὐτοῦ τὸ ἦπαρ. καὶ τὴν μὲν ἡμέραν κατησθίετο τὸ ἦπαρ, τὴν δὲ νύκτα πάλιν ἀνεπληροῦτο. καὶ πάλιν ἤρχετο ὁ αἰετὸς καὶ ἦσθιεν αὐτό, ἕως οὗ ὁ Ἡρακλῆς ἐλθὼν ἐτόξευσσε τὸ ὄρνεον τοῦτο.

Պատմում են, որ այս Պրոմեթևսը գողացավ կրակն աստվածներից և շնորհեց մարդկանց, և որ Արամագըին (Ջևսին) խաբեց գոհերի մտով ու շարժեց նրա կրկնակի բարկությունը: Ցանկանալով պատժել նրան՝ [Ջևսը] մի արծիվ կարգեց նրա լյարդն ուտելու (+ և ցերեկը նա ուտում էր լյարդը), իսկ գիշերվա ընթացքում այն դարձյալ վերականգնվում էր, և կրկին մյուս օրը (չիք) արծիվը սկսում էր ուտել այն, մինչև որ Հերակղեսը եկավ ու նետահարեց արծիվին (այդ թռչունին):

Թովմա Արծրունի Ա. Գ [72].

Հեփեստոս և Պռովմիթոս, որ է արեգակն և լուսին, գողացան զհուրն յՈրմգղայ և մասն ինչ ետուն ի մարդիկ:

Հեփեստոսն ու Պրոմեթևսը, որ արևն ու լուսինն են<sup>2</sup>, գողացան կրակը Որմգղից<sup>3</sup> և մի մասը տվեցին մարդկանց:

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շարոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Այդ ժամանակ ապրում էր Պրոմեթևսը, որը՝ իմաստությամբ հարուստ, կրթում էր մարդկանց և ստիպում նրանց տգիտությունից գիտության անցնել: Նրա մասին նույնիսկ կատակով ասում էին, թե ստեղծել է մարդկանց» (*Chronique de Michel le Syrien*, livre III, chapitre VI, p. 40):  
<sup>2</sup> Արեգակի և լուսնի հետ Հեփեստոսի ու Պրոմեթևսի առնչությունն հունահռոմեական աղբյուրներում չկա:  
<sup>3</sup> Այսինքն՝ Արամագղից:



## 22. Ջրհեղեղ և Դեկալիոն

Պրոմեթևսի որդի Դեկալիոնն ամուսնացավ Պիռոսայի հետ: Նրա օրոք Չևսը երկնքից հորդ անձրև տեղաց, Թեսսալիայի լեռներն իրարից բաժանվեցին, և ամբողջ Հունաստանը հեղեղվեց: Իսկ Դեկալիոնը, որ Պիռոսայի հետ պատասպարվել էր մի արկղի մեջ, ծովում ինն օր ու գիշեր քշվելով, ափ դուրս եկավ Պառնասոսի վրա: Չևսը թույլ տվեց նրան իր ուզածը խնդրել, նա էլ խնդրեց, որ մարդիկ ծնվեն: Չևսի հուշելով՝ նրանք քարեր վերցրին ու իրենց գլխի վրայով նետեցին. Դեկալիոնի զցածներից տղամարդիկ էին առաջանում, իսկ Պիռոսայի՝ կանայք (Apollod. 1.7.2 [1.46-48]): Այս առասպելի լավագույն աղբյուրն է Օվիդիոսի «Կերպարանափոխություններ» պոեմը (Ov. Met. 1.253–415): Դեկալիոնի և Պիռոսայի որդիներից էր Ամփիկալիոնը, որն իշխեց Ատտիկեում Կրանասոսից հետո (Apollod. 1.7.2 [1.49]):

Պղատոն, Տիմեոս 83 = Plat. Tim. 22.a.4-b.3.

... գրոյց առնել ... յաղագս Փառուհոսի և Նիոբայ, որ էին քան զՋրհեղեղն յառաջագոյն, և յետ Ջրհեղեղին դարձեալ յաղագս Դեկալիոնոսի և Պիռուայի կնոջ սորա, իբրու ասէ առասպելն, և զ'առ ի սոցանէ ծնեալն ազգատոհմել...

... προαγαγεῖν... περὶ Φορωνέως τε...καὶ Νιόβης, καὶ μετὰ τὸν κατακλυσμὸν αὖ περὶ Δευκαλίωνος καὶ Πύρρας ὡς διεγέγοντο μυθολογεῖν, καὶ τοὺς ἐξ αὐτῶν γενεαλογεῖν...

... պատմել ... Փորոնևսի և Նիոբեի մասին<sup>1</sup>, որոնք Ջրհեղեղից առաջ էին, իսկ Ջրհեղեղից հետո՝ դարձյալ Դեկալիոնի և նրա կին (չ/ք նրա կին) Պիռուայի մասին, ինչպես առասպելն է պատմում (առասպելաբանել, թե ինչպես ողջ մնացին *չ/ք*. ինչպես առասպելն է պատմում), և ներկայացնել սրանցից ծնվածների ծննդաբանությունը...

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա. 269-270.

Ի Դեկալիոնի ամս զՋրհեղեղն եկեալ ասեն ի Թեսսաղիա: Որ և առ Փայեթոնիւ հրացան բարկութիւնն եթովպացւոց աշխարհին:

Դեկալիոնի տարիներին, ասում են, Թեսսալիայում Ջրհեղեղ եկավ, իսկ Փայեթոնի օրոք՝ հրեհ հեթովպացիների երկրում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 102 = Sync. 184.10-12, 179.22.

Առ Դեկալիոնիւ Ջրհեղեղն ի Թեսսաղիա. և առ Փայեթոնիւ յԵթովպիա հրայրեացք. և բազումք ապականութիւնք գործեցան ի տեղիս տեղիս. որպէս Պղատոն պատմէ... Դեկալիոն պառնասացւոց կողմանցն սկիզբն արար թագաւորելոյ:

ὁ ἐπὶ Δευκαλίωνος κατακλυσμὸς ἐν Θεσσαλίᾳ καὶ ὁ ἐπὶ Φαέθοντος ἐμπρησμὸς ἐν Αἰθιοπία. πολλὰ δὲ καὶ ἄλλαι γεγόνασιν Ἑλλησι τοπικαὶ φθοραὶ, ὡς Πλάτων ἐν Τιμαίῳ ... Δευκαλίον βασιλεύειν τῶν κατὰ Παρνασσὸν ἤρξατο.

Դեկալիոնի օրոք տեղի ունեցավ Ջրհեղեղը Թեսսալիայում<sup>2</sup> և Փայեթոնի օրոք՝ հրեհ Եթովպիայում ու բազում աղետներ գանազան վայրերում, ինչպես Պղատոնն է պատմում (+ Տիմեոսում<sup>3</sup>) ... Դեկալիոնը սկսեց թագավորել պառնասացիների կողմերում:

<sup>1</sup> Փորոնևսի և նրա դուստր Նիոբեի մասին հմմտ. դրվագ 63:

<sup>2</sup> Plato Tim. 22a7, Criti. 112a3:

<sup>3</sup> Plato Tim. 25b7:

Վարդան, Հաւաքումն Թ [19].

Եւ աստ ասեն լեալ առ Դեկալիոնիւ ջրհեղեղ ի Թեսաղիա, և առ Փայեթոնիւ յԵթէովպիա հրայրեայցք, և այլ բազում ապականութիւնք ի տեղիս տեղիս, որպէս պատմէ Պղատոն: Իսկ Դեկալիոն Պառնասացւոց կողմանցն թագաւորէր:

Միխայէլ Ասորի Ա. 45.

Եւ աստ ասեն առ Դեկալիոնիւ Եթեսաղիայ եղեալ ջրհեղեղ, և առ Փայեթոնիւ յԵթովպիայ հրայրեայցքն. և բազում ապականութիւնք ի տեղիս տեղիս ըստ Պղատոնի պատմելոյն<sup>1</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106.

Այս այն Ամփիկտիոն Դեկալիոնի որդի է:

Հմմտ. Sync. 184.14.

Ἀθηναίων γ' ἐβασίλευσεν Ἀμφικτύων ἔτη ι', υἱὸς Δευκαλίωνος.

Այս ժամանակ, Դեկալիոնի օրոք, ասում են, եղավ ջրհեղեղը Թեսալիայում, և Փայեթոնի օրոք՝ հրեհհ Եթովպիայում ու բազում այլ աղետներ զանազան վայրերում, ինչպես Պղատոնն է պատմում: Իսկ Դեկալիոնը թագավորեց պառնասցիների կողմերում:

Այս ժամանակ, Դեկալիոնի օրոք, ասում են, եղավ Թեսալիայի ջրհեղեղը, և Փայեթոնի օրոք՝ հրեհհ Եթովպիայում ու բազում աղետներ զանազան վայրերում, ըստ Պղատոնի պատմածի:

Սա այն Ամփիկտիոնն է՝ Դեկալիոնի որդին:

Աթենացիներին երրորդը թագավորեց Դեկալիոնի որդի Ամփիկտիոնը՝ 10 տարի:

### 23. Գրեկներ և հելլենների անվան ծագումը

Գեկալիոնի որդի Հելլենը «գրեկներ» կոչվածներին իր անունով հորջորջեց «հելլեններ» (Apollod. 1.7.3 [1.49-50]): Արիստոտելը հիշատակել է «այն ժամանակ գրեկներ, իսկ այժմ՝ հելլեններ կոչվածներին» (Arist. *Met.* 352.b2-3): Հելլենները հարավային Թեսալիայում բնակվող հունական ցեղ էին (հմմտ. Hom. *Il.* 2.683-684, Paus. 3.20.6), իսկ գրեկներ (Γραικοί) ցեղն ապրում էր հելլեններից արևմուտք, Էպիրոսում: «Հելլեն» անունը հույն ժողովուրդը, ըստ «Պարոսյան ժամանակագրության» (*Marm. Par.* 6. դա Պարոս կղզում գտնված մարմարե կոթող է, որի վրա շարադրված է հույների պատմությունը «սկզբից» մինչև մ.թ.ա. 263 թ.) սկսել է կրել մ.թ.ա. 1520 թ., բայց այս տվյալը ստույգ չի համարվում: Իրականում հույների և Հունաստանի «հելլեն» ու «Հելլադա» անունները տարածվել են մոտ մ.թ.ա. VIII դարում (հմմտ. Борухович, 133), իսկ գրեկների անունով՝ Graeci, բոլոր հույներին կոչել են հռոմեացիները): Հելլենի որդիներն էին Դորոսը, Քսութոսն ու Էոլոսը: Քսութոսի որդիներ Աքեոսից և Իոնից են ծագում աքեացիների և հոնիացիների անունները (Apollod. 1.7.3 [1.49-50]):

Արիստիդես 9-10.

Հեթանոսք և բարբարոսք ազգահամարին ի Բե- Հեթանոսներն ու բարբարոսներն իրենց

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Գեկալիոնի օրոք Թեսալիայում տեղի ունեցած ջրհեղեղը տեղադրվում է այդ ժամանակ ... Փայեթոնի օրոք Եթովպիայում տեղի ունեցած հրդեհը տեղադրվում է այստեղ, ինչպես պատմում է Պղատոնը» (*Chronique de Michel le Syrien*, livre III, chapitre IX, p. 47):

եղեայ, ի Կրոնեայ, յԵրեայ և այլ ի բազում աստուածոց իւրեանց: Իսկ Յոյնք ասեն Ջևս՝ յոր է Դիոս. և ազգահամարին ի Հելենոս, ի Քսիւթոս, և մի ըստ միոջէ, Ելլաս, Ինաքոս, և Փորոնէոս, և ևս ի վերջէ՝ ի Դանայէ եգիպտացւոյ, և ի Կաղմոսէ Սիդովնացւոյ, և ի Դիոնիսեայ թեբեացւոց:

Ծանդաբանությունը բխեցնում են Բելից, Կրոնոսից, Հերայից և իրենց բազմաթիվ այլ աստվածներից: Իսկ հույներն ասում են՝ Ջևս, որ Դիոսն է, և իրենց ծանդաբանությունը բխեցնում են Հելենոսից, Քսութոսից և նրանց հաջորդներից՝ Հելլասից, Ինաքոսից ու Փորոնևսից<sup>1</sup>, և ի վերջո՝ եգիպտացիների Դանաոսից<sup>2</sup> և սիդոնացիների Կաղմոսից ու թեբեացիների Դիոնիսոսից<sup>3</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 102-104.

Յեղենոսէ որդւոյ Դեկալիոնի և Պիւռեայ կռէգք եղղէնք անուանեցան, որք են Եղենացիք ի նմանէ և Ակտէ՝ Ատտիկէ կոչեցաւ:

Դեկալիոնի և Պիուռայի որդի Հելլենից «գրեկները» կոչվեցին «հելլեններ», որ հելլենացիներն են, և Ակտեն կոչվեց Ատտիկե:

Հմմտ. Sync. 179.25-26.

Ἐλλην υἱὸς Δευκαλίωνος ἐγνωρίζετο, ἀφ' οὗ Ἐλληνες οἱ Γραικοὶ μετεκλήθησαν.

Ճանաչված էր Դեկալիոնի որդի Հելլենը, որից «գրեկները» անվանափոխվեցին «հելլեններ»:

Միխայէլ Ասորի Ա 45.

Եւ յԵլենոսէ որդւոց Դեկալիոնի Եղղաբացիք կոչեցան: Գրեկք Եղենքն, և յԱկտէ Ատտիկեցիք:

Դեկալիոնի որդի Հելլենից հելլադացիներն անուն ստացան. «գրեկները»՝ «հելլեններ» և Ակտեն՝ Ատտիկե:

Եզնիկ III.Ե [487].

Եւ Հելլէնք կոչին Յոյնք յառնէ միոջէ, որում Հեղինոս անուն էր յելլադացւոց աշխարհին: Բայց այլք ասեն՝ եթե ի ձիթենույն, որ յԱթենս բուսաւ իւրովի, վասն զի ձիթենի յունարէն եղէա կոչի: Բայց Յոյնք ի Յաւանայ (Մնն. Ժ 2, 4), որ էր մի յառաջնորդաց աշտարակազործութեանն. վասն որոյ Մերովպք ամենեքին կոչին յաղազս բարբառոյն բաթանելոյ: Քանզի բաթանումն յունարէն մերիսմոս կոչի:

Հույները «հելլեն» են կոչվում մի մարդու շնորհիվ, որի անունը հելլադացիների երկրում Հելլեն էր: Ուրիշներն էլ ասում են, թե՛ ձիթենուց, որն Աթենքում ինքն իրեն անեց, քանի որ ձիթենին հունարեն կոչվում է՝ «էլեա»: Իսկ հույները Հավանից են (Մնն. Ժ 2, 4), որն աշտարակաշինության առաջնորդներից մեկն էր. ուստի բոլորը կոչվում են «մերոփսներ»՝ բաթանման պատճառով, քանի որ «բաթանում» հունարեն «մերիսմոս» է:

Այս հատվածի աղբյուրն է Եպիփան Կիպրացի. Epiiph. Anac. 1.164.

Ἐλληνες δὲ κέκληνται ἀπὸ Ἑλληνός τινος ἀνδρός τῶν ἐν τῇ Ἑλλάδι κατοικήκόντων καὶ τὴν προσωμίαν τῇ χώρᾳ παρεχομένου, ὡς δὲ ἕτεροί

Հելլեններն այդպես են կոչվում Հելլադայում ապրողներից Հելլեն անունով մի մարդու շնորհիվ, որ երկրին տվել է իր անունը, իսկ

<sup>1</sup> Տե՛ս դրվագ 36:  
<sup>2</sup> Տե՛ս դրվագ 38:  
<sup>3</sup> Տե՛ս դրվագ 40:

φασιν ἀπὸ τῆς ἐλαίας τῆς ἐν Ἀθήναις βλαστησά-  
σης. Ἴωνες δὲ τούτων ἀρχηγοὶ γεγόνασιν, ὡς ἔχει  
ἢ ἀκρίβεια, ἀπὸ τοῦ Ἴουάν, ἐνὸς ἀνδρὸς τῶν τὸν  
πύργον οἰκοδομησάντων, ὅτε αἱ γλῶσσαι διεμε-  
ρίσθησαν τῶν ἀνθρώπων, δι' ἣν αἰτίαν καὶ Μέρο-  
πες πάντες κέκληνται διὰ τὴν μεμερισμένην φω-  
νίην.

ինչպես ուրիշներն են ասում՝ Աթենքում ծլած  
ձիթենու շնորհիվ: Նրանց առաջնորդները հո-  
նիացիներն էին, ինչպես որ ստույգ ասվում է՝  
Հավանից՝ աշտարակը կառուցած մարդկանցից  
մեկից, երբ մարդկանց լեզուները բաժանվեցին.  
այդ պատճառով բոլորը կոչվում են մերոփա-  
ներ (հոդաբաշխ ձայն ունեցողներ<sup>1</sup>) խոսքի  
բաժանման պատճառով:

## 24. Իոն և հույների անվան ծագումը

Ստրաբոնը պատմում է, որ Հելլենի թոռ Իոնը գրավեց Թրակիան, որից հետո արեւացիները նրան իրենց թագավորը դարձրին, իսկ նրա մահից հետո Ատտիկեն կոչվեց Իոնիա (Strabo 8.7.1):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 120 = Sync. 190.7.

Յովն կացեալ ասպարապետ ա-  
թէնացոց՝ յիւր անուն զԱթե-  
նացիս յոյնս անուանէր:

Ἴων πολέμαρχος γεγονὼς Ἴο-  
νας τοὺς Ἀθηναίους ἀφ'  
ἐαυτοῦ ὠνόμασε.

Իոնը, դառնալով աթենացի-  
ների զորավար, իր անունով  
աթենացիներին անվանեց  
հույներ (հոնիացիներ)<sup>2</sup>:

Միխայէլ Ասորի Ա 54.

Յաւուրս սորա (Բարակայ) Յովն կացեալ սպա-  
րապետ Աթենացոց Յոյնս անուանեաց զԱթե-  
նացիս:

Սրա (Բարակի) օրոք Իոնը, դառնալով աթենա-  
ցիների զորավար, աթենացիներին անվանեց  
հույներ:

Վարդան, Հաւաքումն Ժ [21].

Յաւուրս սորա Յովն կացեալ սպարապետ Աթե-  
նացոցն, Յոյնք անուանեցան և նոքա:

Սրա օրոք Իոնը դարձավ աթենացիների զո-  
րավար, և նրանք անվանվեցին հույներ:

Միխիթար Այրիվանեցի 35.

Ի նոյն Յովն սպարապետ Աթենացոց, յորմէ  
Յոյնք անուանեցան:

Այդ ժամանակ Իոնն աթենացիների զորավարն  
էր, որից հույներն իրենց անունը ստացան:

## 25. Օտոս և Էփիալտես

Հոմերոսը «Ոդիսական»-ում (Hom. Od. 11.305–320) պատմում է, թե Պոսեյդոնի որդի Ալոուսի և Իփիմեդիայի որդիները՝ հսկա Օտոսն ու Էփիալտեսը, որ կոչվում էին Ալոադներ, այսինքն՝ Ալոուսի որդիներ, մտադրվեցին կռվել աստվածների դեմ. Օսսան դրեցին Օլիմպոսի վրա, իսկ Օս-

<sup>1</sup> Μέροψ բառն այդ իմաստն ունի արդեն Հոմերոսի «Իլիական»-ում և Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» պոեմում (Hom. Il. 1.250, 2.285, և այլն, Hes. Op. 109, 143, 180):

<sup>2</sup> Այսպիսով «յոյն» ցեղանունն առաջացել է իոնացիների/հոնիացիների անվանումից: Նոր Կտակարանում «յոյնը» համապատասխանում է հունարեն Ἑλλην-ին (Գործք ԺԱ 20) և Ἑλληνιστής-ին (Գործք Զ 1, Թ 29). վերջինս նշա-  
նակում է՝ «հունախոս», մասնավորապես՝ «հունախոս հրեա»:

սայի վրա՝ Պելիոնը<sup>1</sup>, և այդ լեռներով սպառնում էին երկինք բարձրանալ: Ասում էին, թե ծովը լեռներով կլցնեն ու ցամաք կդարձնեն, իսկ երկիրը՝ ծով: «Իլիական»-ում պատմվում է, որ նրանք կալանեցիկ Արեսին և տասներեք ամսով նրան փակեցին պղնձե անոթի մեջ, որից նրան ազատեց Հերմեսը (Hom. *Il.* 5.385–391, Apollod. 1.7.4 [1.53-54]):

Գրիգոր Նազ., Ի Բաս. 176 = Greg. Naz. *in Bas.* 22.3.2-5.

... և ոչ Մոլիոնիդներն՝ Հոմերական տախտակին սքանչելիք, զորս հաւասարութիւն թշուառութեանց ծանեաւ, և գեղեցկապէս զկառան վարել՝ ծանաւթք լեալ ի նմին երասանակս, և մտրակս:

... οὐδὲν οἱ Μολιονίδαί, τῆς Ὀμηρικῆς δέλτου τὸ θαῦμα, οὖς κοινωνία συμφορῶν ἐγνώρισε, καὶ τὸ καλῶς ἄρμα ἐλαύνειν μεριζομένους ἐν ταῦτῳ ἡνίας καὶ μάστιγας.

...և ոչ Մոլիոնիդները<sup>2</sup> Հոմերոսի գրվածքի հրաշքները, որոնց ճանաչված դարձրեց դժբախտությունների ընդհանրությունը և, նույն սանձին ու մտրակներին ծանոթ լինելով, գեղեցիկ կառք վարելը:

Նոննոս 2.16 [21] = Nonnos 43.12.1-12.

Մոզոն էր կին ոմն բնակեալ առ սահմանաւքն թրակացւոց: Սա ունէր որդիս երկուս, առաջնոյն՝ Ուտոս անուն, և երկրորդին՝ Եփիալտէս: Սոքա ըստ ամի աճեցեալք լինէին, ըստ երկայնութեան՝ կանգուն մի, և ըստ լայնութեան՝ թիզ մի. և եղեն թշնամանողք և ամբարտաւանք, և այնչափ ամբարհաւաճեցին, մինչ զի խորհեցան հակառակել ընդ երկնային աստուածոցն: Արդ զՈւտոս ի վերայ Աթոլի խորհեցան դնել և նոքաւք յերկինս ելանել: Եւ են Ուտոս և Աթոլս երկու լերինք ի սահմանս թրակացւոց: Իսկ Զևս բարկացեալ, որոտմունս հանդերձ փայլատակամբք արձակեալ՝ եկեզ զնոսս, և կորեան: Այլ յառաջագոյն, յաղաքս կիզմանն նոցա, հրամանաբանութիւն տուեալ էր մաւրն, թէ վասն ամբարտաւանութեանն իւրեանց ամպահար լինելոց են:

Μολιόνη ἦν τις γυνή περὶ τὴν Θράκην οἰκοῦσα. αὕτη ἔσχε δύο υἱούς, τὸν μὲν Ὠτόν, τὸν δὲ δεύτερον Ἐφιάλτην. οὗτοι κατ' ἐνιαυτὸν ἠϋξάνοντο κατὰ μὲν τὸ μῆκος πῆχυν ἕνα, κατὰ δὲ τὸ πλάτος σπιθαμὴν μίαν. Γεγόνασι δὲ ὕβρισται οὗτοι καὶ ὑπερήφανοι, καὶ τοσοῦτον ἐφύβρισαν ὥστε βουλεύσασθαι ἀντᾶραι τοῖς οὐρανίοις θεοῖς. τὴν οὖν Ὅσσαν τῷ Ἄθῳ ἐβουλεύσαντο ἐπιθεῖναι, καὶ δι' αὐτῶν ἀνελεθεῖν εἰς τὸν οὐρανόν. ἡ δὲ Ὅσσα καὶ ὁ Ἄθως δύο ὄρη εἰσὶ περὶ τὴν Θράκην. ὁ οὖν Ζεὺς ὀργισθεὶς κεραυνὸν ἐπαφείδ' ἐκεραύνωσεν αὐτούς· καὶ ἀπώλοντο. ἦν δὲ πρότερον περὶ τῆς κεραυνώσεως αὐτῶν χρῆσιμὸς δοθεὶς τῇ μητρὶ αὐτῶν, ὅτι διὰ τὴν ὑπερηφανίαν αὐτῶν κεραυνωθήσονται.

Մոլիոնեն մի կին էր, որ բնակվում էր Թրակիայի մոտակայքում: Սա ուներ երկու որդի՝ առաջինի անունը՝ Օտոս, երկրորդինը՝ Էփիալտես: Սրանք ամեն տարի աճում էին՝ երկարությունը մեկ կանգուն, լայնությունը մեկ թիզ: Կովարար ու ամբարտաւան էին դարձել և այնքան լիտիացան, որ մտածեցին հակառակվել երկնային աստվածներին: Արդ, մտածեցին Օսսան դնել Աթոսի<sup>3</sup> վրա և դրանցով երկինք բարձրանալ: Օսսան ու Աթոսը երկու լեռ են թրակացիների կողմերում: Զևսն էլ, զայրացած որոտ ու կայծակ արձակելով, այրեց նրանց, և կործանվեցին: Իսկ կայծակնահարությունից առաջ նրանց մորը գուշակություն էր արված, թե իրենց ամբարտաւանություն համար են շանթահարվելու:

<sup>1</sup> Օսսան և Պելիոնը լեռներ են Հունաստանի Թեսսալիա մարզի ծովափնյա հատվածում (Օսսան՝ հյուսիս-արևելքում, Պելիոնը՝ հարավ-արևելքում):

<sup>2</sup> Գրիգոր Նազիանզացիի և Կեղծ-Նոննոսն Օտոսին ու Էփիալտեսին համարում են Մոլիոնեի որդիներ: Ապոլլոնորոսի «Գրադարան»-ում (Apollod. 2.7.1 [2.139]) Մոլիոնեի որդիներն են Եվրիտոսն ու Կտեստոսը:

<sup>3</sup> Հոմերոսյան Պելիոնն Աթոսով փոխարինելը Կեղծ-Նոննոսի սխալներից է:

Դաւիթ, Սահմանք ԺԶ [124.10-14] = Dav. Prol. 59.3-7.

Արդ այսպէս որք յամենեւիմբ նիւթականացն յամենեւիմբ աննիւթականս մատչել, զորս առաւելով քերթութիւնն վասն Ոտոսի և Եփրալտոսի, որք զՈսայ զլեռան ի վերայ Ոլիմպիոսի յօթարեցան զնել և ի վերայ զՈսայ զտերեւաշարժն զԲիւրն, որպէս զի երկին ճեմարան եղիցի:

οὕτως οὖν οὐ δεῖ ἀπὸ τῶν πάντη ἐνύλων εὐθέως ἐπὶ τὰ πάντη ἄν-  
λα ἔρχεσθαι· οὕτω γὰρ αἰνιττο-  
μένη ἢ ποίησις λέγει περὶ Ὤτου  
καὶ Ἐφιάλτου ταῦτα· Ὅσσαν  
ἐπ’ Οὐλύμπῳ μέμασαν θέμεν,  
αὐτὰρ ἐπ’ Ὅσση Πήλιον εἰνοσί-  
φυλλον, ἴν’ οὐρανὸς ἀμβατὸς  
εἴη.

Այսպիսով ամբողջովին նյութական բաներից (+ պետք չէ) զնալ դեպի աննյութական բաները, ինչն ակնարկելով՝ պոեմը (+ պատմում է) Օտոսի և Էփրալտեսի մասին, որոնք Օսսա լեռը ցանկացան զնել Օլիմպոսի վրա, իսկ Օսսայի վրա՝ տերեւաշարժ Պելիոնը, որպեսզի երկինքը դառնա քայլելու վայր:

Գրիգոր Մագիստրոս 21 (Բ).38.

Տրամախոհի ի վերայ Ոլիմպիոսի զնել զԱեստոս և յայնր յարաբարդել զտերեւաշարժն Բիւրն, որպէս զի երկին ճեմարան լիցի նոցա:

Որոշվում է Օլիմպոսի վրա զնել Օսսան և դրան ավելացնել տերեւաշարժ Պելիոնը, որպեսզի երկինքը դառնա նրանց համար քայլելու վայր:

Գրիգոր Մագիստրոս 60 (ԽԸ).34.

Առաւելով քերդութիւնն վասն Ստոսի և Եփրալտոսի և զՈսայ ի վերայ Ոլիմպիոսի յաւժարեցան զնել, և ի վերայ սորա զտերեւաշարժն Բիւրն, որպէս զի երկին ճեմարան եղիցի:

Պոեմը (պատմում է) Օտոսի և Էփրալտեսի մասին, որոնք Օսսա լեռը ցանկացան զնել Օլիմպոսի վրա, իսկ վրայից՝ տերեւաշարժ Պելիոնը, որպեսզի երկինքը դառնա քայլելու վայր:

Սարկաւագ, Լուծմունք, 42.

Ոչ է այս կարողութիւն յամենեւին աննիւթն ելանել և նմանել քերթութեան առակին և արանցն Ոտոսի և Եփրալտոսի, որք կամեցան զլերինս յերերաց վերայ բարդել և յերկինս ելանել. և են Ջոսայ և Ոլիմպիոս մեծամեծք լերինք յարեմուտս կոյս: Այսպէս և Բիւրն այնքան բարձր, մինչև ծայր լերինն ի սաստիկ եղեալ բարձրութենէն իբրև զտերև շարժի ի հողմոց:

Հնարավոր չէ բարձրանալ դեպի ամբողջովին աննյութական բաները և նմանվել պոեմի առակին և Օտոս ու Էփրալտես այրերին, որոնք ցանկացան լեռներն իրար վրա բարդել ու երկինք բարձրանալ. դրանք արեմուտքում գտնվող Օսսա և Օլիմպոս մեծ լեռներն են: Այսպես և Պելիոնն այնքան բարձր է, որ լեռան զագաթը սաստիկ բարձրությունից քամիներից տերևի պես շարժվում է:

Կարապետ Սասնեցի 13-14.

Որպէս զՈստոսն և Փալտոսն՝ զնելով զՈսիայ ի վերայ Ոլիմպոսի և զԲիւրն տերեւաշարժ յանելանելին ելանել՝ խաւսել զբոլաւտ սակս հոմագնոյն՝ ո՛ մարդ Աստուծոյ:

Ինչպես Օտոսն ու Էփրալտեսը, զնելով Օսսան Օլիմպոսի վրա, նաև՝ տերեւաշարժ Պելիոնը՝ անբարձրանալի վրա բարձրանալու և ազգակցի մասին գովեստ ասելու համար, ո՛վ մարդ աստծո:

Մեկնութիւն Սահմանաց Դաւիթի ԺԶ.8-10.

Զիստոս եւ զԷփրալտոս՝ որ իմաստասէրք էին,

Օտոսն ու Էփրալտեսը, որ իմաստասերներ էին,

զմասյ լեառն է բարձր, կամեցան ի վերայ Ուլումպոսի լեռինն դնել. Ա. լեառն այլ կայր՝ Բիլոն, Հայնց բարձր, որ թվէր ծայրն թէ որպէս տերեւ կու շարժի: Զանացին գայս Գ. լեառս ի վերայ իրուց դնել եւ յերկինս դնալ: Անգէտք էին այն Բ. իմաստասէրքն՝ Իստոս եւ Իփալիտոս:

Առաքել, Լուծումն 594.

Հարց. Վասն է՞ր քերթաւղն Հոմերոս՝ գիստոս եւ գՓալտոս յիշէ, որք ասացին զերեք լեառն ի վերայ իրերաց դնել զսոսա. զՈւլումբոս, եւ զՏերեւաշարժն, Բիլոն. որ այնքան բարձր էր, որ ծայր լեռինն որպէս տերեւ շարժէր ի հողմոց: Պատասխանի. Այս երիս լեառնս յարեւմտից կողմն է, եւ այն երկու իմաստասէրքն՝ Իստոս եւ Փալտոս ասացին գայն լեռինքն ի վերայ իրերաց դնել եւ յերկինս հանել, եւ ընդ աստեղաց ճեմել:

Գրիգոր Նազ., ճառ 4.116.28-29 [144] = PG 35.656.21-22.

ԶԻ՞նչ եւ խոցեալն Արէս, եւ կամ ի պղնձի սափորն փակեալն:

Նոննոս 3.78 [61] = Nonnos 4.85.2-10.

Այլ կապեցաւ առ ի յՈւլումպոս եւ յԵփիալտոս, եւ սոքա էին որդիք Աղաււեսի՝ բռնաւորք բնութեամբ: Եւ եղև ի Թետալիս՝ սոքա ընդդիմադարձութիւն խոկացան աստուածոյն: Արդ Արէս առաջին եհաս ի վերայ նոցա. ապա պարտեալ առ ի նոցանէ՝ կապեցաւ ի պղնձախեցի. եւ պղնձախեց՝ քաղաք է այսպէս կոչեցեալ, եւ կամ տեսակ ինչ դժուարագոյն եւ դժուարալոյծ կապանաց: Այլ ասին Ուլտեանքն եւ Եփիալտեանքն, եթէ ինն գիրկք էին երկայնութեամբ եւ ինն կանգունք՝ լայնութեամբ:

ἐδέθη δὲ παρὰ τοῦ Ὠτου καὶ τοῦ Ἐφιάλτου. Οὗτοι δὲ ἦσαν υἱοὶ μὲν Ἀλωέως, τύραννοι δὲ τὴν φύσιν. ἐγένοντο δὲ περὶ Θετταλίαν. Οὗτοι ἀνταρσίαν ἐμελέτησαν κατὰ τῶν θεῶν. ὁ οὖν Ἄρης πρῶτος ἐπῆλθε κατ' αὐτῶν, εἶτα ἠττηθεὶς ὑπ' αὐτῶν, ἐδέθη ἐν χαλκῷ κέραμῳ. Χαλκὸς δὲ κέραμος ἢ πόλις ἐστὶν οὕτω καλουμένη, ἢ εἰδὸς ἐστὶ δεσμοῦ δυσχεροῦς καὶ δυσλύτου. λέγονται δὲ οἱ περὶ Ὠτον καὶ Ἐφιάλτην ἐννεαετείς ὄντες εἶναι ἐννεαόργιοι κατὰ τὸ μῆκος, κατὰ δὲ τὸ πλάτος ἐννεαπήχεις.

կամեցան Օսոս բարձր լեռը դնել Օլիմպոս լեռան վրա. մեկ այլ լեռ էլ կար՝ Պելիոնը, այնքան բարձր, որ թվում էր, թե գագաթը տերեւի պես շարժվում է: Նրանք ջանացին այս երեք լեռն իրար վրա դնել եւ երկինք դնալ: Այդ երկու իմաստասերները՝ Օտոսն ու Էփիլատեսը, անգետ էին:

Հարց. Ինչո՞ւ է բանաստեղծ Հոմերոսը հիշատակում Օտոսին եւ Էփիլատեսին, որոնք ասացին, թե իրար վրա են դրել այս երեք լեռները՝ Օլիմպոսը, Տերեւաշարժը եւ Պելիոնը, որն այնքան բարձր էր, որ լեռան գագաթը տերեւի նման շարժվում էր քամիներից: Պատասխան. Այս երեք լեռներն արեւմուտքում են, իսկ այն երկու իմաստասերները՝ Օտոսն ու Էփիլատեսը, ասացին, թե այս լեռներն իրար վրա են դրել եւ երկինք հասցրել ու աստղերի միջով քայլել:

Ի՞նչ (ն՞վ) է խոցված կամ պղնձի սափորի մեջ փակված Արեսը:

Իսկ նա կապվեց Օտոսի եւ Էփիլատեսի ձեռքով. սրանք Ալուեսի որդիներն էին՝ բնութամբ բռնակալ: Եվ այնպես եղավ Թետալիայում, որ սրանք նախաձեռնեցին ընդդիմանալ աստծուն (աստվածներին): Արեսն էլ առաջինը եկավ նրանց դեմ, այնուհետեւ, նրանցից պարտված, բանտարկվեց պղնձե անոթի մեջ: «Պնձե անոթը» կամ քաղաք է այդպես կոչված, կամ էլ շատ դժվար եւ դժվարալոյծ կապանքների մի տեսակ: Իսկ Օտոսի եւ Էփիլատեսի մարդիկ (+ ինը տարեկան հասակում), ասում են, ինը գիրկ երկարութուն ունեին եւ ինը կանգուն լայնութուն:

## 26. Փրիքսուսի և Հելլեի փախուստն Ինոյից

Բեռտիայի արքա Աթամասի և ամպերի նիմփա Նեփելեի որդի Փրիքսուսը խորթ մայր Ինոյի դավերի հետևանքով պիտի զոհաբերվեր Ջևսին: Փրիքսուսի մայրն իր դուստր Հելլեի հետ նրան փախցրեց և, Հերմեսից ոսկեգեղձ մի խոյ<sup>1</sup> ստանալով, տվեց նրանց: Խոյը հեծած նրանք անցան երկնքով և կտրեցին ծով ու ցամաք, բայց Հելլեն սահեց-ընկավ ծովը, որը նրա անունով կոչվեց Հելլեսպոնտոս<sup>2</sup> (Apollod. 1.9.1 [1.80-82]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 116 = Sync. 189.8-11.

Փրիքսոս առ սոքաւք ըստ ոմանց համարեցաւ հեծանել ի խոյ ոսկիգիւսակ, և շրջել ընդ աւդս հանդերձ Եղղեաւ քերքն իւրով՝ փախուցեալ ի մաւրէն, որ սպանանել կամէր զնա. և դիպեցաւ նաւի, որոյ նշանակ խոյ էր: Իսկ Պաղէփատոս ասէ՝ թէ դայեակն, որ ապրեցոյց զնա, խոյ կոչէր:

Κατὰ τούτους Φρίξος ἔδοξε τισὶν ὀχεῖσθαι ἐπὶ χρυσομάλλῳ κριῶ ἅμα τῇ ἀδελφῇ Ἑλλη φεύγων μητριᾶν ἐπιβουλεύουσαν. καὶ ἠτύχησε πλοίου, ᾧ τὸ παράσημον κριὸς ἦν. Παλαίφατος δὲ Κριὸν φησι καλεῖσθαι τὸν διασώσαντα αὐτοῦς τροφέα.

Ըստ սրանց՝ ոմանք կարծում էին, թե Փրիքսոսը հեծել էր մի ոսկեգեղձ խոյ և իր քույր Հելլեի հետ շրջել օդում (չհք)՝ փախչելով մորից (խորթ մորից)<sup>3</sup>, որն ուզում էր նրան սպանել: Եվ նա մի նավի հանդիպեց, որի նշանը խոյն էր: Իսկ Պաղեփատոսն ասում է, որ նրան փրկած դայակի անունն էր Խոյ:

Փիլոն Տիրակացի 933.

Փրիքսոս, ըստ ոմանց, համարեցաւ հեծանել ի խոյ ոսկիգիւսակ և շրջել ընդ աւդս՝ հանդերձ Եղղեաւ քերքն իւրով փախուցեալ ի մաւրուէն, որ սպանանել կամէր զնա. և դիպեցաւ նաւ, որոյ նշանակ խոյ էր. իսկ (Պաղեփատոս ասէ, թէ) դայեակն, որ ապրեցոյց զնա, Խոյ կոչիւր:

Ոմանք կարծում էին, թե Փրիքսոսը հեծել էր մի ոսկեգեղձ խոյ և իր քույր Հելլեի հետ շրջել օդում՝ փախչելով խորթ մորից, որն ուզում էր նրան սպանել: Եվ նա մի նավի հանդիպեց, որի նշանը խոյն էր: Իսկ Պաղեփատոսն ասում է, որ նրան փրկած դայակի անունն էր Խոյ:

## 27. Կորնթոսի հիմնումը

Էոլոսի որդի Միսիփոսը «հիմնադրեց Էփիրան, որ այժմ կոչվում է Կորնթոս» (Apollod. 1.9.3 [1.85]): «Իլիական»-ում դրանք տարբեր քաղաքներ են. Էփիրան Միսիփոսի հայրենի քաղաքն է Արգոսում (Hom. II. 6.152), իսկ Կորնթոսը պատկանում է Ագամեմնոնին (Hom. II. 2.570):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 104 = Sync. 178.21.

Կորնթոս շինեցաւ, որ երբեմն Փիրա կոչէր:

Κόρινθος ἢ πάλαι Ἐφύρα καλουμένη ἐκτίσθη.

Կառուցվեց Կորնթոսը, որ նախկինում կոչվում էր Էփիրա:

<sup>1</sup> Դա այն ոսկեգեղձ խոյն էր, որի մորթին բերելու համար հետագայում Յասոնն արգոնավորդների հետ նավարկեց Կորնթոս (դրվագ 30):

<sup>2</sup> Այսինքն՝ «Հելլեի ծով». այժմյան Դարդանեյի նեղուցն է՝ Էգեյան և Մարմարա ծովերի միջև:

<sup>3</sup> «Ի մաւրէն» աղավաղված ընթերցում է. մեկ տառի տարբերությամբ ճիշտ ընթերցումը պահպանվել է Փիլոն Տիրակացու մոտ. «ի մաւրուէն» («խորթ մորից»):



Միխայել Ասորի Ա 46.

Ի քսան և Տինգ ամի աւետեացն Աբրահամու Կորնթոս քաղաք շինեցաւ՝ որ երբեմն Եփրա կոչէր<sup>1</sup>:

Աբրահամի ավետիսի քսանՏինգերորդ տարում կառուցվեց Կորնթոսը, որ մի ժամանակ կոչվում էր Եփիրա:

Միխայել Ասորի Բ 32.

Եւ աստ շինեցաւ Կորնթոս քաղաք, որ նախ Բուրիա կոչէր:

Եվ այս ժամանակ կառուցվեց Կորնթոսը, որ նախկինում կոչվում էր Եփիրա:

28. Սալմոնևս և Տիրո

Սիսիփոսի եղբայր Սալմոնևսն ամբարտապան էր: Նա ուզում էր հավասարվել Չևսին և հրամայում էր զոհեր մատուցել ոչ թե աստծուն, այլ իրեն: Իր կառքի հետևից պղնձե կաթսաներ ու չորացրած կաշիներ քարշ տալով՝ ասում էր, թե որտում է, և, վառվող ջահեր էր շպրտում երկինք՝ իբր կայծակներ էր արձակում: Չևսը նրան շանթահարեց և վերացրեց նրա հիմնադրած քաղաքն ու բոլոր բնակիչներին<sup>2</sup> (Apollod. 1.9.7 [1.89]): Վերգիլիուսը պատմում է, որ Էնեասը Սալմոնևսին տեսավ անդրաշխարհում (Verg. *Aen.* 6.585–594): Սալմոնևսի դուստր Տիրոն սիրահարվեց Էնիպևս գետին<sup>3</sup>. Պոսեյդոնն Էնիպևսի կերպարանքն ընդունեց և կենակցեց նրա հետ, իսկ Տիրոն թաքուն երկվորյակներ ծնեց՝ Պելիասին ու Նելևսին, և ամուսնացավ Կրեթևսի հետ (Hom. *Od.* 11.235–259, Apollod. 1.9.8 [1.90]):

Գրիգոր Նազ., ճառ 5.8.29 [170] = PG 35.673.29-30.

Սաղմոնևս լեալ ոմն ի կաշույն որոտայր:

Σαλμωνεύς εἶναι τις βύρσης βροντῶν.

Կար ոմն Սաղմոնևս, որ կաշվից որոտ էր հանում:

Նոննոս 4.2 [66] = Nonnos 5.2.1-14.

Սաղմանևս որդի էր Էոզդոսի՝ թագաւորին թեսաղացուց: Սա ամպարշտեալ առ աստուածսն՝ չոր և կարծր արջաուկաշեաւք և կատսայիւք թնդիւնս և հնչմունս առնէր, ի ձեռս բերելով լապտերս վառեալս, պարծէր և մեծաբանէր՝ որոտալ որպէս Չևս, և փայլատակունս առնել, մինչև շանդաշար եղեալ՝ կիզաւ յԱբրամազդայ,

Σαλμωνεύς Αἰόλου μὲν ἦν υἱός, βασιλεὺς δὲ Θετταλῶν. οὗτος ἀσεβῆς εἰς θεοὺς γενόμενος, προσάπτων ἄρμασι βύρσας χηράς τε καὶ σκληράς, καὶ λέβητάς τινας μετὰ τῶν βυσσῶν κτυπῶν, ἤχους ἀπετέλει μετὰ χειράς τε βαστάζων καιομένας λαμπάδας ἐμεγαλᾷχει καθάπερ Ζεὺς βροντᾶν τε καὶ ἀστράπτειν, ἕως ὑπὸ Διὸς κεραυνωθείς ἀνῆρέθη.

Սաղմոնևսն Էոզոսի որդին էր, թեսաղացիների թագավորը: Սա, ամբարիշտ դառնալով աստվածների հանդեպ, եզի չոր ու կարծր կաշիներով և կաթսաներով (կառքերին չոր ու կարծր կաշիներ ամրացնելով և կաշիների հետ ինչ-որ կաթսաներ շրխկացնելով) թնդուն ու աղմուկ էր անում. ձեռքերում բռնած վառվող ջահեր՝ պարծե-

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրասներեն թարգմանության, հատվածն այսպես է. «Կառուցվեց Կորնթոս քաղաքը. այն նախկինում կոչվում էր Եփիրա» (Chronique de Michel le Syrien, livre III, chapitre VI, p. 42):  
<sup>2</sup> Ֆրեզերի կարծիքով՝ այս պատմությունը հնագույն ժամանակների արձագանք է, երբ աստվածացման ձգտող թագավորները հանդես էին գալիս որպես Չևս ու նմանակում երկնային երևույթները (Frazer I, 81):  
<sup>3</sup> Հին հունական առասպելներում գետերի անձնավորման այլ օրինակներ էլ կան: Որպես տեղանքի ամենից երևելի տարրեր, գետերը հին ժամանակներում անձնավորվել և ստել են տեղական ծննդաբանությունների մեջ:

Թողեալ դուստր տարաՀասակ, որում անուն էր Տիւռաւ. գոր սնոյց Հաւրեղբայր իւր Կեփեւ: Սա տուփեալ Ենիպեւ գետոյ, որ ի գաւառին էր, և այնմ գետոյ նմանեալ Պոսիդոն՝ փոխանակ Ենիպեւի շաղաշարի ընդ աղջկանն. և յղացեալ զՊեղիա և զՆիւրկա՝ բերէր յորովայնի: Այլ ամուսնացեալ նորա ընդ Կուրթեաի, և ծնեալ գմանկունսն կարծեցեալ լինէին ի Կուրթեայ գուբայց էին ճշմարտապէս ի Պոսիդոնէ: Իսկ յետոյ և ի Կուրթեայ ծնաւ մանկունս Տիւրաւ:

Καὶ κατέλιπε θυγατέρα ἀφήλικα ὀνόματι Τυρώ. αὕτη τραφεῖσα ὑπὸ τοῦ ἰδίου θεοῦ πρὸς πατρὸς Κηφέως, ἠράσθη τοῦ ἐγγωρίου ποταμοῦ Ἐνιπέως. τούτῳ δὲ τῷ ποταμῷ ὁμοιωθεὶς ὁ Ποσειδῶν, συνεγένετο ἀντὶ Ἐνιπέως τῇ Τυροῖ. καὶ συνέλαβε Πελίαν καὶ Νηλέα, καὶ εἶχε τούτους ἐγκύους. ἐγαμήθη δὲ αὕτη ὑπὸ Κρηθέως· καὶ ὕστερον ἔτεκεν ἠ Τυρώ, τῷ μὲν δοκεῖν ἐκ Κρηθέως, τῇ δὲ ἀληθεῖα ἐκ Ποσειδῶνος. ὕστερον δὲ καὶ ἐξ αὐτοῦ τοῦ Κρηθέως ἔσχε παῖδας ἠ Τυρώ.

նում էր, Թե Զևսի պես որոտում և շանթեր է արձակում, մինչև որ Արամազդից (Զևսից) շանթահար այրվեց՝ Թողնելով մի դեռատի դուստր, Տիրո անունով, որին խնամեց նրա Հուրեղբայր Կեփեւը: Սա սիրահարվեց այդ երկրի էնիպեւ գետին: Պոսեյդոնը, նմանվելով այդ գետին, էնիպեւի փոխարեն կենակցեց աղջկա Հետ, և նա, Հղիանալով, որովայնում կրում էր Պելիասին ու Նելկասին: Եվ երբ նա ամուսնացավ Կրեթեւի Հետ, ծնված մանուկների մասին կարծում էին, Թե Կրեթեւինն են, բայց իրականում Պոսեյդոնինն էին: Իսկ Հետո Տիրոն Կրեթեւից մանուկներ ունեցավ:

## 29. Մելամպուս գուշակը

Հերոդոտոսը պատմում է հույներին եգիպտական ծեսերին ծանոթացրած գուշակ Մելամպուսի մասին (Herodot. 2.49):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118 = Sync. 189.26.

Մեղամպուս իրձ ճանաչէր: Μελάμπους μάντις ἐγνωρίζετο. Ծանաչված էր Մելամպուս գուշակը:

Գրիգոր Նազ., ճառ 4.82.12 [92] = PG 35.609.3.

Մեղանպուս Թուր Թե, կարծեմ ոմն: Μελάμπους, οἶμαι, τις. Կարծում եմ՝ ոմն Մելամպուս:

Նոննոս 3.43 [43] = Nonnos 4.45.6-11.

Մեղամպուս, որ ասի սևոտն<sup>1</sup>, գիւթ էր և սրբազանիչ: Սա երկեցոյց զԵգիպտական քահանայագործութիւնն եղղենացւոցն, որոց և եղղենացիքն ὁ Μελάμπους μάντις ἦν καὶ ἱεροφάντης. οὗτος ἐξέφηγε τὰ ἱερὰ τὰ ἐν Αἰγύπτῳ τοῖς Ἑλλησιν, ἅπερ ἐμιμήσαντο Ἑλληνας. καὶ οὗτος δὲ τῶν μετα- Մելամպուսը, որ նշանակում է «սև ոտքերով» (չիք որ նշանակում է «սև ոտքերով»), գուշակ էր և խորհուրդներ մեկնաբանող: Սա Հելլեններին ցույց

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսը, Հոմերոսի կյանքը պատմելիս, հիմնականում հետևել է նրա՝ հունարեն տարբեր աղբյուրներից հայտնի կենսագրություններին, սակայն գործել է հետևյալ սխալը. Հոմերոսի նախնիների երկար շարքում հիշատակվող Մելամպուսի՝ նրա մեծ պապի անունը, մի փոքր աղավաղվելով, փոխարինել է հորը՝ Մեոնին: Այսպիսով Մագիստրոսը Հոմերոսին անվանել է «որի Մելամպոդոսի, այսինքն Սևոտան». տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Քերակ. 388: Անվան մեկնաբանության մեջ ակնհայտ է հայերեն Կեղծ-Նոննոսի ազդեցությունը:

նմանեցին: Այլ և սա ի փոխակերպելոցն էր, որպէս դիւթ. քանզի դիւթքն այնպիսիք այնքան ասէ զաւրութիւնս ունէին, որպէս զի փոխակերպել յոր ինչ և կամէին, մինչ զի ոչ լինել ծանուցեալ առ խաւսողացն ընդ նոսա:

μορφουμένων ἦν, ὡς μάντις. οἱ γὰρ μάντις οὗτοι εἶχον τηλικαύτην, φησὶ, δύναμιν, ὥστε μεταμοφοῦσθαι εἰς ὃ ἂν ἐθέλωσιν ὥστε μὴ γινώσκεσθαι παρὰ τῶν προσδιαλεγομένων.

տվեց եզրագրական ծեսերը, որոնք հելլեններն ընդօրինակեցին: Սա նաև, որպես գուշակ, կերպարանափոխվում էր, քանի որ նման գուշակները, ասում է, այնպիսի ունակութուն ունեին, որ կերպարանափոխվում էին՝ ինչի որ ցանկանային, ուստի անճանաչելի էին դառնում իրենց հետ խոսողներին:

### 30. Արգոնավորդներ

Իովկոսի արքա Պելիասը, ով թագավորությունը գավթել էր Էսոնից, գուշակություն էր ստացել, որ զգուշանա միսանդալավորից: Էսոնի որդի Յասոնը, գետն անցնելիս, մի կոշիկը կորցրեց: Պելիասը, վտանգից խուսափելու համար, Յասոնին դժվար հանձնարարություն տվեց՝ Կոլքիսից բերել ոսկեզեղմը (դա այն խոյի մորթին էր, որը փրկել էր Փրիքսոսին ու Հելլենի գոհաբերվելուց. դրվագ 26): Յասոնը կառուցել տվեց Արգո նավը<sup>1</sup> և, հավաքելով Հունաստանի քաջերին, սկսեց նավարկությունը: «Արգոնավորդների» ճամփորդությունը նկարագրել է Ապոլլոնիոս Հոդոսցին (մ.թ.ա. III դ.) «Արգոնավտիկա» պոեմում. այն հիշատակել են Հոմերոսը (*Hom. Od.* 12.70-72) և այլ աղբյուրներ (օրինակ՝ *Apollod.* 1.9.16-26 [1.107-142]): Արգոնավորդների ցանկերում (*Apollod.* 1.9.16 [1.111], *Pind. Pyth.* 4.171-182, *Ap. Rhod. Argon.* 1.200-233, *Hyg. Fab.* 14) ի թիվս այլոց հիշատակվում են Հերակլեսը և Չեսի որդիներ Կաստորն ու Պոլիդեկեսը՝ Դիոսկուրոսները: Արգոնավորդները կառանցեցին Լեմնոս կղզում, որի բնակիչները միայն կանայք էին և որի թագուհին Հիպսիպիլեն էր: Նա Յասոնից երկու որդի ունեցավ (*Apollod.* 1.9.17 [1.114-115]): Հերակլեսը մնաց հաջորդ հանգրվանում՝ դոլիոնների երկրում, քանի որ փնտրում էր Հիլասին (*Apollod.* 9.19 [117-118]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126.

Արգիացուց նաւատորմիղքն:

Արգոնավորդների նավատորմիղը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 95.

Արգոյնաւաց նաւամարտիկ տորմիղ նաւացն նաւարկեաց ի Փասին գետ, և առ Մենտէ Կողքիաց. և Հերակղէս մոլորէր ի նաւէն վասն ցանկութեան և առ անձուկ Հիւղեայ, և որպէս ասեն, ի Գամիրս կոյս ուրեմն վրիպեաց չոգաւ:

Արգոնավորդների մարտական նավատորմիղը նավարկեց դեպի Փասիս գետն ու կոլքացի Մեղեայի մոտ. և Հերակլեսը նավից ուշացավ Հիլասի հանդեպ կրքի պատճառով ու, ինչպես ասում են, շեղվեց-զնաց Գամիրքի կողմը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 99.

Ասորեստանեաց թագաւորք... Պանիաս. Առ սովաւ Արգիացուց տորմիղ նաւացն, և Հերակղէս ճանաչէր:

Ասորեստանի թագավորներ... Պանիաս. սրա ժամանակ հայտնի է արգոնավորդների ճամփորդութունն ու Հերակլեսը:

<sup>1</sup> Նավն այդպես կոչվեց կա՛մ այն պատրաստած՝ Փրիքսոսի որդի Արգոսի անունից, կա՛մ էլ «արագընթաց» իմաստով հազվագյուտ *ἀργός* բառից:

Հմմտ. Sync. 176.21

Ἀσσυρίων κδ' ἐβασίλευσε Πανύας ἔτη με'.

Ասորեստանցիներին թագավորեց Պանիաը քառասունհինգ տարի:

Հմմտ. Sync. 196.13-16

κατὰ Πανύαν ἄρχοντα ὁ τῶν Ἀργοναυτῶν στόλος ἔπλευσεν ἐπὶ τε Φᾶσιν καὶ Μηδείην τὴν Κολχίδα, καὶ Ἡρακλέα πλανηθέντα ἀπὸ τῆς νεῶς διὰ τὸν ἔρωτα τοῦ Ὑλα λέγουσι περὶ τοὺς Καππαδόκας ἀληθῆναι.

Պանիա իշխանի օրոք արգոնավորդների նավատորմի ղեկավարեց Քասիս գետն ու կոլքացի Մեդեայի մոտ. և Հերակլեսը նավից ուշացավ Հիլասի հանդեպ կրքի պատճառով և դեգերելով գնաց կապադովկացիների մոտ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126 = Sync. 183.25.

Իպսիպիդեայ իրքն:

Τὰ κατὰ Ὑψιπύλῃν.

Հիպսիպիլեի հետ կապված իրադարձությունները:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128.

Սփինքսի և Իդիպոսեայ իրքն. և Արգեայ և նաւորդացն Արգեայ, յորս էր Հերակղէս և Դիոսկուրացիքն:

Սփինքսի և Էդիպոսի հետ կապված իրադարձությունները, նաև Արգոյի և արգոնավորդների պատմությունը, որոնց թվում Հերակլեսն ու Դիոսկուրոսներն էին:

Հմմտ. Sync. 183.25-28.

Τὰ κατὰ Ὑψιπύλῃν ἐν Λήμνῳ... καὶ τὰ κατὰ τὴν Ἀργῶ καὶ τοὺς Ἀργοναυτάς, ἐν οἷς ἦσαν Ἡρακλῆς καὶ οἱ Διόσκοροι.

Լեմնոսում Հիպսիպիլեի հետ կապված իրադարձությունները... նաև Արգոյի և արգոնավորդների պատմությունը, որոնց թվում Հերակլեսն ու Դիոսկուրոսներն էին:

### 31. Պելիասի սպանությունը Մեդեայի ձեռքով

Արգոնավորդները հասան Կոլքիս, Յասոնը, մեծ վտանգներից խուսափելով, այդտեղի էետես արքայի դստեր՝ կախարհուհի Մեդեայի օժանդակությամբ կարողացավ ձեռք բերել ոսկեգեղմը և Մեդեայի հետ վերադարձավ Իոլկոս: Այստեղ էլ Մեդեան Յասոնին օգնեց ազատվել գահը զավթած Պելիասից ու թագավորել (Apollod. 1.9.23-27 [1.127-144]): Եվրիպիդեսը «Պելիադներ» (Պելիասի դուստրեր) չպահպանված ողբերգության մեջ նկարագրել էր, թե ինչպես Մեդեան խաբությամբ սպանեց Պելիասին:

Գիրք պիտոյից III.4 «Եղծ զՄեդեայ», ք [68.20-29]<sup>1</sup>.

Բայց առաւել որ զՄեդեայս պատմէ, անդր և Բայց հատկապես Մեդեայի մասին պատմող (ա-

<sup>1</sup> «Պիտոյից գրքի» 54 նախակրթություններից 26-ը նրա նախօրինակի՝ Ափթոնիոսի ճարտասանական ձեռնարկի վարժությունների վերամշակումն է: Ափթոնիոսի ձեռնարկը մեզ է հասել համառոտված տարբերակով, և հայերեն ընդօրինակաբար գրված նախակրթությունների մեծ մասի նախօրինակները պահպանվել են Նիկողայոս Մյունացու ժողովածուի մեջ, իսկ մի քանիսինն առհասարակ չեն պահպանվել. դրանց թվին է պատկանում և խնդրո առարկա նախակրթության նախօրինակը:

ծայրացեալ սաստկանայ ստաբանութեամբ: Զի զսէ ասէ ի Սկիւթական զաւառէն նաւել զհետ Յասոնայ ուրումն և զալ ի Թետալիա անդ ի գործ զկախարդականն արկանէր արուեստ: Եւ զթագաւորն, որ տիրէր գաւառին, դաւաճանութեամբ մտածէր կորուսանել, և զգետերսն հաւանեցուցեալ յաղաքս հօրն զառամութեան, զի ոչ ունի ասէ արու զարմ, որ զհայրենեանն յաջորդեալ ժառանգիցէ իշխանութիւն, «արդ, եթէ կամիք, բայ, կարող եմ ես զնա ըստ հասակի մանկագոյն և նորոգապէս ձեզ ցուցանել»: Եւ զայս խաւսելով՝ անդէն և անդ պատմէ տարացուցիւ յայտնել նոցա զգործոյն հանգամանս, և առեալ խոյ մի յաւաքեալ ամանայր ի սան, և գ'առ ի ներքոյն բորբոքէր հուր և յեռանդանէն ի միջոյ սանին խլրտեալ զխոյն ցուցանէր իբր զկենդանի, և այնու պատրեալ՝ յաւաքէր զՊէլիասս, և «էր ի սանին» ասէ, և աւելի ինչ ոչ:

Թեոն 106 = Theon 96.11-13.

Բեդիա ներկանելով զալիսն ի գլուխս մարդկան և սեւաւ առնելով՝ խաբեցաւ զալեւորսն ի սան կոտորելով մանկունս առնել:

ή δὲ Μήδεια βάπτουσα τὰς ἐπὶ τῆς κεφαλῆς τῶν ἀνθρώπων ποτῆρας καὶ μελαίνας ποιοῦσα ἐφημίσθη τοὺς γέροντας εἰς λέβητα κατακόπτουσα νέους ποιεῖν.

Մեդեան, ներկելով ու սևացնելով մարդկանց գլխի պեհեր մաղերը, սուտ հոչակ վայելեց, թե, ալեւորներին կաթսայի մեջ կտրատելով, երիտասարդացնում է:

Օձնեցի, Ատենաբանութիւն 23.

... զՊեղիայ զթետաղացուց գոռոզին ախտանալ, որ զգառամացեալն իւր Մեդիայ առաջի առնէր առ ի յաւել զմարմինն՝ որպէս թէ ի մեռելութենէ առ մանկութիւն զծերութիւնն փոփոխել յուսալով...

... Պելիաս թեսսալացի բռնակալի կրածը, որին, երբ տարիքն առել էր, Մեդեան իր առջև դրեց՝ մարմինը կտրատելու համար՝ իբր հուսալով, թե մահվամբ ծերությունը փոխելու է երիտասարդության...

Գրիգոր Մագիստրոս 81 (ԼԵ).3-4.

Յիշեմ աստանաւր և զՊէլոպեան, յորմէ խոյն յաւաքեալ խլրտանայր, իսկ Պէլասն արտահանեալ և ոչ ևս երևէր ... ոչ էր ի սան:

Այստեղ հիշում եմ և Պելոպյանին (Մեդեային), որի ձեռքով մորթված խոյը խլրտում էր, իսկ Պելիասը՝ դուրս հանված, այլևս չէր երևում ... և կաթսայի մեջ չէր:

Գրիգոր Մագիստրոս 34 (ՀԹ).3.

Գիտեմ և զսանն, որ պատրանաւք զՊէլասն կորուսանէր, յորմէ խոյն խլրտացեալ արտաքս վազէր:

Գիտեմ և կաթսան, որը խաբեությամբ Պելիասին կործանեց. դրա միջից խոյը խլրտալով դուրս վազեց:

Բայց ուրումն Միդեայ հանդիպեալ քեզ և իբրև զխոյն ի սանէն խլրտացուցեալ և զաւրէն Պէլիասայ տարացուցիւն պատրեալ:

Բայց ոմն Մեդեա պատահեց քեզ ու ստիպեց խոյի պես խլրտալով կաթնայից դուրս գալ և, ինչպես Պելիասին, օրինակով խաբեց:

### 32. Մեդեայի վրիժառույթունը Յասոնից

Եվրիպիդեսի՝ մ.թ.ա. 431 թ. գրած «Մեդեա» ողբերգութիւնը (Eur. Med.) այն մասին է, թե ինչպես Մեդեան ու Յասոնը տեղափոխվեցին Կորնթոս, Կորնթոսի արքա Կրեոնը իր դուստր Գլավկեին կնոթյան տվեց Յասոնին, իսկ Մեդեան վրեժ լուծեց՝ թունավոր հագուստով սպանելով Կրեոնին ու Գլավկեին և սրախողխող անելով իր և Յասոնի երկու մանկահասակ որդիներին:

Թեոն 102 = Theon 94.13-32.

Արդ՝ եթէ եղծանիցեմք զպատմութիւն յանհաւանականէն, այսպէս անցցուք՝ բանիւ ցուցանելով, զի և դէմքն անհաւանելի է, և գործեցեալն, և տեղին՝ յորում գործն էն. և նմանապէս և ի ժամանակն և պատճառ գործոյն, որգան ի վերայ Մեդեայն զ՛ի դիմացն, զի անկարելի է մաւր չար առնել որդոց. և ի գործոյն՝ զի ոչ վայելուչ է փողոտելով. և ի տեղոյն՝ թէ ոչ սպանանէր ի Կորնթոսի, որ շուրջ էր Յասոն պատանեկացն հայրն. և ի ժամանակէն՝ անհաւանելի է յայնմ ժամանակի, յորում ինքն Մեդեա ի վայր երթեալ էր և ընդ գետին մտեալ յառնէ կին անկեալ տարաշխարհիկ. իսկ Յասոն մեծագոյն ևս առնոյր զաւրուցիւն՝ կին արարեալ զԿրեոնի զԿերմոսի զթագաւորի զտեղեացն զդուստր. և ի յեղանակէն՝ զի ջանայր զի մի գիտացէ և ոչ սպանեալ լինէր, այլ դեղով և մանաւանդ զի կախարդ էր. և ի պատճառէն՝ զի անհաւանելի է առ այրն բարկութեան սպանանել գորդիսն. զի ոչ առանձին Յասոնի, այլ և Միդեա հասարակ լինէր թշուառութիւն, և առաւել թերևս, որ

ἐὰν τοῖνον ἀνασκευάζωμεν τὴν διήγησιν ἐκ τοῦ ἀπιθανοῦ, οὐτως ἐπεξελευσόμεθα, δεικνύντες ὅτι καὶ τὸ πρόσωπον ἀπίθανόν ἐστὶ καὶ τὸ πραχθὲν καὶ ὁ τόπος, ἐν ᾧ ἢ πρᾶξις, ὁμοίως δὲ καὶ ὁ χρόνος καὶ ὁ τρόπος καὶ ἡ αἰτία τῆς πράξεως, οἷον ἐπὶ τῆς Μηδείας ἐκ μὲν τοῦ προσώπου, ὅτι ἀπίθανόν ἐστὶ μητέρα κακῶς ποιῆσαι τέκνα, ἐκ δὲ τῆς πράξεως, ὅτι οὐκ εἰκός ἐστὶν ἀποσφάξαι ἐκ δὲ τοῦ τόπου, ὅτι οὐκ ἂν ἀπέκτεινεν ἐν Κορίνθῳ, ὅπου διέτριβεν Ἰάσων ὁ τῶν παιδῶν πατήρ· ἐκ δὲ τοῦ χρόνου, ὅτι ἀπίθανόν ἐστὶν ἐν τούτῳ τῷ χρόνῳ, ἐν ᾧ αὐτὴ μὲν ἐτεταπεινώτο τοῦ ἀνδρὸς ἐκπεσοῦσα ξένη γυνή, ὁ δὲ Ἰάσων μείζω δύναμιν προσειλήφει γήμας Γλαύκην τὴν Κρέοντος τοῦ βασιλέως τῶν τόπων θυγατέρα· ἐκ δὲ τοῦ τρόπου, ὅτι ἐπειράθη ἂν λαθεῖν καὶ οὐκ ἂν ξίφει διεχρήσατο, ἀλλὰ φαρμάκῳ ἄλλως τε καὶ φαρμακίς οὕσα· ἐκ δὲ τῆς αἰτίας, ὅτι ἀπίθανόν ἐστὶ δι' ὀργὴν τὴν πρὸς τὸν ἄνδρα ἀπεκτονέαι τὰ τέκνα· οὐ γὰρ ἴδιον τοῦ Ἰάσονος, ἀλλὰ καὶ αὐτῆς κοινὸν ἐγένετο τὸ ἀτύχημα, καὶ μᾶλλον αὐτῆς, ὅσῳ μαλακώτεράι πῶς αἰ γυναῖκες πρὸς τὰ πάθη.

Այժմ եթե քննադատենք պատմութիւնը՝ ելնելով անհավանականութիւնից, այսպես կխոսենք, ցույց տալով, որ և՛ անձն է անհավանական, և՛ նրա արածը, և՛ վայրը, որտեղ տեղի ունեցավ դեպքը, նաև ժամանակն ու գործի պատճառաբանութիւնը: Ինչպես Մեդեայի դեպքում՝ ելնելով անձից, քանզի հնարավոր չէ, որ մայրը չար գործի զավակների հանդեպ, և արարքից՝ վայելուչ (հավանական) չէ, որ խողխող Կորնթոսում, ուր շրջում էր մանուկների հայր Յասոնը, իսկ ժամանակից՝ անհամոզիչ է, որ դա աներ այն ժամանակ, երբ Մեդեան ինքը նվաստացած էր՝ ամուսնուց վտարված օտարական մի կին, իսկ Յասոնը ավելի մեծ հզորութիւն էր ստացել՝ ամուսնանալով այդտեղի թագավոր Կրեոնի Գլավկե դստեր հետ: Եղանակից՝ թե ճգտում էր, որ չիմացվի, և (+ սրով) չսպանեց, այլ՝ թուլով, մանավանդ որ կախարդ էր: Պատճառաբանութիւնից՝ որ անհամոզիչ է ամուսնու հանդեպ զայրուցից սպանել զավակներին. չէ՞ որ դա կլինէր ընդհանուր դժբախտութիւն

կակղազոյն և գորովազոյն են  
կանայք առ անցս:

ոչ միայն Յասոնի, այլև Մեղե-  
այի համար, թերևս՝ ավելի մեծ,  
քանի որ կանայք ավելի փա-  
փուկ ու գորովալից են զեպքե-  
րի (տառապանքի) հանդեպ:

### 33. Մեղեայի որդի Մեդոսը

Մեղեան գնաց Աթենք, այնտեղ ամուսնացավ Էզևս թագավորի հետ և ունեցավ Մեդոս որ-  
դուն: Մեդոսը տիրեց բազում բարբարոսների և իրեն ենթակա ողջ երկիրը կոչեց Մեղիա  
(Apollod. 1.9.28 [1.147]): Պավսանիասը «Մեղիան» (Մարաստանը) կապում է հենց Մեղեայի  
անվան հետ: Նա պատմում է, թե, Աթենքից արտաքսվելով, Մեղեան որդու հետ գնաց «Արիա»  
(Αρία) երկիրը, որից հետո այնտեղի բնակիչները նրա անունով կոչվեցին «մեղացիներ» (Paus.  
2.3.8): Ըստ Դիոդորոս Սիկիլիացու՝ Մեղեան գնաց Ասիա, այնտեղ ամուսնացավ մի արքայի  
հետ և ունեցավ Մեդոսին: Վերջինս հոր մահվանից հետո ժառանգեց գահը, քաջությամբ համար  
հիացմունքի արժանացավ, և ժողովուրդն սկսեց կոչվել նրա անունով (Diod. Sic. 4.55.7):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 95.

Իսկ Մէղիա Կողքեցի կին մի իղձ՝ գնաց յԵկի-  
այ արքայէ, որոյ որդին էր Մէդոս. ուստի  
Մէղք. այսինքն՝ մարք. և աշխարհն կոչեցաւ  
Մեղիա, որ է Մարաստան:

Մեղեան՝ գուշակ մի կին Կոլքիսից, գնաց Էզևս  
արքայի մոտից. նրա որդին էր Մեդոսը, որից և  
մեղացիներն են, այսինքն՝ մարերը, իսկ երկիրը  
կոչվեց Մեղիա, որ Մարաստանն է:

Հմմտ. Sync. 191.15.

Μήδεια Κολχίς ἀνεχώρησεν Αἰγέως, ἥς υἱὸς  
Μήδος, ἐξ οὗ Μήδοι, καὶ ἡ χώρα ἐκλήθη Μήδεια.

Կոլքիսցի Մեղեան գնաց Էզևսի մոտից. նրա  
որդին է Մեդոսը, որից մեղացիներն են, և եր-  
կիրը կոչվեց Մեղիա<sup>1</sup>:

Աշխ. 2157.

Աշխարհ Ասիոյ է Մարք, զոր ասեն ի Մաղեայ  
որդույ Կողքացուց թագաւորին զաւակին սե-  
րեալ են, որոյ քոյր Մաղա է. որ Յասոնի  
տուփեալ զոսկեկիզն մորթին մատնեաց. բայց  
պատճառ զալոյն այսր՝ ոչ ասի:

Մարաստանն Ասիայի երկիր է. ասում են՝ մա-  
րերը սերում են կողքացիների թագաւորի զա-  
վակի որդի Մաղեսից (Մեդոսից): Սրա քույրը  
Մաղան (Մեղեան) է, որ, սիրահարվելով  
Յասոնին, նրան տվեց ոսկե մորթին:

<sup>1</sup> Այս բաժնում մտադիր էինք ներկայացնել նաև հետևյալ հատվածը՝ Մովսես Կաղանկատուացի Ա Բ [34]. «և ազգք են, որ ի Հեղայս աշխարհի են յայնցանէ, որ յետոյ փոխեցան անոր, որպէս Այետացիքն, որք բնակեալ են յԱթենս քաղաքի պատուականն Յունաց» – «Կան ժողովուրդներ Հեղիի երկրում նրանցից, որ հետո տեղափոխվեցին այնտեղ, ինչպես՝ Աետեսի սերունդները, որ բնակվում են Աթենքում՝ հույների պատվական քաղաքում» (Աետեսը Մեղեայի հայրն է): Սակայն այս երկի՝ Դաուսեթի անգլերեն թարգմանության (*The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranc'i*, translated by C.J.F. Dowsett, London, 1961, p. 2) ծանոթագրությունները մեզ հուշեցին, որ «Այետացիքն» ընթերցումը ճիշտ չէ. նախընտրելի է «Սայետացիքն» (AC) տարբերակը: Այս հատվածի աղբյուրը Հիպոլիտոսի «Ժամանակագրության» հետևյալ հատվածն է (Hippol. 75-76). Ἔστι δὲ καὶ τὰ ἐκ τῆς Ἑλλάδος ἔθνη πάντα ἐξ αὐτοῦ ἐκτὸς τῶν μετῴκηκόντων ὕστερον ἐκεῖ, οἷον Σαῖτων, οἱ κατώκησαν τιμωμένην πόλιν τὴν καλουμένην Ἀθήνας – «Կան ժողովուրդներ Հելլադայի երկրում նրանցից, որ հետո տեղափոխվեցին այնտեղ, ինչպես՝ սաիտացիների սերունդները, որ բնակեցրել են Աթենք կոչվող պատվական քաղաքը»:

### 34. Միկիոնի առաջին թագավորները

Օվկիանոսն ու Տեթիսն ունեցան Ինարքոս որդուն, որի անունով մի գետ Արգոսում կոչվում է Ինարքոս: Նրանից և Օվկիանոսի դուստր Մելիայից ծնվեցին Փորոնևսն ու Էգիալևսը (Apollod. 2.1.1 [2.1], Paus. 2.15.5): Պապսանիասն ասում է, թե կորնթացիներին սահմանակից սիկիոնացիների առաջին թագավորը երկրածին (αὐτόχθων) Էգիալևսն էր, և Պելոպոննեսոսի այն մասը, որ այժմ էլ կոչվում է Էգիալոս, նրա անունով է: Նաև՝ որ նա հիմնեց Էգիալիա քաղաքը և որ նրա որդիներն էին Եվրոպը, Տեթիսը, Ապիսը, Թեթրսիոնը (Paus. 2.5.6-7): Հետագայում Էպոպևսը եկավ Թեսսալիայից և դարձավ Միկիոնի թագավորը, քանի որ վերջին թագավորն անգավակ էր մահացել (Paus. 2.6.1) :

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118.

Միկոն՝ յորմէ սիկոնացիք անուանեցան, որք յառաջագոյն էգիալացիք էին:

Միկոն<sup>1</sup>, որից իրենց անունը ստացան սիկիոնացիները, ովքեր նախկինում էգիալացիներն էին:

Հմմտ. Sync. 109.26-28.

τούτων πρώτη καὶ πάντων παλαιοτάτη ἀνεγράφη ἢ Σικυωνίων ἀρχή, ἧς πρῶτος ἡγήσατο Αἰγιαλεύς, ἀφ' οὗ καὶ Αἰγιάλεια ἢ νῦν Πελοπόννησος τὸ πρὶν ἐκαλεῖτο.

Մրանցից առաջ և բոլորից հինը սիկիոնացիների իշխանութունն էր. այն առաջինը վարեց էգիալևսը, որից այժմյան Պելոպոննեսոսը նախկինում կոչվում էր Էգիալիա:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 253-254 = Sync. 110.14-18.

Քան զամենեսին հինք ժամանակաւ յուկնաց գրին մի ըստ միոջէ Միկոնացիք. և թագաւորք՝ որ ի Միկոնի կացին, որոց առաջին տիրեաց Եգիալևս առ Նինեաւ և Բէղաւ լեալ, զորս առաջին ասորեստանեաց թագաւորեալ Ասիայ յիշատակեն. ուստի Եգիալանախ անուանէր, որ այժմ Պելոպոննէսոսն կոչի:

Πάντων μὲν Ἑλλήνων παλαιοτάτοι τοῖς χρόνοις ἀναγράφονται Σικυῶνιοι καὶ βασιλεῖς οἱ Σικυῶνος ἡγήσάμενοι, ὧν πρῶτος ἦρξεν Αἰγιαλεύς κατὰ Βῆλον καὶ Νῖνον γεγρονῶς τοὺς πρώτους Ἀσσυρίων βασιλευῖσαι τῆς Ἀσίας μνημονευομένου, ἐξ οὗ Αἰγιάλεια τὸ πρὶν ἢ νῦν Πελοπόννησος ἐκαλεῖτο.

Գրված է, որ ժամանակով բոլոր հույներից հնագույնն են սիկիոնացիները և Միկիոնում եղած (իշխող) թագավորները: Նրանց առաջինը տիրեց Էգիալևսը. նա Նինոսի և Բելի ժամանակ էր, որոնց առաջինն են հիշատակում իբրև Ասիայում ասորեստանցիների թագավորներ: Ուստի սկզբում Էգիալիա էր անվանվում այն, ինչն այժմ Պելոպոննեսոս է կոչվում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 256-257.

Թագաւորք սիկոնացւոց. Առաջին՝ Եգիալևս, ամս ԾԲ., ուստի և Եգիալիա, որ այժմ Պելոպոննէսոս կոչի: Զսմանէ ասեն առաջին թագաւորեալ սիկոնացւոց ըստ հնգետասաներորդում ամին Բեղայ առաջնոյ ասորեստանեաց թագաւորութեանն տիրելոյ. զոր Պոսիդոնի և Լիբայ

Միկիոնացիների թագավորներ. առաջինը՝ Էգիալևս, հիսուներկու տարի, որից և՛ Էգիալիա, որն այժմ կոչվում է Պելոպոննեսոս: Մրա մասին ասում են, թե առաջինն է թագավորել սիկիոնացիներին ասորեստանցիների թագավորությանը տիրած Բելի տասնհինգերորդ տա-

<sup>1</sup> Միկիոնը գտնվում էր Պելոպոննեսոսի հյուսիս-արևելքում, Կորնթոսի նեղուցի մոտ:



որդի լիեալ բանկարկեն: Երկրորդ՝ Եւրոփս, ամս ԽԵ., սա առ Նինեաւ որդւով Բէլայ թագաւորէ: Երրորդ՝ Տեղքին, ամս Ի. սա առ Շամիրամաւ թագաւորէ: Չորրորդ՝ Ապիս, ամս ԻԵ., յորմէ Ապիա, որ այժմ Պեղոպոնեսոսն, կոչեցաւ: Հինգերորդ՝ Թեղքսինն ամս ԾԲ.:

րում, ում մասին ասում են, թե Պոսեյդոնի և Լիբիայի որդին է: Երկրորդը՝ Եվրոպս, քառասունհինգ տարի. սա թագավորում է Բելի որդի Նինոսի ժամանակ: Երրորդը՝ Տեղքիս, քսան տարի. սա թագավորում է Շամիրամի ժամանակ: Չորրորդը՝ Ապիս, քսանհինգ տարի, որից՝ Ապիա. այն այժմ կոչվել է Պելոպոնեսոս: Հինգերորդը՝ Թեղքսինն, հիսուներկու տարի:

#### Սամուէլ Անեցի 51.

ՉՍիկոնացւոց թագաւորաց արդ ձեռնարկեմ գրել... Ա. Եգիպտոս ամս ԾԲ.: Բ. Եւրոփս ամս ԽԵ. ... Գ. Տեղքին ամս Ի. Դ.: Ապիս ամս ԻԵ.: Ե. Թեղքսինն ամս ԾԲ.:

Այժմ ձեռնամուկ ենք լինում գրել սիկիոնացիների թագավորների մասին... Առաջինը՝ Էգիպտոս, հիսուներկու տարի, երկրորդը՝ Եվրոպս, քառասունհինգ տարի... Երրորդը՝ Տեղքիս, քսան տարի: Չորրորդը՝ Ապիս, քսանհինգ տարի, հինգերորդը՝ Թեղքսինն, հիսուներկու տարի:

#### Միսայէլ Ասորի Ա 54.

Սիկոնացւոց թագաւորեաց Սիկոն, և ի նմանէ Սիկոնացիք անուանեցան՝ որ նախ կոչէին Եգեղալիք:

Սիկիոնացիներին թագավորեց Սիկիոնը, և նրանից իրենց անունը ստացան սիկիոնացիները, որ նախկինում կոչվում էին Էգիպտացիներ<sup>1</sup>:

#### Միսթար Այրիվանեցի 30.

Ի 15 ամին Բէլայ թագաւորեաց սիկոնացւոց Եղիազես, և այլ թագաւորք 26 զամս 958:

Բելոսի տասնհինգերորդ տարում սիկիոնացիներին թագավորեց Էգիպտոսը և քսանվեց այլ թագավորներ՝ 958 տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 259, Հմմտ. Scalig. (Անանունից և Սինկելլոսից), p. 19.

(Թագաւորք սիկոնացւոց) Եաւթ- Էπτακαιδέκατος Էποπεδς (Սիկիոնացիների թագավորնուտասներորդ Եպոպես ամս չէղ լե՛. ԼԵ...

(Սիկիոնացիների թագավորներ). տասնյոթներորդ՝ Էպոպես, երեսունհինգ տարի...

Հմմտ. Sync. 144.1.

Σικυονίων ιζ' έβασίλευσεν Έποπεδς ε̅τη λβ'.

Սիկիոնացիներին տասնյոթներորդը թագավորեց Էպոպեսը՝ երեսուներկու տարի:

<sup>1</sup> Միսայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն քարգնամոթյան, հատվածն այսպես է. «Այսպիսով մենք հերթականությամբ թվարկել ենք նրանց, ովքեր թագավորել են Սիկիոնում՝ սկսած Էգիպտոսից, որ իշխել է առաջինը» (Chronique de Michel le Syrien, livre IV, chap. VII, p. 56):

### 35. Արգոսի առաջին թագավորները

Էգիալևսի (տե՛ս նախորդ դրվագը) եղբայր Փորոնևսը, տիրելով ողջ երկրին, որ հետագայում կոչվեց Պելոպոննեսոս, ունեցավ Ապիսին ու Նիոբեին (Apollod. 2.1.1 [2.1], Paus. 2.15.5): Չևսից և Նիոբեից ծնվեց Արգոս որդին, որը, թագավորություն ստանալով, Պելոպոննեսոսն իր անունով կոչեց Արգոս<sup>1</sup>: Նա ունեցավ որդիներ՝ Էկբասոս, Պիրաս, Էպիդավրոս ու Կրիասոս. վերջինս և ժառանգեց թագավորությունը: Հետո եկան Փորբասը, Տրիոպասը, Կրոտոպասը, Սթենելասը (Apollod. 2.1.1-2 [2.2-3], Paus. 2.16.1): Պավսանիասը չի հիշատակում Կրիասոսին, իսկ Ապոլլոնորոսը՝ Փորբասից մինչև Սթենելաս:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 254.

Արգիացւոց առաջին թագաւոր Ինաքոս գրի, քան զսիկոնացւոց իշխանութիւնն յետոյ լեալ ամաւք ՄԼԵ.Իւք:

Գրում են, թե արգոսցիների առաջին թագավորն Ինաքոսն էր, որը սիկիոնացիների իշխանությունից 235 տարի հետո եղավ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 76.

Առ արգիացիս՝ առաջին թագաւորեաց Ինաքոս, ամս Ծ.:

Արգոսցիների մոտ առաջինը թագավորեց Ինաքոսը՝ հիսուն տարի:

Հմմտ. Sync. 144.5-8.

Δευτέρα μετὰ τὴν Σικυωνίων βασιλείαν κατὰ τὴν Εὐρώπην λέγεται γενέσθαι καὶ αὕτη ἀρχαιοτάτη τῶν Ἀργείων χρόνοις ὕστερον ὀνομαζομένων ἀπὸ τινος Ἄργου βασιλεύσαντος. ταύτης πρῶτος Ἴναχος ἐβασίλευσεν ἔτη ν'.

Սիկիոնացիների թագավորությունից հետո Եվրոպայում երկրորդ ամենահինը եղավ արգոսցիներինը, որոնք ավելի ուշ ժամանակներում իրենց անունը ստացան ոմն թագավոր Արգոսից. այնտեղ առաջինը թագավորեց Ինաքոսը՝ հիսուն տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 76 = Sync. 146.5-6.

Յինաքայ Հաւրէն Ինաքոս գետ առ արգիացիս:

Ἀπὸ Ἰνάχου ποταμὸς Ἴναχος ἐν Ἄργει ὠνομάσθη.

Ինաքոս Հորից (Ինաքոսից) արգոսցիների մոտ Ինաքոս գետն է:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 80 = Sync. 75.18-19.

Փորոնևս որդի Ինաքայ և Նիոբեայ նախ օրէնս և դատաւորս եղ: Ոմանք սորա դուստր Համարին գՆիոբէ:

Φορωνεύς οὗτος Ἰνάχου καὶ Νιόβης παῖς, ὃς πρῶτος νόμους καὶ κριτήρια ὠρίσε, τινὲς δὲ αὐτοῦ Φορωνέως τὴν Νιόβην θυγατήρα φασιν Ἑλληνας.

Ինաքոսի և Նիոբեի որդի Փորոնևսը նախ օրէնքներ ու դատաւորներ (դատարաններ) կարգեց: Ոմանք (Հուլյները) գտնում են, որ Նիոբեն սրա (այս Փորոնևսի) դուստրն է:

<sup>1</sup> Արգոյի գավառը Արգոս կենտրոնով գտնվում է Պելոպոննեսոս թերակղզու արևելյան մասում: Պատմական Արգոսը Եվրոպայի ամենահին քաղաքն է. այն բնակեցված է եղել մ.թ.ա. 2000 թ. իր հիմնադրումից ի վեր:

Առաջին՝ Ինաքոս, ուստի Ինաքիա աշխարհն կոչէր, ամս Ծ.: Թագաւոր առաջին Ինաքոս արգիացւոց... Երկրորդ՝ Փորոն ամս Կ., առ սովաւ Ովգիգոս զԵղևսինա շինեաց: Երրորդ՝ Ապիս, յորմէ աշխարհն Ապիա կոչեցաւ... Չորրորդ՝ Արգոս ուրբոս և Նիոբէս, ուստի աշխարհին անուն փոխեցաւ Արգիա, ամս Հ.: Հինգերորդ՝ Կրիասոս, ամս ԾԳ.: Վեցերորդ Փորբաս ամս ԼԵ. ...Եւթներորդ Տրիոպաս ամս ԽԶ. ... Ութերորդ Կրոտոպաս ամս ԻԱ.: Իններորդ Սթենեղոս ամս ԺԱ.:

Πρῶτος Ἰναχος. ἀφ’ οὗ Ἰνάχια χώρα ἐκαλεῖτο, ἔτη ν’. Βασιλεύει δὲ πρῶτος Ἰναχος Ἀργείων... Δεύτερος Φορωνεύς ἔτη ξ’. Κατὰ τοῦτον Ὠγυγος Ἐλευσίνα ἔκτισε. Τρίτος Ἄπις ἔτη λε’. Τέταρτος Ἄργος ὁ Διὸς καὶ Νιόβης, ἀφ’ οὗ ἡ χώρα μετωνομάσθη Ἀργεία, ἔτη ο’. Πέμπτος Κρίασος ἔτη νδ’. Ἐκτος Φόρβας, ἔτη λε’. Ἐβδομος Τριόπας ἔτη μς’. Ὅγδοος Κροτωπὸς ἔτη κα’. Ἐννατος Σθένελος ἔτη ια’.

Առաջինն Ինաքոսն էր, որից երկիրը կոչվում էր Ինաքիա՝ հիսուն տարի: Արգոսցիների առաջին թագավորն Ինաքոսն էր... Երկրորդը Փորոնեան էր՝ վաթսուն տարի. սրա օրոք Օւգիգոսը հիմնեց Էլևսիսը: Երրորդն Ապիսն էր (+ երեսունհինգ տարի), որից երկիրը կոչվեց Ապիա... Չորրորդն Արգոսը՝ Զևսի (օ Դիօս) և Նիոբեի որդին, որից երկրի անունը փոխվեց Արգիա՝ յոթանասուն տարի, հինգերորդը Կրիասոսը՝ հիսունչորս տարի, վեցերորդը Փորբասը՝ երեսունհինգ տարի, յոթներորդը՝ Տրիոպասը՝ քառասունվեց տարի... Ութերորդը Կրոտոպասը՝ քսանմեկ տարի, իններորդը Սթենեղոսը՝ տասնմեկ տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 122.

Արգիացւոց թագաւորք դադարեցին, բաւեալք յամս ԵԽԳ. մինչև ցՊեղոփս, որ թագաւորեաց ամս ԾԹ.: Յետ Ակրիսեայ ի Միկեանս իշխանութեանն արգիացւոց փոխելոյ՝ թագաւորք կացին յայտքիկ. Պերսեա, Սթենէղոս, Թիէստէս, Ագամէմնոն, Էգիսթոս, Որեստէս, Տրսամէնոս, Պանթեա, և Կոմէտէս, մինչև ցՀերակղեանց ասպատակն:

Արգոսցիների թագավորները դադարեցին՝ հասնելով 543 տարուն, մինչև Պելոպսը, որ թագավորեց հիսունինը տարի: Նրանից հետո, երբ Ակրիսիոսն իշխանությունը տեղափոխեց Միկենե, թագավորեցին սրանք. Պերսեա, Սթենեղոս, Թիեստես, Ագամեմնոն, Էգիսթոս, Օրեստես, Տրսամենոս, Պենթեա և Կոմետես՝ մինչև Հերակլյանների ներխուժումը:

Մովսէս Խորենացի Գ 15 [273.16].

Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Ինաքայ, Արամազդայ որդի:

Ինքնակալ Հուլիանոս՝ Ինաքոսի սերնդից, Արամազդի որդի:

Սամուէլ Անեցի 51-52.

Թագաւորք Արգիացւոց սկսեալք ի վեցերորդ ամի Թուրիմաքայ, որոց առաջին Ինաքոս՝ ամս Ժ. ուստի Ինաքիայ աշխարհն կոչէր: Բ. Փորոնեա ամս Կ.: Գ. Ապիս ամս ԼԵ.: Դ. Արգոս ամս Հ., ուստի աշխարհին անուն փոխեցաւ Արգիայ, Ե. Կրիասոս ամս ԾԳ., Զ. Փորբաս ամս ԼԵ.: Է. Տրիոպաս ամս ԽԶ.: Ը. Կրոտովպոս ամս ԻԱ.:

Արգոսցիների թագավորները՝ սկսած Թուրիմաքի վեցերորդ տարուց. առաջինը՝ Ինաքոս, տասը տարի, որի անունով երկիրը կոչվում էր Ինաքիա, երկրորդը՝ Փորոնեա, վաթսուն տարի, երրորդը՝ Ապիս, երեսունհինգ տարի, չորրորդը՝ Արգոս (ուստի երկրի անունը փոխվեց Արգիա)՝ յոթանասուն տարի, հինգերորդը՝ Կրիասոս, հի-

Թ. Սթենեղոս ամս ԺԱ.: Ժ. Դանաուս ամս Ծ.: ԺԱ. Լինկևս ամս ԽԱ.: ԺԲ. Աբաս ամս ԻԳ.: Դարդանեայ թագաւորեաց Տրովս, ուստի և տրովացիք կոչեցան: ԺԳ. Պրոիտոս ամս ԺԵ.: ԺԴ. Ակրիսիոս ամս ԼԱ.: Արգիացւոց թագաւորք դադարեցին յամս ՇԽԱ.:

սունչորս տարի, վեցերորդը՝ Փորբաս, երեսուն-հինգ տարի, յոթերորդը՝ Տրիոպաս, քառասուն-յոթ տարի, ութերորդը՝ Կրոտոպոս, քսանմեկ տարի, իններորդը՝ Սթենելոս, տասնմեկ տարի, տասներորդը՝ Դանաոս, հիսուն տարի, տասնմեկերորդը՝ Լինկևս, քառասունմեկ տարի, տասներկուերորդը՝ Աբաս, քսաներեք տարի: Դարդանիայում թագավորեց Տրոսը, որից և տրոյացիներն այդպես կոչվեցին: Տասներեքերորդը՝ Պրոիտոս, տասնհինգ տարի, տասնչորսերորդը՝ Ակրիսիոս, երեսունմեկ տարի: Արգոսցիների թագավորները դադարեցին հինգ-հարյուր քառասունմեկերորդ տարում:

### 36. Չևս և Ինարքոսի դուստր Իո

Ինարքոսն ունէր Իո դստերը (Herodot. 1.1.14, Ov. Met. 1.583–584, Hyg. Fab. 145.2): Չևսը նրա հետ մերձեցավ և, Հերայի զայրույթից պաշտպանելու համար, սպիտակ կով դարձրեց, որը, փախչելով Հերայի ուղարկած բռնից, կտրեց Թրակական նեղուցը. նեղուցը կոչվեց Բոսպորոս, այսինքն՝ «կովի անցում»: Իոն հասավ Եգիպտոս, ունեցավ Էպափոս որդուն, կանգնեցրեց Դեմետերի արձանը, որին եգիպտացիներն Իսիս էին անվանում, ինքն էլ կոչվեց Իսիս (Apollod. 2.1.3 [2.5-9]): Ըստ Հերոդոտոսի՝ կերպարվեստում Իսիսը պատկերվում էր Իոյի պես, իբրև կովի եղջյուրներով մի կին (Herodot. 2.41):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 76 = Sync. 146.1-2.

Ինարքայ դուստր Յով:

ή θυγάτηρ Ἰνάχου Ἴω.

Ինարքոսի դուստր Իո:

Մխիթար Այրիվանեցի 32.

Ի սոյնս թագաւորէ Արգիացոցն Ինարքոս, դուստր Ովայ, և այլ 13 թագաւորք ամս 544:

Արա (Շամիրամի) ժամանակ արգոսցիների թագավորն Ինարքոսն էր՝ Իոյի դուստրը<sup>1</sup>, և այլ տասներեք թագավորներ՝ 544 տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 76.

Ինարքայ դուստր Յով, զոր եգիպտացիք փոփոխմամբ անուանն՝ Իսիս կարգան և պաշտեն:

Ինարքոսի դուստր Իոն, որին եգիպտացիներն անունը փոխելով կոչում են Իսիս և պաշտում են:

Հմմտ. Sync. 146.1-2.

Ἡ θυγάτηρ Ἰνάχου Ἴω· εἰς Αἴγυπτον ἐλθοῦσα Ἴσις ὀνομάσθη, ἣν Αἰγύπτιοι σέβουσιν Ἴσιν Φαρίαν καλοῦντες.

Ինարքոսի դուստր Իոն, գալով Եգիպտոս, կոչվեց Իսիս, որին եգիպտացիները պաշտում են՝ անվանելով փարոսյան Իսիս:

<sup>1</sup> Այստեղ շփոթություն կա. Իոն էր Ինարքոսի դուստրը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 102 = Sync. 146.11-13.

Ընդ Յովայ դստեր Ինաբայ խառնակեցաւ Զևս, գոր և արջառ իսկ արար, ուստի և Բոսպորոսն կոչեցաւ, որ է արջառ էանց:

Μυθεύονται Ἔλληνες μιγῆναι τὸν αἰσχροτάτον Δία καὶ τῆ θυγατρὶ Ἰνάχου, ἣν καὶ βοῦν ἐποίησεν, ἀφ' ἧς ὁ Βόσπορος ἐκλήθη.

(Հուլները պատմում են, թե պղծագույն) Զևսը խառնակվեց Ինաբոսի դուստր Իոյի հետ, ում և նա եզ դարձրեց, որից Բոսպորոսը ստացավ իր անունը. դա նշանակում է՝ «եզն անցավ» (չիք դա նշանակում է՝ «եզն անցավ»):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 185.27-28.

Դէմէտրեայ կնոջն ուրումն իրք. գորմէ ասեն՝ թէ Իսիսն է:

τὰ κατὰ Δήμητραν, ἣν τινες Ἰσὶν φασι.

Ոմն Դեմետր կնոջ հետ կապված իրադարձություններ. նրա մասին ասում են, թե Իսիսն է:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 104 = Sync. 146.1.

Յով յԵգիպտոս չոգաւ ըստ ոմանց պատմելոյ որ Իսիսն յորջորջեցաւ:

Ἡ θυγάτηρ Ἰνάχου Ἰὼ εἰς Αἴγυπτον ἐλθοῦσα Ἰσις ὠνομάσθη.

(+ Ինաբոսի դուստր) Իոն գնաց Եգիպտոս. ոմանց ասելով՝ կոչվեց Իսիս:

Գրիգոր Նազ., ձեռ. Մ2600, 12բ, Մ946, 7ա = PG 36.341.25.

Եւ ոչ Իսեա հիքուլթիւնք...

οὐδὲ Ἰσιδος ἀτυχήματα...

Եվ արդյո՞ք ոչ Իսիսի դժբախտությունները:

Նոննոս 1.20 [12] = Nonnos 39.20.1-9.

Իսիս կարծի Յոհի աղջկանն յափշտակեցելոյ յԱրամազդայ. քանզի Զևս յափշտակեաց զՅով և երկուցեալ ի Հերայ կնոջէ իւրմէ՝ փոխարկեաց զՅով յերինջ, երբեմն սպիտակ առնելով գնա, և երբեմն ծիրանագոյն. և այսպէս զհետ նորա յածեալ լինէր: Եկն արդ Արամազդ յԵգիպտոս՝ յածեալ զհետ Յովայ: Եւ պատուեն եգիպտացիքն զՅով, գոր Իսիս կոչեն, վասն որոյ և ի վերայ գլխոյ պատկերին եղջիւրս արջառոյ նկարեն՝ նշանակեալ զաղջկանն յերինջ փոխաբերութիւն:

Ἡ Ἰσις ἢ αὐτὴ ἐνομίσθη τῆ Ἰοῖ τῆ ἀρπασθείσῃ ὑπὸ τοῦ Διός. ὁ γὰρ Ζεὺς, φησίν, ἤρπασε τὴν Ἰὼ, καὶ φοβούμενος τὴν Ἥραν, τὴν ἑαυτοῦ γυναικα, μετέβαλε τὴν Ἰὼ εἰς βοῦν, καὶ ποτὲ μὲν εἰς λευκὴν, ποτὲ δὲ εἰς μέλαιναν, ποτὲ δὲ ἰάζουσαν. καὶ οὕτως ἐπλανᾶτο μετ' αὐτῆς. ἤλθεν οὖν ὁ Ζεὺς ἐν τῇ Αἰγύπτῳ μετὰ τῆς Ἰοῦς πλανώμενος. καὶ τιμῶσιν Αἰγύπτιοι τὴν Ἰὼ ἥτοι τὴν Ἰσιν. διὸ ἐπὶ τοῦ ἀγάλματος αὐτῆς ἐπὶ τῆς κεφαλῆς κέρατα βοῶδς ἐγγλύφουσιν, σημαίνοντες τῆς κόρης τὴν ἐπὶ βοῦν μεταβολήν.

Իսիսը նուշնական է համարվում Արամազդի (Զևսի) առևանգած Իո աղջկա հետ, քանզի Զևսն առևանգեց Իոյին և, վախենալով Հերայից՝ իր կնոջից, Իոյին երինջի փոխակերպեց՝ երբեմն նրան դարձնելով սպիտակ (+ երբեմն՝ սև), երբեմն էլ՝ ծիրանագույն: Եվ այսպես նրա [Իոյի] հետևից թափառում էր: Արամազդը (Զևսը) եկավ Եգիպտոս՝ Իոյի հետևից թափառելով: Եվ եգիպտացիները պատվում են Իոյին, որին Իսիս են կոչում, այդ պատճառով նրա պատկերի գլխի վրա նկարում են եզի եղջուրներ՝ ցույց տալով աղջկա փոխակերպումը երինջի:

### 37. Ասորեստանի թագավոր Բելուսը

Էպափոսի<sup>1</sup> դուստր Լիբիան Պոսեյդոնից ունեցել էր երկու որդի՝ Բելուսին և Ագենորին (Apollod. 2.1.4 [2.10], 3.1.1 [3.1]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 256.

Բէլայ առաջնոյ ասորեստանեաց թագաւորութեանն տիրելոյ. զոր Պոսեյդոնի և Լիբիայ որդի լիեալ բանկարկեն: Բելն առաջինը տիրեց Ասորեստանի թագաւորությանը. նրան համարում են Պոսեյդոնի և Լիբիայի որդի:

### 38. Դանաոսի դուստրերն ու Եգիպտոսի որդիները

Էսքիլոսը «Խնդրարկուններ»-ում պատմում է (Aesch. *Supp.*), որ Բելուսի որդի Դանաոսը թագավորեց Լիբիայում<sup>2</sup> և ունեցավ հիսուն դուստր, իսկ նրա եղբայր Եգիպտոսը՝ Արաբիայում, երկիրը կոչելով իր անունով, և ունեցավ հիսուն որդի: Վախենալով Եգիպտոսի որդիներից՝ Դանաոսը փախավ Արգոս: Եգիպտոսի որդիները եկան այնտեղ և թշնամությանը վերջ տալու նպատակով Դանաոսի աղջիկներին ամուսնության առաջարկ արեցին: Դանաոսն աղջիկներին վիճակահանությանը բաժանեց, խնջույք արեց, հետո աղջիկներին դաշույններ տվեց, և նրանք սպանեցին քնած փեսացուներին՝ բացի ավագ Հիպերմենեստրայից, որը խնայեց Լիմկլուսին (Apollod. 2.1.4-5 [2.11-22]): Դանաոսի որդիները պատիժ կրեցին. Լիմկլուսը կոտորեց նրանց՝ հոր հետ միասին (Sch. Eur. *Hec.* 886.18-19), իսկ Հադեսում նրանք ստիպված էին մի ծակ տակառի մեջ շարունակ ջուր լցնել (Ov. *Met.* 4.462-463, Hyg. *Fab.* 168.5, Zen. 2.6): Արգոսում թագավորեց Լիմկլուսը. նրա թոռ Ակրիսիոսի ծոռն էր Պերսևսը. սրա որդին էր Սթենելոսը, սրա որդին՝ Եվրիսթևոսը, որը դարձավ Սիկենեի թագավոր:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 264 = Sync. 144.14.

ԶՍթենեղոս Դանաւոս մեր- տօն δὲ Σθένελον Δαναὸς ἐκβα- Դանաոսը Սթենելոսին վռնդեց  
ժեաց, և կալաւ զԱրգոս: λῶν ἐκράτησε τοῦ Ἄργου. և Արգոսը գրավեց:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 108.

Կաստովր ի ԺԱ. ամի իշխանութեանն արգիաց- Կաստորն ասում է, որ արգոսցիների թագավո-  
ւոց զՍթէնէղոս հալածեալ Դանաւոսի՝ ասէ, րության տասնմեկերորդ տարում Դանաոսը,  
կալաւ զԱրգոս. և սորին ծնունդք մինչև քչելով Սթենելոսին, գրավեց Արգոսը. և սրա  
ցեւրիսթևս Սթէնէղայ որդւոյ Պերսեայ. յետ սերունդներն են՝ մինչև Պերսևսի որդի Սթենե-  
որոյ պեղոպիդեանք պայազատեցին զթագա- լոսի որդի Եվրիսթևս: Եվ թագավորությունը  
ւորութիւնն: ժառանգեցին պելոպյանները:

Հմմտ. Sync. 144.14-19.

τὸν δὲ Σθένελον Δαναὸς ἐκβαλῶν ἐκράτησε τοῦ Ինչպես վկայում են բոլոր պատմիչները, Դա-  
Ἄργου, ὡς μαρτυροῦσι πάντες ἱστορικοί, σὺν նաոսը, քչելով Սթենելոսին, գրավեց Արգոսն  
τοῖς ἀπογόνιοις... κατὰ Εὐρύσθεα τὸν Σθενέλου իր սերունդներով հանդերձ՝ մինչև Պերսևսի

<sup>1</sup> Տե՛ս դրվագ 36:  
<sup>2</sup> Այդպես էին հնագույն ժամանակներում կոչում Աֆրիկան:

τοῦ Περσέως. Καὶ διεδέξαντο τὴν βασιλείαν οἱ Πελοπίδες.

որդի Սթենելուսի որդի Եվրիսթևս: Եվ Թագավորությունը ժառանգեցին պելոպյանները:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 110 = Sync. 178.13-15.

Դանաուս Մ. դստերաւք զԵգիպտեայ զեղբաւր իւրոյ Մ. որդիս կոտորեաց, բաց ի Լինկեայ՝ որ յետ նորա Թագաւորեաց:

Օ ավտὸς Δαναὸς διὰ τῶν λεγομένων Δαναΐδων (αὗται δὲ ἦσαν αὐτῷ θυγατέρες ν') τοὺς ν' υἱοὺς τοῦ ἀδελφοῦ αὐτοῦ Αἰγύπτου διεχρήσατο χωρὶς ἐνὸς τοῦ Λυγκέως, ὃς καὶ ἐβασίλευσε μετ' οὐτόν.

Դանասը (+ Դանայուհիների) հիսուն դուստրերի ձեռքով կոտորեց իր եղբայր Եգիպտոսի հիսուն որդիներին, բացի (+ մեկից՝) Լինկեսից, որը նրանից հետո Թագավորեց:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 108.

Եգիպտոս, որ յառաջագոյն Այերիա կոչէր, յԵգիպտոսէ արքայէ անուանեցաւ:

Եգիպտոսը, որ նախկինում կրում էր Այերիա անունը, կոչվեց Եգիպտոս արքայի անունով:

Հմմտ. Sync. 182.5-7.

Օ καὶ Αἴγυπτος καλούμενος ἐβασίλευσεν Αἰγύπτου ἔτη ζη', μετονομάσας τὴν χώραν Αἴγυπτον τῷ ἰδίῳ ὀνόματι, ἣτις πρότερον Μεστραία, παρ' Ἑλλησι δὲ Ἄερία ἐλέγετο.

Եգիպտոս կոչեցյալը Թագավորեց Եգիպտոսին վաթսուներեք տարի՝ իր անունով Եգիպտոս վերակոչելով երկիրը, որ նախկինում կոչվում էր Մեստրայա, իսկ հույները մոտ՝ Այերիա:

Փիլոն, լին. 2.72 = Phil. QuGen 2.72.

Քանզի դիւրինն և վաղվաղ կոտն բաւական է, որ դէմ յանդիման և առաջի աչացն է՝ գայն միայն տեսանէ. իսկ իմաստունն գլխոտյն, այսինքն է զհանդերձեալն: Քանզի որպէս յետոյքն քան գառաջինսն վերջացեալ են, և հանդերձեալքն քան զներկայսս. որոց տեսութիւնն աստին և իմաստուն անցանէ, գաւրէն Լինկեսայ առասպելոյն (տարընթ. Լինկեսայ առասպելացելոյն) ամենայն ուստեք աչացեալ:

Օ εὐχερῆς καὶ ἀπερίσκεπτος τὰ ἐπ' εὐθείας καὶ πρὸ ὀφθαλμῶν μόνον ὄρα· ὁ δὲ φρόνιμος καὶ τὰ κατόπιν, τουτέστι τὰ μέλλοντα. Ὡσπερ γὰρ τὰ ὀπίσω τῶν ἔμπροσθεν ὑστερίζει, οὕτω καὶ τὰ μέλλοντα τῶν ἐνεστώτων, ὧν τὴν θεωρίαν ὁ ἀστειὸς μέτεισι, Λυγκέως δίκην πάντοθεν ὀμματωθεὶς.

Քանզի թեթև և փոփոխամիտ մարդն ընդունակ է տեսնել միայն այն, ինչ իր աչքերի դիմաց է, իսկ իմաստունը՝ հետազան, այսինքն՝ ապագան: Ինչպես հետագան հետևում է նախորդին, այնպես էլ ապագան՝ ներկային, և այն տեսնելուն իմաստուն ու սրամիտ մարդն է հետամուտ, ինչպես առասպելի (չիթ) Լինկեսը՝ ամեն կողմից աչալուրջ:

Վարդան, Հաւաքումն Ժ [20].

Ի վեցերորդի ամին Յեսուայ Դանաուս եղբայր Եգիպտոսի Թագաւորի Եգիպտացոց յիսուն դստերօք գլխուն որդիս եղբաւր իւրոյ կոտորեաց, և Լինգոս զերծեալ Թագաւորեաց, զոր ասեն ամենայն ուստեք աչացեալ, զի իմաստուն էր:

Հեսուի վեցերորդ տարում եգիպտացիների Թագավոր Եգիպտոսի եղբայր Դանասը հիսուն դուստրերի ձեռքով կոտորեց իր եղբոր հիսուն որդիներին, և Լինկեսը փրկվելով Թագավորեց, որի մասին ասում են, թե ամեն առումով աչալուրջ էր, քանի որ իմաստուն էր:

Մխիթար Այրիվանեցի 34.

Դանաւոս եղբայր Եգիպտոսի յիսուն դասերաւքն կոտորեաց գլխուն որդիս եղբաւրն իւրոյ. միայն մնաց Լինգոս իմաստունն՝ աչացեալն յամենայն կողմանց:

Եգիպտոսի եղբայր Դանաոսը հիսուն դասերի ձեռքով կոտորեց իր եղբոր հիսուն որդիներին. մնաց միայն իմաստուն Լինկեսը, որ ամեն կողմից աչալուրջ էր:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 264, հմմտ. Scalig. (Անանունից և Սինկելլոսից), p. 24.

Տասներորդ Դանաւոս ամս Ծ.: Մետասաներորդ Ղինկես ամս ԽԱ.: Երկոտասաներորդ Աբաս ամս ԻԳ.: Երեքտասաներորդ Պրոիտոս ամս ԷԺ.: Չորեքտասաներորդ Ակրիսիոս ամս ԼԱ.:

Δέκατος Δαναός, ἔτη ν΄. Ἐνδέκατος Λυγκεὺς ἔτη μα΄. Δωδέκατος Ἄβας ἔτη κγ΄. Τρισκαιδέκατος Προῖτος, ἔτη ιζ΄. Τεσσαρεσκαιδέκατος Ἀκρίσιος ἔτη λα΄.

Տասներորդը Դանաոսն էր՝ հիսուն տարի, տասնմեկերորդը Լինկեսը՝ քառասունմեկ տարի, տասներկուերորդը Աբասը՝ քսաներեք տարի, տասներեքերորդը Պրոիտոսը՝ տասնյոթ տարի, տասնչորսերորդը Ակրիսիոսը՝ երեսունմեկ տարի:

Հմմտ. Sync. 182.13.

Ἀργείων ἰ΄ ἐβασίλευσε Δαναός ἔτη νη΄... ἰα΄ ἐβασίλευσε Λυγκεὺς ἔτη λε΄... ἰβ΄ ἐβασίλευσεν Ἄβας ἔτη λζ΄... ἰγ΄ ἐβασίλευσε Προῖτος ὁ καὶ Περσεὺς ἔτη ιζ΄... ἰδ΄ ἐβασίλευσεν Ἀκρίσιος ἔτη λα΄.

Արգոսցիներին տասներորդը թագավորեց Դանաոսը՝ հիսունյոթ տարի ... տասնմեկերորդը թագավորեց Լինկեսը՝ երեսունհինգ տարի ... տասներկուերորդը թագավորեց Աբասը՝ երեսունյոթ տարի ... տասներեքերորդը թագավորեց Պրոիտոսը և Պերսեսը՝ տասնյոթ տարի ... տասնչորսերորդը թագավորեց Ակրիսիոսը՝ երեսունմեկ տարի:

Սամուէլ Անեցի 52.

Դանաւոս՝ամս Ծ.: Ղինկես՝ ամս ԽԱ.: Աբաս՝ ամս ԻԳ.:

Դանաոս՝ հիսուն տարի, Լինկես՝ քառասունմեկ տարի, Աբաս՝ քսաներեք տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 112 = Sync. 184.1.

ՅԱրգոս քրմացաւ դուստր Դանայեայ:

Ἐν Ἄργει ἱεράτευσεν Ὑπερμνήστρα Δαναοῦ.

Արգոսում Դանաոսի դուստրը (Հիպերմնեստրան) քրմուհի դարձավ:

39. Բելլերոփոնտես և Քիմերա

Հոմերոսը, Հեսիոդոսը և ուրիշ հեղինակներ (Hom. *Il.* 6.183, Hes. *Theog.* 325, Pind. *Ol.* 13.90, Hyg. *Fab.* 57.2) պատմել են, թե ինչպես Սիսիփոսի թոռ Բելլերոփոնտեսն իր թևավոր Պեգասոս<sup>1</sup> ձիու օգնությամբ սպանեց հրեշավոր Քիմերային<sup>1</sup>:

<sup>1</sup> Պեգասոսը դուրս էր թռել Գորգոն Մեդուսայի գլխից, երբ Պերսեսը գլխատել էր նրան (Apollod. 2.4.2 [2.41]). տե՛ս դրվագ 41: Բելլերոփոնտեսը ստացել էր այն Աթենայից (Paus. 2.4.1):



Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118 = Sync. 190.2-4.

Պէգասոսն թերևս ձի ինչ երազ էր ստացուած կնոջ ուրուք: Իսկ Պաղևատոս ասէ՝ թէ նաւ էր Բեղորոփոնտի Պէգասոսն:

ὁ Πήγασος, τάχα τις ἵππος ὀξύς, κτῆμα τῆς γυναικός· ὡς δὲ Παλαίφατος, Βελλεροφόντου πλοῖον ἦν ὁ Πήγασος.

Պեգասոսը թերևս մի արագաշարժ ձի էր, որ պատկանում էր ինչ-որ մի կնոջ: Իսկ Պաղեփատոսն ասում է, թե Պեգասոսը Բելլերոփոնտեսի նավն էր:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 93 = Alex β 1.13.31.

...գեղեցկութեամբ և արագութեամբ առաւել քան զՊէգասոսն...

... κάλλει διαφέροντα τοῦ Πηγάσου...

...գեղեցկությամբ և արագությամբ (չէք և արագությամբ) գերազանցելով Պեգասոսին...

Փիլոն Տիրակացի 933.

Առ Սիդոնացւոց թագաւորութեամբն Պէգասոս ձի ինչ էր երազ, ստացուած կնոջ ուրուք: Իսկ Պաղեփատոս ասէ, թէ նաւ էր Բաղերեփոնտի Պէսասոսն:

Սիդոնացիների թագավորության ժամանակ կար մի արագաշարժ ձի՝ Պեգասոսը, որ պատկանում էր ինչ-որ մի կնոջ: Իսկ Պաղեփատոսն ասում է, թե Պեգասոսը Բելլերոփոնտեսի նավն էր:

Թովմա Արծրունի Դ [78].

Ղամբիղէս ամս ԼԲ. առ սովաւ Պիգասոսն երևեցաւ, զոր համբաւեն ձի թեւաւոր էր:

Ղամբիղեսը՝ երեսուներկու տարի. սրա ժամանակ հայտնվեց Պեգասոսը, որ, ասում են, թեւավոր ձի էր:

Գրիգոր Նազ., Ի Բառ. 176 = Naz. In Bas. 21.3.5.

Ասեմ ... զարգիացի զՊեգասոսն, որոց ոչ այսքան էր ընդ յաւրան բերումն, որքան մեզ առ աստուած միմեամբք բերումն և հանդերձ իրերաւք:

ἂν λέγοιμι ... τὸν Ἀργεῖον Πήγασον, οἷς οὐ τοσοῦτον ἦν τὸ δι' ἀέρος φέρεσθαι ὅσον ἡμῖν τὸ πρὸς Θεὸν αἶρεσθαι δι' ἀλλήλων καὶ σὺν ἀλλήλοις.

Խոսեմ ... արգիական Պեգասոսի մասին, որի համար այնքան մեծ բան չէր օդի միջով տեղաշարժվելը, որքան մեզ համար՝ միմեանց օգնությամբ և միմեանց հետ Աստծո մոտ գնալը (բարձրանալը):

Նոննոս 2.12 [20] = Nonnos 43.8.1-11.

Քանզի պատարային քիմեոին վերստին բուսանելով, զոր յիշէ աստուածայինս այս Գրիգորիոս յարձանականս ի յիսներորդ պատմութեանն՝ ապականէր զգաւառն զիւկիացւոց. և

Τῆς γὰρ Παταρικῆς Χιμαίρας ἀναφανείσης περὶ ἧς μέμνηται καὶ ὁ θεῖος οὗτος Γρηγόριος ἐν τοῖς Στιγλιτευτικοῖς, ἐν ἱστορίᾳ πεντηκοστῆ καὶ λυμαιομένης τὴν χώραν τῶν Λυκίων, καὶ τοῦ

Քանզի երբ կրկին հայտվեց պատարական Քիմեոն, որին հիշատակում է աստվածային Գրիգորն «Արձանականի» հիսուներորդ գլխում, և որն ավերում էր լիկիացիների երկի-

<sup>1</sup> Քիմեոն ծնվել էր Տիփոնից ու Եքիդնայից (տե՛ս դրվագ 1):

Պոլիտոսի թագաւորելով Ղիւ-  
կիոյ՝ Տրաման առ Բեղեռով-  
փոնտոս սպանանել զքիմեռն:  
Եւ էր գազանն, որպէս անդա-  
նաւր ասացաք, առաջին կողմն  
որպէս առեծ և վերջինն՝ վի-  
շապ, և ի մէջ նոցա՝ քիմեռ,  
ուստ հուր թափէր, և էր գա-  
զանն դժուարայալթ: Արդ  
զձին Պեգասոս յաստուածուստ  
գտեալ Բեղեռովփոնտոս, գոր-  
մէ ասի թեւ ունել, և ի սմբա-  
կացն հուր թափէր, և մարտա-  
կից ունելով զթուրչան գերի-  
վարին, քանզի որպէս ասացի  
թեւաւոր էր՝ սպան զքիմեռն:

Προΐτου βασιλεύοντος τῆς Λυ-  
κίας, προσετάχθη ὁ Βελλερο-  
φόντης ἀποκτείνει τὴν Χίμαι-  
ραν. ἦν δὲ τὸ θηρίον ὡς κάκεισε  
παρεστήσαμεν, τοιοῦτον. πρόσ-  
θε μὲν λέων, ὅπισθε δὲ δράκων,  
μέση δὲ ἦν χίμαιρα. ἐξ ἧς χιμαί-  
ρας πῦρ ἀνεδίδοτο, καὶ ἦν δυσά-  
λωτον τὸ θηρίον. τὸν ἵππον οὖν  
τὸν Πήγασον ἐκ θεοῦ εὐρὼν ὁ  
Βελλεροφόντης, ὃς ἐλέγετο  
ἔχειν πτερὰ καὶ ὕδωρ ἀπὸ τῶν  
όνύχων ἀποστάζειν, ἐλθὼν σύμ-  
μαχον ἔχων τὴν πτῆσιν τοῦ ἵπ-  
που διὰ τὸ εἶναι πτερωτόν, ὡς  
εἶπον, καὶ ἀνείλε τὴν Χίμαιραν.

ըր, երբ Լիկիայում թագավո-  
րում էր Պրոիտոսը, Բելլերո-  
փոնտեսը Տրաման ստացավ  
սպանել Քիմերային: Եվ գա-  
զանը, ինչպես այնտեղ ասել  
ենք, այսպիսին էր. դիմացի  
կողմից՝ առյուծ, հետևից՝ վի-  
շապ, մեջտեղում՝ քիմերա<sup>1</sup>, ո-  
րից կրակ էր թափվում, և գա-  
զանին դժվար էր հաղթել: Ու-  
րեմն Բելլերոփոնտեսը, աստ-  
ծուց ստանալով Պեգասոս ձի-  
ուն, որի մասին ասվում է, թե  
թևեր ուներ ու սմբակներից  
հուր էր թափվում (Չուր էր  
կաթում), և գորավիզ ունենա-  
լով ձիու թուրջը, քանի որ,  
ինչպես ասացի, թեւավոր էր,  
սպանեց Քիմերային:

Գրիգոր Նազ., ճառ 4.94.6-7 [113] = PG 35.628.1-2.

Ոչ զՍողիւմիական գփիմե-  
ռան, զի երիւ և աննմանս  
զլուլսս մինչ զի լինել ահաւո-  
րագոյն:

οὐδὲ τὴν Παταρικὴν Χίμαιραν,  
ὅτι τρεῖς καὶ ἀνομοίους, ὥστε  
εἶναι φοβερωτέραν.

Ոչ էլ սողիմական<sup>2</sup> (պտտարա-  
կան) Քիմերային, որ երեք և  
իրար ոչ նման գլուխ (ուներ),  
այնպես որ ահավոր էր:

Նոննոս 3.47 [45] = Nonnos 4.50.1-5.

Յաղագս պտտրիկեցի քիմե-  
ռին: Է լեառն, յորում էր գա-  
զան ինչ, որոյ առաջին կողմն  
էր առիւծու, և վերջինն՝ վիշա-  
պի, և մէջն էր քւմեռ. յորմէ  
հուր ելեալ՝ սատակէր զպտտա-  
հեալսն: Իսկ յետոյ եկեալ  
Բեղեռովփոնտէս, ունելով զե-  
րիւարն Պեգասոս՝ սպան զքի-  
մեռն:

κατ τὴν Παταρικὴν χίμαιραν.  
Πάταρα πόλις τῆς Λυκίας. Λέ-  
γεται ὅτι ἐν ταῦτῃ ἐστὶν ὄρος, ἐν  
ᾧ ὄρει ἐστὶ θηρίον, ὃ πρόσθεν  
μὲν ἐστὶ λέων, ὅπισθεν δὲ δρά-  
κων, μέση δὲ ἦν χίμαιρα· ἐξ ἧς  
χιμαίρας πῦρ ἀνεδίδοτο, καὶ ἐ-  
λυμαίνετο τοὺς παριόντας. ὕσ-  
τερον δὲ ἐλθὼν ὁ Βελλεροφόν-  
της ἔχων τὸν Πήγασον ἵππον ἀ-  
πέκτεινε τὴν Χίμαιραν.

Պտտարական քիմերայի մասին:  
(+ Պտտարան քաղաք է Լիկիա-  
յում: Ասում են, թե այնտեղ)  
կա մի լեռ, որի վրա մի գազան  
կար, ում դիմացի կողմն առյու-  
ծի էր, իսկ հետևինը՝ վիշապի,  
մեջտեղինն էլ՝ քիմերա: Նրա-  
նից կրակ էր դուրս գալիս, և  
նա սպանում էր անցորդներին:  
Իսկ հետո եկավ Բելլերոփոնտե-  
սը, որն ուներ Պեգասոս ձիուն,  
և սպանեց Քիմերային:

<sup>1</sup> χίμαιρα բառացի նշանակում է՝ «էգ այծ»:

<sup>2</sup> Քիմերան «սողիմական» է կոչվում, քանի որ նույն Իոնիական, որ պատվիրել էր Բելլերոփոնտեսին սպանել Քիմե-  
րային, հետո ուղարկեց նրան կռվելու սոլիմոսների դեմ (Apollod. 2.3.2 [2.32]):

40. Զևս և Դանայե. Պերսևսի ծնունդը

Ալքրիսիոսին<sup>1</sup> պատգամախոսն ասաց, թե նրա դուստր Դանայեն որդի է ունենալու, որը նրան սպանելու է: Վախեցած Ալքրիսիոսը գետնի տակ պղնձե սենյակ կառուցեց և բանտարկեց աղջկան: Զևսը, ոսկու փոխակերպվելով ու տանիքից Դանայեի ծոցը թափվելով, մերձեցավ նրա հետ, և ծնվեց Պերսևսը (Apollod. 2.4.1 [2.34-35]): Դանայեի գրկանքները պատկերել են Էսքիլոսը՝ «Չկնորսներ», Սոփոկլեսը՝ «Դանայե» և Եվրիպիդեսը՝ «Դանայե» ու «Դիկտիս» կորած դրամաներում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 189.27-28.

Դանայեայ ... յորմէ Պերսևսն Կայսերական Պերսևսի (Հետ կապված դեպքերը). նրանից Պերսևսն էր:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 94 = Sync. 196.11-12.

Հասանէր Պերսևս Դանայեայ կալ յաշխարհն նոցա (ասորեստանեաց) տարեալ նաև ճ., և ի վախոստ դառնայր Պերսևս ի Դիոնիսեայ որդւոյ Սեմեղեայ: Կայսերական Պերսևսը զասով նրանց (նրա) երկիրը՝ տանելով Հարյուր նավ, և Պերսևսը փախավ Սեմեղեի որդի Դիոնիսոսից:

Գրիգոր Նազ., ճառ 4.122.2 [151] = PG 35.661.16-17.

Ամենայն լինելով յաղաքս կանանց Արամազդ... Կանանց Համար ամեն ինչ դառնալով՝ Արամազդը (Զևսը)...

Նոննոս 3.84 [63] = Nonnos 4.91.4-5.

Զևս լեալ ոսկի՝ ընդ Դանայի ծոցն յարձակեցաւ: Զևսը, ոսկի դառնալով, խառնակվեց Դանայեի Հետ:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Ստեփանոս Սիլևեսցուց) Ա.96.

Արդ ըստ պիտակոլթեանն ամենեին և անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս ... գիտնալ (Աղոնց ուղղ. գ Դանայե) պահէր Կրեսոս (Աղոնց ուղղ. <Ա>կրիւս<ի>ոս) յերկաթի կուսաստանս: Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, ինչպես, օրինակ ... Ակրիսիոսը Դանայեին պահում էր երկաթե կուսանոցում:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 112.

Ըստ պիտակոլթեան է ամենեին և անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս... «գիտնայէ պահէր [Ա]կրիւ[ս]իոս յերկաթի կուսաստանս: Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, ինչպես, օրինակ... Ակրիսիոսը Դանայեին պահում էր երկաթե կուսանոցում:

<sup>1</sup> Նա Արգոսի տասնչորսերորդ թագավորն էր (տե՛ս դրվագ 35, 38):

Եսայի Նչեցի, Քերակ. 64.

Արդ ըստ պիտակութեան է ամենևին անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս... զԴինայէ, պահէր Կրեսոս յերկաթի կուսաստանս:

Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, ինչպես, օրինակ... Կրեսոսը (Ակրիսիոսը) Դինայեին (Դանայեին) պահում էր երկաթե կուսանոցում:

Առաքել Սիւնեցի, Քերակ. 80.

Դինայ Յակոբայ դուստրն գեղեցիկ յոյժ, Կրիսպոս (տարընթ.՝ Կրէսպոս) իշխանն բռնաւոր չմիանայր, թէ գեղն չաւերէր և յայլոց պահէր յերկաթէ տան դափազի:

Հակոբի շատ գեղեցիկ Դինա դստեր հետ (Հմմտ. Ծն. 34) բռնակալ իշխան Ակրիսիոսը չէր միանա, եթե չփչացներ նրա գեղեցկութիւնը և չթաքցներ ուրիշներին երկաթե տան՝ վանդակի մեջ<sup>1</sup>:

#### 41. Պերսևս և Գորգոն Մեդուսա

Պերսևսն Ակրիսիոսի հանձնարարությամբ գլխատեց Գորգոն Մեդուսային, որը միակ մահկանացուն էր երեք Գորգոններից. նրանք վիշապի թեփուկներով պատված գլուխներ ունեին, վարազի խոշոր ժանիքներ, պղնձե ձեռքեր ու ոսկե թևեր, որոնցով թռչում էին, և իրենց տեսնողներին քար էին դարձնում (Apollod. 2.4.2 [2.40-41]): Օվիդիոսը քաջատրում է (Ov. Met. 4.791–803), թե ինչու միայն մի քրոջ մազերն էին օձախառն: Մի ժամանակ Մեդուսան գեղեցկուհի էր, իսկ ամենից գեղեցիկը նրա մազերն էին: Պոսեյդոնը բռնաբարեց նրան Աթենայի տաճարում, որն այդ մեղքի համար պատժեց Մեդուսային՝ նրա մազերն ահավոր օձեր դարձնելով: Պերսևսի որդի Պերսեսից էին սերում Պարսից թագավորները (Herodot. 7.150, Aesch. Pers. 79–84, Apollod. 2.4.5 [2.49], Tzetz. Sch. Lyc. 1413), իսկ Պերսեսի որդի Աքեմենոսից պարսիկները կոչվեցին աքեմենյաններ (Sch. Dion. Per. 1053.8–9):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118-120 = Sync. 189.28-190.2.

Պերսևս (ի վերայ) պարսից գաւրաժողով եղև. զԳորգոնա գլխատեաց. և ինքն այլ կին գեղեցիկ արար. որ ապշեցուցանէր գտեսաւղսն գեղով. մինչ քարանալ համարել:

Περσεὺς τὰς στρατείας ἐπετέλει καὶ ἐπὶ Πέρσας ἐστράτευσε, τὴν δὲ Γοργόνα ἐκαρატόμησεν ἐταίραν εὖμορφον διὰ κάλλους ἐξιστῶσαν τοὺς θεατάς, ὡς ἀπολιθοῦσθαι δοκεῖν.

Պերսևսն արշավեց պարսիկների դեմ, գլխատեց Գորգոնին և ինքը դարձրեց նրան այլ՝ գեղեցիկ կին (գլխատեց՝ Գորգոնին՝ գեղեցիկ հետերային<sup>2</sup>), որ գեղեցկութամբ ապշեցնում էր իրեն տեսնողներին, այնպես որ թվում էր, թե քարանում են:

Փիլոն Տիրակացի 933.

Պերսևս ի Պարսից վերայ գաւրաժողով եղև, և Պերսևսն արշավեց պարսիկների դեմ, գլխատեց

<sup>1</sup> Առաքել Սյունեցու այս դրվագը մյուս մեկնիչների պատմածի շատ ձևափոխված տարբերակն է. Դանայեն նույնացվել է Հակոբի դուստր Դինայի հետ, իսկ Կրիսպոս/Կրէսպոսը, որ Ակրիսիոսի անվան հետագա աղավաղման արդյունք է, կատարում է Եմովրի որդի Սյուլքեմի (Ծն. 34) դերը: Հետաքրքիր մի մանրամաս. երկաթե տուռն-վանդակը ավելի մոտ է հունական առասպելի պղնձե սենյակին, քան մյուս մեկնիչների երկաթե «կուսաստան»-ը:

<sup>2</sup> Հունարեն ἐταίρα բառը սխալմամբ թարգմանված է որպես ἑτέρα («այլ»):

Գորգոնա(յ) գլխատեաց, և ինքն այդ կին արար  
գեղեցիկ, որ ապշեցուցանէր զտեսաւազան գե-  
ղովն, մինչև քարանալ համարել:

Գորգոնին և ինքը դարձրեց նրան այլ՝ գեղե-  
ցիկ կին, որ գեղեցկությամբ ապշեցնում էր ի-  
րեն տեսողներին, այնպես որ թվում էր, թե  
քարանում են:

## 42. Եվրիսթևսի թագավորելը Միկեննում

Պերսևսի թոռ Եվրիսթևսը դարձավ Միկեննի<sup>1</sup> թագավորը (Apollod. 2.4.5 [2.53]), քանի որ  
Պերսևսը պատահաբար իր պսակ Ալրիսիոսին պայանելուց հետո ամաչել էր նրա ժառանգություն-  
ն ստանալու համար Արգոս վերադառնալ ու գնացել էր Տիրինսի արքա Մեգապենթեսի մոտ:  
Նրանք փոխանակություն էին արել. Մեգապենթեսը թագավորել էր արգոսցիներին, իսկ Պեր-  
սևսը՝ Տիրինսին (Apollod. 2.4.4 [2.48]) և մոտակայքում հիմնադրել էր Միկենն (Paus. 2.16.3):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 265, հմմտ. Scalig. (Անանունից և Սինկելլոսից), ր. 24.

Յետ որոյ ի Միկէնս փոխելոյ  
իշխանութեանն արգիացւոց՝  
յետ Ակրիսիոսի թագաւորեաց  
Եւրիսթևս ամս ինն:

Εἰς Μυκίνας μετατιθείσης τῆς  
Ἀργείων ἀρχῆς, μετὰ Ἀκρίσιον  
ἐβασίλευσεν Εὐρύσθεὺς ἔτη  
με΄.

Երբ դրանից հետո արգոսցի-  
ների իշխանությունը տեղա-  
փոխվեց Միկենն, Ակրիսիոսից  
հետո թագավորեց Եվրիսթևսը՝  
քառասունհինգ տարի:

Հմմտ. Sync. 144.22-24.

μετατεθείσης τῆς ἀρχῆς εἰς Μυκίνας μετὰ Ἀκρί-  
σιον ἐπὶ Εὐρύσθεώς, ὃν οἱ μὲν πρὸ Πέλοπος ἔτη  
φασὶ βασιλεῦσαι πγ΄, οἱ δὲ μετὰ Πέλοπα ἔτη με΄.

...երբ իշխանությունը տեղափոխվեց Միկենն,  
Ակրիսիոսից հետո՝ Եվրիսթևսին, որը, ոմանք  
ասում են, թագավորեց Պելոպսից առաջ 83 տա-  
րի, իսկ ոմանք՝ Պելոպսից հետո 45 տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126 = Sync. 209.2.

Մեկինացւոց թագաւորեաց Եւ-  
րիսթևս:

Λακεδαιμονίων α΄ ἐβασίλευσεν  
Εὐρύσθεὺς.

Միկենացիներին (լակեդեմո-  
նացիներին առաջինը) թագա-  
վորեց Եվրիսթևսը:

## 43. Հերակլեսի ծնունդը

Պերսևսի թոռ Ամփիտրիոնը բացակայում էր Թեբեից: Չնայ գիշերով եկավ և, մի գիշերը եռա-  
պատկելով ու Ամփիտրիոնի կերպարանքն ընդունելով, նրա կին Ալկմենեի հետ անկողին մտավ.  
ծնվեց Հերակլեսը (Apollod. 2.4.8 [2.61]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 279.

Հերակլեսայ՝ Աղկմենեայ և Արամազդայ որդւոյ: Հերակլեսի՝ Աղկմենեի և Արամազդի (Ջևսի) որդու:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 172 = Alex. α 1.46a8.16-18.

Այս Հերակլայ մեհեանն էր, τοῦθ' Ἡρακλῆος τέμενος ἦν, τὸ Ὅσα Հերակլեսի մեհյանն էր,

<sup>1</sup> Միկենն գտնվում էր Պելոպոննեսում, Արգոսից 11 կմ հարավ:

բայց նախկին Անփի(տ)րիո-  
նայ տուն էր: Սա տրտնջաց  
[*ուղղեղի*] ննջեաց] երիս գիշե-  
րիս Արամազդի ի մի թուեցեալ:

μὲν πρῶτον / Ἀμφιτρόωνος  
οἶκος· ὧδ' ἐκοιμήθη / τρεῖς  
νόκτας ὁ Ζεὺς εἰς μίαν ἀριθμή-  
σας.

բայց նախկինում Ամփիտրիո-  
նի տունը: Այստեղ Արա-  
մազդը (Ջևսը) քնեց երեք՝  
իբրև թե մեկ գիշեր:

Նոննոս 2.5 [16-17] = Nonnos 43.1.70-73.

...Հերակլէս: Սա ասի որդի գոլ  
Արամազդայ. քանզի Ջևս  
նմանեալ Ամփիտրիոնի՝ շղա-  
շարի ընդ Աղկմէովնեայ, և  
ծնանի ի նմանէ գՀերակլէս,  
որ և գմեծագոյն մրցմունսն  
զայնոսիկ կատարեաց:

Ἡρακλῆς οὗτος λέγεται υἱὸς γε-  
γονέναι τοῦ Διός. ὁ γὰρ Ζεὺς ὀ-  
μοιωθεὶς τῷ Ἀμφιτρόωνι συνε-  
γένετο τῇ Ἀλκμήνῃ. Καὶ ἐγεν-  
νήθη ὁ Ἡρακλῆς, ὃ καὶ τοὺς με-  
γάλους ἐκείνους ἄθλους διήνυ-  
σεν.

... Հերակլեսը: Սա, ասում են,  
Արամազդի (Ջևսի) որդին էր,  
քանի որ Ջևսը, նմանվելով  
Ամփիտրիոնին, կենակցեց  
Ալկմենեի հետ և ծնվեց Հե-  
րակլեսը, որը և գործեց այն  
մեծագույն սխրանքները:

Գրիգոր Նազ., ճառ 4.77.10-12 [86] = PG 35.604.4-6.

Ջրեքկին երեկորնեայն, զի  
առաւել ևս նոցա շնորհիցեմք,  
և գծնանելն մեծավայելչապէս,  
և որ զնահատակութիւնն զե-  
րեքտասաներորդ:

Τριέσπερον, ἵνα καὶ μᾶλλον αὐ-  
τοῖς χαρισώμεθα· τὸν καὶ γεν-  
νώμενον οὕτω, καὶ γεννῶντα  
μεγαλοπρεπῶς, καὶ ἄθλον ποιη-  
σάμενον τρισκαιδέκατον.

Եռաերեկոյին, որպեսզի ավելի  
շատ նրանց շնորհենք և՛ փա-  
ռահեղ կերպով ծնվելը (և՛  
այդպես ծնվածին և՛ փառահեղ  
կերպով ծնողին), և՛ տասներե-  
քերորդ սխրանքը:

Նոննոս 3.40 [42] = Nonnos 4.42.1-2.

Ասի Հերակլէս յերիս երե-  
կունս յղացեալ լինել և ծնեալ:

Λέγεται ὁ Ἡρακλῆς διὰ τριῶν  
ἑσπερῶν κνηθῆναι καὶ τεχθῆναι.

Ասում են, որ Հերակլեսը  
հղացվեց և ծնվեց երեք երե-  
կոյի ընթացքում:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 171 = Alex. α 1.46a4.

Հերակլէս՝ յԱրամազդայ և  
յԱղկմենայ սերմանեցաւ:

Ἡρακλῆς παρὰ Διός τε καὶ  
Ἀλκμήνης κατεσπάρη.

Հերակլեսը սերմանվեց Արա-  
մազդից (Ջևսից) և Ալկմենեից:

Փիլոն Տիրակացի 915.

Երակլէս՝ որդի Ջևսայ, ի յԱղկմենայ ծնեալ:

Ջևսի որդի Հերակլեսը՝ Ալկմենեից ծնված:

Թովմա Արծրունի Դ [78].

Սովսարմոս ամս ԺԵ., ի սորա Ը. ամին Հերակ-  
ղեայ նահատակութիւնքն եղեն:

Սոսարմոս՝ տասնհինգ տարի. սրա ութերորդ տա-  
րում տեղի ունեցան Հերակլեսի սխրանքները:

#### 44. Հերակլեսը և Թեսալիոսի հիսուն դուստրերը

Երիտասարդ Հերակլեսը, երբ կովարած էր, սպանեց Թեսալիեի թագավոր Թեսալիոսի կո-  
վերին բնաջնջող կիթերոնյան առյուծին: Թեսալիոսը հիսուն օր հյուրընկալեց Հերակլեսին և  
ամեն գիշեր նրա հետ անկողին էր ուղարկում իր հիսուն դուստրերից մեկին, քանզի ձգտում էր,

որ բոլորը Հերակլեսից զավակ ունենան: Հերակլեսը հիսունի հետ էլ մերձեցավ՝ կարծելով, թե իր հետ կենակցողը միշտ մեկն է: Հաղթելով առյուծին՝ նրա մորթին հազավ, իսկ երախն օգտագործեց որպես սաղավարտ (Apollod. 2.4.10 [2.66]): Աղջիկների հոր անունը հայտնի է նաև Թեստիոնու տարբերակով (Paus. 9.27.6–7, Athen. 13.4.6):

Թեոն 20 = Theon 67.8-11.

Առ Եփորոսի յառաջնումն գյաղաբս յիսնիցն Թեսպեայ դստերացն, զորս յուրվս կոյսս ելով, ասեն, Համանգամայն գիտանալ զՀերակլես:

παρὰ Ἡφώρω ἐν τῇ πρώτῃ τὸ περὶ τῶν πεντήκοντα Θεσπίου θυγατέρων, αἷς ἀπάσαις παρθένοις οὖσαις φασὶν ἅμα μιγῆναι τὸν Ἡρακλέα.

Ասում են, Եփորոսի առաջին գրքում [պատմվում է] Թեսպիոսի Հիսուն դուստրերի մասին, որոնց բոլորի Հետ, երբ նրանք կույս էին, միանգամից մերձեցավ Հերակլեսը:

Գրիգոր Նազ., ճառ 4.122.6 [152] = PG 35.661.20-21.

...յիսուն Թեստեայ դստերսն նահատակեալ Հերակլէս ի միում գիշերի:

ταῖς πεντήκοντα Θεστίου θυγατράσιν ἐναθλεύων Ἡρακλῆς ἐν μιᾷ νυκτί.

Հերակլեսը Թեստիոսի Հիսուն դուստրերի Հետ սխրանք գործեց մի գիշերում:

Նոննոս 3.40 [42] = Nonnos 4.42.2-6.

Ասի... Հերակլէս ընդ ամենայն դստերսն Թեստիոսի խառնակեցաւ, և յամենեցունց մանկունս ծնեալ իբր թէ վասն այսորիկ աստուածարեցին զնա, և զայս՝ երեքտասաներորդ նահատակութիւն նմա անուանեցին:

λέγουσιν... τὸν Ἡρακλέα ἐν μιᾷ νυκτί πάσαις ταῖς Θεστίου θυγατράσι μιγῆναι, καὶ παιδοποιῆσαι ἐξ αὐτοῦ πάσας, ὥστε καὶ διὰ ταῦτα καὶ θεοποιῆσαι αὐτὸν καὶ τοῦτο τὸ τρισκαίδέκατον ἄθλον αὐτοῦ ὀνομάσαι.

Ասում են, որ Հերակլեսը (+ մի գիշերում) Թեստիոսի բոլոր դուստրերի Հետ խառնակեց, և նա բոլորից (բոլորը նրանից) մանուկներ ունեցավ (ունեցան), այնպես որ դրա Համար նրան աստվածացրին և դա անվանեցին նրա տասներեքերորդ սխրանքը:

Թովմա Արծրունի Բ [67].

Որպէս և Յոյնք երբեմն Համբաւեցին՝ Հերակլէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր:

Ինչպես և Հույները մի ժամանակ պատմել են, որ Հերակլես աստվածը մի գիշերում պղծեց Հիսուն կույս:

#### 45. Հերակլեսի խելագարությունը

Եվրիպիդեսը «Հերակլես» ողբերգության մեջ պատմում է, որ Հերան խանդից<sup>1</sup> Հերակլեսին խելագարեցրեց, և նա անտահարեց իր կնոջը՝ Թեբեի թագավոր Կրեոնի դուստր Մեգարային ու իրենց որդիներին (Eur. Her. 923), իսկ ըստ Ապոլլոդորոսի՝ կրակի մեջ գցեց իրենց որդիներին, ինչպես նաև իր եղբայր Իփիկլեսի երկու զավակներին (Apollod. 2.4.12 [2.72]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172 = Alex. α 1.46a8.24-25.

Աստ Հերակլէս մոլեգնոտեցաւ, ճճ՝ Ἡρακλῆς μέμνηεν ἔνθεν

Այստեղ [Թեբեում] Հերակլեսը

<sup>1</sup> Հերան խիստ խանդում էր ուրիշ կանանցից Ձևսի զավակներին:

աստուստ և Հերակլէս ելեալ մոր-  
լորութեամբ սպան զՄեգարա  
զկիրնն և զմանկունսն խոցո-  
տեաց նետուք ի վայր:

οίστρηθεις Μεγάραν άνειλε τήν  
γυναίκα τοξέστας.

խելագարվեց, այստեղից դուրս  
գալով խելագարված՝ սպանեց  
իր Մեգարա կնոջը և մանուկ-  
ներին (չիք և մանուկներին)  
նետահարեց:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.14-15 [202] = PG 35.705.12-13.

Դարձեալ Հերակլէս մորի, մա-  
նաւանդ ի մոլելոյն դադարէ:

πάλιν Իρακλής μαίνεται, μάλ-  
λον δὲ μαινόμενος πέπνυται.

Դարձյալ Հերակլեսը խելագար-  
վում է, բայց ավելի շուտ՝ վերջ  
է տալիս խելագարությանը:

Նոննոս 4.23 [73] = Nonnos 5.23.1-5.

Մեգարէ կոչեցեալն դուստր  
Կրէտովնտոսի՝ բիւթենացոց  
թագաւորի, ամուսնացեալ ընդ  
Հերակլեայ՝ մանկունս ծնաւ ի  
նմանէ: Այլ Հերա թշնամու-  
թիւն ունելով ընդ Աքրիդ-  
դեայ վասն բազում պատճա-  
ռանաց հասուցանէ նմա մո-  
լութիւն. և նա մոլեալ՝ սպան  
զգաւակսն ծնեալս ի Մեգա-  
րեայ:

Μεγάρη οὕτω καλουμένη, Κρέ-  
οντος τοῦ Θηβῶν βασιλέως θυ-  
γάτηρ, ἐγαμήθη τῷ Իρακλεΐ.  
καὶ ἐπαιδοποίησεν ἐξ αὐτῆς. ἡ  
δὲ Իρα, ἀπεχθῶς ἔχουσα πρὸς  
τὸν Իρακλέα διὰ πολλά, ἐνέ-  
βαλεν αὐτῷ μανίαν. καὶ μανεὶς  
ἀπέκτεινε τὰ ἑαυτοῦ τέκνα τὰ  
ἐκ τῆς Μεγάρης.

Բյուլթանացիները (Թեբեր) թա-  
գաւոր Կրետոսի Մեգարա անու-  
նով դուստրը, ամուսնանալով  
Հերակլեսի հետ, մանուկներ ու-  
նեցաւ նրանից: Իսկ Հերան,  
բազում պատճառներով թշնա-  
մաբար տրամադրված Աքրիլեսի  
(Հերակլեսի) հանդեպ, խելագա-  
րեցրեց նրան, և, խելագարվե-  
լով, նա սպանեց Մեգարայից իր  
զավակներին:

#### 46. Հերակլէս և Նեմեական առյուծ

Եվրիսթեսի<sup>1</sup> հրամանով Հերակլեսի գործած տասներկու սխրանքներից առաջինը Նեմեական  
առյուծին սպանելն էր. սա Տիփոնի ու Երիդանայի որդին էր՝ մի անխոցելի գազան: Երբ նետը նրան  
չխոցեց, Հերակլեսն առյուծին բռնեց ու խեղդամահ արեց (Apollod. 2.5.1 [2.74]): Էրատոսթենեսը հի-  
շատակում է համաստեղություն դարձած Նեմեական առյուծին (Eratosth. *Catast.* 1.12):

Գրիգոր Նազ., ճառ 5.5.10-11 [166] = PG 35.669.35.

Եւ զԱռիւծն, և զայլսն զորս ի  
վերայ այսորիկ չարի ճանաչէս,  
կամ աստուածս և կամ աստեղս  
առնելով:

καὶ τὸν Λέοντα, ἄλλους τε  
ὄσους ἐπὶ τῷ κακῷ γνωρίσας, ἢ  
θεοὺς ἢ ἀστέραις ἐποίησας.

Ե՛վ առյուծին, և՛ մյուսներին,  
որոնց գիտես այս չարիքի  
առիթով, դարձնելով (դարձրել  
ես) աստվածներ կամ աստղեր:

Նոննոս 4.1 [65-66] = Nonnos 5.1.30-37.

Իսկ առևծն ոմն վայրենի ի  
գաւառին Նեմեիոյ, որ է մասն  
ինչ Պեղղովպոնի, վնասէր գա-  
ւառականացն. այլ Թեսևս թա-  
գաւոր գոլով միւլկենացոց, ո-

λέων ζῶον ἄγριον ἦν ἐν τῇ Νε-  
μέα (χώρα δὲ αὐτῆ τῆς Πελο-  
ποννήσου). οὗτος οὖν ὁ λέων ἐ-  
λυμαίνετο τοὺς ἐν τῇ χώρᾳ. Θη-  
σεὺς οὖν βασιλεύων τῶν Μυ-

Մի վայրենի առյուծ Նեմեա  
երկրում, որ Պելոպոննեսոսի  
մաս (երկրամաս) է կազմում,  
վնասում էր երկրի բնակիչնե-  
րին: Իսկ Թեսևսը<sup>2</sup>, լինելով մի-

<sup>1</sup> Եվրիսթեսը Միկենեի թագավորն էր (դրվագ 38, 42): Հերակլեսը դատապարտվեց Եվրիսթեսի հրամանները կա-  
տարելու՝ որպես պատիժ խելագարության պահին իր զավակներին սպանելու համար (դրվագ 45):

<sup>2</sup> Եվրիսթեսի անունը սխալմամբ փոխարինվել է Թեսևսով արդեն հույներն սկզբնազրույց:



խացեալ ընդ Հերակլի՝ արձակէ զնա սպանանել զառեւծն. և եկեալ Հերակլէս՝ սպան զնա, և աստուածքն կամեցեալ փառաւորել զԶանն Հերակլի՝ ի ձեռն աստեղաց կենդանաբեցին յերկինս զառեւծն, և այժմ է ընդ աստեղս:

κηῶν καὶ μνηῶν τῷ Ἡρακλεῖ, πέμπει τὸν Ἡρακλέα ἐπ' ἀναιρέσει τοῦ λέοντος, καὶ ἐλθὼν ὁ Ἡρακλῆς ἀνεῖλεν αὐτόν. καὶ οἱ θεοὶ βουλόμενοι ἐπίδοξον ποιῆσαι τὸν ἀγῶνα τοῦ Ἡρακλέους δι' ἄστρον ἐζωγράφησαν ἐν τῷ οὐρανῷ τὸν λέοντα. καὶ νῦν ἐστὶν ὁ Λέων ἐν ἄστροις.

կենացիների թագավորը և ռիուենայրով Հերակլեսի դեմ, նրան ուղարկեց առյուծին սպանելու: Հերակլեսը եկավ սպանեց նրան: Եվ աստվածները, ցանկանալով փառաբանել Հերակլեսի սխրանքը, աստղերի օգնութեամբ առյուծին պատկերեցին երկնքում: Եվ այժմ (+ առյուծն) աստղերի թվում է:

#### 47. Հերակլես և Լերնեյան հիդրա

Հերակլեսի երկրորդ սխրանքը երկիրն<sup>1</sup> ամայացնող Լերնեյան հիդրային սպանելն էր. նա հսկա վիշապ էր, ինը գլուխ ուներ, մեջտեղինը՝ անմահ: Երբ Հերակլեսը գուրգով մի գլուխ ջախջախում էր, դրա տեղում երկուսն էին բուսնում: Հերակլեսին օգնության եկած եղբորորդի Իոլապոսը հրկիզեց մոտակա անտառի մի մասը և, խանձողներով խարելով գլուխների ծիլերը, արգելակեց դրանց աճը: Անմահ գլուխը Հերակլեսը կտրեց, թաղեց ու մի ծանր քար դրեց վրան (Apollod. 2.5.2 [2.77-80]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128.

ԶՀիդրայ կնոջ ումեմնէ պատմէ Պլատոն, թէ անհնարին սփեւստէս էր:

Ոմն Հիդրա կնոջ մասին Պլատոնը պատմում է, որ անհաղթ սփեւստես էր:

Հմմտ. Sync. 191.13-14.

Τὴν δὲ ὕδραν τὸ μυθεύομενον ζῶον ὁ Πλάτων σοφίστριαν λέγει.

Պլատոնն ասում է, որ առասպելական Հիդրա կենդանին սփեւստուհի էր<sup>2</sup>:

Փիլոն Տիրակացի 933.

Եւ զՀիդրեայ՝ զկնոջ ումեմնէ Պլատովն պատմէ, թէ անհնարին սփեւստէս էր...:

Եվ ոմն Հիդրա կնոջ մասին Պլատոնը պատմում է, որ անհաղթ սփեւստես էր:

Միխայել Ասորի Ա 55.

Եւ աստ երեւցաւ կինն Հեդրաս անհնարին Սոփեստէսն զոր ասէ Պլատոն:

Այդ ժամանակ ի հայտ եկավ կին Հեդրաս (Հիդրա) անհաղթ սփեւստեսը, ինչպես ասում է Պլատոնը:

Գրիգոր Նազ., ճառ 4.94.4-6 [113] = PG 35.625.44-628.1.

ԶՀիդրասն ոչ ոք երբէք ասաց ընտանեգոյն, զի ինն գլուխս փոխանակ միոյն բուսուցա-

Τὴν ὕδραν δὲ οὐδεὶς πώποτε εἶπεν ἡμερον, ὅτι ἐννεα κεφαλὰς ἀντὶ μιᾶς προῦβάλλετο, εἴ τι τῷ

Ոչ ոք երբեք Հիդրային ընտանի չի համարել, քանի որ մեկի փոխարեն ինը գլուխ էր աճեց-

<sup>1</sup> Արգոլիս երկրամասը՝ Արգոս կենտրոնով, որտեղ գտնվող Լերնա լճում էր հրեշի որջը:

<sup>2</sup> Plat. Euthydemus 297b.10-c.4. Ἡρακλέους, ὃς οὐχ οἶός τε ἦν τῆ τε ὕδρα διαμάχεσθαι, σοφιστρία οὖση καὶ διὰ τὴν σοφίαν ἀνείσθη, εἰ μίαν κεφαλὴν τοῦ λόγου τις ἀποτέμωι, πολλὰς ἀντὶ τῆς μιᾶς – «... Հերակլեսի, որն ի վիճակի չէր Հիդրայի դեմ կռվել, քանի որ նա սփեւստուհի էր և, եթե մեկը կտրում էր նրա մի գլուխը, նա իմաստությամբ մեկի փոխարեն շատ գլուխներ էր աճեցնում»:

նէր, եթէ ինչ առասպելին  
հաւատալի է:

նում, եթե որևէ բանում կարե-  
լի է առասպելին հավատալ:

Նոնոս 3.46 [45] = Nonnos 4.49.1-7.

Առասպելեալ եղև գազան ինչ  
գոլ ի Լեռնէ՝ յիսնագլխի, և  
այլք ասեն՝ իննագլխի,  
գզլուխսն աւճից ունելով. գոր  
եկեալ Հերակղէս հանդերձ Հիւ-  
ղոսաւ մանկամբ իւրով՝ սպան:  
Այլ առասպելաբանի և այս, թէ  
ի հատանել միոյ գլխոյն՝ ի  
տեղւոջ անդ երկու գլուխք  
բուսանէին, որպէս զի լինել  
գազանին հարիւրագլխի: Այլ  
Հիւղղոս իմացեալ այսպիսի  
ինչ, հուր բերեալ և զհատեալ  
գլխոցն տեղիս այնու այրեալ՝  
այնպէս կարացին սպանել զնա:

Θηρίον μυθεύεται περί τὴν Λέρ-  
νην πεντηκοντακέφαλον, οἱ δὲ  
ἐννεακέφαλον· τὰς δὲ κεφαλὰς  
εἶναι ὀφέων. ὃ θηρίον ἐλθὼν ὁ  
Ἡρακλῆς μετὰ Ὑλλου τοῦ θε-  
ράποντος αὐτοῦ ἀπέκτεινε. μυ-  
θεύεται δὲ καὶ τοῦτο, ὅτι, τεμ-  
νομένης μιᾶς κεφαλῆς αὐτοῦ,  
δύο παρεφύοντο, ὥστε γίνεσθαι  
ἑκατὸν κεφαλὰς. ὁ δὲ Ὑλλος  
μαθὼν τοῦτο, πῦρ ἔφερε, καὶ  
τὴν τεμνομένην κεφαλὴν ἐνε-  
πίμπρα. καὶ οὕτως ἴσχυσαν πά-  
σας ἀποκτεῖναι.

Պատմում են, որ Լերնեում կա  
մի հիսուսագլխանի գազան, իսկ  
ուրիշներն ասում են, թե ինը-  
գլխանի՝ օճի գլուխներով. նրան  
(այդ գազանին) Հերակլեսը, իր  
Հիլլոս որդու (գինականի) հետ  
գալով, սպանեց: Նաև պատմում  
են, թե երբ մի գլուխը հատվում  
էր, այդ տեղում երկու գլուխ էր  
բուսնում, այնպես որ գազանը  
գարձալ հարյուրգլխանի: Իսկ  
Հիլլոսը, այդ իմանալով, կրակ  
բերեց և կտրվող գլուխների տե-  
ղը դրանով այրեց. այդպես կա-  
րողացան նրան (բուր [գլուխ-  
ները]) սպանել:

#### 48. Դիոմեդեսի զամբիկները

Որպես ութերորդ սիրանք Եվրիսքեսը Հերակլեսին պատվիրեց Միկենե բերել Արեսի որդի  
թրակացի Դիոմեդեսի մարդակեր զամբիկներին. նա սովորեցրել էր դրանց մարդու միս ուտել  
(Apollod. 2.5.8 [2.97]): Դիոմեդոսը հաղորդում է (Diod. Sic. 4.15.3–4), որ Հերակլեսը Դիոմեդեսին  
ձիերի կեր դարձրեց:

Թեոն 106 = Theon 96.8-10.

Դիոմեդէս Թրակացի ի ձիա-  
բուծութեան ծախեալ ասացաւ  
յիւրոց ձիոցն կորնչել:

Διομήδης δὲ Θραξ ἐς ἵπποτρο-  
φίαν ἐξαναλωθεὶς ἐλέχθη ὑπὸ  
τῶν αὐτοῦ ἵππων ἀπολωλέναι.

Թրակացի Դիոմեդեսի մասին ա-  
սում են, որ, ձիերին կեր դառ-  
նալով, կործանվեց իր ձիերից:

#### 49. Ամազոններ

Թերմոդոն գետի մոտ ապրում էր ամազոնների ցեղը: Նրանք տղամարդու կենցաղ վարող և  
ռազմի գործերում աչքի ընկնող կանայք էին: Եթե երբևէ կենակցում էին ու ծննդաբերում,  
պահում էին միայն աղջիկներին և ճզմում նրանց աջ կուրծքը, որպեսզի նիզակ նետելուն չխան-  
գարի, իսկ ձախը թողնում էին, որպեսզի կաթ տան (Apollod. 2.5.9 [2.98]): Այլ ավանդություն էլ  
կա, ըստ որի՝ նրանք այրում-վերացնում էին աջ կուրծքը, ուստի նրանց անունը բացատրվում է  
իբրև ժխտական  $\alpha$  մասնիկ +  $\mu\alpha\zeta\acute{o}\varsigma$  «կուրծք» (Diod. Sic. 2.45.3, 3.53.3): Ամենավաղ հունական  
ավանդության համաձայն՝ այդ ցեղն ապրում էր Փոքր Ասիայի արևմտյան ափին՝ Տրուադայում  
և դրանից հարավ (Strabo 12.321-24 13.4, 6, 14.1-4՝ Եփորոսի վկայակոչմամբ): Հետագայում հու-  
նական ավանդությունը տեղադրում էր նրանց Թեմիսկիրա քաղաքում՝ Թերմոդոն գետի ափին  
(Hom. *Il.* 3.189, Herodot. 4.100, Eur. *Her.* 408-415, Ap. Rhod. *Argon.* 2.990-993, Plut. *Thes.* 26-27,  
Strabo 1.3.7, 2.4.21)<sup>1</sup>: Ամազոններն արշավել են Աթենքի դեմ (քանի որ Թեսեսը մասնակցել էր

<sup>1</sup> А. Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, с. 61.

իրենց դեմ Հերակլեսի արշավանքին և մի քանիսին առևանգել) և դիրքեր գրավել Արեոպագոսի շուրջը, բայց պարտվել աթենացիներից (Apollod. E1.16): Ամազոն Պենթեսիլեան մասնակցել է Իլիական պատերազմին Տրոյայի կողմից (Apollod. E 5.1, Quint. Smyrn. 18-857):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132 = Sync. 201.15.

Ամազոնացի վերայ Աթէնաց  
զաւրաժողովն:

Ἀμαζόνες κατὰ Ἀθηναίων ἐ-  
στράτευσαν.

Ամազոնների արշավանքն (ա-  
մազոններն արշավեցին) Ա-  
թենքի դեմ:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 320-321<sup>1</sup> = Alex. α 3.25.5-10.

Ամազոնեայք քաջք և առա-  
ջինք զաւրու, հզաւր թագա-  
ւորիդ Աղեքսանդրոս խնդալ:  
Գրեցաք քեզ, զի գիտացես  
յառաջ քան զմտանելն քո ի  
տեղիս, զի մի գուցէ անփա-  
ռաւոր դարձցիս անդրէն: Ի  
ձեռն այսր թղթոյ հաւաստի  
գիտուն առնեմք զքեզ իմա-  
նալ զիրս աշխարհիս մերոյ և  
զմեզ: Զի եմք քաջք և առա-  
քինիք, քանզի եմք ամազոնա-  
կան գետոյն այլ յայնկոյս և  
բնակեալ եմք ի կղզոջ. և  
չըջաչափութիւն իւր տարոյ  
գնաց, և շուրջ զիւրեաւ գետ  
է, որ ոչ ունի սկիզբն, և է մի  
մուտ: Եւ եմք բնակեալքս՝  
կոյս բիւրք քսան գինուորք,  
որ զարանց փորձ ոչ գիտեմք,  
և արու առ մեզ ոչ գոյ: Եւ  
արքն մեր յայնկոյս գետոյն  
բնակեալ են, զաշխարհին վի-  
ճակ ընդ որ կալեալ ի վայել-  
չութիւն: Եւ մեք տարոյ-տա-  
րոյ առնեմք կացուրդքս,  
տաւնս ամէնաժողովս, ձիա-  
սպանութիւնս առնելով գեն-

Ἀμαζόνων αἱ κράτισται (καὶ ἡ-  
γούμεναι) Ἀλεξάνδρῳ βασιλεῖ  
χαίρειν. γεγραφέμεν σοι, ὅπως εἰ-  
δῆς πρὸ τοῦ σε ἐπιβάλλειν ἐπὶ  
τοὺς τόπους, ἵνα μὴ ἀδόξως ἀνα-  
λύσης· διὰ τῆς ἐπιστολῆς διασα-  
φοῦμέν σοι τὰ κατὰ τὴν χώραν  
ἡμῶν καὶ ἡμᾶς οὕσας σπουδαίας.  
ἔσμεν γὰρ τοῦ Ἀμαζονικοῦ  
ποταμοῦ πέραν· οἰκοῦμεν δὲ ἐν  
νήσῳ· ἔστι δὲ τὸ περίμετρον αὐ-  
τῆς ἐνιαυτοῦ πορεία. κύκλῳ δὲ  
ποταμὸς οὐκ ἔχων ἀρχήν· ἔστι δὲ  
μία πρόσοδος. ἔσμεν δὲ αἱ κατοι-  
κοῦσαι παρθένοι ἔνοπλοι  
μυριάδες κ'· ἄρσεν δὲ παρ' ἡμῶν  
οὐδὲν ὑπάρχει· οἱ δὲ ἄνδρες  
πέραν τοῦ ποταμοῦ κατοικοῦσι  
τὴν χώραν νεμόμενοι. ἡμεῖς δὲ  
κατ' ἐνιαυτὸν ἄγομεν πανήγυριν,  
ἵπποφονίαν θύουσαι τῷ Διὶ καὶ  
Ποσειδῶνι καὶ Ἡφαίστῳ ἐπὶ  
ἡμέρας λ' ...

Քաջ և զորավար ամազոնե-  
րից Աղեքսանդրոս հզոր թա-  
գավորին ողջույն: Գրել ենք  
քեզ, որ նախքան այս վայրերը  
մտնելն իմանաս, որպեսզի ան-  
փառունակ չվերադառնաս:  
Այս նամակով քեզ տեղեկաց-  
նում ենք մեր երկրի հանգա-  
մանքների ու մեր մասին,  
քանի որ մենք քաջ (չիք) և  
առաքինի ենք: Չէ՞ որ մենք  
Ամազոնական գետից այն  
կղզմ ենք և բնակվում ենք  
կղզու վրա. դրա շրջագիծը  
մեկ տարի գնալու ճանապարհ  
է, իսկ շուրջը գետ է, որ  
սկիզբ չունի, և միայն մեկ  
մուտք կա: Մենք՝ բնակիչ-  
ներս, քսան բյուր գինված  
կույսեր ենք, որ տղամարդու  
փորձ չունենք (չիք որ տղա-  
մարդու փորձ չունենք), և  
մեզ մոտ տղամարդ չկա: Մեր  
տղամարդիկ բնակվում են  
գետի մյուս կողմում՝ տիրե-  
լով այդ երկրին իբրև վայելք  
(չիք): Իսկ մենք ամեն տարի  
տոնակատարություն ենք

<sup>1</sup> Հմմտ. նաև Աղեքսանդրի պատմութիւն Բ 436-437: Ա և Բ խմբագրությունների բնագրերն այս հատվածում քիչ տարբերություններ ունեն և համարյա նույնական են: Աղեքսանդրի պատմության տարբեր խմբագրությունների հրատարակիչ Հ. Միմոնյանի կարծիքով՝ Ա խմբագրությունն ավելի հին է և բուն քարգմանությունն է: Սակայն այդ վարկածը վիճարկել են տարբեր հետազոտողներ. բնագրերը մանրագնի կերպով համեմատելով՝ նրանք հաստատել են, որ հունարենին ավելի մոտ է Բ խմբագրությունը, չնայած դրա մեջ ներմուծված են Խաչատուր Կեչառեցու, Չաքարիա Գնունեցու և Գրիգորիս Աղթամարցու կաֆաները, իսկ Ա-ն Բ-ի խմբագրված ու մի փոքր կրճատված տարբերակն է: Չուստո Տրայինյայի և Պիտեր Քաուրի կարծիքներն այս մասին ամփոփ տե՛ս Aram Topchyan, "The Alexander Romance in Medieval Armenian Historiography," *L'historiographie médiévale d'Alexandre le Grand*, ed. C. Gaullier-Bougassas, Brepols, 2011, pp. 88-89:

մունն Արամազդայ և Պոսիդոնի և Հեփեստեայ, առուրս երեսուն: Եւ այսպէս անցանեմք ընդ գետն յայնկոյս առարսն, և նոքա առնեն առ մեզ ամուսնութիւն մերձաւորութեան առուրս երեսուն:

Եւ ոյք կամին ապականել զոմանս ի մէնջ, անցանեն, մնան անդրէն առ արսն: Եւ զէգն, որքան միանգամ ծնանին, եղեալ եաւթնամեայս, անցուցանեն առնեն առ մեզ: Իսկ յորժամ թշնամի գաւր ի մերոյ աշխարհիս եկեսցէ, ելանեմք ընդ դէմ նոցա հեծելս աւելի քան զբիւր երկոտասան, և այլք զկղզիին պահեն, և գամք ընդ յառաջ ի սահմանս, և արքն կազմեալ զինի մեր գան: Եւ եթե ոյք ի պատերազմին վիրաւոր լիցի, կերակրեալ լինին ի նուիրական սեղանոյն Արամազդայ, և ամենեքեան նմա երկիր պազանեն երկիցս յառուրն և ազգայնոցն պսակ յարայիչելի: Եւ որ ոք անկցի ի պատերազմին պաշտպանելով յաշխարհիս, մերձաւորք նորա ինչս առնուն ոչ սակաւ: Եւ եթէ ացծէ ոք [մարմին] ի թշնամեացն ի կղզիս, կա առաջի յաղթութեան նշանակունելով արծաթիս և ոսկեղէն ոչ սակաւ և ռոճիկ կերակրոց մինչև ի կեանս իւր, մինչ զի

... ὅσοι δὲ βούλονται διακορευσαί τινας ἐξ ἡμῶν, καταμένουσι πρὸς αὐτάς· καὶ τὰ θηλυκά, ὅσα ἂν τίκτωσι, γενόμενα ἐπτέτη διαβιβάζουσι πρὸς ἡμᾶς. ὅταν δὲ πολέμοι ἐπιστρατεύωσι πρὸς ἡμᾶς, ἐκπορευόμεθα ἐφ' ἵππων αἱ πλεῖσται μυριάδες κ'· αἱ δὲ λοιπαὶ τὴν νῆσον φυλάττουσιν. καὶ ἐρχόμεθα εἰς συνάντησιν ἐπὶ τὰ ὄρια· οἱ δὲ ἄνδρες ὀπισθεν παρατεταγμένοι ἀκολουθοῦσιν. καὶ εἴ τις ἂν ἐν τῷ πολέμῳ τραυματίας γένηται... προσκυνεῖται διὰ τῆς ἡμέρας ἐπίετε φρέκετε... συγγενείαις στέφανος ἀείμνηστος ὑπάρχει. εἴ τις δ' ἂν πέση ἐν τῷ πολέμῳ ὑπερμαχοῦσα, αἱ ἔγγιστα αὐτῆς χρήματα λαμβάνουσιν οὐκ ὀλίγα. ἐὰν δὲ τις σῶμα ἀναγάγῃ τῶν ἐναντίων, πρόκειται ἄθλον χρυσοῦ καὶ ἀργύρου πλῆθος καὶ σίτησις διὰ βίου. ὥστε ἡμᾶς ἀγωνίζεσθαι ὑπὲρ τῆς ἰδίας δόξης. κἂν πολεμίων κρατήσωμεν ἢ φύγωσιν, αἰσχρὸν αὐτοῖς καταλείπεται εἰς ἅπαντα τὸν χρόνον· ἐὰν δὲ ἡμᾶς νικήσωσιν, ἔσονται γυναῖκας νενικηκότες.

կազմակերպում՝ երեսուն օրվա ընթացքում ձիեր սպանելով որպես զոհաբերություն Արամազդին (Զևսին), Պոսիդոնին ու Հեփեստոսին: Եվ այսպես անցնում ենք գետի մյուս կողմը, տղամարդկանց մոտ, և նրանք երեսուն օր մեզ հետ ամուսնական կապ են ունենում (չիք ողջ նախադասությունը):

Եվ ովքեր ցանկանում են մեզանից ոմանց կուսությունից զրկել<sup>1</sup>, մնում են նրանց<sup>2</sup> մոտ: Եվ իգական սեռի մասնակներին, որքան որ ծնում են, յոթամյա դառնալուց հետո տեղափոխում են մեզ մոտ: Իսկ երբ թշնամի գորքեր են մեր երկիրը<sup>3</sup> գալիս, նրանց դեմ ենք ելնում ավելի քան տասներկու<sup>4</sup> բյուր հեծյալներով: Եվ մյուսները կղզին են հսկում, և գալիս ենք ընդառաջ, դեպի սահմանները: Իսկ տղամարդիկ շարքով հետևում են մեզ: Եվ եթե մեկը պատերազմում վիրավորվում է, ուտում է Արամազդի (Զևսի) նվիրական սեղանից (չիք ուտում է Զևսի նվիրական սեղանից), և բոլորը նրան օրը երկու անգամ (ամբողջ օրվա ընթացքում) երկրպագում են<sup>5</sup>, և ազգակիցների մոտ հարատև հիշվող պսակ է լինում: Երբ մեկը պատերազմում ընկնում է՝ կռվելով մեր երկրի համար, նրա մերձավորները ոչ քիչ

<sup>1</sup> Այստեղ ներկայացված հունարեն *α* խմբագրության մեջ «ովքեր» արական սեռի է, իսկ *β* խմբագրության մեջ՝ իգական, *β*-ում «ոմանց» բացակայում է, իսկ «կուսությունից զրկել» կրավորական սեռով է: Այսպիսով *β*-ի բնագիրն է՝ «Մեզանից ովքեր ցանկանում են կուսությունից զրկվել»:  
<sup>2</sup> *α* խմբագրության մեջ՝ «նրանց» իգական սեռի է, *β* խմբագրության մեջ՝ արական: Հետևաբար *α*-ում տղամարդիկ են մնում կանանց մոտ, իսկ *β*-ում՝ կանայք տղամարդկանց մոտ, ինչն ավելի է համապատասխանում պատմության տրամաբանությանը: Հմմտ. Աղեքսանդրի պատմութիւն Բ 437. «Եւ որք կամին ապականի ի մէնջ, նորա մնան առ արսն մեր»:  
<sup>3</sup> Այսպես է նաև հունարեն *β* խմբագրության մեջ, իսկ *α*-ում՝ «մեզ մոտ»:  
<sup>4</sup> Այսպես է նաև *β*-ում, իսկ *α*-ում՝ «քսան»:  
<sup>5</sup> Հունարեն *α* խմբագրության մեջ արան հաջորդում է անհասկանալի *ἐπίετε φρέκετε...*:

մեզ ամենեցուն նահատակել վասն մերոյ աշխարհիս: Իսկ եթէ թշնամեացն յաղթեսցուք կամ փախիցեն, ամալթ նոցա կա և մնա, զհետ նոցա երթալով յամենայն ժամանակս: Եւ եթէ մեզ յաղթեսցեն, եղիցի կանաց ամազուհեաց յաղթեալ:

ուհեցվածք են ստանում: Իսկ եթե մեկը թշնամու մարմին<sup>1</sup> է բերում կղզի (չէք), նրան հասնում է մրցանակ՝ շատ արծաթ ու ոսկի և սնվելու ռոճիկ ցկյանս: Այնպես որ մենք բոլորս պատրաստ ենք նահատակվել մեր երկրի (սեփական փառքի) համար: Եվ եթե թշնամիներին հաղթենք կամ փախուստի դիմեն, նրանց ամոթ է մնում ամբողջ ժամանակ: Իսկ եթե մեզ հաղթեն, կլինեն ամազոն (չէք) կանանց հաղթող:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 325-326<sup>2</sup> = Alex. α 3.27.6-8.

Գնացաք և գացաք<sup>3</sup> ի Պարասանգաս, յաւուրս եաւթն, որ կոչի Թերմոզոն գետ, որ ելանէ և մտանէ ի Պաւտոս (F Պոնտոս), վայր դաշտային ունելով զիւր գնացսն և բարեբախտիկ: Եւ բնակեալ էին աստ ամազուհեացիքն՝ կանայք մեծութեամբ և գեղեցկութեամբ գերազանցեալք առաւելութեամբ քան գամենայն կանայսն, բարեւաւք և առաքինիք: Եւ հանդերձս ունէին ծաղկայս և զինուք վարէին արծաթի տապարաւք. երկաթ և պղինձ ոչ գոյր անդ: Հանճարովք և իմաստութեամբք զարգարեալք էին:

ἐβαδίζομεν δὲ ἀνὰ παρασάγγας δι' ἡμερῶν ε' καὶ ἦλθομεν ἐν ἡμέραις ζ' ἐπὶ τὸν καλούμενον Θερμῶδοντα ποταμόν, ὃς ἐξερεύγεται ... χώραν πεδινήν καὶ εὐδαίμονα. ὧδε δὲ ὄκουν Ἄμαζονίδες γυναικες τῷ μεγέθει καὶ κάλλει ὑπερέχουσαι καθ' ὑπερβολὴν τῶν λοιπῶν γυναικῶν καὶ κάλλιπτοι. ἐσθῆτα δὲ φοροῦσιν ἀνθινήν· ὄπλοις δὲ ἐχρῶντο ἀργυραῖς ἀξίταις· σίδηρος δὲ καὶ χαλκὸς οὐκ ἦν παρ' αὐταῖς. συνέσει δὲ ἦσαν καὶ ἀγχινοῖα κεκοσμενάι.

Գնացինք դեպի Պարասանգա (օրը հինգ փարսախս<sup>4</sup>), յոթ օր՝ Թերմոզոն կոչվող գետի մոտ, որը ելնում ու թափվում է Պոնտոս (չէք) և իր շուրջն ունի հարթ ու բարեբեր դաշտ: Այստեղ բնակվում էին ամազոն կանայք, որ մեծությամբ ու գեղեցկությամբ շատ գերազանցում էին բոլոր (մնացած) կանանց և բարի ու առաքինի էին<sup>5</sup>: Եվ ծաղկավոր հագուստ ունեին, իսկ որպես զենք արծաթե կացիններ էին օգտագործում: Նրանց մոտ երկաթ ու պղինձ չկար: Զարդարված էին խելքով ու իմաստությամբ:

Աշխարհացոյց ԼԶ [2160].

Աշխարհ Տապոբանիա է մեծ կղզի Հնդկաց ... Իսկ ի հարաւ կոյս դաշտք, որ են փղուց ճարակք. և ասեն թէ մին ազգն էգք են բնակիչք աշխարհին, և ի փղաց կուսէ ժամանակ ինչ ի

Տապոբանիա երկիրը (Ցեյոնը) Հնդիկների մեծ կղզի է... Իսկ դեպի հարավ դաշտեր են, որտեղ սնվում են փղերը: Եվ ասում են, թե երկրի բնակիչները կանանց ազգ են, և փղերի

<sup>1</sup> «Մարմին» բառը բացակայում է հայերենում. վերականգնել ենք հունարեն սկզբնագրի հիման վրա:

<sup>2</sup> Հմմտ. նաև Աղեքսանդրի պատմություն Բ 439:

<sup>3</sup> Այս անիմաստ բայածեր կարող է աղավաղման հետևանք լինել:

<sup>4</sup> Հունարեն «փարսախս» (παρασάγγης) բառը թարգմանիչն ընկալել է որպես տեղանուն:

<sup>5</sup> Հունարեն α խմբագրության մեջ «բարի ու առաքինի»-ի փոխարեն կարողում ենք՝ «և գեղեցկածի» (κάλλιπτοι), իսկ β խմբագրության մեջ (3.27.12)՝ «ուժով աչքի ընկնող» (εὐρωστία σπουδαία):

տարւոջն շունք անցանին, և խառնակին ընդ կանայսն, և յղացեալ ծնանին երկուորիս, զմիւսն կորին և զմիւսն աղջիկ. և կորինք անցանեն ընդ գետն առ հարսն. և աղջկաց մնալով առ մարսն. բայց ես այլաբանութիւն կարծեմ. որպէս վասն Ամազոնացն պատմի յԱղեքսանդրի գիրսն, զոր Թւրաւաց ազգ են այլաբանեալ:

Մովսէս Կաղանկատուացի Ա Բ [34].

Իսկ ի խառնակել լեզուացն՝ ելին ի Յաբեթէ ազգք հնգետասան ի Մարաց մինչև ցՍպարիովն, որ ձգի ցովկիանոս և հայի ընդ հիւսիսի: Այս է երկիր նոցա Ատրպատական, Աղուանք, Ամազոնիա, Հայք Մեծ և Փոքր...

Ուխտանէս Ա Ժ [460].

Սահմանք Յաբեթի. Ի Մարայ մինչև ցԳաղիւրոն, ի կողմն հիւսիսոյ. և անուանք աշխարհացն՝ Ատրպատականք, Աղուանք, Ամազոնիայ, Հայք Մեծ և Փոքունք, Վիրք...

Մովսէս Կաղանկատուացու և Ուխտանեսի հատվածների աղբյուրը Հիպոլիտոսի «Ժամանակագրությունն» է՝ Hippol. Chron. 79, 83-84.

Ταῦτα δὲ τὰ τοῦ Ἰάφεθ ἔθνη ἀπὸ Μηδίας ἕως τοῦ ἔσπεριου κατέσπαρται ὠκεανοῦ βλέποντα πρὸς βορρᾶν... Ἔστι δὲ τὰ ὄρια αὐτῶν ἀπὸ Μηδίας ἕως Γαδεΐρων τὰ πρὸς βορρᾶν... Αἱ δὲ χῶραι εἰσιν αὗται· Μηδία Ἀλβανία Ἀμαζονίς Ἀρμενία μικρὰ καὶ μεγάλη.

Միխայէլ Ասորի Ա 24-25. Գլուխ Բ.

Ամազունք, որ և կին էր թագաւոր... Յայսմ ժամանակի եղեն Ամազունիքն, որ է զաւրութիւն կանանց պատերազմողաց այսպիսի պատճառաւ. զի կին մնաց թագակալ թագաւորութեանն Թորգոմայ հատեալ արու զաւակացն, և ոչ կամեցաւ առն լինիլ, և էր քաջասիրտ և քա-

կողմից տարվա ինչ-որ ժամանակ շներ են գալիս ու խառնակվում կանանց հետ, և, հղիանալով, նրանք երկվորյակներ են ծնում՝ մեկը շան ձագ, մյուսը՝ աղջիկ: Շան ձագերը գետն անցնելով դնում են հայրերի մոտ, իսկ աղջիկները մնում են մայրերի մոտ: Բայց ես կարծում եմ, թե սա այլաբանությունն է: Ամազոնների մասին պատմում է Աղեքսանդրի գիրքը, թե՛ դրանք այլաբանորեն թիրասիւնների<sup>1</sup> (°) ազգ են:

Լեզուների խառնվելու ժամանակ Հաբեթից տասնհինգ ազգ սերեց՝ Մարաստանից մինչև Հեսպերիոն<sup>2</sup>, որ ձգվում է մինչև Օվկիանոս և նայում է հյուսիսին: Նրա երկրներն են՝ Ատրպատական, Աղվանք, Ամազոնիա, Մեծ ու Փոքր Հայք...

Հաբեթի սահմաններն են՝ Մարաստանից մինչև Գաղիւրա հյուսիսում. երկրների անուններն են՝ Ատրպատական, Աղվանք, Ամազոնիա, Մեծ ու Փոքր Հայք, Վիրք...

Հաբեթից սերող հետևյալ ազգերը ցրված են Մարաստանից մինչև արևմտյան օվկիանոս՝ նայելով հյուսիսին... Նրանց սահմաններն են՝ Մարաստանից մինչև Գաղիւրա հյուսիսում... Երկրները սրանք են՝ Մարաստան, Աղվանք, Ամազոնիա, Փոքր ու Մեծ Հայք:

Ամազոններ, որոնց թագավորը կին էր... Այն ժամանակ էին ամազոնները. դա ռազմատենչ կանանց տերություն էր հետևյալ պատճառով: Թորգոմի թագավորության գահին մնաց մի կին, քանի որ չկային արու զավակներ: Նա չցանկացավ ամուսնանալ. քաջասիրտ էր և քա-

<sup>1</sup> Այս անհայտ բառը գուցե առնչվում է հունարեն θρασός – «քաջ, խիզախ» ասականի հետ:  
<sup>2</sup> Հունարեն աղբյուրի՝ Հիպոլիտոսի «Ժամանակագրության» մեջ «Հեսպերիոնն» ասական է (ἔσπεριον)՝ «Օվկիանոս»-ի որոշիչը, և նշանակում է՝ «արևմտյան»:

Չազն. և ելանէր ծանր գաւրու, և աւերէր և գերէր զաշխարհս բազումս մեծաւ յաղթութեամբ. և աջողէր նմա. և ոչ ոք կարէր ի դիմի հարկանել նմա: Եւ եղև դաւ ինչ և նենգութեան խորհուրդ ի գաւրսն. զի առցեն զթագաւորութիւն ի նմանէ: Իսկ նորա նախագէտ եղեալ՝ կոտորեաց առ սակաւ սակաւ զամենայն արուական գաւրսն, և արար իւր գաւր կանացի: Եւ նոյնպէս յաջողէր յաղթութիւն ի ձեռս նորա, և ստացաւ աշխարհս բազումս, և զատոյց զարուս աշխարհաւ. և միանգամ յամին խառնէին ընդ նոսա և դարձեալ մեկնէին. և զծնեալ արուսն, էր զի սպանանէին և էր զի տային յայրսն և եղ իւր հզաւր իշխանութիւն, և քաղաք ամուր ստացաւ իւր ի կողմանս հիւսիսոյ Ալիւան անուն: Եւ նեղեցան ձանձրացան ի նմանէ ամենայն թագաւորք երկրի և ժողովեցան ի միասին մետասան թագաւորութիւնք և գնացին ի վերայ նորա. և առին զամրոց թագաւորութեան նորա. և բարձին զանարգութիւն յաշխարհէն, և արքն առին զթագաւորութիւնն բունք ազգին՝ աւրինաւք ամենայն երկրի:

#### Միխայէլ Ասորի Բ 17-18.

Յայնմ ժամանակի երևեցան ամազունքն յազգէն Թորգոմայ այսպիսի պատճառաւ: Եղև զի կին մի մնաց ժառանգ թագաւորութեանն Թորգոմայ, և ոչ կամեցաւ այր առնուլ. և էր յաղթող, և ելանէր աւերէր զբազում աշխարհս: Եւ եղև նենգութիւն ինչ ի գաւրաց նորա, և զայրացեալ կոտորեաց զարուական գաւրս իւր, և արար գաւր կանացի. և միանգամ յամին առ սակաւ սակաւ երթային խառնէին ընդ արս յայլ աշխարհ. և զծնեալ էգսն ապրեցուցանէին և զարուսն սպանանէին: Եւ զայն տեսեալ ժողովեցան յամենայն աշխարհէ մետասան թագաւորութիւնք, և աւերեցին զամրոց թագաւորութեան նորա զԱլիւն քաղաք ի կողմն հիւսիսի, և ապա բարձաւ անկարգութիւնն, և արքն առին զիշխանութիւնն որք ծնեալ էին ի կանանց անտի, աւրինաւք ամենայն երկրի, և ապրէին արուքն և լցաւ աշխարհն<sup>1</sup>:

Չատհամիկ: Դուրս էր գալիս մեծ գորքով և ավերում ու գերում էր շատ երկրներ՝ մեծ հաղթանակներ տանելով: Եվ հաջողակ էր, և ոչ ոք չէր կարող պարտութեան մատնել նրան: Եվ դավադրութիւնն եղաւ գորքում, որպէսզի նրանից խլեն թագաւորութիւնը: Եվ նա, նախապես իմանալով, քիչ-քիչ կոտորեց ամբողջ արական գորքը և իր համար կանանց գորք ստեղծեց: Եվ հաղթանակը նույնպիսի հաջողութեամբ նրա ձեռքն էր գալիս, և զբաւեց բազմաթիւ երկրներ, և ողջ երկրում առանձնացրեց տղամարդկանց: Եվ տարին մեկ անգամ խառնակվում էին նրանց հետ ու դարձյալ բաժանվում: Իսկ ծնված տղաներին կամ սպանում էին, կամ տալիս էին տղամարդկանց: Նա հաստատեց իր հզոր իշխանութիւնը և հյուսիսում մի ամուր քաղաք զբաւեց իր համար՝ անունն Իլիոն: Եվ աշխարհի բոլոր թագաւորները նեղսրտեցին նրանից, և տասնմեկ թագաւորութիւնն հավաքվեցին միասին ու գնացին նրա դեմ: Եվ զբաւեցին նրա թագաւորութեան ամրոցը և վերացրին անարգութիւնը երկրից, և այդ ազգի տղամարդիկ զբաւեցին թագաւորութիւնը՝ ամբողջ աշխարհի օրենքով:

Այդ ժամանակ հայտնվեցին Թորգոմի ցեղից ամազոնները հետևյալ պատճառով: Այնպես եղաւ, որ Թորգոմի թագաւորութեան ժառանգ մի կին մնաց, և նա չկամեցաւ ամուսնանալ: Նա հաղթող էր, ելնում, բազում երկրներ էր ավերում: Ինչ-որ դավադրութիւնն եղաւ նրա գորքի կողմից, և նա զայրացաւ ու կոտորեց իր արական գորքը և կանանց գորք ստեղծեց: Եվ տարին մեկ անգամ քիչ-քիչ գնում էին ուրիշ երկիր և խառնակվում տղամարդկանց հետ: Ծնված աղջիկներին սպանում էին, իսկ տղաներին՝ սպանում: Տեսնելով սա՛ բոլոր երկրներից տասնմեկ թագաւորութիւնն հավաքվեցին և ավերեցին նրա թագաւորութեան ամրոցը՝ Իլիոն քաղաքը հյուսիսում, և ապա վերացաւ անկարգութիւնը, և տղամարդիկ, որ ծնված էին այդ կանանցից, առան իշխանութիւնն ամբողջ աշխարհի օրենքով, և տղամարդիկ փրկվեցին, ու երկիրը լցվեց:

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շարքոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Ինչ վերաբերում է ամազոններին, գտնում ենք, որ նրանք Ասքանազի և Թոգորմայի դուստրերն էին: Սկզբում Բարթոլոմի արքա Սամիրոսը պատերազմ վարեց նրանց դեմ և սպանեց նրանց արու մասնակցներին. այդ ժամանակից ի

Վարդան, Հաւաքումն Զ [13-14].

Յայնմ ժամանակի ասեն լեալ զԱմազոնս, որ է կանանց զինուորութիւն. քանզի զկին ոմն ասեն յազգէն Թորգոմայ ժառանգ մնացեալ Թագաւորութեանն ազգին, հատեալ զարու զաւակացն, և էր քաջասիրտ և արի, և աւերէր զազգս բազումս, և եղև զժտութիւն ի զաւրացն, և կոտորեաց զնոսա, և ստացաւ զաւրս ի կանանց, և նոյնպէս առնէր եղեալ զաթոռ Թագաւորութեան յԱլիաւն քաղաքի:

Մխիթար Այրիվանեցի 30-31.

Յայսմ ժամանակի յայտնեցան Ամազոնքն, որ է կանանց զինուորութիւնք յազգէ Թորգոմայ, (որոյ) գտեալ զժտութիւն ի զաւրս՝ սպան զամենայն արու և արար զաւրս ի կանանց, և եղ զաթոռն յԱլիաւն քաղաքի՝ և աւերէր զաշխարհ:

Թովմա Մեծոփեցի ԼԱ [110].

Թամուր... Այլ և հնազանդեցոյց զամենայն աշխարհն Ամազաւնից, որ է կանանց երկիրն:

Այդ ժամանակ հայտնվեցին ամազոնները, որ զինված կանանց ժողովուրդ է. Թորգոմի ազգից մի կին էր ժառանգ մնացել, քանի որ Թագավորական տոհմը զրկվել էր արու զավակներից: Նա քաջասիրտ էր և արի, ավերում էր բազում երկրներ: Զորքում զժտություն եղավ, նա կոտորեց նրանց և կանանցից բազմացած զորք ունեցավ. նա նաև գրավեց Իլիոն քաղաքը՝ Թագավորական գահ հաստատելով այնտեղ:

Այդ ժամանակ հայտնվեցին ամազոնները, որ զինված կանանց ժողովուրդ է Թորգոմի ազգից. գտնելով անհամաձայնություն զորքում՝ նրանք սպանեցին բոլոր տղամարդկանց և կանանցից զորք ստեղծեցին ու նստավայր հաստատեցին Իլիոն քաղաքում և ավերում էին երկիրը:

Թամուրը ... նաև հնազանդեցրեց ամազոնների ամբողջ երկիրը, որը կանանց երկիր է:

### 50. Գերիոնը և Հերակլեսի սյուները

Հերակլեսը տասներորդ սխրանքի՝ Գերիոնի կարմիր կովերը Գաղիարայից<sup>1</sup> բերելու համար արևմուտք գնալիս, անցնելով Եվրոպայով ու բազում վայրի գազաններ սպանելով՝ մտավ Լիբիա և, որպես իր ճամփորդության հիշատակ, Եվրոպայի ու Լիբիայի սահմանին իրար դեմ հանդիման երկու սյուն կանգնեցրեց<sup>2</sup> (Apollod. 2.5.10 [2.106-112]): Գիողորոսն ասում է (Diod. Sic. 4.18.5), որ Հերակլեսը նեղուցի լայնությունը կրճատեց, ինչը խանգարում է, որ ծովահերոններն

---

վեր նրանք կանոն դարձրին այլևս չնեծացնել արու զավակներին, այլ միայն՝ աղջիկներին: Տարին մեկ անգամ նրանք դուրս են գալիս իրենց տարածքից՝ տղամարդկանց հետ մերձենալու համար և վերադառնում հղիացած: Ըստ հին գրքերում նրանց նվիրված արժանահավատ պատմության և բազում վկայությունների՝ տղա երեխաներին, որոնք ծնվում են, նրանք սպանում են, իսկ դուստրերին՝ խնամում: Մեծ Իլիոն քաղաքի դեմ պատերազմներում, որն ավերվեց, նաև երկար խոսվում է այս ամազոն կանանց մասին, որոնք ապրում են մի հյուսիսային երկրում: Բայց քանի որ այսօր այլևս մարդիկ չեն խոսում նրանց մասին, և ոչ ոք նրանց չի տեսել, ոչ էլ լսել է, որ խոսի նրանց մասին, ոչ հյուսիսում, ոչ էլ այլ վայրերում, նվաստիս թվում է, թե այս բոլոր կանայք պիտի որ սպանված լինեն մեծ Իլիոն քաղաքի դեմ պատերազմում: Պետք է այսպես կարծել երկու պատճառով. նախ, որովհետև այդ պահից ի վեր նրանց մասին հիշատակում չկա, ապա՝ քանի որ գրված է, թե այդ Իլիոն քաղաքի դեմ պատերազմի ժամանակ տասնմեկ թագավոր միավորվել էին նրա դեմ և պաշարել այն, և պատերազմը տևել էր տասնմեկ տարի, երբ ամազոնների թագուհին եկավ զորավիզ լինելու Իլիոնի թագավորին: Այսպիսով, քանի որ այս տասնմեկ թագավորներն ավերեցին Իլիոնը, սպանեցին նրա թագավորին և բոլոր քաղաքում եղածներին, անկասկած այդ կանայք էլ սպանվեցին այդտեղ» (Chronique de Michel le Syrien, livre II, chapitre 3-4, p. 22-24):

<sup>1</sup> Գաղիարան ներկայիս Կադիսն է Իսպանիայում, Ատլանտյան օվկիանոսի ափին:  
<sup>2</sup> Հերակլեսի սյուները սովորաբար նույնացնում էին Կալպեի (Ջիբրալթար) ժայռի հետ հյուսիսում և Աբիլայի կամ Աբիլիկայի հետ հարավում: Դրանք բնակեցված աշխարհի՝ Էկումենեի արևմտյան սահմաններն էին: Դրանցից անդին վիթխարի, անհայտ ու սարսափազդու Ատլանտյան օվկիանոսն էր:



Օվկիանոսից Միջերկրական ծով թափանցեն: Պինդարոսի համար «Հերակլեսի սյուններ» փոխաբերաբար նշանակում է մարդու նվաճումների այն սահմանագիծը, որից այն կողմ բանական ու հնարավոր չէ անցնել (Pind. *Ol.* 3.43-45, *Nem.* 3.19-26, *Isth.* 4.11-13):

Գրիգոր Նազ., ճառ 5.42.1-2 [217] = PG 35 720.1-2.

Այս քեզ ի մէջը արձան, քան  
զՀերակղեայ զարձանսն բարձ-  
րագոյն և երևելագոյն:

Αὕτη σοι παρ' ἡμῶν στήλη, τῶν  
Ἡρακλείων στηλῶν ὑψηλοτέρα  
τε καὶ περιφανεστέρα.

Սա քեզ մեր կողմից արձան,  
որ Հերակլեսի սյուններից ավելի  
բարձր է ու երևելի:

Նոննոս 4.35 [78] = Nonnos 5.35.1-7.

Հերակղէս ի կողմանս Գաղի-  
րոնի գնացեալ՝ ոչ ևս կարաց ի  
խորագոյնս երթալ. քանզի ոչ  
զաւրեաց անցանել ընդ Ովկի-  
անոս: Եւ Գաղիրա է, որպէս  
ասէ Եսիրոզոս, յովկիանոսէ  
մինչև ցարեմտեայ ծովն. ուր  
հասեալ Հերակղեայ՝ արձանս  
կանգնէ ի տեղիսն, իբր թէ  
ցայն վայր գնալի է երկիր և  
ծով, և ներքսագոյն՝ ոչ ևս.  
Ուստի և անուանեցան տե-  
ղիքն՝ արձանք Հերակղեայ:

Τοῦ Ἡρακλέους περὶ τὰ Γάδει-  
ρα ἐλθόντος, καὶ μηκέτι ἰσχύ-  
σαντος περαιτέρω ἀπελθεῖν, οὐ-  
τε γὰρ περάσαι ἴσχυσε τὸν Ὠκε-  
ανόν· τὰ γὰρ Γάδειρά ἐστιν ὡς-  
περ εἴσοδος ἀπὸ τοῦ Ὠκεανοῦ  
ἐπὶ τὴν δυτικὴν θάλασσαν· ἄχρι  
τῶν Γαδείρων γενόμενος, στήλ-  
ας ἔλαβε παρὰ τῶν ἐνοικοῦντων  
τὸν τόπον, ὡς μέχρι τῶν ἐκεῖσε  
βατῆς οὐσης τῆς θαλάσσης καὶ  
τῆς γῆς, καὶ τὰ ἐπέκεινα οὐκέτι.  
Καὶ ἀκοῦει ὁ τόπος Ἡρακλέους  
στήλαι.

Հերակլեսը, գնալով Գաղիրայի  
կողմերը, այլևս չկարողացավ  
ավելի խորը գնալ, քանի որ ի  
գորու չեղավ անցնել Օվկիա-  
նոսը: Եվ Գաղիրան է, ինչպես  
Հեսիրոզոսն է ասում (որպես մի  
մուտք<sup>1</sup>), Օվկիանոսից մինչև  
արեմտյան ծովը: Հերակլեսը  
սյուններ կանգնեցրեց այնտեղ,  
ուր հասավ (գալով մինչև Գա-  
ղիրա՝ սյուններ վերցրեց այդ  
վայրում բնակվողներից *Վ/ս.*  
Հերակլեսը ... ուր հասավ), իբրև  
թե՛ մինչև այդ վայրն է հնա-  
րավոր գնալ երկրի ու ծովի  
վրայով, իսկ ավելի ներս (ընա-  
նից այն կողմ)՝ այլևս ոչ:  
Ուստի և վայրն անվանվեց Հե-  
րակլեսի սյուններ:

Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց 427բ.

Զի ի Հերակլեան արձանացն որ յարեմուտս,  
ուստի հեղեալ ջուրք ծովուն, գոգանա մինչև  
ցելս արևու յեթէսպիա և անտի մինչև ցՎար-  
միր ծովն յեգիպտոս, որով բարժանի Սկիւթք և  
պարփակի Սիկիլիա յարեմուտք, պարանոց  
առնլովն նորա շուրջ գմիջերկրեօքս ամենե-  
քումբք:

Հերակլեսի սյուններից, որ արեմուտքում են, որ-  
տեղից ծովի ջուր լցվելով գոգավորություն է  
կազմում, մինչև արևելք եթովպիայում և այն-  
տեղից մինչև Կարմիր ծովը եգիպտոսում, որով  
բաժանվում է Սկյութիան և պարփակվում է Սի-  
կիլիան արեմուտքից՝ պարանոց կազմելով նրա  
համար ամբողջ միջերկրայքի շուրջը:

Յովհան Որոտնեցի, ձառք 148.

Իսկ ի մուտս արևու՝ նեղ պարանոց ինչ բաց-  
եալ, ուր Հերակլ գարձանքն երկոտասան կանգ-  
նեաց:

Արեմուտքում մի նեղ պարանոց է բացված,  
որտեղ Հերակլեսը տասներկու սյուն է կանգ-  
նեցրել:

<sup>1</sup> Հունարեն εἴσοδος («մուտք») բառը թարգմանիչն ընթերցել է որպես Ἡσίοδος («Հեսիրոզոս»):

Փիլոն, Նախախնամութիւն 101.

Իսկ յարդգողիդ ծիր յո՞յր սակս եղև... ոմանք կարծեն լուսոյ աղամողումն, զոր աստեղքն փայլատակեն... և ոմանք Գերիոնայ զանդուց ճանապարհ, ընդ որ Երակլէս ած:

Իսկ Հարդագողի ճանապարհն ինչի՞ց գոյացավ ... Ոմանք կարծում են, թե դա լուսսի շեղում է՝ աստղերի փայլատակումից ... և ոմանք՝ թե Գերիոնի նախիրների ճանապարհն է, որով Հերակլեսը դրանք քշեց:

Անանիա Շիրակացի 734 = 757<sup>1</sup>.

Կաթին ծիր... ոմանք ասացին զդմանէ է ճանապարհ է հին... Այլք ի նոցանէ՝ Հերակլէս ասեն՝ զանդէս Գերիոնեա ընդ շաւիղ վարեաց:

Ծիր կաթինը ... ոմանք ասել են, թե դա հին ճանապարհ է, ուրիշները՝ թե Հերակլեսը Գերիոնի նախիրներն այդ շավղով քշեց:

### 51. Հերակլեսի մենամարտն Անտեոսի հետ

Հերակլեսը, տասնմեկերորդ սխրանքը գործելիս, Հեսպերիդների ոսկե խնձորները բերելու համար անցնում էր Լիբիայով. այնտեղ իշխում էր Պոսեյդոնի որդի Անտեոսը, որն օտարերկրացիներին ստիպում էր իր հետ ըմբշամարտել և սպանում էր: Հերակլեսը նրան բազուկների մեջ առավ, բարձրացրեց և մեջքը կոտրելով սպանեց: Քանի որ գետնին դիպելիս Անտեոսը գորեղանում էր, ոմանք ասում էին, թե նա Գեայի որդին է (Apollod. 2.5.11 [2.113-115]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 191.8.

Հերակլէս զնահատակութիւնս կատարէր, և զԱնտէոս սպանանէ... Ասի թէ երկրածին էր Անտէոսն. քանզի միայն յանուանելոցն կռուողաց ի գետնի՝ հմուտ էր կռուոցն. մինչև կարծել յերկրէ մաւրէն իւրմէ օգնականութիւն գտանել:

Ἡρακλῆς τοὺς ἄθλους ἐτέλει καὶ Ἀνταῖον ἐν Λιβύῃ καταπαλαίσας ἀναιρεῖ τὸν λεγόμενον γηγενῆ διὰ τὸ ἐπιστήμονα εἶναι τὸν λεγόμενον παρὰ τοῖς παλαισταῖς τρόπον χαμαί, ὡς ἀπὸ τῆς μητρὸς γῆς βοθηεῖσθαι δοκεῖν.

Հերակլեսը սխրանքներ էր գործում և (+ Լիբիայում ըմբշամարտելիս) սպանեց Անտեոսին ... Ասում են, թե Անտեոսը երկրածին էր, քանզի հիշատակված (հիշատակվածը) կռվողներից հմուտ էր միայն գետնի վրա կռվում, այնպես որ թվում էր, թե իր մայր երկրից օգնություն է ստանում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132.

Հերակլէս ի Լիբէաստանի զԱնտէոս սպանանէ:

Հերակլեսը Լիբիայում սպանեց Անտեոսին:

Միխայէլ Ասորի Ա 56.

Եւ Հերակլէս ... զԱնդէոս սպանանէր զոր երկրածին ասէին:

Եվ Հերակլեսը սպանեց Անտեոսին, որին երկրից ծնված էին կոչում:

Վարդան. Հաւաքումն 21.

Եւ Հերակլէս ասեն ... սպանանելով զԱնտէոս, զոր երկրածին համարէին:

Եվ Հերակլեսը, ասում են, սպանեց Անտեոսին, որին երկրից ծնված էին համարում:

<sup>1</sup> Նույն երկի ընդարձակ և համառոտ խմբագրությունների էջերն են. երկուսի բնագիրն այստեղ նույնական է:

Եւ արդ զայնոքիկ որ ըստ մարտին են՝ գոմանս Անտէոս կամ Կեռկէոն՝ ներ արհեստիւքն իւրեանց բաղկացուցին ջանիւք ի սակս դժարհուլեան և կամ մրցանաց՝ Եւպիոս կամ Ամիլկոս, ոչ ինչ պիտանացու առ պատերազմի հաղորդութիւն գոլով՝ որք ոչ են արժանի բանիւ զարդարիլ:

καὶ δὴ τὰ γε κατὰ πάλιν ἃ μὲν Ἀνταῖος ἢ Κερκύων ἐν τέχναις ἐαυτῶν συνεστήσαντο φιλονικίας ἀχρήστου χάριν, ἢ πυγμαῖς Ἐπειδὸς ἢ Ἄμυκος, οὐδὲν χρήσιμα ἐπὶ πολέμου κοινωνίαν ὄντα, οὐκ ἄξια λόγῳ κοσμεῖν.

Իսկ մարտական հնարքներից մի քանիսն Անտեոսը կամ Կերկիոնը<sup>1</sup> բանեցրին՝ այդ արվեստում անիմաստ մրցասիրությունից դրդված, կամ Էպեյոսն<sup>2</sup> ու Ամիկոսը<sup>3</sup> բռնաբամարտինը. դրանք բոլորովին անպիտան են պատերազմ վարելու համար և արժանի չեն գովաբանվելու:

### 52. Հերակլես և Բուսիրիս

Լիբիայից հետո Հերակլեսն անցավ Եգիպտոսով, որի թագավորն էր Պոսեյդոնի որդի Բուսիրիսը: Սա, հետևելով մի գուշակության, Եգիպտոսում տիրող անբերությունից ազատվելու համար օտարներին զոհաբերում էր Չուսի բազմին<sup>4</sup>: Հերակլեսին էլ բռնեցին և դեպի բազմին էին տանում, բայց նա կապանքները կտրեց և սպանեց Բուսիրիսին ու նրա որդուն (Apollod. 2.5.11 [2.117]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 110 = Sync. 178.24-25.

Բուսիրոս առ կողմամբքն Նիդոս գետոյ բռնանայր, և զանցաւորս զաւտարս կողոպտէր:

Βούσιρις Ποσειδῶνος καὶ Λιβύης τῆς Ἐπάφου παῖς τῶν κατὰ τὸν Νεῖλον τόπων ἐτυράννει καὶ τοὺς παροδεύοντας κατέθουε ξένους.

(+ Պոսեյդոնի և Էպափոսի դուստր Լիբիայի որդի) Բուսիրիսը Նեդոս գետի կողմերում բռնություն էր գործադրում և օտարական անցորդներին կողոպտում (զոհաբերում):

<sup>1</sup> Աթենքի հերոս Թեսևսն իր ծննդավայր Տրեզենից Աթենք ճանապարհն անցնելիս վեց սխրանք գործեց՝ վերացնելով վտանգավոր մարդկանց ու արարածների. հինգերորդն Էլևսիսում էր, որտեղ նա կռվեց Կերկիոնի հետ: Սա անցորդներին ստիպում էր ըմբռնվել ու սպանում էր: Թեսևսը նրան օդ բարձրացրեց և գետնին զարկելով սպանեց (Apollod. E. 1.3, Diod. Sic. 4.59.5, Plut. Thes. 11.1, Paus. 1.39.3, Sch. Luc. 21.21.24-28, Ov. Met. 7.439, Hyg. Fab. 38.5):  
<sup>2</sup> Էպեյոսը տրոյական պատերազմի մասնակից հույն զինվոր էր, փայտե ձին սարքողը (Apollod. E. 5.14): Ըստ «Իլիական»-ի՝ նա մասնակցեց զոհված Պատրոկլոսի (տե՛ս դրվագ 138, հավել. 2.1) պատվին կազմակերպված խաղերին և բռնաբամարտում հաղթեց Եվրիալոսին (Hom. Il. 23.665-699):  
<sup>3</sup> Արգոնավորդներն իրենց ճամփորդության ժամանակ (տե՛ս դրվագ 30-31) այցելեցին բերրիկների երկիրը, որտեղ իշխում էր Պոսեյդոնի որդի Ամիկոսը. նա ժամանող օտարերկրացիներին ստիպում էր իր հետ բռնաբամարտել և սպանում էր: Սակայն արգոնավորդ Պոլիդեկեսը նրա հետ բռնաբամարտեց ու սպանեց նրան (Ap. Rhod. Argon. 2.1-7, 94-100, Apollod. 1.9.20 [1.119]):  
<sup>4</sup> Արդեն հները նկատել էին, որ Հերակլեսի և Բուսիրիսի առասպելը խորհրդանշում է եգիպտացիների անհյուրասեր բարքը և հույների մարգվածությունն ու քաջությունը (Diod. Sic. 1.67.11, Strabo 17.1.19): Հերոդոտոսը, առանց Բուսիրիսին հիշատակելու, հեքքում է այս պատմությունը՝ պատճառաբանելով, որ մարդկային զոհաբերությունները բոլորովին խորթ են եգիպտական կրոնին (Herodot. 2.45):

Թեոն 20 = Theon 67.6-8.

Ելլենացիքն առասպելաբանեն, որպէս եգիպտացիքն զՀերակլէս եկեալ անդր զոհ մատուցանել՝ ձեռնարկէին Արամազդայ, իսկ սա բազում բիւրս ի նոցանէ կոտորեաց:

Ἴλληγες μῦθεύουσιν, ὡς Αἰγύπτιοι μὲν Ἡρακλέα ἐπιδημήσαντα θύειν ἐπεχειροῦν τῷ Διὶ, ὁ δὲ πολλὰς μυριάδας αὐτῶν κατεφόνευσε.

Հույներն առասպելներ են պատմում, թե ինչպես եգիպտացիներն այնտեղ եկած Հերակլեսին պատրաստվում էին զոհաբերել Արամազդին (Զևսին), իսկ նա նրանցից բյուրավորները կոտորեց:

Թեոն 100 = Theon 93.16-22.

Երկրորդ՝ յանկարէն ձեռնարկեսցուք, ցուցանելով, զի անկար է այսպիսի լինել իրս... որզան առ որս ասեն՝ թէ Հերակլէս սպան զԲուրսիս. քանզի ըստ Եսիողայ երիցագոյն է քան զՀերակլէս Բուրսիս մետասան դարուք:

δεύτερον δὲ ἀπὸ τοῦ ἀδυνάτου ἐπιχειρήσομεν, δεικνύοντες ὅτι ἀδύνατον τὸ πρῶγμα οὕτω γενέσθαι... οἷον πρὸς τοὺς λέγοντας, ὅτι Ἡρακλῆς ἀπέκτεινε Βούσριν· κατὰ γὰρ Ἡσίοδον πρεσβύτερος Ἡρακλέους ἐστὶν ὁ Βούσιρις ἔνδεκα γενεαῖς.

Երկրորդ՝ սկսենք անհնարից և ցույց տանք, թե անհար է, որ այդպիսի իրադարձություններ տեղի ունենան... ինչպես՝ նրանք, որոնցում ասվում է, թե Հերակլեսը սպանեց Բուսիրիսին. քանզի ըստ Հեսիոդոսի՝ Բուսիրիսը Հերակլեսից ավագ է տասնմեկ դարով (սերնդով):

### 53. Թեսևսի և Պիրիթոսի արկածները

Տասներկուերորդ սխրանքը կատարելու՝ Կերբերոս ահավոր շանը բերելու համար, Հերակլեսը գնաց Հադեսի թագավորություն (Apollod. 2.5.12 [2.124]), իսկ առասպելի մեկ այլ տարբերակում՝ մոլոսացիների թագավոր Էդոնիսի մոտ. Կերբերոսը նրա շունն էր և պետք է խանգարեր նրա Կորա<sup>1</sup> դստեր ձեռքը խնդրողներին: Թեսևսն ու Պիրիթոսը եկել էին աղջկան գողանալու. Պիրիթոսը շանը գոհ գնաց, իսկ Թեսևսին բռնել ու երկար պահում էին, մինչև որ նա ազատվեց Հերակլեսի միջամտությամբ (Plut. *Thes.* 31.4, *Ael. Var. Hist.* 4.5, Paus. 1.17.4, 1.18.4, 2.22.6, 3.18.5)<sup>2</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114-116 = Sync. 185.17-22.

Աղջկան յափշտակութեան իրք յԱյդոնեայ մողոսացուց արքայէ. որոյ էր շուն մի յաղթանգամ Կերբերոս, զոր Պերիթոս յետոյ սպան՝ եկեալ ի կնոջն առևանգութիւն Թեսևսաւ հանդերձ, և զԹեսևս ապրեցոյց՝ որ մերձ էր յապականել՝ պատահեալ Հերակլի. իսկ վասն յայտնի վտանգին ի

Κόρης ἀρπαγή Περσεφόνης ὑπὸ Αἰδωνέως τοῦ Μολοσσῶν βασιλέως, ὃς εἶχε κύνα παμμεγέθη τὸν λεγόμενον Κέρβερον, ᾧ τὸν Πειρίθου ὕστερον διεχρήσατο παραγενόμενον ἐφ' ἀρπαγῆ τῆς γυναικὸς ἅμα Θησεΐ. Θησεά δὲ παρατυχὼν Ἡρακλῆς ἐρρύσατο μέλλοντα συνδιαφθείρεσθαι τῷ Πειρίθῳ. διὰ δὲ τὸ τοῦ κινδύνου

Աղջկա (Պերսեփոնե Կորայի) առևանգումը մոլոսացիների թագավոր Էդոնիսից, ով մի հաղթանգամ շուն ուներ՝ Կերբերոս, որին հետո Պիրիթոսը սպանեց (որի օգնությամբ Պիրիթոսի վերջը տվեց), երբ Թեսևսի հետ եկել էր կին առևանգելու, իսկ Թեսևսին, որը (+ Պիրիթոսի հետ միասին)

<sup>1</sup> Այս առասպելի առաջին տարբերակում Թեսևսն ու Պիրիթոսը պատրաստվում էին առևանգել Կորա-Պերսեփոնեին, որը Հադեսի կինն էր, և ոչ Էդոնիսի դուստրը: «Կորա» անունը բառացի նշանակում է «աղջիկ»:  
<sup>2</sup> Այս արկածների՝ Հադեսի թագավորության տարբերակը տես՝ նրվագ 126-ում:

դժոխոց ելեալ կարծէր: Եւ պատմէ Փիլոքորոս յերկրորդում Ատթիտիոջն:

προῦπτον ἐξ Ἄιδου νομίζεται Θησεὺς ἀνεληλυθῆναι, ὡς Φιλόχορος ἱστορεῖ ἐν Ἀτθίδος δευτέρῳ.

պիտի սպանվեր, փրկեց պատահաբար եկած Հերակլեսը: Բացահայտ վտանգի պատճառով համարվում է, թե (+ Թեսսեսը) դժոխքից է բարձրացել: Եվ սա (ինչպես) պատմում է Փիլոքորոսը «Ատթիտականի»<sup>1</sup> երկրորդ գրքում:

Փիլոն Տիրակացի 934.

Աթենացւոց Թագաւորաւն աղջկանն յափշտակութեան իրք յԱւգոնեալ Մողոսացւոց Թագաւորի, որոյ էր շուն մի յաղթանդամ Կերպերոս, որ Պերիթոս սպան, եկեալ ի կնոջն առեանկութիւն՝ Թեսսեաւ հանդերձ, և զԹեսսեա ապրեցոյց, որ մերձ էր յապականել՝ պատահեալ Հերակղի: Իսկ վասն յայտնի վտանգին՝ ի դժոխոց ելեալ կարծէր: Եւ պատմէ զայս Փիլոքորոս յերկրորդում Ատթիտիոջն:

Աթենացիների թագավորի հետ Կորայի առեւանգումը մոլոսացիների թագավոր Էդոնեսից, ով մի հաղթանդամ շուն ուներ՝ Կերբերոս, որը Պերիթոսին սպանեց, երբ Թեսսեսի հետ եկել էր կնոջն առեանգելու: Իսկ Թեսսեսին, ով քիչ էր մնում սպանվեր, փրկեց պատահաբար եկած Հերակլեսը: Իսկ բացահայտ վտանգի պատճառով թվում էր, թե դժոխքից է դուրս եկել. և սա պատմում է Փիլոքորոսը «Ատթիտականի» երկրորդ գրքում:

54. Կերբերոս և Հերակլես

Հադեսի մուտքը հսկող ահարկու շուն Կերբերոսը Տիփոնի և Եթիդնայի ծնունդն էր: Կերբերոսի տարբեր թվով գլուխներ են նշվում. ըստ Հեսիոդոսի՝ դրանք հիսուսն են (Hes. Theog. 311–312), ըստ Պինդարոսի՝ հարյուրը (Pind. Fr. Dith. 249b1), շատ ուրիշներն էլ հիշատակում են երեքը (օրինակ՝ Soph. Trach. 1098, Eur. Herc. 24, 1277, Paus. 3.25.6, Hor. Carm. 2.19.29–32, 3.11.17–20, Verg. Ge. 4.483, Aen. 6.417–418, Ov. Met. 4.450–451, Hyg. Fab. 151.1, Sen. Her. Fur. 783–788): Անոթների վրա նրան պատկերում էին երկգլխանի: Հերակլեսը կարողացավ Կերբերոսին բռնել և տանել Եվրիսթեսի մոտ (Apollod. 2.5.12 [2.126]):

Գրիգոր Նազ., ճառ 4.94.7-8 [113] = PG 35.628.3.

...ի դժոխս զԿերբերոսն...

...τὸν ἐν ὄδου Κέρβερον...

...դժոխքում եղած Կերբերոսին...

Նոննոս 3.48 [45] = Nonnos 4.51.1-6.

Առասպելեալ լինի, թէ է ինչ շուն, որ ունի գլուխս երիս, որ և կոչի՝ եռանկ: Սա ասեն պահէ զԵրունս դժոխոց, և զի-

Μυθεύεται ὅτι ἐστὶ τις κύων ἔχων τρεῖς κεφαλὰς ὃς καλεῖται Τρίκρανος. καὶ οὗτος, φησί, φυλάττει τὰς πύλας τοῦ Ἄιδου.

Առասպելներ են պատմում, թե կա մի շուն, որ ունի երեք գլուխ և կոչվում է եռա-գլուխ<sup>2</sup>: Ասում են՝ սա հսկում

<sup>1</sup> Միայն բեկորներով պահպանված «Ատթիտական»-ն Ատտիկեի և Աթենքի տեղական պատմությունն էր, որի հեղինակը մ.թ.ա. III դարի պատմիչ Փիլոքորոսն էր: «Ատտիկե» անունը երկրամասը ստացել էր Աթենքի երկրորդ առասպելական արքա Կրանատոսի դուստր Ատթիսից, որը մեռավ, երբ դեռ կույս էր. տե՛ս դրվագ 107:  
<sup>2</sup> Այսպիսի իմաստ ունի հունարեն Τρίκρανος բառը. իսկ գրաբար թարգմանության «եռանկ»-ի երկրորդ բաղադրիչը հավանաբար «յանգ»-ի տարբերակն է՝ «վերջավորություն» իմաստով:

Ղեակսն ի դժոխս ողորքելով՝ շո-  
ղոմէ. իսկ զելեակսն խածանէ  
և ոչ թողացուցանէ ելանել:  
Արդ ասի, թէ Հերակղէս, յոր-  
ժամ էջ յափշտակել զՊերին-  
թոս և զՊերսեփոնէ, ելանելով՝  
սատակեաց զԿերբերոս:

καὶ τοὺς μὲν καταβαίνοντας  
σαίνει καὶ κολακεύει, τοὺς δὲ  
ἀνιόντας δάκνει καὶ οὐκ ἔῃ ἀν-  
ελθεῖν. φησὶν οὖν ὅτι ὁ Ἡρακ-  
λῆς, ὅτε κατῆλθε συναρπάσαι  
τῷ Πειρίθῳ τὴν Περσεφόνην,  
ἀνιῶν ἀπεκτείνει τὸν Κερβερον.

է դժոխքի դուռը և իջնողնե-  
րին ողջունելով (պոչը խա-  
ղացնում ու) շողորթում է,  
իսկ բարձրացողներին՝ կծում  
և թույլ չի տալիս դուրս գալ:  
Ուրեմն, ասում են, որ երբ Հե-  
րակլեսն իջավ Պերիթոսին  
(Պերիթոսի հետ) և Պերսեփո-  
նեին առևանգելու, վեր գնա-  
լիս սպանեց Կերբերոսին:

## 55. Կերկոպներ և Հերակլես

Օվիդիոսը (*Ov. Met.* 14.91-100) նկարագրել է մարդակապիկ Կերկոպներին, որոնք թալանում էին անցորդներին: Ապոլլոդորոսից տեղեկանում ենք, որ Հերակլեսը բռնեց նրանց (*Apollod.* 2.6.3 [2.132]):

Նոննոս 3.37 [41] = Nonnus 4.39.6-21.

Իսկ յաղագս սևայատակացն է  
այսպէս. երկուք ոմանք եղ-  
բարք ընդ ամենայն երկիր  
ցուցանելով ապիրատութիւնս՝  
անուանէին Կերկոպեանք, ի  
զկծեցուցանելոյ գործոցն ըն-  
կալեալք զմականուութիւնն:  
Եւ մին ի սոցանէ անուանէր  
Պասարոս և միւսն Աղկեմոն՝  
որպէս ասէ Եսիովդոս յիշա-  
տակագիր: Այլ զսոսա մայրն  
իւրեանց, որ անուն էր Մեմ-  
նովնիս՝ տեսանելով բազում  
չարիս գործեալ՝ ասէր եթէ դեռ  
ոչ էք հանդիպեալ սևայատա-  
կին: Եւ երբեմն Հերակղեայ  
ընդ ծառով ննջելով և նորուն  
զինուցն զանկոյս կախելով՝  
խորհեցան նոքա ի գէնսն  
ձեռն արկանել. և վազվաղակի  
իմացեալ Հերակղեայ ըմ-  
բռնեաց զնոսա և գլխիվայր  
կապեալ ի փայտի բառնայր:  
Եւ յայնժամ նոքա զպատուի-  
րան մաւրն իւրեանց յիշէին.

Ἡ δὲ κατὰ τοὺς μελαμπύγους  
ἐστὶν αὕτη. δύο τινὲς ἀδελφοὶ  
κατὰ γῆν πᾶσαν ἀδικίαν ἐνδεικ-  
νόμενοι ἐλέγοντο Κέρκωπες, ἐκ  
τῆς τῶν ἔργων δριμύτητος τὴν  
ἐπωνυμίαν λαχόντες. ὁ μὲν γὰρ  
αὐτῶν ἐκαλεῖτο Πάσσαλος, ὁ δὲ  
ἕτερος Ἀκλήμων, ὡς φησι Διὸς  
ὁ ὑπομνηματιστής. Τούτους δὲ  
ἢ μήτηρ, Μέμωνις τῷ ὀνόματι,  
ἑωρακῦα κατὰ γῆν πολλὰ δεινὰ  
ἐργαζομένους, εἶπεν αὐτοῖς, Μὴ  
περιτυχεῖν μελαμπύγῳ. καὶ ποτε  
τοῦ Ἡρακλέους ὑπὸ δένδρον  
κοιμωμένου καὶ τῶν αὐτοῦ ὄπ-  
λων ἐπικεκλιμένων τῷ φυτῷ,  
πλησιάσαντες οὗτοι τοῖς ὄπλοις  
ἐπιχειρήσαι ἠβουλήθησαν. εὐ-  
θὺς δὲ ὁ Ἡρακλῆς αἰσθόμενος,  
λαβὼν αὐτούς, καὶ κατακέφαλα  
ἐπὶ ξύλῳ δεσμεύσας ἐβάστασεν.  
καὶ τότε ἐκεῖνοι τῆς ἐντολῆς τῆς  
ἑαυτῶν μητρὸς ἐμνήσθησαν, ἐ-  
ωρακότες κρεμάμενοι τοῦ Ἡ-  
ρακλέους τὴν πυγὴν μέλαιναν

Սևահետույքավորների մասին  
այսպես է. ոմն երկու եղբայր,  
որ ամբողջ երկրի երեսին ապի-  
րատություն էին ցուցաբերում,  
կոչվում էին Կերկոպներ, ո-  
րոնք այդ մականունը ստացել  
էին իրենց չար գործերի պատ-  
ճառով<sup>1</sup>: Նրանցից մեկի անունը  
Պասալոս էր, մյուսինը՝ Աղկե-  
մոն, ինչպես ասում է Հեսիոդոս  
(Դիոս<sup>2</sup>) մեկնաբանը: Մեմնոնիս  
անունով սրանց մայրը, տեսնե-  
լով, որ նրանք (+ երկրով մեկ)  
շատ չարիքներ են գործում, ա-  
սում էր՝ չհանդիպե՛ք սևահե-  
տույքին: Եվ մի օր, երբ Հերակլ-  
եսը ծառի տակ քնած էր, և  
նրա գենքերը ծառից կախված  
էին, նրանք (+ մոտենալով)  
մտադրվեցին գենքը ձեռք  
գցել: Հերակլեսն էլ, անմիջա-  
պես նկատելով, բռնեց նրանց  
և, գլխիվայր մի փայտից կապե-  
լով, տարավ: Եվ այդ ժամանակ  
նրանք հիշեցին իրենց մոր

<sup>1</sup> Κέρκωψ («մարդակապիկ», «թուղների մի տեսակ») անունը կապվում է կέρκος «պոչ» բառի հետ:  
<sup>2</sup> Հոմերոսի մեկնիչների թվում կա մեկը՝ Դիոս անունով, որի ժամանակն անհայտ է (տե՛ս *RE*, vol. V<sub>1</sub> (1903), Col. 1080):

քանզի տեսանէին ի կախ գո-  
լով գյատակն Հերակղեայ  
սևացեալ ի թաւութենէ մա-  
զիցն, և առ միմեանս զնոյնս  
տրամաբանելով՝ առնէին յոյժ  
ծիծաղել Հերակղեայ, և վաղ-  
վաղակի ի կապանացն ելոյժ  
զնոսս:

ἐκ τῆς τῶν τριχῶν δασύτητος.  
καὶ πρὸς ἀλλήλους αὐτὸ τοῦτο  
διαλεγόμενοι, γέλωτα πολὺν  
προσῆψαν τῷ Ἡρακλεῖ. καὶ εὖ-  
θὺς αὐτοὺς τῶν δεσμῶν ἐλυτρώ-  
σατο καὶ ἀπέλυσεν.

պատվիրանը, քանի որ կախված  
վիճակում տեսնում էին Հերակ-  
ղեսի հետույքը, որը սև էր մա-  
զերի թավությունից: Միմյանց  
հետ այդ մասին զրուցելով՝ Հե-  
րակղեսին շատ ծիծաղեցրին, և  
նա անմիջապես կապանքներից  
ազատեց (+ և բաց թողեց)  
նրանց:

## 56. Հերակլեսն ավերում է Տրոյան

Հերակլեսն արշավեց Տրոյայի դեմ և ավերեց այն (Hom. *Il.* 5.640–643, 5.648–651, Pind. *Isth.* 6.26–31, Diod. Sic. 4.32, Ov. *Met.* 11.213–217, 13.22, Hyg. *Fab.* 89.4, Apollod. 2.6.4 [2.134-136]), քանի որ ծովահրեշից ազատել էր Տրոյայի արքա Լաոմեդոնի դուստր Հեսիոնեին, իսկ Լաոմեդոնը հրաժարվել էր տալ դրա փոխարեն խոստացած այն զամբիկներին, որոնք Չևսը տվել էր նրան ի հատուցում Գանիմեդեսի առևանգման (Apollod. 2.5.9 [2.104]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 191.14.

Հերակղէս ... զԻլիոն աւար օ αὐτὸς Ἡρακλῆς τὸ Ἴλιον (+ Նույն) Հերակլեսն Իլիոնն ա-  
հարկանէ: ἐπόρθησε. վարի առավ:

Ասողիկ Ա Ա [642].

Իլիոն քաղաքն առաւ:

Իլիոն քաղաքը գրավվեց:

Միխայէլ Ասորի Ա 56.

Եւ Հերակլէս զԻլիոն աւար հարկանէր:

Եվ Հերակլեսն Իլիոնն ավարի առավ:

Վարդան, Հաւաքումն Ժ [21].

Եւ Հերակլէս ասեն զԻլիոն աւար հարկանէր:

Եվ Հերակլեսն, ասում են, Իլիոնն ավարի ա-  
ռավ:

Մխիթար Այրիվանեցի 35.

Հերակլէս զԻլիոն աւերէ:

Հերակլեսն Իլիոնն ավերեց:

## 57. Հերակլես և Ավգե, Տելեփոսի ծնունդը

Հերակլեսից Ավգեի գայթակղման և Տելեփոսի ծնվելու առասպելը Սոփոկլեսի ու Եվրիպիդեսի հատվածաբար պահպանված ողբերգությունների թեման է: Ապոլլոդորոսը պատմում է այն փոքր-ինչ այլ մանրամասներով. Հերակլեսը գայթակղեց Ալեոսի դուստր Ավգեին, որը հղիացավ, գաղտնի ծննդաբերեց ու մանկանը թողեց Աթենայի սրբավայրում: Քանի որ երկիրը համաճա-

րակից ամայանում էր<sup>1</sup>, Ալեոսը զննեց սրբավայրն ու տեսավ նրանց: Մանկանը լքեցին Պարթե-  
նիոն լեռան վրա, և նոր ծնած մի եղնիկ կուրծք տվեց նրան, հովիվներն էլ վերցրին ու անունը Տե-  
լեփոս դրեցին<sup>2</sup>: Ի վերջո Տևթրանիայի տիրակալ Տևթրասն ամուսնացավ Ավգեի հետ (Apollod.  
2.7.4 [2.146-147]):

Գիրք պիտոյից III.3 «Եղծ գերակլեայ» բ [65]<sup>3</sup>.

Բայց առաւել որ ի մեծն տաւնի գերակլեայն  
Համբաւեն՝ ի բազմախումբ գիշերոջն գտարաւ-  
րէնուլթեանցն առնել խարդաւանս, անդր և ի  
վեր քան զբոլորն ասացեալ է ստուլթիւն...  
ՅԱրկադիա ուրեմն քաղաքի կացուրդ եղանել  
Աթենայ, և զնորին քրմուհի գԱւգէ՝ գԱլեայ  
դուստր, պար անցանելով ի գիշերապաշտա-  
մանն, բայ, Երակլէս բռնադատէր և ի գիտու-  
թիւն ապականութեան մատանի առ նմա թող-  
եալ, ասէ, անցեալ զնայր: Եւ զնէ, յղացեալ Աւ-  
գեայ ծնանելով զՏեղեփոս՝ առ յիւրն կրից ըն-  
կալեալ զանունն: Եւ Հաւրն զգացեալ զապա-  
կանութիւնն բարկանայր յոյժ: Եւ զՏեղեփոսն  
գրեն ընկեցիկ առնել յանապատ, և անդ նմա ե-  
ղին ստին ընծայել: Եւ գԱւգէ կամեցեալ ան-  
դնդասոյգ կորստեամբ բառնալ: Ընդ որ ճանա-  
պարհորդեալ Երակլէս յայնժամ, գրէ թէ և ի  
մատանուոյն ծանուցեալ առ ի յինքենէ գոլ գա-  
պականութիւնն գործեալ. և յայնմանէ ապա  
զյիւրմէն ծնեալ Համբալ ի վեր բառնայր և  
զնէ ապրեցուցանէր ի մահուանէ վտանգիցն:  
Եւ Համբաւեն ևս դարձեալ, ըստ Հմայից Ապո-  
ղոնեայ Տեթրաս ի նմանէ գԱւգէ կին առնուլ  
և զՏեղեփոսն՝ որդի:

Բայց Հատկապես այն, ինչ պատմում են Հե-  
րակլեսի մասին, թե ինչպես մեծ տոնակատա-  
րուլթյան ժամանակ, գիշերով, երբ բազմու-  
լթյուն էր հավաքվել, նա անօրեն արարք գոր-  
ծեց, գերազանցում է բոլոր սուտ պատմու-  
լթյունները ... Արկադիայի մի քաղաքում Աթե-  
նայի տոնն էր, և նրա քրմուհուն՝ Ալեասի  
դուստր Ավգեին, մինչ նա գիշերային ծիսակա-  
տարուլթյան ժամանակ մասնակցում էր շուրջ-  
պարին, ասում է (առասպելը), Հերակլեսը  
բռնաբարեց և, ի նշան մեղքի, նրա մոտ մի մա-  
տանի թողեց ու հեռացավ: Եվ Ավգեն հղիա-  
ցավ ու ծնեց Տելեփոսին, որն իր հետ տեղի ու-  
նեցածի պատճառով ստացավ այդ անունը: Եվ  
հայրը, իմանալով պիղծ այդ արարքի մասին,  
սաստիկ զայրացավ: Եվ գրում են, որ Տելեփո-  
սին լքեցին ամայի վայրում, որտեղ նրան մի  
եղնիկ կուրծք տվեց, իսկ Ավգեին հայրն ու-  
զում էր ծովանդունդը նետելով սպանել: Հե-  
րակլեսը, որն այդ ժամանակ ճանապարհորդում  
էր այնտեղով, իբր թե մատանուց իմացավ, թե  
բռնուլթյունն ինքն է գործել, և իրենից ծնված  
մանկանը բարձրացնելով ճանաչեց, իսկ կնոջը  
փրկեց մահվան վտանգից: Բացի այդ, պատ-  
մում են, որ Ապոլլոնի դրամամբ Տեթրասը,  
նրանից վերցնելով Ավգեին, իր կինը դարձրեց,  
իսկ Տելեփոսին՝ որդին:

## 58. Հերակլեսը և Թիոդամասի եզները

Հերակլեսն անցնում էր դրիոպների երկրով և ուտելիքի պակաս գգաց. հանդիպելով եզներ  
վարող Թիոդամասին՝ նրա երկու եզներից մեկին մորթեց ու կերավ (Apollod. 2.7.7 [2.153]): Ա-  
պոլլոնիոս Հռոդոսցին ասում է, որ Հերակլեսը եզին վերցրեց՝ դրիոպների դեմ պատերազմ սկսե-  
լու համար պատրվակ ունենալու նպատակով (Ap. Rhod. *Argon.* 1.1212-1213):

<sup>1</sup> Համաճարակի պատճառն Ավգեի արարքով սրբավայրի պղծումն էր:

<sup>2</sup> Տելեփոսի անունը կապվում է θήλη («պտուկ») և ἔλαφος («եղնիկ») բառերի հետ:

<sup>3</sup> «Պիտոյից գրքի» այս նախակրթությունն անկասկած գրված է ափսոսանքով և նախօրհինակի հետևություններով, սա-  
կայն այդ նախօրհինակը չի պահպանվել:



Գրիգոր Նազ., ճառ 4.122.14-16 [152] = PG 35.661.30-34.

...որ զեզն եզեն զերկրագործն բռնադատելով և զարաւրածիզ զեզնն ի բաց եհան և զկոչումն եառ ի գործոյն...

ὁ Βουθόινας, τὸν γεωργὸν τυραννήσας, καὶ τὸν ἀρότην βοῦν λαφύξας, καὶ τὴν κλήσιν λαβῶν ἐκ τῆς πράξεως ...

... նա, որ եզ մորթեց (Բուլթե-նասը)՝ բռնությունն գործադրելով երկրագործի հանդեպ, և վարող եզին սպանեց (խժռեց) ու իր անունը ստացավ այդ արարքից...

Գրիգոր Նազ., ճառ 4.77.9-10 [85-86] = PG 35.604.2-3.

Եւ եթէ ախորժեն, զանդունդն թողումք նոցա...

εἰ βούλοιο δὲ, καὶ τὸν Βουθόιναν παρήσαμεν αὐτοῖς...

Եւ եթե ցանկանան, թողնենք նրանց անդունդները («եզ ուտողին»)<sup>1</sup>:

Նոննոս 3.39 [42] = Nonnos 4.41.2-12.

Անցանէր ընդ երկիրն Դրովպիդեան Հերակլէս, բերէր և գորդի իւր Հիւզղոս: Ապա քաղցելով Հիզղոսի և կերակուր խնդրելով, յարտավարէ ումեմնէ, որ Թէոզիլամաս անուանէր, հայցեաց Հերակլէս հաց. և իբրև ոչ ետ, այլ և անարգեաց զնա, առեալ Հերակլէս զմի յամուրց եզանցն՝ եզեն և ճաշակեաց և ինքն և որդին իւր, և կոչեցաւ վասն այսր պատճառի Բիւթենաս, որ թարգմանի՝ եզնաճաշակ. քանզի բոլոր եզամբն ճաշեաց: Աստուստ եղև Հերակլի մարտն ընդ Դրիովպացիսն, զի Թէոզիլամասնոսի ելանելով ի քաղաքն և ասելով, իբր թէ թշնամի եկն ի գաւառն՝ ելին ի վերայ նորա. և նա յաղթեաց ամենեցունց:

τὴν Δρυόπιδα γῆν παρήει ὁ Ἡρακλῆς, βαστάζων καὶ τὸν υἱὸν αὐτοῦ Ὕλλον. εἶτα πεπεινακότης τοῦ Ὕλλου καὶ αἰτοῦντος τροφήν, ἀροτριῶντά τινα Θειοδάμαντα λεγόμενον ἤτησεν ὁ Ἡρακλῆς ἄρτον. ὁ δὲ οὐ δέδωκεν, ἀλλὰ καὶ ὕβρισεν. εἶτα ὁ Ἡρακλῆς ἕνα τῶν ἀροτριῶντων βοῶν λαβῶν ἔσφαξε, καὶ ἐθουινήθη καὶ αὐτὸς καὶ ὁ υἱὸς αὐτοῦ. καὶ ἐκλήθη διὰ τὴν αἰτίαν ταύτην Βουθόινας, ἐπειδὴ ὅλον ἐθουινήθη τὸν βοῦν. ἔνθεν τῷ Ἡρακλεῖ γέγονεν ὁ πρὸς τοὺς Δρύοπας πόλεμος. τοῦ γὰρ Θειοδάμαντος ἀνελθόντος εἰς τὴν πόλιν, καὶ εἰπόντος ὡς Πολέμιος ἦλθεν ἐν τῇ χώρᾳ (λέγων περὶ τοῦ Ἡρακλέους), ἐξῆλθον κατ' αὐτοῦ. καὶ νενίκηκε πάντας ὁ Ἡρακλῆς.

Հերակլեսն անցնում էր Դրիովպիդեան երկրով՝ իր հետ տանելով և իր որդի Հիլլոսին: Ապա երբ Հիլլոսը քաղց զգաց և ուտելիք պահանջեց, Հերակլեսը Թիոզամաս անունով մի հող վարողից հաց խնդրեց: Իսկ երբ նա չտվեց, այլև անարգեց նրան, Հերակլեսը վերցրեց վարող եզներից մեկին, մորթեց ու կերավ՝ ինքն էլ, որդին էլ: Դրա համար կոչվեց Բուլթենաս, որ թարգմանվում է՝ «եզ ուտող» (չիք որ... ուտող), քանի որ ճաշին մի ամբողջ եզ կերավ: Դրա պատճառով Հերակլեսի և դրիովպների միջև պատերազմ եղավ, քանի որ երբ Թիոզամասը գնաց քաղաք ու ասաց, իբր թշնամի է եկել երկիրը (+ խոսքը Հերակլեսի մասին էր), նրա դեմ դուրս եկան, և նա (Հերակլեսը) բոլորին հաղթեց:

59. Հերակլես և Դեյանիրա. Հերակլեսի վախճանը

Հերակլեսը, Դեյանիրայի հետ ամուսնանալու համար ըմբշամարտելով ցիլ կերպարանք ընդունած Աքելոս գետի հետ, կոտրեց նրա մի եղջյուրը (Apollod. 2.7.5 [2.148]): Նրանք ամուսնա-

<sup>1</sup> Ա. Շիրիմյանը նկատել է, որ Βουθόιναν («եզ ուտողին») բառի փոխարեն բարզանիչը կարողացել է βύθον («ամրուհի»):

ցան և միասին եկան Եվեմնոս գետի մոտ, ուր կենտավրոս Նեսսոսը եկողներին լաստով մյուս ափն էր տանում: Հերակլեսը գետն անցավ, Դեյանիրային էլ վստահեց Նեսսոսին, որ վարձով անցկացնի: Նեսսոսը փորձեց կնոջը բռնաբարել, Դեյանիրան ճշաց, և Հերակլեսը Նեսսոսի սրտին հիդրայի թույնի մեջ թաթախված նետ արձակեց: Մեռնելուց առաջ սա Դեյանիրային խաբեց, որ եթե պահի իր վերքից հոսող արյունը, այն Հերակլեսի վրա ազդելու սիրո դեղ կլինի (Apollod. 2.7.5 [2.151-152]): Նրանք ունեցան Հիլոս որդուն: Երբ Դեյանիրան իմացավ, որ Հերակլեսը գերի է վերցրել Իոլեին, խանդեց ու Նեսսոսի թափած արյունը քսեց Հերակլեսի քիտոնին: Հերակլեսը հագավ, քիտոնը տաքացավ, և Հիդրայի թույնը սկսեց նրա մաշկը քայքայել: Դեյանիրան, դա իմանալով, իրեն կախեց (Apollod. 2.7.7 [2.157-159]): Հերակլեսը խնդրեց, որ Փիլոկտեստեսը խարույկ վառի, և բարձրացավ վրան (Soph. *Trach.* 1191-1284, Diod. Sic. 4.38.3-8, Ov. *Met.* 9.229 – 265, Sen. *Her. Fur.* 1483-1757): Ըստ այլ ավանդության՝ երբ թույնը սկսեց Հերակլեսի մարմինն այրել, նա նետվեց գետն ու խեղդվեց, և գոյացավ Թերմոպիլներ տաք աղբյուրը (Tzetz. Sch. *Lyc.* 50.27-30):

Աղեքսանդրի պատմութիւն Ա, 172, հմմտ. Alex. α 1.46a8.28-29.

...յորս և Հերակլէս պատմութեան յԱրկադայ կարելով <sup>1</sup> մաղաղացաւ ձեռաւք Փիլոքտեստեսայ...	...ἐνθ' Ἡρακλῆς χιτῶνι σάρκα δαρδάπτων / κατηθαλώθη χερσὶ ταῖς Φιλοκτῆτου...	... որտեղ Հերակլեսը, երբ պատմութեանը խոսում էր նրա մարմինը, հրկիզվեց Փիլոկտեստեսի ձեռքով...
---	--	---

Պորփ. 134, Դաւիթ, Պորփ. 20.12-13 (11.7) = Porph. 2.2-3, D. Porph. 127.26-27.

ՋՀիւլոն ի Հերակլեայ (ասեմք ունել զսեռն):	“Υλλοῦ δὲ ἄφ' Ἡρακλέους (φραμὲν ἔχειν τὸ γένος)”.	Ասում ենք, որ Հիլոսը Հերակլեսից է ծնվել:
--	---	--

Նոննոս 2.5 [17] = Nonnos 43.1.73-76.

Բազումք եղեն ի Հերակլեայ, որոց առաջինն և կարծրագոյն Հիւլէս էր, յորմէ և լակեղեմովնացեոց թագաւորքն ծնան, ուստի և Հերակլեանք ամենիքեան ասին:	πολλοὶ οὖν γεγόνασιν ἀπὸ Ἡρακλέους, ὧν πρῶτος καὶ ἔνδοξος ὁ Ὑλλος. ἐξ οὗ καὶ οἱ τῶν Λακεδαιμονίων βασιλεῖς. Πάντες οὖν οἱ βασιλεῖς τῶν Λακεδαιμονίων Ἡρακλεῖδα ἐλέγοντο.	Հերակլեսից ծնվեցին շատերը, որոնցից առաջինն ու ամենաուժեղը (հայտնին) <sup>2</sup> Հիլոսն էր, ումից և լակեղեմոնացիների թագավորները ծնվեցին, ուստի բոլորը (+ լակեղամոնացիների թագավորները) կոչվեցին Հերակլյաններ:
---	--	--

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132-134.

Հերակլէս ի սրածուլթեան խաւթուլթիւն անկեալ՝ ի կրակ դիմեաց, և այնպէս ի մարդկանէ վճարեցաւ, կեցեալ ամս ԾԲ., բայց ոմանք յառաջ քան զԼ. ամ պատմեն լինել նմա:	Հերակլեսը, ընկնելով սրի վրա և խողխողվելով, կրակի մեջ նետվեց ու այդպես հեռացավ մարդկանցից՝ ապրելով հիսուններկու տարի. բայց ոմանք պատմում են, թե նա երեսուն տարուհ էլ չէր հասել:
---	--

<sup>1</sup> «յԱրկադայ կարելով» աղավաղված հատված է՝ σάρκα δαρδάπτων («երբ մարմինը խոսում էր») ընթերցվել է որպես σάρκαδα (հմմտ. «Արկադայ») ρδ άπτων (άπτων նշանակում է՝ «փակցնելով», հմմտ. «կարելով»):  
<sup>2</sup> Հավանաբար «կարծրագոյն» ընթերցումն առաջացել է որպես ἔνδοξος («հայտնի») բառի համարժեք հորինված «կարծագոյն» նորարարությունից:

Վարդան Հաւաքումն 21.

Հերակլէս խոցեալ՝ ընկեաց զինքն ի հօր:                    Հերակլեսը, խոցված, նետվեց կրակի մեջ:

Միխայէլ Ասորի Ա 57.

Հերակլէս խոցեալ սրով, այրեաց զանձն հրով<sup>1</sup>:            Հերակլեսը, սրով խոցված, իրեն հրով այրեց:

Գրիգոր Նազ., ճառ 4.70.1-2 [73-74] = PG 35.589.39-40.

...որ ընդ Հերակղեայ խա- ...ό την Ήρακλέους θαυμάζων ... որ զարմանում ես Հերակլե-  
րոյկն սքանչանաս ի թշուա-  πυράν την ἐξ ἀτυχήματος... սի խարույկով, ինչն անբախ-  
ուութենէն...  ...  սուլթյունից էր...

Նոննոս 3.3 [26-27] = Nonnos 4.3.1-26.

Ուժգին ճառ հրատարակեալ լինի զՀերակղեայ. իբր թէ որդի է Արամազդայ և Աղվմեսեայ, և դիւցազն գոլով՝ զերկոտասան նահատակութիւնսն կատարեաց: Այլ այժմիկ, յայսմ վայրի, յաղագս խարուկին ասացուք: Հերակղէս կին ունէր, որում անուն էր Դէիանիրա, զոր էր առեալ ի յՈւնէսէ, հակառակող գոլով Աքեղառս գետոյ, յորմէ կնոջէ ծնաւ զՀիւղղոս: Արդ՝ համանգամայն յառնուլն զԴէիհանիրա և տանել ի գաւառ իւր, տեսեալ Նեսոսի, որ մին էր կենտաւրոսացն՝ սուփեցաւ կնոջն, և առ գետաւ ուրեմն կամեցաւ շաղաշարիլ ընդ նմա: Այլ Հերակղէս իմացեալ՝ նետահարէ զՆեսոս. և մեռանելով սորա՝ տայ յարենէ իւրմէ ցԴէիհանիրա, ասացեալ պատրելով եթէ. «Իցէ քեզ արիւն այս առ ի սիրելութիւն Հերակղեայ. և փոխարկեցես զնա ի փափագանս քո. արդ՝ եթէ իմացիս – ասէ – թէ այլոյ ումեմն կնոջ սուփեալ իցէ՝ աւծ-

Πολὺς μὲν ὁ λόγος θρυλεῖ τὸν Ἡρακλέα, ὅτι υἱὸς ὦν τοῦ Διὸς καὶ Ἀλκμήνης, ἦρως τε ὦν, τοὺς δώδεκα ἄθλους ἐξήνυσεν. ἡ δὲ νῦν ἐν τούτῳ τῷ χωρίῳ περὶ τῆς πυρᾶς ἱστορία ἐστὶν αὕτη. Οὗτος ὁ Ἡρακλῆς εἶχε γυναικα ὀνόματι Δηϊάνειραν, ἣν ἔλαβεν ἐξ Οἰνέως, ἀντραστῆς γενόμενος Ἀγελῶφ τῷ ποταμῷ, ἐξ ἧς ἔτεκε καὶ τὸν Ὑλλόν. ταύτην τοῖνον τὴν Δηϊάνειραν ἅμα τῷ λαβεῖν καὶ ἀποφέρειν ἐν τῇ οἰκείᾳ πατρίδι ἰδὼν ὁ Νέσσοσ, εἷς τῶν Κενταύρων, ἠράσθη καὶ κατὰ τινὰ ποταμὸν ἠβουλήθη αὐτῇ συγγενέσθαι. ὁ Ἡρακλῆς μαθὼν κατατοξεύει τὸν Νέσσοσ. ἀποθνήσκων δὲ ὁ Νέσσοσ τοῦ αἵματος τοῦ ἑαυτοῦ δίδωσι τῇ Δηϊανείρᾳ, ὑπειπὼν τε καὶ ἀπατήσας ὅτι Ἔσται σοι τοῦτο τὸ αἷμα πρὸς φίλτρον τοῦ Ἡρακλέους, ἵνα, φησίν, ἐὰν μάθῃς ὅτι ἄλλῃς ἐρᾷ, χρίσης ἐκ τοῦ αἵματος τούτου τὸ ἔνδυμα τοῦ Ἡρακλέους, καὶ μεθιστᾷς αὐτὸν εἰς τὸν ἑαυτῆς πόθον. τοῦτο οὖν τὸ αἷμα εἶχεν ἡ Δηϊάνειρα. τοῦ οὖν

ճոռոմ պատմություն է հռչակվում Հերակլեսի մասին. իբր նա Արամազդի (Ջեսի) և Աղվմեսեի որդին է և, հերոս լինելով, տասներկու սիրանք գործեց: Իսկ այժմ այստեղ խոսենք խարույկի մասին: (+ Այս) Հերակլեսն ուներ մի կին, ում անունը Դեյանիրա էր, որին առել էր Էնեսից՝ սիրո մեջ մրցակցելով Աքելոսս գետի հետ. այդ կնոջից ունեցավ Հիլլոսին: Երբ այս Դեյանիրային նա վերցրել տանում էր իր երկիրը, Նեսոսը, որ մեկն էր կենտավրոսներից, տեսնելով կնոջը՝ սիրահարվեց և մի գետի մոտ ցանկացավ կենակցել նրա հետ: Հերակլեսն էլ, դա իմանալով, նետահարեց Նեսոսին: Սա մեռնելիս իր արյունից տվեց Դեյանիրային՝ խաբեությամբ ասելով, թե՛ «Այս արյունը թող քեզ համար Հերակլեսի սիրո դեղը լինի, և նրան նորից կստիպես քեզ ցանկանալ<sup>2</sup>. ուրեմն, եթե իմանաս, ասում է, որ մի ուրիշ կնոջ է ցանկա-

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շարոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Այդ ժամանակ Հերակլեսը մտնալ կրակի մեջ» (Chronique de Michel le Syrien, livre IV, chap. VIII, p. 58):  
<sup>2</sup> Հունարենում այս հատվածը Նեսոսի խոսքի վերջում է, ինչն ավելի տրամաբանական է:

ցես արեամբս այսու գհան-  
 դերձան Հերակղեայ»: Եւ յա-  
 դագս այսորիկ ունէք զարիւնն  
 գայն Դէիհանիրա: Այլ յորժամ  
 Հերակղէս՝ տուփեալ Յաւղղեայ  
 դստերն Եւրիւտեայ և առեալ  
 գնա՝ ի ձեռն Ղիւքասայ արձա-  
 կեաց իբր զգերեալ առ Դէիհա-  
 նիրա՝ զմտաւ ած և ի նախանձ  
 շարժեցաւ: Կամեցեալ զսէրն  
 յինքն դարձուցանել՝ զպատ-  
 մուծանն Հերակղեայ աւժանէ  
 արեամբն Նեսուսի, և տայ նմա  
 զգեհուլ: Այլ արիւնն այն այ-  
 րասպան. քանզի յորժամ զգե-  
 ցաւ Հերակղէս, վառեալ պատ-  
 մուծանն այն՝ եկէզ գնա: Իսկ  
 նա, մինչգեռ այրէր՝ ընկեց  
 գինքն ի գետն, որ մերձն էր,  
 և ջերմացոյց զջուրսն, յորմէ  
 և եղեն ջերմաջրութիւնք ի  
 մէջ թեսաղացուցն և Փովկի-  
 սոյ:

Ἡρακλέους τῆς Ἰόλης τῆς τοῦ  
 Εὐρύτου θυγατρὸς ἐρασθέντος  
 καὶ λαβόντος καὶ διὰ τοῦ Λίχα  
 πέμπαντος αὐτὴν ὡς αἰχμάλω-  
 τον πρὸς τὴν Δηϊάνειραν, εἰς ἔν-  
 νοιαν καὶ εἰς ζηλοτυπίαν ἐκινή-  
 θη ἢ Δηϊάνειρα, καὶ βουλευθεῖσα  
 τὸν ἔρωτα μεταστῆσαι εἰς ἐαν-  
 τήν, τὸν χιτῶνα τοῦ Ἡρακλέους  
 χρίει τῷ αἵματι τοῦ Νέσσου, καὶ  
 δίδωσιν ἐνδύσασθαι τῷ Ἡρα-  
 κλεῖ. τὸ δὲ ἦν ἀνδροφόνον τὸ  
 αἶμα. ἐνδυσασμένου δὲ τοῦ Ἡ-  
 ρακλέους, ὑφήψεν ὁ χιτῶν καὶ  
 κατέφλεξε τὸν Ἡρακλέα. οὗτος  
 δὲ καιόμενος καὶ ρίνας ἐαντὸν  
 ἐν τῷ πλησίον ποταμῷ, θερμὸν  
 τὸ ὕδωρ ἐποίησεν. ἐξ οὗ λοιπὸν  
 γεγόνασιν αἱ Θερμοπύλαι, με-  
 ταξὺ Θετταλίας καὶ Φωκίδος.

նում, Հերակղեսի հագուստը  
 կօծես այս արյունով»: Դրա  
 համար Դեյանիրան պահում  
 էր այդ արյունը: Իսկ երբ Հե-  
 րակղեսը սիրահարվեց Եվրի-  
 սոսի դուստր Իուլիին և Լիքա-  
 սի միջոցով նրան որպես գերի  
 ուղարկեց Դեյանիրայի մոտ,  
 նա (Դեյանիրան) մտքերի մեջ  
 ընկավ ու խանդեց: Ցանկանա-  
 լով վերադարձնել սերն իր  
 հանդեպ՝ նա Հերակղեսի հա-  
 գուստն օծեց Նեսուսի ար-  
 յամբ և տվեց նրան, որ հագ-  
 նի: Իսկ այն արյունը մարդա-  
 սպան էր, քանի որ երբ Հերակ-  
 լեսը հագավ, այն պատմուծա-  
 նը հրկիզվելով, այրեց նրան:  
 Իսկ նա, մինչ վառվում էր,  
 նետվեց մոտակա գետն ու  
 տաքացրեց ջուրը, ինչից և  
 թեսաղիայի և Փովկիսի միջև  
 գոյացան տաք ջրերը (Թերմո-  
 պլիները<sup>1</sup>):

## 60. Հերակղեսի աստվածացումը

Մինչ Հերակղեսի խարույկն այրվում էր, նրա տակ մի ամպ հայտնվեց ու դրոշմով նրան եր-  
 կինք տարավ, որտեղ նա անմահություն ստացավ (Apollod. 2.7.7 [2.160]):

Աղեքսանդրի պատմութիւն 332 Ա = Alex. α 3.30.16.1-3.

Դիոնիսիոս ... ընդ չաստ-  
 ուածան համարեալ եղև. նոյն-  
 պէս և Հերակղէս...

Διόνυσος... μετὰ τῶν θεῶν  
 ἐστίν, ὡσαύτως καὶ ὁ Ἡρακλῆς.

Դիոնիսոսը ... դասվեց չաստ-  
 վածների (աստվածների) շարքը.  
 նույնպես և Հերակղեսը...

Թովմա Արծրունի Բ [66].

Նեբրոդ ... յոյժ ուժգնագոյն ... Հերակղի որ  
 յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական  
 դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար  
 վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ:

Նեբրովթը ... ուժեղ էր ... Հերակղեսից, որը  
 նրանից հետո էր. սա շատ գորավոր էր, կարո-  
 դացավ քաջության ու մեծ ուժի շնորհիվ հաղ-  
 թել տրոյական ծանր պատերազմում և նրան-  
 ցից անվանվեց աստված:

<sup>1</sup> Θερμοπύλαι նշանակում է՝ «տաք ջրերի / ջերմուկների դարպասները»:

## 61. Հերակլյանների վերադարձը Պելոպոննեսու և Արիստոդեմոսի շանթահարումը

Չևսը որոշել էր Հերակլեսին դարձնել Պելոպոննեսոսի քաղաքներ Միկենեի, Արգոսի և Լակեդեմոնի տիրակալը, բայց Հերայի դավերի արդյունքում դրանց տիրացավ Միկենեի թագավոր Եվրիսթևսը: Հերակլեսի հետնորդներ Հերակլյանների երեք սերունդ պայքարեցին այդ հողերը հետ գրավելու համար: Վճռական «դորիական միաճումից» առաջ Հերակլեսի ծոռ Արիստոմասոսի երեք որդիներից մեկը՝ Արիստոդեմոսը, շանթահար սպանվեց (Apollod. 2.8.2 [2.173]):

Եւսեբիոս Ա 314 = Sync. 209.15-30.

Յետ գայս բարևոք ընտրելոյ՝ զԿորնթացւոց և սիկոնացւոց թագաւորութենէ դիպող է աւել, թէ որպէս ի դովրիացւոցն բնակեցան. զի պելոպոննէսիացւոց ազգին գրեթէ ամենայն իրաց (բաց) յարկադացւոցն եւ Տաս խախտել՝ ի Հերակղիդացւոց ասպատակին: Քանզի Հերակղեանքն ի բաժանելն՝ ընտիր և լավ Համարեցան զԿորնթոս և շուրջ գնովաւ աշխարհն, յիւցին առ Աղէտէս՝ մատնեալ նմա զյառաջագոյն յիշատակեալ աշխարհն: Ոմն այր երեւելի դիպեալ, և զԿորնթոս մեծացուցեալ՝ թագաւորեաց ամս ԼԸ.: Յետ որոյ վախճանելոյ՝ նախծին որդին և եթցանդ ի ծնողաց թագաւորէր, մինչև ցԿիփսեղեայ բռնակալութիւնն. որ քան զՀերակղիդացւոց ասպատակն յետնի աճաւք ՆԽ. և եաւթամբք: Եւ նախ ի նմանէ յաջորդեաց զթագաւորութիւնն Իքսիոն ամս ԼԸ.: Յետ որոյ տիրեաց Ագեղաս ամս ԼԷ.: Յետ որոյ Պրիմնիս ամս ԼԵ.: Եւ Բակքիս նոյնպէս կշիռ գնոյն ժամանակ՝ եղև երեւելի քան զիւր առաջինսն. և յետ նոցա թագաւորացն նմին իրի իսկ ոչ ևս Հերակղեանս, այլ բակքիդեանս լինէր անուանեալ: Յետ որոյ տիրեաց Ագեղաս ամս Լ.: Եւ դամոն ամս ԻԵ.: Արիստոմէդէս Ե. ընդ երեսնիւք:

Τούτων ἡμῖν διευκρινημένων λέιπεται περὶ τῆς Κορινθίας καὶ Σικυονίας εἰπεῖν ὄν τρόπον ὑπὸ Δωριέων κατοκίσθησαν. τὰ γὰρ κατὰ τὴν Πελοπόννησον ἔθνη σχεδὸν πάντα, πλὴν Ἀρκάδων, ἀνάστατα συνέβη γενέσθαι κατὰ τὴν κάθοδον τῶν Ἡρακλειδῶν. Οἱ τοίνυν Ἡρακλεῖδαι κατὰ τὴν διαίρεσιν ἐξαίρετον ποιησάμενοι τὴν Κορινθίαν καὶ τὴν ταύτης πλησιόχωρον διεπέμψαντο πρὸς τὸν Ἀλήτην, παραδιδόντες αὐτῷ τὴν προειρημένην χώραν. ἐπιφανῆς δὲ ἀνὴρ γενόμενος καὶ τὴν Κόρινθον ἀνξήσας ἐβασίλευσεν ἔτη λη'. μετὰ δὲ τὴν τούτου τελευτὴν ὁ πρεσβύτατος ἀεὶ τῶν ἐκγόνων ἐβασίλευσε μέχρι τῆς Κυνέλου τυραννίδος, ἥτις τῆς καθόδου τῶν Ἡρακλειδῶν ὕστερεῖ ἔτεσι υμζ'. καὶ πρῶτος μὲν παρ' αὐτοῖς διεδέξατο τὴν βασιλείαν Ἴξιων ἔτη λη', μεθ' ὃν ἤρξεν Ἀγέλας ἔτη λζ', μετὰ δὲ τούτους Πρύμνης ἔτη λε', καὶ Βάκχις ὁμοίως τὸν ἴσον χρόνον γενόμενος ἐπιφανέστατος τῶν πρὸ αὐτοῦ. διὸ καὶ συνέβη τοὺς μετὰ ταῦτα βασιλεύσαντας οὐκέτι Ἡρακλεΐδας, ἀλλὰ Βακχίδας προσαγορεύεσθαι. μετὰ τοῦτον Ἀγέλας μὲν ἔτη λ', Εὐδημος δὲ ἔτη κε', Ἀριστομήδης ε' καὶ λ'.

Այս բաները լավ դասաբանուց Հետո մնում է խոսել կորնթացիների և սիկիոնացիների թագաւորութեան մասին, թե ինչպէս բնակեցվեցին դորիացիներով: Չէ՞ որ պելոպոննեսիցիների ցեղերից գրեթէ բոլորին, բացի արկադացիներից, Հերակլյանների ասպատակութեան (վերադարձի) ժամանակ վիճակվեց տեղափոխել: Քանի որ Հերակլյանները բաժանելու ժամանակ լավ և ընտիր Համարեցին Կորնթոսն ու նրա շրջակայքը, մարդ ուղարկեցին Ալետեսի Հետեից՝ նրան Հանձնելով Հիշյալ երկիրը: Սա, երեւելի այր լինելով, Կորնթոսն ընդարձակեց և թագաւորեց 38 տարի: Նրա վախճանից Հետո իր ավագ որդին, Հաջորդելով ծնողներին, թագաւորեց մինչև Կիփսելոսի բռնակալ դառնալը, որը Հերակլյանների ասպատակութեանից 447 տարի անց էր: Նրանից Հետո առաջինը թագաւորեց Իքսիոնը՝ 38 տարի, որից Հետո Ագելասը՝ 37 տարի, որից Հետո Պրիմնիսը՝ 35 տարի: Եվ Բակքիսը՝ նույնքան ժամանակ իրենից առաջ եղածներից ավելի երեւելի դառնալով: Եվ այնպէս եղավ, որ նրանից Հետո եկած թագաւորները կոչվեցին ոչ թե Հերակլյաններ, այլ Բակքյաններ: Նրանից Հետո Ագելասն էր՝ 30 տարի, Եվդամոնը՝ (Եվդամոսը) 25 տարի և Արիստոմէդեսը՝ 35 տարի:

Թեոն 20 = Theon 67.11-12.

...զյաղագս Արիստոզիմոսի թէ վախճանեցաւ շանդահար եղեալ...

... περὶ τοῦ Ἀριστοδήμου, ὡς ἐτελεύτησε κεραυνόβλητος γενόμενος.

Արիստոզիմոսի մասին, որ վախճանվեց շանթահար լինելով:

Պլատոն, Օրին. 90 = Plat. Leg. 685.b.7-e.3.

Ո՞չ ապաքէն զի զմտաւ ածէին իսկ այնոքիկ յայնժամ՝ զպատրաստութիւնս և զկազմութիւնս զայս՝ ոչ Պելոպոննոսոյ միայն բաւական աւզնական լինել, գրեթէ յայտ է, այլ և ելլենացւոցն ամենեցուն, եթէ ոք ի բարբարոսաց անիրաւեսցէ զսոսա ... Առ սովաւ իսկ ամենայն բանակին բազմութիւնն՝ բաժանելով յերիս քաղաքս միով կազմութեամբ՝ ի ձեռն թագաւորաց եղբարց, մանկանց Հերակլէի, ... զինախ քան զհեռակլիղեանքն՝ պելոպոննոսոցն վեհագոյնս վարկանէին իշխանաց իշխան առնել. և ապա զբանակն զայս քան զայն, որ հասեալ էր ի վերայ Տրոյալայ՝ տարբերիլ առաքինութեամբ. քանզի յաթիւնս հարեալ սոցա, և պարտիլ ի ձեռն սոցա այնոցիկ աքեացիք գոլով ի ձեռն դովրացւոց...

Οὐκοῦν ὄτι μὲν διενουῶντό γε οἱ τότε τὴν κατασκευὴν ταύτην οὐ Πελοποννήσῳ μόνον ἔσεσθαι βοηθὸν ἰκανήν, σχεδὸν δῆλον, ἀλλὰ καὶ τοῖς Ἑλλήσιν πᾶσιν, εἴ τις τῶν βαρβάρων αὐτοὺς ἀδικοῖ... πρὸς δὴ ταῦτ' ἦν πάντα ἡ τοῦ στρατοπέδου τοῦ τότε διανεμηθεῖσα εἰς τρεῖς πόλεις κατασκευὴ μία ὑπὸ βασιλέων ἀδελφῶν, παιδῶν Ἡρακλέους, ... πρῶτον μὲν γὰρ τοὺς Ἡρακλείδας τῶν Πελοπιδῶν ἀμείνους ἠγοῦντο ἀρχόντων ἄρχοντας ἔχειν, ἔπειτ' αὖ τὸ στρατόπεδον τοῦτο τοῦ ἐπὶ Τροίαν ἀφικομένου διαφέρειν πρὸς ἀρετήν. Νενικηκέναι γὰρ τούτους, ἡττᾶσθαι δ' ὑπὸ τούτων ἐκείνους, Ἀχαιοὺς ὄντας ὑπὸ Δωριῶν.

Արդյոք չէի՞ն մտածում այն ժամանակվա մարդիկ, որ այս պատրաստություններն ու կազմավորումները ոչ միայն Պելոպոննոսոսի համար են բավարար օգնություն լինելու, այլև գրեթե ակնհայտ է, որ՝ բոլոր հելլենացիներին, եթե բարբարոսներից մեկը նրանց հանդեպ անիրավություն գործի... Դրա համար, թվում է, լավ էր գտնված ու կարգավորված բանակի ողջ բազմությունը մեկ կազմավորմամբ՝ բաժանված երեք քաղաք-պետությունների միջև թագավոր եղբայրների՝ Հերակլեսի որդիներին<sup>1</sup> ձեռքով ... Քանզի նախ ավելի լավ էին համարում գերագոյն ղեկավարներ ունենալ Հերակլյաններին, քան Պելոպյաններին<sup>2</sup>, այնուհետև՝ գտնում էին, որ իրենց բանակը քաջությամբ գերազանցում է նրան, որ հարձակվել էր Տրոյայի վրա, քանզի չնայած հաղթել էր նրանց, պարտվել էր մյուսներին. աքեացիները՝ դորիացիներին:

Պլատոն, Օրին. 85-86 = Plat. Leg. 682.d.2-e.4.

... Եւ տասնամեայ ժամանակը կալով և մնալով՝ աքեացիք զՏրոյալայ վերջնանահանջ առնէին... Ո՞չ ապաքէն յայնմիկ ժամանակի տասնամեայ գոլով Իլովն պաշարիւր, և պաշարողացն իւրաքանչիւրոց՝ առ

Δέκα δ' ἔτη που μείναντες Ἀχαιοὶ τὴν Τροίαν ἀνάστατον ἐποίησαν... Οὐκοῦν ἐν τούτῳ τῷ χρόνῳ ὄντι δεκέτει, ὄν τὸ Ἴλιον ἐπολιορκεῖτο, τὰ τῶν πολιορκούντων ἐκάστων οἴκοι κακὰ πολλὰ συνέβαιναν γιγνόμενα

Եվ աքեացիները, մնալով տասը տարի, ավերեցին Տրոյան ... Չէ՞ որ այդ տասնամյա ժամկետում, երբ պաշարված էր Իլիոնը, պաշարողներից յուրաքանչյուրի տանը բազում անախորժություններ պատահեցին երի-

<sup>1</sup> Դրանք ոչ թե Հերակլեսի որդիներն էին, այլ ավելի հեռավոր հետնորդները:

<sup>2</sup> Այսինքն՝ Տրոյայի դեմ արշավանքը գլխավորած Ագամեմնոնին և Մենելասին, որոնք Պելոպսի հետնորդներն էին:

տունսն բազում ինչ դժուարինս պատահէին լինել՝ առ ի հակառակութենէն համբակացն, որք և հասանելով զգինուորքն ի քաղաքք իւեանց և ի տունքն ոչ բարւք և ոչ արդարութեամբ ընդունէին, այլ իբրու մահք և սպանմունք, և փախուստք ամենևին յոյժ լինել, որք և դարձեալ արտաքս անկեալ չոգան ի ստորինս փոխարկելով զանուն՝ դովրացիք կոչեցեալք աքէացւոցն փոխանակք. վասն զի այնոքիկ որ յայնժամ զփախուցեալսն հաւաքէր՝ դովրացի էր:

περὶ τὰς στάσεις τῶν νέων, οἱ καὶ ἀφικομένους τοὺς στρατιώτας εἰς τὰς αὐτῶν πόλεις τε καὶ οἰκίας οὐ καλῶς οὐδ' ἐν δίκῃ ὑπεδέξαντο, ἀλλ' ὥστε θανάτους τε καὶ σφαγὰς καὶ φυγὰς γενέσθαι παμπόλλας. οἱ πάλιν ἐκπεσόντες κατήλθον μεταβαλόντες ὄνομα, Δωριῆς ἀντ' Ἀχαιῶν κληθέντες διὰ τὸν συλλέξαντα εἶναι τὰς τότε φυγὰς Δωριᾶ.

տասարդների հակառակության պատճառով, որոնք իրենց քաղաքներն ու տները հասած գինվորներին բարությամբ ու արդարությամբ չէին ընդունում, այնպես որ եղան բազմաթիվ մահեր, սպանություններ ու փախուստներ<sup>1</sup>: Իսկ արտաքսվածները դարձյալ վերադարձան՝ իրենց անունը փոխած. աքեացիների փոխարեն նրանք կոչվեցին դովրացիներ, քանի որ այն ժամանակ վտարվածներին հավաքեց դովրացին (Դորիևսը)<sup>2</sup>:

## 62. Պելոպոննեսոսի քաղաքների բաժանումը Հերակլյանների միջև

Երբ Հերակլյանները գրավեցին Պելոպոննեսոսը, վիճակ գցեցին, և այնտեղի երեք գլխավոր քաղաքները բաժին ընկան Արիստոմարոսի որդիներ Տեմենոսին ու Կրեսփոնտեսին և շանթահարված Արիստոդեմոսի որդիներ Պրոկլեսին ու Եվրիսթենեսին (Apollod. 2.8.4-5 [2.178]):

Եւսեբիոս Ա. 264-265 = Sync. 144.17-20, 145.1.

Յետ Ակրիսիոսի ի Միկէնս փոխեցաւ պետութիւնն արգիւացւոց առ Եւրիսթեաւ Սթենեւդայ, պեղոպիդեանք առին զԻշխանութիւնն: Եւ թագաւորէ նախ Պեղոփս, որ ի Պեղոպոնիսեայ... և ապա Պեղոպիդեանք ... մինչև ցՀերակղիտացւոց ասպատակն, յորժամ զՊեղոպոնիսոն առին:

Μετὰ δὲ Ἀκρίσιον... εἰς Μυκῆνας μετετέθη ἡ βασιλεία τῶν Ἀργείων κατὰ Εὐρυσθέα τὸν Σθενέλου... Καὶ διεδέξαντο τὴν βασιλείαν οἱ Πελοπίδες. ὧν πρῶτος ἐβασίλευσε Πέλοψ ἀφ' οὗ καὶ ἡ χώρα Πελοπόννησος ... Ἡρακλειδῶν κάθοδος, οἱ Πελοπόννησον λαβόντες ἐκράτησαν.

Ակրիսիոսից հետո արգոսցիների թագավորությունը տեղափոխվեց Միկենս՝ Սթենեւոսի որդի Եվրիսթեսի օրոք, և Պելոպյանները գրավեցին Իշխանությունը: Առաջինը թագավորեց Պելոպսը, որ Պելոպոննեսոսից է (որից և Պելոպոննեսոս երկիրն է), և ապա Պելոպյանները ... մինչև Հերակլյանների ասպատակությունը (վերադարձը), երբ նրանք գրավեցին Պելոպոննեսոսը:

Միխայէլ Ասորի Բ 35-36.

Պալոմպիս (Պելոպս) կալաւ զթագաւորութիւն Պելոպսը գրավեց արգոսցիների թագավորութիւնը, որ նախ Մուկենացիք կոչէին թյունը. դրանք նախկինում կոչվում էին մի-

<sup>1</sup> Իքսկետում Պենելոպեին հավակնում էին կնուրջյան առնել բազում փեսացուներ, և Ողիսևսը տուն դառնալով սպանեց նրանց (Hom. *Od.*), Արգոս վերադարձած Ագամեմոնին սպանեցին նրա կին Կլիտեմնեստրան և վերջինիս սիրեկան Էգիսթոսը (Aesch. *Agam.*), Աքիլլեսի որդի Նեոպտոլեմոսն էլ սպանվեց իր տանը (Eur. *And.*):

<sup>2</sup> Դովրացիները կա՛մ Հելլենի (դրվագ 23) որդի Դորոսի հետնորդներն էին (Apollod. 1.7.3 [1.50]), կա՛մ էլ՝ Նեոպտոլեմոսի որդի Դորիևսի (Sch. Eur. *Andr.* 24):

մինչև յիջանելն<sup>1</sup> առ նոսա յորդուցն Հերակ-  
լեայ:

կենացիներ, մինչև Հերակլեսի որդիներն իջան  
նրանց մոտ:

Պղատոն, Օրին. 87 = Plat. Leg. 683.d.6-8.

Եւ թագաւոր իսկ արգիացւոց լինէր Տեմենոս և Մեսենայ՝ Կրեստոփոնտէս, և Լակեդոմոնայ՝ Պրոկլէս և Իււրիսթենէս:

Καὶ βασιλεὺς μὲν Ἄργους Τή-  
μενος ἐγίγνετο, Μεσσηνίας δὲ  
Κρεσφόντης, Λακεδαιμόνος δὲ  
Προκλήης καὶ Εὐρυσθένης.

Արգոսի թագավորը դարձավ  
Տեմենոսը, Մեսսենեիինը՝ Կրես-  
տոնտեսը, իսկ Լակեդեմոնիինը՝  
Պրոկլեսն ու Եվրիսթենեսը:

### 63. Կադմոսի ծնունդը. փյունիկյան տառերի ներմուծումը Հունաստան

Ապոլլոդորոսը պատմում է Ագենորի և Տելեփասայի՝ Փյունիկիայում ծնված Կադմոս, Փե-  
նիքս, Կիլիքս որդիների ու Եվրոպե դստեր մասին (Apollod. 3.1.1 [3.2]): Կադմոսը հիմնադրեց  
Հունաստանի Թեբե քաղաքը Բեոտիայում (Apollod. 3.4.1 [3.22]), իսկ Դիոդորոս Սիկիլիացին  
գրում է, որ նա ծագումով Եգիպտոսի Թեբեից էր (Diod. Sic. 1.23.4): Հերոդոտոսից հայտնի էր, որ  
փյունիկացի Կադմոսը փյունիկյան տառերը բերեց հույներին, որոնք դրանք հարմարեցրին ի-  
րենց լեզվին (Herodot. 5.58-59): Հայ հեղինակների մոտ ավելի տարածված է Հայկ նահապետի  
թոռ Կադմոսի խորենացիական տարբերակը (տե՛ս հավել. 6):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 5.

Ընդ երկար ժամանակ մինչև ցԿադմեայ ազգն՝  
ամենևին գրով ինչ ոչ վարէին. քանզի Կադմոս  
ասեն նախ եբեր նոցա գիր ի փիւնիկեցւոց աշ-  
խարհէն:

Երկար ժամանակ, մինչև Կադմոսի տոհմը,  
[Հույներն] ամենևին գիր չէին օգտագործում.  
ասում են, առաջին անգամ Կադմոսը նրանց  
համար գիր բերեց փյունիկացիներէ երկրից:

Թովմա Արծրունի Ա Ա [56].

Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի  
Կադմեա յունեմնէ Փիւնիկեցւոյ:

Հույների համար ի վերջո գիր գտնվեց մի  
փյունիկեցի Կադմոսի ձեռքով:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 110 = Sync. 178.22-23.

Փիւնիքս և Կադմոս ի թեբա-  
յեցւոց եգիպտացւոցն յԱսորիս  
եկեալ՝ Տիւրոսի և Սիւրոնի  
թագաւորեցին:

Φοῖνιξ καὶ Κάδμος ἀπὸ Θηβῶν  
τῶν κατ' Αἴγυπτον ἐξελθόντες  
εἰς τὴν Συρίαν Τύρου καὶ Σιδῶ-  
νος ἐβασίλευσαν.

Փենիքսն ու Կադմոսը, Եգիպ-  
տոսի Թեբեից գալով Ասորիք,  
թագավորեցին Տյուրոսին և  
Սիւրոնին:

Միխայէլ Ասորի Ա 52.

Ի տասն և ութերորդ ամին Յեսուայ Փիւնիկա  
և Կադմոս ի թեբացւոց Եգիպտոսէ յԱսորիս  
եկեալ՝ թագաւորեցին Տիւրոսի և Սիւրոնի. և

Հեսուի տասնութերորդ տարում Փենիքսն ու  
Կադմոսը, Եգիպտոսի Թեբեից գալով Ասորիք,  
թագավորեցին Տյուրոսին ու Սիւրոնին, և

<sup>1</sup> Այս «իջանել»-ը հավանաբար սերում է Եվսեբիոսի κάθοδος-ից (բառացի՝ «իջնելը»), որը նա օգտագործել է «վե-  
րադարձ» իմաստով:



անուամբ նոցա կոչեցաւ երկիրն Փիւնիկէ և տունն Կաղմեայ:

նրանց անունով երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն<sup>1</sup>:

Միխայէլ Ասորի Բ 35.

Ի յԱւողայ երեքտասաներորդ ամին եկին Կաղմոս և Փիւնիկոս ի Թեբեացւոցն յԱսորիս, և թագաւորեցին Սրոյ և Սայդոյ: Եւ ասեն ոմանք՝ թէ Կաղմոս արար գիր Յունաց յեգիպտացի գրոյն:

Ավոզի տասներեքերորդ տարում Կաղմոսն ու Փենիքսը Թեբեից եկան Ասորիք և թագավորեցին Սուրում (Տյուրոսում) ու Սայդում (Սիդոնում): Եվ ոմանք ասում են, թե Կաղմոսը ստեղծեց հույների գիրը եգիպտական գրից:

Վարդան, Հաւաքումն Ժ [20].

Յուլիտասն ամին Յեսուայ Փիւնիկա և Կաղմոս ի Թեբացւոց յԱսորիս եկեալ թագաւորեցին, և աշխարհն կոչեցաւ Փիւնիկէ, և տունն Կաղմեայ:

Հեսուի տասնութերորդ տարում Փենիքսն ու Կաղմոսը, Թեբեից Ասորիք գալով, թագավորեցին, և երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն:

Մխիթար Այրիվանեցի 34.

Փիւնիկա և Կաղմոս եկեալ ի Փիւնիկէ արարին գիր Յունաց. ի սոցանէ գտաւ թուականութիւնն, զի վաճառականք էին:

Փենիքսն ու Կաղմոսը, գալով Փյունիկիա, ստեղծեցին հույների գիրը. սրանց կողմից հայտնագործվեց թվաբանությունը, քանի որ վաճառական էին:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 91-92.

Ի ԺԸ ամին Յեսուայ՝ Փիւնիկա և Կաղմոս ի Թեբայեցւոցն յԱսորիս եկեալ՝ թագաւորեցին ի Տիրոս և ի Սիդոն, և անուամբ նորա կոչեցաւ երկիրն Փիւնիկէ, և տունն Կաղմեայ: Եւ զկնի այնորիկ եբեր իմաստութիւն յաշխարհն յունաց:

Հեսուի տասնութերորդ տարում Փենիքսն ու Կաղմոսը, Թեբեից գալով Ասորիք, թագավորեցին Տյուրոսում ու Սիդոնում, և նրանց անունով երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն: Եվ զբանից հետո իմաստությունը բերվեց<sup>2</sup> հույների երկիրը:

Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 114-115.

Յուլիտասն ամին Յեսուայ՝ որդւոյ Նաւեայ, Փիւնիկա և Կաղմոս յԱսորիս եկեալ յեգիպտացւոցն, որք զքաղղէացւոցն գիտէին զգալութիւն՝ յԱնէսայ և յԱմրէսայ<sup>3</sup> վարժեալ,

Նավեի որդի Հեսուի տասնութերորդ տարում Փենիքսն ու Կաղմոսը, Եգիպտոսից գալով Ասորիք, իմանալով քաղղեացիների գիտությունը, սովորած լինելով Անեսից և Ամրեսից, թա-

<sup>1</sup> Միխայէլ Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Կաղմոսն ու Ազնորը Սիդոնից Աթենք եկան և բերեցին այդ տասնվեց տառը» (Chronique de Michel le Syrien, livre V, chapitre I, p. 108): Ասորերեն բնագրի Ազնորը, որ Կաղմոսի հայրն էր, հայերեն տարբերակում, հավանաբար, Եվսեբիոսի բնագրի ազդեցությամբ, փոխարինված է Փենիքսով, որ Կարղմոսի եղբայրն էր:

<sup>2</sup> Բառացի՝ «բերեց»:

<sup>3</sup> Տե՛ս Բ Տիմ. Գ 8. «Այլ որպէս յանէսն և յամրէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն» (ակնարկվում է Ելք Է, 11. «Եւ կոչեաց փարաւոն զիմաստունս Եգիպտացոց և զկախարդս. և արարին գէտքն Եգիպտացոց կախարդութեամբ իրեանց նոյնպէս»): Հմմտ. Eus. Praep. Evang. 9.8.1.3-2.1. 'Ιαννῆς καὶ 'Ιαμβρῆς Αἰγύπτιοι ἱερογραμματεῖς, ἄνδρες οὐδένους ἤττους μαγεῦσαι κριθέντες εἶναι, ἐπὶ 'Ιουδαίων ἐξέλαυνομένων ἐξ Αἰγύπτου – «Յանեսն ու Յամբրեսը՝ եգիպտացի սրբազան գրիչները՝ այրեր, որ մոգության մեջ անգերազանցելի

Թագաւորեցին ի Տիւրոս և ի Սիդոն, և անուամբ նոցա կոչեցաւ երկիրն Փիւնիկէ և տունն Կաղմեայ, և զկնի այնորիկ բերաւ իմաստութիւնն յաշխարհն այն:

Եսայի Նչեցի, Քերակ. 57.

Հելլենացիք, զոր ասեն, թէ ի յութուտասն ամին Յեսուայ, որդւոյ Նաւեայ, Փիւնիկս և Կաղմոս ի Թեբայեցոց յԱսորիս եկեալ՝ Թագաւորեցին ի Տիւրոս և ի Սիդոն, և անուամբ նորա կոչեցաւ աշխարհն Փիւնիկէ և տունն Կաղմեայ, որով բերաւ իմաստութիւնն յաշխարհն այն:

Առաքել Սիւնեցի, Քերակ. 70.

Յութուտասն ամին Յեսուայ, որդւոյն Նաւեայ, Փիւնիկս և Կաղմոս եկեալ յԱսորիս յԵգիպտացոցն, յԱնէսայ և յԱմրէսայ վարժեալք, արարին զիր, և կոչեցաւ երկիրն անուամբ նոցա Փիւնիկէ և տունն՝ Կաղմեայ, և յետոյ սոքաւք վարժեցան քաղղէացիքն:

Դաւիթ Զեյթունցի 64.

Հարց. Եւ ո՞րք են ավենացոց քերթողքն: Պատասխանի. Նախ Փիւնիկս և Կաղմէս, որ վարժեալ էին յԱնէսէ և յԱմրէսէ քաղղէացոց զպրովեամբ, և սերմանեցին ի յասորիս և ի յոյնս:

Մովսէս Կաղանկատուացի Ա Բ [34].

Եւ Թեբեացոց սիդոնացիք ելին պանդխտեցան, որ են ի Կաղմեայ որդւոյ Ազենովրայ. և Կարգեղովնացիք են եկք ի Տիւրոսէ:

Հմմտ. Hippol. Chron. 76.1-77.2.

καὶ τὰς Θήβας, οἱ Σιδωνίων ἄποικοί εἰσιν ἐκ Κάδμου Ἀγήνορος, καὶ οἱ Χαλκηδόνιοι δὲ τῶν Τυρρηνίων εἰσιν ἄποικοι.

գավորեցին Տյուրոսում ու Սիդոնում, և նրանց անունով երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն: Եվ դրանից հետո իմաստությունը բերվեց հույներին երկիրը:

Հույները, որ ասում են, թե Նավեի որդի Հեսուեի տասնութերորդ տարում Փենիքսն ու Կաղմոսը, Թեբեից գալով Ասորիք, Թագավորեցին Տյուրոսում ու Սիդոնում, և նրանց անունով երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն, ինչի շնորհիվ իմաստությունը բերվեց այդ երկիրը:

Նավեի որդի Հեսուեի տասնութերորդ տարում Փենիքսն ու Կաղմոսը, Եգիպտոսից գալով Ասորիք, սովորած լինելով Անեսից ու Ամրեսից, ստեղծեցին զիրը, և նրանց անունով երկիրը կոչվեց Փյունիկիա ու Կաղմոսի տուն: Եվ հետո քաղղեացիները սովորեցին դրանով:

Հարց. ովքե՞ր են ավենացիների քերթողները: Պատասխան. նախ Փենիքսն ու Կաղմոսը, որ սովորել էին Անեսից ու Ամրեսից քաղղեական գրերով, և տարածել դրանք հույների ու ասորիների մեջ:

Եվ Թեբեացիներից գաղթեցին սիդոնացիները. նրանք սերում են Ազենորի որդի Կաղմոսից, իսկ կարթագենացիները եկվորներ են Տյուրոսից:

Եվ Թեբեն. սիդոնացիները գաղթականներ են՝ Ազենորի որդի Կաղմոսից, իսկ կարթագենացիները՝ տյուրոսցիներից:

Էին համարվում, հրեաների՝ Եգիպտոսից հետապնդվելու ժամանակ»: Հմմտ. Վարդան, Աշխարհացոյց, «Թեբայիդ եւ Սիկիոք եւ Սինա անապատն յԵգիպտոս է, ուր բնակութիւն սուրբ ճգնաւորացն, եւ դրախտն դիւաց անդ է, գոր շինեցին կախարդքն Եգիպտոսի Յանէս եւ Յամրէս զամս ԺԵ չարչարանօք որդոցն Իսրայէլի»:

## 64. Եվրոպե և Ջևս

Ջևսը սիրահարվեց Ագենորի դուստր Եվրոպեին, ձեռնասուն ցուլ դարձավ, նրան նստեցրեց իր մեջքին և ծովով տարավ-հասցրեց Կրետե: Այնտեղ նա Ջևսից ունեցավ Մինոս, Սարպեդոն ու Հռադամանթիս որդիներին (Apollod. 3.1.1 [3.2-3]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 124 = Sync. 190.11-12.

Եւրոպէ ի կրէտացւոց Հափափեցաւ, և նաւին նշան ցուլ էր: Եὐρώπη Ἀγήνορος ὑπὸ Κρητῶν ἠρπάγη ἐμπόρων, ὧς φησιν Ἡρόδοτος· τοῦ δὲ πλοίου παράσημον ἦν ταῦρος. (+ Ագենորի դուստր) Եվրոպեն առևանգվեց կրետացիներից (կրետացի առևտրականներից, ինչպես ասում է Հերոդոտոսը), և նավի նշանը ցուլ էր:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 124.

Եւրոպէ Ագէնովրայ առևանգեցաւ, որպէս ըստ այլոց պատմելոյ: Ագենորի դուստր Եվրոպեն առևանգվեց, ինչպես պատմում են ուրիշները:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 112 = Sync. 185.12.

Եւրոպայ յափշտակութիւնն... Եὐρώπης ἀρπαγή... Եվրոպեի առևանգումը...

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 110.

Ընդ Եւրոպայ փիւնիկեցւոյ խառնակեցաւ Ջևս. զոր յետ այնորիկ առ կնութեան Կերիոս արքայ կրէտացւոց. յորմէ լինին Մինովս և Հռամանթիոս և Սարպեդոն: Փյունիկացի Եվրոպեի հետ խառնակվեց Ջևսը, նրան հետո կնության առավ կրետացիների արքա Կերիոսը (Աստերիոսը), որից ծնվեցին Մինոսը, Հռադամանթիսը և Սարպեդոնը:

Հմմտ. Sync. 179.2-5.

Եὐρώπη τῆ Φοίνικος μυθεύεται Ζεὺς μγῆναι. ὁ δ' ἦν τεθνεῶς, ὧς ἐν Κρήτη μαρτυρεῖ αὐτοῦ ὁ τάφος. αὐτὴ δ' ἦν Ἀστερίου τοῦ Κρητῶν βασιλέως γαμετή, ἐξ ἧς ἔσχε τρεῖς υἱοὺς, Μίνωα καὶ Ῥαδάμανθυν καὶ Σαρπηδῶνα. Պատմում են, որ Փենիքսի դուստր Եվրոպեի հետ խառնակվեց Ջևսը (իսկ նա մեռած է, ինչպես վկայում է Կրետեում նրա գերեզմանը): Նա կրետացիների արքա Աստերիոսի կինն էր, որից ունեցավ երեք որդի՝ Մինոսին, Հռադամանթիսին և Սարպեդոնին:

## 65. Սարպեդոնը Լիկիայում

Սարպեդոնը գնաց Ասիա և գրավեց Լիկիան (Diod. Sic. 5.79.3, Apollod. 3.1.2 [3.6]), որն այդ անունը ստացել էր Աթենքից վտարված Լիկոսից՝ Պանդիոնի որդուց (Herodot. 1.173):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 112 = Sync. 185.9.

Հռադամանթիս և Սարպեդոն Ղևկիացւոց տիրէին: Ῥαδάμανθος καὶ Σαρπηδὼν Λυκίων ἥρχον. Հռադամանթիսն ու Սարպեդոնը տիրում էին լիկիացիներին:

## 66. Մինոսն ու Հռադամանթիսը՝ դատավորներ

Ըստ Հոմերոսի՝ Մինոսը դատավոր է Հադեսում՝ իր երկրային գործը շարունակելով ստվերների աշխարհում (Hom. *Od.* 11.568–671), իսկ Հռադամանթիսը հավերժ ապրում է երկրի երեսին, Ելիսեյան դաշտում (Hom. *Od.* 4.563–565): Ավելի ուշ շրջանի լեգենդներում նա հեռանում է կյանքից և Մինոսի հետ դատավոր դառնում Հադեսում: Մինոսն էլ կյանքի օրոք կրետացիների համար օրենքներ էր գրել (Apollod. 3.1.2 [3.6-7]): Դիոդորոսը նշում է այն կղզիներն ու Ասիայի ծովափնյա շրջանները, որտեղ Հռադամանթիսը, աշխարհում ամենաարդար մարդը լինելով, միմյանցից զատում է բարի ու չար մարդկանց (Diod. Sic. 5.79.1–2):

Պղատոն, Սոկր. 72 = Plat., *Apol.* 40.e.7–41.a.7.

Քանզի եթէ հասանելով ոք է դժոխս ի բաց փոխեալ յայսցանէ, որ ասեն դատաւորք գոլ, գտանիցէ զճշմարտապէս դատաւորսն, որք ասեն դատել անդանաւր, Մինոս իսկ և Ռադամանթիւս, և Էսպոս և Տրիփտոլեմոս, և այլք որչափ ի կիսաստուածոցն արդարք եղեն առ յիւրեանց կենցաղոյն. ուրեմն սիրելի իցէ թերևս աստուած ի բաց գնալն. կամ Որփևսայ հանդիպելն իսկ, և Մուսէոսի ի Իսիդոսի և Հոմերոսի...

εί γάρ τις ἀφικόμενος εἰς Ἄϊδου, ἀπαλλαγείς τουτωνὶ τῶν φασκόντων δικαστῶν εἶναι, εὐρήσει τοὺς ὡς ἀληθῶς δικαστάς, οἵπερ καὶ λέγονται ἐκεῖ δικάζειν, Μίνως τε καὶ Παδάμανθος καὶ Αἰακὸς καὶ Τριπτόλεμος καὶ ἄλλοι ὅσοι τῶν ἡμιθέων δίκαιοι ἐγένοντο ἐν τῷ ἑαυτῶν βίῳ, ἄρα φαύλη ἂν εἴη ἡ ἀποδημία; ἢ αὖ Ὅρφεϊ συγγενέσθαι καὶ Μουσαίῳ καὶ Ἡσιόδῳ καὶ Ὀμήρῳ ἐπὶ πόσῳ ἂν τις δέξαιτ' ἂν ὑμῶν;

Քանզի եթէ որեւէ մեկը հասնի դժոխք՝ ազատվելով սրանցից, որ իրենց դատավոր են հայտարարում, նա այնտեղ կգտնի իսկապես դատավորներ, որոնք, ասում են, դատում են այնտեղ. Մինոսը և Հռադամանթիսը, Էսպոս<sup>1</sup> ու Տրիպտոլեմոսը<sup>2</sup>, և բոլոր այն կիսաստվածները, որոնք իրենց կյանքում արդար էին. ուրեմն հաճելի (մի՞թե վատ) կլինի այստեղից հեռանալ, կամ (+ ձեզանից յուրաքանչյուրը ի՞նչ գնով չէր ուզի) Օրփևսի, Մուսեոսի<sup>3</sup>, Հոմերոսի և Հեսիդոսի հետ շփվել:

Պղատոն, Մինոս 472 = Plat. *Min.* 318.d.6–10.

Հ. Գիտե՞ս արդ եթէ ոմանք սոցուկնց բարի թագաւորք էին, Մինոսիս և Ռադամանթիւս՝ Արամազդայ և Եւրոպէ մանկունքն, որոց այս իսկ աւրէնքս են: Պ. ԶՌադամանթիւսէ իսկ ասեն, ո՛վ Սոկրատէս, թէ այր արդար էր, և զՄինովսէ թէ վայրենի ոմն և դժուարին և ակիրատ:

ΣΩ. Οἴσθα οὖν τίνες τούτων ἀγαθοὶ βασιλῆς ἦσαν; Μίνως καὶ Παδάμανθος, οἱ Διὸς καὶ Εὐρώπης παῖδες, ὧν οἶδε εἰσὶν οἱ νόμοι. ΕΤ. Παδάμανθὺν γέ φασιν, ὃ Σώκρατες, δίκαιον ἄνδρα, τὸν δὲ Μίνων ἄγριόν τινα καὶ χαλεπὸν καὶ ἄδικον.

Հարց (Սոկրատես). Գիտե՞ս, թե ովքեր են սրանց բարի թագավորները՝ Մինոսն ու Հռադամանթիսը, Արամազդի (Զևսի) ու Եվրոպեի զավակները, որոնց պատկանում են այս օրենքները: Պատասխան (ընկեր). Հռադամանթիսի մասին ասում են, ո՛վ Սոկրատես, թե արդար այր էր, իսկ Մինոսի՝ թե մի վայրենի էր, ծանր բնավորությամբ ու անարդար:

<sup>1</sup> Էսպոսի մասին տե՛ս դրվագ 98. ըստ առասպելի մի տարբերակի՝ նա էլ մահվանից հետո դարձավ Հադեսի երեք դատավորներից մեկը (Ov. *Met.* 13.25, Hor. *Carm.* 2.13.22):

<sup>2</sup> Տրիպտոլեմոսի մասին տե՛ս դրվագ 18:

<sup>3</sup> Օրփևս և Մուսեոս երաժիշտների մասին տե՛ս դրվագ 9:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 191.1-5.

Մինովս ծովակալէր. և աւրէնս դատաստանի դնէր իբրև յԱրամազդայ. զոր յանդիմանէ Պղատոն:

Μίνως ἐθαλασσοκράτει καὶ Κρησὶν ὡς παρὰ Διὸς ἐνομοθέτει... ὅπερ ὁ Πλάτων ἐν τοῖς Νόμοις ἐλέγχει.

Ծովին տիրել էր Մինոսը և օրենսդրություն էր անում (+ Կրետացիների համար)՝ ասես Արամազդի (Զևսի) անունից, ինչը (+ «Օրենքներ»-ում) հանդիմանում է Պղատոնը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 185.8.

Մինովս Եւրոպայ կրէտացւոց թագաւորէր:

Μίνως Κρήτης ἐβασίλευσεν ὁ Εὐρώπης.

Եվրոպեի որդի Մինոսը թագավորեց կրետացիներին:

Գրիգոր Նազ., Ի Բաւ. 177-78 = Naz. In Bas. 23.6.6-23.7.4.

Աղճատա՞նք առնն հմուտ եղելոյ<sup>1</sup>, որով Մինովս այն և Հուդամանթիւս, զորս ասփոզելովն խաղժիցն և Ելիսինա դաշտացն արժանաւորս արարին հելլենացիքն:

Λῆρος τοῖς τοῦ ἀνδρὸς πεπειραμένοις ὁ Μίνως ἐκεῖνος καὶ ὁ Ῥαδάμανθυς οὓς ἀσφοδελῶν λειμῶνων καὶ Ἥλυσίων πεδίων ἠξίωσαν Ἑλλήνες.

Արդյո՞ք նրանց համար, ովքեր ծանոթ են այդ մարդու (Բարսեղի) բարքին, անարժեք բան են այն Մինոսն ու Հուդամանթիւսը, որոնց հելլենացիներն արժանացրին ասփոզելների հովիտներին<sup>2</sup> ու Ելիսեյան դաշտերին<sup>3</sup>:

Նոննոս 2.11 [22] = Nonnos 43.14.1-11.

Մինովս և Հուդամանթոս ասին գոլ որդիք Արամազդայ, յորոց մին Մինովս էր աւրինադիր, ի հաւրէն ընկալեալ գաւրինադրականն, իսկ Հուդամանթէս արդար դատաւոր էր, իբր առ ի հաւրէ իւրմէ ուսեալ զարդարութիւն: Արդ՝ ասեն յաղագս նոցա քերթողքն և նոյն ինքն Պղատոն, թէ սոքա մեռեալք ոչ ընդունակ լինին խաւարի, այլ երանելեացն կղզիքն և Եղևսինայ դաշտն ընկալաւ գնոսա, որ է անուն տեղւոյ Եղևսինայդ, իբր թէ ընդարձակ և ի տանջանաց ազատ: Արդ՝ ասեն թէ ի նոսա

Μίνως καὶ Ῥαδάμανθυς λέγονται υἱοὶ εἶναι τοῦ Διὸς, ὧν ὁ μὲν Μίνως ἦν νομοθέτης, παρὰ τοῦ πατρὸς δεξαίμενος τὴν νομοθετικὴν, ὁ δὲ Ῥαδάμανθυς δικαστικὴς δίκαιος, ὡς παρὰ τοῦ πατρὸς τὴν δικαιοσύνην μαθῶν. λέγουσιν οὖν περὶ τούτων οἱ ποιηταὶ καὶ Πλάτων δὲ αὐτός, ὅτι τούτους ἀποθανόντας οὐχὶ δέχεται σκότος ἀλλ' αἱ Μακάρων νῆσοι καὶ τὸ Ἥλύσιον πεδῖον. ὄνομα δὲ τόπου τὸ Ἥλύσιον, οἰονεὶ ἀλύσιον καὶ ἀπολύσιον, οὐ κολάσεως. φησὶν οὖν ἐν τούτοις οἱ παρ' αὐτῶν δίκαιοι μετὰ θάνατον ἀλλισθήσονται.

Ասում են՝ Մինոսն ու Հուդամանթիսն Արամազդի (Զևսի) որդիներն են, որոնցից մեկը՝ Մինոսն օրենսդիր է՝ հորից ստացած օրենսդրության արվեստը, իսկ Հուդամանթիսն արդար դատավոր է՝ իբր հորից արդարությունը սովորած: Ուրեմն նրանց մասին բանաստեղծներն ու ինքը՝ Պղատոնն ասում են, որ երբ նրանք մահացան, նրանց ընդունեց ոչ թե խավարի թագավորությունը, այլ Երանելիների կղզիները և Ելիսեյան դաշտը: Վայրի անունն է՝ Ելիսեյան, քանի որ ընդարձակ է և տանջանքից ա-

<sup>1</sup> Սպասելի էր՝ «եղելոց»:  
<sup>2</sup> Ասփոդելը ծաղիկ է. ասփոդելների դաշտը հույների պատկերացրած անդրաշխարհի այն մասն էր, որտեղ մահվանից հետո ապրում էին սովորական մարդկանց հոգիները:  
<sup>3</sup> Ելիսեյան դաշտերն այն առասպելական վայրն էին, ծայր արևմուտքում, որտեղ մահվանից հետո աստվածների ընտրյալները՝ ամենաարդար մարդիկ և հերոսները վայելում էին երանելի ու երջանիկ կյանք:

յեղղենացուցն արդարք յետ մահուանն իւրեանց բնակին: Ասփոզեղոսն տնկոյ անուն է, գհոտն անոյշ ունելով, և գծաղիկն՝ հրճուելի:

τὸ τοῦ δὲ ἀσφοδέλου ὄνομα, φυτοῦ ἐστὶν ὄνομα, ἔχοντος ὀσμήν οὐ φαύλην καὶ τὸ ἄνθος ἐπιτερπέες.

գատ («ագատող» է և ոչ պատժի վայր)<sup>1</sup>: Ուրեմն ասում են, որ դրանցում մահից հետո բնակվելու են հույներից (նրանցից) արդարները: Իսկ ասփոզելուսը բույսի անուն է, որի բույրն անուշ է և ծաղիկը՝ սքանչելի:

### 67. Պասիփայեն և ցուլը. Մինոտավրոսի ծնունդը

Կրետեի տիրակալ Մինոսը Պոսեյդոնին աղոթեց, որ ծովից մի ցուլ հայտնվի՝ խոստանալով այն զոհաբերել նրան: Պոսեյդոնը մի հոյակապ ցուլ ուղարկեց, որը Մինոսը պահեց և մեկ ուրիշը զոհաբերեց: Չայրացած Պոսեյդոնը կենդանուն վայրենացրեց, իսկ Մինոսի կին Պասիփայեին նրա հանդեպ կրքով լցրեց: Ճարտարապետ Գեդալոսը փայտե կով սարքեց և կնոջը մեջը մտցրեց: Ցուլը մերձեցավ Պասիփայեի հետ, որն աշխարհի բերեց Մինոտավրոսին (Մինոսացին): Մինոսը փակեց սրան Գեդալոսի կառուցած Լաբիրինթոսում (Apollod. 3.1.3-4 [3.8-11]): Երբ աթենացիները նախանձից սպանեցին համաթենական խաղերում հաղթանակած Մինոսի որդի Անդրոգեոսին, Մինոսը պաշարեց Աթենքը և սովի մատնված աթենացիները նրան հատուցում առաջարկեցին: Մինոսի հրամանով ինը տարին մեկ յոթ տղա ու յոթ աղջիկ Մինոտավրոսին կեր էին ուղարկում: Թեսևսը, մտնելով երրորդ տուրքի ցուցակի մեջ, գնաց Կրետե և սպանեց հրեշին (Plut. *Thes.* 15.1, Diod. Sic. 4.61.3, Apollod. 3.15.8 [3.209-213], Apollod. E 7-1.9):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130 = Sync. 190.25.

Անդրոգէոս նենգաւ սպանաւ Անդրոգեոսը նենգութամբ յԱթէնս: Աθρόγεωσ ἐδόλοφονήθη ἐν Αθήναισ. սպանվեց Աթենքում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130.

Մինոտորոսի իրքն, զոր Փիլոքսորոս պատմէ յերկրորդում Ատթիդին, եթէ Մինովայ Տորոս անուն ոմն զաւրավար է անագորոյն և խիստ բարոյիւք: Քանզի Մինոս ի կռիւ ագոնին ի վերայ Անդրոգեայ դիմէր՝ զոր սպանին աթէնացիքն, և ընդ կռուոյն յաղթելոյ պարգև զորդիսն տայր զատտիկեցիս. ուժգին էր Մինոտորոսն, և ամենեցուն յաղթէր, մինչև Թեսեայ ի մարտ գրգռեալ, և յաղթեալ Մինոտորոսին, խոստացաւ զորդիսն ապրեցուցանել ի պարտ բաշխից: Սոցին իրաց վկայ լինել և կնովսացուց:

Մինոտավրոսի պատմությունը, որ պատմում է Փիլոքսորոսը «Ատթիսականի» երկրորդ գրքում. թե՛ Մինոսն ուներ մի զորավար՝ Տավրոս անունով, անագորոյն և խիստ բարքով: Քանի որ Մինոսը խաղեր էր կազմակերպել Անդրոգեոսի հիշատակին, որին սպանել էին աթենացիները, կռվում հաղթելու համար մրցանակ էր տալիս ատտիկեցի մանուկներին: Մինոտավրոսն ուժեղ էր և բոլորին հաղթում էր, մինչև որ Թեսևսը, կռվի բռնվելով և հաղթելով Մինոտավրոսին, խոստացավ փրկել մանուկներին տուրք դառնալուց: Սա վկայում են և կնոսացիները:

<sup>1</sup> Հունարենում բառախաղ է՝ ἀλύσιον (անհայտ բառ. նման է ἄλυσις – «տազնապ, անհանգստություն») զոյականից կազմված ածականի, սակայն իմաստն անհասկանալի է) և ἀπολύσιον («ագատող») ածականները հնչողությամբ մոտ են Ἡλύσιον անվանը:

Τὰ περὶ τὸν Μίνωταυρον, ὡς μὲν ὁ μῦθος, ὅτι δὴ ἐκ ταύρου τοῦ ζώου καὶ Πασιφάης μιξόθηρ ἐγένετο καὶ τὸν παρ' Ἀθηναίων δασμὸν κομιζόμενος ἐθoinᾶτο τοὺς παῖδας. αὐτοὶ δὲ οἱ Κνώσιοι λέγουσιν εἶναι τοῦ Μίνωος στρατηγόν, ὃς ὠνομάζετο μὲν Ταῦρος, τὴν δὲ φύσιν ὠμὸς καὶ ἀνήμερος ἦν. ἐπεὶ δὲ Μίνως ἀγῶνα ἐπ' Ἀνδρογέω ἐτίθει, ὃν ἀπέκτειναν Ἀθηναῖοι, τοὺς Ἀττικοὺς δὲ παῖδας ἔπαθλον ἐδίδου, ἰσχυρὸς ὢν ὁ Ταῦρος πάντων κατεκράτει. ὡς δὲ καὶ τῷ Θησεῖ τοῦ ἀγῶνος μετεδόθη καὶ τὸν Ταῦρον κατεπάλαισε, συνέβη καὶ τοὺς παῖδας διασωθῆναι καὶ τὴν πόλιν ἀφεθῆναι τοῦ δασμοῦ, ὡς Φιλόχορος ἱστορήσεν ἐν δευτέρῳ Ἀτθίδος.

Մինոտավրոսի հետ կապված իրադարձությունները, ինչպես առասպելն է. թե՛ ցուլ կենդանուց և Պասիփայեից ծնվեց մի խառնագազան և, աթենացիներից տուրք վերցնելով, մանուկներից խնջույք էր սարքում: Կնոսացիներն իրենք ասում են, որ Մինոսն ուներ մի գորավար՝ Տավրոս անունով, անագորույն և խիստ բարքով: Երբ Մինոսը խաղեր էր կազմակերպել Անդրոգեսոսի հիշատակին, որին սպանել էին աթենացիները, մրցանակ էր տալիս ատտիկեցի մանուկների: Տավրոսն ուժեղ էր և բոլորին հաղթում էր, մինչև որ Թեսևսը հետ կովի բռնվեց, և նա հաղթեց Տավրոսին, նաև այնպես եղավ, որ մանուկները փրկվեցին և քաղաքն ազատվեց տուրքից, ինչպես պատմում է Փիլոքորոսը «Ատթիսականի» երկրորդ գրքում:

Փիլոն Տիրակացի 934.

Մինոտավրոսի իրքն, գոր Փիլոքորոսն պատմէ յերկրորդում Ատթիգին, թէ Մինոտավրոս անուն գաւրավար ոմն էր՝ անագորույն և խիստ բարոյիւք. զի Մինոս ի կռուի ագոնեալ ի վերայ Անտրոգէ զիմէր. գոր սպանին Աթենացիքն. և ընդ կռուոյն յաղթելոյ՝ պարգև գորդիսն տայր զԱ[ն]տրիկէցիսն: Ուժգին էր Տավրոս, և ամենեցուն (յաղթէր մինչև Թեսեսայ ի մարտ գրգռել և յաղթել Տավրոսին<sup>1</sup>) և զխոստացեալ որդիսն ապրեցուցանել ի պատերազմին ամբոխելոյ: Եւ վասն սոցին իրաց վկայ լինել Անոսացւոցն: Աթենացիքն սկսանին և չորս գիրս ի կիր արկանել, քանզի յառաջ ժՁ գրով վարէին:

Մինոտավրոսի պատմությունը, որ պատմում է Փիլոքորոսը «Ատթիսականի» երկրորդ գրքում. թե՛ կար մի գորավար՝ Մինոտավրոս անունով, անագորույն և խիստ բարքով: Քանի որ Մինոսը խաղեր էր կազմակերպել Անդրոգեսոսի հիշատակին, որին սպանել էին աթենացիները, հաղթողին մրցանակ էր տալիս ատտիկեցի մանուկների: Տավրոսն ուժեղ էր և բոլորին հաղթում էր, մինչև որ Թեսևսը, մենամարտելով ու հաղթելով Տավրոսին, խոստացավ մանուկներին փրկել ահագնացող կովից: Սա վկայում են և կնոսացիները: Աթենացիներն սկսում են (քսան) և չորս տառ օգտագործել, քանի որ մինչ այդ տասնվեց տառ էին օգտագործում:

Գրիգոր Նազ., Ի Բաս. 177 = Naz. In Bas. 23.4.8.

... մինչ գգիւրագոյն լինել ... ὡς ῥᾶον εἶναι τοὺς λαβυρίνθου ... որքան ավելի հեշտ է Լաբիրինթոսից դուրս գալ...  
... ասն լաբիրինթոս անցանել... θουσ διεξέλθειν...

Նոննոս 2.17 (22) = Nonnos 43.13. i

Յաղագս ղաբիրինթին: Ի περὶ τοῦ λαβυρίνθου. ἐν τῇ Լաբիրինթոսի մասին: Կրեստե կղզու՞ Կրեստէ լեառն ոմն է, Κρήτη τῇ νήσῳ ἐστὶν ὄρος ἐν ᾧ կղզում կա մի սար, որի մեջ

<sup>1</sup> Հմմտ. հրատարակության խմբագիր Ա. Հակոբյանի նշումը. «Բ. Ս. (Բարսեղ Սարգիսյան) Ա. Ա. (Աշոտ Աբրահամյան) չիք «յաղթի ... Տարոսին» ընթերցումը Եստեթոս Կեսարացու և պահպանուած տառակտորների հիման վրայ՝ Ա. Մաթևոսեանի, մեր փոքրիկ շտկումներով»:

յորում է այր ինչ դժուարին և քարանձաւ, յոր իջանելն և ելանելն ի վեր ոչ և միոյ ումեք է դիւրին, յոր ասի թէ ածաւ Մինոտաւրոս: Արդ՝ քանզի դժուարին էր ելանելն ի դաբիւրինթէն, այժմիկ աստուածայինն Գրիգորիոս բուռն եւ հար զնմանէ առ ի յապացոյց անճողոպրելեաց բանիցն, յորոց ոչ զաւրէր ոք գերծանիլ, այլ ըմբռնեալ լինէր:

Պղատոն, Օրին. 119 = Plat. *Leg.* 706.a.8-b.2.

Զի Մինովս երբեք զբնակեալսն յԱտտիկէ յանդիման կացոյց ի դժուարին ոմն բերումն հարկի, զաւրութիւն բազում ստացեալ առ ծով...

Պղատոն, Եւթիփոն 34 = Plat. *Euthph.* 15.b.9-10.

Դու գորով յոյժ իսկ արհեստականագոյն քան զԴեդալոս...

Փիլոն, Լիւս. 158-9.

Որպէս բան ունի զՊասիփայէ զՄինովայ դուստրն կրէտացոց հարեալ ի ցլու՝ ծնանել խառնագազան իմն՝ Մինովայ ցուլ<sup>2</sup>:

Մովսէս Խորենացի Բ 37 [162.1-3].

Կին ոմն յազգէ Արչակունեաց, անձամբ հարատի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտովրոս:

Եղիշէ, Գտիչք 1014.

Պասիփայ դուստրն Արեգականն՝ յանասնախառնակմունս: Քանզի ասէին ի Պասիփայ ոմն ա-

σπήλαιον ἀνθρώδες καὶ δύσκολον περὶ τὴν κάθοδον καὶ δυσχερὲς περὶ τὴν ἀνοδον, ἐν ᾧ λέγεται ὁ Μινώταυρος ἐμβληθῆναι. ἐπεὶ οὖν δυσχερὲς τὸ ἐκβῆναι τοῦ λαβυρίνθου, νῦν ὁ θεῖος Γρηγόριος ἔλαβεν αὐτὸ ἐπὶ τῶν λόγων τῶν ἀφύκτων, ὧν οὐδεὶς ἠδύνατο ἐκφυγεῖν, ἀλλ' ἠλίσκετο.

մի քարայր կա՝ իջնելու համար դժվարին և բարձրանալու՝ տանջալից<sup>1</sup>, որտեղ, ասում են, տարվել է Մինոտավրոսը: Ուրեմն, քանի որ դժվար էր լաբիրինթոսից դուրս գալը, այժմ աստվածային Գրիգորն այն վերցրել է որպես անխուսափելի խոսքերի սպացույց, որոնցից ոչ ոք չէր կարող խուսափել, այլ բռնվում էր:

Μίνως γὰρ δὴ ποτε τοὺς οἰκοῦντας τὴν Ἀττικὴν παρεστῆσατο εἰς χαλεπὴν τινα φορὰν δασμοῦ, δύναμιν πολλὴν κατὰ θάλατταν κεκτημένους...

Զէ՞ որ Մինոսը, ծովում մեծ հզորության տիրանալով, մի ժամանակ Ատտիկեի բնակիչներին մի դժվարին հարկատվություն էր առաջադրել...

αὐτὸς ὦν πολὺ γε τεχνικώτερος τοῦ Δαιδάλου.

Դու շատ ավելի հմուտ ես, քան Դեդալոսը:

Ինչպես պատմությունն է՝ կրետացիների Մինոսի դուստր Պասիփայեն, ցլին սերահարավելով, ծնեց ինչ-որ գազանախառն էակի՝ Մինոտավրոսին:

Արչակունիների տոհմից մի կին, մարմնով հսկա, խոշոր դիմագծերով, ցանկասեր, որին ոչ ոք չէր համարձակվում կնության առնել, երկու մանուկ ծնեց ապօրինի խառնակությունից, ինչպես Պասիփայեն՝ Մինոտավրոսին:

Հելիոսի դուստր Պասիփայեն (տրվեց) անասնամոլության: Քանզի պատմում էին, որ ոմն

<sup>1</sup> Հայերեն բարգմանությունը խճողված է. բարգմանում ենք ըստ հունարենի: Հունարեն բառակապակցությունը՝ σπήλαιον ἀνθρώδες (բառացի՝ «անձավալի քարայր»), հավանաբար նշանակում է՝ «խորշերով լի քարայր»:  
<sup>2</sup> Կորսված սկզբնագիրը կլիներ. \*ὡς λόγος ἔχει τὴν Πασίφην τὴν Μίνω ταύρου ἐρασθεῖσαν ἀποτεκεῖν μιξόθηρά τινα τὸν Μινώταυρον (հմմտ. *Phil. Spec.* 3.44.1. ταύρου ἐρασθεῖσαν, 44.8-9. ἀποτεκεῖν μιξόθηρά τὸν ἐπικαλοῦμενον Μινώταυρον). «Մինոսի Պասիփայեն» նրա կինն է, սակայն բարգմանիչն անվան սեռական հոլովը հասկացել է ավելի սովորական՝ հայրանվան իմաստով, որպես «Մինոսի դուստր»:



նուն կին էր, ասէ, Մենովայ թագաւորին փրկելիկեցւոց. ի ցլու, ասէ, Հարայ, և յայտնեաց, ասէ, զախաչութեացն Դեղեղ [Դեղաղ] առն Հիւսան ճարտարի, և նա արուեստիւ Հնարեաց յանարժան կամս կնոջ կատարեաց, ուստի և որդի ևս ասեն նմա:

Պասիփայե կոչվածը փյունիկեցիներին թագավոր Մինոսի կինն էր: Նա ասաց. «Յլի եմ սիրահարվել», և աղաչանքով դիմեց ճարտար Հյուսան Դեղալոսին, ով իր արվեստի շնորհիվ Հնար գտավ ու կատարեց կնոջ անարժան կամքը, ուստի, ասում են, նա մի որդի ունեցավ:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Ստեփանոս Սիւնեցու մեկնությունից) Ա.96.

Արդ ըստ պիտակութեանն ամենեւին և անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս Պասիփա արեգական դուստրն ցլու տուփիլ:

Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, օրինակ, արեգակի (Հելիոսի) դուստր Պասիփայեի՝ ցլի Հանդեպ կրքով լցվելը:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 112.

Ըստ պիտակութեան է ամենեւին և անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս՝ «Պասիփայ արեգական դուստրն ցլու տուփիլ»:

Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, օրինակ, արեգակի (Հելիոսի) դուստր Պասիփայեի՝ ցլի Հանդեպ կրքով լցվելը:

Եսայի Նչեցի, Քերակ. 64.

Արդ ըստ պիտակութեան է ամենեւին անպատճառ սուտն, զոր ոչ պիտանի է և լսելն, որպէս Փասիփայն (տարընթ. Պասիփա)՝ արեգական դուստրն, ցլու տուփիլ:

Դատարկ և չպատճառաբանված սուտ է, որը պետք էլ չի լսել, օրինակ, արեգակի (Հելիոսի) դուստր Պասիփայեի՝ ցլի Հանդեպ կրքով լցվելը:

Առաքել Սիւնեցի, Քերակ. 80.

Արդ՝ պիտակականն է անպատճառ սուտ, որ և լսելն անաւգուտ է, որպէս ասեն Հեթանոսք, թէ Պասիփայ աստուածոց դուստր գեղեցիկ, այսինքն՝ Արեգական դուստր ցանկացաւ ցլոյ միոյ, և արար կով փայտէ և եմուտ ի ներքս և խառնակեցաւ ընդ ցուլն:

Դատարկ սուտ է և պատճառաբանված չէ, անգամ լսելն անօգուտ է. ինչպես ասում են Հեթանոսները, աստվածների գեղեցիկ դուստր Պասիփայեն, այսինքն՝ արեգակի (Հելիոսի) դուստրը ցանկացավ մի ցլի և փայտե կով սարքեց, մտավ մեջն ու խառնակվեց ցլի հետ:

## 68. Թեբեի հիմնումը

Ապոլլոնի պատգամախոսն ասաց Կադմոսին, որ մի կովի հետևից գնա ու քաղաք հիմնի այնտեղ, որտեղ հոգնած կովը կպառնի: Նա էլ գնաց կովի հետևից: Բեոտիայով անցնելիս՝ կովը պառնկեց. այժմ այդտեղ Թեբե քաղաքն է: Կադմոսը մարդ ուղարկեց Արեսի աղբյուրից ջուր բերելու: Աղբյուրը հսկող Արեսից սերող վիշապը կոտորեց ուղարկվածներից շատերին, և զայրացած Կադմոսը սպանեց վիշապին (Apollod. 3.4.1 [3.21-23]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա 171 = Alex. α 1.46a8.8-9.

Զհիմունս զայս և զմեծամեծս շինուածս աշտարակաբար շինեաց Կադմոս:

τὰ θεμέλια ταῦτα καὶ τὸ πλοῦσιον δῶμα πύργωσε Κάδμος.

Այս հիմքերն ու ճոխ շինություններն աշտարակների պես շինեց (աշտարակներով շրջապատեց) Կադմոսը:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172.

Յարեան վիշապին այսօքիկ են ամբիծք անարատին բանք աստուածաբարբառք:

Սրանք են արեսյան վիշապին վերաբերող՝ անբիծ անարատի (Փերոսի)<sup>1</sup> աստվածաբարբառ գուշակությունները:

Հմմտ. Alex. α 1.46a8.30-31.

ταύτ' ἐστί Φοίβου λογία.

Սրանք են Փերոսի գուշակությունները:

Հմմտ. Alex. Rec. Byz. poet. 2332.

τοῦ Ἀρείου δράκοντος ταῦτα φοιβολογία.

Սրանք են Արեսի վիշապին վերաբերող Փերոսի գուշակությունները<sup>2</sup>:

### 69. Կաղմոս և սպարտոսներ

Կաղմոսը սպանված վիշապի ատամները ցանեց: Յանված ատամներից հողից բուսնեցին զինված այրեր, որոնք կոչվեցին սպարտոսներ<sup>3</sup>: Կաղմոսը, տեսնելով հողից բուսնող զինված այրերին, նրանց վրա քարեր էր շարտում, նրանք էլ՝ կարծելով, թե դրանք մյուսների գցած քարերն են, կռվի մեջ մտան և սպանեցին միմյանց (Apollod. 3.4.1 [3.23-24]): Աթենյան Կաղմոսին թագավոր դարձրեց, իսկ Ջևսը նրան կնության տվեց Ափրոդիտեի և Արեսի դուստր Հարմոնիային (Apollod. 3.4.2 [3.25]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 124.

Սպարտացուց իրքն. զորոց Պաղէփատոս ասէ՝ թէ արուարձանեայք էին, որ ի վերայ Կաղմոսի անկան: Զորս վասն յանկարծակին և յամենայն կողմանց գումարելոյն՝ զպարտս անուանել. որ է՝ ցան ժողովածոյք:

Սպարտացիների գործերը. Պաղեփատոսն ասում է նրանց մասին, թե (թեբեի) արվարձանների բնակիչներն էին, որ հարձակվեցին Կաղմոսի վրա. հանկարծակի բոլոր կողմերից հավաքվելու համար նրանց անվանեցին «սպարտոսներ», որ նշանակում է՝ «ցանված-հավաքվածներ»:

Հմմտ. Sync. 190.14-18.

τοὺς δὲ πλεισιχώρους αἰφνιδίως ἐπανελθόντας αὐτῷ διὰ τὸ πανταχόθεν ὡς ἀπὸ τῆς γῆς συρρέειν κατ' αὐτοῦ Σπαρτοὺς ὠνόμασεν, ὡς Παλαίφατος ἐν πρώτῳ φησί.

Հանկարծակի հավաքված արվարձանաբնակիչներին ամեն կողմից, ասես գետնի տակից հավաքվելու համար անվանեց «սպարտոսներ», ինչպես ասում է Պաղեփատոսն առաջին (գրքում):

Գրիգոր Նազ., Ի Բաս. 180 = Naz. In Bas. 26.3.6-8.

Բայց նախաթու գտանի դիւրաւ ոչ ինչ աշխատեալ, առժամայն յարժանաւորութենէ միւսանգամայն սերմանեալ և հա-

ὁ δὲ πρόεδρος εὕρισκεται ῥα-δίως μὴ πονηθεῖς, καὶ πρόσφατος τὴν ἀξίαν, ὁμοῦ τε σπαρεῖς καὶ ἀναδοθεῖς, ὡς ὁ μῦθος ποιεῖ

Բայց նախագահ է ի հայտ գալիս հեշտությամբ, առանց ջանքերի, և նորաթուխի համբավով, միանգամից ցանված

<sup>1</sup> Այսինքն՝ Ապոլլոնի. այդ աստծո Փոյբոս մականունը բառացի նշանակում է՝ «մաքուր, պայծառ»:  
<sup>2</sup> Այսպես ենք թարգմանել ոչ այնքան հասկանալի և բառարաններից բացակայող փոփոխությունները, (բառացի՝ «փերաբանություններ») բառը:  
<sup>3</sup> Բառացի՝ «ցանվածներ»:

մանգամայն ի վեր բուսեալ, τὸς Γίγαντας.  
որպէս առասպելն առնէ  
զհակայսն:

Նոնոս 2.21 [23] = Nonnos 43.17.1.

Ի Թեբաս բիովտացուց ասի թէ  
Կադմոս և կամ այլ ոմն առեալ  
զԱդելփիւնոս վիշապին գատա-  
մունան՝ սերմանեաց յերկիր, և  
վերաբուսեալք եղեն արք սպա-  
ռազինեալք. այլ եղեն վերաբու-  
սեալք ի բարձիցն մինչև ի վեր,  
և այնպէս կալով մարտնչէին  
ընդ միմեանս և ընդ այլս:

Պլատոն, Օրին. 59 = Plat. Leg. 663.e.5-9.

Պլատոն. Իցէ. սիդոնացոյն  
իսկ առասպելաբանութիւնն  
գիրքին եղև առ ի հաւանեցու-  
ցանել՝ այնպէս գոյ անհաւան,  
և այլ յոգուես: Կղինիաս.  
Ո՞րք: Պլատոն. Սերմանելոց  
երբեմն ատամանց՝ զինուորք  
ի սոցանէ բուսուցանելով...

Միխայէլ Ասորի Ա. 54.

Սպարտացուց իրքն, որ ասեն թէ վասն ամե-  
նայն կողմանց գումարելոյ թշնամեացն Սպար-  
տայ անուանեցաւ, որ է ցան ժողովածոյ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 122 = Sync. 185.3

Ըստ ոմանց՝ Թեբայեցուց թա-  
գաւորեաց Կադմոս:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 171 = Alex. α 1.46a8.9-11.

Աստ առնու հարսն զԱրմո-  
նիաս, զոր ծնաւ փրփրածինն  
Կիպրոս ընդ կշտագողին թրէ-  
կիացոց խառնակեալ:

Ἐν Θήβαις ταῖς τῆς Βοιωτίας  
λέγεται ὅτι Κάδμος ἢ ἄλλος τις  
λαβὼν τοὺς τοῦ Δελφίνου δρᾶ-  
κοντος ὀδόντας ἔσπειρεν εἰς τὴν  
γῆν. καὶ ἀνεδόθησαν ἔνοπλοι  
ἄνδρες. ἀνεδόθησαν δὲ ἀπὸ μη-  
ρῶν ἄχρι ἄνω, καὶ οὕτως ἰστά-  
μενοι ἐπολέμουν ἀλλήλους καὶ  
τοὺς ἄλλους.

{AΘ.} Εἶεν. τὸ μὲν τοῦ Σιδω-  
νίου μυθολόγημα ῥάδιον ἐγέ-  
νετο πείθειν, οὕτως ἀπίθανον  
ὄν, καὶ ἄλλα μυρία; {ΚΛ.}  
Ποῖα; {AΘ.} Τὸ σπαρέντων πο-  
τὲ ὀδόντων ὀπλίτας ἐξ αὐτῶν  
φῦναι.

Սպարտացիների գործերը. ասում են, թե բոլոր  
կողմերից հավաքվելու համար թշնամիներից  
անվանվեց Սպարտա, որ նշանակում է՝ «ցա-  
նված-հավաքված»:

ու բուսնած, ինչպես առասպել-  
ը ստեղծում է հսկաներին  
(գիգանտներին):

Ասում են, թե Բեոտիայի Թե-  
բեում Կադմոսը կամ մեկ այլ  
ոք, վերցնելով դելփական վի-  
շապի ատամները, ցանեց հողի  
մեջ: Եվ բուսնեցին սպառա-  
զեն այրեր, սակայն բուսնե-  
ցին ազդրերից վեր և, այդպես  
կանգնած, կռվում էին միմ-  
յանց և ուրիշների դեմ:

Պլատոն (Աթենացի). Թող լինի,  
իսկ սիդոնացի [Կադմոսի] ա-  
ռասպելը դյուրբովթյամբ դար-  
ձավ հավատի առարկա՝ լինելով  
այդքան անհավանական, և բա-  
զում ուրիշները: Կղինիաս. Ո՞րն  
է այն: Պլատոն (Աթենացի).  
Այն, որ մի ժամանակ ատամներ  
ցանվեցին և դրանցից զինվոր-  
ներ բուսնեցին:

Κάδμος Θηβαίων ἐβασίλευσεν.

Ըստ ոմանց՝ (չիք) թեբացիներին  
թագավորեց Կադմոսը:

ᾧδε λαμβάνει νόμῳν / τὴν Ἄρ-  
μονίαν, ἣν ἔτεκεν ἀφρογενῆς  
Κύπρις / τῷ κλεψικοίτῃ Θρηκίῳ  
συνελθοῦσα.

Այստեղ [Թեբեում Կադմոսն]  
ամուսնացավ Հարմոնիայի հետ,  
որին ծնել էր փրփրածին Կիպ-  
րուհին<sup>1</sup> խառնակվելով թրակա-  
ցի ամուսնագողի<sup>2</sup> հետ:

<sup>1</sup> Ափրոդիտեն ծնվել էր Կիպրոսում և կրում էր Կիպրոսի մականունը:  
<sup>2</sup> Խոսքն Ափրոդիտեի սիրելի Արեսի մասին է:

## 70. Չևս և Մեմելե. Դիոնիսոսի ծնունդը

Չևսը սիրահարվեց Կադմոսի դուստր Մեմելեին և Հերայից թաքուն նրա հետ մերձեցավ: Քանի որ աղջկան խոստում էր տվել անել, ինչ որ նա ցանկանա, Մեմելեն, խանդոտ Հերայից խաբված, խնդրեց նրան իր մոտ գալ այնպիսի տեսքով, ինչպես եկել էր Հերայի ձեռքը խնդրելու: Չմերժելով Մեմելեին՝ Չևսը նրա առագաստը եկավ կայծակներով ու ամալրոպներով: Հրդեհ բռնկվեց, Մեմելեն վախճանվեց, իսկ Չևսը նրա վիժած վեցամսյա մանկանը կրակից խլեց ու իր ազդրի մեջ կարեց: Դիշտ ժամանակին կարերը քանդելով՝ Չևսը ծնունդ տվեց Դիոնիսոսին (Apollod. 3.4.2-3 [3.26-28]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 112 = Sync. 185.3-7.

Կադմոս թերայեցոց թագաւորեաց. որոյ դստերն իւրոյ Սէմէղեայ լինի որդի Դիոնիսոս. ուստի Դիոնոս և Ամփիոն և Զէթոս թերայեցիք, որք գուսանական գործեացն ճարտարապետք ճանաչէին:

Κάδμος Θηβαίων έβασίλευσεν, οὗ τῆς θυγατρὸς Σεμέλης υἱὸς ὁ Διόνυσος ἐκ μοιχείας, ὄν Ἑλλη-νες Διὸς φασι μυθικῶς. Κατὰ τοῦτους Λίνος καὶ Ἀμφίων καὶ Ζῆθος λυρικοὶ Θηβαῖοι καὶ μουσουργοὶ ἐγνώριζοντο.

Կադմոսը թագավորեց թերեացիներին. նրա դուստր Սեմելեից (+ շնության հետևանքով) ծնվեց Դիոնիսոս որդին (+ որին հույներն առասպելաբար Զևսի որդին են կոչում): Այդ ժամանակ ճանաչված էին հմուտ երաժիշտներ Լինոսը<sup>1</sup> և թերեացի Զէթոսն ու Ամփիոնը<sup>2</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 116 = Sync. 186.3.

Դիոնիսոսի ծնունդ է Սէմէղայ:

Διονύσου γένεσις ἐκ Σεμέλης.

Դիոնիսոսի ծնունդը Սեմելեից:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 171-172 = Alex. α 1.46a4.2, 8.19-23.

Արամազդայ և Սեմելեայ հրադեղ Դիոնեսիոս ծնեալ եղև... (Տեսանես<sup>3</sup>) գայս շրջանակի բոցակիզեալ տունան, որ տակաւին ի վայր կաթեն գերկնի գէնն: Անդ գփափագելին, որում տրփեալն էր, հարկանէր զՍեմելէ երբեմն Արամազդ: Ահա գհրոյս ի մէջ գհուափիովտացին ծնաւ Դիոնեսիոս հնծանեան:

Διὸς τε καὶ Σεμέλης πυρλοχου-τὸς Διόνυσος ἐν Θήβαις ἐτέχθη... ὀρθῶς ἐκείνους τοὺς πεφλεγμένους οἴκους / ἀκμήν ἔτ' ἐκστάζοντας οὐρανοῦ μῆνιν; / ἐκεῖ κεραυνῶ τὴν ποθουμένην βάλλει / Σεμέλην ποθ' ὁ Ζεὺς: ὧδε μέσσον τοῦ πυρός / τὸν Εἰραφιώτην ἀπεκύησε Ληναῖον.

Արամազդից (Զևսից) և Սեմելեից (+ թերեում) ծնվեց հրադեղ (հրածին) Դիոնիսոսը: Տեսնում ես այս շուրջը շուրջ հրկիզված տները, որ դեռևս ցած են կաթեցնում երկնքի գեներ (գայրույթը): Այնտեղ մի ժամանակ Արամազդը (Զևսը) հարվածեց իր փափագած Սեմելեին, որին ցանկացել էր: Ահա կրակի մեջ ծնվեց Հնճանյան Դիոնիսոս Իրափիոսները<sup>3</sup>:

<sup>1</sup> Կալլիոպե մուսայի որդի և Օրփևսի եղբայր Լինոսը՝ Հերակլեսի երաժշտության ուսուցիչը. տե՛ս դրվագ 9, 45:

<sup>2</sup> Տե՛ս դրվագ 80, 81:

<sup>3</sup> Դիոնիսոսի մակդիրն է, որ հստակ ստուգաբանություն չունի. առաջարկված բացատրություններից մեկը կապում է այն ῥάπτω «կարել» բայի հետ: «Հնճանյան» մակդիրը հասկանալի է՝ Դիոնիսոսը գինեգործության աստվածն էր:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.8 [202] = PG 35.705.4.

Սեմեղի է շանթեաւ հարկանի: Տεμέλη κεραυνῶ βάλλεται.

Սեմելեն շանթահար է լինում:

Գրիգոր Նազ., Մ 2600 12ա, Մ 946, 5բ-6ա = PG 36.337.30-34.

Ո՞չ Դիոնիսիոս այսօրիկ, և բարձ երկնելով զանկատար ծնունդն, և աստուած այրակին և պար արբեցելոց, և զաւր լքեալ, և թեբէացւոցն անմտութիւն զնոյն պատուելով, և Սեմեղեա շանդիքն երկրպագեալ:

Οὐδὲ Διόνυσος ταῦτα, καὶ μηρὸς ὠδίνων ἀτελεὲς κύημα, ὥσπερ ἄλλο τι κεφαλὴ πρότερον. καὶ θεὸς ἀνδρόγυνος, καὶ χορὸς μεθύοντων, καὶ στρατὸς ἔκλυτος, καὶ Θηβαίων ἄνοια τοῦτον τιμῶσα, καὶ Σεμέλης κεραυνὸς προσκυνούμενος.

Արդյո՞ք Դիոնիսոսն այդ բաները չէ, նաև՝ ազգերը, որ չհասունացած մանուկ է երկնում (+ ինչպես և նախկինում գլուխը՝ մեկ ուրիշ բան<sup>1</sup>): Եվ այրակին աստվածը<sup>2</sup>, և արբածների շուրջպարը, և սանձարձակ խումբը, և նրանց պատվող թեբեացիների անմտությունը, և Սեմելի պաշտվող շանթը:

Նոննոս 1.4 [5-6] = Nonnos 39.4.

Սեմեղի դուստր էր Կաղմոսի թեբացւոց արքային. սմա տուփեալ Արամազդայ<sup>3</sup> շաղաշարեցաւ ընդ նմա և ի նախանձ շարժեաց զՀերա գկինն իւր, և նախանձայոյց լեալ Հերայ երթայ առ Սեմեղի և ասէցնա թէ «Պատրեալ լինիս ամենեկին, քանզի, որ մերձենայ առ քեզ՝ Ձևս ոչ է. քանզի առ իս գալով՝ հանդերձ փայլատակամաճք և որոտամաճք շաղաշարեալ լինի: Արդ՝ եթէ եկեսցէ առ քեզ Ձևս՝ ասա ցնա, թէ որպէս ընդ Հերայ շաղաշարիս՝ այնպէս եկ առ իս, և եթէ մերձենայ առ քեզ փայլատակամաճք և որոտամաճք՝ ճշմարտապէս Ձևս մտանէ առ քեզ, ապա թէ այլպէս՝ Ձևս ոչ է»: Ձայսոսիկ այսպէս ենթադրելով Հերայ, յորժամ եկն Ձևս առ Սեմեղի՝ հայցէ առ ի նմանէ շաղաշարի ընդ նմա որպէս ընդ Հերայ: Եւ մերձեցեալ ո-

Տεμέλη θυγάτηρ γέγονε Κάδμου τοῦ Θηβῶν βασιλέως. ταύτης ἠράσθη ὁ Ζεὺς καὶ συνεγένετο αὐτῇ, καὶ εἰς ζῆλον καὶ φθόνον ἐκίνησεν Ἥραν τὴν γυναῖκα αὐτοῦ. Ζηλοτυπήσασα οὖν ἡ Ἥρα ἀπέρχεται πρὸς τὴν Σεμέλην καὶ λέγει αὐτῇ ὅτι Ἥπατησαι τὸ ὄλον, οὐδὲ γὰρ ὁ Ζεὺς ἐστὶν ὁ συγγινόμενός σοι. ἐμοὶ γάρ, φησίν, ὅτε συγγίνεται, μετὰ ἀστραπῶν καὶ κεραυνῶν συγγίνεται. ἐὰν οὖν ἔλθῃ πρὸς σε ὁ Ζεὺς, εἶπε αὐτῶ ὅτι Ὡς συγγίνῃ τῇ Ἥρα, οὕτως σύνελθέ μοι. καὶ εἰ μὲν συγγίνεται σοι μετὰ βροντῶν καὶ κεραυνῶν, τῶ ὄντι ὁ Ζεὺς σοι συγγίνεται· εἰ δὲ ἄλλως πως, οὐκ ἔστιν ὁ Ζεὺς. ταῦτα ὑποθεμένης τῆς Ἥρας, ἐλθόντος τοῦ Διὸς πρὸς τὴν Σεμέλην, ἠτήθη παρ' αὐτῆς συγγένεσθαι αὐτῇ ὡς τῇ Ἥρα συγγίνεται. εἶτα, συγγενομένου αὐτῇ μετὰ κεραυνῶν, μὴ ἐνεγκοῦσα ἡ

Սեմելեն թեբեացիների արքա Կաղմոսի դուստրն էր: Նրա հանդեպ կրքով համակվելով՝ Արամազդը (Ձևսը) մերձեցավ նրա հետ և շարժեց իր կնոջ՝ Հերայի խանդը: Խանդով լցված՝ Հերան գնաց Սեմելի մոտ և ասաց նրան, թե՝ «Դու լիովին խաբված ես, քանզի նա, որ քեզ հետ մերձենում է, Ձևսը չէ: Չէ՞ որ, երբ գալիս է ինձ մոտ, մերձենում է շանթով ու ամպրոպով: Ուրեմն, եթե Ձևսը գա քեզ մոտ, ասա նրան՝ «Ինչպես Հերայի հետ ես մերձենում, այնպես էլ ինձ մոտ արի»: Եվ եթե նա քեզ հետ մերձենա շանթով ու ամպրոպով, ուրեմն իսկապես Ձևսն է մտնում քեզ մոտ, իսկ եթե այլ ձևով՝ ուրեմն Ձևսը չէ»: Հերան այս բաներն այսպես կարգադրեց, և երբ Ձևսը եկավ Սեմելի մոտ, սա խնդրեց նրան իր հետ մերձե-

<sup>1</sup> Ակնարկվում է Ձևսի գլխից Աթենայի ծնունդը. տես դրվագ 12:  
<sup>2</sup> Տես հաջորդ դրվագը:  
<sup>3</sup> Մ598 տոմարացու էր Արամազդը:

րոտամբ, ոչ հանդուրժեալ Սեմեղեայ բռնութեանն որոտմանցն՝ մահացաւ: Արդ՝ Զևս վաղվաղակի գմանուկն, որ էր առ նմա, առեալ՝ եհերձ գբարձան իւր և եդ ի ներքս, մինչև լինիցի ամսոց ինուկնց: Եւ էր նա Դիոնուսոս: Արդ անկատար ծնունդ ասէ գմանուկն, որ արկաւ ի բարձան, և բարձն երկնեալ ասէ, զի ծնաւ ի բարձիցն Արամազդայ:

Σεμέλη τοὺς κεραυνοὺς ἀπέθανεν. ὁ οὖν Ζεὺς θᾶπτον τὸ ἔμβρυον ὃ ἦν ἐν τῇ Σεμέλῃ λαβῶν, ἔβαλεν εἰς τὸν μηρὸν καὶ ἔρραψεν ἕως οὗ γένηται τῶν ἐννέα μηνῶν. ἦν δὲ οὗτος ὁ Διόνυσος. ἀτελὲς οὖν κύημα λέγει τὸ ἔμβρυον τοῦτο τὸ βληθὲν εἰς τὸν μηρὸν. ὠδίνοντα δὲ μηρὸν λέγει ὅτι ἐκύησεν αὐτὸν ὁ μηρὸς τοῦ Διός.

նալ՝ ինչպես Հերայի հետ: Եվ երբ մերձեցավ ամպրոպով (կայծակներով), Սեմելեն, չդիմանալով ամպրոպի ուժգնությանը, մահացավ: Այդժամ Զևսը, անմիջապես վերցնելով նրա մոտ (Սեմելի մեջ) եղած մանկանը, կտրեց իր ազդրը և դրեց մեջը (ազդրի մեջ ու կտրեց), մինչև որ դառնա իննամսյա: Դա Դիոնիսոսն էր: Ասում է, թե ազդրի մեջ դրված մանուկը չհասունացած սաղմ էր և, ասում է, ազդրը երկնում էր, քանի որ նա ծնվեց Արամազդի ազդրից (նրան ծնեց Արամազդի ազդրը):

Գրիգոր Մագիստրոս 47 (ԽԹ).4.

... գելլենացոց գբագմավէպ առասպելաբանու-  
թիւն ... Սեմելայն ... շանթիւք սատակեալ:

... հույների բազմազան առասպելները ... Սեմելեն ... շանթով սպանված:

## 71. Դիոնիսոսի դաստիարակությունը

Զևսը նորածին Դիոնիսոսին հանձնեց Հերմեսին, սա էլ տարավ նրան Բեոտիայի արքա Աթամասի ու նրա կին Ինոյի մոտ և համոզեց, որ աղջկա պես դաստիարակեն<sup>1</sup> (Apollod. 34.3 [3.28]):

Գրիգոր Նազ., Մ 2600 12ա, Մ 946, 5բ-6ա = PG 36.337.30-34.

Դիոնիսիոս... աստուած այրակին...

Διόνυσος... θεὸς ἀνδρόγυνος...

Դիոնիսիոսը... այրակին աստվածը...

Նոննոս 1.4 [6] = Nonnos 39.4.

Աստուած այրակին անուանէ զԴիոնուսոս, իբր ու երբեմն զկանանց կրեալ և երբեմն գարանց գործեալ:

Θεὸν δὲ ἀνδρόγυνον καλεῖ τὸν Διόνυσον αὐτὸν ὡς ποτὲ μὲν γυναικίζόμενον, ποτὲ δὲ ἀνδρίζόμενον.

[Գրիգորը] Դիոնիսոսին անվանում է այր-կին աստված՝ որպես մերթ կանացի հատկանիշներ ցուցաբերող, մերթ տղամարդկային:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.5-6 [202] = PG 35.705.1-2.

...այրակին Դիոնիսոս և պար

ἀνδρόγυνος ὁ Διόνυσος, καὶ χο-

Այր-կին էր Դիոնիսոսը և ար-

<sup>1</sup> Սա չար աչքից խուսափելու հին սովորույթի արձագանք է (Frazer I, 319): Աթամասի, Փրիքսոսի, Ինոյի և Սելիկերտեսի մասին տե՛ս դրվագ 26, 30:

արբեցելոցն յարմարեալ...

ρὸν μεθύντων ἐξηρητημένος.

բաժների բուշլով ուղեկցվող:

Նոննոս 4.19 [71] = Nonnos 5.19.1-3.

ԶԴիովնիսեայ ասեն, թէ և զա-  
րանց իրա գործէր և զկանանց  
կրէր, և զբական առ նովաւ մո-  
լեալս խաղացուցանէր սատիւ-  
րոսացն և սիւղենոսացն, ելա-  
նելով ընդ նմա:

Τὸν Διόνυσον... λέγουσι καὶ τὰ  
ἀνδρῶν ποιεῖν καὶ τὰ γυναικῶν  
πάσχειν, καὶ τὰς Βάκχας περὶ  
αὐτὸν μαινάδας γενομένας ἐκ-  
βακχεύειν καὶ τοὺς Σατύρους  
καὶ τοὺς Σειληνοὺς ἐξορχουμέ-  
νους περὶ αὐτόν.

Դիոնիսոսի մասին ասում են,  
թե ինչպես որ տղամարդկանց  
հատուկ բաներ էր գործում,  
այնպես էլ կանանց հատուկ  
բաներ էր կրում և իր շուրջը  
մոլեգնած բաքոսուհիներին էր  
պարեցնում, մինչ սատիրոս-  
ներն ու սիլենոսները ցատկո-  
տում էին նրա հետ<sup>1</sup> (նրա  
շուրջը մոլեգնող բաքոսուհի-  
ները և կաքավող սատիրոս-  
ներն ու սիլենոսները բաքո-  
սական պարեր էին պարում):

## 72. Աթամասի և Ինոյի խելագարությունը

Չայրացած Հերան (որպես պատիժ՝ Չևսի որդի Դիոնիսոսին դաստիարակելու համար) Աթա-  
մասին խելագարեցրեց, և նա իր ավագ որդի Լեարքոսին սպանեց իբրև եղջերուի, իսկ նրա կինը՝  
Ինոն, կրտսեր Մելիկերտեսին եռացող կաթսայի մեջ զցելով և հանելով, դիակի հետ ծովանդուն-  
դը նետվեց: Միսիփոսը Կորնթոսի Իսթնոսում գտավ Մելիկերտեսի մարմինը և նրա պատվին  
հիմնադրեց Իսթնոսյան խաղերը (Apollod. 1.9.2 [1.84], 3.4.3 [3.28-29]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172 = Alex. α 1.46a8.34-37.

Աթամաս մոլեալ աստանաւր,  
զմանուկն զիւր զԼէարքոս նե-  
տիւ յեղնորթուցն տպաւո-  
րեալ: Աստանաւր Ինո վազեալ  
անկաւ յանդնդային ալիս  
հանդերձ Մելիկերտաւ ման-  
կամբն ի կատաղւոյն:

Ἀθάμας μανεῖς ἐνταῦθα παῖδα  
Λέαρχον τόξοις ἀνεῖλεν εἰς νεβ-  
ρὸν τυπωθέντα. / ἐνθὲνδε Ἴνω  
ἦλατ' εἰς βυθοῦ κῦμα / σὺν τῷ  
Μελικέρτῃ τῷ νεογνῷ λυσσω-  
δῆς.

Այդ ժամանակ Աթամասը, խե-  
լագարվելով, իր որդի Լեարքո-  
սին եղնիկի ձագի տեղ դրեց  
ու նետով խոցեց (+ սպանեց):  
Այդ ժամանակ մոլեգնած Ինոն  
մանուկ Մելիկերտեսի հետ  
վազելով նետվեց ծովանդուն-  
դի ալիքների մեջ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118 = Sync. 189.26-27.

Փրիքսոնեայ և Մէղիկէրտեայ  
իրքն. առ որով Իսթիմին:

τὰ κατὰ Φρίξον καὶ Με-  
λικέρτην, ἐφ' οὗ τὰ Ἴσθμια.

Փրիքսոսի և Մելիկերտեսի հետ  
կապված դեպքերը. այդ առի-  
թով և Իսթմոսյան խաղերը:

<sup>1</sup> Հավանաբար «բակ» բառը Βάκχη («բաքոստի») բառի տառադարձումն է: Այն կարող է նշանակել նաև՝ «բուլ».  
այդ դեպքում հայերեն հատվածի իմաստն այլ է. «իր շուրջը պարեցնում սատիրոսների և սիլենոսների մոլեգնած  
բուլ, որոնք ցատկոտում էին իր հետ»:

### 73. Գիոնիսոսը և ողբերգությունը

Գիոնիսոսի կերպարը կապված է այժի հետ. Չևսը նրան ուլիկ դարձրեց, որպեսզի գերծ պահի Հերայի գայրության (Apollod. 3.4.3 [3.29]), իսկ երբ աստվածները Տիփոնի ահից փախել էին Եգիպտոս, Գիոնիսոսն այժ էր դարձել (տե՛ս Ant. Lib. 28, *Ov. Met.* 5.325–331): Գիոնիսոսին՝ գիոնու աստծուն նվիրված ծեսերի ժամանակ սովորաբար այժ էր զոհաբերվում: Ըստ Վերգիլիուսի՝ և՛ ողբերգությունը, և՛ կատակերգությունը ծագել են այդ զոհաբերություններից (տե՛ս Verg. *Ge.* 2.380–384): Հունարեն *τραγωδία* («ողբերգություն, տրագեդիա») բառը կազմված է *τράγως* «նոխազ» և *ᾠδή* «երգ» բաղադրիչներից («նոխազերգություն»): Կատակերգության ծագումը կապում էին նաև Գիոնիսոսի պատվին կատարվող փալլոսական շքերթների հետ (Herodot 2.49, Arist. *Poet.* 1449.a10-14):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 192 = Sync. 286.11-12.

Առ այսու ժամանակաւք ազոնարարացն տրագոս տուաւ՝ որ է քաւշ. ուստի ասեն զտրագովգեանս կոչել:

Τοῖς ἀγωνίζομένοις παρ’ Ἑλλησι τράγος ἐδίδοτο, ἀφ’ οὗ καὶ τραγικοὶ ἐκλήθησαν.

Այս ժամանակ (Հուլյների մոտ) մրցողներին տրվում էր տրագոս, որ նոխազն է, որտեղից էլ նրանք կոչվեցին տրագեդիականներ:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Դավիթ քերականի մեկնությունից). Բ.18.

Իսկ ողբերգութիւնն նոխազերգութիւն ասի ըստ յունականին առ ի պաշտան առեալ Դիոնիւսեայ ումեմն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի:

Ողբերգութիւնը Հունարեն կոչվում է «նոխազերգութիւն»՝ որթը Հայտնագործող ոմն Դիոնիսոսի<sup>1</sup> պաշտելուց, ինչը Հայտնի պատմութիւնն է:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Անանուն քերականի մեկնությունից). Բ.21.

Քանզի զողբերգութիւնն սակս այնորիկ ասեն նոխազերգութիւն, զի զողբերգութիւնս իւրեանց ի սկսանելն և ի կատարելն նոխազաւք մեծարեալ լինելն, որք նուիրելն ձաւնեալք Դիոնիւսի՝ գտողի որթոյ:

Ողբերգութիւնն այն պատճառով է կոչվում «նոխազերգութիւն», որ իրենց ողբերգութիւնների սկզբում և վերջում այժերով էին մեծարանք անում, որոնց նվիրաբերում էին Դիոնիսոսին՝ որթը Հայտնագործողին:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 126.

Զի ողբերգութիւն ի Հայուսն «նոխազերգութիւն» ասի ըստ յունականին՝ առ ի պաշտան առնելոյ Դիոնիսեայ ումեմն գտողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի: Եւ զողբերգութիւն սակս այնորիկ ասեն «նոխազերգութիւն», զի յողբերգութիւնս իւրեանց ի սկսանելն և ի կատարելն նոխազաւք մեծարեալ լինելն, որք նուիրելն ձաւնեալք Դիոնիսեայ:

Ողբերգութիւնը Հայերեն կոչվում է «նոխազերգութիւն» ըստ Հունարենի՝ որթը Հայտնագործող ոմն Դիոնիսոսին պաշտելուց, որը Հայտնի պատմութիւնն է: Եվ ողբերգութիւնն անվանում են «նոխազերգութիւն» այն պատճառով, որ իրենց ողբերգութիւնների սկզբում և վերջում այժերով էին մեծարանք անում, որոնց նվիրաբերում էին Դիոնիսոսին:

<sup>1</sup> Խաղողի որթը Գիոնիսոսից հայտնագործվելու մասին տե՛ս դրվագ 75:



Եսայի Նչեցի, Քերակ. 41.

Իսկ ի հոռոմին ողբերգութիւն «նոխազերգութիւն» ասի՝ առ ի պաշտան առեալ Դիոնիսեայ ումեմն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի: Եւ զսա վասն այնորիկ ասէին «նոխազերգութիւն», զի ի սկսանելն և յաւարտելն զսա նոխազաւք մեծարեալ լինէին:

Առաքել Սիւնեցի, Քերակ. 87.

Դարձեալ՝ «ողբերգութիւն գնոխազերգութիւնն» ասէ, այս է զի ասեն հեթանոսք, թէ Դիոնիսիոս աստուածն զխաղողն և զգինին շնորհեաց մեզ, վասն որոյ զնորա տաւնն, որ ձաւնմունք առնէին յառաջնումն և ի վախճան տաւնին այժ և քաւ զմատաղ առնէին: Այլ ուրախութիւն՝ իմաստասիրական ոճով խրոխտ, և ոչ՝ որպէս շինականք:

Գրիգոր Նազ., Մ2600, 12ա, Մ946, 6ա = PG 36.337.37-38.

Եւ ոչ փաղղոսք ոմանք և ուղղափաղղոսք, դարչելիք և ձեռվքն և իրաւքն:

Նոննոս 1.6 (7) = Nonnos 39.6.

Ի տաւնին Դիոնիսոսի փաղղոսս մորթեղէնս ձեացուցանէին առն պատկառանաց եղբենացիքն, և զոմանս կախէին ի պարանոցս իւրեանց, և զոմանս՝ ի մէջսն, ի պատիւ աստուծոյ իւրեանց, ուղղապէս կախելով ի նմանութիւն պատկառանաց ուղղորդս առնէին, զորս և ուղղափաղղոսս կոչէին, և զմիւսսն՝ կողմնափաղղոսս: Եւ զայս առնէին, պատուելով տաւն Դիոնիսի, քանզի սա, նախ քան զհանդիպելն պակշտութեամբ<sup>2</sup>, ընկղմեալ ի ծովն Ղեռնեայ, մեռաւ: Արդ՝ Դիոնիսոս, մխիթարել կամելով

Ողբերգությունը հույների լեզվով կոչվում է «նոխազերգություն»՝ որթը հայտնագործող ոմն Դիոնիսոսին պաշտելուց, որը հայտնի պատմություն է: Եվ սա «նոխազերգություն» են անվանում այն պատճառով, որ սկզբում և վերջում այծերով էին մեծարանք անում:

Դարձյալ ասում է. «ողբերգությունը նոխազերգություն է», քանի որ հեթանոսներն ասում են, թե Դիոնիսոս աստվածը մեզ խաղող ու գինի է պարգևել, և դրա համար նրա տոնի ժամանակ, տոնի սկզբում ու վերջում նվիրաբերություն անելիս՝ այժ ու նոխազ էին զոհում: Իսկ ուրախանում էին իմաստասիրական խրոխտ եղանակով<sup>1</sup>, այլ ոչ գյուղացիների պես:

Եվ արդյո՞ք ոչ փալլոսներն ու փալլոսական երթերի մասնակիցները՝ տեսքով ու հուժ-յամբ դարչելի:

Դիոնիսոսի տոնին հույները կաշվե փալլոսներ էին պատրաստում՝ առնանդամի ձև տալով, և կախում էին իրենց պարանոցից, իսկ մյուսները՝ մեջքից, իրենց աստծո պատվին. ամոթուլքի նմանությամբ դրանք ուղիղ էին կախում, ուղիղ պատրաստում և անվանում ուղիղ փալլոսներ, իսկ մյուսները՝ կողքային փալլոսներ: Եվ սա անում էին՝ պատվելով Դիոնիսոսի տոնը (սիրահարին: Քանզի ասում են, որ մի պատանի սիրահարվեց Դիոնիսոսին: Այնուհետև) նա, նախքան անառակությունը կպատահեր,

<sup>1</sup> Այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու է Առաքելն իմաստասիրական ոճը բնորոշում որպես «խրոխտ»: <sup>2</sup> Մ598 պակշտութեան աղջկան միոյ, որ:

գտնուածն պատանեկին<sup>1</sup>, թզենի պատկառանս տաշեալ՝ կախեաց զպարանոցէն, և այսպէս շրջէր. վասն որոյ և պատուելով զԴիոնուսոս՝ և եղբենացիք զփաղղոսսն զինքեամբք առնուն:

σελγείας ποντισθὲν περὶ τὴν Λέρνην ἀπέθανεν. ὁ οὖν Διόνυσος ἀφοσιώσασθαι βουλόμενος τὸν ἔρωτα τοῦ ἀποθανόντος μειρακίου, σύκινον αἰδοῖον πελεκήσας περιῆγεν εἰς τὸν ἑαυτοῦ τράχηλον, καὶ οὕτως περιήει. καὶ ἐκ τούτου τιμῶντες τὸν Διόνυσον οἱ Ἑλληνας τοὺς φαλλοὺς περιετίθεσαν ἑαυτοῖς.

Լեռնեի մոտ ծովը սուզվեց ու մեռավ: Ուրեմն Դիոնիսոսը, ցանկանալով մխիթարել (մաքրագործվել) պատանյակի տուփանքը, թզենու ամոթույք տաշեց, կախեց պարանոցից և այսպէս շրջում էր: Դրա համար էլ, պատվելով Դիոնիսոսին, հույներն իրենց շուրջը փալլոսներ են կախում:

## 74. Ակտեոն

Թերեացի հերոս Ակտեոնը որսորդություն էր անում. նրա վրա զայրացավ Չևսը՝ Մեմֆեի ձեռքը խնդրելու (Hes. fr. 217a, Paus. 9.2.3), իսկ այլ տարբերակում՝ Արտեմիսը՝ իրեն լողանալիս տեսնելու համար (Call. Lav. Pall. 107–116): Աստվածուհին Ակտեոնին եղջերու դարձրեց և կատաղեցրեց նրան ուղեկցող հիսուն շներին, որոնք չճանաչեցին ու հռչակեցին իրենց տիրոջը (Apollod. 3.4.4 [3.30-31]): Ըստ Եփրայիղեսի «Բարոսուհիներ»-ի՝ Արտեմիսն ինքը սպանեց Ակտեոնին, քանի որ նա պարծենում էր, թե պվելի լավ որսորդ է (Eur. Ba. 337–340):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173 = Alex. α 1.46a8.55-59.

Արտեմիս իջեալ՝ լուացեալ զմարմինն և սրբեալ պայծառանայր: Սա (ան)սուրբ<sup>2</sup> Աքտէոն, զոր ոչ է պարտ և արժան ասել, ետես զլոգարանսն Ղետովայ, յորոց փոխեալ եղեն մարմինք ի շանց գիշակերաց՝ վասն լոգանացն որսացեալ եղև:

εις τάσδε λιβάδας Ἄρτεμις κατελθοῦσα / φαίδρυνε χρῶτας· ὁ δὲ δύσαγνος Ἀκταίων, / ἃ μὴ θέμις, κατεῖδε λουτρὰ Λητώας. / Μεταλλαγεῖς δ' ἐς ἔλαφον ἀκλεῶς σῶμα / κυσὶν ὁμοδαίτοις διὰ τὸ λουτρὸν ἠγγρεύθη.

Արտեմիսը, իջնելով, լվալով և մաքրելով մարմինը, գեղեցկացավ: Իսկ պիղծ Ակտեոնը տեսավ այն, ինչը չի կարելի՝ Լետոյի դստեր լոգանքը. ուստի նրա մարմինը կերպարանափոխվեց (+ եղջերուի անփառունակ կերպով), և նա լոգանքի պատճառով գիշատիչ շների որս դարձավ:

Թեոն 106 = Theon 96.10-11.

...և Աքտիոն ի շանցն (կորնչել)...

... καὶ Ἀκταίων ὑπὸ τῶν κυνῶν (ἀπολωλέναι)...

... եվ Ակտեոնի՝ շների գոհ դառնալը...

Գրիգոր Նազ., Ի Բաս. 166 = Greg. Naz. in Bas. 8.2.1-2.

Բայց դու ինձ ասա՛ գեղջիւրասպանսն զՈրիովնաս և զԱքտէովնաս<sup>3</sup> զչարաղևս որսորդս:

Σὺ δέ μοι λέγε τὰς ἔλαφιβόλους σου καὶ τοὺς Ὠρίωνας καὶ τοὺς Ἀκταίονας, τοὺς κακοδαίμονας θηρευτάς.

Բայց դու ինձ պատմի՛ր եղջերու սպանող Օրիոնների<sup>4</sup> և Ակտեոնների՝ չարաբաստիկ որսորդների մասին:

<sup>1</sup> Մ598 պատանեակս տափացողս:

<sup>2</sup> Բնագրի «սուրբ» ընթերցումը սրբագրել ենք «անսուրբ»՝ ըստ հույարեմի:

<sup>3</sup> «գՈրիովնաս» և «գԱքտեովնաս» ձևերում հույարեմ հոգնակի հայցականի «-աս» վերջավորությունը նույնությամբ կրկնվել է:

<sup>4</sup> Օրիոնի մասին տես՝ դրվագ 17:

Նոննոս 2.6 [17] = Nonnos 43.2.

Աքառէովն շամբ որսայր, ետես զԱրտեմիս մերկ, և քանզի անմարթ էր զաստուածուհիսն մերկ տեսանել, մանաւանդ զկուսանսն ի նոցունց՝ բարկացեալ արդ Արտեմիս՝ կատաղեցոյց զշունսն Աքառէոնի, որք գտեալ զնա՝ սպանին. իբրուասի Աքառէովն առ ի շանց գիշատիլ:

Աκταίων κυνηγέτης ἦν, καὶ εἶδε τὴν Ἄρτεμιν γυμνὴν. ἦν δὲ ἀθέμιτον τοῦτο, τὸ τοὺς θεοὺς ἰδεῖν γυμνοὺς, καὶ μάλιστα τὰς παρθένους θεάς. Χολωθεῖσα οὖν ἡ Ἄρτεμις μανῆναι ἐποίησε τοὺς κύνας αὐτοῦ τοῦ Ἀκταίω-νος, οἵτινες εὐρόντες αὐτὸν ἀνεῖλον οὕτως ὥστε λέγεσθαι τὸν Ἀκταίωνα ὑπὸ κυνῶν συρῆναι.

Ակտեոնը շներով որս էր անում. Արտեմիսին մերկ տեսավ, և քանի որ չէր թույլատրվում աստվածուհիներին (աստվածուհիներին) մերկ տեսնել, մանավանդ նրանցից կույսերին (կույս աստվածուհիներին), Արտեմիսը բարկացավ ու կատաղեցրեց Ակտեոնի շներին, որոնք, նրան գտնելով, սպանեցին, այնպես որ ասում են, թե Ակտեոնը շներից հոշոտվեց:

### 75. Դիոնիսոսն ու խաղողի որթը

Դիոնիսոսը հայտնաբերեց խաղողի որթը, գնաց Եգիպտոսի թագավոր Պրոտևսի մոտ և արշավեց հնդիկների դեմ (Apollod. 3.5.1 [3.3.33]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106 = Sync. 179.26.

Որթոյ գիւտ ի Դիոնիսեայ ծանեալ, որ ի Սեմէղեայ:

ἀμπελοουργία ὑπὸ Διονύσου ἐγνώρισθη, οὐχὶ τοῦ ἐκ Σεμέλης.

Որթի գյուտը (խաղողագործությունը) հայտնի դարձավ Դիոնիսոսից, որը Սեմելեի որդին է (չէ):

Միխայել Ասորի Ա. 49.

Զգիւտ որթոյ առասպելեան ի Դիոնիսոյ ոչ ի Սելովմացուցն<sup>1</sup>:

Որթի գյուտը, ըստ առասպելի, Դիոնիսոսից է, ոչ Սելոմացիներից:

Գրիգոր Մազիստրոս 80 (ԻԹ).2.

Մատեանն Կռիտասայ ծերոյ յայտնէ զորթ տնկեալ Դիոնեսեայ: Հետեւին և նմա այլք ի ժամանակագրաց Աթենացուց և Ելլադացուց և բոլոր հեթանոսական մատենագիրք:

Կրիտաս ծերունու գիրքը<sup>2</sup> հայտնում է, որ որթը տնկել է Դիոնիսոսը: Նրան հետևում են նաև աթենացի և հույն մյուս ժամանակագիրներն ու բոլոր հեթանոս հեղինակները:

Յովհաննէս Երզնկացի, Ճառք Բ, էջ 55.

Նունենի Դիոնիսեայ էր ձաւնել... Նմանապէս և զորթ, թէ նա եգիտ ուրախութիւն հիւրոց:

Նունենին ձոնված էր Դիոնիսոսին<sup>3</sup>... Նմանապես՝ և խաղողի որթը, որովհետև իբր նա է գտել հյուրերին ուրախացնելու միջոցը:

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն քարգմանության, հատվածն այսպես է. «Խաղողի որթը հայտնագործեց Դիոնիսոսը, բայց ոչ այն մեկը, որ Սեմելեի որդին էր» (Chronique de Michel le Syrien, livre III, chapitre VI, p. 42):  
<sup>2</sup> Այս աղբյուրն առեղծվածային է:  
<sup>3</sup> Տես հաջորդ դրվագը:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 129 = Alex. α 1.32.2.

Սա Փարոս կոչի, բայց Պրոտէսի սմա բնակեցայց, և շիրիմն Պրոտեայ է առ մեզ պաշտաման արժանի եղեալ:

Φάρος: Πρωτεύς δὲ αὐτόθι κατώκησεν, οὗ καὶ τὸ μνημα τοῦ Πρωτέως ἐστὶ τὸ παρ' ἡμῖν θρησκευόμενον...

Սա Փարոս է կոչվում, բայց այստեղ Պրոտեսին կբնակեցնեմ (բնակվել է Պրոտեսը), և Պրոտեսի շիրիմը մեզ մոտ պաշտամունքի է արժանացած:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 120 = Sync. 190.8-9.

Դիոնիսիոս ի Հնդիկա զաւրաժողով եղև. և զՆիսա քաղաք շինեաց առ Հնդիկ գետով:

Διόνυσος ἐπὶ Ἰνδοῦς ἐστράτευσε καὶ Νῦσαν πόλιν ἔκτισε πρὸς τῷ Ἰνδῷ ποταμῷ.

Դիոնիսոսն արչավեց Հնդիկների դեմ և Հինդոս գետի մոտ շինեց Նիսա քաղաքը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 124 = Sync. 190.16-18.

Դիոնիսիոսի գործքն, և ի Հնդիկա նորին իրքն:

Διονύσου πράξεις καὶ τὰ περὶ Ἰνδοῦς.

Դիոնիսոսի գործերն ու Հնդիկների հետ կապված իրադարձությունները:

Թովմա Արժրուհի Դ [78].

Զովսարէս ամս Ի. առ սովաւ Դիոնեսեայ զաւրաժողովն ի վերայ Հնդկաց:

Զովսարեսը՝ քսան տարի. սրա օրոք՝ Դիոնիսոսի արչավանքը Հնդիկների դեմ:

Աղեքսանդրի պատմութիւն Բ 415.

(Պովրոս թագաւոր Հնդկաց) ... ոչ միայն մարդկան եմ թագաւոր, այլև աստուածոց: Քանզի յորժամ եկի այսր, կայր աստուած ոմն, անուն նորա Դիոնեսիոս, և ես զնա հալածեցի աստի:

(Հնդիկների Պովրոս թագաւոր) ... ոչ միայն մարդկանց թագավորն եմ, այլև՝ աստվածների: Քանզի երբ եկա այստեղ, կար մի աստված՝ Դիոնիսոս անունով, և ես քչեցի նրան այստեղից:

Հմմտ. Alex. α 3.2.2.

(Βασιλεύς Πῶρος Ἰνδῶν) ... οὐ μόνον ἀνθρώπων βασιλεύς ὢν, ἀλλὰ καὶ θεῶν, παρόντα γὰρ ὄν λεγούσι Διόνυσον ἀπήλασαν τῇ ἰδίᾳ δυνάμει οἱ Ἴνδοι.

(Հնդիկների Պովրոս թագաւոր) ... ոչ միայն մարդկանց թագավորը լինելով, այլև՝ աստվածների. քանզի երբ այստեղ եկավ նա, որին Դիոնիսոս են ասում, Հնդիկները նրան սեփական ուժով քչեցին:

### 76. Գիոնիսուի պատառոտվելը տիտաններից

Քիչ հայտնի մի առասպելի համաձայն՝ Գիոնիսոսը պատառոտվում է տիտաններից ու մեռնում, իսկ հետո վերածնվում: Այն մեզ է հասել վաղ քրիստոնյա հեղինակների երկերում (Clem. Alex. Protr. 2.18.1-2 = Eus. Praep. Evang. 2.3.25.2-26.5):

Նոննոս 3.59 [56] = Nonnos 4.76.10.

... տիտանացն ասի աւշատեալ զԴիովնիսոս:

Τιτᾶνες λέγονται διασπαράξαι τὸν Διόνυσον.

Դիոնիսոսն, ասում են, պատառոտվեց տիտաններից:

Նոննոս 1.19 [12] = Nonnos 39.19.5-7.

Այլ որպէս ասէն զԴիոնիսոս ի տիրտանեացն աւշատեալ՝ որպէս և Ոսիրիս ի Տիփոնոսէ:

ὄσπερ δέ φασι τὸν Διόνυσον ὑπὸ Τιτάνων διασπαραχθῆναι, οὕτως τὸν Ὅσirin ὑπὸ Τυφῶνος.

Իսկ ինչպէս ասու՞մ են՝ Դիոնիսոսը պատառոտվեց տիրտաններից, ինչպէս Օսիրիսը՝ Տիփոնից:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.26-28 [203] = PG 35.705.26-28.

Ծաղր առնեմ ... որք ի մոլութենէն կրճատեալքն են և կամ յաւշատեալքն աստուածք:

Γελῶ... τοὺς ὑπὸ μανίας περικεκομμένους ἢ διεσπασμένους θεοῦς.

Ծիծաղում եմ ... մոլությամբ կտրտած և (կամ) պատառոտված աստվածների վրա:

Նոննոս 4.30 [75] = Nonnos 5.30.5-7.

Այլք ասէն, թէ խորհրդակցութեամբ Հերայ աւշատեցաւ ի տիրտանացն Դիոնիսոս:

ἄλλοι δὲ λέγουσιν ὅτι καθ' ὑπόθεσιν τῆς Ἥρας διεσπᾶσθη ὑπὸ τῶν Τιτάνων ὁ Διόνυσος.

Ուրիշներն ասու՞մ են, թե Դիոնիսոսը տիրտաններից պատառոտվեց Հերայի խորհրդով:

Գրիգոր Մագիստրոս 34. (ՀԹ).2

... զսանս տիրտանեան, յորում զյաւշեալ զանդամսն Դիոնիսիոսի եղին:

... տիրտանների կաթսան, որի մեջ դրեցին Դիոնիսոսի պատառոտված անդամները:

Գրիգոր Մագիստրոս 80 (ԻԹ).7-10.

Արդ սա մինչ տակաւին մանուկ տղայն էր, պատրանաւք խաբմամբ խաղուց խաբեցին Տիրտանքն, և զենեալ յաւշամբ, ի սան ամանեալ, եղին ի վերայ Հեփեստեայ, իսկ յանդամոցն ի շամփուրս հարեալ, ի վերայ ունելով հրատին: Զոր ի ճենճերաց հոտոյն ազդ եղեալ հաւրն Արամազդայ, շանթիւ զՏիրտանսն տանջէր, և զանդամսն Դիոնիսեայ ի տապանակի եղեալ, Ապոլոնի որդույ իւրոյ յանձն առնէր. իսկ նորա առեալ ի Պառնասոս տարեալ, անդ ուրեմն եղեալ: Որոյ դրան տաճարին բուսանէր որթն հրաշատեսիլ, յորոյ միոյ յողկուզէ եռապատիկ իննուց հազարաց ճմլիւր ի միում սանի: Բայց ի մեռանել սորա Դիոնիսեայ ի կաթլաց արենէն կարծեցին բուսանել զնուռնսն:

Քանի դեռ սա փոքր երեխա էր, տիրտանները խաղերով խաբեցին և, պատառոտելով սպանելով, ընկղմելով կաթսայի մեջ, նրան դրեցին Հեփեստոսի (կրակի) վրա, իսկ անդամները, հազցնելով շամփուրին, պահեցին կրակի վրա: Այդ ճենճերահոտից հայր Արամազդին նշան եղավ, և նա շանթով պատժեց տիրտաններին, իսկ Դիոնիսոսի անդամները, դնելով տապանակի մեջ, հանձնարարեց իր որդի Ապոլլոնին: Նա դրանք վերցրեց, տարավ Պառնասոսի վրա և այնտեղ զետեղեց: Նրա տաճարի դռան մոտ բուսանեց մի հրաշալի որթ, որի մի ողկուզից կարելի էր մի սանի մեջ ճմլել երեք անգամ ինը հազար<sup>1</sup>: Իսկ Դիոնիսոսի մեռնելու ժամանակ կարծում էին, թե նրա արյան կաթիլներից նուռ բուսանեց:

Հմմտ. Clem. Alex. Protr. 2.17.2 = Eus. Praep. Evang. 2.3.23.6.

οὗτοι δὴ οἱ Τιτᾶνες διέσπασαν, ἔτι νηπίαχον ὄντα.

Այս տիրտանները պատառոտեցին նրան, երբ նա դեռ մանուկ էր:

<sup>1</sup> Վերջին խոսքերը՝ «որի մի ողկուզից կարելի էր մի սանի մեջ ճմլել երեք անգամ ինը հազար», Մագիստրոսի առեղծվածային հատվածներից մեկն է, որի համար բավարար բացատրություն չենք կարող առաջարկել:

Clem. Alex. *Protr.* 2.18.1-2 = Eus. *Praep. Evang.* 2.3.25.2-26.5.

οἱ δὲ Τιτᾶνες, οἱ καὶ διασπάσαντες αὐτόν, λέβητά τινα τρίποδι ἐπιθέντες καὶ τοῦ Διονύσου ἐμβαλόντες τὰ μέλη, καθήψουν πρότερον. ἔπειτα ὀβελίσκοις περιπέραντες "ὑπείρεχον Ἥφαιστοιο." Ζεὺς δὲ ὕστερον ἐπιφανεῖς (... τάχα που τῆς κνίσης τῶν ὀπτωμένων κρεῶν μεταλαβόν...) κεραυνῶ τοὺς Τιτᾶνας αἰκίζεται καὶ τὰ μέλη τοῦ Διονύσου Ἀπόλλωνι τῶ παιδὶ παρακατατίθεται καταθάψαι. Ὁ δέ, οὐ γὰρ ἠπειθήσε Δί, εἰς τὸν Παρνασσὸν φέρων κατατίθεται διεσπασμένον τὸν νεκρόν.

Եվ տիտանները, պատառոտելով նրան, եռոտանու վրա մի կաթսա դրեցին ու, Դիոնիսոսի անդամները դրելով մէջը, նախ եփեցին, հետո, հագցնելով շամփուրներին, պահեցին կրակի վրա: Այնուհետև Զևսը, հայտնվելով ..., հավանաբար ճենճերահոտից գլխի ընկնելով եփուող մսի մասին, ... շանթահարեց տիտաններին և Դիոնիսոսի անդամները հանձնեց իր որդի Ապոլլոնին թաղելու: Նա Զևսին անհնազանդութիւն չցուցաբերեց, այլ, մեռածին պատառոտված տանելով Պառնասոս, զետեղեց այնտեղ:

Հմմտ. Clem. Alex. *Protr.* 2.19.3 = Eus. *Praep. Evang.* 2.3.28.6-7.

τοὺς γὰρ ἀποπεπτωκότας χαμαὶ ἐκ τῶν τοῦ Διονύσου αἵματος σταγόνων βεβλαστηκέναι νομίζουσι τὰς ῥοιάς.

Համարում են, որ Դիոնիսոսի՝ գետնին թափուած արեան կաթիլներից նուներիներ են աճել:

Գրիգոր Մագիստրոս 42 (ՁԲ).2.

Իսկ ի տաւնելն երգէր աւրհնութիւն Դիոնիսեայ և անէծս Տիտանեացն, իբրու թէ պատճառեղեալ նոցա Դիոնիսեայ յաւշման:

Իսկ տոնելիս երգում էր օրհնություն Դիոնիսոսին և անեծք տիտաններին, քանի որ նրանք Դիոնիսոսի պատառոտման պատճառն էին:

Յովհաննէս Երզնկացի, ձառք Բ, էջ 55-56.

Նուների Դիոնիսեայ էր ձաւնել, որպէս թէ ի նորա արեանն կաթուածոյ է բուսեալ ... զնուներն, որ ի կաթլաց արենէն Դիոնիսեայ ասնն, զայն սրբոյն Ստեփաննոսի նուիրեցին:

Նուներին ձոնված էր Դիոնիսոսին՝ իբր այն պատճառով, որ բուսնել է նրա արյան կաթիլներից ... նուներն, որ, ասում են, Դիոնիսոսի արյան կաթիլներից է, նվիրեցին սուրբ Ստեփանոսին:

Վարդան, Քերակ. 77-78.

[ԲԱՆ] «Զի զողբերգութիւնն դիւցազնաբար վերժանեացուք»: [ՄԵԿՆՈՒԹԻԻՆ] Դին «աստուած» ասի, և դիւցազնաբարն՝ «աստուածաբար», որպէս և գրեալ էր, յորժամ որ սպանին տիտանեանքն զԴիոնեսիոս աստուածազգին և անդամ-անդամ կտորեցին և յաւշեցին, նա տանէին զոչխարսն ի զոհն և յաւշէին անդամ-անդամ, և գոռոզաձայն լային աստուածաբար և ասէին, թէ՛ «Զերդ գքեզ ո՞վ լինի», և կամ՝ «Ո՞վ լնու գքո տեղն»: Եւ ա՛յդ է դիւցազնաբարն՝ թէ իմանաս:

[Մեջբերում<sup>1</sup>] «Ողբերգությունն ընթերցում ենք դյուցազնաբար»: [Մեկնություն] «դի» նշանակում է՝ «աստված», իսկ «դյուցազնաբար»՝ «աստվածաբար», ինչպես գրված էր, թե երբ տիտանները սպանեցին աստվածազարմ Դիոնիսոսին և անդամ-անդամ կտորատեցին ու պատառոտեցին, տարան զոհաբերության ոչխարները նման և անդամ-անդամ պատառոտում էին ու խրոխտ ձայնով լալիս էին աստվածաբար ու ասում, թե՛ «Քեզ պես ո՞վ կա», կամ՝ «Ո՞վ կլրացնի քո տեղը»: Դա է «դյուցազնաբար»-ը, եթե հասկանում ես:

<sup>1</sup> Դիոնիսիոս Թրակացու «Քերականութիւն»-ից:

## 77. Գիոնիսուս և Պենթևս

Գիոնիսոսը գնաց Թերե և կանանց ստիպեց թողնել իրենց տներն ու Կիթերոն լեռան վրա բա-  
քնություն անել: Իսկ Պենթևսը, որ Կադմոսից ստացել էր Թերեի թագավորությունը, փորձում էր  
նրանց խանգարել և, գալով Կիթերոն բաքնուհիներին լրտեսելու, անդամ-անդամ արվեց  
կանանց ձեռքով՝ իր մայր Ագավեի գլխավորությամբ, որը մոլուցքի պահին նրան վայրի գազանի  
տեղ էր դրել (Apollod. 3.5.2 [3.36]): Սա Եվրիպիդեսի «Բաքնուհիներ» ողբերգության համառոտ  
ամփոփումն է:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172 = Alex. α 1.46a8.40-44.

Եւ այս գետս, որ է միջի Կի-  
թերոնիս է՝ Իսմինոս է, մոլե-  
կան ջուր բերելով: Ելատէն,  
զոր տեսանես, է բարձր վերա-  
ցեալ ուսովք, աստանաւր Պեն-  
թևս, գՊանթևայ պարսն կա-  
մեցեալ տեսանել՝ է ծնաւը  
մաւրէն թշուառական յաւշ-  
յաւշ կոտորեցաւ:

οὗτος δ' ὁ ποταμὸς ἐκ μέσου  
Κιθαίρων / Ἴσμηγός ἐστι  
Βάκχιον φέρων ὕδωρ. / ἐλάτην  
ὄρᾳς εἰς ὕψος ἀρθεῖσαν  
κλάδοις; / ἐν τῇδε Πενθεὺς τοῦς  
χοροῦς κατοπτεύων / πρὸς τῆς  
τεκούσης δυστυχῆς διεσπάσθη.

Եվ այս գետը, որ Կիթերոնի  
մեջտեղից է, բաքնուական ջուր  
բերող Իսմենոսն է: Տեսնո՞ւմ  
ես եղեւնին՝<sup>1</sup> վեր խոյացող  
ճյուղերով. այստեղ թշվառա-  
կան Պենթևսը, կամենալով  
տեսնել (գիտելով) Պանթևսի  
(չիք) պարերը, իրեն ծնող մո-  
լից պատառոտվեց:

## 78. Գիոնիսոսի աստվածացումը

Գիոնիսոսը Հադեսից հետ բերեց իր Սեմելե մորը և նրա հետ երկինք բարձրացավ՝ այսպիսով  
աստված դառնալով (Apollod. 3.5.3 [3.38]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 332.

Դիոնիսիոս վասն երեւման չար գործոցն, որ  
անցին ընդ նա յայնցանէ, որ ընդ իշխանութ-  
եամբ էին, ընդ չաստուածսն համարեալ եղև:

Դիոնիսոսն իշխանության տակ գտնվողներին՝  
իր հանդեպ չար գործերի բացահայտման  
չնորհիվ դասվեց աստվածների շարքը:

Հմմտ. Alex. α 3.30.16.

Διόνυσος διὰ τὴν ἐπιφάνειαν τῶν ὑφ' ἑαυτοῦ κα-  
τεργασθέντων μετὰ τῶν θεῶν ἐστίν.

Դիոնիսոսն իր մեծ գործերի<sup>2</sup> բացահայտման  
չնորհիվ դասվեց աստվածների շարքը:

## 79. Լաբդակոսն ու Լիկոսը Թերեի գահին

Թերեի գահին մի կարճ ժամանակ նստեց Կադմոսի թոռ Լաբդակոսը, իսկ նրանից հետո՝  
Լիկոսը, որը նրա մայր Նիկտեիսի հորեղբայրն էր (Apollod. 3.5.5 [3.40], Paus. 9.5.4-5):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172 = Alex. Rec. Byz. poet. 2315.

Թագաւորի Լաբդակայ է  
տունս այս (Թերե):

է ὑπάρχουσι γὰρ δώματα Λαβδά-  
κου βασιλέως.

Սա (Թերե) Լաբդակոս թագա-  
վորի տունն է:

<sup>1</sup> Հունարեն ἐλάτη – «եղևնի» բառը ստառադարձված է՝ «ելատէ»:

<sup>2</sup> Հավանաբար κατεργασθέντων սխառմամբ ընթերցվել է որպէս κακεργασθέντων («չար գործոցն»):

Աղեքսանդրի պատմութիւն Ա 175 = Alex. α 1.46a.10.12-13.

Պարիսպքն ամենայն անկան կաղմէացոց. և ապարանքն Լիկայ, և՛ Լաբդակայ տունքն:	ἐπεὶ δὲ τεῖχη πάντ' ἔπιπτε Καδμείων καὶ μέλαθρα Λύκου καὶ τὸ Λάβδακου δῶμα.	Ընկան կաղմեացիների բոլոր պարիսպներն ու Լիկոսի ապարանքը և Լաբդակոսի տունը:
---	---	---

### 80. Չեթոս և Ամփիոն, Արիոն երաժիշտը

Թերեի արքայադուստր Անտիոպեն Չուսից ունեցավ Չեթոս ու Ամփիոն որդիներին: Չեթոսը զբաղվում էր կովաբուծությամբ, իսկ Ամփիոնին Հերմեսը քնար էր տվել, և նա երգ-երաժշտություն էր պարապում (Apollod. 3.5.5 [3.43]): Առասպելական հայտնի երաժիշտները երբեմն հիշատակվում էին միասնաբար. «Ամփիոն Թերացին և Արիոն Մեթիմնացին ... նաև (Օրփևս) Թրակացին ... սուկ երգով գազաններին ընտելացնում էր և երաժշտութեամբ ծառեր՝ կաղնիներ տեղափոխում» (Clem. Alex. Protr. 1.1.1.1-4): Հերոդոտոսը պատմում է Արիոնի ու դելֆինի մասին. Միկիլիայից Կորնթոս նավով ճամփորդելու ժամանակ նավաստիներն ուզում էին նրան ծովը նետել և տիրանալ նրա գանձերին: Արիոնի խնդրանքով թույլ տվեցին վերջին անգամ երգել, ինչից հետո նա ծովը նետվեց: Մի դելֆին նրան փրկեց և տարավ Տենարոնի հրվանդան, որտեղ Հերոդոտոսի ժամանակ գտնվում էր Արիոնին ընծայված՝ դելֆինի վրա նստած մարդ պատկերող պղնձե արձանը (Herodot. 1.23-24, Paus. 3.25.7):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 188 = Sync. 254.1-2.

Արիոն մեթիմնացի ճանաչէր. որ առ դէղփինեաւ ի Ստենարոն զերծաւ անկաւ:	Ἀρίων ἐγνωρίζετο Μηθουναῖος. οὗτος ἐπὶ δελφίνος εἰς Ταίναρον διεσώθη.	Հայտնի էր Արիոն Մեթիմնացին, որը դելֆինի վրա փրկվեց-Հասավ Տենարոն:
---	---	---

Պլատոն, Օրին. 78 = Plat. Leg. 677.d.1-5.

Բիւրրինս բիւրուց ամս զանխլեալ էին արհեստքն՝ յայնցանէ որ էին յայնժամ, և հազար ամ. յետ որոյ ոչ եղև այս ինչ և կամ այսչափ երկու հազար ամաց, ոմանք Դեղաղոսի եղեն յայտնի, և ոմանք Որփեայ, և ոմանք Պալամիդեայ, և որ առ երաժշտականան է իրս Մարսիւայ և Ողոմպոսի, և որ ինչ առ քնարաւն էր՝ Ամփիոնի...	Τοῦτο ὅτι μὲν μυριάκις μύρια ἔτη διελάνθανεν ἄρα τοὺς τότε, χίλια δὲ ἄφ' οὗ γέγονεν ἢ δις τοσαῦτα ἔτη, τὰ μὲν Δαιδάλω καταφανῆ γέγονεν, τὰ δὲ Ὀρφεῖ, τὰ δὲ Παλαμήδει, τὰ δὲ περὶ μουσικῆν Μαρσύα καὶ Ὀλύμπῳ, περὶ λύραν δὲ Ἀμφίον...	Բյուրավոր տարիներ արհեստները (նոր բաները) թաքնված էին այն ժամանակվա մարդկանցից, և դրանից հետո հազար կամ էլ երկու հազար տարի անցավ. մի բան Դեղաղոսին <sup>1</sup> հայտնվեց, այլ բան՝ Օրփևսին <sup>2</sup> , մեկ ուրիշը՝ Պալամեդեսին <sup>3</sup> , իսկ երաժշտությանը վերաբերող բաները՝ Մարսիասին ու Օլիմպոսին <sup>4</sup> , քնարինն էլ՝ Ամփիոնին...
--	--	---

<sup>1</sup> Դեղաղոսի մասին տե՛ս դրվագ 67, 117:

<sup>2</sup> Օրփևսի մասին տե՛ս դրվագ 9:

<sup>3</sup> Պալամեդեսի մասին տե՛ս դրվագ 134:

<sup>4</sup> Մարսիասն Ապոլլոնի հետ երաժշտական մրցության բռնվեց այն պայմանով, որ հաղթողը պարտվածի հետ կվարվի՝ ինչպես կամենում է: Մրցման ժամանակ Ապոլլոնը կիթառը շուռ տված էր նվագում, իսկ Մարսիասը չկարողացավ, և Ապոլլոնը հաղթող ճանաչվեց: Նա Մարսիասին կախեց մի բարձր սոճուց և կաշին քերթելով սպանեց (Apollod. 1.4.2 [1.24], Diod. Sic. 3.59): Օլիմպոսը Մարսիասի հայրն էր, հայտնի փոշուգացի սրնգահար (Plut. De mus. 1133.D):



Գրիգոր Մագիստրոս 15 (ՀԶ).16.

...կաղնեացն յայնց, որ զկնի մեթեմնացուոյն Ամփիոնի...

...այն կաղնիների, որ զնում էին Մեթիմնացի Ամփիոնի հետևից...<sup>1</sup>

Գրիգոր Մագիստրոս 30 (ԾԱ).11.

Որփիս եհաս առ քեզ հանդերձ Ալիկատրացեան Եւնոմիոսիւ ընդ ինքեան ունելով զԱրիոն. բայց զարմանամ, եթէ զիա՞րդ ի սիկիլիացուոց դարձեալ խաղաղութեամբ հասանէ, ոչ նախանձու ծովահեղձուկ ջրասուզեալ և ոչ կարատացեալ ողորմութեան դիփնի, զոր ստանձնեալ արտաքս բերէր, որ և յԱթենա զանդրիսն այսպիսի առն ի տաճարին Ապոլլոնի կանգնեալ պարտ վարկանէին:

Քեզ հասավ Օրփևսը՝ Ալիկատրացի (Լոկրացի) Եվնոմոսով հանդերձ՝ իր հետ ունենալով նաև Արիոնին: Բայց զարմանում եմ, թե ինչպե՞ս սա Սիկիլիայից վերադառնալիս խաղաղությամբ տեղ հասավ՝ ո՛չ նախանձից ծովում խեղդվելով, ո՛չ էլ զգալով զելֆինի ողորմածության կարիքը, որը, նրան իր վրա վերցնելով, դուրս բերեց. անգամ Աթենքում հարկ համարեցին այսպիսի այրի արձանը կանգնեցնել Ապոլլոնի տաճարում:

Յովհ. Սարկաւագ, Առ ձագն որ կոչի սարեկ 322.

Ամփիոն այր Թեբայեցի և Արիոն Մեթիմնացի, / Որփևս Թրակացի, այս երաժիշտք են մեծագով:

Թեբացի այր Ամփիոն և Արիոն Մեթիմնացի, Օրփևս Թրակացի՝ սրանք մեծ գովասանքի արժանի երաժիշտներ են:

81. Թեբեի պարսպապատումը

Չևսի և Նիկուսի դուստր Անտիոպեի (Չևսը գայթակղեց նրան՝ սատիրոսի կերպարանք ընդունած) գավակներ Չեթոսն ու Ամփիոնը թագավորեցին Թեբեում և պարսպապատեցին քաղաքը. քարերն ինքնաբերաբար շարվում էին՝ հետևելով Ամփիոնի քնարի հնչյուններին (Apollod. 3.5.5 [3.44], Sch. Apollod. Rhod. *Argon.* 4.1090):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 185.10.

Ամփիոն և Չէթոս Թեբայեցուց թագաւորեցին:

Ἀμφίων καὶ Ζήθος Θεβαίων ἐπισταύλων ἐβασίλευον.

Ամփիոնն ու Չէթոսը թագավորեցին (+ յոթնադուռն) Թեբեացիներին (Թեբեին):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 120-122 = Sync. 183.20-21.

Ամփիոն Թեբայեցուց թագաւորեաց. զորմէ վիպի գավին (կամ դափ) հարկանել և գքարինս դռնչեցուցանել. քանզի էին ապուշք ոմանք լսաւքն:

Ἀμφίων Θεβῶν ἐβασίλευσεν, ὡς ἄλλοι οὗτος ἐμυθεύετο κίθαρίζων θέλγειν τοὺς λίθους, οὗς εὐλόγως ὑποληπτέον ἡλιθίους τινὰς ἀνθρώπους.

Ամփիոնը թագավորեց Թեբեացիներին (+ ինչպես ուրիշներն են ասում). նրա մասին առասպել են պատմում, թե կլիթառ էր նվագում և քարեր

<sup>1</sup> Ամփիոնին սխալմամբ վերագրված է Արիոնի Մեթիմնացի մականունը և Օրփևսի՝ կաղնիներ շարժելու ունակութիւնը:

Թնդացնում<sup>1</sup> (դյուլթում), քան-  
զի որոշ լսողներ հիմար էին  
(իրականում կարելի է են-  
թադրել, թե դրանք ինչ-որ հի-  
մար մարդիկ էին):

Փիլոն Տիրակացի 933.

Ամփիոլն Թեբայեցի թագաւորեաց. զորմէ ի Թագաւորեց թեբեացի Ամփիոնը. նրա մասին  
վիպի դայ՝ վին հին հարկանել, և զքարինս առասպել են պատմում, թե կիթառ էր նվագում  
շունչեցուցանել. քանզի եին ապուշք ոմանք և քարեր թնդացնում, քանզի որոշ լսողներ հի-  
լսողքն: մար էին:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 168 = Alex. α 1.46.5.4-5.

... փորել զհիմունս և գայն, որն յԱմփիոնայ և ի Զեթոսէ ... փորել հիմքերը և այն քա-  
որ յԱմփիոնայ և ի Զեթոսէ սյուրսէին Զեթոսէ և ի Զեթոսէ և Զեթոսէ եղբայրները, որ դասավորվել էին Ամ-  
եղբարցն ի քնարէ յարմարեալ և յարմարեալ և յարմարեալ և յարմարեալ և յարմարեալ և յարմարեալ  
պատկանեցան քարինքս: քնարի օգնութեամբ:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 171 = Alex. α 1.46.a8.4-7.

... գայսպիսի պարիսպս շինեալ ի Զեթոսէ և յԱմփիոնայ, տὰ τείχη ταῦθ', ἅπερ δεδω-  
վասն զի երգով և նուագարա- μνηται / Ζηθός θ' ὁ ποιμὴν καὶ  
նաւ քնարի և դո՛ւ, Արամագ- ὁ λυρωδὸς Ἀμφίων, / οἱ Ζηθὸς  
դայ՝ որդի, զոր գաղտուկն υἱοί, οὗς λάθρα ἔτεκεν νύμφη, /  
ծնաւ հարսն և Նիւքտայ πλανηθεῖσα;  
դուստրն ի պարս մոլեալ...

... այս պարիսպները, որ շինել են (+ հովիվ) Զեթոսը և Ամ-  
փիոնը՝ երգով և քնարի նվա- գով (քնարահար), և դո՛ւ, Ա-  
րամագրի որդի՛, որին (Զեթի որդիները, որոնց) ծածուկ  
ծնեց աղջիկը՝ Նիկտուսի դուստրը՝ մոլեգին պարերին տրված...

Գրիգոր Նազ., Ի Բաս. 203 = Greg. Naz. in Bas. 63.2.1-2.

Զինչ ինձ առ այն գործ և թ- Ի մոլեգին ինչն էս գործ ունեմ ես դրա հետ՝  
նադուռն բերէ... Ի մոլեգին ինչն էս գործ ունեմ ես դրա հետ՝ յոթնադուռն Թեբեի<sup>2</sup>...

Նոնոս 2.22 [23] = Nonnos 43.18.2-3.

Բիովտացոց Թեբաս եղադաց- Աί ἐπτάπυλοι Θῆβαι εἰσι τῆς Զոթնադուռն Թեբեն Հելլադա-  
ւոց և թնադուռն է, այն որ Ἑλλάδος, αἱ ὑπὸ Ἀμφίονος καὶ յի Բետտիայինն (Հելլադա-  
յի) է. այն, որ կառուցվել է յԱմփիոնի և Զեթոսի թմբուկ- ներով (կիթառով)...

<sup>1</sup> Ինչպես «դնչեցուցանել», այնպես էլ հաջորդ հատվածի «շունչեցուցանել» բայերը նշանակում են «թնդեցնել», ինչը հակասում է պատմի տրամաբանությանը: Հավանաբար Եվսեբիոսի թարգմանիչը սխալ է հասկացել բնագիրը:  
<sup>2</sup> Անշուշտ «բերէ» առաջացել է «Թեբէ»-ի սխալ ընթերցման հետևանքով:

## 82. Նիոբե և Լետո

Նիոբեն պարծենում էր, թե Լետոյից ավելի հարուստ է իր բազմաթիվ զավակներով: Չայրացած Լետոն իր զավակներ Արտեմիսին ու Ապոլլոնին գրգռեց Նիոբեի դեմ, և նրա աղջիկներին հենց տանը նետահարեց Արտեմիսը, իսկ Կիթերոնի վրա որս անող տղաներին՝ Ապոլլոնը (Hom. *Il.* 24.602–617, Diod. Sic. 4.74, Paus. 1.21.3, 2.21.9, 5.11.2, 5.16.4, 8.2.5, 8.2.7, Tzetz. *Chil.* 4.416ff., Ov. *Met.* 6.146–312, Hyg. *Fab.* 9, 11, Apollod. 3.5.6 [3.46]):

Գիրք պիտոյից III.1 «Եղծ զՆեովբայ» բ [61].

Եւ մանաւանդ եւս որ զՆեովբայս՝ ամենեկին անհաւատալի գրուցեալ պատմէ ճառ, ասելն զնէ՝ կին Տանտալեայ եւ յոյժ սիրելի Լետովայ դիւի մաւրն Ապոլլոնի. և զսոյն լեալ համբաւէ թաթառուչ համբաւաւք, զուգաթիւս իմն՝ վեց արուաւք, և նույնչափ իգաւք, և ապարասանեալ բայ յաղագս բազմորդութեանն, նախատէր զԼետով: Ընդ որ բարկացեալ յոյժ աստուածուհին, առաքէր ասէ զԱպոլլոն և զԱրտեմիս գիւր որդիան, և սատակեալ բառնայր Ապոլլոնիւ գարուան և Արտեմեաւ՝ զէգան: Վասն զի նպար ընձեռեալ էին, որպէս համբաւէն՝ հասուցանել զհանկարծաւրէն մահան. և զՆեովբէ ի յանկարծաղէպն և դժնդակն տրտմութենէ անզգայացեալ քարանալ, և գրէ թէ արձանն մինչև ցայժմ ևս արտաւար թորէ:

Եվ մանավանդ այն անհավատալի ճառը, որ պատմում է Նիոբեի մասին, ասելով, թե նա Տանտալոսի կինն<sup>1</sup> էր և շատ սիրելի էր Լետո դիցուհուն՝ Ապոլլոնի մորը: Պատմում է, թե նա հարուստ էր հավասար թվով զավակներով՝ վեց արուներով ու նույնքան էգերով, և, ասում է, հպարտանալով իր բազմազավակությամբ՝ նախատում էր Լետոյին: Աստվածուհին, ասում է, դրանից սաստիկ զայրացած, ուղարկեց իր զավակներ Ապոլլոնին ու Արտեմիսին և Ապոլլոնի ձեռքով սպանեց տղաներին, իսկ Արտեմիսի՝ աղջիկներին: Քանզի խնջույք<sup>2</sup> էին կազմակերպել, ինչպես պատմում են, հանկարծակի սպանելու համար: Եվ Նիոբեն անսպասելի ու դժնդակ դժբախտությունից անզգայացավ և քարացավ, ու գրում է, թե մինչ օրս արձանն արտասովում է:

Մովսէս Խորենացի Ա. 18 [56.22-23].

Այլ թէ ակորթես առասպել՝ և Շամիրամ քար առաջին քան զՆիոբէ:

Իսկ եթե առասպել ես ուզում, Շամիրամն էլ քար դարձավ Նիոբեից առաջ:

## 83. Թեբե ուղարկված Սփինքսը

Կրեոնի թագավորության օրոք Հերան Թեբե էր ուղարկել Եքիդնայից և Տիփոնից ծնված Սփինքսին՝ կանացի դեմքով, աշյուծի կրծքով, թաթերով ու պոչով և թռչնի թևերով: Նա մի հանելուկ էր ասում թերացիներին. «Այն ի՞նչն է, որ, միևնույն ձայնն ունենալով, լինում է չորքոտանի, երկոտանի և եռոտանի»: Թեբեացիները փորձում էին կռահել, թե դա ինչ է նշանակում, և երբ չէին գտնում, Սփինքսը նրանց խժռում էր (Hes. *Theog.* 326, Apollod. 3.5.8 [52-53]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 183.25-28.

Սփինքայն՝ ասէ Պաղէփատոս՝ թէ Կաղմեայ կին էր, և առ նախանձու Արմոնեայ ապստամբեալ՝ ընդ կաղմացիս մարտնչեալ:

Σφίγγα, ἢν Παλαίφατος Κάδμου γυναικὰ φησι γενομένην διὰ ζήλον Ἀρμονίας ἀποστᾶσαν Καδμείοις πολεμεῖν.

Պաղեփատոսն ասում է, որ Սփինքսը Կաղմոսի կինն էր և, Հարմոնիայի խանդի պատճառով ապստամբելով, մարտնչում էր կաղմեացիներին<sup>3</sup> դեմ:

<sup>1</sup> Այստեղ սխալ է սպրդել. նա Տանտալոսի դուստրն էր:

<sup>2</sup> Այստեղ «նպար ընձեռեալ էին» չի բխում դեպքերի հաջորդականությունից և այնքան էլ հասկանալի չէ:

<sup>3</sup> «Կաղմեա»-ն Կաղմոսի հիմնադրած Թեբեի մյուս անունն էր:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173.

Այս մեր (Ս)փինքս, յորում կապեալ ծրարեցաւ հրեշաւորի խառնուած, գործելով ի մէջ ժողովրդոց խեռաստամբակութիւն, զոր Եւզիպուս սպան, բազում հոգս հոգացեալ:

Այս մեր Սփինքսը, որի մեջ ամփոփվեց հրեշավորի խառնվածքը, ժողովրդի մեջ խռովություն էր հարուցում. նրան սպանեց Էզիպուսը՝ բազում հոգսեր հոգալով:

Հմմտ. Alex. a 1.46a8.50-52.

ή Σφίγξ ἐπ’ αὐτῆς ἔζεθ’ ἡ τεραστία / πρόσταγμα προστάττουσα δημόταις πᾶσιν, / ἦν Οἰδίπους ἀνεῖλε πολλὰ μερμήρας.

Նրա վրա նստած էր հրեշավոր Սփինքսը՝ բոլոր քաղաքացիներին հրահանգ տալով. նրան սպանեց Էզիպուսը՝ շատ հոգսեր հոգալով:

84. Էդիպուսի ողբերգությունը

Էդիպուսը գտավ հանելուկի լուծումը՝ ասելով, որ այն վերաբերում է մարդուն. նա չորքոտանի է մանուկ հասակում, հասակ առնելով դառնում է երկոտանի, իսկ ծերանալով որպես երրորդ հենարան զավազան է վերցնում: Սփինքսը ցած նետվեց միջնաբերդից, իսկ Էդիպուսը ստացավ թագավորությունը, անգիտաբար ամուսնացավ իր մայր Իոկաստեի հետ և նրանից ունեցավ Պոլինիկես ու Էտեոկլես որդիներին և Իսմենե ու Անտիգոնե դուստրերին: Երբ գաղտնիքը բացահայտվեց, Իոկաստեն կախվեց, իսկ Էդիպուսը, կուրացնելով իրեն, վտարվեց Թեբեից՝ անիծելով օգնության չեկած իր զավակներին (Apollod. 5.8-9 [3.54-56]): Էդիպուսի առասպելն ամենից վառ կերպով ներկայացված է Սոփոկլեսի «Էդիպուս արքա», «Էդիպուսը Կորինոսում» և «Անտիգոնե» ողբերգություններում:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172.

Աստ արար կին չար դևն (ուղղելի՛ չարդևն<sup>1</sup>) և թշուռուականն զհայրասպանն զԵւզիպուս՝ ողորմելի և զվշտազին<sup>2</sup> մայրն:

Այստեղ Էզիպուսին հայրասպան դարձրեց դժբախտ և թշվառական կինը՝ ողորմելի ու վշտազին մայրը:

Հմմտ. Alex. a 1.46a8.14-15.

ὁ δὲ τί δὲ δυσδαίμων / πατρὸς φονευτὴν Οἰδίπουν λυγρὰ μήτηρ...

Իսկ նա ինչո՞ւ ողորմելի, հորը սպանող Էզիպուսին՝ վշտազին<sup>3</sup> մայրը...

Հմմտ. Alex. Rec. Byz. poet. 2316-2317.

ἐν ταύτῃ δὲ προσέδειμε δυσδαίμων, πατροφόνον Οἰδίπουν, μήτηρ ἡ λυγρὰ.

Այստեղ Էզիպուսին հայրասպան դարձրեց դժբախտ և վշտազին մայրը<sup>4</sup>:

<sup>1</sup> «Չարաղև»-ը հունարեն *κακοδαίμων* («դժբախտ») բառի ճգրիտ համարժեքն է:  
<sup>2</sup> Այս հայցականի ձևն աղավաղման արդյունք է. հունարեն երկու խմբագրություններում էլ «մայր»-ն ուղղականով է:  
<sup>3</sup> Այս հատվածն աղավաղված է:  
<sup>4</sup> Էդիպուսի մոր այսպիսի դերը կամ բնագրերի աղավաղման, կամ էլ առասպելի յուրովի մեկնաբանման արդյունք է:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172, Հմմտ. Alex. α 1.46a8.38-39.

<p>Աստուած կուր Եւրիպուս ի բաց Հալածեցաւ Հրամանաւ Կրետայ<sup>1</sup>, որոյ ցուպն պատե- րազմ շրջէր (տարընթ. շնչէր):</p>	<p>ἐνθὲνδε πηρὸς Οἰδίπους ἀπηλάσθη / ταγαῖς Κρέοντος· οὗ τὸ βάκτρον Ἴσμήνη.</p>	<p>Այստեղից Կրեոնի Հրամանով վտարվեց կուրը (խեղված) Էւրիպուսը, որի ցուպը պատե- րազմ էր շնչում (հենարանն Իսմենեն էր):</p>
--	---	---

Պղատոն, Օրին. 411.

<p>զԻրիպոս ասեմք եթէ անարգեալ մաղթեաց բարկութեամբ վասն զաւակաց իւրոց, զոր և ամենայն ոք երգէ, և կատարելապէս լսելի եղև առ ի յաստուածոցն: Եւ վասն թագաւորութեանն թեբայեցոց՝ որդիքն որ անարգեցին զսա անաւրէնութեամբն առ կնոջ սորա, զմիմեանս սպանանեն:</p>	<p>Էւրիպուսի մասին ասում ենք, թե, անարգվելով, զայրացած մաղթանքներ (անեծքներ) արտասանեց իր զավակների հասցեին, ինչի մասին ամեն ոք երգում է, թե աստվածները հաստատ լսեցին: Եվ որդիները, որ անարգեցին նրան կնոջ հետ անօրինության համար, հանուն թեբեացիների թագավորության միմյանց սպանեցին:</p>
---	---

Հմմտ. Plat. Leg. 931.b.5-7.

<p>Οἰδίπους, φαμέν, ἀτιμασθεὶς ἐπηύξατο τοῖς αὐτοῦ τέκνοις ἅ δὴ καὶ πᾶς ὕμνεῖ τέλεα καὶ ἐπήκοα γένεσθαι παρὰ θεῶν.</p>	<p>Էւրիպուսը, ասում ենք, անարգվելով անիծեց իր զավակներին, ինչի մասին ամեն ոք երգում է, թե ընդունելի և լսելի եղավ աստվածներին:</p>
--	---

### 85. Արգոսի պատերազմը Թերեի հետ

Արգոսցիները յոթ գորավարներով արշավեցին Թերեի դեմ (Apollod. 3.6.3 [3.63]): Պատերազմի պատճառն Էդիպուսի որդիներ Էտեոկլեսի և Պոլիմիկեսի մրցակցությունն էր Թերեի գահի համար. Պոլիմիկեսը վտարվել էր և գնացել Արգոս, որտեղ թագավորում էր Ագրաստոսը (Apollod. 3.6.1 [3.57-58]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130 = Sync. 191.18.

<p>Եւթանեքեան ի վերայ թեբայեցոց զաւրաժողով եղեն:</p>	<p>Οἱ ἑπτὰ ἐπὶ Θήβας ἐστράτευσαν.</p>	<p>Յոթն արշավեցին թեբեացիների դեմ:</p>
--	---------------------------------------	--

Թեոն 98-100 = Theon 92.26-31.

<p>Ինքն իսկ Իսոկրատես ի կացըրգականին այսպէս. «Եկին Հերակլեայ և որդիքն, և սակաւ մի յառաջ քան զսոսա՝ Ագրաստոս Տալայոսի որդի, որ էր թագաւոր Արգոսի. զսա ի վերայ Թեբայեցոցն զաւրու երթեալ թշուաւացեալ», և զկնիսն:</p>	<p>αὐτὸς ὁ Ἴσοκράτης ἐν τῷ πανηγυρικῷ οὕτως· “ἦλθον οἱ θ’ Ἡρακλέους παῖδες, καὶ μικρὸν πρὸ τούτων Ἄδραστος ὁ Ταλαοῦ, βασιλεὺς ὦν Ἀργους, οὗτος μὲν ἐκ τῆς στρατείας τῆς ἐπὶ Θήβας δεδυστυχηκῶς” καὶ τὰ ἐξῆς.</p>	<p>Ինքը՝ Իսոկրատեսը, այսպես [խոսեց] հանդիսավոր ճառում. «Եկան նաև Հերակլեսի որդիներն ու սրանցից քիչ առաջ՝ Տալասոսի որդի Ագրաստոսը, որն Արգոսի թագավորն էր. սա, անհաջողության հանդիպելով Թերեի դեմ արշավանքում»<sup>2</sup> և այլն:</p>
---	--	---

<sup>1</sup> Հավանաբար աղավաղվել է «Կրեոնուսայ» ձևից:  
<sup>2</sup> Isocr. Paneg. 54.6-55.2:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173.

Իսկ մանկունքն պատերազմ ետուն ընդ Թեբաս: Աստուատ Պողիկէս էած զարգիացուց ժողովուրդն, զաւր արդնակիր զԼթնեռանդն զգեան:

Իսկ [Էդիպուսի] զավակները պատերազմեցին Թեբեի դեմ: Այստեղ Պոլինիկեսն առաջնորդեց արգոսցի ժողովրդին՝ նիգակակիր զորքը [Էթակի] յոթնակի եռանդով լեցուն զեառ<sup>1</sup>:

Հմմտ. Alex. a 1.46a8.60-62.

έν πᾶσιν Ἄρης ἐπολέμησε τὰς Θήβας. / ἔνθα Πολυνείκης ἤρξεν Ἀργείου λεῶ / στράπτων λοχαγὸς ἐπὶ φρουρίων λόγχης.

Բոլորի թվում Թեբեի դեմ պատերազմեց Արեսը: Այստեղ արգոսցիների ժողովրդին առաջնորդեց Պոլինիկեսը՝ յոթ պաշակակետերի դեմ նիգակակիր ջոկատի փայլուն հրամանատարը:

Alex. Rec. Byz. poet. 2340-2342.

Πολλοὶ κατεπολέμησαν ἄνδρες αὐτὰς τὰς Θήβας, ὁ Πολυνίκος στρατηγὸς Ἀργείου Λεωστράτου μέγιστον ἑπταφρούριον, καὶ λογγαγὸν τὸ τοῦτου.

Շատ այրեր պատերազմեցին հենց Թեբեի դեմ. արգոսյան աշխարհագորի զորավար Պոլինիկեսը՝ մեծագույն յոթ պաշակակետ ունեցող [քաղաքի] և նրա հրամանատարի դեմ:

86. Գուշակ Տիրեսիասի կերպարանափոխությունը

Տիրեսիասը թեբեացի կույր գուշակ էր. Չևար նրան մի քանի սերնդի կյանք էր պարզել (Hyg. Fab. 75, Phot. Bibl. 250.444b.30-31): Տեսնելով զուգավորվող օձեր և տղամարդուց փոխակերպվեց կնոջ, սակայն, կրկին զննելով նույն օձերին զուգավորվելիս, դարձյալ տղամարդ դարձավ (Apollod. 3.6.7 [3.71]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173 = Alex. a 1.46a8.31-33.

Այսօրիկ են ... Տիրեսեայ տունք, և երիցս ազգաց և դարուց աստանաւ լինի գեան<sup>2</sup>, զոր ի կին շրջեալ կերպարանեաց Տրիտոնեան:

Τειρεσίου δῶμα. / ὁ τρισγέρον ἐνταῦθα γίνεται μάντις, / ὄν εἰς γυναικα μετετόπωσε Τριτωνίς.

Սա [Թեբեն] է ... Տիրեսիասի տունը, և այստեղ նա դարձավ երեք սերունդ ու դար ապրած գուշակ, որին Տրիտոնյանը (Աթենան) կերպարանափոխեց կնոջ:

87. Թեբեի պատերազմի մանրամասներ

Երբ արգոսցիները յոթ զորավարներով արշավեցին Թեբեի դեմ, Տիրեսիասն ասաց գուշակություն հայցող թեբեացիներին, որ նրանք կհաղթեն, եթե Կրեոն արքայի որդի Մենեկեսն իրեն զոհաբերի Արեսին: Դա լսելով՝ Մենեկեսը դարպասի առջև ինքնասպան եղավ: Արգոսցիները մոտեցան Թեբեի պարսպին, և Կապանեսն աստիճան վերցրեց ու սկսեց պատն ի վեր մագլցել,

<sup>1</sup> Անհասկանալի բառակապակցություն է, հավանաբար՝ աղավաղման հետևանք:  
<sup>2</sup> «Գ-էտ» բառն է՝ սխալ գրություն:

սակայն Չևսը նրան շանթահարեց (Apollod. 3.6.7 [3.73], Aesch. *Th.* 427–434, Eur. *Phoen.* 1173–1184): Տիդևսը թերեացիներին առանձին-առանձին մարտի էր հրավիրելու և բոլորին հաղթում (Apollod. 3.6.5 [3.67]):

Գրիգոր Նազ., ճառ 4.70.9 [74] = PG 35.592.9.

Մենիւկեայ յաղագս Թեբէաց-  
ւոցն արիւնն:

τὸ Μενουκείως ὑπὲρ Θηβῶν αἶ-  
μα.

Թեբեի Համար Մենեկևսի Թա-  
փած արյունը:

Նոննոս 3.9 [29] = Nonnos 4.9.1-8.

Մենիւկևս որդի էր Կրէտվնեայ  
Թագաւորի Թեբէացւոց: Արդ՝  
մարտնչելով վասն Հայրենի  
գաւառին իւրոյ Թեբէացւոցն  
ընդ ևթն գաւրավարսն՝ Հրա-  
մանատրեաց Տերեսիաս, դիւթ  
ոմն գոլով, վաղվաղակի դա-  
դարել մարտին, և լինել նոցա  
յաղթութիւն, եթէ ի Թագաւո-  
րական զարմէն բնակելոցն  
անդ, որք բուսեալ էին յատա-  
մանց վիշապին՝ տացէ ոք  
զանձն իւր ի սպանդ: Արդ՝  
գայս իմացեալ Մենիւկեայ և  
կամեցեալ ազատել զքաղաքն  
ի պաշարմանէ անտի՝ աւան-  
դեաց զանձն իւր ի սպանումն  
առանց Հաւր իւրոյ Կրէտվ-  
նեայ:

Μενουκεὺς Κρέοντός ἐστιν υἱός,  
βασιλέως Θηβῶν. Πολεμουμέ-  
νης οὖν τῆς ἰδίας πατρίδος τῶν  
Θηβῶν ὑπὸ τῶν ἑπτα στρατη-  
γῶν, ἐχρησµώδησε Τειρεσίας,  
µάντις ὧν, παραυτὰ παύσειν τὸν  
πόλεμον καὶ ἔσεσθαι αὐτοῖς νί-  
κην, εἰ τοῦ βασιλικοῦ γένους  
τῶν αὐτοχθόνων, τῶν ἀναδοθέν-  
των ἐκ τῶν ὀδόντων τοῦ δρᾶ-  
κοντος, τίς ἑαυτὸν δῶ πρὸς ἀν-  
αίρεσιν. Μαθὼν τοῦτο ὁ Μενου-  
κεύς, καὶ θέλων ἐλευθερῶσαι  
τῆς πολιορκίας τὴν πόλιν, δέδω-  
κεν ἑαυτὸν πρὸς ἀναίρεσιν δίχα  
τοῦ πατρὸς αὐτοῦ Κρέοντος.

Մենեկևսը Թեբեի Թագավոր  
Կրեոնի որդին էր: Երբ Թեբեա-  
ցիները մարտնչում էին իրենց  
Հայրենի երկրի Համար յոթ  
գորավարների դեմ (երբ նրա  
Հայրենի Թեբեն Հարձակման  
էր ենթարկվում յոթ գորավար-  
ներից), Տերեսիասը, գուշակ  
լինելով, Հայտնեց, որ պատե-  
րազմը շուտ կդադարի, և  
նրանք Հաղթանակ կտանեն, ե-  
թե այդտեղի՝ վիշապի ատամ-  
ներից բուսնած բնիկներից  
մեկը՝ Թագավորական տոհմից,  
իրեն զոհաբերի: Մենեկևսը,  
սա իմանալով և ցանկանալով  
քաղաքն ազատել պաշարու-  
մից, ինքնասպան եղավ՝ ա-  
ռանց իր Հայր Կրեոնի:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173 = Alex. α 1.46a8.63-64.

Աստանաւր Կապանեւս առ պա-  
րիսպս բոցակէզ եղև, և  
բրուսնս գայսսսիկ կոչեն Ե-  
ղէքտրաց:

ἐνταῦθα Καπανεύς παρὰ τὸ  
χειῖλος ἐφλέχθη. / τὰς μὲν πόλας  
καλοῦσι ταύτας Ἥλέκτρας.

Այստեղ Կապանևսը պարսպի  
մոտ այրվեց, և այդ դուները  
կոչում են էլեկտրայի<sup>1</sup>:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173.

Քաղաքերեալ Տուգևս կալիդոնացի անց եկաց:

Կալիդոնացի Տիդևսը քաջաբար դիմադրեց:

<sup>1</sup> Թեբեի յոթ պարիսպները կոչվում էին Հոմոլոիդյան, Օգիգիական, Պրետիդական, Օնկաիդական, Հիսսիստական, Էլեկտրայի և Կրեմիդական (Apollod. 3.6.6 [3.68]):

## 88. Էտեոկլեսի և Պոլիմիկեսի մենամարտը

Երբ Թեբեի պատերազմում շատերն էին գրհվել, Էտեոկլեսն ու Պոլիմիկեսը մենամարտեցին գահի համար և սպանեցին միմյանց: Իսմարտը սպանեց Հիպոմեդոնին, իսկ Ամփիդիկոսը՝ Պարթենոպետսին (Apollod. 3.6.8 [3.74]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173.

Աստանաւր Կուղինիկէս և Ուղկէս ընդ մի- Այստեղ Պոլիմիկեսն ու Էտեոկլեսը միմյանց մեանս հարան: Զետ մենամարտեցին:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173, հմտ. Alex. α 1.46a8.67-71.

Ուզիգեան երեքիցս սողնակել աղխեալ դրամբք, զՀիւպոմեդոնտէ զՀիպոսթենեայ որդի սպանանէ՝ անկեալ ի ձեռս աւազակաց առ դրունս այսորիկ: Պարթենիպոս, յորժամ յերկիրս եկն ի դրունս յայս, բիւր սատակիչ անուամբ կոչեցաւ:

Ἄγυγίαις πύλεις ἐν τρίταις κληῖθρε / Ἴππομέδοντα τὸν μέγαν εὐσθενεῖτ' \*\* / εἶπεν τὸ κεδίστεσιν παρὰ πύλαις. Παρθενοποιός / ὅτε ἦν μόλην γαίης πύλαις / ὀλώλης μυριέσιν ἐκλήθη.

Երրորդ՝ Օգիգիական, սողնակով փակված դարպասի մոտ Հիպոսթենեսի որդի Հիպոմեդոնը սպանվեց՝ այս դռների մոտ ընկնելով ավազակների ձեռքը: Պարթենոպետսը, երբ եկավ այս երկիրը՝ դարպասների մոտ, կոչվեց «բյուրակորներ սպանող»<sup>1</sup>:

## 89. Ամփիարաոս և Ադրաստոս

Թեբեի համար կռիվն ավարտվեց արգոսցիների փախուստով: Երբ նրանց հրամանատար Ամփիարաոսը փախչում էր, Չևսը շանթ արձակեց և գետինը պատռեց. նա կառքի ու կառավարի հետ գետնի տակ անցավ<sup>2</sup>, և Չևսը նրան անմահացրեց: Ադրաստոսին փրկեց նրա ձին՝ Արինոնը (Apollod. 3.6.8 [3.76]):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173 = Alex. α 1.46a8.66.

ԶԱնփիարեոս բացեալ եկուկ երկիր:

Ἀμφιάραον χαίρουσα δεχοιοίτε γαῖα.

Երկիրը բացվելով (ուրախանալով)<sup>3</sup> կլանեց Ամփիարաոսին:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 173.

Աստանաւր Ադրաստոս փախեալ և մեռաւ: Այստեղ փախալ Ադրաստոսը և մեռալ<sup>4</sup>:

<sup>1</sup> Հունարեն հատվածն այնքան աղավաղված է, որ միայն առանձին մասեր են հասկանալի. «Երրորդ Օգիգիական դռների մեջ սողնակը մեծ Հիպոմեդոնին ... ասաց ... Պարթենոպետսը ... դռների մոտ կոչվեց «բյուրակորներ սպանող»»:

<sup>2</sup> Ամփիարաոսն իր կառքի ու ձիերի հետ ողջ-ողջ անդրաշխարհ իջավ (տե՛ս Eur. *Supp.* 925–925, Statius *Theb.* 8.1–20): Ըստ Սոփոկլեսի՝ նա կենդանի իջխում է Հադեսում (Soph. *Elec.* 836–841), ավելին՝ նա աստվածացվեց (Paus. 8.2.4, Cic. *Div.* 1.88), և նրա հանրահայտ պատգամատունը գտնվում էր Ատտիկեում (տե՛ս Paus. 1.34.2):

<sup>3</sup> Հավանաբար *χαίρουσα*-ի փոխարեն նախնական ընթերցումն էր՝ *χαίνουσα*, որին համապատասխանում է հայերեն քարզմանությունը:

<sup>4</sup> Ըստ առասպելի նա փրկվեց. «և մեռաւ» հավելումը միայն քարզմանության մեջ կա:



Հմտ. Alex. Rec. Byz. poet. 2343-2344.

πρὸς τὸ τεῖχος Ἄδραστος προσεξέφυγεν.

Այս պատի մոտ փախավ Ադրաստոսը:

### 90. Էպիգոնները Թերեի դեմ

Թերեի պատերազմից տասը տարի անց գոհվածների որդիները, որոնք կոչվում էին էպիգոններ<sup>1</sup>, կրկին արշավեցին Թերեի դեմ՝ ցանկանալով վրեժ լուծել հայրերի մահվան համար (Apollod. 3.7.2 [3.80]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132 = Sync. 191.28.

Եգիպտացիք զաւրաժողով ե- Օի Ἐπίγονοι τῶν ἐπὶ ἐπὶ Θή- Եգիպտացիները (յոթի էպիգոն-  
ղեն ի վերայ Թերայեցւոց: βας ἐστράτευσαν. ները) արշավեցին Թերեի դեմ:

### 91. Չևսը և Կալլիստոն. Արկասի ծնունդը

Չևսը սիրահարվեց Արկադիայի թագավոր Լիկաոնի դուստր Կալլիստոյին և Հերայից իր սե-  
րը թաքցնելու համար արջ դարձրեց նրան: Հերան Արտեմիսին համոզեց նետահարել աղջկան  
որպես վայրի գազանի: Չևսը ծնված մանկան անունը դրեց Արկաս, իսկ Կալլիստոյին աստղ  
դարձրեց ու անվանեց Արջ (Apollod. 3.8.2 [3.100-101]), նախկինում Պելասգիա կոչվող երկիրն էլ  
Արկասի անունից կոչվեց Արկադիա (Paus. 8.4.1):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 108 = Sync. 185.1-2.

Արկաս Կաղղիստեայ և Դիայ Արկաս Կաղղիստոյի ու Չևսի որդի  
զպէղէսագացիս կալաւ. և Արկա- սիծ Πελασγῶν κρατήσας Ἄρ- Արկասը գրավեց պելասգացի-  
դիա գաշխարհն անուանեաց: καδίαν τὴν χώραν μετωνόμασε. ներին և երկրի անունը դրեց  
Արկադիա:

### 92. Ատալանտե և Հիպոլոմենես

Արագավազ Ատալանտեն որոշել էր չամուսնանալ և փեսացուներին ստիպում էր իր հետ  
մրցել վազքում. ում ինքը հասներ, մահ էր վիճակված, իսկ ում չհասներ՝ ամուսնություն: Երբ ար-  
դեն շատերն էին սպանվել, եկավ նրան սիրահարված Սելանինոնը՝ քերելով Ափրոդիտեից վերց-  
րած ոսկե խնձորներ: Նա դրանք նետում էր ճանապարհին, և, գետնից խնձորները բարձրացնե-  
լով, աղջիկը տանուլ տվեց մրցավազքը (Apollod. 3.9.3 [3.107-108]): Որոշ աղբյուրներում փեսա-  
ցուի անունը Հիպոլոմենես է (Theoc. *Id.* 3.40-42, Hyg. *Fab.* 185.3, Ov. *Met.* 10.560-704, Serv.  
Verg. *Aen.* 3.113):

Գրիգոր Մագիստրոս 37 (ՁԱ).8.

Թուէր ինձ եթէ զԱտտեղանտեայ զվազան թափ Ինձ թվում էր, թե քեզ, երբ ոտքերով արագու-  
առեալ ոտիւք քեզ պատահեալ Պոմպենէս և թյուն էիր հավաքել Ատալանտեի վազքը կա-

<sup>1</sup> Բառացի՝ «հետագայում ծնվածներ, հետնորդներ». Հոմերոսին վերագրված «Էպիգոններ» կիկլիկ պոեմը (տե՛ս Herodot. 4.32, Pind. *Pyth.* 8.42, Diod. Sic. 4.66.6) և Էսքիլոսի ու Սոփոկլեսի համանուն ողբերգությունները չեն պահպանվել: Պատմական ժամանակներում «Էպիգոններ» էին կոչվում Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության տրոհու-  
մից հետո գոյացած պետությունների ղեկավարների սերունդները (տե՛ս Diod. Sic. 1.3, Dion. Hal. 1.6, Strabo 15.3.24):

պարգևեալ խնձորիւքն, որ յԱստղկանէ շնորհս, և հոլովիւք ի խաղսն անդամաբեկսն պարտեալ ուրեմն ամաչէր:

տարելիս, պատահեց չիպպոմենեսը և, պարգևելով խնձորներ, որ Աստղիկի (Ափրոդիտեի) նվերն էին, անդամաբեկ այդ խաղերում բազմիցս պարտված, ամաչեց:

Գրիգոր Մագիստրոս 72 (ԺԵ).5-6.

Այժմ զխնձորոցս կամիմք քեզ պուլետիկոսել, թէպէտև յայլոց մատենագրաց: Խնձորս երբեմն յԱստղկայ շնորհեալ՝ ոչ միայն կնոջն հասանիւր տուփանաց, այլև զկեանս շնորհեալ մնայր ի պատժիցն մահու:

Այժմ ուզում եմ քեզ բանաստեղծաբար, թեպետ այլ մատենագիրների միջոցով, պատմել խնձորների մասին: Մի անգամ Աստղիկից (Ափրոդիտեից) խնձորներ նվեր ստանալով՝ նա ոչ միայն հասավ կնոջ սիրուն, այլև մահացու պատժի փոխարեն կյանքի շնորհին<sup>1</sup>:

### 93. Ասկլեպիոսի շանթահարումը

Ձևը վախենալով, որ, Ասկլեպիոսից բժշկություն ստանալով, մարդիկ իրար կբուժեն ու չեն մեռնի, շանթահարեց նրան (Apollod. 3.10.4 [3.122], Diod. Sic. 4.71.1-3):

Վարդան, ճառք 312.

Քահանայն մեծ Գրիգորիոս... կործանէր Բէլ, խորտակէր Դագոն, մեռանէր Ջևս՝ ի կղզիս արգելեալ, շանթակէզ լինէր Ասկլիպիդէս, Արամազդ և Արես՝ առեալ զփառս իւրեանց, դիմէին յանդունդս, Աստղիկ զբողութիւն առեալ փախչէր առ հոմանիսն իւր:

Մեծ քահանա Գրիգորը կործանեց Բելին, խորտակեց Դագոնին<sup>2</sup>, Ջևսը մեռավ՝ կղզում փակված<sup>3</sup>, Ասկլեպիոսը շանթակեզ եղավ, Արամազդն ու Արեսն իրենց փառքն առած անդունդն ընկան, Աստղիկը (Ափրոդիտեն) իր բողոթյունն առնելով փախավ իր հոմանիսների մոտ:

### 94. Ջևս և Լեդա

Էտոլիայի արքա Թեստիոսի դուստր Լեդայի հետ մերձեցավ Ջևսը՝ կարապի կերպարանք ընդունած, և նույն գիշերը՝ նաև նրա ամուսին Տինդարետուր. Ջևսից ծնվեցին Պոլիդեկեսն ու Հեղինեն, իսկ Տինդարետոսից՝ Կաստորն ու Կլիտեմնեստրան: Առասպելի մեկ այլ տարբերակում Հեղինեի մայրը Նեմեսիսն է (Apollod. 3.10.7 [3.126-127]):

Գրիգոր Նազ., ճառ 4.122.2-3 [151] = PG 35.661.16-17.

Ամենայն լինելով յաղաքս կանանց Արամազդ...

πάντα γινόμενος διὰ τὰς γυναικάς, ὁ Ζεὺς...

Կանանց համար ամեն ինչ դառնալով՝ Արամազդը (Ջևսը)...

<sup>1</sup> Մագիստրոսի այս հատվածների անմիջական աղբյուրը հնարավոր չէ պարզել:  
<sup>2</sup> Աստվածաշնչում Դագոնը փոշտացիների աստվածն է. տե՛ս Դատ. ԺՁ, 23, Ա.Թագ. Ե, 2-7, Ա Մակ. Ժ, 83-84, Ես. ԽՁ, 1, Եզեկ. Ի, 46:  
<sup>3</sup> Հմմտ. դրվագ 6:

Նոննոս 3.74 [63] = Nonnos 4.91.4-6.

Ձևս ... կարապ եղեալ՝ ընդ Ղետայ պոռնկեցաւ:	ὁ Ζεὺς... κύκνος δὲ γενόμενος Λήδαν ἐπόρνευσεν.	Ձևսը, կարապ դառնալով, Լեդայի հետ պոռնկեցաւ:
---	---	---

Գրիգոր Նազ., ճառ 5.5.8 [166] = PG 35.669.33.

...զվաւաշոտ փորն...	...τὸν σελεγῆ Κύκνον ...	...վաւաշոտ կարապի մասին...
---------------------	--------------------------	----------------------------

Նոննոս 4.1 [65] = Nonnos 5.1.17-22.

Ձևս ցանկացեալ, որպէս ումանք ասեն, Նեմեսեայ և որպէս այլք Ղեդայ, և կամեցեալ խառնակել և ոչ տեսանելի դու չերայ՝ նմանեցաւ կարապի և շողաշարեցաւ ընդ տուփեցելումն: Արդ կարապն այն նկարագրեցաւ յերկինս:	ὁ Ζεὺς ἐρασθεὶς ὡς οἱ μὲν λέγουσι τῆς Νεμέσεως, οἱ δέ, τῆς Λήδας, βουλόμενος συγγενέσθαι αὐτῇ καὶ μὴ ὀραθῆναι ὑπὸ τῆς Ἥρας ἐξωμοιώθη κύκνω, καὶ συνεγένετο τῇ ἐρωμένῃ. νῦν οὖν οὗτος ὁ κύκνος κατεστηρίχθη ἐν τῷ οὐρανῷ. καὶ ἔστι, φησὶν, ὑποζωγραφηθεὶς δι' ἄστρων ὁ Κύκνος.	Ձևսը, ցանկանալով, ինչպես ումանք են ասում, Նեմեսիսին, իսկ ըստ ուրիշներին՝ Լեդային, և կամենալով խառնակվել ու չերայի համար տեսանելի չլինել, նմանվեց կարապի և մերձեցավ իր տուփեցյալի հետ: Այժմ այդ կարապը (+ համաստեղության է վերածված երկնքում: Եվ, ասում է, կարապն աստղերով) պատկերված է երկնքում (չիք):
---	---	--

Վարք Անտոնի 110-111.

Իսկ դիքն ձեր զի՞նչ. աւաղիկ Արամազդ գլխովին առ անառակութեանն կարապ ասի լինել և ցուլ և սողուն... թող և գԱպողոն աստուած ձեր, շանթաճար մեռեալ ըստ ձերոյդ վիպասանութեանց, ո՞չ և Ասկղեպիոս և չերակլէս նոյնաւրինակ երկնառաք հրով ծախեցան. զի չէին աստուածք այլ խաբեբայք:	Իսկ ի՞նչ են ձեր աստվածները. ահա Արամազդը՝ անառակության համար կարապ դարձած, նաև՝ ցուլ և սողուն <sup>1</sup> ... Էլ չեմ խոսում ձեր աստված Ապոլլոնի մասին, որ շանթաճար մեռաւ <sup>2</sup> ըստ ձեր վիպասանության. իսկ Ասկղեպիոսն ու չերակլեսը նույն երկնքից ուղարկված կրակին զոհ չգնացի՞ն <sup>3</sup> , որովհետև ոչ թե աստվածներ էին, այլ խաբեբաներ:
---	---

### 95. Գարդանիա և Տրոյա

Գարդանուր, որ Ատլասի դուստր Էլեկտրայի ու Չևսի որդին էր, հիմնեց Գարդանո քաղաքը: Երբ այդտեղի նախկին արքա Տևկրոսը մեռավ, նա ամբողջ երկիրն անվանեց Գարդանիա: Նրա որդի Էրիքթոնիոսը ժառանգեց թագավորությունը, ամուսնացավ և ունեցավ Տրոս որդուն: Մա, ստանալով թագավորությունը, երկիրն իր անունով կոչեց Տրոյա (Apollod. 3.12.1-2 [3.139-140]):

<sup>1</sup> Յլով ակնարկվում է Եվրոպեին առևանգելու պատմությունը (դրվագ 64), իսկ սողունով՝ Գեմետերի հետ վիշապի կերպարանքով խառնակվելը, որի արդյունքում ծնվեց Պերսեփոնեն. տես դրվագ 18:

<sup>2</sup> Միսալ է. շանթահար մեռավ ոչ թե Ապոլլոնը, այլ նրա որդի Ասկղեպիոսը:

<sup>3</sup> Հավանաբար ակնարկվում է չերակլեսի՝ խարույկի վրա վախճանվելը (դրվագ 59) և Ասկղեպիոսի՝ շանթահար լինելը (դրվագ 93):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 108 = Sync. 185.3.

Դարդանոս շինեաց զԴարդանիս:

Δάρδανος ἔκτισε Δαρδανίαν.

Դարդանոսը կառուցեց Դարդանիսը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 185.10-11.

Դարդանեայ Թագաւորէր Երեքթոնիոս որդի Դարդանայ:

Δαρδανίας Ἐριχθόνιος Δαρδάνου ἐβασίλευσεν.

Դարդանիայում Թագավորեց Դարդանոսի որդի Էրիքթոնիոսը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118 = Sync. 189.16-17.

Դարդանայ Թագաւորեաց Տրովս, ուստի և տրովացիք կոչեցան:

Τῆς Δαρδανίας ἐβασίλευσε Τρῶς καὶ Ἴλιος, ἀφ' οὗ Τρῶες καὶ Τρωὰς ἢ πόλις καὶ Ἴλιον.

Դարդանիայում Թագավորեց Տրոսը (+ և Իլոսը), որից և իրենց անունը ստացան տրոյացիները (և Տրոադա քաղաքն ու Իլիոնը):

Սամուէլ Անեցի 52.

Դարդանեայ Թագաւորեաց Տրովս, ուստի և Տրովացիք կոչեցան:

Դարդանիայում Թագավորեց Տրոսը, որից և տրոյացիներն ստացան իրենց անունը:

Պլատոն, Օրին. 84 = Plat. Leg. 681.e.1-5.

Հոմերոս ... «շինե», ասէ ուրուք, «Դարդանիայ, քանզի ոչ երբէք Իլոն բնակէր ի դաշտի քաղաքանալով, քաղաք բազմութեանց մարդկան. այլ տակաւին առ ծայրս լեռանց բնակէին»:

Ὅμηρος ἐπεσημήνατο... "κτίσσε δὲ Δαρδανίην" γὰρ πού φησιν, "ἐπεὶ οὕτω Ἴλιος ἰρή / ἐν πεδίῳ πεπόλιστο, πόλις μερόπων ἀνθρώπων, / ἀλλ' ἔθ' ὑπὸ πείρας ὄκουσ'".

Հոմերոսը մի տեղ ասում է. «Նա կառուցեց Դարդանիան. դաշտավայրում դեռևս բնակեցված չէր (+ սրբազան) Իլիոնը՝ բազմաթիվ (հստակախոս) մարդկանց քաղաքը. այլ նրանք բնակվում էին լեռների կատարներին (լանջերին)»:

### 96. Գանիմեդեսի առևանգումը

Տրոսի որդի Գանիմեդեսին գեղեցկության համար Չևսն արծվի օգնությամբ առևանգեց և երկնքում աստվածների մատուցակը դարձրեց (Apollod. 3.12.2 [3.141]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118.

Վասն Գանիմիդեայ առևանգութեանն, Տրովայ Հաւր Գանիմիդեայ և Տանտաղեայ ճակատք լինէին. որպէս և պատմէ Փանոկղէս. ապա ուրեմն զուր են առասպելք պւէտիկոսին, որ իբրև զարծուոյ իմն սուտ բանս կարկատէ:

Գանիմեդեսի առևանգման առիթով Գանիմեդեսի Հայր Տրոսը և Տանտալոսը ճակատամարտեցին, ինչպես պատմում է Փանոկլեսը: Ուստի իզուր է բանաստեղծի առասպելը, որ ինչ-որ արծվի մասին սուտ բաներ է կցմցում:

<sup>1</sup> Hom. II. 20.216-218.

Հմմտ. Sync. 189.22-24.

Γανυμήδην ὁ Τάνταλος ἀρπάσας υἱὸν τοῦ Τρωῶς ὑπ' αὐτοῦ κατεπολεμεῖτο Τρωῶς, ὡς ἱστορεῖ Δίδυμος ἐν ἱστορίᾳ ξένη καὶ Φανοκλῆς. μάτην ἄρα τοῦ Διὸς ὡς ἀετοῦ τοῦτον ἀρπάσαντος ὁ μῦθος καταγεύδεται.

Տանտալոսը, առևանգելով Տրոսի որդի Գանիմեդեսին, հարձակման ենթարկվեց Հենց Տրոսից, ինչպես պատմում են Դիդիմոսն «օտար» պատմություն մեջ և Փանոկլեսը: Ուրեմն առասպելն իզուր է ստեր պատմում նրան արծվի տեսքով առևանգած Զևսի մասին:

Փիլոն Տիրակացի 933.

Վասն Գանիմիդեսայ առևանկութեանն՝ Տրովայ հաւրն Գանիմիդեսայ և Տանտաղայ ճակատք լինէին, որպէս պատմէ Փանոկլէս:

Գանիմեդեսի առևանգման առիթով Գանիմեդեսի հայր Տրոսը և Տանտալոսը ճակատամարտեցին, ինչպես պատմում է Փանոկլեսը:

Գրիգոր Նազ., ճառ 4.122.2-5 [151-152] = PG 35.661.16-20.

Ամենայն լինելով յաղաքս կանանց Արամազդէ, և Փռիւզացւոց պատանեկացն արծուի ցանգացող սիրելին, զի հեշտութեամբ ի միասին գինի ըմպիցեն աստուածքն, Արամազդայ մատուակելով ի յարուզելտութիւնսն:

πάντα γινόμενος διὰ τὰς γυναικάς, ὁ Ζεὺς, καὶ Φρυξὶ μείρακίσκοις ἀετὸς ἐραστοῦς ὁ φύλτατος (ἴν' ὡς ἦδιστα συμποσιάζοιεν οἱ θεοὶ, τοῖς Διὸς οἰνοχοοῦμενοι παιδικοῖς).

Կանանց համար ամեն ինչ դարձող Արամազդը (Զևսը), նաև փոյուզացի պատանյակներին սիրելի տարփածու արծիվը, որպեսզի աստվածները հաճույքով միասին գինի խմեն՝ մինչ նա Արամազդին մատուակում է արվամուկության համար (մինչ նրանց համար մատուակում են Զևսի հոմանիսները):

Նոննոս 3.74 [63] = Nonnos 4.91.1-4.

Յաղաքս Արամազդայ ասի, թէ Զևս արծուի լեակ՝ յափշտակէ զԳանիմեդէս մանկատուփութեամբ. բայց առասպելն ունի այսպէս, թէ յափշտակեաց զԳանիմեդէս, զի արասցէ զնա մատուակել, յորժամ խրախացուցէ զաստուածսն:

Ὅ γὰρ Ζεὺς ἀετὸς γενόμενος ἤρπασε τὸν Γανυμήδην, ἐρασθεὶς αὐτοῦ πρὸς παιδεραστίαν. Φρυξὲ δὲ ὁ Γανυμήδης, ὁ δὲ μῦθος ἔχει ὅτι ἤρπασεν ὁ Ζεὺς τὸν Γανυμήδην ἵνα ποιήσῃ αὐτὸν οἰνοχόον ὅταν ἀριστοποιῇ τοῖς θεοῖς.

Արամազդի մասին պատմվում է, թե Զևսը, արծիվ դառնալով, առևանգեց Գանիմեդեսին մանկամուկության համար (+ Գանիմեդեսը փոյուզացի էր), բայց առասպելն այնպիսին է, որ նա (Զևսը) Գանիմեդեսին առևանգեց, որպեսզի նրան մատուակ դարձնի, երբ աստվածների համար խնջույք է տալիս:

Պլատոն, Օրին. 21 = Plat. Leg. 636.c.7-d.4.

Եւ ամենեքեան իսկ զկրետացիսն՝ այնմիկ որ յաղաքս Գանիմիդեսայ է առասպելաւն՝ ստորոգեմք, իբրու զբանս

πάντες δὲ δὴ Κρητῶν τὸν περὶ Γανυμήδη μῦθον κατηγοροῦμεν ὡς λογοποιησάντων τούτων· ἐπειδὴ παρὰ Διὸς αὐτοῖς οἱ νόμοι

Եվ բոլորս Գանիմեդեսի մասին առասպելի համար մեղադրում ենք կրետացիներին՝ որպես այսպիսի հեքիաթներ

զայս գործողաց: Քանզի առ յԱրամազդայ եղեալ սոցա էին աւրէնքն հաւատացեալ, և զայս առասպելս՝ առ ի յԱրամազդայ ասացին յաւելեալ. քանզի հետեւելով աստուծոյն, և զհեշտութիւնն զայնմիկ շահեցին:

Գրիգոր Մագիստրոս. 20 (Դ).19.

... որակացեալ ... յառնամոլութեան, զաւրէն արամազդեան առ արգիացիսն յափշտակութեան մանկանց, որ մատուցակէին:

Փիլ. նիս. բ 35 = Philo Prov. 2.7.

Մի՛ այնչափ երբէք սուտ ասիցես ի ճշմարտութենէն, Աղեքսանդրէ՛, մինչ զի բարեբախտիկ զոք ի թշուառականացն գոլ կարծել. զի թէպէտ և մեծատնագոյն ոք իցէ քան զԿրիստոս և քան զԼինգես սրականագոյն և երկարակեցագոյն քան զԱմենատիւով, և զեղեցկագոյն քան զԳանեմիդէս, «զոր և առեալ յափշտակեցին աստուածք Որմզդի գինէպաշտ լինել՝ վասն իւրոյ զեղեցկութեանն»:

Յովհաննէս Որոտնեցի, Հաւաքումն 241.

Ոչ է բարեբախտութիւն կարծել զմարմնական մեծութիւն և զփառս մարդկան, թէև քան զԿրիստոս մեծատուն իցէ, և քան զԼինգես սրականագոյն, և քան զԱմենտիւա երկայնակեաց և քան զԳանեմիդէս զեղեցիկ:

πεπιστευμένοι ἦσαν γεγονέναι, τοῦτον τὸν μῦθον προσεθηκέναι κατὰ τοῦ Διός, ἵνα ἐπόμενοι δὴ τῷ θεῷ καρπῶνται καὶ ταύτην τὴν ἡδονήν.

մոգոնողներ: Քանզի հավատում էին, որ իրենց օրենքներն Արամազդից (Ջևսից) են. այս առասպելն էլ վերագրել են Արամազդին (Ջևսին), որպէսզի, աստուծուն հետեւելով, ստանան նաև այդ հաճույքը:

... Հմտանալով առնամոլության մեջ, ինչպես հույները<sup>1</sup> մոտ Արամազդը (Ջևսը) առևանգում էր մանուկներին, որոնք մատուցակուճ էին:

μη̄ τοσοῦτόν ποτε ψευθείης τῆς ἀληθείας, ὡς εὐδαιμόνατινα τῶν φαύλων εἶναι νομίσαι, κἄν πλουσιώτερος μὲν ἢ Κροίσου, Λυγκέως δ' ὀξύωπέστερος, ἀνδρειότερος δὲ τοῦ Κροτωνιάτου Μίλλωνος, καλλίων δὲ Γανυμήδους, “ὄν καὶ ἀνηρείψαντο θεοὶ Διὶ οἰνοχοεῦειν, / κάλλεος εἵνεκα οἴο” (Hom. Il. 20.234-235).

Ճշմարտության դեմ երբևէ այնքան սուտ չասես, Աղեքսանդր (չիք), որ թշվառականներից որևէ մեկին բախտավոր համարես, եթե անգամ Կրեսոսից հարուստ<sup>2</sup> լինի և Լինգեսից սրատես<sup>3</sup> և Ամենտիւովից<sup>4</sup> երկարակյաց (Կրոտոնացի Միլոնից քաջ) և Գանիմեդեսից զեղեցիկ, «որին աստվածներն իր զեղեցկության համար հափշտակեցին՝ Որմզդին (Ջևսին) մատուցակուճ»:

Պետք չէ բախտավորություն համարել նյութական հարստությունն ու մարդկանց փառքը, եթե անգամ մեկը Կրեսոսից հարուստ է և Լինգեսից սրատես, և Ամենտիւայից երկարակյաց և Գանիմեդեսից զեղեցիկ:

<sup>1</sup> Մագիստրոսն «արգիացի» (Արգոս քաղաքի բնակիչ) բառն օգտագործել է հունարեն Ἀργεῖος-ի հոմերոսյան «հույն» իմաստով:

<sup>2</sup> Կրեսոսը Լիդիայի թագավորն էր մ.թ.ա. 560-547 թթ., մինչև պարսիկներից պարտություն կրելը: Նրա մասին պատմել է Հերոդոտոսն իր «Պատմության» առաջին գրքում: Կրեսոսը հայտնի էր իր հարստությամբ, և նրա անունը դարձել էր հարստության հոմանիշ: Դելփիի պատգամատանը նվիրատվությունների թվում Պապասնիսը հիշատակում է նրա նվիրաբերած ոսկե առյուծը (Paus. 10.5.13):

<sup>3</sup> Տես՝ դրվագ 38:

<sup>4</sup> Անստույգ անուն է, ինչպես և նրա տարբերակները հաջորդ երկու հատվածում:

Յովհաննէս Երզնկացի, Ճառք Թ, էջ 154.

Մի՛ զոք ի թշուառականացն բարեբախտիկ կարծեսցես, և զսնոտի և զսուտ մեծութիւն ճշմարիտ Համարեսցիս, զի թէպէտ և մեծատնագոյն ոք իցէ քան զԿրիստոս, և քան զԼինկէս՝ սրակնագոյն, և երկայնակեցագոյն քան զԱմէննտիլով, և զեղեցկագոյն քան զԳանեմիդէս, զոր և առեալ յափշտակեցին աստուածք Որմզդի գինէպաշտ լինելով, վասն իւրոյ գեղեցկութեանն:

Թշվառականներից որևէ մեկին բախտավոր չհամարես և սնոտի ու սուտ հարստությունը ճշմարիտ չկարծես, եթե անգամ մեկը Կրեսոսից հարուստ է և Լինկեսից սրատես և Ամեննտիլոյից երկարակյաց և Գանիմեդեսից ավելի գեղեցիկ, որին աստուածներն իր գեղեցկութեան համար հափշտակեցին՝ Որմզդին (Զևսին) մատուցելու:

97. Իլիոնի հիմնումն ու Պրիամոսի թագավորելը

Գարդանոսի որդի Իլոսը գնաց Փոյուգիս և այնտեղի թագավորի կազմակերպած խաղերում հաղթեց ըմբշամարտում: Թագավորը գուշակության համաձայն նրան մի բծավոր կով տվեց ու ասաց, որ քաղաք հիմնի, որտեղ այն կպառնվի. և նա հետևեց կովին: Հասնելով Փոյուգական Ատե կոչված բլրին՝ կովը պառկեց: Իլոսն այդտեղ քաղաք հիմնեց և այն անվանեց Իլիոն (Apollod. 3.12.3 [3.142-143]): Այն բանից հետո, երբ Հերակլեսն Իլիոնը գրավեց<sup>1</sup>, թագավորեց Պրիամոսը (Apollod. 3.12.5 [3.147]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 122 = Sync. 189.25.

Իղիոն յԻղիոսէ շինեցաւ: Դίλιον ὑπὸ Դίλου ἐκτίσθη. Իլիոնը Հիմնադրվեց Իլոսի ձեռքով:

Եղիշէ, Գտիչք 1014.

Իլիոն յԻշոսէ շինեցաւ: Իլիոնն Իլիոսի ձեռքով Հիմնվեց:

Միխայէլ Ասորի Ա 54.

Ի տասն և ևթն ամին Բարակայ Իղիոն շինեցաւ յԻղիոսէ: Բարակի տասնութերորդ տարուամ Իլիոնը Հիմնադրվեց Իլոսի ձեռքով:

Միխայէլ Ասորի Բ 36.

Յայսմ ժամանակի Իլիոն քաղաք յԻլոսէ շինեցաւ: Այդ ժամանակ Իլոսի ձեռքով Հիմնվեց Իլիոն քաղաքը:

Գրիգոր Տղա, «Բան ողբերգական վասն առնմանն Երուսաղեմի», 205-208 [271].

Այսաւր միայն եմ յատենին,/ Եւ աւգնականք ոչ գտանին/ Որպէս շինողք Եղիոնին: Այսօր միայնակ եմ առյանում, և օգնականներ չունեմ, ինչպես Իլիոնի Հիմնադիրները:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128.

Պրիամոս թագաւորեաց յետ Ղաւոմեղեայ՝ Իղիոնի: Պրիամոսը թագավորեց Իլիոնին Լաոմեդոնից Հետո:

<sup>1</sup> Տես նրվագ 56:

Πρίαμος υἱὸς Λαομέδοντος τῆς Τροίας καὶ Ἰλίου **Լաոմեդոնի որդի Պրիամոսը թագավորեց Տրոյային և Իլիոնին:**  
ἔβασίλευσε.

### 98. Էակոս

Պելևսի և Տելամոնի հայր Էակոսը՝ Չևսի և Էզինայի որդին, ամենաբարեպաշտ մարդն էր: Երբ Հունաստանում անբերություն էր տիրում այն բանի համար, որ Պելոպոսը սպանել էր արկադացիների Ստիսփալոս քաղափորին, աստվածների պատգամով Էակոսն աղոթք արեց, և Հունաստանն ազատվեց աղետից (Apollod. 3. [3.158-159], Paus. 2.29.7-8):

Գրիգոր Նազ., Ի Բաս. 163 = Greg. Naz. in Bas. 3.4.3.

...էակեանք...

... Αἰακίδαί...

...էակեանները...

Նոննոս 1.4 [16] = Nonnos 43.1.59-69.

Էակոս... որդի գոլ ասի Արամազդայ արդարադոյն յոյժ, վասն որոյ և երբեմն երաշտացեալ գոլով Եղդադայ՝ չոգան առ նա նախարարք քաղաքացն աղաջել զնա աղաւթս առնել առ Հայրն Իւր Արամազդ, զի լիցի անձրև: Եւ նա լուեալ ըզձացաւ, և լուծեալ ի ձեռն ըզձմանն գտոչորումն՝ ի վայր հոսեաց ջուր և ոռոգեաց զԵղդադա, և առաւել յայսմ ցուցաւ բարեպաշտութիւնն Էակոսի: Սա ծնաւ ուստերս երկու զՊելղլևս և զՏելամոն. և Պելղլևս ծնաւ զԱքիղևս, իսկ Տելամոնին զԷաս, որոյ ծնունդք կոչին Էակիլեանք զ՝առ ի Հաւրէն Իւրեանց այսու զպատիւն յառաջ բերելով:

Αἰακὸς δὲ οὗτος υἱὸς ἐλέγετο εἶναι τοῦ Διός, δίκαιος τὰ μάλιστα. διὸ ποτε ἀβροχίας γενομένης ἐν τῇ Ἑλλάδι, ἦλθον πρὸς αὐτὸν οἱ προεστῶτες τῶν πόλεων παρακαλοῦντες εὐξασθαι τῷ ἰδίῳ πατρὶ ἵνα γένηται ὑετός. ὁ δὲ στὰς καὶ εὐξάμενος, ἔλυσε διὰ τῆς εὐχῆς τοὺς ἀνχομούς. καὶ κατερρύη ὕδωρ ποτίζον τὴν Ἑλλάδα. μάλιστα οὖν καὶ ἐκ τούτου ἢ εὐσέβεια ἐδείχθη τοῦ Αἰακοῦ. οὗτος οὖν γεννᾷ δύο υἱούς, τὸν Πηλέα καὶ τὸν Τελαμῶνα, ὧν ὁ μὲν Πηλεὺς τίκτει τὸν Ἀχιλλέα, ὁ δὲ Τελαμῶν τὸν Αἴαντα. οἵτινες ἐκαλοῦντο Αἰακίδαί, τὴν ἀπὸ τοῦ πάππου τιμὴν ἐκ τούτου προσφερόμενοι.

Էակոսն, ասում են, Արամազդի (Չևսի) որդին էր՝ շատ արդար: Այդ պատճառով, երբ մի օր Հելլադայում երաշտ եղավ, քաղաքների մեծամեծները եկան նրա մոտ խնդրելու, որ աղոթք անի իր հորն ու անձրև լինի: Նա էլ, լսելով (կանգնելով), աղերսեց և աղերսանքով վերջ տվեց երաշտին. ջուրը վար թափվեց ու ոռոգեց Հելլադան, և Հատկապես սրանով բացահայտվեց Էակոսի բարեպաշտութունը: Սա ունեցավ երկու որդի՝ Պելևսին և Տելամոնին. Պելևսն ունեցավ Աքիլևսին, իսկ Տելամոնը՝ Այասին<sup>1</sup>, որի սերունդները կոչվում են Էակյաններ՝ այդպիսով իրենց հորեց (պապեց) առաջ բերելով պատիվը:

### 99. Աքիլևսի ծնունդն ու դաստիարակությունը

Պելևսն ու Թետիսն ունեցան Աքիլևսին. Պելևսը տղային տարավ Քիրոն կենտավրոսի մոտ (նա սարքում էր Թետալիայի Պելիոն լեռան մի քարայրում), որը սնեց նրան առյուծի ու վարազի ներքին օրգաններով ու արջի ու կրծքով<sup>2</sup> և անվանեց Աքիլևս, քանի որ նա շրթունքները կրծքի չէր հպել<sup>1</sup> (Apollod. 3.13.6 [3.171-172]):

<sup>1</sup> Այսպիսի անվան լատինականացված տարբերակն էր՝ Այաքս (Ajax):  
<sup>2</sup> Ըստ այլ տարբերակների՝ Քիրոնն Աքիլևսին սնում էր առյուծի մսով ու գայլի ու կրծքով (Stat. Achil. 2.99-100), մեղրահացով ու եղնիկի ու կրծքով (Philostr. Her. 730.4-5): Առյուծի, վարազի կամ արջի միս կամ ուտելով



Գրիգոր Նազ., Ի Բաս. 169.

Ո՛չ Թեսալաց ի սահմանին այրիւք աղաւթից իբրև առաքինութեան գործարան և ո՛չ Կենտուրոսիւ ոմամբ ամբարտաւանեցելով նոցին ինքեանց դիւցազանցն վարդապետաւ:

Ո՛չ աղոթքի թեսալական սահմանային քարայրով՝ որպէս առաքինության արհեստանոցով, ո՛չ էլ ամբարտավանելով ոմն Կենտավրոսով՝ հենց իրենց՝ հերոսների ուսուցչով<sup>2</sup>:

Հմմտ. Naz. *In Bas.* 12.2.

οὐ Θεταλικόν τι καὶ ὄρειον ἄντρον ἀυχῶν ὡς ἀρετῆς ἐργαστήριον, οὐδέ τινα Κένταυρον ἀλαζόνα τῶν κατ' αὐτὸν ἠρώων διδάσκαλον.

Ո՛չ պարծենալով թեսալական ու լեռնային քարայրով՝ որպէս առաքինության արհեստանոցով, ո՛չ էլ ոմն Կենտավրոսով, ըստ նրա՝ հերոսների ամբարտավան ուսուցչով:

Նոննոս 2.8 [18] = Nonnos 43.4.1-8.

Ծնեալ Աքիւղղևս ի Թետիսէ՝ աւանդեցաւ ի Քերոն, որով վարժեալ լինէր սնուցողաւն, համանգամայն և վարդապետաւ, աղեղնաւորութեանն: Եւ էր այս Քերոն՝ Իպպաւկենդոզրոս, բնակեալ յայրս ինչ քարանձաւացն ի Թետտալիայ: Արդ՝ առեալ Քերոն գԱքիւղղևս և նստուցեալ յետուստ իւր ի վերայ ձիւղէն կողմանն, սնուցանելով զնա ոչ կաթամբ կամ հացիւ, այլ ուղղովք եղջերուաց և այլոց կենդանեաց, վասն որոյ և Աքիւղղևս անուանեցաւ, իբր ոչ հաղորդեալ քիղոսի, քանզի քիղոս սովորական կերակուրս է:

Γεννηθείς ὁ Ἀχιλλεύς ὑπὸ Θετιδος παρεδόθη τῷ Χείρωνι τροφῆ ἅμα καὶ διδασκάλῳ τῆς τοξείας χρησόμενος. ἦν δὲ οὗτος ὁ Χείρων ἵπποκένταυρος, οἰκῶν ἄντρον τι καὶ σπήλαιον ἐν Θεταλίᾳ. ὁ οὖν Χείρων λαβὼν τὸν Ἀχιλλέα καὶ ἐπικαθίσας ὄπισθεν ἑαυτοῦ κατὰ τοῦ ἵππειου μέρους, οὕτως ἐγύμναζε καὶ ἐδίδαξε τὴν τοξικίην, τρέφων αὐτὸν οὐ γάλακτι καὶ ἄρτω, ἀλλὰ μυελοῖς ἐλάφων καὶ ἄλλων ζώων, διὸ καὶ Ἀχιλλεύς ὀνομάσθη, ὁ μὴ μετασχὼν τοῦ χιλοῦ· χιλὸς γὰρ ἢ τροφή.

Աքիլլեսը, ծնվելով Թետիսից, վստահվեց Քիրոնին, որից՝ դասակիրց, միաժամանակ նաև ուսուցչից, սովորում էր (պիտի սովորեր) նետաձգություն: Այս Քիրոնը կենտավրոս<sup>3</sup> էր, որ բնակվում էր Թեսսալիայի մի քարայրում: Ուրեմն, Քիրոնն Աքիլլեսին վերցնում ու նստեցնում էր իր հետևը՝ ձիու մասին (+ այդպես վարժում և սովորեցնում էր նետաձգություն), սնում նրան ոչ թե կաթով ու հացով, այլ եղջերուների և այլ կենդանիների ոսկրածուծով, ինչի համար և կոչվեց Աքիլլես, իբր՝ քիլոս չուտող, քանի որ «քիլոսը<sup>4</sup>» սովորական կերակուրն է:

Դաւիթ, Պորփ. 60.5-9 = Dav. *in Porph.* 124.4-7.

Աքիլլես հուպ ունի գսեռն ի հայրենեացն, որպէս յորժամ

ὁ Ἀχιλλεύς ἄψυχον καὶ προσεχὲς ἔχει τὸ γένος ἀπὸ πατρίδος,

Աքիլլեսն ըստ հայրենիքի (+ անշունչ և) մերձավոր ծագում

ուտելը պիտի հերոսին օժտեր այդ կենդանիների ուժով ու քաջությամբ, իսկ եղնիկինը՝ արագավազությամբ (Frazer II, 71):

<sup>1</sup> Աքիլլեսի անունը ժողովրդական ստուգաբանությամբ բխեցված է չեյն – «չրթունքներ» բառից՝ ժխտական անախճանցով՝ «անշուրթ»:

<sup>2</sup> Թարգմանությունը սխալաշատ է: Օրինակ՝ «ի սահմանին» համապատասխանում է հունարեն ὄρειον («լեռնային») բառին, որն ածական է՝ կազմված ὄρος («սար») և ոչ ὄρος («սահման») բառից, իսկ ἀυχῶν («պարծենալով»)՝ի փոխարեն կարողում ենք՝ «աղաթից»։ հետևաբար թարգմանիչը կարողացել է՝ εὐχῶν:

<sup>3</sup> Հունարեն ἵπποκένταυρος բառը (բառացի՝ «ձիակենտավրոս») կենտուրոս-ի հոմանիշն է:

<sup>4</sup> Հունարեն χιλὸς նշանակում է «ամասնակեր»։ Հոմերոսի մեկնիչ Եվստաթիոսը (Eustath. Hom. II. 1.1 [1.23.19–20]) նույնպես Աքիլլեսի անունը կապում է չիլոս բառի հետ և այն մեկնաբանում որպես բուսական կերակուր:

ասեմք զնա փտիովտացի. իսկ հեռի՝ յորժամ ասեմք զնա թետալացի. իսկ ի հաւրէ հուպ սեռ՝ որպէս յորժամ ասեմք զնա որդի Պելեայ. իսկ հեռի, որպէս յորժամ ասեմք զնա Յէսակսեայ:

ὅταν εἴπῃς αὐτὸν Φθιώτην, ἄψυχον δὲ πόρρω, ὅταν εἴπῃς αὐτὸν Θετταλὸν, ἔμψυχον δὲ προσεχές, ὅταν εἴπῃς αὐτὸν τοῦ Πηλέως, ἔμψυχον δὲ πόρρω ὅταν εἴπῃς αὐτὸν ἀπὸ τοῦ Αἰακοῦ.

ուհի, երբ, օրինակ, նրան կոչում ենք փթիացի, և (+ անչունչ ու) հեռավոր, երբ ասում ենք, թե նա թետալացի է, իսկ ըստ հոր (+ շնչավոր և) մերձավոր ծագում, երբ, օրինակ, անվանում ենք նրան Պելեայի որդի, իսկ (+ շնչավոր և) հեռավոր՝ երբ ասում ենք, թե նա էսակսուից է:

## 100. Կեկրոպս

Հողածին Կեկրոպսը մարդուց ու վիշապից բաղկացած մարմին ուներ. նա Ատտիկեի առաջին թագավորն էր և նախկինում Ակտե կոչվող գավառն անվանեց Կեկրոպիա (Apollod. 3.14.1 [3.177], *Marm. Par.* 2-4, *Eus. Praep. Evang.* 10.10.14, *Hyg. Fab.* 48): Նա կոչվում էր «երկբնույթ» կա՛մ որովհետև երկու մարդու հասակ ուներ, կա՛մ՝ հմուտ էր և՛ հունարեն, և՛ եգիպտերեն լեզուներին, կա՛մ էլ որովհետև ներքևի մասում վիշապ էր, իսկ վերևի՝ մարդ: Նա Եգիպտոսի Սայիս քաղաքից էր (Tzetz. *Chil.* 5.637-666):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 254.

Աթենացւոց առաջին թագաւորէ Կեկրոփս, որ կոչեցաւ Դիփիւէս, քան զարգիացւոց իշխանութիւնն յետոյ մաւտ ուրեմն ամաւք երեք հարիւրովք, և քան զսիկոնացւոցն կրտսեր՝ ամաւք հինգ հարիւր երեսուն և երիւք:

Աթենացիներին առաջինը թագավորեց Կեկրոպսը, որը կոչվեց Դիփիես (երկբնույթ) արգոսցիների իշխանությունից մոտ երեք հարյուր տարի հետո և սիկիոնացիների՝ հինգ հարյուր երեսուներեք տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 269, հմմտ. Sync. 179.7.

Աթենացւոց թագաւորք. Առաջին՝ Կեկրոփս Դիփիւէս, ամս ե.:

Ἀθηναίων ἁ' ἐβασίλευσε Κέκροψ ὁ διφυῆς ἔτη ν'.

Աթենացիներին թագավորներ. առաջին՝ (աթենացիներին առաջինը թագավորեց) Կեկրոպս Դիփիես՝ հինգ (հստուն) տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 102 = Sync. 179.23.

Կեկրոփս յԵւբոյիա զԱթէնաստան<sup>1</sup> և զԴիաղաս շինեաց:

Κέκροψ Ἀθήνας τὰς καὶ Διάδασ ἐν Εὐβοίᾳ τι ἔκτισεν.

Կեկրոպսը հիմնեց Աթենքը և Դիաղեն Եվբոայում:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 100.

Առ սոքաւք նախ Կեկրոփս Դիփիւէս, Ակտեայ՝ որ այժմ Ատտիկէ անուանի՝ թագաւորեաց: Առ Կեկրոպեա ձիթենի ի բարձրաւանդակի քաղաքին նախ բուսաւ և յԱթենայ Աթենք անուա-

Այդ ժամանակ նախ թագավորեց Կեկրոպս Դիփիեսը Ակտեում, որ այժմ կոչվում է Ատտիկե: Կեկրոպսի օրոք առաջին անգամ քաղաքի բարձր վայրում բուսանեց ձիթենի, և Աթենայի

<sup>1</sup> Աթենքն Եվբեա կղզում չի գտնվում. հայերեն թարգմանության մեջ շարադասությունը խախտված է:

նեցան: Կոչի երկբոյս՝ կամ վասն Հասակին երկայնութեան, կամ զի եգիպտացի էր և գերկոսին լեզուս գիտէր... Եւ նախ եզն Կեկրոփս զոհեաց. և Զևս ի նմանէ առաջինն անուանեցաւ. ուստի և աշխարհն Կեկրոպիա:

անունից այն կոչվեց Աթենք: Նա երկբոյս<sup>1</sup> է կոչվում բարձր Հասակի պատճառով, կամ որովհետև եգիպտացի էր և երկու լեզու գիտեր... Կեկրոպան առաջինը եզ զոհաբերեց և առաջինը տվեց Զևսի անունը: Նրա անունից երկիրը կոչվում է Կեկրոպիա:

Հմմտ. Sync. 179.9-1.

Κέκροψ ὁ διφυῆς τῆς τότε Ἀκτῆς, νῦν δὲ Ἀττικῆς, ἐβασίλευσεν ἔτη ν', διὰ μῆκος σώματος οὕτω καλούμενος, ὡς φησιν ὁ Φιλόχορος, ἢ ὅτι Αἰγύπτιος ὦν τὰς δύο γλώσσας ἠπίστατο. οὗτος ἀπὸ τῆς Ἀθηνᾶς τὴν πόλιν Ἀθήνας ὠνόμασεν. ἐπὶ αὐτοῦ ἢ ἐν τῇ ἀκροπόλει ἐλαία πρῶτως ἐφύη. ἀπ' αὐτοῦ δὲ Κεκροπία ἢ χώρα ἐκλήθη. οὗτος πρῶτος βοῦν ἐθυσίασε καὶ Ζῆνα προσηγόρευσεν.

Կեկրոպս Դիփիեսը թագավորեց այդ ժամանակվա Ակտեին՝ այժմյան Ատտիկեին՝ Հիսուս տարի. նա այդպես էր կոչվում բարձր Հասակի համար, ինչպես ասում է Փիլոքորոսը, կամ՝ որովհետև, եգիպտացի լինելով, երկու լեզու գիտեր: Նա Աթենայի անունից քաղաքը կոչեց Աթենք: Նրա օրոք առաջին անգամ բուսանեց քաղաքի միջնաբերդի ձիթենին: Նրա անունից երկիրը կոչվեց Կեկրոպիա: Նա առաջինը եզ զոհաբերեց և Զևսի անունը տվեց:

Յովհաննէս Երզնկացի, Ճառք Բ, էջ 55.

Հեթանոսք ... գճիթենի Աթենայ նուիրէին, որպէս նախ բուսաւ յԱտտիկէ ի դղեակն, և ալիք ջուրցն ոչ կարացին Հասանել ի նա, և ոչ կարել ոք զաւրեաց սրով կամ հրով: Վասն որոյ գյաղթողն նովաւ պսակէին յողովակիական նահատակութիւնսն:

Հեթանոսները ... ձիթենի էին ձոնում Աթենային, քանի որ այն առաջին անգամ բուսանեց Ատտիկեի միջնաբերդում, և ջրերի պիքները չկարողացան Հասնել նրան, և ոչ ոք չկարողացավ կտրել այն սրով կամ հրով: Դրա համար օլիմպիական խաղերում հաղթողներին նրանով էին պսակում:

Միխայէլ Ասորի Ա. 45-46.

Եւ զԿիկրոփս յԱկտեայ, որ է Ատտիկէ թագաւորել ասեն ոմանք, և կէսք յԵգիպտոս ասեն թագաւորել նախ, և ապա յԱտտիկէ: Իսկ Յոյնք ասեն սա շինեաց Աթէնս յանուն կնոջ իւրոյ: Զսա կոչեն երկբոյս կամ զի երկայն էր և կամ զի երկու լեզու գիտէր՝ զԵգիպտոսին և զՅունացն: Տիրեաց և միջերկրեայց և յանուն սորա կոչեցաւ Կապադովկիա: Եւ յաւուրս սորա երևեցաւ ձիթենի ի դղեկին Աթենայ ուստի առասպելն եղև ստեղծեալ: Եւ սա կոչեաց զԱրամազդ Զևս, և նախ եզն զոհեաց և յայսմ ամի Դեկադիոն Պառնասացւոց կողմանցն սկիզբն արար թագաւորելոյ:

Եվ ոմանք ասում են, թե Կեկրոպսը թագավորեց Ակտեում, որն Ատտիկեն է, ուրիշներն էլ ասում են, թե նա նախ թագավորեց Եգիպտոսում, իսկ հետո՝ Ատտիկեում: Իսկ հույներն ասում են, թե նա հիմնեց Աթենքը իր կնոջ անունով: Նրան երկբոյս են կոչում, կամ որովհետև բարձրահասակ էր, կամ էլ որովհետև երկու լեզու գիտեր՝ Եգիպտոսի և Հունաստանի: Տիրեց և միջերկրյայքին, որ նրա անունով կոչվեց Կապադովկիա: Նրա օրոք Աթենքի միջնաբերդում մի ձիթենի երևաց, ինչից և առասպել ստեղծվեց: Նա Արամազդին Զևս կոչեց ու առաջին անգամ եզ զոհաբերեց, և այդ տարի Դեկալիոնը սկսեց թագավորել պառնասցիների կողմերում<sup>2</sup>:

<sup>1</sup> «Երկբոյս»՝ διφυῆς բառի ճշգրիտ համարժեքն է, իսկ «Դիփիես»՝ նույն բառի տառադարձումը:  
<sup>2</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Երբ Կեկրոպսը սկսեց թագավորել Ատտիկեում, Մովսեսը երեսունհինգ տարեկան էր: Այս Կեկրոպսի ժամանակներից

Միխայել Ասորի Բ 30-31.

Յայսմ ժամանակի երևեցաւ Ասկղիպիադէս բժիշկ. և աստ էր զԿեկրոփս, որ թագաւորեաց յԻտիկէ որ է յԵգիպտոս: Վասն սմա ասեն թէ յառաջին ամի Գողոնիէլի թագաւորեաց, և Յոյնք ասեն թէ սա շինեաց զԱթէնս յանուն կնոջ իւրոյ Աթենայ: Սա տիրեաց ամենայն Ասիոյ, և անուամբ նորա կոչեցաւ զաւառն Կապադովկիա: Եւ յաւուրս սորա երևեցաւ ձիթենի ի դղեկին Աթենայ:

Այդ ժամանակ հայտնվեց բժիշկ Ասկլիպիոսը: Եվ այդ ժամանակ էր Կեկրոպսը, ով թագավորեց Ատտիկեում, որ Եգիպտոսում է: Նրա մասին ասում են, թե թագավորեց Գողոնիելի առաջին տարում, և հույներն ասում են, թե նա հիմնեց Աթենքն իր կին Աթենայի անունով: Նա տիրեց ողջ Ասիային, և նրա անունով երկիրը կոչվեց Կապադովկիա: Նրա օրոք Աթենքի միջնաբերդում մի ձիթենի երևաց:

Միխայել Ասորի Ա 51.

Տիրեաց և Միջերկրեայ աշխարհին որ Կապադովկիայ կոչեցաւ ի Կիկրոպեայ, որ նախ Ալիու կոչէր:

Տիրեց և միջերկրյայքին, որ Կեկրոպսից անվանվեց Կապադովկիա, իսկ նախկինում կոչվում էր Ալիու:

Միխայել Ասորի Բ 32.

Նախ քան Կիկրոպս Ալիու կոչէր աշխարհն, որ յանուն նորա կոչեցաւ Կապադովկիա:

Կեկրոպսից առաջ երկիրը կոչվում էր Ալիու, որը նրա անունով կոչվեց Կապադովկիա:

Մխիթար Այրիվանեցի 33.

Եւ թագաւորեաց Աթենացւոցն Կիկրոփս և այլ 38 թագաւորք՝ զամս 873: Սա շինեաց զԱթէնս անուամբ կնոջ իւրոյ, և զբնակիչս մեմփացւոց բերեալ՝ յԱթէնս բնակեցոյց. սերմանեաց զիմաստութիւն, զմէջերկրեայս Կապադովկիա անուանեաց:

Աթենացիներին թագավորեց Կեկրոպսը և այլ 38 թագավորներ՝ 873 տարի: Սա հիմնեց Աթենքը իր կնոջ անունով և, բերելով Մեմփիսի բնակիչներին, բնակեցրեց Աթենքում: Իմաստություն սերմանեց, միջերկրյայքն անվանեց Կապադովկիա:

Սամուէլ Անեցի 52.

Թագաւորէ Աթենացւոց նախ առաջին. Կեկրոփս Դիփիսէս՝ ամս Ծ.:

Աթենացիներին առաջինը թագավորեց Կեկրոպս Դիփիեսը՝ հիսուն տարի:

Գրիգոր Նազ., Ի Բաս. 163 = Greg. Naz. in Bas. 3.4.2.

...Կեկրովպեանքն...

... Κεκροπίδαί...

...Կեկրոպյանները...

---

տեղի են ունեցել հույների պատմած զարմանահարա իրադարձություններ: Եվսերիոսն այդպես է պատմում: Իսկ Անդրոնիկոսն ասում է, որ Կեկրոպսը սկսել է թագավորել Օրոնիելի առաջին տարում: Չուսն [աստված] հայտարարվեց Կեկրոպսից, երկիրն էլ նրա անունով կոչվեց Կեկրոպիա: Նրա ժամանակ Կեկրոպիայում մի ձիթենի հայտնվեց: Նա կառուցեց Աթենքը, որն անվանեց իր Աթենա կնոջ անունով: Նա մակամովանվել է Դիփիես, այսինքն՝ երկբնույթ՝ իր մեծ ուժի պատճառով և որովհետև երկու լեզու գիտեր՝ եգիպտացիների ու հույների» (Chronique de Michel le Syrien, livre III, chapitre VI [41], p. 41):

Իսկ յաղագս Կեկրովպոսի ա- սել առաջիկայ ահաւասիկ. Կեկրովպոս թագաւոր էր աթե- նացւոց, որ և մեծապէս գԱտ- տիկէ զարդարեաց սա: Երկա- բնակ կոչեցաւ վասն գոլոյն տեղեակ երկուց ձայնից՝ եղ- դադացւոյն և եգիպտացւոյն, որ էր ի քաղաքէ Սասիոյ: Արդ՝ իշխան բացաբնակութեանն գոլով այս Կեկրովպոս և եկ- եալ յԵղդադա՝ ուսաւ զելլադա- ցի ձայն, ունելով և զեգիպ- տացին: Այլ բանն որ ասի, թէ ինքներկրեայք են աթե- նացիքն՝ առասպել է...

περι δὲ τοῦ Κέκροπος ἦδη λε- λέξεται. Κέκροψ βασιλεὺς γέ- γονεν Ἀθηνῶν, ὃς μεγάλως τὴν Ἀττικὴν κατεκόσμησεν. οὗτος δὲ ἐστὶν ὁ διφυῆς καλούμενος. ἐκαλεῖτο δὲ διφυῆς ὅτι δύο φω- νὰς ἦν ἠσκημένος, μίαν μὲν τὴν τῆς Ἑλλάδος, ἑτέραν δὲ τὴν τῆς Αἰγύπτου. λέγεται γὰρ ὅτι οἱ Ἀθηναῖοι ἄποικοὶ εἰσιν Αἰγυπ- τίων, ἀπὸ Σάεως πόλεως. ἠγε- μὼν οὖν τῆς ἀποικίας γέγονεν οὗτος ὁ Κέκροψ. καὶ ἔλθων εἰς τὴν Ἑλλάδα ἔμαθε τὴν Ἑλλάδα φωνήν, ἔχων καὶ τὴν Αἰγυπτίαν. ὁ δὲ λόγος ὁ λέγων αὐτόχθονας εἶναι Ἀθηναίους μῦθος ἐστὶ...

Կեկրոպսի մասին ահա՛ թե ինչ կա ասված (արդեն ասվել է). Կեկրոպսն աթենացիների թա- գավորն էր, որը մեծապես զարդարեց Ատտիկեն: Նա կոչ- վեց երկաբնակ, քանի որ տեղ- յակ էր երկու լեզվի՝ հելլադա- ցիների և եգիպտացիների (+ քանի որ ասվում է, որ աթե- նացիները եգիպտացիների գաղութն են). նա Սայիս քա- ղաքից էր: Ուրեմն, Կեկրոպսն այդ գաղութի իշխանն էր. նա եկավ Հելլադա ու սովորեց հելլենական լեզուն՝ տիրապե- տելով նաև եգիպտերենին: Իսկ այն պատմությունը, թե աթենացիները բնիկ են, ա- ռասպել է:

101. Հունական գրերի վերագրումը Կեկրոպսին

Միխայել Ասորու հետևյալ հատվածից երևում է, թե ինչպես է հետագա հայ հեղինակների մոտ առաջացել այն շփոթությունը՝ իբր Կեկրոպսն է ստեղծել հույների գիրը, ոչ Կադմոսը:

Միխայել Ասորի Ա 51–52.

Եւ զկնի սոցա բերաւ իմաստութիւն յաշխար- հըն յայն որպէս Կիկրոպս եբեր զբնակիչս Մեմփիս քաղաքի ի յԱթէնս. և սերմանեցաւ աղանդն իմաստասիրութեան ի Յոյնս, և նա արար Յունաց գիր, զոր այլք զԿադմոսէ ասեն թէ Յունաց գիր արար:

Եվ սրանցից (Կադմոսից ու Փենիքսից) հետո իմաստություն բերվեց այն երկիրը, ինչպես Կեկրոպսը բնակիչներ էր բերել Մեմփիս քա- ղաքից Աթենք, և հույների մոտ սերմանվեց իմաստասիրության աղանդը. և նա կերտեց հույների գիրը, բայց ուրիշներն ասում են, թե Կադմոսն է հույների գիրը ստեղծել:

Միխայել Ասորի Բ 31.

Սա (Կեկրոպս) արար գիր յունաց յեգիպտացի գրոյ, զի գիտէր զերկուցն լեզուն: Սա եբեր զբնակիչս Մեմփիս քաղաքի և բնակեցոյց յԱ- թէնս, ուստի սերմանեցաւ իմաստութիւնն ի կողմանս հիւսիսոյ:

Սա (Կեկրոպսը) կերտեց հույների գիրը եգիպ- տական գրից, քանի որ գիտեր երկուսի լեզուն: Սա բերեց Մեմփիս քաղաքի բնակիչներին և բնակեցրեց Աթենքում, որտեղից սերմանվեց ի- մաստությունը հյուսիսի կողմերում:

Ա խմբարությունից մեջբերված հատվածի երկրորդ մասը համարյա բառացի կրկնել են Վարդան Արևելյին, Հովհաննես Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին, Եսայի Նչեցին (Վարդան, Հաւաք. Ժ [21], Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 92, Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 115, Եսայի Նչեցի, Քերակ. 57), իսկ Առաքել Մյունեցին ձևափոխել է այն.

Առաքել Սիւնեցի, Քերակ. 70.

Կիկրոփս ոմն փոխեաց զբնակիչս Մեմփիս քաղաքին և տարաւ ի յոյնս և բնակեցոյց յԱթէնս: Եւ այս Կիկրոփս սաՀմանեաց զգիրն և այն գրովն վարժեցան բազում ազգք. մինչև ի սուրբ Սահակ և ի Մեսրոպ նոյնպէս և մեր ազգս նոյն գրովն վարժեցաւ և ի ձեռն խնդրոյ սրբոցն շնորհեաց Աստուած գիր ազգիս Հայոց:

Ոմն Կեկրոպս տեղափոխեց Մեմփիս քաղաքի բնակիչներին և տարավ Հունաստան ու բնակեցրեց Աթենքում: Եվ այս Կեկրոպսը սահմանեց գիրը, և այդ գրով սովորեցին բազում ազգեր. մինչև սուրբ Սահակն ու Մեսրոպը մեր ազգն էլ նույն գրով է սովորել, բայց սրբերի խնդրանքով Աստված գիր շնորհեց մեր Հայոց ազգին:

## 102. Փենիքսի կուրացումը

Կադմոսի եղբայր Փենիքսին նրա հայրը՝ Ամինտորը, կուրացրել էր իր հարճ Փթիայի զրպարտանքով՝ իբր Փենիքսը փորձել իր հետ կենակցել (Apollod. 3.13.8 [3.175]):

Պղատոն, Օրին. 411 = Հմմտ. Pl. Leg. 931.b.6-7.

զՄինատոռոս զԱրմաւ որդին Ամինտորն իր որդի Արմավին իւր անիծեալ ցասամբ: *Ἀμύντορά τε Φοίνικι τῶ ἐ-  
αυτοῦ ἐπαρᾶσθαι παιδὶ θυ- (Փենիքսին) զայրացած անիծեց:  
μωθέντα.*

## 103. Աթենայի և Պոսեյդոնի մրցակցությունն Աթենքի համար

Երբ Աթենայի ու Պոսեյդոնի միջև մրցակցություն ծագեց Աթենքի համար, Ջևսը, բաժանելով նրանց, դատավոր կարգեց տասներկու աստվածներին: Եվ նրանք դատավճիռ կայացրին հոգուտ Աթենայի, քանի որ Կեկրոպսը վկայեց, որ նա այնտեղ առաջին անգամ ձիթենի էր տնկել: Աթենան իր անունով քաղաքը կոչեց Աթենք, իսկ զայրացած Պոսեյդոնը Թրիասական դաշտը<sup>1</sup> հեղեղեց և Ատտիկեն ջրասույզ արեց (Apollod. 3.14.1 [3.179]): «Միջնաբերդում գտնվում է հողածին կոչված Էրեթթևսի սրբավայրը, որտեղ կա ձիթենի և լիճ: Դրանք, ըստ աթենացիների մոտ շրջանառվող առասպելի, Պոսեյդոնն ու Աթենասը, այդ երկրի համար վիճելիս, որպէս վկայություն բերել են այդտեղ: Պատահեց, որ այդ ձիթենին բարբարոսները հրկիզեցին սրբավայրի հետ միասին» (Herod. 8.55.2-10):

Գրիգոր Մագիստրոս 12 (ԾԸ).11.

Աթենայ ... ընդ Պիսիդոնայ մարտուցեալ, և ոսկեղէն ուռամբն բռնամարտիկ կոփոն մակ կառափին կարկատեալ, զխոնաւախոյզն վերջնանահանջ արարեալ խարդաւանաւ զծովայածուկն կապտաւղ, որ մակ երկնի ծառացեալ, զծայրս պլեացն ծփէր, և զնիգակն ի տուսկն ձիթենույ յեղափոխեալ ի դղեկին Ելլադայ յա-

Աթենան ... կռվելով Պոսեյդոնի դեմ և ոսկե մուրճով ուժեղ հարվածներ հասցնելով նրա գլխին, ստիպեց նահանջել ջրում դեգերող, ծովում թափառող խարդախ կողոպտիչին, որը խողացրեց դեպի երկինք ծառացած պիքների ծայրերը և, նիգակը փոխակերպելով ձիթենու, էլլադայի միջնաբերդում, Ատտիկեի ամրոցում,

<sup>1</sup> Թրիասական դաշտի կենտրոնն Էլևսիս քաղաքն էր՝ Աթենքից հյուսիս-արևմուտք:

մուրն Ատտիկէի նախասացեալն Դիափկետեայ կանգնեալ, որ այժմ Աթեանս անուանի:

վեր խոյացրեց նախկինում Դիափկետեա<sup>1</sup> կոչվածը, որ այժմ կոչվում է Աթենք:

Գրիգոր Մագիստրոս 15 (ՀԶ).7.

... զԱթենայն նիզակի առ եզր Պիսիդոնի ցցեալ. զոր է տունկ ձիթենույ յեղափոխիւր:

... Աթենային՝ Պոսեյդոնի եզրին (ծովեզրին) նիզակը ցցած, որը փոխակերպեց ձիթենի ծառի:

Գրիգոր Մագիստրոս 45ա (ՀԸ).14-15.

Բայց ասեն, եթէ Պիսիդոն երբեմն մաքառէր ընդ կուսին Աթենայ, իբրու զի երկիր նմա լիցի ծով, զոր քաջին Աթենայ ոսկի ուռամբն զծայրս ծառացելոյ ալեացն կոփեալ վերջնանահանջ առնէր:

Բայց ասում են, թե ժամանակին Պոսեյդոնը մաքառել է կույս Աթենայի դեմ, որպեսզի երկիրն իր համար ծով դառնա, և քաջ Աթենան, ոսկե մուրճով հարվածելով ծառացած ալիքների ծայրերին, ստիպել է դրանց հետ նահանջել<sup>2</sup>:

### 104. Կեկրոպսի որդի Էրիսիքթոնը

Կեկրոպսն ունեցավ Էրիսիքթոն որդուն, որը մահացավ անգավակ (Apollod. 3.2.14 [3.180]). Գեղոս կղզում նա Ապոլլոնի փայտե արձանն էր կանգնեցրել (Eus. Prep. Evang. 3.8.1):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 104.

Ապոլլոնի է Դեղփոս մեհեան կանգնեցաւ յԵրիսիքթոնեայ:

Դեկոսում Ապոլլոնին Էրիսիքթոնի ձեռքով մեհյան կանգնեցվեց:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106 = Sync. 179.18-19.

Որ է Դեղփոս մեհեանն է՝ յԵրիսիքթոնեայ որդույ Կեկրոպեայ կազմեցաւ:

τὸ ἐν Δήλῳ ἱερὸν Ἀπόλλωνος Δηλίου ὑπὸ Ἐρυσίχθονος υἱοῦ Κέκροπος ἰδρύνθη.

Դեկոսում (Դեկոսում) եղած (+ Ապոլլոնի) մեհյանը կանգնեցվել է Էրիսիքթոնի ձեռքով:

### 105. Փայթոն

Հելիոսի որդի Փայթոնը մեկ օրով վերցրեց հոր կառքը և, երկրին շատ մոտ վարելով, այրեց այն: Չնար նրան շանթահարեց, և նա ընկավ Էրիդանոս գետը, որտեղ քույրերը ողբում էին նրա մահը, մինչև որ բարդիներ դարձան, իսկ նրանց արցունքները՝ ծառերից ծորացող սաթի կաթիլներ (Diod. Sic. 5.23.2-3, Ov. Met. 1.366):

Պլատոն, Տիմէոս 84 = Plat. Tim. 22.c.4-7.

Իբրու երբեմն Փայթոն՝ որդի ὧς ποτε Φαέθων Ἥλιου παῖς τὸ Ինչպես մի օր Հելիոսի որդի

<sup>1</sup> «Դիափկետեայ» անունն առեղծվածային է. Աթենքի նման հին անվանում հայտնի չէ: Այն կարող է աղավաղման հետևանք լինել:  
<sup>2</sup> Մագիստրոսի այս հատվածների անմիջական աղբյուրը հնարավոր չէ մատնացույց անել:

արեգական՝ լծեալ գլառս հաւր  
իւրոյ գերկրայինս հրով կի-  
գեաց, և ինքն ի սաստկութենէ  
ջերմութեանն ապականեցաւ:

τοῦ πατρὸς ἄρμα ζεύξας διὰ τὸ  
μὴ δυνατὸς εἶναι κατὰ τὴν τοῦ  
πατρὸς ὁδὸν ἐλαύνειν τὰ τ' ἐπὶ  
γῆς συνέκαυσεν καὶ αὐτὸς κε-  
ραυνωθείς διεφθάρη.

Փայեթոնը, լծելով իր հոր կառ-  
քը (+ քանի որ չէր կարող քշել  
իր հոր ուղիով), երկրային բա-  
ները հրով այրեց և ինքը գոհ  
գնաց ջերմության սաստկու-  
թյանը (շանթահար մեռավ):

## 106. Միռռա, Ադոնիսի ծնունդը

Ասորեստանի թագավոր Թիասի (կամ Կինիրասի<sup>1</sup>) Միռռա (կամ Սմիրնա) դուստրն Ափրոդիտեին չէր պաշտում: Աստվածուհին զայրացավ և նրան իր հոր հանդեպ կրքով համակեց: Հայրն անգիտությամբ մերձեցավ դստեր հետ, իսկ երբ հասկացավ եղելությունը, ուզում էր աղջկան սպանել: Միռռան աստվածներից գոթ աղերսեց, և նրանք Միռռային մրտենի<sup>2</sup> դարձրին: Ժամանակին ծառը ճեղքվեց, և ծնվեց Ադոնիսը, որին Ափրոդիտեն աստվածներից ծածուկ հանձնեց Պերսեփոնեին: Սա էլ, տեսնելով տղայի գեղեցկությունը, այլևս նրան հետ չէր տալիս: Չուսի վճռով տարվա մեկ երրորդն Ադոնիսն անցկացնում էր Պերսեփոնեի հետ, մեկ երրորդն էլ՝ Ափրոդիտեի (Apollod. 3.14.4 [3.183-185])<sup>3</sup>:

Նոնոս 4.36-38 [78] = Nonnos 5.38.1-29.

Միւրա Կինիւրոսի եղեալ  
դուստր, սա ննջեալ ընդ հաւր  
իւրում՝ մանկածնեցաւ ի նմա-  
նէ. և խորհելով և զպատճա-  
ռանս ոչ բերելով՝ գծնեալ մա-  
նուկն ի լեռն արտադրեաց.  
գոր առեալ անուանելոցն հար-  
սանց, գորս ոմանք լեռնայինս  
կոչեն՝ սնուցին բարւոք: Եւ էր  
քաջատեսիլ գեղեցկութեամբ,  
այլ և եղև որսորդ. յոր տուփա-  
ցաւ Ափրոդիտէս, կին ոմն  
գեղիւ. ընդ որում նախանձեալ  
հակատուփոզն իւր Արէս, յաղ-  
բիս կերպափոխեալ՝ սպան  
գնա. գոր ողբայր Ափրոդիտէս  
և անտանելի ըմբռնեալ լինէր  
տրտմութեամբ, և ոչ բերելով  
գտուփումնն՝ էջ ի դժոխս  
խնդրել գտուփեալն, և աղաչէր  
զՊիւլտոսովն պատուախրել առ  
նա համբալաւն. այլ արգելոյր  
զհայցուածսն կին նորա Պեր-

Միռռան Կինիրասի դուստրն  
էր. սա, մերձենալով իր հոր  
հետ, նրանից մանուկ ծնեց:  
Խորհելով և մեղքի արդարա-  
ցում չգտնելով՝ ծնված մանկա-  
նը թողեց լեռան վրա: Նրան  
վերցրին նիմփաներ կոչվածները,  
որոնց ոմանք լեռնային են  
անվանում, և լավ (չէք) խնա-  
մեցին: Նա որսորդ դարձավ և,  
քանի որ գեղեցիկ էր, նրան սի-  
րահարվեց Ափրոդիտեն՝ մի գեղի  
կին: Ադոնիսին խանդեց և վա-  
րագ դառնալով, սպանեց նրա  
սիրո մրցակից Արեսը: Ափրոդի-  
տեն ողբում էր նրա համար ու  
համակված էր անտանելի  
վշտով. չղիմանալով կրքին՝ նա  
սիրեցյալին փնտրելու համար  
իջավ դժոխք, ու Պիւլտոսին ա-  
ղաչում էր պատանու իրեն  
պարգևել: Բայց նրա կին Պեր-  
սեփոնեն խանդարեց, որ նա

Միւրա Կինիւրոսի դուստրն  
էր. սա, մերձենալով իր հոր  
հետ, նրանից մանուկ ծնեց:  
Խորհելով և մեղքի արդարա-  
ցում չգտնելով՝ ծնված մանկա-  
նը թողեց լեռան վրա: Նրան  
վերցրին նիմփաներ կոչվածները,  
որոնց ոմանք լեռնային են  
անվանում, և լավ (չէք) խնա-  
մեցին: Նա որսորդ դարձավ և,  
քանի որ գեղեցիկ էր, նրան սի-  
րահարվեց Ափրոդիտեն՝ մի գեղի  
կին: Ադոնիսին խանդեց և վա-  
րագ դառնալով, սպանեց նրա  
սիրո մրցակից Արեսը: Ափրոդի-  
տեն ողբում էր նրա համար ու  
համակված էր անտանելի  
վշտով. չղիմանալով կրքին՝ նա  
սիրեցյալին փնտրելու համար  
իջավ դժոխք, ու Պիւլտոսին ա-  
ղաչում էր պատանու իրեն  
պարգևել: Բայց նրա կին Պեր-  
սեփոնեն խանդարեց, որ նա

<sup>1</sup> Hyg. Fab. 58.1:

<sup>2</sup> Մրտենոց (հույներն սմորոն-ն նույնական է աղջկա անվան Սմիրնա տարբերակի հետ) ծորացող խեծի կաթիլները համարվում էին նրա արցունքները, որ նա թափում էր իր տխուր բախտի համար (Ov. Met. 10.500-502):

<sup>3</sup> Պետք է ենթադրել, որ տարվա մյուս մեկ երրորդը նա ազատ էր և կարող էր մնալ իր ցանկացած վայրում:



սիփովնէ, յոյժ հպելով յԱդոնիս: Այլ իբրև հարկաւորեալ լինէր աղաչանաւքն՝ Պրուտոնն՝ թուէր նմա պատշաճ՝ երկաքանչիւրոցն բաժանել զգուգագոյութիւն նորա, և միումն՝ տարևոր ունել զնա ի վերերկրեայս, և միւսումն՝ տարեկան ի դժոխս: Արդ՝ զայսպիսիս ինչ վճարեալ Ափրոդիտեայ՝ յայտնէ արբանեկաց իւրոց, թէ վերստին կենդանացաւ Ադոնիս, որպէս զի յողբոց և յաշխարհանաց դադարեալք՝ տաւնս կատարեսցեն: Այլ ազգ ոմն է յեթիովպացոց խորագոյնսն յաճախապէս պաշտաւնեայ պատկերի կնոջս այսորիկ Ափրոդիտեայ: Արդ սոքա թուղթս գրեալ և խեցեղէնս արկեալ՝ ուխտիւք ընդ ումեմն ի ծով ընկեցին, որ ինքնին ի Բիբլոն պաղեստինացոց գտեալ լինէր: Եւ զայն խեցեղէն ընդունելով Ափրոդիտեայ խորհրդակցացն՝ տաւն կատարէին թերևս սիրանալով ընդ աստուածուհին վասն գիւտի տարփաւորին: Եւ այս է, զոր ասէ Եսայիաս մարգարէ, որ արձակէ թուղթս վճռեղէնս ի ծովու առհաւատչեայ<sup>1</sup>, այսինքն՝ գրաւական սիրելութիւն նոցա, քանզի ողբացելոցն ի ձեռն թղթոյն զԱդոնին զեկուցանէին վերստին կենդանութիւն: Ընկալեալք զիրս զայսոսիկ և որք յԻսրայելէն ծնեալք էին, լային զԹամուզ, քանզի այսպէս առ ի նոցանէ անուանի Ադոնիս:

τοῦ Ἀδώνιδος. Ὡς δ' ἐπέκειτο λιπαροῦσα ἡ Ἀφροδίτη, ἔδοξεν ὀποτέραις τὴν τούτου συνουσίαν μερίσασθαι, καὶ τὴν μὲν ἐπέτειον ἔχειν ὑπὲρ γῆς, τὴν δὲ ἐπέτειον ἐν τῷ Αἴδι. Τοῦτο οὖν ἀνύσασα ἡ Ἀφροδίτη δεδήλωκε τοῖς αὐτῆς θεραπευταῖς ἀναβεβιωκέναι τὸν Ἄδωνιν, ὅπως τοῦ τε θρήνου καὶ τῶν οἰμωγῶν καταλήξαντες, πανηγύρεις ἐπιτελοῖεν. Ἔθνος δὲ ἐστὶν Αἰθιοπῶν ἐπέκεινα, κομιδῇ τὸ γύναιον τοῦτο τὴν Ἀφροδίτην σεβόμενον. Οὗτοι οὖν ἐπιστολὰς γράφονται καὶ κεράμῳ ἐμβάλλοντες μετὰ τελεσμῶν τινῶν τῇ θαλάσῃ ὑπεφίεσαν. Ὁ δὲ αὐτομάτως ἐν Βύβλῳ τῆς Παλαιστίνης εὐρίσκετο καὶ τοῦτον τὸν κέραμον ὑποδεχόμενοι οἱ τῆς Ἀφροδίτης συμμῦσται, ἐόρτην ἦγον συγγηθόμενοι τῇ δῆθεν θεᾷ τὸν ἐρώμενον εὐρούσα. Καὶ γὰρ [ἐκ] τῶν ἐπιστολῶν τοῦτο ἐγίνωσκον καὶ τοῦτο [φησὶν] ἔστιν ὁ Ἡσαΐας ὁ προφήτης φησίν. Ὁ ἀποστέλλων ἐπιστολὰς βυβλίνας ἐν θαλάσῃ ὄμηρα. τουτέστιν ἐνέχυρα τῆς φιλίας αὐτῶν. Τοῖς γὰρ κατολοφουρομένοις διὰ τῶν ἐπιστολῶν τὴν τοῦ Ἀδώνιδος κατεμήρην ἀναβίωσιν. Παρέλαβον δὲ τουτὶ τὸ δρᾶμα καὶ οἱ ἐξ Ἰσραὴλ καὶ ἐπένθουν τὸν Θαμμοῦζ. οὕτως γὰρ παρ' αὐτοῖς ἐλέγετο ὁ Ἄδωνις.

Խնդրանքը կատարի, քանի որ խիստ կապվել էր Ադոնիսի հետ: Իսկ երբ Պրուտոնը ստիպված էր աղաչանքին զիջել (Ափրոդիտեն աղերսելով հարկադրում էր), նրան ճիշտ թվաց համակեցությունը բաժանել երկուսի միջև, որպեսզի մեկը նրան մի տարի ունենա երկրի վրա, իսկ մյուսը մեկ տարի՝ դժոխքում: Այս բանն անելուց հետո Ափրոդիտեն իր արբանյակներին հայտնեց, թե Ադոնիսը վերակենդանացել է, որպեսզի լացն ու կոծը դադարեցնեն ու տոնակատարություն անեն: Եթովպացիների ազգ կա հեռվում, որ հաճախակի (անվերապահորեն) պաշտում է այս կնոջը՝ Ափրոդիտեին: Արդ, սրանք նամակներ գրելով և խեցու ամանի մեջ դնելով՝ ինչ-որ ուխտերով ծովը նետեցին. դա պատահաբար գտնվեց Պաղեստինի Բիբլոսում: Եվ այդ խեցու ամանն ընդունելով Ափրոդիտեի խորհրդածեսի մասնակիցները տոնակատարություն արեցին՝ իբր զարմացած (ուրախանալով) աստվածուհու հետ նրա տարփավորի գտնվելու համար: (+ 25<sup>o</sup> որ նամակներից սա գիտեին): Եվ այս է ասում Եսայի մարգարեն, թե՛ «ծովով վճիռ պարունակող<sup>2</sup> (մազաղաթյա) նամակներ է ուղարկում, որպես առհաւատչյա», այսինքն՝ նրանց սիրո գրավական: Քանզի ողբացողներին նամակով հայտնեցին Ադոնիսի վերակենդանանալը: Ստանալով այս լուրը՝ նաև Իսրայելացիներն էին ողբում Թամուզին, քանզի այսպես է նրանց մոտ կոչվում Ադոնիսը:

<sup>1</sup> Հմմտ. Ես. ԺԸ 1-2 «Վայ երկրին ի թևս նաւացն յայնկոյս գետոյն եթովպացոց: Որ առաքէր պատարագս ընդ ծով, և թողթս մազաղաթեայս ի վերայ ջորցն մկանանց»:  
<sup>2</sup> «Վճռեղէնս» բառի իմաստն այստեղ այնքան էլ հասկանալի չէ:

Թէոդորետոս 49 = Theodoretus, *in Ez.* 81.885.20-24.

«...և ահա կանայք նստեալ ողբային զԹամմուզ»<sup>1</sup>: Այս ոչ միայն ամբարշտութեան, այլ և անժուժկալութեան ամբաստանութեան, քանզի Թամուզ, որ և Ադոնիդ է, ըստ ելլադացոց ձայնին, ցանկութեան ընդդիմեցմունս ողբումն է, անժուժկալ դիւրի՝ վասն անժուժկալութեան ընկալեալ պաշտաւն:

καὶ ἰδοὺ γυναῖκες καθεζόμεναι καὶ θρηνοῦσαι τὸν Θαμμοῦζ. Τούτων δὲ οὐ μόνον ἀσέβειαν, ἀλλὰ καὶ ἀκολασίαν κατηγορεῖ. Ὁ γὰρ Θαμμοῦζ ὁ Ἄδωνίς ἐστὶ κατὰ τὴν Ἑλλάδα φωνήν. Ἀφροδισίῳ τοίνυν ὀργίων ὁ θρηνοῦς, ἀκολάστου δαίμονος, καὶ δι' ἀκολασίαν δεχομένου τὴν θεραπείαν.

«Ահա կանայք նստած ողբում էին Թամմուզին»: Սրանց ոչ միայն ամբարշտութեան, այլ և անժուժկալութեան համար է ամբաստանում: Քանզի Թամմուզը հունարեն լեզվով Ադոնիսն է: Սա փրոդիտական ծեսերի<sup>2</sup> ողբալն է. անժուժկալ աստվածութեան, որն անժուժկալութեան պատճառով է ընդունում այդ պաշտամունքը:

Ստեփանոս Սիւնեցի, Եզեկ. 146.

Կանայք նոցա ողբային զԹամուզ, որ է Ադոնիս, որ պատառեցաւ ի սկայիցն, որպէս յունաց քերթողք վիպասանեն:

Նրանց կանայք ողբում էին Թամմուզին, որն Ադոնիսն է. նրան պատառուտեցին հսկաները, ինչպէս հույն բանաստեղծներն են պատմում:

### 107. Ատրիս և Ատտիկէի անվանակոչումը

Կելրոպաի մահից հետո Աթենքում թագավորեց հողածին Կրանատը, որի օրոք տեղի ունեցավ Դևկալիոնի դարի ջրհեղեղը: Սրա դուստր Ատրիսը մեռավ, երբ դեռ աղջիկ էր, և Կրանատը երկիրն անվանեց Ատրիս (Apollod. 3.14.5 [3.186]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106 = Sync. 180.8-9.

Կրանոս Աթենացոց բնակ որոյ դուստր Ակտիա ուստի և Ատտիկէ անուն աշխարհին կոչեցաւ:

Κραναιὸς τούτου δευτέρου βασιλέως τῆς Ἀττικῆς θυγάτηρ ἦν Ἀτθίς, καθ' ἣν Ἀττικὴ ἢ χώρα ὠνομάσθη.

Աթենքում բնակվում էր Կրանատը (թագավորում էր Կրանոս երկրորդը). նա ուներ Ատթիա դստերը, որի անունով էլ երկիրը կոչվեց Ատտիկէ:

Միխայէլ Ասորի Ա 46.

Եւսեբի ասէ թէ Կրոնոսի Աթենացոց դուստր էր Ատիս անուն. ի նմանէ կոչեցաւ աշխարհն Ատտիկէ:

Եվսեբիոսն ասում է, թե աթենացիների Կրանատոսն ուներ Ատթիա անունով դուստր. նրա անունով երկիրը կոչվեց Ատտիկէ:

<sup>1</sup> Եզեկ. Ը 14. «և ահա նստին անդ կանայք՝ և ողբային զԹամուզ»: Հմմտ. Orig. *in Ez.* 13.797.53-55. Թրηνουσαι τὸ Θαμμοῦζ. Τὸν λεγόμενον παρ' Ἑλλησιν Ἄδωνιν, Θαμμοῦζ φασι καλεῖσθαι παρ' Ἑβραίοις καὶ Σύροις – «Ողբարյով Թամմուզին: Ասում են՝ հույների մոտ Ադոնիս կոչվածը եբրայեցիների և սուրիների մոտ կոչվում է Թամմուզ»:

<sup>2</sup> Թարգմանել ենք ըստ հունարեն սկզբնագրի. «ցանկութեան ընդդիմեցմունս» հաստատվածն աղավաղված և անիմաստ է. («ցանկութեան» գուցե արձագանքն է «ափրոդիտական»-ի, իսկ «ընդդիմեցմունս»՝ թերևս ὀργίων («ծեսերի») բառի սխալ՝ ὀργή («զայրույթ»), իմաստից անանցված ընթերցում է):

Միխայել Ասորի Ա 51.

Զկնի վեց ամի ելիցն Իսրայելի՝ թագաւորեաց Աթենացւոցն Կրանոս, յորոյ դստերն անուն կոչեցաւ աշխարհն Ատտիկէ<sup>1</sup>:

Իսրայելի ելքից վեց տարի հետո ավթենացիներին թագավորեց Կրանասուր, որի դստեր անունով երկիրը կոչվեց Ատտիկէ:

Միխայել Ասորի Բ 32-33.

Զկնի վեց ամի ելիցն Իսրայելի՝ թագաւորեաց ի վերայ Աթենացւոցն Կրոնոս, և անուն դստերն նորա Ատիկէ, յորոյ անուն կոչեցաւ Ատտիկէ աշխարհն:

Իսրայելի ելքից վեց տարի հետո ավթենացիներին թագավորեց Կրանասուր, և նրա դստեր անունն Ատտիկէ էր, որի անունով երկիրը կոչվեց Ատտիկէ:

Մխիթար Այրիվանեցի 32.

Ատտիս՝ դուստր Կրանոսի կոչեաց զաշխարհն Ատտիկէ:

Կրանասուի Ատթիս դուստրը երկրի անունը դրեց Ատտիկէ:

### 108. Կրանասուի հետնորդներն Աթենքի գահին

Կրանասուին գահընկեց անելով թագավորեց Ամփիկտիոնը՝ ըստ ոմանց՝ Դեկալիոնի որդին: Երբ նա թագավորել էր տասներկու տարի, նրան գահընկեց արեց Էրիքթոնիոսը (Apollod. 3.14.6 [3.187]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 270, հմմտ. Scalig. (Անանունից), p. 27.

(Աթենացւոց թագաւորք) ... Երկրորդ՝ Կրանաւոս, անդատին յաշխարհէն, ամս Թ.: Երրորդ՝ Ամփիկտիոն Դեկալիոնեայ, փեսայ Կրանայեայ, առ որով Դանաացւոց իրք պատմին, ամս Թ.: Չորրորդ՝ Երիքթոնիոս Եփեսոեայ, որ ի Հոմերոսէ Երեքթեան կոչի ամս Ծ.:

Ἀθηναίων βασιλεῖς... Δευτερος Κραναὸς αὐτόχθων ἔτη θ'. Τρίτος Ἀμφικτύων Δευκαλίωνος ἔτη ι'. Τέταρτος Ἐριχθόνιος Ἡφαιστοῦ, ὁ παρ' Ὀμήρω Ἐρεχθεύς... ἔτη ν'.

Աթենացիների թագավորներ ... Երկրորդ՝ Կրանասու, բուն այդ երկրի ծնունդ՝ ինը տարի, երրորդ՝ Դեկալիոնի որդի, Կրանասուի փեսա Ամփիկտիոն, որի օրոք պատմում են դանալացիների գործերի մասին (չիք Կրանասուի ... գործերի մասին)՝ ինը (տասը) տարի, չորրորդ՝ Հեփեսոսի որդի Էրիքթոնիոս, որը Հոմերոսի մոտ կոչվում է Երեքթեան՝ հիսուն տարի:

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շարոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Ելքից հետո վեցերորդ տարում ավթենացիներին թագավորեց Կրանասուր՝ ինը տարի: Նրա դուստր Ատթիսի անունով երկիրը կոչվեց Ատտիկէ» (Chronique de Michel le Syrien, livre III, chapitre VI, p. 43):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106.

Այս Ամփիկտիոն Դեկադիոնի որդի է:

Այս Ամփիկտիոնը Դեկալիոնի որդին է:

Սամուէլ Անեցի 52.

Թագաւորէ Աթենացւոց ... Բ. Կրանոս ամս Թ.: Գ. Ամփիքտիոն ամս Ժ.: Դ. Երեքթոնիոս ամս Ծ.: Ե. Պանդիոն ամս Խ.: Զ. Երեքթեա ամս Ծ.: Է. Կեկրովփա երկրորդ՝ ամս Խ.: Ը. Պանդիոն՝ ամս ԻԵ.: Թ. Եգես ամս ԽԸ.: Ժ. ԺԱ. Թեսես ամս Լ...

Աթենացիներին թագաւորեց ... Երկրորդ՝ Կրանոս՝ ինը տարի, երրորդ՝ Ամփիկտիոն՝ տասը տարի, չորրորդ՝ Էրեքթոնիոս՝ հիսուն տարի, հինգերորդ՝ Պանդիոն՝ քառասուն տարի, վեցերորդ՝ Էրեքթեա՝ հիսուն տարի, յոթերորդ՝ Կեկրովփա երկրորդ՝ քառասուն տարի, ութերորդ՝ Պանդիոն՝ քսանհինգ տարի, իններորդ՝ Էգես՝ քառասունութ տարի, տասներորդ ... , տասնմեկերորդ՝ Թեսես՝ երեսուն տարի...

Միխայէլ Ասորի Բ 34.

Թագաւորեաց Աթենայ Արքիաթոս:

Աթենքում թագաւորեց Արքիաթոսը (Էրեքթոնիոսը):

### 109. Էրիքթոնիոսի ծնունդը

Աթենան ուզում էր գենք պատրաստել և եկավ Հեփեստոսի մոտ: Նա էլ, Ափրոդիտեից լքված, Աթենայի հանդեպ կրքով լցվեց. Աթենան տեղի չտվեց, և Հեփեստոսն իր սերմը թափեց աստվածուհու ոտքին, որը զգվանքով սերմը բրդով սրբեց ու այն զցցեց գետնին: Սերմը գետնին ընկնելու հետևանքով ծնվեց Էրիքթոնիոսը (Apollod. 3.14.6 [3.188]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 108.

Այս Էրեքթոնիոս՝ է որդի Եփեստեայ զոր Հոմերոս Երեքթեա կոչէ. և ասի՝ թէ Աթենայ որդի է:

Այս Էրեքթոնիոսը Հեփեստոսի որդին է. Հոմերոսը նրան կոչում է Էրեքթեա: Ասում են, թէ Աթենայի որդին է:

Հմմտ. Sync. 184.21.

Οὔτος Ἐριχθόνιος Ἡφαίστου ὁ παρ' Ὀμήρω Ἐρεχθεύς ἐστίν.

Այս Հեփեստոսի որդի Էրեքթոնիոսը Հոմերոսի Էրեքթեան է:

Թեոն 76 = Theon 82.11-12.

... գտնահան Էրեքթոնեայ զմեծանձին, զոր երբեմն Աթենա կերակրեալ սնոյց Արամազդայ դուստրն, և ծնաւ կենընձայ Սանդարամետ:

δῆμον Ἠρεχθῆος μεγάλῃτορος, ὃν ποτ' Ἀθήνη θρέψε Διὸς θυγάτηρ, τέκε δὲ ζείδωρος ἄρουρα.

Տոհմը քաջ Էրեքթոնիոսի, որին մի ժամանակ սնել էր Արամազդի (Զեսի) դուստր Աթենան, իսկ ծնել՝ կյանք պարգևող Սանդարամետը (երկիրը):

Գրիգոր Նազ., ճառ 5.32.14 [202] = PG 35.705.11-12.

Աթենա կոյս է և ծնանի վիշապ:

Ἀθηνᾶ παρθένος τέ ἐστί, καὶ τίκτει δράκοντα.

Աթենան կոյս է և վիշապ է ծնում:

Նոննոս 4.22 [72-73] = Nonnos 5.22.1-12.

Զևս կամեցեալ յուզողոցն իւրմէ բացածնանիլ զԱթենա կարաւտանայ գործակցի ումեմն, զի հատանելով և գանելով զգլուխն՝ բացածնուսցէ: Արդ՝ բան յառաջաբերեալ լինի յազազս այսորիկ Հեփեստեայ. և նա ոչ այլազգ յանձն առնուհերձուլ զգլուխն Արամազդայ. եթէ ոչ զծնեալ կոյսն արասցէ արամբի. և Զևս այսոցիկ ներէ. և առեալ Հեփեստեայ զառջառահատ տապարն, հերձեալ հատանէր զգլուխն Արամազդայ, և արտաքս ելանէ Աթենա. և ապա զհետմտանէ նմա Հեփեստոս գիտանալ ընդ նմա, և հասուցանէ ի սերմանէն իւրմէ ի բարձսն Աթենայ. և նա առեալ ասը՝ շնջեաց զսերմնն և ընկեց յերկիր. և եղև ի հողոյն և յասրէն մարդ վիշապոտն, որ կոչեցաւ Երիքթոնիոս. յերիտսէն, որ է ասը, և ի հողոյ առեալ զանուանակոչուցովն:

Օ Ζεύς βουλόμενος ἀποκυῖσαι ἐκ τοῦ ἐγκεφάλου αὐτοῦ τὴν Ἀθηνᾶν, ἐδεδίτο συνεργοῦ τοῦ λαβόντος καὶ πλήξαντος τὴν κεφαλὴν ἵνα ἀποκυηθεῖ. καὶ λόγους προσφέρει τῷ Ἥφαιστῳ περὶ τούτου. ὁ δὲ Ἥφαιστος οὐκ ἄλλως εἶλετο σχίσει τὴν κεφαλὴν τοῦ Διός, εἰ μὴ τὴν γεννωμένην ἀποπαρθενέυση· καὶ ἠνέσχετο ὁ Ζεὺς. λαβὼν οὖν ὁ Ἥφαιστος τὸν βουπλήγα, τέμνει τὴν κεφαλὴν τοῦ Διός. καὶ ἐξέρχεται ἡ Ἀθηνᾶ, καὶ ἐπεδίωκεν αὐτὴν ὁ Ἥφαιστος, ἵνα αὐτῇ συγγένηται. καὶ ἐπιδιώκων ἀπεσπέρμηγεν εἰς τὸν μηρὸν τῆς Ἀθηνᾶς. ἡ δὲ Ἀθηνᾶ λαβοῦσα ἔριον ἐξέμαξε τὸ σπέρμα, καὶ ἔρριπεν ἐν τῇ γῆ. καὶ ἐγένετο ἐκ τῆς γῆς καὶ τοῦ ἐρίου ἄνθρωπος δρακοντόπους, ὃς ἐκαλεῖτο Ἐριχθόνιος, ἀπὸ τοῦ ἐρίου καὶ τῆς χθονὸς λαβὼν τὸ ὄνομα.

Զևսը, կամենալով իր ուղեղից ծնել Աթենային, կարիք ուներ մի գործակցի, որպեսզի նա, հարվածելով և ճեղքելով իր գլուխը, օգնի իրեն ծնունդ տալ: Ուստի հայտնեց այդ մասին Հեփեստոսին: Նա էլ հանձն չէր առնում ճեղքել Արամազդի գլուխը, բայց միայն՝ եթե ինքը ծնված կույսին կուսությունից զրկի: Եվ Զևսը բարան ներողամտորեն վերաբերվեց: Վերցնելով եզ մորթելու կացինը Հեփեստոսը ճեղքեց-բացեց Արամազդի գլուխը, և դուրս եկավ Աթենան: Եվ ապա Հեփեստոսը հետապնդեց նրան, որպեսզի մերձենա նրա հետ, և իր սերմից թափեց Աթենայի ազգրին: Նա (Աթենան) էլ բուրդ վերցրեց, սերմը սրբեց ու գցեց գետնին: Եվ հողից ու բուրդից ծնվեց մի վիշապոտն մարդ, որը կոչվեց Երիքթոնիոս՝ իր անունը ստանալով «էրիոն»՝ «բուրդ», և «հող<sup>1</sup>» բառերից:

### 110. Պանդիոնի դուստրերը, Տրիպտոլեմոս

Երբ Էրիքթոնիոսը մեռավ, քազավորեց Պանդիոնը, որն ունեցավ Պրոկնե և Փիլոմելա դուստրերին. նրա օրոք Դիոնիսոսն ու Դեմետրը եկան Ատտիկե: Էլլիսիում Դեմետրը Տրիպտոլեմոսին ցորեն տվեց, և նա այն ցանեց աշխարհով մեկ (Apollod. 1.5.1-2 [1.32])<sup>2</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 270, հմմտ. Scalig. (Անանուհից), p. 27.

Աթենացուց թագաւորք ... Հինգերորդ՝ Պանդիոն Երեք-

Ἀθηναίων βασιλεῖς... Πέμπτος Πανδίων Ἐριχθονίου, ἐφ' οὗ

Աթենացիների թագավորներ ... Հինգերորդ՝ Երիքթոնիոսի որ-

<sup>1</sup> Թարգմանության մեջ չմեջբերված հունարեն երկրորդ բառն է՝ «քրոն» (χθών – «հող»):  
<sup>2</sup> Տե՛ս դրվագ 18:

Թոնեայ, ամս Խ.: Առ որով  
աղջկանն առեանգութիւն, և  
վասն Տրիպտոլոմեայ:

Κόρης ἀρπαγή, καὶ τὰ περὶ Τρι-  
πτόλεμον, ἔτη μ'.

դի Պանդիոն՝ քառասուն  
տարի, որի օրոք Աղջկա (Կո-  
րայի) առեանգումն էր և  
Տրիպտոլեմոսի հետ կապված  
իրադարձությունները:

Հմմտ. Sync. 184.23.

Ἀθηναίων ε' ἐβασίλευσε Πανδίων ἔτη μ'.

Աթենացիներին հինգերորդը  
Պանդիոնը՝ քառասուն տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 112.

Պանդիոն Երեքթոնեայ, որոյ  
Պրոկնէ և Փիլոմէլա:

էրեքթոնոսի որդի Պանդիոն, որի  
դուստրերն են Պրոկնէն և Փիլոմէլան:

Հմմտ. Sync. 184.24.

Τούτου θυγατέρες Πρόκνη καὶ Φιλομήλα τοῦ  
Πανδίουος.

Այս Պանդիոնի դուստրերն են  
Պրոկնէն և Փիլոմէլան:

Սամուէլ Անեցի 52.

Պանդիոն՝ ամս Խ.:

Պանդիոն՝ քառասուն տարի:

### 111. Իկարիոս

Դիոնիսոսին Աստիկեոս հյուրընկալեց  
Իկարիոսը, որը նրանից խաղողի որթը  
ստացավ և սովորեց գինեգործության արվեստը:  
Յանկանալով սարդկանց ընծայել աստծո  
շնորհները՝ նա գնաց հովիվների մոտ,  
որոնք, առատորեն գինի խմելով ու  
հարբելով, կարծեցին, թե թունավոր-  
ված են, ու սպանեցին նրան: Իկարիոսի  
էրիզոնն դուստրը հորը ողբալով իրեն  
կախեց (Apollod. 3.14.7 [3.191-192]):

Գրիգոր Նազ., ճառ 4.122.9 [152] = PG 35.661.24.

Ի բաց հատցէ ... զարբեցու-  
թիւնն Դիոնիսոս:

Ἐπικοπτέτω... μέθην Διόνυσος.

Թող Դիոնիսոսը վերացնի ...  
հարբեցողությունը:

Նոննոս 3.61 [50] = Nonnos 4.68.3-14.

Ասի թէ առ Դիոնիսիւսեայ գի-  
նի գտեալ եղև. վասն որոյ և  
վերատեսուէ որթոյ ասեն գի-  
նովիսոս: Սա արդ եկեալ և ա-  
թենացոցն և Իկարոսի ու-  
մեմն հանդիպեալ՝ ետ նմա  
զուռն որթոյ, զի տնկեսցէ. և  
տնկեալ՝ մշակեաց զգինին, և

λέγεται ὅτι ὁ οἶνος παρὰ τοῦ  
Διονύσου εὐρηται, διὸ καὶ ἔφο-  
ρον τῆς ἀμπέλου λέγουσι τὸν  
Διόνυσον. οὗτος οὖν ὁ Διόνυ-  
σος ἐλθὼν ἐν Ἀθήναις Ἴκαρίῳ  
τινὶ περιτυχόν, δέδωκεν αὐτῷ  
κλήμα ἀμπέλου φυτεῦσαι. καὶ  
ἐφύτευσε, καὶ ἐγεώργησεν οἶ-

Ասում են, թե գինին հայտնա-  
գործվել է Դիոնիսոսի կողմից,  
ինչի համար էլ Դիոնիսոսին  
անվանում են խաղողի որթի  
վերատեսուչ: Ուրեմն սա, գա-  
լով ու հանդիպելով Աթենքում  
ոմն Իկարիոսի, նրան տվեց որ-  
թի մի ճյուղ, որ տնկի: Եվ նա,

արբ ինքն և ետ հովուաց ումանց յարբումն: Այլ հովիւքն արբեալք և հրաշափառ կարծեցեալ զարբեցութիւնն, քանզի առաջին էր, կարծելով, թէ դեղահարեաց զնոսա Իկարուս՝ սպանին զնա: Այլ Երիզովնէ՝ դուստր նորա, ի ձեռն շանն Իկարուսի զիտացեալ, եթէ մեռաւ նա՝ ողբայր դառնապէս. որում ողորմեալ աստուածքն վասն այնորիկ փոխադրեցին զնա յերկինս: Եւ այժմիկ է ասեն ընդ աստեղս Երիզովնէ:

νον, καὶ ἔπιε καὶ αὐτός, καὶ δέδωκε καὶ ποιμέσι πιεῖν. οἱ δὲ ποιμένες μεθυσθέντες διὰ τὸ ἐκ παραδόξου πρῶτον πιεῖν νομίσαντες φαρμαχθῆναι παρὰ τοῦ Ἰκαρίου, ἀποκτείνουσιν αὐτόν. ἢ δὲ Ἡριγόνη, ἢ τούτου θυγάτηρ, διὰ τῆς κυνὸς τοῦ Ἰκαρίου γνοῦσα ὅτι τέθνηκεν, ἐποτινῶτο καὶ ἡσχαλλεν. καὶ ταύτην ἐλεήσαντες οἱ θεοὶ διὰ τὸ πάθος, μετέθηκαν αὐτὴν εἰς τὸν οὐρανόν. καὶ νῦν ἐστὶ, φησὶν, ἐν τοῖς ἄστροις ἡ Ἡριγόνη.

տնկելով, զինի մշակեց, ինքն էլ խմեց, ինչ-որ հովիվների էլ տվեց, որ խմեն: Իսկ հովիվները, խմելով և կարծելով, թե հարբեցությունը կախարհական մի բան է, քանզի առաջին անգամ էր, մտածում էին, որ Իկարիոսը թունավորել է իրենց, և սպանեցին նրան: Նրա դուստր էրիզոնեն, Իկարիոսի շան միջոցով իմանալով, որ նա մեռել է, դառնապես ողբում էր: Եվ աստվածները, նրան զթաղով դրա (վշտի) համար, երկինք փոխադրեցին: Եվ այժմ, ասում են, էրիզոնեն աստղերի մեջ է:

## 112. Պրոկնեի և Փիլոմելայի ողբերգությունը

Պանդիոնի Պրոկնե դստեր հետ ամուսնացավ Տերևը: Նա բռնաբարեց Պրոկնեի քույր Փիլոմելային, հետո կտրեց նրա լեզուն: Աղջիկը զգեստի վրա նստակ ասեղնագործեց Պրոկնեին: Սա էլ քրոջը գտավ և, Տերևից վրեժ լուծելու համար, իր Իտիս որդուն սպանեց, եփեց ու մատուցեց նրան: Տերևը եղածը հասկացավ և ուզում էր քույրերին սպանել, բայց նրանք փրկություն աղերսեցին աստվածներից, որոնք նրանց թռչուն դարձրին. Պրոկնեին՝ սոխակ, Փիլոմելային՝ ծիծեռնակ, իսկ Տերևին՝ հոպոպ (Apolloed. 3.14.8 [3.193-195]): Սոփոկլեսը գրել է «Տերևս» ողբերգությունը, որը չի պահպանվել: Օվիդիոսն Իտիսի սպանությունը կապում էր բարոսական մոլեգին ծեսերի հետ (Ov. Met. 6.424–674):

Նոննոս 4.39 [79-80] = Nonnos 5.39.1-24.

Պանտիոնն եղև թագաւոր աթենացւոց. և մարտ ունելով ընդ զակեղեմոնացիս՝ նախադասէր ի մարտակցութիւն զՏիււուս, որ էր բռնաւոր թրակացւոց: Այլ նա ոչ յառաջագոյն ասէր նմա մարտակցել, եթէ ոչ զիրիցագոյն դուստրն իւր նմա յամուսնութիւն խոստացի. քանզի ունէր դստերս երկուս Պանտիոն՝ զՊրովկնէ և զՓիւլոմելայա, որք այնչափ ի միմեանս գորովային, մինչ զի յերկաքանչիւրոցն կամս ենթարբել. զի զոր ինչ մին կրեսցէ ի պատահմանէ՝ զայն և միւսն յանձին իւրում զործեսցէ: Արդ խոստացաւ հայրն Տիւուայ զՊրովկնէ. զոր առեալ տարաւ ի

Պանդիւոն Բասիւլէս Գեյոնէն Աթինայոն. Սոլեմոն ընդ իւրս Լաքեդաիմոնիւսս էջոն քրօտրէքէն էիս սյմախոն տօն Կիւրէս: Կրանոս ընդ իւրս Թրակոն ուտոս. Օ ընդ մի քրօտրէքէն սյմախիսէն էջոսքէն էիս մի տիլ քրէսքրէքէն էիս մի միմէնս գորովային, մինչ զի յերկաքանչիւրոցն կամս ենթարբել. զի զոր ինչ մին կրեսցէ ի պատահմանէ՝ զայն և միւսն յանձին իւրում զործեսցէ: Արդ խոստացաւ հայրն Տիւուայ զՊրովկնէ. զոր առեալ տարաւ ի

Պանդիոնը դարձավ աթենացիների թագավորը. լակեղեմոնացիների դեմ պատերազմելիս Տերևահին, որը թրակացիների բռնակալն էր, հորդորում էր իրեն դաշնակցել: Սա էլ ասում էր, թե դաշնակից չի դառնա, մինչև որ նա իր ավագ դստերը չխոստանա իրեն կնուցյան տալ: Քանզի Պանդիոնը երկու դուստր ուներ՝ Պրոկնեն և Փիլոմելան. նրանք այնքան էին միմյանց սիրում, որ երկուսն էլ ցանկություն հայտնեցին, թե մեկին մի բան պատահելու դեպքում մյուսն էլ այդ բանն ինքն իրեն կանի: Ուրեմն, հայրը Պրոկնեին խոստացավ Տերևսին. սա նրան վերցրեց, իր սու-

տուն իւր, և մանկունս ծնաւ ի նմանէ: Այլ անցեալ ժամանակ ոչ սակաւ՝ կարաւտացաւ տեսանել զքոյր իւր, և աղաչէր զայր իւր զնալ յԱթենս և ածել զքոյրն առ նա: Արդ՝ զնացեալ և աղաչեալ զՊանտիոն՝ առ զՓիւղովմեղա. այլ ըստ ճանապարհին, որպէս որ բարբարոս արբեալ զինուով՝ զկոյսն արամբի արար, և շառագունեալ յիրէն՝ լեզուահատէ զՓիւղամեղա, զի զայնպիսի զանաւրէն գործ մի պատմեացէ: Իսկ նա որպէս աղջիկ եղղենացի գոտայնանկուլթիւն քաջապէս կրթեալ՝ պատմուճան ինչ գործեաց, և ի նմա զիրագործութիւնն նկարեալ ի քոյրն արձակէ: Եւ նորա իմացեալ, զոր ինչ եղևն՝ զքոյրն առ ինքն բերէ, և առեալ զորդին, զոր ծնեալն էր ի Տիւուեայ՝ խահագործեաց, և եփեալ՝ եղ առաջի առնն, եկեալ յորսոյ: Եւ իմացեալ զիրան՝ մոլեզնեալ՝ հալածէր զնա հանդերձ քերբն: Արդ՝ զթացեալ ի նոսա Ջևս՝ փոխարկեաց զմին ի ծիծառն, և զմիւսն՝ ի հաւ հեշտախաւս. և այսպէս դադարեաց ի յարձակմանէն:

ιπεύσαντος ἐπεθύμησε τὴν ἰδίαν ἀδελφὴν ἰδεῖν καὶ ἠντιβολεῖ τὸν ἑαυτῆ ἄνδρα εἰς Ἀθήνας ἐλθόντα ἀγαγεῖν αὐτῆ τὴν ἀδελφὴν. Ἐλθὼν οὖν καὶ ἀξιώσας τὸν Πανδίωνα λαμβάνει καὶ τὴν ἐτέραν ἀδελφὴν τὴν Φιλομήλαν. Κατὰ δὲ τὴν ὁδὸν οἶα δὴ βάρβαρος οἰνηθεὶς διαπαρθενεὺς τὴν παῖδα. Ἐπερυθριῶν δὲ τῷ δράματι, γλωσσοτομεῖ τὴν Φιλομήλαν ὅπως τὸ ἀθέμιτον μὴ εἴποι πρᾶξιν καὶ καταλιμπάνει αὐτὴν κατὰ τὴν ὁδόν. Ἡ δὲ οἶα Ἑλληνίς καὶ ἄριστα τὰς ταλασίας ἐξήσκημένη φάρος τι ἰστοουργήσασα καὶ ἐν αὐτῷ τὴν δραματούργιαν καθυφανεῖσα, πέμπει τῆ ἀδελφῆ. Ἡ δὲ γνοῦσα τὸ γεγονός, τὴν μὲν ἀδελφὴν κομίζει πρὸς ἑαυτήν՝ λαβοῦσα δὲ τὸν υἱὸν ὃν εἶχε ἐκ τοῦ Τηρέως, ἐκρεανόμησε καὶ ἐνήσασα παρέθηκε τῷ ἀνδρὶ ἐλθόντι ἐκ θήρας. Ὁ δὲ γνοῦς τὸ δρᾶμα καὶ ἔνθους γενόμενος κατεδίωκεν ταύτην μετὰ τῆς ἀδελφῆς. Ταύτας οὖν κατοικτειρήσας ὁ Ζεὺς, μετέβαλε τὴν μὲν εἰς χελιδόνα, τὴν δὲ εἰς ἀηδόνα, καὶ οὕτω τοῦ δρόμου κατέληξαν.

նր տարաւ և զավակ ունեցաւ նրանից: Ոչ քիչ ժամանակ անց նա ցանկացաւ տեսնել իր քրոջը և աղաչում էր իր մոտսնուն զնալ Աթենք ու իր մոտ բերել քրոջը: Նա զնաց և, Պանդիոնին համոզելով (+ մյուս քույր), Փիլոմելային վերցրեց: Իսկ ճանապարհին, մի բարբարոսի պես արբելով զինով, աղջկան կուսուլթյունից գրկեց: Սակայն, ամաչելով եղածից, կտրեց Փիլոմելայի լեզուն, որպեսզի իր անօրեն արարքի մասին չպատմի (+ և նրան ճանապարհին թողեց): Իսկ նա, որպես հելլենացի աղջիկ, լավագույնս հյուսել զիտեր. մի զգեստ գործեց և, պատկերելով դրա վրա կատարվածը, ուղարկեց քրոջը: Նա էլ, տեղեկանալով, թե ինչ է եղել, իր մոտ բերեց քրոջը, վերցրեց իր որդուն, որին ծնել էր Տերևսից, կտրատեց, եփեց ու դրեց որսից եկած ամուսնու առջև: Իմանալով եղելուլթյունը՝ նա մոլեզնած հետապնդեց կնոջը քրոջ հետ միասին: Գլխով նրանց՝ Ջևսը փոխակերպեց մեկին ծիծեռնակի, մյուսին էլ՝ քաղցրախոս թռչունի<sup>1</sup>. և այսպես վերջ դրեց հարձակմանը:

### 113. Էրեթթևսի քազավորելը. Օրիթիա և Բորեաս

Երբ Պանդիոնը մեռավ, որդիները բաժանեցին նրա հայրական ժառանգությունը, և Էրեթթևսը ստացավ քազավորությունը (Apollod. 3.15.1 [3.196]): Էրեթթևսի դուստր Օրիթիային առևանգեց Բորեասը<sup>2</sup> (Apollod. 3.15.2 [3.199]):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա. 270, հմմտ. Scalig. (Անանունից), p. 27.

Աթենացւոց թագաւորք ... Վեցերորդ՝ Երեքթևսն Պանդիոնի, ամս Ծ.: Առ որով Պերսեայ իրք:

Ἐκτος Ἐρεχθεὺς Πανδίωνος, ἐφ' οὗ τὰ περὶ Περσέα, ἔτη ν'.

Աթենացիների թագավորներ ... Վեցերորդ՝ Պանդիոնի որդի էրեքթևս՝ հիսուն տարի, որի օրոք Պերսևսի գործերն էին:

<sup>1</sup> Հունարեն *ἀηδών* նշանակում է՝ «երգեցիկ թռչուն» (նման «երգել» բայից) և «սխալ»:  
<sup>2</sup> Բորեաս էր կոչվում հյուսիսային քամին, իսկ առասպելում այն անձնավորված է:



Հմտ. Sync. 188.24.

Αθηναίων ζ' ἐβασίλευσεν Ἐρεχθεὺς ἔτη ν'.

Աթենացիներին վեցերորդը թագավորեց  
Էրեքթևսը՝ հսուկն տարի:

Սամուէլ Անեցի 52.

Ձ. Երեքթևս՝ ամս Ծ.:

Վեցերորդ Էրեքթևս՝ հսուկն տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 116 = Sync. 188.25-27.

ՁԵրեքթևսի դուստր գՈրիթիա Բորեաս Ատրեայ թրակացի առևանկեաց. իսկ առասպելքն գհոզմոյ ասեն: Առ սովաւ խորհրդոցն սկիզբն լինէր:

Ἐρεχθέως τούτου θυγατέρα Βορέας υἱὸς Ἀστραίου Θραξ ἤρπασεν Ὀριθυῖαν. ὁ δὲ μῦθος τὸν ἄνεμον... ἐπὶ τούτου δὲ καὶ τὰ λεγόμενα μυστήρια ἤρξαντο.

Էրեքթևսի դուստր Օրիթիային առևանգեց թրակացի Աստրեոսի որդի Բորեասը, իսկ առասպելներն ասում են, թե քամին էր: Սրա օրոք խորհրդածեսերի սկիզբը դրվեց:

Թեոն 104 = Theon 95.18-23.

Իսկ Պլատոն ի Փետրոսի յազազս Որիթուհիա ի Հիւսւոյ [......] ըստ մերձաւոր վիմաց Որիթուհիա խաղայր շրջէր եկեալ և հասեալ ուժգնագոյն, մինչ և այսպէս ասիլ՝ ահա ի սովերա յափշտակեալ լինել:

Πλάτων δὲ ἐν τῷ Φαίδρω τὸ περὶ τῆς Ὀρειθυίας καὶ τοῦ Βορέου διήγημα οὐκ ἀποδεχόμενός φησι τὴν Ὀρειθυίαν πνεῦμα βορέου κατὰ τῶν πλησίον πετρῶν σὺν Φαρμακείᾳ<sup>1</sup> παίζουσαν ὄσαι, καὶ οὕτω δὴ λεχθῆναι ὑπὸ τοῦ βορέου ἀναρπαστον γεγόνεναί.

Պլատոնը «Փեդրոս»-ում՝ Օրիթիայի և Հյուսիսի մասին [պատմությունը չընդունելով՝ ասում է, որ Հյուսիսային քամու պոռթկումը գցեց<sup>2</sup>] Օրիթիային, մինչ նա մոտակա ժայռերի վրա խաղում էր (+ Փարմակեայի հետ), և այնպես է ասվում, թե նա դեպի վեր է հափշտակվել Բորեասից<sup>3</sup>:

### 114. Եվմոլպոս

Բորեասի և Օրիթիայի դուստր Քրոնեն Պոսեյդոնից ունեցավ Եվմոլպոսին: Երբ էլևսինացիների ու աթենացիների միջև պատերազմ ծագեց, նա թրակացիների հետ զորակցեց էլևսինացիներին (Apollod. (15.4 [201-203]): Եվմոլպոսին է վերագրվում էլևսինյան գաղտնածեսի հիմնադրումը (Marm. Par. 15, Luc. Demon. 34): Նրանից էր սերում Եվմոլպյանների՝ ծեսը վարող քրմական տոհմը:

<sup>1</sup> Փարմակեան Ատտիկայի Իլլիսոս գետի մոտ գտնվող թունավոր ջրհորի նիմփան էր:  
<sup>2</sup> Հայերեն բնագրում այս հատվածը բացակայում է:  
<sup>3</sup> Հավանաբար «ի սովերա յափշտակեալ» աղավաղումն է «ի [հիսի]սո վերայափշտակեալ»: Վերջին՝ «վերայափշտակեալ» բառը կարող է անարբաստոս-ի պատճենումը լինել: Հմտ. Plato Phaedr 229.b.4-5. Εἰπέ μοι, ὦ Σώκρατες, οὐκ ἐνθένδε μέντοι ποθὲν ἀπὸ τοῦ Ἰλισοῦ λέγεται ὁ Βορέας τὴν Ὀρειθυίαν ἀρπάσαι; («Ասա ինձ, ով Սոկրատես, արդյո՞ք այստեղից՝ Իլիսից չէ, որ, ինչպես ասում են, Բորեասը մեկ օր առևանգել է Օրիթիային»):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 116 = Sync. 189.12.

Որ առ Մէղաով (Եւմողաւ) պատերազմն. ուստի Եւմողապիտեանքն յԱթէնս: Օ κατὰ Εὐμολπον πόλεμος, ἀφ' οὗ οἱ Εὐμολπίδαι Ἀθήνησιν. Եվմոլպոսի օրոք եղած պատերազմը, որից էլ Եվմոլպյաններն են Աթենքում:

Թեոն 100 = Theon 92.31-93.2.

Տակաւին և նուստ և ի վերայ Ելլադայ եկին յաշխարհն մեր Թրակացիք հանդերձ Եւմողաւ Պոսիդոնի: ἔτι γὰρ ταπεινῆς οὐσης τῆς Ἑλλάδος ἦλθον εἰς τὴν χώραν ἡμῶν Θραῖκες μὲν μετὰ Εὐμόλου τοῦ Ποσειδῶνος. Երբ Հելլադան դեռ նվաստացած էր<sup>1</sup>, մեր երկիրը եկան Թրակացիները Պոսեյդոնի որդի Եվմոլպոսի հետ:

### 115. Աթենքի յոթներորդից տասներորդ թագավորները

Պանդիոնը, թագավորելով Կեկրոպից հետո, գահընկեց արվեց Մետիոնի ապստամբած որդիների ձեռքով և գնաց Մեգարա (Apollod. 3.15.5 [3.205]): Հաջորդն էին Էգևսը և Թեսսալը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 124.

Պանդիոն փախեալ նենգեալ ի մէտիոնացւոց: Պանդիոնը փախաւ մետիոնյանների դավադրութունից:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 270-271, , հմմտ. Scalig. (Անանունից), p. 27.

Աթենացւոց թագաւորք... Եւթներորդ՝ Կեկրոպս, եղբայր Երեքթևեայ, ամս Խ.: Առ որով Դիոնիսի իրքն: Ութերորդ՝ Պանդիոն Երեքթևեայ, ամս ԻԵ.: Ընդ որս փախստական լինէր, և ի մէգարացիս թագաւորէր: Առ որով Եւրովպն, Կաղմոս, և որ ինչ վասն սպարտիացւոց: Իններորդն Էգևս Պանդիովնեայ, ամս ԽԸ., առ որով վասն արգիական նաւելաստացիցն<sup>2</sup> և յուշկապարկացն, ուր Հերակղէս գնահատակութիւնսն գործէր, տասներորդ՝ Թեսսա Եգեայ, ամս Լ.: Առ որով Մինովս օրէնսգիր ճանաչէր: ... Ἐβδομος Κέκρω ἀδελφὸς Ἐρεχθέως, ἐφ' οὗ τὰ περὶ Διώνυσον ἔτη μ'. Ὅγδοος Πανδίων Ἐρεχθέως ἔτη κε'. ὁς φεύγων ἐν Μεγάρους ἐβασίλευσεν. ἐφ' οὗ Εὐρώπη, Κάδμος, καὶ τὰ περὶ Σπάρτους. Ἐνατος Αἰγέως Πανδίωνος ἔτη μη'. ἐν ᾧ τὰ περὶ τοὺς Ἀργοναύτας καὶ Κενταύρους. Ἡρακλῆς τε τοὺς ἄθλους ἐτέλει. Δέκατος Θησεὺς Αἰγέως ἔτη λ'. ἐφ' οὗ Μίνως ἐνομοθέτει. Աթենացիների թագավորներ... Յոթներորդ՝ Էրեքթևեայ եղբայր Կեկրոպսը՝ քառասուն տարի, որի օրոք Դիոնիսոսի հետ կապված իրադարձութուններն էին: Ութերորդ՝ Էրեքթևեայի որդի Պանդիոնը՝ քսանհինգ տարի, որի ընթացքում նա վտարվեց և թագավորեց մեգարացիների մոտ, որի օրոք էին Եվրովպեն, Կաղմոսը և սպարտոսների հետ կապված իրադարձութունները: Իններորդ՝ Պանդիոնի որդի Էգևսը՝ քառասունութ տարի, որի օրոք արգոնավորդների ու կենսավրոսների հետ կապված իրադարձութուններն էին, որտեղ Հերակղեսը սխրանքներ էր գործում, տասներորդը՝ Էգևսի որ-

<sup>1</sup> Հայերեն թարգմանությունը աղավաղված է թվում. հավանաբար եղել է «նուստ եղելոյ Ելլադայ»:

<sup>2</sup> Ավգերյանն ուղղում է «նաւաստացից» կամ «նաւաստեաց»:

դի թեսևսը՝ երեսուն տարի.  
նրա օրոք ճանաչված էր Մինոս  
օրենսդիրը:

Սամուէլ Անեցի 38.

է. Կեկրովփս երկրորդ՝ ամս Խ.: Ը. Պանդիոն՝  
ամս ԻԵ.: Թ. Եգևս՝ ամս ԽԸ.:

Յոթներորդ՝ Կեկրովփս երկրորդ՝ քառասուն տա-  
րի, ութերորդ՝ Պանդիոն՝ քսանհինգ տարի, է-  
գևս՝ քառասունութ տարի:

Միխայէլ Ասորի Ա 56.

Աթենացւոցն թագաւորեաց թեսևս ամս քսան  
և ութ:

Աթենացիներին թագաւորեց թեսևսը՝ քսանութ  
տարի:

Միխայէլ Ասորի Բ 37.

Թագաւորեաց Աթենացւոցն թեսևս՝ ամս երե-  
սուն:

Աթենացիներին թագաւորեց թեսևսը՝ երեսուն  
տարի:

## 116. Թեսևսն Ատտիկեում

Ասում էին նաև, որ Թեսևսը Ատտիկեի բնակիչներին միավորեց մի քաղաքում՝ ստեղծելով  
միասնական ժողովուրդ (Thuc. 2.15, Plut. *Thes.* 24):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130.

Թեսևս՝ նախ գաթենացիս ցրուեալս ընդ աշ-  
խարհս՝ ի մի քաղաք ժողովեաց, և զխեցեկոյտ  
մահու վճիռ առ. և այժմ ինքն նախ եդ օրէնս:

Թեսևսը երկրով մեկ ցրված աթենացիներին  
նախ հավաքեց մի քաղաքում և խեցիների  
քվեարկությամբ մահվան դատապարտվեց. և  
այժմ ինքն առաջինն է հաստատել օրենքը:

Հմմտ. Sync. 202.1-2.

Θησεύς Αθηναίους κατὰ χώραν διεσπαρμένους  
εἰς ἕν συναγαγὼν ἤτοι εἰς μίαν πόλιν, πρῶτος  
ἐξώστρακίσθη, αὐτὸς πρῶτος θεὸς τὸν νόμον.

Թեսևսը երկրով մեկ ցրված աթենացիներին ի  
մի հավաքելով, այսինքն մի քաղաքի մեջ, ա-  
ռաջինը խեցիների քվեարկությամբ վտարվեց՝  
ինքն առաջինն այդ օրենքը հաստատած լինե-  
լով:

Փիլոն, Նախախնամութիւն 83.

Բայց ուսցիս, զոր ասեմս, հաւաստագոյն ի քա-  
ղաքս հայելով, քանզի ի սոցանէ իւրաքանչիւր  
ոք հաստեաց յառաջին իշխանացն. Թեսևս՝ զԱ-  
թենա յԱտտիկէ...

Բայց սովորիր, թե ինչ ենք ասում, ստույգ դի-  
տելով քաղաքները, քանզի նրանցից յուրա-  
քանչյուրը հիմնադրել է հին իշխաններից մե-  
կը. Թեսևսը՝ Աթենքն Ատտիկեում:

Միխայել Ասորի Ա. 56.

Թագաւորէ Աթենացւոցն Մոսթոս (Մէնթիոս, Մէնթոս) ամս քսան և երիս. և նախ քան զսա Թեսևս զԱթենացւոց ցրուեալան ժողովեաց. և զխեցեկոյտն մահու վճիռ եղ:

Աթենացիներին թագաւորեց Մենեսթևսը<sup>1</sup> քսաներեք տարի. սրանից առաջ Թեսևսը հավաքել էր ցրվածներին և հաստատել խեցիների քվեարկութեամբ մահապատիժը<sup>2</sup>:

117. Դեդալոս և Իկարոս

Դեդալոսը հմուտ ճարտարապետ էր և քանդակագործության առաջին հայտնագործողը (Apollod. 3.15.8 [3.214]): Մինոսն իմանալով Թեսևսի փախուստի մասին<sup>3</sup>, Դեդալոսին բանտարկեց: Նա թևեր սարքեց իր և իր Իկարոս որդու համար և զգուշացրեց նրան օդ բարձրանալիս բարձր չքոչել, որպեսզի սուսինձն արևից չհալչի, ոչ էլ ծովին մոտիկ, որպեսզի փետուրները չխուճանան: Բայց Իկարոսը շարունակ դեպի վեր էր թռչում, սուսինձը հալվեց, և նա ծովն ընկավ, որ նրա անունով կոչվեց Իկարյան: Իսկ Դեդալոսն ապահով հասավ Սիկիլիա (Apollod. E 1.12-13, Ov. Met. 8.183–235): Ըստ Դիոդորոսի (Diod. Sic. 4.77.5–6) և Պավսանիասի (Paus. 9.11.4–5), նրանք նավով փախան:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126.

Դեդալոս իրքն որ կարծեցուցանէր, թէ պատկերս շարժունս առնիցէ. քանզի նախ գոտս պատկերաց ի միմեանց գատանէր. զի այլք կից գործեալ ելանէին. և պատմէ Պաղեփատոս. և թէ որպէս հանդերձ որդւովն իւրով Իկարոսիւ զնաւէ կալեալ փախեան ի Մինոսէ. և վասն չգտանելոյ պատսպարան փախստեանն՝ համարեցաւ թռանել:

Դեդալոսի հետ կապված իրադարձությունները, որ ստիպում էր մտածել, թե շարժական պատկերներ է ստեղծում, քանի որ առաջին անգամ պատկերների ոտքերը բաժանում էր միմյանցից, իսկ ուրիշները կցելով էին սարքում: Եվ դա պատմում է Պաղեփատոսը, նաև այն, թե ինչպես իր որդի Իկարոսի հետ բռնվելով մի նավից, փախան Մինոսից, և համարվեց, թե թռել են, քանի որ փախուստի հանգրվանը չգտնվեց:

Հմմտ. Sync. 190.27-191.3.

Τὰ κατὰ Δαίδαλον, ὃς ἔδοξεν ἀγάλματα κινούμενα ποιεῖν. πρῶτος γὰρ διέστησε τοὺς τῶν ἀγαλμάτων πόδας, ὡς ὁ Παλαίφατος ἱστορεῖ, τῶν πρὸ αὐτοῦ πάντων συμπεφυκότας αὐτοὺς πλατόντων. οὗτος ἀποπτῆναι μυθεύεται σὺν Ἰκάρῳ τῷ υἱῷ αὐτοῦ πλοίου λαβόμενος καὶ διαφυγὼν τὸν Μίνωα διὰ τὸ ἀνεύρετον γενέσθαι τῷ διώκοντι.

Դեդալոսի հետ կապված իրադարձությունները, որը թվում էր, թե շարժական արձաններ է ստեղծում, քանի որ առաջինն արձանների ոտքերը բաժանեց միմյանցից, ինչպես պատմում է Պաղեփատոսը, իսկ նրա նախորդները դրանք կցված էին սարքում: Պատմում են, որ նա թռավ-զնաց իր որդի Իկարոսի հետ, բռնվելով նավից և Մինոսից խույս տալով, հետապնդողի համար անգտանելի դառնալու շնորհիվ:

<sup>1</sup> Մենեսթևսը վեցերորդ թագավոր Էրեթթևսի թոռն էր, աթենացիների առաջնորդը Տրոյայի դեմ արշավանքում (Apollod. 3.10.8 [3.130]): Նրան գահին էին բազմեցրել Դիոսկուրոսները, երբ Թեսևսը գնացել էր անդրաշխարհ (Apollod. E. 1.23), տե՛ս դրվագ 126:  
<sup>2</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շարքի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Այդ ժամանակ Թեսևսը մեկ քաղաքում միավորեց աթենացիներին, որոնք մինչ այդ ցրված բնակվում էին երկրում: Նա արքայվեց, ինչի օրենքն ինքն էր հաստատել» (Chronique de Michel le Syrien, livre IV, chapitre III, p. 51):  
<sup>3</sup> Տես դրվագ 67:

Փիլոն Տիրակացի 933.

Դեղաղոսի իրքն՝ որ կարծեցուցանէր, թէ պատկերս շարժունս առնիցէ. քանզի նախ գոտս պատկերացն ի միմեանց զատանէր, զի այլքն կից գործեալ հասանէին: Եւ պատմէ Պաղէփատոս եթէ որպէս հանդերձ որդւովն իւրովն Կարոսիւ զնաւէ կալեալ փախեալ ի Նինեայ. և վասն չգտանելոյ պատասպարան փախստեանն՝ համարեցաւ թռանիլ:

Միխայէլ Ասորի Ա. 55.

Դեղաղոս հիւսն աստ երևեցաւ. որ կարծեցուցանէր շարժուն զպատկերսն զոր առնէր՝ զի նախ գոտսն զատանէր, զոր այլք կից գործէին...:

Վարդան, ձառք 314.

Եւ այսօրիկ նկարագրութիւն անդամոցն զուտ և զուարթուն պատկերին Քրիստոսի յոտիցն սկսեալ և ի զլուխն աւարտեալ: Որպէս ասեն առնել քաջ և ճարտար պատկերագործացն Դեղեղայ յոտիցն ձեռնարկեալ, յորում շարժիլ թուէր անշունչ տեսողաց:

Վարդան, Հաւաքումն Ժ [21].

Զկնի Բարակայ իշխեցին Մաղիանացիքն ամս և թն, և դատեաց զԻսրայէլ Գեղէոն ամս քառասուն... Դեղաղոս հիւսն և նկարիչ աստ երևեցաւ, որ ասեն թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցուցեալ:

Մխիթար Այրիվանցի 35.

Այլ Դեղաղայ հիւսն և նկարիչ՝ զպատկերս զոր առնէր շարժուն թուեցուցանէր:

Դեղաղոսի հետ կապված իրադարձությունները, որ ստիպում էր մտածել, թե շարժական արձաններ է ստեղծում, քանի որ առաջին անգամ պատկերների ոտքերը բաժանում էր միմյանցից, իսկ ուրիշները կցելով էին արդյունքի հասնում: Եվ Պաղեփատոսը պատմում է, որ իր որդի Կարոսի (Իկարոսի) հետ բռնվելով մի նավից, փախան Նինոսից (Մինոսից), և համարվեց, թե թռել են, քանի որ փախուստի հանգրվանը չգտնվեց:

Այդ ժամանակ հայտնվեց Դեղաղոս հյուսնը, որ ստիպում էր մտածել, թե իր ստեղծած պատկերները շարժական են, քանի որ առաջին անգամ ոտքերը բաժանում էր միմյանցից, որ ուրիշները կից էին սարքում:

Սրանք Քրիստոսի մաքուր ու զվարթ պատկերի անդամների նկարագրությունն են՝ ոտքերից սկսած և զլիսով ավարտած: Ինչպես, ասում են, արել է պատկերագործներից ամենալավն ու ճարտարը՝ Դեղաղոսը, սկսելով ոտքերից. տեսնողներին թվում էր, թե դրանցում անշունչ [մարմինը] շարժվում է:

Բարակից հետո յոթ տարի իշխեցին մաղիանացիները, և Գեղեոնը քառասուն տարի դատավոր եղավ Իսրայելում... Այդ ժամանակ հայտնվեց Դեղաղոս հյուսնը և նկարիչը, որն, ասում են, ցույց տալով շարժում էր պատկերներ, որոնք սարքում էր:

Դեղաղոս հյուսն ու նկարիչը իր սարքած պատկերները շարժուն էր ցույց տալիս:

## 118. Թեսևսն ու Մարաթնայն ցուրը

Աթենքի արքա Էգևսի հետ ամուսնացած Մեդեան դավեր նյութեց նրա որդի Թեսևսի դեմ<sup>1</sup> և Էգևսին համոզեց զգուշանալ նրանից որպես դավաճանից: Էգևսն էլ չճանաչելով սեփական որդուն, վախեցավ և ուղարկեց նրան Մարաթնայն ցլի դեմ<sup>2</sup> (Apollod. E1.5):

Գրիգոր Նազ., ճառ 5.5.8-9 [166] = PG 35 669.33.

...դիջնամանող զուարակն...

...τὸν ὑβριστὴν ταῦρον...

... կատաղած ցլին...

Նոննոս 4.1 [65] = Nonnos 5.1.23-29.

Ցուլ ոմն ի ձեռն Պոսիդոնի ել յԵղադա և յոյժ վնասէր գաւառին: Ի վերայ սորա եկեալ Թեսևս՝ սպանանէ. և աստուածքն կամեցեալ զգործն Թեսևսի մեծացուցանել, և հաճել զՊոսիդոն՝ հաստատեցին զցուլն յերկինս: Եւ այժմ է նա ի ձեռն աստեղաց կենդանադրեալ յերկինս:

ταῦρός τις ὑπὸ τοῦ Ποσειδῶνος ἀνεδόθη περὶ τὴν Ἑλλάδα. οὖτος ἐλυμαίνετο τὴν χώραν καὶ ἐσίνετο πολλά. ἐπὶ τοῦτον ἐλθὼν ὁ Θησεὺς ἀνεῖλεν αὐτόν. καὶ βουλόμενοι οἱ θεοὶ μέγα τὸ ἔργον δεῖξαι τοῦ Θησεῶς καὶ θεραπεῦσαι καὶ τὸν Ποσειδῶνα, κατεστήριζαν τὸν ταῦρον ἐν τῷ οὐρανῷ· καὶ νῦν ἐστὶ διὰ ἀστέρων ὑποζωγραφηθεὶς ὁ Ταῦρος ἐν τῷ οὐρανῷ.

Մի ցուլ Պոսեյդոնից ուղարկվեց Հելլադա և խիստ վնասում էր երկրին (+ և շատ բան փչացնում): Թեսևսը, զնալով սրա դեմ, սպանեց: Եվ աստվածները, կամենալով փառաբանել Թեսևսի գործը և հաճոյանալ Պոսեյդոնին, ցլին հաստատեցին երկնքում: Եվ այժմ նա (ցուլը) աստղերով պատկերված է երկնքում:

## 119. Մեդեայի վտարումն Աթենքից

Երբ Թեսևսը ցլին սպանեց, Էգևսը Մեդեայից թույն վերցրեց և մատուցեց նրան: Սակայն որդուն ճանաչելով, Էգևսը նրա ձեռքից խլեց գավաթը: Թեսևսն էլ, տեղեկանալով դավի մասին, Մեդեային վտարեց (Apollod. E1.6):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130 = Sync. 191.15.

Մէդիա Կողքեցի մեկնեցաւ յԵգևսայ:

Μήδεια Κολχίς ἀνεχώρησεν Αἰγέως.

Կողքիցի Մեդեան հեռացավ Էգևսից:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 95 = Sync. 191.15.

Մէդիա Կողքեցի կին մի իդձ գնաց յԵգևսայ արքայէ:

Μήδεια Κολχίς ἀνεχώρησεν Αἰγέως.

Կողքիցի մի կախարդ կին՝ Մեդեան հեռացավ Էգևս արքայից:

<sup>1</sup> Գրանով նա փորձում էր պաշտպանել իր և Էգևսից իր որդի Մեդուսի դիրքերը:

<sup>2</sup> Սա Հերակլեսի՝ նրա յոթերորդ սխրանքի ժամանակ վտարած Կրետական ցուլն է: Նույն ցուլն է, որին Պոսեյդոնն ուղարկել էր ծովից Մինոսի համար, և որի հանդեպ Պասիփայեն կիրք տաժեց, ունենալով նրանից Մինոտավրոս որդուն (դրվագ 67):

## 120. Թեսևս և Արիադնէ

Թեսևսը մտավ Մինոտավրոսին տրվելիք երրորդ տուրքի ցուցակի մեջ (տե՛ս դրվագ 69) և գնաց Կրետե: Մինոսի դուստր Արիադնէն սիրահարվեց նրան և օգնեց գտնել Լաբիրիմթոսի ելքը: Թեսևսը սպանեց Մինոտավրոսին և Արիադնէի հետ հասավ Նաքսոս: Այնտեղ Դիոնիսոսը սիրահարվեց Արիադնէին և առևանգեց նրան (Apollod. E1.7-9): Ըստ հռոմեացի բանաստեղծների (Cat. 64.52–264, Ov. Her. 10, Ars Am. 1.525–562, Met. 8.155–182), Թեսևսը քրեց Արիադնէին: Դիոնիսոսն Արիադնէի պսակը համաստեղութայն դարձրեց, որ կոչվեց Հյուսիսային պսակ (Ov. Met. 8.177–182, Diod. Sic. 4.61.5):

Գրիգոր Նազ., ճառ 5.5.7-8 [166] = PG 35.669.32.

...զԱրիադնայ զպսակն...

...τὸν Ἀριάδνης στέφανον ...

... Արիադնէի պսակը...

Նոննոս 4.1 [65] = Nonnos 5.1.1-6.

Արիադնէ դուստր էր Մինովայ՝ կրետացւոց թագաւորին: Սա տափացեալ Թեսևսի աթենացւոց թագաւորի, ի գալ նորա ի սպանումն Մինոտաւրոսի չոգաւ ընդ նմա. և ի Թեսևսուէ առեալ զնա Դիովնիսոս՝ եհան զնա ի Նաքսոս կղզի. և շաղաշարեալ ընդ նմա՝ առ ի պատիւ նորին պսակ նմա յերկինս գրեաց:

Ἀριάδνη θυγάτηρ ὑπῆρχε Μίνωος, τοῦ Κρητῶν βασιλέως. Αὕτη ἠράσθη Θησέως, τοῦ Ἀθηνῶν βασιλέως, ἐλθόντος ἐπ' ἀναιρέσει τοῦ Μινωταύρου. ἐκ τοῦ οὖν Θησέως ἔλαβεν αὐτὴν ὁ Διώνυσος, καὶ ἀνήγαγεν αὐτὴν ἐν τῇ Νάξῳ, καὶ συνεμίγη αὐτῇ. καὶ πρὸς τιμὴν αὐτῆς στέφανον ἐν τῷ οὐρανῷ δι' ἀστέρων ὑπεζωγράφησεν.

Կրետացիների թագավոր Մինոսն ուներ դուստր Արիադնէին: Սա սիրահարվեց աթենացիների թագավոր Թեսևսին, երբ նա եկել էր Մինոտավրոսին սպանելու, զնաց նրա հետ (զնաց նրա հետ չէր): Թեսևսից վերցնելով, Դիոնիսոսը տարավ նրան Նաքսոս կղզի և, մեծենալով նրա հետ, նրա պատվին երկնքում պսակներեց:

## 121. Դեդալոսի փախուստը և Մինոսի սպանությունը

Դեդալոսը Մինոսից փախավ ու ապաստանեց Սիկիլիայում Կոկալոսի մոտ. Մինոսը նրան գտավ, բայց Կոկալոսի դուստրերը լողանալու ժամանակ նրա վրա եռման ջուր լցնելով սպանեցին (Apollod. E1.14-15):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132 = Sync. 191.30-31.

Մինովս ի Սիկիլիա զաւրաժողով եղեալ ի վերայ Դեդալայ՝ սպանանի ի Կովկէլայ դատերաց:

Μίνως ἐπὶ Σικελίαν στρατεύσας διὰ Δαίδαλον ἀναιρεῖται ὑπὸ τῶν Κωκάλου θυγατέρων.

Մինոսը, արշավելով Սիկիլիայի դեմ, Դեդալոսի համար սպանվեց Կոկալոսի դուստրերից:

Թեոն 20 = Theon 66.26-28.

... ունի և յաղագս վարդապետի գալստեանն առ Կովկալսն Սիկիլացոց թագաւոր Եփորոս յեթներորդում և Փիլիստոս

ἔχουσι δὲ καὶ περὶ Δαίδαλου τῆς ἀφίξεως πρὸς Κώκαλον τὸν Σικανῶν βασιλέα Ἐφορος μὲν ἐν τῇ ἐβδόμῃ Φίλιστος δὲ ἐν τῇ

Վարդապետի (Դեդալոսի) սիկիլիացիների թագավոր Կոկալոսի մոտ գալստյան մասին ունի (ուսեն) Եփորոսը յոթե-

զնոյն զայս յառաջնում:

πρώτῃ.

բորդ [գրքում] և Փիլիստոսն  
այս նույնը՝ առաջինում:

### 122. Փեղրա և Հիպպոլիտոս

Թեսևսի կին Փեղրան սիրահարվեց ամազոնից նրա որդի Հիպպոլիտոսին, որը սակայն խուսափում էր խորթ մորից: Փեղրան գրպարտեց Հիպպոլիտոսին, իբր բռնություն է գործել: Թեսևսը հավատաց Փեղրային և աղերսեց Պոսեյդոնին, որ Հիպպոլիտոսը զոհվի: Նա ծովի ափով կառք էր վարում, ալիքներից մի ցուլ երևաց, ձիերը վախեցան, և կառքը ջախջախվեց: Հիպպոլիտոսը զոհվեց, Փեղրան էլ կախվեց (Apollod. E1.18-19):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132 = Sync. 191.29.

Փեղրա Իպպոլիտի ցանկա- Փαίδρα Ἴπολότου ἠράσθη.  
նայր:

Փեղրան սիրահարվեց Հիպպո-  
լիտոսին:

Պլատոն, Օրին. 411 = Plat. Leg. 931.b.8.

...անիծեալ ցասամբ... զԻպ-  
պոլիդոս թերևս...

... ἐπαρᾶσθαι... Թυμωθέντα...  
Ἴπολότῳ Ἐθρέα...

Թեսևսը<sup>1</sup> ցասումի մեջ անիծեց  
Հիպպոլիտոսին:

### 123. Իքսիոն և Հերա

Իքսիոնը սիրահարվեց Հերային և փորձում էր բռնի տիրանալ, Չևսն իրողությունը ստուգելու համար մի ամպի Հերայի կերպարանքը տվեց ու նրա կողքին պառկեցրեց: Եվ երբ Իքսիոնը սկսեց պարծենալ Հերայի հետ կապով, Չևսը կապեց նրան մի անվից, որը նրան քամիների օգնությամբ օդում պտտեցնում է: Ամպն էլ Իքսիոնից ծնունդ տվեց Կենտավրոսին (Apollod. E1.20):

Գրիգոր Նազ., ճառ 5.38.6 [212] = PG 35.713.30.

... զԻքսիովն...

... Ἰξίων...

... Իքսիոնին...

Նոննոս 4.32 [77] = Nonnos 5.32.15-21.

Իքսիովնոս տուփացաւ Հերայ, և  
Հերաս պատմէ Արամազդայ, և  
նորա կամեցեալ իմանալ, թէ  
իցէ հարեալ ի նմա՝ նմանեցոյց  
ամպ Հերա և եղ. և Իքսիովնի  
կարծեցեալ զնա գոլ Հերաս՝  
խառնակեցաւ ընդ ամպոյն: Եւ  
բարկացեալ Չևս՝ տանջէ զնա  
այսպէս. յանիւ տարածեալ զնա,  
և անուին ետ շարժիլ հանա-  
պազ, և է նա միշտ շրջաբերելով

Ἰξίων ἠράσθη τῆς Ἥρας. ἡ δὲ  
Ἥρα προσαγγέλλει τῷ Δίῃ. ὁ  
δὲ Ζεὺς βουληθεὶς γνῶναι εἰ  
οὗτος ἐρᾷ αὐτῆς, ἐξομοιοῖ  
νεφέλην τῇ Ἥρᾳ, καὶ ἔστησεν.  
ὁ δὲ Ἰξίων νομίσας αὐτὴν εἶναι  
τὴν Ἥραν συμμίγνυται τῇ νε-  
φέλῃ. καὶ ὀργισθεὶς ὁ Ζεὺς κο-  
λάζει αὐτὸν οὕτω· τροχῶ δια-  
τείνας αὐτὸν ἐποίησεν αἰεὶ φέ-  
ρεσθαι τὸν τροχόν· καὶ ἔστιν

Իքսիոնը կրքով լցվեց Հերայի  
հանդեպ, և Հերան պատմեց Ա-  
րամազդին (Չևսին): Եվ նա  
(Չևսը), կամենալով իմանալ,  
արդյո՞ք սիրահարված է նրան,  
մի ամպ նմանեցրեց Հերային և  
գրեց: Իքսիոնն էլ, կարծելով,  
թե դա Հերան է, խառնակվեց  
ամպի հետ: Չևսը, զայրանա-  
լով, այսպես պատժեց նրան.  
ձգելով նրան մի անվի վրա,

<sup>1</sup> Թեսևսի անունը սխալի հետևանքով դարձել է «թերևս»:



և ստորաբերելով՝ գայնալիսի պատուհաս հատուցանել:

οὔτος ἀεὶ ἀνακυκλοῦμενος καὶ καταφερόμενος, ταύτην τιννύων τιμωρίαν.

այնպես արեց, որ անիվն անընդհատ շարժվի, և նա շարունակ պտտվում ու վայր է բերվում՝ այդպիսի պատիժ կրելով:

### 124. Կենտավրոսների և լապիթեսների կռիվը

Լապիթես Պիրիթուսը Հիպոդամիայի հետ հարսանիք անելիս հյուրընկալում էր կենտավրոսներին: Մրանք՝ զինուն անսովոր, հարբեցին և փորձեցին գրոհել հարսնացուին: Պիրիթուսը զինվեց և Թեսևսի հետ միասին կռիվ սկսեց. կենտավրոսներից շատերին սպանեցին (Apollod. E1.21, Ov. Met. 12.210–536):

Եսևերիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 191.16-17.

Իշացուց և Ղապիթաց կռիւ: Իշացուլքն՝ թեստղացուց հեծեալք էին, որպէս պատմէ Պաղեփատոս յառաջնումն վասն անհաւատից:

Πόλεμος Κενταύρων καὶ Λαπιθῶν. Κένταυροι δὲ Θεσσαλῶν ἦσαν ἰππεῖς ἄριστοι, ὡς φησι Παλαίφατος ἐν πρώτῃ ἀπίστων.

Կենտավրոսների և լապիթեսների կռիվը. կենտավրոսները թեստղացիների հեծյալներն էին, ինչպես պատմում է Պաղեփատոսը «Անհավանական բաների մասին» առաջին գրքում:

Փիլոն Տիրակացի 934.

Առ Ղատինացուց թագաւորաւն իշացուց և լապիթաց կռիւն: Իշացուլք թեստղացուց հեծեալք էին, որպէս պատմէ Պաղեփատոս յառաջնում Ատթիդուղն:

Լատինացիների թագավորի ժամանակ կենտավրոսների և լապիթեսների կռիվն էր. կենտավրոսները թեստղացիների հեծյալներն էին, ինչպես պատմում է Պաղեփատոսը «Ատթիսակասի» առաջին գրքում:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 114.

Եւ էր դէմ յանդիման տեսանել զլապիթացն և զյուշկապարկաց(ն) կռիւս և ի վերայ Պերիթայ հարսանեացն եղեալ աղմուկ և խռովութիւնս, քանզի ոմանք ի նոցանէ ընդ գահոյանովն մտանէին, և ոմանք սեղանաւքն իբրև զինուք պարէին և այլք ի խաւարային տեղիս դիմեալ անկանէին:

Կարելի էր դեմ հանդիման տեսնել լապիթեսների ու կենտավրոսների կռիվը և Պիրիթուսի հարսանիքի ժամանակ տեղի ունեցած աղմուկն ու խառնաշփոթը, քանզի նրանցից ոմանք մտնում էին գահավորակների տակ, ոմանք սեղաններով պարում էին՝ ինչպես զենքով, ուրիշներն էլ գնում-ընկնում էին մուժ տեղեր:

Հմմտ. Alex. β 1.21.11-13.

ἦν δὲ ἰδεῖν Κενταύρων ἰστορίαν· οἱ μὲν γὰρ αὐτῶν ὑπὸ τοὺς κλινηῖρας ἔφυγον, οἱ δὲ ταῖς τραπέζαις ὡς ὄπλοις ἐχρήσαντο, ἄλλοι δὲ ὑπὸ σκοτεινοὺς τόπους ὑπεχώρουν.

Կարելի էր տեսնել կենտավրոսների պատմությունը. նրանցից ոմանք պատսպարվում էին գահավորակների տակ, ոմանք էլ սեղաններն օգտագործում էին որպես զենք, ուրիշներն էլ գնում էին մուժ տեղեր:

<sup>1</sup> «Պարէին» սխալ ընթերցումը հավանաբար առաջացել է «վարէին»-ից, որ հունարեն β խմբագրության չօգտագործված ձևով համարվում է, այսինքն՝ «սեղաններն օգտագործում էի որպես զենք»:

Alex. Rec. Byz. poet. 952-956.

Καὶ ἦν ἰδεῖν μάχην ἐκεῖ Λαπίθων καὶ Κενταύρων ἐγγινομένην γάμοις τε τοῖς ἐπὶ Πειριθόου. Οἱ μὲν γὰρ ἔφευγον ταχὺ κλιτῆρα προσοφέντες, τραπέζας πάλιν δ' ἕτεροι καθήρπασαν ὡς ὄπλα, ἄλλοι δ' εἰς τόπους σκοτεινοὺς τῷ φόβῳ προσεχώρουν.

Կարելի էր տեսնել լավիթեսների և կենտավրոսների կռիվը, որ եղավ Պիրիթուսի հարսանիքի ժամանակ. ոմանք արագ փախչում էին, կառչելով գահավորակներից, ոմանք էլ սեղանները բռնում էին ինչպես զենք, ուրիշներն էլ վախից քաշվում էին մութ տեղեր:

Մովսէս Խորենացի Բ 63 [195].

Եւ անդ էր տեսանել... զԼավիթեայցն և զՅուշկապարկացն կռիւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն:

Այնտեղ կարելի էր տեսնել լավիթեսների և կենտավրոսների կռիվը Պիրիթուսի հարսանիքի ժամանակ:

### 125. Թեսևսն առևանգում է Հեղինեին

Թեսևսը Սպարտայից առևանգեց տասներկու տարեկան Հեղինեին: Նրա եղբայրներ Դիոսկուրոսները գրավեցին Աթենքը և Հեղինեին այնտեղից տարան, նրա հետ էլ գերեվարեցին Թեսևսի սայր Էթրային (Apollod. E1.23):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 128 = Sync. 183.28-30.

Զիարդ մարթի Դիոսկուրացւոց զԵղէնէ քոյրն ասել, որ յետ բազում ամաց առևանկի կոյս ի Թեսեայ:

πῶς δύναται τούτων (Διοσκόρων) εἶναι ἀδελφὴ Ἑλένη, εἰ μὴ που μετὰ πολλὰ ἔτη παρθένος ἀρπάζεται ὑπὸ Θησέως.

Ինչպե՞ս կարելի է ասել, որ Հեղինեն Դիոսկուրոսների քույրն էր, եթե շատ տարիներ անց այդ կույսն առևանգվեց (չառևանգվեք) Թեսևսից:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130 = Sync. 201.24-26.

Թեսևս առևանկեաց զԵղինէ. զոր դարձեալ անդէն հանին եղբարքն. և զմայրն Թեսեայ գերի առին, յորժամ նա ի տարաշխարհ ճանապարհ գնաց:

Θησεὺς Ἑλένην ἤρπασεν, ἦν αὖθις ἀπέλαβον οἱ ἀδελφοὶ αὐτῆς Κάστωρ καὶ Πολυδεύκης, τὴν μητέρα Θησέως αἰχμαλωτίσαντες ἀποδημῶντος τοῦ Θησέως.

Թեսևսն առևանգեց Հեղինեին, որին դարձյալ հետ տարան եղբայրները (+ Կաստորն ու Պոլիդեկեսը), և Թեսևսի մորը գերեվարեցին, երբ նա (Թեսևսը) օտար երկրներ էր գնացել:

### 126. Թեսևսի և Պիրիթուսի արկածները Հադեսի թագավորությունում

Թեսևսը Պիրիթուսի հետ Հադեսի թագավորություն իջավ՝ Պերսեփոնեին առևանգելու<sup>1</sup>: Հադեսը նստեցրեց նրանց Լեթեի<sup>2</sup> գահին, որին նրանք սերտաճեցին: Պիրիթուսն ընդմիջտ կապված մնաց, իսկ Թեսևսին Հերակլեսն ազատեց և ողարկեց Աթենք: Մենեսքևսը վտարեց նրան այնտեղից (Apollod. E1.24, Paus. 10.29.9): Ըստ Սվիդասի (Suid. *Lambda* 604.7-10)<sup>a</sup> Թեսևսի հետույքից մի կտոր մնաց ժայռին կպած:

<sup>1</sup> Այս պատմության մեկ այլ տարբերակ տե՛ս դրվագ 53-ում:

<sup>2</sup> Լեթեն (Λήθη), որ բառացի նշանակում է՝ «մոռացություն», անդրաշխարհի գետերից մեկն էր: Նրա անձնավորված տարբերակը մոռացության աստվածուհին էր (Hes. *Theog.* 227):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 130 = Sync. 202.3.

Թեակս փախեալ յաթէնացոց: Պησευδς ε̅φουγεν απο̅ Αθηνων̅.

Թեակսը վտարվեց Աթենքից:

Գրիգոր Նազ., ճառ 4.77.1-3 [84-85] = PG 35.601.34-36.

... ոչ է իսկ փոխադրել ուրեք ի ծիծաղելիսն ... գսււամարմինսն ...

... ου̅δε̅ γαρ̅ ε̅στιν̅ ει̅ς̅ ο̅ τι̅ μετα-  
θει̅μεν̅ αν̅ α̅λλο̅ γε̅λοι̅ο̅τε̅ρο̅ν...  
του̅δς̅ με̅λα̅μπ̅υ̅γου̅ς,̅ και̅̅ του̅δς̅ α̅-  
π̅υ̅γου̅ς...

... Հնարավոր չէ փոխել ավելի ծիծաղելի [անուկները]... սևամարմիններին (սևահետույքներին և անհետույքներին) ...

Նոննոս 3.37 [40] = Nonnos 4.39.1-5.

Պերինթոս իջեալ ի դժոխս, զի յափշտկեացէ զՊերսեփոնէ՝ զդուստրն Պրուտոնի, և կապեալ եղև առ վէմս ոմանս: Արդ՝ իջեալ Հերակղէս, զի առցէ զՊերինթոս՝ զնա առ ինքն ձգեաց. այլ յատակք նորա առ քարինսն մնացին, և կոչեցաւ Պերինթոս՝ անյատակ:

Օ Πειρίθους̅ κα̅τε̅λ̅θ̅ων̅ ει̅ς̅ τον̅ Ἄϊδην̅ δια̅ τὸ̅ ἀ̅ρ̅π̅ά̅ξ̅αι̅ τὴ̅ν̅ Περ̅σε̅φ̅ό̅νη̅ν,̅ τὴ̅ν̅ τοῦ̅ Π̅ι̅λ̅ού̅τω̅νο̅ς,̅ ἐ̅δ̅έ̅θη̅̅ κα̅τ̅ω̅ πα̅ρὰ̅ πέ̅τρ̅αι̅ς̅ τ̅ισ̅ί̅.̅ κα̅τε̅λ̅θ̅ων̅̅ οὖ̅ν̅ ὁ̅ Ἡ̅ρα̅κ̅λ̅ῆ̅ς̅ και̅̅ θ̅έ̅λων̅̅ λα̅β̅ε̅ῖ̅ν̅ τον̅̅ Π̅ει̅ρί̅θ̅ου̅ν,̅ αὐ̅τ̅ὸ̅ν̅̅ μ̅έ̅ν̅ ἀ̅νε̅ῖ̅λ̅κ̅υ̅σε̅ν,̅ αἰ̅̅ δ̅έ̅̅ π̅υ̅γ̅αῖ̅ αὐ̅τ̅οῦ̅̅ προ̅σε̅μ̅ει̅ν̅αι̅ν̅ τῆ̅̅ πέ̅τ̅ρ̅α̅.̅ ἐ̅κ̅λή̅θη̅̅ οὖ̅ν̅ ὁ̅̅ Π̅ει̅ρί̅θ̅ου̅ς̅ ἄ̅π̅υ̅γ̅ο̅ς.

Պիրիթուսը, իջնելով դժոխք, որպեսզի առևանգի Պրուտոնի դուստր Պերսեփոնին<sup>1</sup>, կապվեց ինչ-որ ժայռերի: Հերակլեսը, իջնելով, որ ազատի Պիրիթուսին, նրան դեպի իրեն քաշեց: Նրա հետույքը մնաց ժայռին, և Պիրիթուսը կոչվեց անհետույք<sup>2</sup>:

### 127. Տանտալոսի պատիժը

Փոքր Ասիայի Լիդիա երկրի քաղաքոր Տանտալոսը պատիժ էր կրում Հադեսում. նրա գլխավերևում քար էր կախված, որը սպառնում էր ընկնել նրա գլխին: Ինքը կանգնած էր լճի մեջ և իր շուրջը տեսնում էր պտղալից ծառեր: Չուրը դիպչում էր ծնոտին, բայց երբ ուզում էր խմել, չորանում էր, իսկ երբ ուզում էր պտուղներից ճաշակել, քամին ծառերը քշում էր մինչև ամպերը: Պատժի պատճառն այն էր, որ նա, աստվածների սեղանի մոտ ընդունված լինելով, նրանց գաղտնիքները մատնել էր մարդկանց և իր ընկերներին համտեսելու էր սովել ամբրոսիա (Apollod. E1.2.1):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118.

Փռիւզացոց թագաւորեաց Տանտաղոս. որք և մէովնացիք կոչէին:

Փռյուզացիներին, որոնք նաև կոչվում էին մեոններ, թագավորեց Տանտալոսը:

Հմմտ. Sync. 189.17-18.

Τάνταλος̅ ε̅β̅α̅σί̅λευ̅σε̅ τῆ̅ς̅ Φ̅ρυ̅γ̅ί̅ας̅ ἤ̅τοι̅ Μ̅αι̅ο̅ν̅ί̅ας̅,̅ ἀ̅φ̅ ἧ̅ς̅̅ και̅̅ Μ̅αῖ̅ο̅νε̅ς.

Տանտալոսը թագավորեց Փռյուզիային կամ Մեոնիային, որտեղից էլ մեոններն են:

<sup>1</sup> Պերսեփոնեն Պրուտոն-Հադեսի կինն էր: Հունարենում՝ «Պրուտոնի Պերսեփոնեին». սեռական հոլովը սովորական էր հայրանվան համար, ուստի և հայ թարգմանիչը սխալմամբ թարգմանել է «դուստր»:  
<sup>2</sup> Ըստ առասպելի՝ այդպիսի ճակատագրի արժանացավ Թեսևսը: Հավանաբար սա կեղծ-Նոննոսի գործած սխալներից մեկն է:

Գրիգոր Նազ., ճառ 5.38.6 [212] = PG 35.713.30.

... գՏանտաղոս...

... Τάνταλος...

... Տանտալոսին...

Նոննոս 4.32 [76] = Nonnos 5.32.1-9.

Տանտաղոս որդի էր Արամազ-  
դայ. սա արժանի եղև սեղանոյ  
աստուածոցն, և արժանացեալ՝  
հրապարակեաց զխորհուրդս  
նոցա, և վասն այսորիկ տանջի  
այսպիսի տանջանարանաւք. ի  
ստորերկրեայս դատարանս ու-  
նելով քար կախեալ ի վերոյ նո-  
րա, և ի ներքոյ նորա՝ ջուր բա-  
զում և տունկք պտղաբերք՝  
քարն սպառնայ զանկումն ի  
վերայ նորա. զի եթէ կամիցի  
ըմպել ի յարակայեալ նմա  
ջրոյն, անկեալ վիճին ի վերայ  
նորա՝ պատուհասեսցէ զնա  
յոյժ: Վասն այսորիկ այժմ ասէ,  
թէ սովով և ծարավով մաշեալ  
լինի, տեսանելով զայնս ինչ,  
յորոց պարտն է ուտել և ըմ-  
պել, և ոչ կարացեալ վասն ի  
վերայ նորա կախեալ վիճին:

Ὁ μὲν Τάνταλος υἱὸς ἦν τοῦ  
Διός. οὗτος ἠξιώθη τῆς τραπέ-  
ζης τῶν θεῶν, καὶ ἀξιῶθεις ἐ-  
δημοσίευσεν τὰ μυστήρια αὐ-  
τῶν, καὶ κολάζεται κόλασιν διὰ  
τοῦτο τοιάνδε. ἔστιν ἐν τοῖς  
ὑπὸ γῆν δίκαιοις, ἔχων  
πέτραν ἐπάνω αὐτοῦ καὶ κάτω  
ὔδωρ πολὺ καὶ βλαστήματα  
καρποφόρα· καὶ ἠρτηται ὁ  
λίθος κατ' αὐτοῦ. ἐὰν οὖν,  
φησί, θέλῃ πιεῖν ἐκ τοῦ παρα-  
κειμένου ὕδατος, πίπτει ἢ πέτ-  
ρα ἐπάνω αὐτοῦ καὶ τιμωρεῖται  
αὐτόν. ἐκ τούτου φησὶν ὅτι λι-  
μῶ καὶ δίψει τήκεται, ὁρῶν μὲν  
ἀφ' ὧν δεῖ φαγεῖν καὶ πιεῖν, μὴ  
δυνάμενος δὲ διὰ τὴν ἐπιηρ-  
τημένην κατ' αὐτοῦ πέτραν.

Տանտալոսն Արամազդի (Զև-  
սի) որդին էր: Սա արժանացել  
էր աստվածների սեղանին և,  
արժանանալով, հայտնել էր  
նրանց գաղտնիքները: Դրա  
համար այսպիսի տանջանքով  
պատժվեց. ստորերկրյա պատ-  
ժարանում նրա գլխավերևում  
քար էր կախված, իսկ ցածում  
շատ ջուր ու պտղալից թփեր  
կային: Քարը սպառնում էր  
ընկնել նրա վրա. եթե կամե-  
նար խմել իր մոտի ջրից, քա-  
րը կընկներ նրա վրա և սա-  
տիկ կվնասեր նրան: Դրա հա-  
մար, ասում է, սովից և ծարա-  
վից հալումաչ է լինում՝ տես-  
նելով այն, ինչ պետք է ուտել  
ու խմել, և չկարողանալով՝ իր  
վերևում կախված քարի պատ-  
ճառով:

Պղատոն, Եւթիփոն 28 = Plat. *Euthph.* 11.d.7-12.

... կամէր թերևս՝ զի մնասցեն  
ինձ բանքս, և անշարժաբար  
հաստատիցին մանաւանդ՝ քան  
եթէ առ Դեղաղոս իմաստու-  
թեանն և Տանտաղոսի իրողու-  
թեանցն կիրս լինել, բայց  
սոցունց իսկ դժոխսն է:

... ἐβουλόμην γὰρ ἂν μοι τοὺς  
λόγους μένειν καὶ ἀκινήτως ἰδ-  
ρῶσθαι μᾶλλον ἢ πρὸς τῇ Δαι-  
δάλου σοφίᾳ τὰ Ταντάλου χρή-  
ματα γενέσθαι. Καὶ τούτων μὲν  
ἄδην.

... ավելի շուտ կկամենար  
(կկամենայի), որ խոսքերս  
մնան և անշարժ հաստատվեն,  
քան թե Դեղաղոսի իմաստու-  
թյան կամ Տանտալոսի վիճակի  
կրողը լինեի: Բայց սրանց  
բաժինը դժոխքն է (բավական  
է սրանց մասին):

## 128. Պելոպսի փղսկրյա ուսը

Պելոպսը, աստվածների խնջույքում խողխողված ու եփված, վերակենդանացվեց (Apollod. E1.2.3): Նրան մորթել ու աստվածներին էր մատուցել նրա հայր Տանտալոսը՝ ցանկանալով նրանց փորձել: Բայց սպանված մանկանն աստվածները կենդանացրին, իսկ Դեմետերի՝ անգիտությամբ կերած ուսը փղսարինովեց փղսկրյա ուսով (Hyg. *Fab.* 84.83, Tzetz., Sch. *Lyc.* 152, Serv. Verg. *Aen.* 6.603.4–13, *Ge.* 3.7): Փղսկրյա ուս ունեին նաև նրա հետնորդներ Պելոպյանները (որդիներ Ատրևսն ու Թիեստեսը, Ատրևսի որդիներ Ագամեմնոնն ու Սենելաոսը, Ագամեմնոնի որդի Օրեստեսը, Թիեստեսի որդի Էգիսթոսը):



129. Պելոպսի ամուսնությունն ու թագավորելը. Պելոպյաններ

Պելոպսը, դժվարություններ հաղթահարելով, ամուսնացավ Պիսայի արքա Էնոմաոսի դուստր Հիպոդամիայի հետ, հետո իրեն ենթարկեց Ասիա և Պելասգիտիս կոչվածը, որն իր անունով կոչեց Պելոպոննեսոս («Պելոպսի կղզի»): Պելոպսի որդիներն էին Պիտրեսը, Ատրեսը, Թիեստեսը և ուրիշներ (Apollod. E2.4-10):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 118., Հմմտ. Sync. 188.14.

Պէլոփոս զԻպպոդամիա առ οὗτος Ἴπποδάμειαν ἔγημε.  
Կնուցեան:

Պելոպսը (սա) կնուցեան առավ  
Հիպպոդամիային:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 114 = Sync. 183.2-3.

Պէլոփոս արգիացուց թագաւո-  
րեաց: ἔβασίλευσε τοῦ Ἄργους Πέλοψ.

Պելոպսը թագավորեց արգոս-  
ցիներին (Արգոսին):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 122.

Պէլէպոննեսայ թագաւորէ Պէլոփոս. և ողոմախա-  
բաց փոյթ յանձին կալաւ. և զաւրաժողով լեալ  
ի վերայ Իդիոնի՝ ի պարտութիւն մատնէր ի  
Դարզանայ:

Պելոպոննեսոսում թագավորեց Պելոպսը և  
զբաղվեց Օլիմպիական խաղերով: Եվ, արշավե-  
լով Իլիոնի դեմ, պարտության մատնվեց Դար-  
զանոսից:

Հմմտ. Sync. 188.11-13.

Τὸν Πέλοπα τινὲς οὐ μόνον Ἀργείων καὶ Μυ-  
κηνῶν ἱστοροῦσι βασιλεῦσαι, ἀλλὰ καὶ πάσης τῆς  
Πελοποννήσου. οὗτος Ὀλυμπίων προέστη καὶ  
στρατεύσας ἐπὶ Ἴλιον ἠττήθη ὑπὸ Δαρδάνου.

Պատմում են, որ Պելոպսը թագավորեց ոչ մի-  
այն արգոսցիներին ու միկենացիներին, այլև  
ամբողջ Պելոպոննեսոսին: Նա նաև զբաղվեց  
Օլիմպիական խաղերով: Եվ, արշավելով Իլիոնի  
դեմ, պարտության մատնվեց Դարզանոսից:

Գրիգոր Նազ., Ի Բառ. 163 = Greg. Naz. in Bas. 3.4.2.

... Պելոպեանքն...

... Πελοπίδαι...

... Պելոպյանները...

Նոնոս 2.1 [14-15] = Nonnos 43.1.14-29.

Արդ ասացուք յառաջագոյն, թէ ո ոք էր Պելոպսոս: Սա էր որդի Ծանտաղոսի փոքրագուց թագաւորին, և Ծանտաղոս այս մարտ ունելով ընդ Եղոսի, որ շինեաց զԻդիոն, որ ի Տրոփա-  
բա է, երկուցեալ ի պարտանաց յորդորէ զորդի իւր զՊելոպսոս, զի առեալ զինչս բազումս գաղթեցի առ եգերսն՝ ասացեալ այսպէս. «Թէ պարտեցուք յԻւրոպէ ապրեցուք անբանաւր»: Առեալ արդ ինչս

Εἶπωμεν οὖν πρῶτον τίς ὁ Πέ-  
λοψ. ὁ Πέλοψ υἱὸς γέγονε Ταν-  
τάλου, Φρυγίας βασιλέως. ὁ  
Τάνταλος δὲ οὗτος πόλεμον ἐσ-  
χηκῶς μετὰ Ἴλιου τοῦ κτίσαντος  
τὸ ἐπὶ Τροίας Ἴλιον, καὶ φοβού-  
μενος τὴν ἦτταν, ἐπέτρεψε τῷ  
Πέλοπι, τῷ ἰδίῳ παιδί, λαβόντι  
χρήματα ἀπᾶραι ἐπὶ τὴν Ἥπει-  
ρον, εἰπὼν ταῦτα ὅτι Ἐὰν μὲν  
νικήσω, ὑποστρέφεις πάλιν εἰς  
τὴν Φρυγίαν, εἰ δὲ ἠττηθῶ,  
μένε εἰς τὴν Εὐρώπην. Λαβὼν

Նախ ասենք, թե ով էր Պելոպ-  
սը: Պելոպսը Փոյուգիայի թա-  
գավոր Ծանտաղոսի որդին էր: Այս Ծանտաղոսը, պատերազմե-  
լով Իլոսի դեմ, որը հիմնել էր  
Տրոպոպի Իլիոնը, վախենալով  
պարտությունից՝ հորդորում  
էր իր որդի Պելոպսին շատ ու-  
նեցվածք վերցնել և գաղթել  
ժովեգերք (մայրցամաք): Այս-  
պես էր ասում. «Եթե (+ հաղ-  
թեմ, կրկին կվերադառնաս  
Փոյուգիա, իսկ եթե) պարտ-



դանեաց. և Արիսպագոսն շինի յԱթենս:

ների բարքերը նկարագրողը<sup>1</sup>, և Աթենքում  
Հիմնադրվեց Արեոպագոսը:

### 130. Ատրևսի և Թիեստեսի թագավորելը

Միկենացիները գուշակություն ստացան, որ թագավոր ընտրեն Պելոպսի մի հետնորդի, և մարդ ուղարկեցին Ատրևսի ու Թիեստեսի հետևից: Եղբայրների միջև հակամարտություն եղավ թագավորելու համար, և Թիեստեսը խաբեությամբ տիրացավ գահին: Ատրևսին հաջողվեց Ձևսի օգնությամբ իշխանությունն իր ձեռքը վերցնել, բայց Թիեստեսի որդի Էգիսթոսն Ատրևսին սպանեց և գահը վերադարձրեց իր հորը (Apollod. E2.10-14):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 265 = Sync. 144.25.

(Ի Միկենս թագաւորեաց...) և Էίτα Πελοπίδες· μετὰ Πέλοπα ... և ապա Պելոպիդներ (+ Պե-  
ապա Պողոպիդեանք՝ Ատրևսն Ἄτρεὺς καὶ Θυέστης ἔτη ξε΄. և ապա Պելոպիդ հետո) Ատրևսն ու Թի-  
և Թիեստէս ամս ԿԵ.: և Թիեստեսը՝ 65 տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 126.

Ատրևս և Թիեստէս յետ Պեղոպեայ բաժանեցին  
գիշխանութիւնն Պեղոպոնէսի:

Ատրևսն ու Թիեստեսը Պելոպսից հետո բաժա-  
նեցին Պելոպոննեսոսի իշխանությունը:

Հմմտ. Sync. 188.18-19.

Μετὰ τὴν Πέλοπος τελευτὴν ἐμερίσαντο τὴν ἀρ-  
χὴν Ἄτρεὺς καὶ Θυέστης τῶν Μυκηθῶν.

Պելոպսի վախճանից հետո Միկենեի իշխանու-  
թյունը բաժանեցին Ատրևսն ու Թիեստեսը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132.

Ատրէս արգիացուց թագաւորեաց և Միկէնից  
Թուէստէս:

Ատրևսը թագավորեց արգոսցիներին, իսկ Թի-  
եստեսը՝ Միկենեին:

Հմմտ. Sync. 188.16.

Μυκηθῶν Ἀργείων ἰ΄ ἐβασίλευσαν Ἄτρεὺς καὶ  
Θυέστης ἔτη λγ΄.

Միկենացիներին և արգոսցիներին տասներոր-  
դը թագավորեցին Ատրևսն ու Թիեստեսը՝ երե-  
սուներեք տարի:

### 131. Ագամեմնոն և Մենելաոս. Օրեստեսի ծնունդը

Ատրևսի մահից հետո նրա որդիներ Ագամեմնոնին և Մենելաոսին դայակն ուղարկեց Միկիո-  
նում իշխող Պոլիփիդեսի մոտ (Apollod. E2.15): Ագամեմնոնը թագավորեց միկենացիներին և ա-  
մուսնացավ Տինդարեսի դուստր Կլիտեմնեստրայի հետ՝ սպանելով նրա ամուսնուն՝ Թիեստեսի

<sup>1</sup> Այս կերպարի ծագումն ու ով լինելը հայտնի չէ. հմմտ. Վարդան. Հաւաքումն Ժ [20], ծան. 1. «Փիլիսոփա անուն պատմագիր մի ճանաչի կացեալ ի Դ- դարու նախ քան գՔրիստոս, յաւուրս Դիոնիզիայ կրսերոյ ի Ստրակուսա, իսկ առակական կենդանեաց հետևող կամ նախօրինակ Եզովպոսի անձանօք է ինձ»:



որդի Տանտալոսին: Ծնվեց Ագամեմնոնի Օրեստես որդին, Մենելաոսն էլ թագավորեց Սպարտայում (Apollod. E2.16):

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 259, հմմտ. Sync. 173.7.

Թագաւորք սիկոնացոց ... Քսուոնիւն կո՛ւ էթասիւսսէ Սօ-Քսաներորդ չորրորդ Պաւղի-լափէճի չէտ լա՛.	Սիկոնացիների թագավորներ ... Քսանչորսերորդը Պոլիփի-դեսն էր՝ երեսունմեկ տարի. սրա օրոք Իլիոնն առնվեց (չիք սրա ... առնվեց):
--	--

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132.

Միկենից թագաւորեաց Ագամեմնոնն ամս ԼԵ. Սիկեններն թագավորեց Ագամեմնոնը՝ երեսուն-որոյ յըռւժ ամի Իլիոնն առաւ:	Հինգ տարի, որի տասնութերորդ տարում գրավվեց Իլիոնը:
---	--

Պորփ. 134 = Porph. 2.2-3.

ԶՈվրեստէս Ի Տանտալեայ ա-սեմք ունել զսեռն:	Օրէստին անո՛ւ Տանտալոս փամեն էչուն տօ յենոս.	Ասում ենք, որ Օրեստեսի ծագումը Տանտալոսից է:
---	--	--

Դաւիթ, Պորփ. 62.11-13 [11.7] = D. Porph. 127.26-27.

ԶՈվրեստէս Ի Տանտալեայ ա-սեմք:	Օրէստին անո՛ւ Տանտալոս փամեն էչուն տօ յենոս.	Ասում ենք, որ Օրեստեսը Տանտալոսից է (է ծագում):
-------------------------------	--	---

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132 = Sync. 201.17.

Ղակեղեմոնի Մէնաղևոս թա-գաւորեաց:	Մենէլաոս Լակեճաիմոնոս է-թասիւսսէն.	Ղակեղեմոնին թագավորեց Մենելաոսը:
----------------------------------	------------------------------------	----------------------------------

Միխայէլ Ասորի Ա 57.

Աստ ասեն թագաւորել զՂակեղեմոն Իմենաղևոս (1 օր. Ի Մենաղայ):	Այստեղ, ասում են, Ղակեղեմոնին թագավորեց Մենելաոսը:
--	--

### 132. Պարիսն առևանգում է Հեղինեին

Ալեքսանդրոս-Պարիսն առևանգեց Հեղինեին: Այսպես ուզեց Չևսը, որպեսզի, Եվրոպայի ու Ասիայի պատերազմին առիթ տալով, իր դուստրը հռչակավոր դառնա, կամ, ինչպես ուրիշներն են ասում, որպեսզի կիսաստվածների<sup>1</sup> ցեղը փառաբանվի<sup>2</sup> (Apollod. E3.1):

<sup>1</sup> Երբեմն այսպես էին անվանում Տրոյական պատերազմի մաս ավելի վաղ հերոսներին, որոնք աստվածային ծագում չունեին (Hes. Op. 159-166, Hom. Il. 12.23):

<sup>2</sup> Հմմտ. չպահպանված «Կիպրոսական» էպիկական պոեմի մի բեկորը (Cyprica fr. 1, մեջբերված Sch. Hom. Il. 1.5), որտեղ Չևսը, ցանկանալով վերջ դնել գերբնակեցվածությանը, ստիպում է, որ մարդիկ պատերազմ վարեն, ինչպես նաև՝ Հեղինեի «Կանանց ցուցակ»-ի հատվածները (Hes. fr. 204.95-99), ուր Չևսը կամենում է Տրոյական պատերազմի միջոցով վերացնել կիսաստվածների հոգիները, կամ էլ մեկ այլ աղբյուր (Sch. Eur. Or. 1641.1-4), որտեղ նա ուզում է թեթևացնել երկիրը մարդկանց բազմությունից, և այդ առիթով հիշատակվում են Թերական ու Տրոյական պատերազմները:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132-134.

Աղէքսանդրոս զԵղէնէ առեանգեաց. և եղիական պատերազմն գտասն ամ գումարեցաւ՝ վասն խնձորոյ գեղոյ. որոց ընտրոյ տէր էր Պարիս անդիորդ:

Ալեքսանդրոսն առեանգեց Հեղինեին. և Իլիական պատերազմը, գեղեցկութեան համար տրված խնձորի պատճառով, տասը տարի տևեց. նրանց ընտրողն էր Պարիս նախրապանը:

Հմմտ. Sync. 202.6-8.

ὁ Τρωικὸς πόλεμος συνέστη ἔνεκα μήλου χρυσοῦ, ὃ κάλλους ἔπαθλον ἦν γυναικῶν τριῶν, ὑπὸ μιᾷς αὐτῶν προτεθειῆς Ἑλένης τῷ κριτῆι. βουκόλος δ' οὗτος ἦν Ἴλιεύς.

Տրոյական պատերազմը տեղի ունեցավ ոսկե խնձորի համար, որը երեք կանանց գեղեցկութեան մրցանակն էր, իսկ նրանցից մեկը Հեղինեին առաջարկեց դատավորին: Սա մի իլիոնացի նախրապան էր:

Եղիշէ, Գտիչք 1014.

Աղեքսանդրոս զԵլեն առեանգեաց, և Ելիական պատերազմն զԺ. ամ գումարեցաւ:

Ալեքսանդրոսն առեանգեց Հեղինեին, և Իլիական պատերազմը տասը տարի տևեց:

Վարդան, Հաւաքումն Ժ [21].

Աղեքսանդրոս զԵլենէ առեանգեաց, և տասն ամ պատերազմ վասն այնր, և առնուլն զԻլիոն:

Ալեքսանդրոսն առեանգեց Հեղինեին. և տասը տարի տևեց նրա համար մղվող պատերազմը, և Իլիոնն առնվեց:

Միխայէլ Ասորի Ա. 57.

Ոմանք աստ ասեն թէ Աղեքսանդրոս զԵլենէ առեանգեաց, և զԻլիոնական պատերազմն վասն նախանձու գտասն ամ<sup>1</sup>:

Ոմանք այստեղ ասում են, թե Ալեքսանդրոսն առեանգեց Հեղինեին. և տասը տարի տևեց խանդի համար Իլիական պատերազմը:

### 133. Հեղինեն Պրոտուսի մոտ. կերպարանափոխվող Պրոտուսը և նրա որդիները

Ոմանք ասում են, թե Չուսի կամքով Հերմեսը Հեղինեին գողացավ, տարավ Եգիպտոս և ի պահ տրվեց եգիպտացիների թագավոր Պրոտուսին, իսկ Պարիսը Տրոյա տարավ Հեղինեի՝ ամպերից պատրաստված պատկերը (Apollod. E3.5): Ըստ «Ողիսական»-ի (Hom. Od. 4.412) Նեղոսի դելտայի Փարոս կղզին նրա տունն էր: Հերակլեսն իր իններորդ սխրանքը (Հիպոլիտեի գոտին բերելը) կատարելուց հետո ըմբշամարտում սպանեց իրեն մարտահրավեր նետած՝ Պրոտուսի որդիներ Պոլիզոնոսին ու Տելեզոնոսին (Apollod. 2.5.9 [2.105]):

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Ալեքսանդրոս Պարիսը՝ Իլիոնի թագավորը ... հյուրընկալվելով Սպարտայի թագավոր Մենելաոսից, տեսավ նրա կին Հեղինեին, որ գեղեցիկ էր. նրան տարավ Տրոյա՝ Փոյուգիայի երկրում, իր հոր մոտ: Մենելաոսը, տեսնելով պատահածը, օգնության կանչեց քսան թագավորների իրենց նավերով՝ թվով 1250, և պատերազմ սկսեց, որը տևեց տասը տարի» (Chronique de Michel le Syrien, livre IV, chapitre VII, p. 57):

... կամ Պրոտևս...

... ἢ Πρωτεύς...

... կամ Պրոտևսը...

Նոննոս 3.2 [26] = Nonnos 4.2.1-15.

Պրովտէսս այս թրակացի էր ազգաւ և ունէր որդիս երկուս՝ զՄողոն և զՏեղեգովնոս: Սոքա աւազակք գոլով՝ Հերակղէս եկեալ սպան գնոսս յանցանելն վասն անդէոցն Գերիովնեայ: Արդ՝ զգացեալ Պրովտէսս վասն սպանման գաւակաց իւրոց՝ ընկեց գանձն իւրի ծով, զոր անմահացոցին աստուածքն, ողորմելով նմա: Եւ եղեալ զև ծովային՝ եկն բնակեցաւ ի Փարոս կղզւոյ: Զսմանէ ասի թէ առ փովկիւրեանսն զեգերեալ լինէր. և սա յԱղեքսանդրոսէ առ զՀեղինէ ի գալն նորա յԵլլադա և ետ նմա զպատկերն Հեղինեայ: Այլ յետոյ Մենեղոսս, յետ տրովական պատերազմին, իմացեալ թէ յԵգիպտոս է Հեղինէ, և գալով նորա առ Պրովտէս՝ զինքն ետ ցնա: Այլ ասի զՊրովտեայ կերպափոխիլ առ Հանդիպողսն պէսպէս՝ բայց ի սպիտակութենէ, և երբեմն երկիլ այսպէս, և երբեմն՝ այլպէս:

Οὗτός ὁ Πρωτεύς Θράξ μὲν ἦν τὸ γένος· εἶχε δὲ υἱοὺς Μῶλον καὶ Τηλέγονον. τούτους ληστὰς ὄντας ὁ Ἡρακλῆς ἐλθὼν ἀπέκτεινεν, ἀπερχόμενος διὰ τὰς Γηρυόνοιο βούς. τοῦτον οὖν ἀθυμοῦντα τὸν Πρωτέα διὰ τὴν ἀποβολὴν τῶν τέκνων, καὶ ῥίψαντα ἑαυτὸν εἰς θάλασσαν, οἱ θεοὶ ἐλεήσαντες ἀπηθανάτισαν. καὶ γέγονε δαίμων ἐνάλιος, καὶ ἔρχεται καὶ οἰκεῖ τὴν Φαρίαν νῆσον. οὗτος λέγεται καὶ μετὰ τῶν φοικῶν ἐνδαιατᾶσθαι. οὗτος καὶ τοῦ Ἀλεξάνδρου τὴν Ἑλένην ἔλαβεν ἐλθόντος ἀπὸ τῆς Ἑλλάδος, καὶ δέδωκεν αὐτῷ τὸ εἶδωλον τῆς Ἑλένης. ὕστερον δέ, Μενελάου μετὰ τὸν Τρωϊκὸν πόλεμον μαθόντος ὡς εἰς Αἴγυπτόν ἐστιν ἡ Ἑλένη καὶ ἐλθόντος παρὰ τὸν Πρωτέα, δέδωκεν αὐτὴν αὐτῷ. Λέγεται δὲ οὗτος ὁ Πρωτεύς μεταμορφοῦσθαι πρὸς τοὺς ἐντυγχάνοντας, καὶ ποτε μὲν φαίνεσθαι τοιόσδε, ποτὲ δὲ τοιόσδε.

Այս Պրոտևսն ազգությամբ թրակացի էր և ուներ երկու որդի՝ Մոլոն և Տեղեգոնոս: Սրանք ավազակ էին, և Հերակլեսը եկավ ու սպանեց նրանց, երբ անցնում էր Գերիոնի կովերի համար<sup>1</sup>: Ուրեմն, Պրոտևսը, գավակների սպանության մասին տեղեկանալով (սպանությունից հուսալքվելով<sup>2</sup>), ծովը նետվեց, իսկ աստվածները զթալով անմահացրին նրան: Եվ, գառնալով ծովային ոգի, նա եկավ բնակվեց Փարոս կղզում: Ասում են, սա ապրել է նաև փոկիսցիների մոտ: Աղեքսանդրոսից, երբ նա գնում էր Հելլադայից, սա վերցրեց Հեղինին և տվեց նրան Հեղինի պատկերը: Հետագայում Մենելաոսը, Տրոյական պատերազմից հետո իմանալով, որ Հեղինեն Եգիպտոսում է, գնաց Պրոտևսի մոտ, և նա կնոջը տվեց նրան: Պրոտևսի մասին ասում են, որ իրեն հանդիպած մարդկանց աչքին գանազան կերպարանքներ էր ընդունում՝ բացի սպիտակությունից (չէր բացի սպիտակությունից), և մերթ այսպես էր երևում, մերթ այլ կերպ:

### 134. Ողիսևս և Պալամեդես

Ողիսևսը չէր ցանկանում մասնակցել Տրոյայի դեմ արշավանքին և խելագար ձևացավ. ըստ Փիլոստրատոսի՝ ձի ու եզ էր միասին լծել (Philostr. Her. 708.20), բայց Պալամեդեսը կեղծիքը բացահայտեց: Տրոյայի մոտ Ողիսևսը նրանից վրեժ լուծեց. կեղծ նամակ մոզոնեց Պալամեդեսի դավաճանության մասին, իսկ նրա վրանում ոսկի թաղեց: Ագամեմնոնը նամակը կարդաց, ոսկին գտավ և Պալամեդեսին հանձնեց զինվորներին, որ քարկոծեն (Apollod. E3.7-8):

<sup>1</sup> Տե՛ս դրվագ 50:  
<sup>2</sup> Հավանաբար «զացեալ» (որ թարգմանել ենք «տեղեկանալով») ընթերցումն առաջացել է «սուցեալ» ճիշտ ձևից:

Եւբոյացի Պաղամեղէս, որ բազմաց եղև գտակ և նորին աղաբաւ մախացեալ. այլ և դատաւոր իմաստութեան պահանջեցաւ և դատապարտեցաւ յայնցանէ որք յԻլիոն գումարեցան:

Նոննոս 3.55 [47-48] = Nonnos 4.62.1-19.

Ասի թէ Պաղամեղէս և բիւացի էր ազգաւ, այլ Եւբուսոս կղզի է հանդէպ Ատտիկէոյ. որ և եգիտ զթուելն և գտապալելն, և ի կիր արկանել գայլ բազում հնարս: Սա մի է ի մարտակցելոցն յԻլիոն և մեռաւ ի Տրոփաբա դաւաճանութեամբ Ուրիւսեայ. զի զՈւրիւսոս թշնամի ունէր վասն այսպիսոյ պատճառի. Ագամեմոնոն յորդորէր զՈւրիւսեայ ելանել ի Տրոփաբայ, և նա ոչ կամեցեալ՝ ձկանայր մոլուրիւն, և լծեալ էջ և արջառ, իբր թէ արաւրադրել ձկնով մոլութեանն: Իսկ Պաղամեղէս յանդիմանէր զնա ոչ գոյ մոլեալ, և յանդիմանեաց այսպէս. զՏեղեմաքոս՝ զորդի նորա, ընկեց առաջի արաւորոյն. ապա հասեալ Ուրիւսեայ մինչև ցմանուկն՝ վերացուցանէ զարաւրն, զի մի գանեսցի մանուկն. և ծանուցաւ, թէ զգաստ է: Արդ ռիութեամբ ռիացեալ ընդ նմա Ուրիւսեայ ի Տրոփաբայ՝ ստեղծանէ թուղթ իբր առ ի Պրիամոսէ առ Պաղամեղէս յաղագս ի ձեռն նորա մատնելոյ եղղենացւոցն և ընկենու ի վրանն Պաղամի-

էպեր *Εὐβοεὺς ὁ Παλαμίδης, ὁ πολλῶν εὐρετής, καὶ διὰ τοῦτο ἐπίφθονος, καὶ μέντοι καὶ δίκαιος τῆς σοφίας ἀπαιτηθεὶς, καὶ κατακριθεὶς τοῖς ἐπὶ Ἰλίου στρατεύσασι.*

Λέγεται ὅτι ὁ Παλαμίδης, *Εὐβοεὺς ὢν τὸ γένος (Εὐβοία δὲ νῆσος ἀπαντικρὺ τῆς Ἀττικῆς), εὗρε τὸ ἀριθμεῖν καὶ τὸ ταβλίζειν καὶ χρῆσθαι ἄλλαις πολλαῖς μεθόδοις. οὗτος δὲ ὁ Παλαμίδης εἷς ἐστὶ τῶν συστρατευσαμένων ἐπὶ τὸ Ἴλιον. ἀπέθανε δὲ ἐν Τροίᾳ κατὰ ἐπιβουλήν τοῦ Ὀδυσσεύος. Ὀδυσσεύα γὰρ εἶχεν ἐχθρὸν διὰ τοιαύτην αἰτίαν՝ τοῦ Ἀγαμέμνονος προτρεπομένου τὸν Ὀδυσσεύα ἐπὶ τὴν περὶ Τροίαν ἐξόδον, καὶ μὴ θέλων ἀπελθεῖν ὁ Ὀδυσσεὺς καὶ μανίαν προσποιησάμενος καὶ λαβὼν ὄνον καὶ βοῦν, καὶ δῆθεν ἀροτριῶν ἐν μανίας προσποιήσει, ὁ Παλαμίδης ἤλεγξεν ὅτι δὴ οὐ μαινεται. ἤλεγξε δὲ αὐτὸν Τηλέμαχος τὸν υἱὸν αὐτοῦ προθεὶς πρὸ τοῦ ἀρότρου. Εἶτα φθάσας ὁ Ὀδυσσεὺς περὶ τὸ παιδίον, ἐπῆρε τὸ ἄροτρον ἵνα μὴ πλήξῃ τὸ παιδίον, καὶ ἐγνώσθη ὅτι νηφάλιός ἐστιν. ταύτην οὖν τὴν μῆνιν μηνιῶν ὁ Ὀδυσσεὺς ἐν τῇ Τροίᾳ, ποιεῖ πλαστὴν ἐπιστολήν ἀπὸ Πριάμου ὡς πρὸς τὸν Παλαμίδην περὶ προδοσίας τῶν Ἑλλήνων, καὶ ὑποτίθησιν ἐν τῇ*

Եվբեացի Պաղամեղեսը, որ շատ բաների հայտնագործող էր և դրա պատճառով նախանձ շարժող. այլև նրանից պահանջվեց իմաստության դատավոր լինել (հասուցում իմաստության համար)<sup>1</sup>, և Իլիոնի մոտ հավաքվածները նրան դատապարտեցին:

Ասում են՝ Պաղամեղեսն ազգությամբ եվբեացի էր, իսկ Եվբեան կղզի է Ատտիկեի դիմաց: Հայտնագործել էր հաշվելն ու գառ խաղալը<sup>2</sup> և բազում այլ հնարքներ կիրառելը: Այս (+ Պաղամեղեսը) մեկն է Իլիոն համատեղ արշավողներից: Նա մեռավ Տրոպոպոսում Ուրիսուսի դավերի հետևանքով: Ուրիսուսը նրա թշնամին էր հետևյալ պատճառով: Երբ Ագամեմոնոսը հորդորում էր Ուրիսուսին Տրոպոպոսալ, իսկ նա (Ուրիսուսը), չցանկանալով (+ գնալ), խելագարուցյուն ձկնացրեց և, էջ ու եզ լծելով, իբրև թե վարում էր խելագար ձկնով, Պաղամեղեսը բացահայտեց, որ նա խելագար չէ: Իսկ բացահայտեց այսպես. նրա որդի Տեղեմաքոսին գցեց արորի առջև, և Ուրիսուսը, մանկանը հասնելով, բարձրացրեց գուլթանը, որպեսզի մանկանը չհարվածի, և հայտնի դարձավ, որ նա սթափ է: Ուրեմն, Ուրիսուսը, ռի պահելով նրա դեմ Տրոպոպոսում, մի նամակ մոգոնեց՝ իբր Պրիամոսից Պաղամեղեսին, թե՛ նա մատնել

<sup>1</sup> Հունարեն *δίκαιος* տի հոգիական իմաստով ընկալել է որպես դիկաստի հոգիական: <sup>2</sup> Այստեղ «տախալի» հավանաբար հունարեն *ταβλίζω* բայի բարձրագույն ձևն է (գուցե տառադարձությամբ)՝ «տախալել (տախտակ) խաղալ»:

դեայ. և յետ դաւելոյն լինելոյ ի վերայ նորա, որպէս մատնչի՝ գտաւ թուղթն. և նա մեռանի ի ձեռն Ագամեմնոնի և ամենայն եղղենացոցն:

τοῦ Παλαμήδους σκινηῖ. ὕστερον κατηγορίας γενομένης κατὰ Παλαμήδους ὡς προδότου, εὐρέθη ἢ ἐπιστολή· καὶ τέθνηκεν ὑπὸ Ἀγαμέμνονος καὶ πάντων τῶν Ἑλλήνων.

էր հուշներին, և գցեց Պալամեդեսի վրանը: Իսկ նրա՝ որպէս մատնչի դեմ դավ (մեղադրանք) լինելուց հետո նամակը գտնվեց, և նա սպանվեց Ագամեմնոնի ու բոլոր հուշների ձեռքով:

Պղատոն, Սոկր. 72 = Plat., *Apol.* 41.a.8-b.3.

Քանզի ինձ իսկ սքանչելի թերևս իցէ դեգերիլն աստանաւր, յորժամ և հանդիպիցիմ Պալամեդէոյ և էանտոսի՝ Տեղամոնոսի որդւոյն, և եթէ այլ ոք ի նախնեացն ի ձեռն անիրաւին դատաստանին մեռեալ է...

ἐπεὶ ἔμοιγε καὶ αὐτῷ θαυμαστὴ ἂν εἴη ἢ διατριβὴ αὐτόθι, ὁπότε ἐντύχοιμι Παλαμήδει καὶ Αἴαντι τῷ Τελαμῶνος καὶ εἴ τις ἄλλος τῶν παλαιῶν διὰ κρίσιν ἄδικον τέθνηκεν...

Քանզի հենց ինձ համար հրաշալի կլիներ այնտեղ [դժոխքում] ժամանակ անցկացնել, եթէ հանդիպեի Պալամեդեսին և Տելամոնի որդի Այասին<sup>1</sup> կամ էլ հներից ուրիշ մեկին, եթե մահացել է անիրավ դատաստանի պատճառով:

Գրիգոր Մագիստրոս 37 (ՁԱ).9.

Պատճառես այժմ իբրև զԱւղիսևս, զի մի՛ գինւորիցիս ընդդէմ մեզ, զեզն և զձի ի միասին լծեալ, սակայն գտցի քեզ Պաղէմիդէս և զՏեղեմաքոս կալեալ ի պատճառս զենման, զի զգաստասցիս:

Այժմ պատճառ ես բերում, որպեսզի մեր դեմ չմարտնչես, ինչպես Ողիսևսը՝ եզ ու ձի լծելով<sup>2</sup>, սակայն կգտնվի քեզ համար մի Պալամեդես, որ Տելեմաքոսին վերցրեց՝ իբր սրախողխող անելու համար<sup>3</sup>, որպեսզի զգաստանաս:

### 135. Իփիգենիան Ավլիսում և Տավրիսում

Տրոյա նավարկող հունական նավատորմը քամի չլինելու պատճառով մնացել էր Ավլիսում: Պատգամախոսն ասաց, որ Ագամեմնոնի դուստր Իփիգենիան պետք է զոհաբերվի Արտեմիսին: Հայրը խաբեց կնոջը՝ իբր խոստացել է աղջկան Աքիլլեսին կնության տալ, և Կլիտեմնեստրան ուղարկեց նրան: Ագամեմնոնը պատրաստվում էր աղջկան խողխողել, բայց Արտեմիսը նրան փախցրեց-տարավ Տավրոս և դարձրեց իր քրմուհին, իսկ բազմին մի եղնիկ դրեց (Apollod. E3.21-22): Եվրիպիդեսի մոտ Իփիգենիան պատմում է (Eur. *Iphig. Taur.* 36-40), որ Տավրոսում ինքը ստիպված է ժամանող օտարականներին զոհաբերել Արտեմիսին: Երբ հետագայում մորը սպանած Օրեստեսը պիտի խելագարությունից բուժվեր՝ բերելով տավրոսցիների մոտ պահվող Արտեմիսի արձանը, նրան բռնեցին ու տարան քրմուհու մոտ: Քույրը նրան ճանաչեց, նրանք վերցրին փայտե պատկերն ու փախան (Apollod. E6.26-27):

<sup>1</sup> Տելամոնի որդի Այասի մասին տե՛ս դրվագ 141, նրա վահանի մասին՝ դրվագ 139:  
<sup>2</sup> Հմմտ. Philostr. *Her.* 708.20-24. ὅς πολλοῖς τῶν ποιητῶν εἴρηται, ὡς στρατεύοι μὲν ἐπὶ Τροίαν ἢ Ἑλλάς, Ὀδυσσεὺς δὲ ἐν Ἰθάκῃ μανίαν πλάττειτο καὶ πρὸς ἄροτρον εἶη βοὸν ἵππῳ ζυμβαλὼν Παλαμήδης τε αὐτὸν ἐλέγξειε τῷ Τηλέμαχῳ («Ինչպես պատմել են շատ բանաստեղծներ, երբ Հունաստանն արշավելու էր Տրոյայի դեմ, Ողիսևսն Իփիգենիան խելագարություն ձևացրեց՝ արորի մէջ ձիու հետ եզ լծելով, և Պալամեդեսը նրան Տելեմաքոսի օգնությամբ բացահայտեց»):  
<sup>3</sup> Հմմտ. Apollod. E. 3.7. Ἀρπάσας δὲ Τηλέμαχον ἐκ τοῦ κόλπου τῆς Πηνελόπης ὡς κτενῶν ἐξιφοῦλκει («Տելեմաքոսին խլելով Պենեոպեի ծոցից՝ թուրը քաշեց, ասես սպանելու էր»):

Գրիգոր Նազ., Ի Բաս. 166 = Greg. Naz. in Bas. 8.2.3-3.3.

... որ ընդ առասպելսն սքանչանաս և ընդ փոխանակ եղն տուեալ կուսին: Եթէ ինչ այսպիսի իցէ ի պատուասիրութիւն, թէպէտև տայցեմք ոչ առասպել լեալ պատմութիւն, որպէս ի կարգի է բանն և յոյժ գարշելի: Քանզի ո՞ր աւգուտ ի փոխատրութենէն թէ ասրեցուցցէ զկոյսն, զի աւտարասպան լինել ուսցի, զանմարդութիւն վարդապետեալ ի մարդասէր փոխատրութենէն:

ὁ τοὺς μύθους θαυμάζων καὶ τὴν ἀντιδοθεῖσαν ἔλαφον τῆς παρθένου, εἴ τι τοσοῦτον εἰς φιλοτιμίαν ἔστι σοι, κἂν δῶμεν μὴ μῦθον εἶναι τὸ ἱστορούμενον. Ὡς τὰ γε ἐξῆς τοῦ λόγου καὶ λίαν αἰσχρά. τί γὰρ ὄφελος τῆς ἀντιδόσεως, εἰ σῶζει παρθένον ἵνα ξενοκτονεῖν διδαχθῆ, ἀπανθρωπίαν μαθοῦσα φιλανθρωπίας ἀντίδοσιν;

... որ սքանչանում ես առասպելներով և կույսի փոխարեն տրված եղնիկով: Ինչո՞վ է այսպիսի բանը քեզ մղում պատվախնդրություն, թեկուզ՝ ապահովենք այս պատմություն առասպել չլինելը: Չէ՞ որ այս պատմության շարունակությունը հույժ գարշելի է: Քանզի ի՞նչ օգուտ կա փոխարինումից, եթե կույսին փրկում է, որ սովորեցնի օտարասպան դառնալ՝ մարդասիրական փոխարինումից անմարդկայնություն սովորելով:

Նոննոս 2.7 [17-18] = Nonnos 43.3.1-8.

Յորժամ յելլադայ նաւարկութիւնն եղղենացուց եղև ի վերայ Տրովադայ առ ի Յովղիդէ բիովտացուց, զո՛հ լինելով Արտեմիդեայ, և դստերն Ագամեմնոնի, որում անուն էր Իփիգենիա, ի սպանդ աւանդելով, Արտեմիս ոգորմեալ կուսին՝ յափշտակէ զնա և ի բաց տանի առ Տաւրոսս ի Սկլթիա, և երևեցոյց փոխանակ կուսին եղն, զոր առեալ եղղենացիքն՝ զոհեցին. իսկ Իփիգենիա ի Սկլթիա քահանաուհի եղև Արտեմիդեայ:

Ὅτε ἀπὸ τῆς Ἑλλάδος ἀπόπλους τῶν Ἑλλήνων ἐπὶ τὴν Τροίαν ἐγένετο, ἐν τῇ Αὐλίδι τῆς Βοιωτίας θυσίας γενομένης τῆ Ἀρτέμιδι, καὶ τῆς θυγατρὸς τοῦ Ἀγαμέμνονος τῆς Ἴφιγενείας ἐπιδοθείσης τυθῆναι, ἡ Ἄρτεμις ἐλεήσασα τὴν παρθένον ἀρπάζει μὲν ταύτην καὶ ἀποφέρει παρὰ Ταύροις ἐν Σκυθία, ἔλαφον δὲ ἀντὶ τῆς παρθένου φανῆναι ἐποίησεν, ἥντινα λαβόντες ἔθυσαν οἱ Ἕλληνας. ἡ δὲ Ἴφιγενεία ἐν Σκυθία ἰέρεια ἦν τῆς Ἀρτέμιδος.

Երբ տեղի ունեցավ հույների ծովային արշավանքը Հելլադայից Տրոյայի դեմ, Բեոտիայի Ավլիսում զոհ էր մատուցվում Արտեմիսին, և Ագամեմնոնի Իփիգենիա անունով դուստրը տրվեց զոհաբերության: Արտեմիսը, գթալով աղջկան, հափշտակեց նրան և տարավ Սկյութիայի տավրոսցիների մոտ, իսկ կույսի փոխարեն եղնիկ ցույց տվեց, որին վերցնելով՝ հույները զոհեցին: Իսկ Իփիգենիան Սկյութիայում դարձավ Արտեմիսի քրմուհին:

Գրիգոր Նազ., ճառ 4.103.15 [124-125] = PG 35.640.6.

բարեպաշտութիւնն... Տաւրացուցն աւտարասպան լինել...

εὐσεβὲς... Ταύροις τὸ ξενοκτονεῖν.

Տավրոսցիների համար բարեպաշտություն է օտարներին սպանելը:

Նոննոս 3.53 [47] = Nonnos 4.57.1-5.

Այժմիկ ասացաք, եթէ ի Սկլթիա ազգ ինչ է կամ քաղաք Տաւրոս, ուր պատուեալ լինի Արտեմիս: Արդ Իփիգենիայի՝ դստերն Ագամեմնոնի, ներա-

Ἥδη εἵπομεν ὅτι ἐν τῇ Σκυθία ἔθνος ἐστὶν ἥτοι πόλις λεγομένη Ταῦροι. ἐνταῦθα τιμᾶται ἡ Ἄρτεμις. Τῆς οὖν Ἴφιγενείας τῆς Ἀγαμέμνονος θυγατρὸς ἐνταῦθα

Այժմ ասել ենք, որ Սկյութիայում կա մի ժողովուրդ կամ քաղաք՝ Տավրոսը, որտեղ պաշտում են Արտեմիսին: Ուրեմն, երբ Ագամեմնոնի դուստր

ծելով անդ ի ձեռն Արտեմիդեայ՝ զհասեալսն յաւտարաց զենուէին վասն ոչ յայտ լինելոյ Իփիգենիայի յիւրեանցսն, դառնալով աւտարացն:

Գրիգոր Նազ., ճառ 4.70.8 [74] = PG 35.592.7.

...ընդ Տաւրացւոց աւտարասպանութիւնսն...

Նոննոս 3.7 [28] = Nonnos 4.7.1-13.

Տաւրոսք ազգ են սկիւթացւոց. առ որս փոխադրեցաւ ի ձեռն Արտեմիդեայ Իփիգենիա՝ դուստր Ագամեմնոնի, յորժամ հանդերձեալ էին զոհել զնա յաղագս եղզենացւոցն յԱւղիդեայ. յաղագս որոյ եղն փոխանակ տուեալ աստուածուհոյն՝ ետ զոհել: Արդ այս Իփիգենիա ի Տաւրոսս գոլով, զի մի ծանրից ի հիւրոցն եկելոց, թէ ո ոք իցէ՝ հրամայէր զոհել զնոսա Արտեմիդեայ. և նա էր աւտարասպանն, զոր ասէ աստուածայինն Գրիգորին: Յետ այնորիկ՝ Ովրեստէս երկուցեալ յԵրինեանցն և եկեալ ի Տաւրոսս, և ըմբռնեալ իբր հիւր՝ ի սպանումն ածաւ առ քոյրն Իփիգենիա, իբր առ քահանայուհի, և ծանուցաւ ի ձեռն փղոսկրէից ուսոցն և թողաւ ի զենմանէն: Եւ այսպէս՝ առեալ Ովրեստէս զքոյրն իւր զԻփիգենիա՝ բերէ յԵլլադա:

ὕπὸ τῆς Ἀρτέμιδος ἐνεχθείσης, τοὺς ἀφικομένους ξένους ἔθουον πρὸς τὸ μὴ κατάδηλον γίνεσθαι τὴν Ἴφιγενεῖαν μετὰ τὴν ἐπάνοδον τῶν ξένων.

...τὴν ἐν Ταύροις ξενοκτονίαν...

Ταῦροι ἔθνος ἐστὶ περὶ τὴν Σκυθίαν. ἐν τούτοις μετετέθη ὑπὸ τῆς Ἀρτέμιδος ἡ θυγάτηρ Ἀγαμέμνονος ἡ Ἴφιγενεία, ἐν τῷ μέλλειν αὐτὴν θύεσθαι ὑπὲρ τῶν Ἑλλήνων ἐν τῇ Αὐλίδι, ὑπὲρ ἧς ἔλαφον ἡ θεὸς ἀμείψασα δέδωκε θῦσαι. Αὕτη οὖν ἡ Ἴφιγενεία οὕσα ἐν τοῖς Ταύροις, διὰ τὸ μὴ ἐπιγνοσθῆναι παρὰ τῶν ἐπιξενουμένων τίς ἐστίν, ἐπέτρεπε θύειν αὐτοὺς τῇ Ἀρτέμιδι. καὶ αὕτη ἦν ἡ ξενοκτονία ἣν λέγει ὁ θεῖος Γρηγόριος. Ὑστερον δὲ ὁ Ὀρέστης δειματούμενος ὑπὸ τῶν Ἐρινύων, καὶ ἐλθὼν παρὰ τοῖς Ταύροις, καὶ συλληφθεὶς ὡς ξένος ἐπ' ἀναιρέσει, καὶ προσενεχθεὶς ὡς ἱερεῖα τῇ Ἴφιγενεία, ἐπεγνώσθη διὰ τοῦ ἐλεφαντίνου ὄμου καὶ ἀφέθη τῆς θυσίας. οὕτω λοιπὸν λαβὼν ὁ Ὀρέστης τὴν ἰδίαν ἀδελφὴν, λέγω δὴ τὴν Ἴφιγένειαν, κομίζει εἰς τὴν Ἑλλάδα.

Իփիգենիան Արտեմիսի օգնությամբ բերվեց այդտեղ, ժամանող օտարականներին զոհում էին, որպեսզի Իփիգենիայի մասին յուրայիններին հայտնի չդառնա օտարների վերադարձից հետո:

... տավրոսցիների մոտ տարածված օտարասպանությունը...

Տավրոսցիները մի սկյութական ժողովուրդ են, որոնց մոտ Արտեմիսի ձեռքով տեղափոխվեց Ագամեմնոնի դուստր Իփիգենիան, երբ նրան պատրաստվում էին զոհել Ավլիսում հելլենացիների համար, որի փոխարեն աստվածուհին մի եղնիկ տվեց զոհելու: Ուրեմն, այս Իփիգենիան, գտնվելով Տավրոսցիների մոտ, որպեսզի եկվոր հյուրերը չճանաչեն, թե ով է ինքը, հրամայում էր զոհաբերել նրանց Արտեմիսին. և նա էր օտարասպանը (դա էր օտարասպանությունը), որին հիշատակում է աստվածային Գրիգորը: Դրանից հետո Օրեստեսը, Երինիսներից<sup>1</sup> ահաբեկված և գալով Տավրոսցիների մոտ ու որպես օտարական բռնվելով, սպանվելու տարվեց Իփիգենիա քրոջ՝ որպես քրմուհու մոտ, փղոսկրյա ուսի շնորհիվ ճանաչվեց և ազատվեց զոհաբերվելուց: Այսպես Օրեստեսը, վերցնելով իր

<sup>1</sup> Ուրանոսի արյան կաթիլներից ծնված (տե՛ս դրվագ 2) Էրինիսները ծնողի հանդեպ գործված հանցանքի կամ երդմնազանցության համար վրեժ լուծող ստորերկրյա աստվածուհիներ էին (Hom. *Il.* 9.454–455, 19.259–260, *Od.* 2.134–135): Էսքիլոսը մայրասպան Օրեստեսին հալածող Էրինիսներին պատկերել է գլուխներին գալարվող օձերով և արյունածոր աչքերով զարչելի սևագգեստ պառավների տեսքով (Aesch. *Choeph.* 1048–1050, 1058), հմմտ. «Ահա կանայք, որ սնան են Գորգոնների, / Սևագգե՛ստ են, գլուխներին գալարվում են / Չափր օձեր. փախչե՛լ, փախչե՛լ պետք է իսկույն... Պիղծ արյուն է ծորում նրանց զարչ աչքերից» (Էսքիլոս, *Ողբերգություններ*, հին հունարենից թարգմանեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Արամ Թոփչյանը, Երևան, 1991, էջ 268–269):

քույր Իփիգենիային, բերեց  
Հունաստան:

Գրիգոր Նազ., ձեռ. Մ 2600, Մ 946, 6ա = PG 36.337-38-39.

Եւ ոչ տաւրացւոց<sup>1</sup> աւտարա- Օὐδὲ Ταύρων ξενοκτονίαι.  
սպանութիւնք:

Ոչ էլ տավրոսցիների օտարա-  
սպանությունները:

Նոննոս 1.7 [8] = Nonnos 39.7.1-4.

Յաղագս տաւրացւոցն աւտարասպանութեան: Տաւրոս ազգ է սկիւթական, յորում էր տաւար Արտեմիդեայ, յորում տաւարի քահանաուհի էր Իփիգենիա դուստր Ագամեմնոնի թագաւորի: Յայսմ տաւարի զամենայն մարդ եկեալ յաւտարաց զոհէին Արտեմիդեայ:

περὶ τῆς τῶν Ταύρων ξενοκτονίας. ἔστιν δὲ αὐτή. Ταῦροι ἔθνος Σκυθικόν, ἔνθα ἦν ἱερὸν τῆς Ἀρτέμιδος, εἰς ὃ ἦν ἰέρεια ἢ Ἰφιγένεια ἢ θυγάτηρ τοῦ Ἀγαμέμνονος. ἐν τούτῳ τῷ ἱερῷ πάντα ἄνθρωπον ἐπιδημοῦντα ξένον ἔθουον τῇ Ἀρτέμιδι.

Տավրոսցիների օտարասպանութեան մասին: Տավրոսցիները սկյութական ազգ են. նրանց մոտ Արտեմիսի տաւար կար, որտեղ քրմուհի էր Ագամեմնոն արքայի դուստր Իփիգենիան: Ամեն ժամանոց օտարականի այս տաւարում զոհաբերում էին Արտեմիսին:

Գրիգոր Նազ., ճառ 4.122.9-10 [152] = PG 35.661.25.

Ի բաց հատցէ ... զաւտարատեցութիւնն Արտեմիս:

Ἐπικοπτέτω... μισοξενιάν Ἄρτεμις.

Թող Արտեմիսը վերացնի ... օտարականների հանդեպ ատելությունը:

Նոննոս 3.87 [63] = Nonnos 4.94.1-4.

Ասացաք յաղագս Իփիգենիայի և տաւրացոց արանցն, թէ նա պատուեալ լինէր առ ի տաւրացւոցն ի Սկիւթիա, ունելով զԻփիգենիա՝ զդուստրն Ագամեմնոնի, քահանայուհի, և զաւտարսն զենլով՝ ուրախանայր հիւրասպանութեամբն:

Εἶπομεν γὰρ περὶ τῆς Ἰφιγενείας καὶ τῶν Ταύρων ἀνθρώπων. ἢ γὰρ Ἄρτεμις ἐτιμᾶτο παρὰ τοῖς Ταύροις ἐν Σκυθία, καὶ ἔχουσα τὴν Ἰφιγενεΐαν, τὴν Ἀγαμέμνονος θυγατέρα, ἰέρειαν τοὺς ξένους αὐτῇ καταθύουσαν ἔχαιρε τῇ ξενοκτονίᾳ.

Խոսել ենք Իփիգենիայի և տավրոսցի մարդկանց մասին, թե նա (Արտեմիսը) պաշտվում էր Սկյութիայում տավրոսցիներից և, ունենալով Ագամեմնոնի դուստր Իփիգենիային իբրև օտարականներին իրեն զոհաբերող քրմուհի, զվարճանում էր օտարներին սպանելով:

Գրիգոր Մագիստրոս 31 (ԾԲ).3.

Մատուցանէին զնա տոռականին Արտեմիդեայ և ողոքեալ խնդրէին մնալ մանկանն կենդանի, զի մի՛ ըստ սովորութեան աւտարասպանին այն խողխողեացի:

Նրան տարան տավրական Արտեմիսի մոտ և խնդրում-աղաչում էին, որ մանուկը կենդանի մնա, որ չխողխողվի այդ օտարասպանի սովորութեան համաձայն:

<sup>1</sup> Մ 2600 ձեռագրում սխալ ընթերցում է՝ «ορωγινցί»:



### 136. Ափրոդիտեի վիրավորվելը

Տրոյայի պարսպի մոտ Դիոմեդեսը վիրավորեց Էնեասին օգնության եկած Ափրոդիտեին (Hom. II. 5.334-341, Apollod. E4.2):

Փիլոն, Նախախնամութիւն 73.

Եւ Հոմերոսի զկատարելագոյն ծայրիցն քերթողականութեան պարգևէին վասն որոյ. զի ...պատմեաց... զԱփրոդիտէս ի մարդոյ խոցեալ:

Հոմերոսին շնորհեցին բանաստեղծական արվեստի բարձրագույն կատարելությունը: Ինչի՞ համար. որովհետև պատմեց, թե ինչպես Ափրոդիտեն մարդու ձեռքով վիրավորվեց:

Նոնոս 3.72 [58] = Nonnos 4.79.12.

Ափրոդիտէս խոցեալ եղև առ ի էτρώθη ἢ Ἀφροδίτη ὑπὸ τοῦ Դիոմեդեսայ: Διομήδους.

Ափրոդիտեն վիրավորվեց Դիոմեդեսից:

### 137. Դիոմեդեսի վիրավորվելը Պարիսի նետով

Հոմերոսը պատմում է, որ Պարիսը թաքստոցից նետ արձակեց Դիոմեդեսի վրա և նրա կրունկը վիրավորեց, իսկ վերջինս ասաց նրան. «Ստո՛ր նետաձիգ, վարսերովդ դու պարծեցո՛ղ, աղջիկ փախցնո՛ղ, / Եթէ ինձ հետ զենքերովդ ուժն ուժի դեմ դու կովեիր, / Քեզ չէր օգնի ո՛չ աղեղդ, ո՛չ տարափը քո նետերի. / Այժմ ոտքիս գարշապարը քերծելով ես գուր պարծենում, / Հոգ չէ, ասես ինձ մի աղջիկ խոցեր կամ էլ անմիտ մանուկ» (Hom. II. 11.385-389):

Դիոն. Թրակ., Քերակ. 4 = Ars grammatica 1.1.9.4-5.

Քանզի գրելդ քերել ասիւր առ նախնեաւքն, որպէս և ի Հոմերոսի՝ և մակագրեալ իմ գոտին այժմ քո գարշապար, ունայնս պանծաս:

γράφαι γὰρ τὸ ξῖσαι παρὰ τοῖς παλαιοῖς, ὡς καὶ παρ’ Ὀμήρω “Νῦν δέ μ’ ἐπιγράφας ταρσὸν ποδὸς εὐχεαι αὐτῶς”.

Քանզի հսերի մոտ գրելը քերծել էր կոչվում, ինչպես՝ Հոմերոսի մոտ. «Այժմ ոտքիս գարշապարը քերծելով<sup>1</sup> ես գուր պարծենում»:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. 2.6 (մեջբերում Դավիթ քերականի մեկնությունից).

Եւ գիրդ է ի քերելոյ և ի գծելոյ ըստ հաստատուն յարացուցին, որ ի Հոմերոսէ կոչի, հարկանելով նետիւն զգարշապարն Դիոմիդեսայ Պարիսի:

Եվ գիրը քերելուց ու գծելուց է այդպես կոչվում Հոմերոսի բերած ստույգ օրինակում, երբ Պարիսը նետով խոցում է Դիոմեդեսի գարշապարը:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. 2.29 (մեջբերում Անանուն քերականի մեկնությունից).

Պարիս Տրովացի ընդ գիրկս մտեալ ի պատերազմի, եհար զգարշապարն Դիոմիդեսայ, և նո-

Տրոյացի Պարիսը, կովի բռնվելով պատերազմում, խոցեց Դիոմեդեսի գարշապարը: Նա էլ,

<sup>1</sup> Հունարեն γράφω բայի նախնական իմաստն է՝ «քերծել», որից էլ զարգացել է հետագայում մեծ տարածում գտած «գրել» իմաստը: Մեջբերված հատվածում այդ բայը էπι- («վրա») նախածանցով է. այստեղից էլ՝ «մակագրեալ» թարգմանությունը:

րա ի բաց կորզեալ «յաղջկանց, ասէ, նետք ինչ ոչ ստնանեն»: Իսկ նորա պատասխանի արարեալ «մակագրեալ իմ այժմ գոտին քո գարշապար, ունայնս պանծաս»: վասն այնորիկ ասի զիր:

Գրիգոր Մագիստրոս, 33 (ԾԴ).2.

Սպասէր նմա որպէս Պարէս Դիոմիդեայ, զի գաղտնի մահու աւրհաս հասուսցէ նմա:

Գրիգոր Մագիստրոս, 3 (Թ).4.

... մի՛ Պարէտն տրովացի հարեալ, որպէս զգիտմիդեան «գոտին իմ գարշապար», զմերովս ծիծաղեսցի արութեան գործառնութեան...

Վարդան, Քերակ. 85.

Հոմերոս յիւր տաղան գրեալ է, թէ ի տրոյական պատերազմին այր ոմն Դիոմիդէս նետիւ հարեալ գոտն Պարիսի Տրոյացոյ, և զանչեալ <է>, թէ՛ «Հարեալ իմ այժմ գոտին քո գարշապար, ունայնս պարծիս»: Եւ նորա պատասխանեալ, թէ՛ «Նետ ի յաղջկանէ արձակեալ ինձ ոչ վնասեաց»: Այս աւրինակ է գրելոյն, որ է՛ քերելոյն:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 161-162.

Գիրդ է ի քերելոյ և ի գծելոյ ըստ հաստատուն յարացուցին, որ ի Հոմերոսէ կոչի, հարկանելով նետով զգարշապարն Դիոմիդեայ Պարիսի: Եւ է պատմութիւնն սորա այսպէս. Պարիս Տրովացի, ընդ գիրկս մտեալ պատերազմի, եհար զգարշապարն Դիոմիդեայ, և նորա ի բաց կորզեալ՝ «Աղջկանց նետք, ասէ, ոչինչ ստանանեն»: Իսկ նորա պատասխանի արարեալ՝ «մակագրեալ իմ այժմ գոտին քո գարշապար, ունայնս պանծաս»:

Հանելով (նետը), ասաց. «Աղջիկներ ի արձակած նետերը ոչ մի վնաս չեն պատճառում»: Իսկ նա պատասխանեց<sup>1</sup>. «Այժմ ոտքիս գարշապարը քերծելով ես զուր պարծենում». դրա համար էլ կոչվում է՝ գիր:

Սպասում էր նրան, ինչպես Պարիսը՝ Դիոմիդեսին, որպեսզի օրհասական մահ բերի նրան:

... թող տրոյացի Պարիսը, խոցելով, ինչպես [ասում է] Դիոմիդեսը, «իմ ոտքի գարշապարը», չծիծաղի մեր քաջագործությունների վրա...

Հոմերոսն իր էպոսում գրել է, թե տրոյական պատերազմում ոմն Դիոմիդես այր, խոցելով տրոյացի Պարիսի ոտքը, բացականչեց. «Այժմ ոտքիս գարշապարը խոցելով ես զուր պարծենում»: Իսկ նա պատասխանեց, թե՛ «Աղջկա արձակած նետն ինձ չվնասեց»<sup>2</sup>: Սա գրելու, այսինքն՝ քերելու օրինակ է:

Գիրը քերելուց և գծելուց է այդպես կոչվում՝ ըստ Հոմերոսի վստահելի օրինակի, երբ Պարիսը նետով խոցում է Դիոմիդեսի գարշապարը: Եվ դրա պատմությունն այսպես է: Տրոյացի Պարիսը, կովի բռնվելով, խոցեց Դիոմիդեսի գարշապարը: Նա էլ, հանելով (նետը), ասաց. «Աղջիկների արձակած նետերը ոչ մի վնաս չեն պատճառում»: Իսկ նա պատասխանեց. «Այժմ ոտքիս գարշապարը քերծելով ես զուր պարծենում»<sup>3</sup>:

<sup>1</sup> Այստեղ շփոթություն է առաջ եկել. Հոմերոսի մոտ Դիոմիդեսի և Պարիսի երկխոսություն չկա, բոլոր խոսքերն ասում է Դիոմիդեսը՝ դիմելով Պարիսին: Բացառված չէ, որ «Իսկ նորա պատասխանի արարեալ» խոսքերը պատմությանն անտեղյակ մի գրիչ է ավելացրել:

<sup>2</sup> Շփոթությունն ավելի է խորացել. ոչ միայն ունենք Դիոմիդեսի ու Պարիսի երկխոսություն, այլև խոցողն այստեղ Պարիսի փոխարեն Դիոմիդեսն է:

<sup>3</sup> Հովհաննէս Երզնկացու քերականության մեկնությունն ամբողջովին ներառել է Գրիգոր Մագիստրոսի մեկնությունը:

Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 162-163.

Պարէս ոմն տրովացի ընդ գիրկս մտեալ եհար ի պատերազմին զգարչապարն Դիոմիդեայ, և նորա ի բաց կորգեալ՝ «յաղջկանց նետք, ասէ ոչինչ ստնանեն»։ Իսկ նորա պատասխանեալ ասէ. «Եւ մակագրեալ իմ այժմ գոտին քո գարչապար, ունայնս պանծաս»։

Եսայի Նչեցի, Քերակ. 82

Եւ գիրդ է ի քերելոյ և ի գծելոյ, որպէս ասէ, զի քերելովն իմն գաղափարի, այսինքն՝ քերելով աւրինակի. և նշանակէ ըստ հաստատուն յարացուցին, որպէս ի Հոմերոնէ կոչի, հարկանելով նետիւ Պարիսի զգարչապարն Դիոմիդեայ յասպարիսին։ Եւ է պատմութիւն սորա այսպէս. Պարիս Տրովացի ընդ գիրկս մտեալ՝ եհար ի պատերազմին զգարչապարն Դիոմիդեայ, և նորա ի բաց կորգեալ՝ «Աղջկանց նետքս, ասէ, ոչինչ ստնանեն»։ Իսկ նորա պատասխանի արարեալ ասէ՝ «Եւ մակագրել իմ այժմ գոտին քո գարչապար, ունայնս պանծաս»։

Առաքել Սիւնեցի, Քերակ. 101.

Հարց. Վասն է՞ր գրեալն «քերեալ» կոչի։ Պատասխանի. զի Պարիս ոմն տրովացի եհար գոտն ումեմն Դիոմիդեայ ի պատերազմի։ Եւ նա ասէ՝ «Նետք աղջկանց ոչինչ կարեն ստնանել», այսինքն՝ վնասել։ Եւ նմա պատասխանեալ թէ «Գրեալ իմ գոտին քո գարչապարաց, ունայնս պանծաս», և զոր քերեաց նետիւն՝ «գրեալ» ասաց, վասն որոյ առեալ Հոմերոս ի նմանէ զգրեալն «քերեալ» ասէ, իսկ ի մերս գրեալն «գծեալ» ասէ կամ «գրոշմեալ» կամ «պատկերագրեալ»։

Դաւիթ Զեյթունցի 79.

Հարց. Վասն է՞ր ասէ. քանզի զգրեալը... Պատասխանի. Զայն ասէ առաջինքն զգրելն քերել ասացին, որպէս բան քերթող և իմաստասէրն Հոմերոն, որ վասն պատերազմացն ճառէ այսպէս. Պարէս ոմն Տրովացի ընդ գիրկս մտեալ եհար ի պատերազմին զգարչապարն Դիոմի-

Ոմն տրոյացի Պարիսը, կռվի բռնվելով, մարտում խոցեց Դիոմեդեսի գարչապարը, նա էլ, հանելով (նետը), ասաց. «Աղջիկների արձակած նետերը ոչ մի վնաս չեն պատճառում»։ Իսկ նա պատասխանեց. «Այժմ ոտքիս գարչապարը քերծելով ես զուր պարծենում»։

Եվ գիրը քերելուց ու գծելուց է այդպես կոչվում, ինչպես ասում է, քանի որ քերելով է մի տեսակ ձև ստանում, այսինքն՝ քերելով է կազմավորվում. և նշանակում է՝ ըստ վստահելի օրինակի։ Ինչպես Հոմերոսի մոտ է կոչվում, երբ Պարիսն ասպարեզում նետով խոցեց Դիոմեդեսի գարչապարը։ Եվ դրա պատմությունն այսպես է։ Տրոյացի Պարիսը, կռվի բռնվելով, պատերազմում խոցեց Դիոմեդեսի գարչապարը, նա էլ, հանելով (նետը), ասաց. «Աղջիկների արձակած նետերը ոչ մի վնաս չեն պատճառում»։ Իսկ նա պատասխանեց. «Այժմ ոտքիս գարչապարը քերծելով ես զուր պարծենում»<sup>1</sup>։

Հարց. Ինչո՞ւ է գրվածը կոչվում «քերված»։ Պատասխան. քանի որ ոմն տրոյացի Պարիսը կռվում խոցեց ոմն Դիոմեդեսի ոտքը։ Եվ նա ասաց. «Աղջիկների նետերը ոչ մի բան չեն կարող պատճառել», այսինքն՝ վնասել։ Նա էլ պատասխանեց. «Դու ոտքիս գարչապարին գրելով ես զուր պարծենում». այն, որ նետով քերեց, կոչեց «գրած», ինչի համար Հոմերոսը, նրանից առնելով, գրվածը կոչում է՝ «քերված», իսկ մեզանում գրվածը նշանակում է՝ «գծված», կամ՝ «գրոշմված», կամ՝ «պատկերագրված»։

Հարց. Ինչո՞ւ է ասում. «քանզի գրվածը»... Պատասխան. Ի նկատի ունի այն, որ հները գրելուն «քերել» էին ասում, ինչպես քերթող և իմաստասեր Հոմերոսը, որ այսպես է պատմում պատերազմի մասին. Ոմն տրոյացի Պարիսը, կռվի բռնվելով, մարտում խոցեց Դիոմե-

<sup>1</sup> Եսայի Նչեցու քերականության մեկնությունն ամբողջովին ներառել է Գրիգոր Մագիստրոսի մեկնությունը։

դեայ և նորա ի բաց կորզեալ զնետն և ասաց. «Աղջկանց նետք ոչինչ ստնանեն», այսինքն ոչ ինչ վնասել կարեն: Իսկ նորա պատասխանեալ ասէ. «Մակագրեալ եմ այժմ գոտին քո գարշապար, ունայնս պանծաս», այսինքն վէրս արարի ի ոտսն կամ քերթեալ իմ գոտսն քո՝ մի սուտ պարծիր: Զայն Հոմերոս գրեալ ասէ, քանզի գիրն քերելով գծագրի և գաղափարի:

գեսի գարշապարը, նա էլ Հանեց նետն ու ասաց. «Աղջիկների արձակած նետերը ոչ մի վնաս չեն պատճառում», այսինքն չեն կարող վնասել: Նա էլ պատասխանեց. «Այժմ ոտքիս գարշապարը քերծելով ես գուր պարծենում», այսինքն՝ սուտ մի պարծենա, թե՛ «վիրավորել եմ ոտքերդ» կամ «քերել եմ քո ոտքերը»: Հոմերոսը դա կոչում է՝ «գրել», քանի որ գիրը քերելով է գծագրվում և ձև ստանում:

### 138. Պատրոկլոսի սպանվելը

Աքիլլեսն իր ընկեր Պատրոկլոսին իր գեներով զինեց, և տրոյացիները, կարծելով, թե նա Աքիլլեսն է, փախուստի դիմեցին: Պատրոկլոսը նրանց դեպի պարիսպը քշեց, շատերին սպանեց, ինքն էլ սպանվեց Հեկտորի ձեռքով (Hom. II, 16, Apollod. E4.6):

Գիրք պիտոյից VIII [184.6-7].

Զի՞նչ արդեաւք ասիցէ բանս Աքիլլես՝ Պատրոկլի ի բաց բարձելոյ:

Ի՞նչ խոսքեր կասեր Աքիլլեսը, երբ Պատրոկլոսը սպանվեց:

Հմմտ. Aphth. 10.347-8.

τίνας ἂν εἶποι λόγους Ἡρακλῆς Εὐρύσθεως ἐπιτάσσοντας;

Ի՞նչ խոսքեր կասեր Հերակլեսը, երբ Եվրիսթեսը նշանակվեց նրա վերադաս:

Գիրք պիտոյից VIII [185.11-13] = Aphth. 10.35.8-10.

Զի՞նչ արդեաւք ասիցէ բանս Աքիլլես ի Պատրոկլի անկանելն վրէժս առնուլ գիտելով:

τίνας ἂν εἶποι λόγους Ἀχιλλεύς ἐπὶ Πατρόκλω κειμένῳ βουλευόμενος πολεμεῖν;

Ի՞նչ խոսքեր կասեր Աքիլլեսը՝ Պատրոկլոսի մահվան առիթով որոշելով վրեժ լուծել (կռվել):

Պղատոն, Օրին. 426 = Plat. Leg. 944.a.2-8.

Առասպելաւ արդ վարելով Համանգամայն, ասացողք եթէ եկեալ առ տաղաւարն առանց զինիցն Պատրոկլոս ներշունչն եղև, որպէս զի ի միասին բիւրինս շնչեաց (և գյառաջագոյն զչնսն այնոցիկ՝ զորս ասէ քերթողն առ ի յաստուածոցն ձիր տուեալ ի Հարսանիսն Պելևսի և Թեղեայ, և զսոսա ու-

մύθῳ δὴ προσχρώμενοι ἅμ' εἴπωμεν, εἰ κομισθεῖς ἐπὶ σκηπὴν ἄνευ τῶν ὀπλῶν Πάτροκλος ἔμπνους ἐγένεθ', οἷον δὴ μυρίοις συνέπεσεν, τὰ δὲ πρότερα ἐκεῖνα ὄπλα, ἃ Πηλεὶ φησιν ὁ ποιητὴς παρὰ θεῶν προῖκα ἐν τοῖς γάμοις ἐπιδοθῆναι Θέτιδι, ταῦτα δὲ Ἐκτώρ εἶχεν, ἐξῆν ἂν τῶν τότε ὄσοι κακοὶ ὀνειδίξεν ὄπ-

Առասպելին դիմելով ասենք, որ եթե, առանց զենքերի բերվելով վրան, Պատրոկլոսը կրկին շնչեր, ինչպես պատահել է<sup>1</sup> բյուրավորների հետ (իսկ այն առաջին զենքերը, որոնք, ինչպես բանաստեղծն է ասում, աստվածներից ընծա էին տրվել Պելևսի և Թետիսի Հարսանիքին, Հեկտորի մոտ

<sup>1</sup> «Պատահել է», թարգմանել ենք ըստ հունարենի, քանի որ «ի միասին ... շնչեաց» աղավաղված ընթերցում է (հավանաբար συνέπεσεν-ի փոխարեն ընթերցվել է συνέπνευσεν):

նէր առ Ենտորոս), Հնարէր առ  
այնոցիկ որ յայնժամ չարք  
էին նախատել՝ զինիցն ի բաց  
ձգել զՄենիտիոսի:

Պղատոն, Սոկր. 54 = Plat. *Apol.* 28.b9-d.5.

Զի վատթարքն արդեք իցեն  
քոյով բանիւղ ի կիսաստուա-  
ծոցն՝ որչափ ի Տրուադայ  
վախճանեցան, այլքն իսկ և  
որդին Թետրայ. որ այսչափ  
վիշտն արհամարհեալ, քան թէ  
զգարչելի ինչ ի յանձն առ-  
նուլ, որչափ զի ասէր ցնա  
մայրն իւր աստուածուհի գո-  
լով յաւժարացեալ զնորա զԵք-  
տորոս սպանանել. «Այսպէս՝  
իբրու ես կարծեմ. ո՛վ որդի, ե-  
թէ վրէժխնդիր լինիցիս Պատ-  
րոկլոսի ընկերի քո սպան-  
մանն և սպանես զԵքտորոս,  
և դու մեռանիցիս. – քանզի  
վաղվաղակի ասէ, յետ Իւքսո-  
ռոսի աղճատիլն քեզ հուպ է»:  
Բայց նա զայս ինչ լսեալ՝  
զմահն ինչ և զվիշտն արհա-  
մարհեաց, բա՛ զայս ինչ մանա-  
ւանդ երկուցեալ ի կելոյն չար  
գոլով և բարեկամացն վրէժ-  
խնդիր ոչ լինել: «Վաղվաղա-  
կի, ասէ, մեռայց՝ պատուհաս ի  
վերայ հասուցեալ անիրաւո-  
ղին, զի մի աստանաւր մնա-  
ցից ծիծաղելի առ նաւսն սնո-  
տի՝ իբրու կոշտ ինչ հողոյ»:

λων ἀποβολὴν τῷ τοῦ Μενου-  
τίου.

φαῦλοι γὰρ ἂν τῷ γε σῶ λόγῳ  
εἶεν τῶν ἡμιθέων ὅσοι ἐν Τροίᾳ  
τετελευτήκασι οἳ τε ἄλλοι καὶ  
ὁ τῆς Θετιδος υἱός, ὃς τοσοῦτον  
τοῦ κινδύνου κατεφρόνησεν  
παρὰ τὸ αἰσχροῦν τι ὑπομεῖναι  
ὄσπε, ἐπειδὴ εἶπεν ἡ μήτηρ  
αὐτῷ προθυμουμένῳ Ἔκτορα  
ἀποκτεῖναι, θεὸς οὐδ' ἴσα, οὐτωσί  
πως, ὡς ἐγὼ οἶμαι. “Ὡ παῖ, εἰ τι-  
μωρήσεις Πατρόκλῳ τῷ ἐταίρῳ  
τὸν φόνον καὶ Ἔκτορα ἀπο-  
κτενεῖς, αὐτὸς ἀποθανῆ ἄντικα  
γάρ τοι,” φησί, “μεθ' Ἔκτορα  
πότμος ἐτοῖμος” – ὁ δὲ τοῦτο  
ἀκούσας τοῦ μὲν θανάτου καὶ  
τοῦ κινδύνου ὠλιγόρησε, πολὺ  
δὲ μᾶλλον δεῖσας τὸ ζῆν κακὸς  
ὢν καὶ τοῖς φίλοις μὴ τιμωρεῖν,  
“Ἀντίκα,” φησί, “τεθναίνην, δί-  
κην ἐπιθείς τῷ ἀδικοῦντι, ἵνα μὴ  
ἐνθάδε μένω καταγέλαστος πα-  
ρὰ νηυσὶ κορωνίσιν ἄχθος ἄ-  
ροῦρης.”

էին<sup>1</sup>), այդ ժամանակ եղած չար  
մարդկանց համար Հնարավոր  
կլիներ Մենետիոսի որդուն<sup>2</sup>  
նախատել զենքերը ցած գցե-  
լու համար:

Մի՞թե վատ մարդիկ են ըստ  
քեզ կիսաստվածներից նրանք,  
ովքեր զոհվեցին Տրոյայում,  
այլոց թվում՝ նաև Թետրիսի  
որդին, ով այնքան ստորադա-  
սեց վիշտը (վտանգը) ամթա-  
լի մի բան հանձն առնելուն,  
որ երբ նրա աստվածուհի մայ-  
րը, քանի որ նա ցանկանում  
էր Հեկտորին սպանել, ասաց  
նրան. «Այսպես եմ ես կար-  
ծում, ո՛վ որդի, եթե վրեժ-  
խնդիր լինես քո ընկեր Պատ-  
րոկլոսի սպանության համար  
և սպանես Հեկտորին, դու էլ  
կմեռնես, քանզի, – ասում է, –  
Հեկտորից հետո անմիջապես  
կհետևի քո վախճանը»: Բայց  
նա, լսելով սա, արհամարհեց  
մահն ու վիշտը (վտանգը).  
չստ ավելի վախենալով ապրել  
ու վատը լինելուց և ընկերնե-  
րի համար վրեժխնդիր չլինե-  
լուց՝ ասաց. «Թող ես շուտով,  
– ասում է, – մեռնեմ՝ պատու-  
հաս բերելով անիրավի գլխին,  
որպեսզի ծիծաղելի չմնամ  
այստեղ, սնամեջ (կորածև)  
նավերի մոտ՝ իբրև բեռ հողի  
համար»:

### 139. Աքիլլեսը և Սկամանդրոս գետը

Աքիլլեսը տրոյացիներին դեպի Սկամանդրոս գետը քշեց և այնտեղ շատերին սպանեց: Գե-  
տը վարարած նրա կողմը նետվեց, սակայն Հեփեստոսը սաստիկ հրով չորացրեց գետի հոսանք-  
ները (Hom. *Il.* 21.1-384, Apollod. E4.7):

<sup>1</sup> Աքիլլեսի ծնողներ Պելևսի և Թետիսի հարսանիքը, որին աստվածները ներկա գտնվեցին, նկարագրել են Պինդա-  
րոսն ու Եվրիպիդեսը (Pind. *Pyth.* 3.86–95, Eur. *IA* 1036–1079): Քիրոնը Պելևսին նիզակ նվիրեց, իսկ Պոսեյդոնը՝  
անմահ ձիեր (Apollod. 3.13.5 [3.170]):

<sup>2</sup> Այսինքն՝ Պատրոկլոսին:

Եւ եկեալ հասանէր ի Փրիգա: Եւ մտեալ ի նոյն ինքն յիլիոն քաղաք՝ զոհել ետուր և Աքիլլեայ և այլոց դիւցազանց ... Եւ տեսեալ զՍկամանդրոս գետ, ընդ որ վազեաց Աքիլլեա, զի և հինգ կանգնող էր լայնութիւն, և զվահանն էանդեայ գլխաշեանն՝ և ոչ կարի մեծ և այնպես սքանչելի և զարմանալոյ արժանի, որպէս գրեաց Հոմերոս...

Καὶ παραγίνεται εἰς Φρυγίαν καὶ εἰσελθὼν εἰς αὐτὴν Ἰλιον τὴν πόλιν ἔθυσεν Ἐκτορι καὶ Ἀχιλλεΐ καὶ τοῖς ἄλλοις ἦρωσιν. Καὶ θεασάμενος τὸν Σκάμανδρον ποταμόν, εἰς ὃν ἦλατο Ἀχιλλεύς, ὅτι πέντε πήχεων οὐκ ἦν τὸ εὖρος, καὶ τὸ σάκος Αἴαντος τὸ ἑπταβόειον οὐ πάνυ μέγα οὐδὲ οὕτω θαυμαστὸν καθὼς συνέγραψεν Ὅμηρος...

Եվ [Աղեքսանդրոսը] եկավ-հասավ Փռյուգիա: Եվ, մտնելով բուն Իլիոն քաղաքը, հրամայեց զոհեր մատուցել (+ Հեկտորին ու) Աքիլլեսին և այլ հերոսների: Եվ տեսավ Սկամանդրոս գետը, որի մեջ վազել էր Աքիլլեսը, որ նրա լայնությունը հինգ կանգուն էր (չկար), և Այասի յոթնակաշյան վահանը<sup>1</sup>, որ այնքան մեծ ու սքանչելի և զարմանալի էր, ինչպես Հոմերոսն էր գրել...

Զաքարիա Գնունեցու կաֆա. Աղեքսանդրի պատմութիւն Ա 164.

Այս Հոմերոս Զմիւրացի / Ներշամբիդեա ծընունդ յայտնի, / Քերթաբանող քերականի, / Բացայայտող տրամիցս տառի, / Եւ յառենիցն սոս(կ) որդի, / Հոսմամբ առ հուպ գարշապարի, / Ոչ հիանան ընդ վազն յայտնի / Քաջազնաբար ափըն գետի:

Այս Զմյուռնիացի Հոմերոսը՝ հայտնի ծնունդը Ներշամբիդեսի<sup>2</sup>, քերթաբանող քերականը, տառերը/վանկերը բացահայտողը, սոսկ արյունով էր նրա որդին: Երբ [Աքիլլեսը] կրնկակոխ հետևում է, նա չի հիանում հայտնի քաջազունի՝ դեպի գետափ վազքով:

Մովսէս Խորենացի Գ 40 [308.16-18].

Այլ նորա հասեալ՝ վազեաց զԵփրատաւ առաւել քան զլակոնացին Քիոնեայ վազսն քսան և երկուց կանգնոց չափ: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլեա ընդ Սկամանդրոս գետ վազելով:

Իսկ նա (Շապուհը), հասնելով, ցատկեց Եփրատի վրայով, ավելի՛ քան լակոնացի Քիոնիսի<sup>3</sup> ցատկը քսաներկու կանգունի չափ: Եվ այնտեղ կարելի էր տեսնել մի նոր Աքիլլեսի՝ Սկամանդրոս գետի վրայով ցատկելիս:

Շնորհալի, Վիպասան. 579.

Նոր Աքիլլեա աստ երևեալ, / Ընդ Սկամանտրոս գետըն վազեալ / Եւ զՔիոնեաւ գերազանցեալ, / Երկու և քսան կանգուն քայլեալ:

Եվ այնտեղ կարելի էր տեսնել մի նոր Աքիլլեսի՝ Սկամանդրոս գետի վրայով ցատկելիս և գերազանցելով Քիոնիսին, որը քսաներկու կանգուն էր ցատկում:

<sup>1</sup> Hom. II. 7.220, 222, 245, 266, 11.545:

<sup>2</sup> Այս անհայտ անունը կարող է «Սեղամադոսի» աղավաղված ձև լինել, որի որդին են համարում Հոմերոսին Գրիգոր Մագիստրոսը (Քերակ. 225), Հովհաննես Երզնկացին (Քերակ. 4), Հովհաննես Ծործորեցին (Քերակ. 117) ու Եսայի Նչեցին (Քերակ. 58):

<sup>3</sup> Քիոնիսը սպարտացի էր, որը չորս անգամ անընդմեջ մրցավազքի հաղթող էր եղել Օլիմպիական խաղերում (Paus. 3.14.3, 3.23.4, 10, 6,13.2, 8.39.3): Հմնտ. Եստեփոս Ա, 286. «Քիոնիս Դակոնացի երրորդ ի ստադիոն, որոյ մի վազ էր ԻՔ. կանգուն»:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 94-95.

Ասի, թէ տիեզերակալն Աղէքսանդրոս զաւրեղն իմաստութեամբ և հանճարով, ընդ արիական մանկութեամբն եկեալ սա ի Փոիւզիայ ի քաղաքն Իլիոն և տեսանէ զՍկամանդրոս զետ, ընդ որ վազեաց Աքիլլեա, զի և ոչ հինգ կանգունն էր լայնութիւնն նորա և զվահանն նետեաց զԼթնակաշեանն ոչ կարի մեծ կամ սքանչացման և զարմանալոյ արժանի, որպէս գրեալ էր ի Հոմերոսէ մեծ և զարմանալի պատմութեամբ:

Ասում են, որ աշխարհակալ Ալեքսանդրոսը՝ իմաստութեամբ ու խելքով հզոր, քաջարի երիտասարդ, գալով Փոյուզիա, Իլիոն քաղաքը՝ տեսավ Սկամանդրոս զետը, որի մեջ վազել էր Աքիլլեսը, որ նրա լայնությունը անգամ հինգ կանգունն չկար, և նետեց Այասի յոթնակաշյան վահանը, որ այնքան մեծ ու սքանչելի և զարմանալի չէր, ինչպէս գրված էր Հոմերոսի մեծ ու զարմանալի պատմութեան մեջ:

Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 118.

Աղէքսանդրոս ... տեսեալ զՍկամանդրոս զետ, ընդ որ վազեաց Աքիլլեա և զվահանն նետեաց զԼթնակաշեանն, ոչինչ կարի սքանչացմանն արժանի, որպէս գրեալ էր Հոմերոսի սխրալի պատմութեամբ:

Ալեքսանդրոսը ... տեսավ Սկամանդրոս զետը, որի մեջ վազել էր Աքիլլեսը, նետեց յոթնակաշյան վահանը՝ ոչ այնքան սքանչելի ու զարմանալի, ինչպէս գրված էր Հոմերոսի հրաշալի պատմութեան մեջ:

#### 140. Հեկտորի սպանվելը

Աքիլլեսը մենամարտում սպանեց Պրիամոսի ավագ որդի Հեկտորին, նրա սրունքներն ամրացրեց կառքից ու մարմինը քարշ տվեց (Hom. II. 22.273-404, Apollod. E4.7):

Գիրք պիտոյից VIII [185.7-8].

Զի՞նչ արդեօք ասիցէ բանս յանկանել Հեքտովրի՝ Պրիամոս:

Ի՞նչ խոսքեր կասեր Պրիամոսը Հեկտորի մահվան առիթով:

Հմմտ. Aphth. 10.35.3-4.

τίνας ἄν εἴποι λόγους Ἐκάβη κειμένης τῆς Τροί-  
ας;

Ի՞նչ խոսքեր կասեր Հեկաբեն<sup>1</sup> Տրոյայի անկման առիթով:

#### 141. Աքիլլես և Թերսիտես

Աքիլլեսը սպանեց Թերսիտեսին, որը հանդիմանում էր իրեն (Apollod. E5.1, Hom. II. 2.211-221, հմմտ. նաև Արկտինոսի «Եթովպական»-ի՝ Պրոկլոսի ամփոփումը՝ Procl. Chrest. 178-180):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 165.

Եւ եկեալ առ նա ստեղծիչս բանից, ասեն. «Աղէքսանդրէ՛, լաւագոյն ևս մեզ գրեմք զքո գործսդ, քան զՀոմերոս»: Ասաց Աղեքսանդրոս. «Ըղձալի էր ինձ ի Հոմերոսն պատմու-

նրա [Ալեքսանդրոսի] մոտ բանաստեղծներ եկան և ասացին. «Ալեքսանդրո՛ս, քո գործերի մասին ավելի լավ կգրենք, քան Հոմերոսը»: Ալեքսանդրոսն ասաց. «Կցանկանայի Հոմերոսի

<sup>1</sup> Հեկաբեն Տրոյայի արքա Պրիամոսի կինն էր:

Թիւն Թերսիտէս գոլ, քան զի քուսդ՝ Ա-  
քիլլեւ»:

Հմմտ. Alex. α 1.42.13.

պատմութեան մեջ Թերսիտեսը լինել, քան քո-  
սի մեջ՝ Աքիլլեսը»:

Καὶ προσελθὼν αὐτῷ ποιητῆς τις εἶπεν Ἀ-  
λέξανδρε, κρεῖττονα ἡμεῖς γράψομεν Ὀμήρου. Ὁ  
δὲ Ἀλέξανδρος εἶπεν· “Βούλομαι παρ’ Ὀμήρῳ  
Θερσίτης εἶναι ἢ παρὰ σοὶ Ἀχιλλεύς”.

Հմմտ. Alex. β 1.42.29-31.

Նրա մոտ մի բանաստեղծ եկավ ու ասաց. «Ա-  
լեքսանդրոս, մենք ավելի լավ կգրենք, քան  
Հոմերոսը»: Ալեքսանդրոսն ասաց. «Ցանկա-  
նում եմ Հոմերոսի մոտ Թերսիտեսը լինել,  
քան քեզ մոտ՝ Աքիլլեսը»:

Καὶ προσελθὼν αὐτῷ ποιητῆς τις εἶπεν Ἀλέξ-  
ανδρε βασιλεῦ, κρεῖττον ἡμεῖς γράψομεν τὰς σὰς  
πράξεις Ὀμήρου. Ὁ δὲ Ἀλέξανδρος εἶπεν·  
“Βούλομαι παρ’ Ὀμήρῳ Θερσίτης εἶναι ἢ παρὰ  
σοὶ Ἀγαμέμνων”.

Նրա մոտ մի բանաստեղծ եկավ ու ասաց. «Ա-  
լեքսանդրոս արքա, քո գործերի մասին մենք  
ավելի լավ կգրենք, քան Հոմերոսը»: Ալեք-  
սանդրոսն ասաց. «Ցանկանում եմ Հոմերոսի  
մոտ Թերսիտեսը լինել, քան քեզ մոտ՝ Ագա-  
մեմնոնը»:

Թեոն 116 = Theon. 118.12-14.

... գյաղաքս Թերսիտեայն. լե-  
պեշտի էր և սրագլուխ և կաղ  
ի միռջէ ոտանէ:

... τὰ περὶ τοῦ Θερσίτου, φοξὸς  
ἔην κεφαλὴν, χολὸς δ’ ἕτερον  
πόδα.

... այն, որ Թեսիտեսի մասին է՝  
լկտի էր և սրագլուխ և մի ոտ-  
քից կաղ:

Թեոն 138 = Theon 112.28.

Ո՞ր ոք արուորագոյն է՝ Աքիլ-  
լլես կամ Թերսիտէս:

πότερον ἀνδρείοτερος Ἀχιλλεύς  
ἢ Θερσίτης.

Ո՞վ է ավելի քաջ՝ Աքիլլեոսը,  
թե՞ Թերսիտեսը:

Մովսէս Խորենացի Գ 19 [278.13-17].

Արշակ ... անձնահաճ եղեալ, պարծելով Հանա-  
պաղ ի գինարբուս և յերգս վարձակաց. քաջ և  
արի երեւալ քան զԱքիլլես, իսկ արդեամբք  
Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ:

Արշակը ... ինքնահաճական դառնալով՝ մշտապես  
պարծենում էր Հարճերի երգերով ուղեկցվող  
գինարբուքներում՝ իբր Աքիլլեսից ավելի քաջ  
է, իսկ իրականում նման էր կաղ ու սրագլուխ  
Թերսիտեսին:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.10 [202] = PG 35.705.7.

Թերսիտէս Ողոմպացին:

Θερσίτης Ὀλύμπιος.

Օղիմպիացի Թերսիտեսը:

Նոննոս 4.21 [72] = Nonnos 5.21.8-16.

Եւ Թերսիտէս ովղիմպեան կո-  
չի վասն այսպիսուոյ պատճա-  
ռի. Հոմերոս ի ներքս մուծանէ  
գայր ոմն Թերսիտէս, որ էր  
կաղ, և խեղ աջաւք, կորովի և

Θερσίτην δὲ αὐτὸν Ὀλύμπιον  
καλεῖ διὰ τοιαύτην αἰτίαν· ὁ Ὀ-  
μηρος εἰσφέρει τινὰ ἄνθρωπον,  
Θερσίτην ὀνόματι, χολὸν καὶ  
στραβὸν καὶ κυρτὸν καὶ μαδα-

Եվ նրան [Հեփեստոսին] կո-  
չում է օղիմպիական Թերսի-  
տես Հեսուլյալ պատճառով. Հո-  
մերոսը մեջտեղ է բերում ոմն  
այր Թերսիտեսի, որը կաղ էր



լեպեշտի, լերկ և սրագլուխ, և յառաջախաւս. և ասէ զհետ շրջել բանակին ոչ վասն պատերազմի, այլ վասն ծաղու: Արդ՝ քանզի Հեփեսոսս կաղ էր և ի ծուխ թաթաւեալ, ասէ զնմանէ, թէ որպէս զԹերսիտէս էր աստուածն ձեր: Այլ ովղիմպեան ասեն զնա որպէս երկնային: Արդ, Թերսիտէս ովղիմպեան, կաղ և յառաջախաւս աստուածն ձեր:

ρὸν καὶ προπετιῆ. καὶ φησιν ὅτι οὗτος ἠκολούθει τῷ στρατοπέδῳ, οὐ διὰ τὸ πολεμεῖν ἀλλὰ διὰ τὸ γελαῖσθαι. ἐπεὶ οὖν ὁ Ἥφαιστος χολὸς ἦν καὶ κεκαπνισμένος, λέγει αὐτὸν ὅτι ὡς Θερσίτης ἦν ὁ Ἥφαιστος ὑμῶν. Ὀλύμπιον δὲ αὐτὸν εἶπεν, οἶονεὶ οὐράνιον. Ὀλυμπος γὰρ ὁ οὐρανός. Θερσίτης οὖν Ὀλύμπιος καὶ χολὸς καὶ προπετιῆς ὑμῶν θεός.

ու խեղաչ, նենգամիտ ու լկտի<sup>1</sup> (կուզիկ), ճաղատ ու սրագլուխ (չ/ք) և անզուսպ: Եվ, ասում է, հետևում էր բանակին ոչ թե կովելու, այլ ծաղրելու համար: Ուստի, քանի որ Հեփեսոսը կաղ էր և ծխաթաթալ, նրա մասին ասում է, թե՛ ձեր աստվածը (Հեփեսոսը) Թերսիտեսի նման էր: Իսկ նրան օլիմպիական են կոչում, այսինքն՝ երկնային (+ քանի որ Օլիմպոսը երկինքն է): Ուրեմն ձեր աստվածն օլիմպիական Թերսիտեսն է՝ կաղ և անզուսպ:

#### Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 95.

Եկեալ առ նա ստեղծիչս բանի՝ ասէ. «Աղէքսանդրէ՛, լաւագոյն ես մեզ գրեմք զքո գործսդ քան զՀոմերոս»: Ասաց Աղէքսանդրոս. «Ըղձալի է ինձ ի Հոմերոսի պատմութեան Թերսիտէս գոլ, քան ի քումդ Աքիլլէս»:

Նրա (Ալեքսանդրոսի) մոտ մի բանաստեղծ եկավ ու ասաց. «Ալեքսանդրոս, քո գործերի մասին ավելի լավ կգրենք, քան Հոմերոսը»: Ալեքսանդրոսն ասաց. «Կցանկանայի Հոմերոսի պատմութեան մեջ Թերսիտեսը լինել, քան քոնի մեջ՝ Աքիլլէսը»:

#### Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 118.

Առ որս եկեալ բանաստեղծք ասէին. «Ո՛վ Աղէքսանդր, լաւագոյն գրեմք զքո գործսդ, քան զՀոմերոս»: Որոց պատասխանեաց. «Ըղձալի է ինձ ի Հոմերոսի պատմութիւն Թերսիտէս գոլ, քան ի ձերդ՝ Աքիլլէս»:

Որի [Ալեքսանդրոսի] մոտ բանաստեղծներ եկան ու ասացին. «Ո՛վ Ալեքսանդրոս, քո գործերի մասին ավելի լավ կգրենք, քան Հոմերոսը»: Որոնց նա պատասխանեց. «Կցանկանայի Հոմերոսի պատմութեան մեջ Թերսիտեսը լինել, քան ձերի մեջ՝ Աքիլլէսը»:

### 142. Մեմնոնը Տրոյայի պաշտպան. Չարմայր

Աքիլլէսը սպանեց Տիթոնոսի<sup>2</sup> որդի Մեմնոնին, որը եթովպացիների մեծ գործով եկել էր Տրոյա հույների դեմ (Apollod. E5.3): Մեմնոնի սխարանքները նկարագրել է Դիկտիս Կրետացին (Dict. Cret. 4.6)<sup>3</sup>, իսկ Պավսանիսը հիշատակել է Մեմնոնի ու Աքիլլէսի կռիվի՝ իր ժամանակ հայտնի պատկերները (Paus. 3.18.12, 5.19.1): Ըստ Մովսես Խորենացու՝ տրոյացիներին եթովպացիների հետ դաշնակցել է նաև «մեր Չարմայրը». նրան հետևել են մի շարք հետագա հայ հեղինակներ:

<sup>1</sup> «Կորովի» բառի այս իմաստը ՆԲՀԼ-ում հիմնված է միայն Նոմնոսից մեջբերված հատվածի վրա: «Լեպեշտի»-ի դիմաց հունարենում բառ չկա. գուցե «կորովի և լեպեշտի»՝ մեկ բառը երկու հոմանիշով թարգմանելու դեպք է:  
<sup>2</sup> Տիթոնոսը Տրոյայի արքա Պրիամոսի եղբայրն էր (Hom. II. 20.237, Apollod. 3.12.3 [3.146]):  
<sup>3</sup> «Տրոյական պատերազմի օրագրում», որը պահպանվել է Լուկիոս Սեպտիմիոսի լատիներեն թարգմանությամբ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 134.

Մեմնոն և ամոզոնք՝ Պրիամայ կոռակիցք եղեն:

Հմմտ. Sync. 181.19.

Μέμνων, ὃς συνεμάχησε τῷ Πριάμῳ.

Sync. 201.18.

Ἀμαζόνες Πριάμῳ συνεμάχησαν.

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 132.

Տաւտամէս ամս ԼԱ. առ որով Իդիոն առաւ:

Հմմտ. Sync. 176.26-27.

Ἀσσυρίων κζ' ἐβασίλευσε Τεῦταμος, ὁ καὶ Ταυτάνης παρά τισι λεγόμενος, ἔτη λβ'. ἐπὶ τούτου Ἴλιον Εὐσέβιος φησιν ἄλδῶναι.

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 96-97.

Ագամեմնոն և Մենեղոս միկենացիք զաւրաժողով լինէին Հանդերձ արգիացւոյք ի վերայ Իդիոն քաղաքի՝ ի զաւրավարութեան Պրիամու փոխապետոց: Չաւրք յունաց ասէ եկին Հասին ի վերայ իմ յաշխարհս քո. և ի դիմի Հարաք պատերազմաւ. երբեմն յաղթեմք, երբեմն յաղթիմք: Իսկ այժմ աւասիկ և որդին իմ Եկտովր մեռաւ, և այլոց որդւոց բազումք և քաջք: Եւ արդ առաքեա մեզ զաւրս, որ եկեսցեն յաւանականութիւն, և զաւրավար զոք քաջ: Ապա ասէ մի ըստ միողէ, թէ զիարդ Տեւտամոս զաւրավիգն աւանականութեան յղէ նմա, և զաւրավար զաւրացն զՄեմնոն զորդին Տիթոնեայ, որում նենգ գործեալ սպանին թետաղացիք:

Հմմտ. Sync. 196.21-23.

Ἀγαμέμνων δὲ καὶ Μενέλαος οἱ Μυκηναῖοι ἐστρατεύσαντο σὺν Ἀργεῖοισι καὶ τοῖσι ἄλλοισιν Ἀχαιοῖς εἰς Ἴλιον πόλιν τῆς Πριάμου τοῦ Φρυγῶς στρατηγίης.

218

Մեմնոնն ու ամազոնները Պրիամոսին կռվում դաշնակցեցին:

Մեմնոն, որ Պրիամոսին կռվում դաշնակցեց:

Ամազոնները Պրիամոսին կռվում դաշնակցեցին:

Տեւտամոսի թագավորութեան երեսունմեկերորդ տարին էր. նրա օրոք առնվեց Իլիոնը:

Ասորեստանցիներին քսանյոթերորդը թագավորեց Տեւտամոսը, որին ոմանք կոչվում են նաև Տավտանես, երեսուներկու տարի. Եվսեբիոսն ասում է, որ նրա օրոք առնվեց Իլիոնը:

Միկենացի Ագամեմնոնն ու Մենեղոսը Հուլյաների Հետ արշավեցին Իլիոն քաղաքի դեմ, երբ նրա զորավարը փոխապետի Պրիամոսն էր: Ասում է. «Հունական զորքերն իմ դեմ են եկել քո երկրում: Պատերազմի ենք բռնվել. երբեմն Հաղթում ենք, երբեմն՝ պարտվում: Այժմ ահա իմ որդի Հեկտորը սպանվել է, նաև՝ ուրիշների որդիներից շատ քաջեր: Արդ, գորք ուղարկիր մեզ, թող օգնութեան գան, նաև՝ մի քաջ զորավարի»: Ապա մեկ-մեկ ասում է, թե ինչու է Տեւտամոսն օգնութեան ուղարկում նրան, նաև՝ Տիթոնոսի որդի Մեմնոնին իբրև զորքի զորավար, որին թետաղացիները նենգաբար սպանեցին:

Միկենացի Ագամեմնոնն ու Մենեղոսը Հուլյաների և մյուս աքեացիների Հետ արշավեցին Իլիոն քաղաքի դեմ, երբ նրա զորավարը փոխապետի Պրիամոսն էր:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա, 87-88.

Ի թագաւորել Տաւտանայ ասիացոց աշխարհին, որ էր քսաներորդ վեցերորդ ի Նինեայ Շամիրամանց, ասեն՝ թէ ընդ տրովացոց տալ ճակատս, մինչդեռ զպետութիւնն ասիացոց ասորեստանեայքն ունէին աւելի քան զհազարամեայ ժամանակս: Պրիամոս թագաւոր տրովացոց ծանրացեալ նեղեալ ի պատերազմաց՝ ձեռս տայր յարքայն ասորեստանեաց, աղաւթակեարս արձակէր՝ առաքել նմա թիկունս աւգնականութեան: Եւ նա տայր նմա բիւր զաւր յեթևովացոց աշխարհէն, և այլ ևս նոյնչափ նուսիանս, հանդերձ երկերիւր կառաք. և զաւրավար յղէր զՄէմնոն Տիթոնեայ: Եւ ... թէ զՄէմնոնեայ զայսպիսի ինչ արութիւնս յարքունի մատեանսն պատմեալ ասեն բարբարոսք:

Հմմտ. Sync. 194.31-195.3.

Ταυτάνου γὰρ βασιλεύοντος τῆς Ἀσίας, ὃς ἦν κς' ἀπὸ Νίνου τοῦ Σεμράμιδος, φασι τοὺς μετὰ Ἁγαμέμνονος Ἑλλήνας ἐπὶ Τροίαν στρατεῦσαι τὴν ἡγεμονίαν ἐχόντων τῆς Ἀσίας Ἀσσυρίων ἔτη πλείω τῶν χιλίων.

Sync. 181.18-181.20.

Βάβιος οὗτός ἐστιν ὁ παρ' Ἑλλησι Τιθωνὸς λεγόμενος Ἀσσυρίων λβ' βασιλεύς. τούτου παῖς Μέμων, ὃς συνεμάχησε τῷ Πριάμῳ κατὰ τῶν Ἑλλήνων καὶ διεφθάρη ὑπὸ Ἀχιλλέως.

Diod. Sic. 2.22.2.6-3.1.

καθάπερ φησὶ Κτησίας ὁ Κνίδιος ἐν τῇ δευτέρᾳ βίβλῳ, καὶ τὸν μὲν Πριάμον βαρυνόμενον τῷ πολέμῳ καὶ βασιλεύοντα τῆς Τρωάδος ὑπήκοον δ' ὄντα τῷ βασιλεῖ τῶν Ἀσσυρίων, πέμψαι πρὸς αὐτὸν πρεσβευτὰς περὶ βοθηθείας· τὸν δὲ Τεῦταμον μυρίους μὲν Αἰθίοπας, ἄλλους δὲ τοσοῦτους Σουσιανούς· σὺν ἄρμασι διακοσίοις ἐξαποστεῖλαι, στρατηγὸν ἐπικαταστήσαντα Μέμωνα τὸν Τιθωνοῦ.

Երբ Ասիային թագավորեց Տավտանեսը, որը Շամիրամի Նինոսից հետո քսանվեցերորդն էր, ասում են՝ տրոյացիների դեմ ճակատամարտ եղավ, մինչդեռ Ասիայում հազար տարուց ավելի իշխում էին ասորեստանցիները: Տրոյացիների Պրիամոս թագավորը, պատերազմներից ճնշված ու նեղսրտած, դիմեց ասորեստանցիների արքային. խնդրարկուններ առաքեց, որ իրեն օգնություն ուղարկի: Եվ նա նրան բյուրավոր զորք տվեց եթովպացիների երկրից, նույն թվով՝ նուսիացիների (չոչեցիների)՝ երկու հարյուր կառքով: Եվ Տիթոնոսի որդի Մեմնոնին զորավար ուղարկեց: Եվ ... բարբարոսներն ասում են, որ Մեմնոնի մասին այսպիսի քաջագործություններ են պատմում արքունի գրքերում:

Երբ Ասիային թագավորեց Տավտանեսը, որը Շամիրամի Նինոսից հետո քսանվեցերորդն էր, ասում են, Ագամեմնոնի հետ եղած հույներն արշավեցին Տրոյայի դեմ, մինչդեռ Ասիայում հազար տարուց ավելի իշխում էին ասորեստանցիները:

Այս Բաբիոսը հույներից Տիթոնոս կոչեցյալն է՝ ասորեստանցիների երեսուներկուերորդ թագավորը. նրա որդին Մեմնոնն էր, որը կռվում դաշնակցեց Պրիամոսին հույների դեմ և սպանվեց Աքիլլեսի ձեռքով:

Ինչպես Կտեսիոս Կնիդացին է ասում երկրորդ գրքում, Տրոադայում թագավորող և ասորեստանցիների արքային ենթակա Պրիամոսը, պատերազմներից ճնշված, պատվիրակներ առաքեց նրա մոտ՝ օգնության խնդրանքով: Եվ Տևտամեսը նրան բյուրավոր եթովպացիներ ուղարկեց, նույն թվով՝ չոչեցիներ՝ երկու հարյուր կառքով, զորավար նշանակելով Տիթոնոսի որդի Մեմնոնին:

... այնոքիկ որ առ Ելլիոն բնակեալ էին յայնժամ վստահանալով յասորեստանեայցն զաւրութիւն յայնմիկ իրի որ առ Նինոս եղև՝ յանդգնելով զպատերազմն յարուցին ի վերայ Տրովադայ. քանզի տակաւին ոչ ինչ փոքր մնացեալ ձևն իշխանութեանն այնմիկ. որպէս յոյժ ի մեծագոյն թագաւորէն երկնչիմք մեք, և յայնժամ յայնմանէ՝ որ ի միասին Հաստատեալ էր շարադասութիւնն զաւրացն՝ երկնչէին որ յայնժամ էին. քանզի մեծ ամբաստանութիւն առ սոսալինէր երկրորդ աւարտումն Տրովադայ, քանզի մանր մասն է նոցունց իշխանութիւնն:

... οἱ περὶ τὸ Ἴλιον οἰκοῦντες τότε, πιστεύοντες τῇ τῶν Ἀσσυρίων δυνάμει τῇ περὶ Νῆνον γενομένη, θρασυνομένοι τὸν πόλεμον ἤγειραν τὸν ἐπὶ Τροίαν. ἦν γὰρ ἔτι τὸ τῆς ἀρχῆς ἐκείνης σχῆμα τὸ σφῶζόμενον οὐ μικρόν. Καθάπερ νῦν τὸν μέγαν βασιλέα φοβούμεθα ἡμεῖς, καὶ τότε ἐκείνην τὴν συσταθεῖσαν σύνταξιν ἐδέδισαν οἱ τότε. μέγα γὰρ ἔγκλημα πρὸς αὐτοὺς ἢ τῆς Τροίας ἄλωσις τὸ δεύτερον ἐγγόνει. τῆς ἀρχῆς γὰρ τῆς ἐκείνων ἦν μόριον.

... Իլիոնի մոտ այն ժամանակ բնակվողներն ապավինեցին ասորեստանցիների հզորությանը. դա Նինոսի օրոք էր, երբ հանդգնությամբ պատերազմ էին հարուցել Տրոադայի դեմ: Քանզի տակավին գոյություն ունեցող իշխանության այդ ձևն աննշան չէր: Ինչպես մեծ թագավորից մենք ենք վախենում, այն ժամանակ էլ մարդիկ վախենում էին նրանից, ով միավորված զորք ուներ: Տրոյայի երկրորդ առումը սրանց<sup>1</sup> դեմ մեծ ամբաստանության առիթ եղավ, քանզի այն նրանց<sup>2</sup> տերության մասնիկն է:

Թովմա Արծրունի Դ [78].

Տաւտանէս ամս ԼԱ. ի սորա ԻԵ. ամին առաւ Ելիոն քաղաք յաթենացոց անտի:

Տավտանեսը՝ երեսունմեկ տարի. սրա քսանհինգերորդ տարում աթենացիները զրավեցին Իլիոնը:

Ասողիկ Ա Դ [653].

Ասորեստանեայց ... Տևտամոս՝ ամս 51: Առ սովալ Իլիոն քաղաք առաւ:

Ասորեստանցիներին ... Տևտամոսը՝ Հիսունմեկ տարի: Սրա օրոք առնվեց Իլիոն քաղաքը:

Միխայէլ Ասորի Ա 56.

Թագաւորէ Աթուրացոցն Տուտլոս ամս երեսուն և մի. Յոյնք Ամս Տիտոնիս (Տիթոլուն, Տիթոլունիս, Տիթոնիոս) ասեն. և ոմանք ասեն թէ սա էառ զԻլիոն քաղաք և աւերեաց: Ի սորա վեշտասան ամին թագաւորեաց Աթենացոցն Մենթոս (Մենեսթէ) ամս քսան և երիս:

Աթուրացիներին (ասորեստանցիներին) թագավորեց Տուտլոսը՝ երեսունմեկ տարի. հույները սրան ասում են Տիթոնոս. և ոմանք ասում են, թե նա զրավեց Իլիոն քաղաքն ու ավերեց: Սրա տասնվեցերորդ տարում աթենացիներին թագավորեց Մենեսթեսը՝ քսաներեք տարի:

Միխայէլ Ասորի Բ 37.

Թագաւորեաց Աթուրացոց Տուտլոս ամս երեսուն և մի. Յոյնք սմա Տիթունիս ասեն. և ո-

Աթուրացիներին (ասորեստանցիներին) թագավորեց Տուտլոսը՝ երեսունմեկ տարի. հույները

<sup>1</sup> Հույների. Տրոյան առաջին անգամ գրավել էր Հերակլեսը (տե՛ս դրվագ 11, ծ. 16):  
<sup>2</sup> Ասորեստանցիների:

մանք ասեն թէ սա էառ զԻլիոն քաղաք և ակերեաց: Ի սորա վեչտասաներորդ ամին թագաւորեաց Աթենացւոցն Մոսթոս (Մենթիոս, Մենթոս) ամս քսան և երիս... և զերաժիշտ Փիլիմոն (Ա Փիլիոն) աստ ասեն, որ արար դասս երաժշտաց:

Մովսէս Խորենացի Ա 19 [62-63].

Զարմայր: Սա օգնական Պոլիամոս է Տևտամայ առաքեալ ընդ եթովպացի զաւրուն՝ մեռանի է քաջացն Հելլենացւոց:

Մովսէս Խորենացի Ա 32 [88].

Թէ Եղիական պատերազմն առ Տևտամա Ասորեստանեայց: Եւ մեր Զարմայր է ծառայութեան Ասորեստանեայց սակաւուք ընդ եթովպացի զաւրուն աւգնական Պոլիամոս, և անդ է քաջացն Հելլենացւոց վիրաւորեալ մեռանի. այլ կամիմ յԱքիլեայ, և մի յայլմէ ումեք է քաջացն:

Մովսէս Կաղանկատուացի Ա ԺԵ [75].

Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արամանեակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ առ սովաւ Աբրահամ, Արայն Գեղեցիկ առ սովաւ Իսահակ, Անուշաւան, Պարէտ, Արբակ, Ջաւան, Փառնակ, Սուր առ սովաւ Յեսու, Հաւնակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ, Առնակ, Շավարշ, Նորայր, Վստամկար, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Դղակ, Հաւրոյ, Զարմայր...

Յովհաննէս Դրասխ. Բ [367].

Զարմայր (որ Եղիական պատերազմին ընդ եթովպացի զաւրուն մեռանի):

Գրիգոր Մագիստրոս 24 (ԺԹ).29.

Ո՞ւր Զարմայր՝ զարհուրելի զաւրութեամբ, է Հելլենացւոց մեռանի:

Սամուէլ Անեցի 44.

Տաւտանէս ամս ԼԱ.: Ի ԻՆ. ամին Տաւտանեա Ելիոն քաղաք առաւ:

սրան ասում են Տիթոնոս. և ոմանք ասում են, թե նա զրավեց ու ավերեց Իլիոն քաղաքը: Սրա տասնվեցերորդ տարում ավենացիներին թագավորեց Մենեսթևսը՝ քսաներեք տարի: Եվ ասում են, որ այդ ժամանակ Փիլիմոն երաժիշտը ստեղծեց երաժիշտների դասը:

Զարմայր. սա՞ Տևտամոսից Պոլիամոսին օգնական ուղարկվեց եթովպական զորքի հետ և սպանվեց հույն քաջերի ձեռքով:

[Այն մասին,] որ Իլիական պատերազմն ասորեստանցիների Տևտամոս թագավորի ժամանակ էր: Եվ մեր Զարմայրը, որ ասորեստանցիների հպատակ էր, քիչ մարդկանցով եթովպական զորքի հետ օգնական է եղել Պոլիամոսին և այնտեղ Հելլենացի քաջերից վիրավորվելով մեռել, բայց կկամենայի՝ Աքիլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից:

Հաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արամանյակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ՝ սրա օրոք Աբրահամն էր, Արա Գեղեցիկ՝ սրա օրոք Իսահակն էր, Անուշավան, Պարետ, Արբակ, Ջավան, Փառնակ, Սուր՝ սրա օրոք Հեսուն էր, Հավնակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ, Առնակ, Շավարշ, Նորայր, Վստամկար, Գոռակ, Հրանտ, Ընձակ, Դղակ, Հորո, Զարմայր...

Զարմայր, որ Իլիական պատերազմում եթովպական զորքի մեջ սպանվեց:

Որտե՞ղ է Զարմայրը՝ զարհուրելի զորությամբ, որ սպանվում է Հելլենացիներից:

Տավտանեսը՝ երեսունմեկ տարի: Տավտանեսի քսանհինգերորդ տարում Իլիոն քաղաքն առնվեց:

Սամուէլ Անեցի 58.

Զարմայր. սա ազնական Պռիամու է Տաւտա- նայ առաքեալ ընդ եթեովպացի զաւրացն, և մեռանի ի քաջացն Ելլենացւոց:

Զարմայր. սա Պռիամուսի օգնականն էր՝ ուղարկված եթովպական զորքի հետ, և սպանվեց հուլյն քաջերի ձեռքով:

Մխիթար Անեցի 66.

(Դասակարգութիւն Յաբեթի՝ նախնոյն և արմատոյն հայոց. ա. Յաբեթ, բ. Գամեր...) լա. Հաւրայ, լբ. Զարմայր...

(Հաբեթի՝ հայոց նախնու և արմատի սերունդները շարքը՝ 1. Հաբեթ, 2. Գամեր...) 31. Հորա, 32. Զարմայր...

Վարդան, Հաւաքումն է [15].

Զարմայր, որ յԻլիական պատերազմին ընդ Եթովպացւոց զաւրուն մեռանի:

Զարմայր, որ Իլիական պատերազմում եթովպական զորքի հետ սպանվեց:

Մխիթար Այրիվանեցի 15.

(Իշխանք հայոց. Յաբեթ, Գամեր...) Հորայ, Զարմայր:

(Հայոց իշխաններ. Հաբեթ, Գամեր...) Հորա, Զարմայր:

Ներսէս Պալիանեց 199.

Զարմայր. սայ օգնական Պռիամու և Տաւտա- նայ, առաքեալ ընդ եթովպացի զօրացն և մեռանի ի քաջացն Ելլենացւոց, Դրօացիք են կարծեմ:

Զարմայր. սա Պռիամուսի և Տավտանեսի օգնականն էր՝ ուղարկված եթովպական զորքի հետ, և սպանվեց հուլյն քաջերի ձեռքով. կարծեմ տրոյացիներ (Ը) են:

Մինաս Համդեցի (1698) 9-10.

Զարմայր: Սա օգնական լեալ Բռիամու թագաւորին Տրօայու, որ յետոյ էսկի-Ըստամպօլ կոչեցաւ, և ի պատերազմի Հելլենացւոց, զոր Հոմերոս պատմատաղեաց, անկեալ մեռաւ Զարմայր:

Զարմայր: Սա օգնականն էր Պռիամուսի՝ Տրոյայի թագավորի, որը հետագայում կոչվեց էսկի-Ստամբուլ<sup>1</sup>. և հուլյների հետ պատերազմում, որի մասին Հոմերոսը պատմել է էպոսում, Զարմայրը սպանվեց:

### 143. Տրոյայի առումը. Պոլիքսեն

Հույները Տրոյան այրեցին ու շատերին կոտորեցին: Ըստ Եվրիպիդեսի (Eur. Hec. 37–41)՝ Աքիլլեսի ուրվականը հայտնվեց նրա գերեզմանի վրա և պահանջեց Պրիամուսի և Հեկաբեի դուստր Պոլիքսենին իրեն գոհաբերել: Նրա որդի Պյուռոս-Նեոպտոլեմոսն ի կատար ածեց ուրվականի հրամանը՝ խոլխոլելով Պոլիքսենին (Procl. Chrest. 274, Apollod. E5.23, Paus. 1.22.6):

Գրիգոր Նազ., ճառ 4.70.8-9 [74] = PG 35.592.8.

Որ ի Տրւայ զոհն՝ թագաւորական աղջիկն:

Τὴν ἐπὶ Τροίας θυσίαν βασιλικῆς κόρης.

Տրոյայի մոտ թագավորական աղջկա զոհաբերումը:

<sup>1</sup> Այսինքն՝ «հին Ստամբուլ» (թուրքերեն):

Նոննոս 3.8 [29] = Nonnos 4.8.1-7.

Պաուլիքսենէսս այս էր դուստր Պրիամոսի, գոր Աքիլլէս կամեցեալ կին առնուլ՝ եմուս ի Տրովադա, և ըստ նենգութեան իմն նետիւ հարեալ առ ի Պարիսէ՝ մեռանի առ տաճարան Ապոլլոնի: Արդ՝ յետ ժամանակի արիացեալ Պիւռոս որդի նորա՝ ետես յանուրջս գհայրն իւր, զի խնդրէր գոհել նմա զՊաուլիքսենէսս, վասն որոյ կորուսեալն եղև: Եւ Պիւռոս գոլով ի Տրովադա և յետ յաղթութեանն առեալ զնա՝ զենու ի վերայ շիրմի Աքիլլէայ՝ հար իւրոյ:

Πολυξένη ἐστὶ θυγάτηρ Πριάμου, ἣν ὁ Ἀχιλλεὺς βουληθεὶς γῆμαι, εἰσῆλθεν ἐν τῇ Τροίᾳ, καὶ κατὰ λόχον τινὰ τοξέυεται ὑπὸ Πάριδος ἐν τῷ ναῷ τοῦ Ἀπόλλωνος, καὶ θνήσκει. ἐν ὑστέρῳ οὖν χρόνῳ ἀνδρωθέντι Πύρρῳ τῷ υἱῷ αὐτοῦ ἐφάνη κατ' ὄναρ δεῖν αὐτῷ τυθῆναι τὴν Πολυξένην, δι' ἣν ἀπώλετο. καὶ ὁ Πύρρος, ὢν ἐν Τροίᾳ, καὶ ταύτην μετὰ τὴν νίκην λαβὼν, σφάττει ἐπὶ τῷ ταφῷ τοῦ Ἀχιλλέως, τοῦ οἰκείου πατρός.

Պուլիքսենէսս Պրիամոսի դուստրն էր (է), որին Աքիլլէսը, ցանկանալով կնության առնել, մտավ Տրոյա և ինչ-որ նենգությամբ (դարանից), Պարիսից նետահարվելով, մեռավ Ապոլլոնի տաճարի մոտ: Հետագայում, երբ նրա որդի Պյուռոսը տղամարդ դարձավ, երազում իր հորը տեսավ, որը խնդրում էր իր հիշատակին գոհել Պուլիքսենէսին, ում պատճառով գոհ գնաց: Եվ Պյուռոսը, Տրոյայում գտնվելով ու հաղթանակից հետո նրան բռնելով, խողխողեց իր հոր՝ Աքիլլէսի գերեզմանի վրա:

Անանիա Նարեկացի, Ներբողեան 640.

Որ ի Տրովադայ տաճարին, յորում ձաւնեալն ի գոհ թագաւորական աղջիկն:

Տրոպայի տաճարում, որտեղ գոհ մատուցվեց թագավորական աղջիկը:

144. Օրեստեսի քազավորելը Միկենեում և Պյուռոսի սպանութունը

Երբ Ագամեմնոնը Տրոյայից Միկենե վերադարձավ, կինը՝ Կլիտեմնեստրան, իր սիրեկան Էգիսթոսի հետ սպանեց նրան (Apollod. E6.23): Օրեստեսը մեծացավ ու հոր համար վրեժ լուծեց՝ սպանելով մորն ու Էգիսթոսին, և քազավորեց Միկենեում (Apollod. E6.25-28): Երբ Օրեստեսը մորը սպանելու պատճառով խելագարվեց, Պյուռոս-Նեոպտոլեմոսն առևանգեց նրա կնոջը՝ Հերմիոնին, որն իր հետ նշանվել էր Տրոյայում: Դրա համար Օրեստեսը սպանեց նրան Դելփիում: Ոմանք էլ ասում են, թե Պյուռոսը Դելփի էր գնացել՝ իր հոր համար Ապոլլոնից հատուցում պահանջելու և քալանել էր ընծաներն ու տաճարը հրկիզել, ինչի համար սպանվեց Մաքերևսի ձեռքով (Apollod. E6.14):

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 136.

Միկէնից թագաւորեաց Ովրեստէս յետ Էգիսթոսի:

Էգիսթոսից հետո Միկենեին թագավորեց Օրեստեսը:

Հմմտ. Sync. 199.27-200.1.

Μυκηθῶν Ἀργείων ἠ΄ ἐβασίλευσεν Αἴγισθος ἔτη ε΄... Μυκηθῶν Ἀργείων ἰθ' ἐβασίλευσεν Ὀρέστης ἔτη κγ΄.

Արգոսյան Միկենեին քսանութերորդը թագավորեց Էգիսթոսը՝ հինգ տարի ... Արգոսյան Միկենեին քսանիներորդը թագավորեց Օրեստեսը՝ քսաներեք տարի:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 136 = Sync. 200.3-5.

Պրուսա յՈվրեստեայ յԱդրիս սպանանի յԱպողոնի մեհե- նին, մատնեալ ի Քերէ քրմէ:	Օρέստիς Πύρρον τὸν Ἀχιλλέως ἀναιρεῖ ἐν Δελφοῖς εἰς τὸ τοῦ Ἀπόλλωνος ἱερὸν προδοθέντα ὑπὸ Μαχαιρέως τοῦ ἱερέως.	(+ Աքիլլեսի որդի) Պրուսա սպանվեց Օրեստեսի ձեռքով Դելփիոսում, Ապոլլոնի մեհյանում՝ Մաքերևս քրմից մատնված:
---	--	---

Գրիգոր Նազ., Ի Բաս. 176 = Greg. Naz. in Bas. 22.3.1-2.

Ոչինչ այնպիսի նոցա Ովրեստքն և Պրիզաղք...	οὐδὲν τοιοῦτον αὐτοῖς οἱ Ὁρέσται καὶ οἱ Πυλάδαι...	Ոչինչ են նրանց Համար Օրեստեսներն ու Պրիզաղեսները:
--	--	---

Նոննոս 2.15 [21] = Nonnos 43.11.1-4.

Ովրեստէսս այս որդի էր Ագամեմնոնի. այլ սիրելութիւն այնչափ ունէր առ Պրիզաղէս, և Պրիզաղէս առ Ովրեստէս, մինչ զի մեռանելով Պրիզաղեսի՝ ընդ նմին իջանել Ովրեստեայ ի դժոխս:	Օρέստիς οὗτός ἐστιν ὁ υἱὸς τοῦ Ἀγαμέμνονος. φιλίαν δὲ τοσαύτην ἔσχε πρὸς τὸν Πυλάδην, καὶ Πυλάδης πρὸς τὸν Ὁρέστην ὡς ἀποθανόντος Πυλάδου συγκατελεθεῖν τὸν Ὁρέστην μέχρι τοῦ Ἴδου.	Այս Օրեստեսն Ագամեմնոնի որդին էր և այնպես էր սիրում Պրիզաղեսին, Պրիզաղեսն էլ՝ Օրեստեսին, որ Պրիզաղեսի մահից հետո Օրեստեսը նրա հետ իջավ դժոխք:
---	---	---

### 145. Կիկլոպների կղզին

Երբ Ողիսևսը Տրոյայի գրավումից հետո տուն էր վերադառնում, նրա նավերից մեկը կանանց կիկլոպների կղզու մոտ (Apollod. E7.4):

Փիլոն, Նախախնամութիւն 104-105.

Արդ այժմ անաստուածագոյն ազգի Կիկլոպեայց առատաբար ինքնին լինին պէտք իւրեանց վասն արգաւանդ երկրին ... Իսկ արդ քերթողն ածեալ մուծանէ զվատ վրիպակ ասելով. «Ի Կիկլոպայց յերկիրն յամպարհաւածից յանաւրինաց յանդատից՝ հասաք. որք յաստուածս պանծացեալ վստահ են յանմահս, / ոչ տնկեն ձեռաւք տունկ և ոչ վարեն. / այլ այնպէս անսերմն, և առանց վարելոյ / ամենայն ինչ բուսանէր. / ցորեանք և գարիք, և որթք՝ որ բերեն / գինի քաջողկոյզ և յանկարծաւրէն անձրև անեցուցանէ»:	Այժմ կիկլոպների սաստիկ անաստված ցեղը մեծ կարիք ունի արգավանդ հողի... Իսկ բանաստեղծը շատ սխալ բան է մեջբերում՝ ասելով. «Հասանք ամբարտավան անօրեն կիկլոպների երկիրը, որոնք մեծամտորեն, ապավինելով անմահ աստվածներին, ձեռքով բույսեր չեն տնկում և հողը չեն վարում, այլ ամեն ինչ աճում է առանց ցանելու ու վարելու՝ ցորեն, գարի, խաղող, որը խոշորաողկույզ գինի է տալիս, և որն անսպասելի (գրանք Զևսի) <sup>1</sup> աճեցնում է անձրևը»:
---	--

Փիլոն, Նախախնամութիւն 117.

Բայց երկիրն կիկլոպայց՝ վասն զի և ազգն նոցա ստեղծուած առասպելի է, քանզի առանց սերմանելոյ և երկրագործ արանց ընտանի պտուղ ոչ բուսանի, որպէս ոչ ինչ արժան ամբաստան լինել	Բայց պետք չէ կիկլոպների երկիրը, որովհետև նրանց ցեղն առասպելական հորինվածք է և առանց ցանելու ու երկրագործների ընտանի պտուղներ չեն աճում, ամբաստանել իբրև
--	---

<sup>1</sup> Հունարեն «դրանք Զևսի» (σφιν Διός) բառերը սխալմամբ ընթերցվել են «անսպասելի» (αἰφνίδιος), ինչը նկատել և ծանոթագրության մեջ նշել է Ավգերյանը:



իրբը գտրտմագին և գանապղաբեր աշխարհէ. քանզի բազում է և ի սմա թանձրահողն:

տրտում և անապղաբեր երկիր, չէ՞ որ այնտեղ էլ շատ արգալանդ հողեր կան:

Հմմտ. Phil. Prov. 2.66.

χώρα δ' ἢ Κυκλώπων, ἐπειδὴ τὸ γένος αὐτῶν ἐστὶ πλάσμα μύθου, δῖχα σπορᾶς καὶ γεωπόνων ἀνδρῶν ἡμερος καρπὸς οὐ φύεται, καθάπερ οὐδ' ἐκ τοῦ μὴ ὄντος τι γεννᾶται. Κυκλώπων δ' ἐς γαῖαν ὑπερφιάλων ἀθεμίστων / ἰκόμεθ', οἳ ῥα θεοῖσι πεποιθότες ἀθανάτοισιν / οὔτε φυτεῦουσιν χερσὶν φυτὸν οὐτ' ἀρόωσιν, / ἀλλὰ τὰ γ' ἄσπαρτα καὶ ἀνήροτα πάντα φύονται, / πυροὶ καὶ κριθαὶ ἠδ' ἄμπελοι, αἳ τε φέρουσιν / οἶνον ἐριστάφυλον, καὶ σφιν Διὸς ὄμβρος ἀέξει (Hom. Od. 9.106-111).

Կիկլոպների երկիրը, քանզի նրանց ցեղն առասպելական հորինվածք է. չէ՞ որ առանց ցանելու և երկրագործ այրերի պտուղ չի աճում՝ ըստ այնմ, որ ոչնչից ոչինչ չի ծնվում: «Հասանք ամբարտավան, անօրեն կիկլոպների երկիրը, որոնք, մեծամտորեն ապավինելով անմահ աստվածներին, ձեռքով բույսեր չեն տնկում և չեն վարում, այլ ամեն ինչ աճում է առանց ցանելու ու վարելու՝ ցորեն, գարի, խաղող, որը լավ խոշորաողկույզ գինի է տալիս, և դրանք Զևսի անձրևն է աճեցնում»:

Պլատոն, Օրին. 82 = Plat. Leg. 680.b.3-c.1.

Ասէ իսկ զսա Հոմերոս լինել առ կիկլոպեանցն բնակութիւն՝ ասելով. «Սոքա իսկ էին ո՛չ վաճառականք, ո՛չ խորհրդածուք, և ո՛չ յորինողք, այլ, ի բարձրագոյ լեռանց գագաթունս բնակելով, և յայրս գետնափորս հանգուցեալ էին, իւրաքանչիւր ոք ո՛չ մանկանցն խնամս տանելով, և ո՛չ միմեանց»:

Λέγει δ' αὐτήν που καὶ Ὅμηρος γεγονέναι περὶ τὴν τῶν Κυκλώπων οἴκησιν, εἰπών. τοῖσιν δ' οὐτ' ἀγοραὶ βουλευφόροι οὐτε θέμιστες, / ἀλλ' οἳ γ' ὑψηλῶν ὀρέων ναίουσι κάρηνα / ἐν σπέσσι γλαφυροῖσι, θεμιστεύει δὲ ἕκαστος / παίδων ἠδ' ἀλόχων, οὐδ' ἀλλήλων ἀλέγουσιν<sup>1</sup>.

Հոմերոսը սա է ասում կիկլոպների կենցաղի մասին. «Սրանք ո՛չ վաճառական են, ո՛չ իմաստուն, ո՛չ էլ օրինավոր (ո՛չ խորհրդակցական ժողովներ ունեն, ո՛չ օրենքներ), այլ բնակվում են բարձր լեռների գագաթներին և գետնափոր քարայրներում. նրանք ո՛չ մանուկների մասին են հոգ տանում, ո՛չ միմյանց (յուրաքանչյուրը մանուկների ու կողակիցների տիրակալն է, իսկ միմյան հետ գործ չունեն)»:

### 146. Ողիսևս և Պոլիփեմոս

Ողիսևսն ընկերների հետ մտել էր Պոսեյդոնի որդու՝ կիկլոպ Պոլիփեմոսի քարանձավը, և նա մի քանիսին կերավ (Apollod. E7.5): Նրանք էլ մի գերան սրեցին և, կրակի վրա տաքացնելով, կուրացրին Պոլիփեմոսին: Երբ առավոտյան նրա ոչխարներն արոտավայր պիտի գնային, նա բացեց քարանձավը և, դռան մեջ ձեռքերը պարզած, շոշափում էր կենդանիներին: Ողիսևսը, երեք խոյ կապելով իրար, մտավ ու թաքնվեց մեծի փորի տակ և ոչխարների հետ դուրս եկավ (Hom. Od. 9, Apollod. E7.7-8):

Գրիգոր Նազ., ճառ 4.108.6-7 [130] = PG 35.644.26-27.

Յորո՞ց քեզ գէնքդ, քա՛ջդ: Ո՞չ ի Կիկլոպացւոցն, յորոց դարբնելն:

παρὰ τίνων σοὶ τὰ ὄπλα, ὧ γενναίотате; Οὐ τῶν Κυκλώπων, ἐξ ὧν τὸ χαλκεύειν;

Ումի՞ց է գենքդ, ո՛վ քաջ, մի՞թե կիկլոպներից, որոնցից դարբնությունն է<sup>2</sup>:

<sup>1</sup> Hom. Od. 9.112-115.

<sup>2</sup> Տե՛ս դրվագ 3:

Նոննոս 3.58 [49] = Nonnos 4.65.3-4.

Ասին մարդակերք գոլ սոքա [կիկղովպեանք], որք և զընկերան Ողիւսեայ կերան:

λέγονται δὲ οὗτοι ἀνθρωποφάγοι εἶναι καὶ κατεδηδοκέναι τοὺς τοῦ Ὀδυσσέως ἐταίρους.

Ասում են, թե սրանք [կիկղովպեանքը] մարդակեր են և կերել են Ողիւսեայ ընկերներին:

Գրիգոր Նազ., ճառ 5.39.14 [214] = PG 35.716.22-23.

Կիկղովպական պատուեր պատուին:

τὴν Κυκλώπειον ἐτίμας τιμὴν.

Կիկղովպական պատվով էիր պատվում:

Նոննոս 4.34 [77] = Nonnos 5.34.1-9.

Կիկղովպոսս այս ասի դիւցազն ոմն գոլ աւագակական և հովիւ, որ էր բնակեալ ի Սիկիւղիա և ունէր մի ակն: Արդ՝ Ողիւսոս՝ մոլորեալ յետ տրովպական պատերազմին ընկերաւքն իւրովք՝ եկն ի Սիկիւղիայ, և Կիկղովպեայ ըմբռնեալ զնոսա՝ եկեր նախ զընկերան Ողիւսեայ, իսկ զՈղիւսոս պահեաց յետոյ ուտել. այլ ոչ կարաց, քանզի գերծաւ արբեցուցեալ զԿիկղովպոս և կուրացուցեալ և ընդ ասու խոյի միոյ գաղտաբար կախեալ զանձն իւր:

Ὁ Κύκλωψ οὗτος λέγεται εἶναι ἦρωσ τις ληστροκὸς καὶ ποιμὴν, ὃς ᾧκει τὴν Σικελίαν, εἶχε δὲ ἓνα ὀφθαλμόν. τοῦ οὖν Ὀδυσσέως ἀποπλανηθέντος μετὰ τὸν Τρωϊκὸν πολέμον μετὰ τῶν ἐταίρων αὐτοῦ καὶ ἐλθόντος περὶ τὴν Σικελίαν, ὁ Κύκλωψ συνέλαβε καὶ αὐτὸν τὸν Ὀδυσσεά καὶ τοὺς ἐταίρους αὐτοῦ. καὶ τοὺς μὲν ἐταίρους αὐτοῦ πρῶτους κατέφαγε, τὸν δὲ Ὀδυσσεά τηρήσας εἰς ὕστερον καταφαγεῖν οὐκ ἴσχυσε, διαδράντος αὐτοῦ. διέδρασε δὲ μεθύσας τὸν Κύκλωπα καὶ τυφλώσας αὐτὸν, καὶ ὑπὸ τὸ ἔριον ἐνὸς κριοῦ κατακρεμάσας ἑαυτὸν καὶ ἐξέλθων.

Ասում են, թե կիկղովպ մի դյուցազուն էր՝ ավագակ ու հովիվ, որ բնակվում էր Սիկիւղիայում և մեկ աչք ուներ: Երբ Ողիւսեան իր ընկերների հետ մոլորվեց տրոյական պատերազմից հետո և եկավ Սիկիւղիա, կիկղովպը, բռնելով նրանց (բռնեց և՛ իրեն՝ Ողիւսեան, և՛ նրա ընկերներին), նախ կերավ Ողիւսեայ պահեց հետո ուտելու, բայց չկարողացավ, քանի որ նա խուլյա տվեց (+ իսկ խուլյա տվեց)՝ արբեցնելով ու կուրացնելով կիկղովպին և իրեն ծածուկ կախելով մի խոյի բրդի տակ (+ ու դուրս գալով):

Յովհաննէս Անկիւրացի, Թարգմանութիւններ լատիներէնից. Մ 562, 28բ, BnF 198 (1708), 41-44.

Թիւեմաւ ջիւլաւբէն կռապաշտ որդի Ներգունէի մարգարէացաւ Բաւլիֆէմօյին, թէ Ուլիսէն գիւր աչքն պիտէր հանէր:

Թիւեմավ կիկղովպը՝ Նեպտունուսի (Պոսեյդոնի) կռապաշտ որդին, մարգարեացավ Պոլիփեմոսին, թե Ուլիսեսը (Ողիւսեսը) պիտի իր աչքը հաներ<sup>1</sup>:

### 147. Կիրկեի կղզին

Ողիւսեան ընկերների հետ եկավ Կիրկեի կղզին, և սա կախարդկական դեղերով նրա ընկերներին խոզ դարձրեց: Ողիւսեայը Հերմեսից «մոլի» կոչվող մոգական խոտը վերցրեց, որը նրան գերծ պահեց Կիրկեի կախարդանքից (Hom. Od. 10.237–240, 302-318, Apollod. E7.15-16):

<sup>1</sup> Թիւեմաւ անունը հիշեցնում է Ողիւսեայ որդի Տեիմարոսին, որն այս պատմության հետ որևէ առնչություն չունի: Պոսեյդոնի որդին հենց Պոլիփեմոսն էր: Այս հատվածը քաղել ենք հետևյալ գրքից՝ Մ. Է. Մթռուն, *Պարսկական բնագրեր և ավանդություններ*, Երևան, 2014, էջ ?:

Դաւիթ, Ստոր. 211 = Dav. in Cat. 119.22-24.

Որպէս Ողիսեա՝ ընկերաց նորա խոզացելոց ի դեղոցն Կիրկեայ, իսկ որ ապացուցիւ ոչ է զինեալ՝ լինի խոզ Բիւտտացի:

ὥσπερ ὁ Ὀδυσσεύς, τῶν ἐταίρων αὐτοῦ συωθέντων ὑπὸ τοῦ τῆς Κίρκης φαρμάκου, ὁ δὲ τῆ ἀποδείξει μὴ ὀπλισάμενος γίνε-ται ὡς Βοιωτία.

Ինչպէս Ողիսեաը, երբ նրա ընկերները Կիրկեի դեղերից խոզ դարձան, իսկ ով ապացուցով զինված չէ, դառնում է բետտական խոզ<sup>1</sup>:

Դաւիթ, Ստոր. 211 = Dav. in Cat. 119.19-22.

Մի՛ սուտ կարծիս ընկալցուք վասն գոյիցն և մի՛ չար ինչ գործեսցուք, ունելով զբանականն որոշիչ՝ այսինքն գապացոյցն, որ է արդարև Հերմէական մոլութիւն<sup>2</sup>, որով զինեալքն ոչ մեղկին և պարտին ի յուշկապարկաց՝ այսինքն յայլակարծեաց Հերձուածոցն ի մաստասիրութեան:

μήτε ψευδῆ δοξάσωμεν μήτε κακὰ διαπραξώμεθα, ἔχοντες τὴν λογικὴν διακρίνουσαν, ἣ-γουν τὴν ἀπόδειξιν, ἥτις ἐστὶ τῶ ὄντι τὸ Ἑρμαϊκὸν μῶλυ, ἥτινι ὀπλισάμενοι οὐ θέλγονται ὑπὸ τῶν Σειρήνων τῶν ἑτεροδόξων αἰρέσεων τῆς φιλοσοφίας.

Ո՛չ գոյի մասին (չէք գոյի մասին) սխալ կարծիք ընդունենք, ո՛չ էլ չարիք գործենք՝ ունենալով դատող բանականություն, այսինքն՝ ապացույց, ինչն իսկապես Հերմեսի մոլությունն (մոգական խոտն) է, որով զինվելով՝ չեն փափկում և պարտվում սիրեններից, այսինքն՝ իմաստասիրության այլակարծիք ուղղություններից:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 136.

Ողիսեայ իրքն. և թէ զիարդ յառնէն փախեալ տրիէր նաւան, մինչ տիւրենացիք զանդր նաւարկեալն աւազակէին:

Ողիսեսի հետ կապված դեպքերը, և թե ինչպէս նա այդ այրից փախավ եռաշարք թիերով նավով՝ մինչ տիրենացիներն այդտեղ նավարկողի վրա ավազակային հարձակում էին գործում:

### 148. Սիրեններ

Ողիսեսն անցավ սիրենների կղզու մոտով: Նրանք նվագում էին ու երգում և այդպէս անցնող նավաստիներին համոզում գալ իրենց մոտ, ինչի հետևանքով նրանք նավաբեկության էին ենթարկվում (Hom. Od. 12.39–200): Ազդրերից ցած թռչունների մարմին ունեին: Նրանք գուշակություն էին ստացել, որ եթե իրենց մոտով նավ անցնի, իրենք կվախճանվեն. այդպէս էլ եղավ (Apollod. E7.18-19):

Բարոյախաւս 16.2-4 (p. 113).

Բարոյախաւսն ասաց զուշկապարկաց<sup>3</sup>, էթէ մահաբերք են և ի ծովու են և երգեն երգաքաղցրաճայնս. և նաւորդքն,

Ὁ φυσιολόγος ἔλεξεν περὶ τῶν σειρήνων εἶναι θανατηφόρους αὐτάς ἐν τῇ θαλάσσει. ἄδουσιν γὰρ ταῖς φωναῖς εὐμελῶς. καὶ οἱ

Բարոյախոսն ասում է հուշկապարիկների (սիրենների) մասին, թե մահաբեր են, ապրում են ծովում և երգեր են երգում

<sup>1</sup> Աթենացիների աչքում բետտացիները բթամիտ էին. «բետտացի խոզն» այդպիսիներին բնորոշող ասացվածք էր:  
<sup>2</sup> Այստեղ «մոլութիւն» բառն օգտագործված է «մոլի»-ի (մῶλυ) դիմաց. փաստորեն բառը տառադարձված է և դրան հայերենի վերջածանց է կցված. արդյունքում ուրիշ իմաստ է ստացվել:  
<sup>3</sup> Աստվածաշնչում նույնպէս օգտագործվել է՝ «յուշկապարիկ» (Ես. ԺԳ 22):

որ ընդ այն անցանեն, եթէ լսեն զնուազ երգոցն, այնչափ հեշտական թուի, մինչև զանձինս ի ծովն ընկենուն և կորնչին: Եւ կերպարանք նոցա մինչև ի պորտն կնոջ մարդու, և կէսն թռչ(ն)ոյ է:

παραπλέοντες, ἐὰν ἀκούσωσιν τῆς μελωδίας αὐτῶν, ἠδύνουσι τοὺς ἀκούοντας, ὥστε ἑαυτοὺς ῥίπτουσιν ἐν τῇ θαλάσῃ καὶ ἀπόλλυνται. τὴν δὲ μορφὴν ἔχουσιν τὸ ἦμισυ μέρος, ἕως ὀμφαλοῦ, γυναικός· τὸ δὲ ἦμισυ, πετεινοῦ.

քաղցր ձայնով: Եվ այդտեղով անցնող նավաստիներին, եթե նրանք լսում են մեղեդին, դա այնքան հաճելի է թվում, որ իրենց ծովն են նետում ու զոհվում: Նրանց կերպարանքը (+ կիսով չափ) մինչև պորտը կանացի մարդկային է, իսկ մյուս կեսը՝ թռչնի:

Փիլոն, լին. 3.3 [173].

Քանզի ոչ պարկացն երգք՝ որպէս ասաց չոմերոս, այսպէս բռնի կոչէ զլսաւղսն, մինչ զի մոռանալ զգաւառ, գտուն, զսիրելիս, և զհարկաւոր կերակուրս:

Սիրենների երգը, ինչպես ասել է Հոմերոսը, այնպես բռնի կանչում է լսողներին, որ նրանք մոռանում են հայրենիքը, տունը, մտերիմներին և անհրաժեշտ սնունդը<sup>1</sup>:

Մխիթար Այրիվանեցի 33.

Իսկ երաժշտականութիւն գտաւ առ Թրակացիսն, զի ի ծովուց են՝ ուսան ի հնչմանէ յուշկապարկաց:

Իսկ երաժշտությունը Հայտնագործվեց Թրակացիների մոտ<sup>2</sup>, քանի որ ծովերից են, սովորել են հուշկապարիկների ձայնից:

### 149. Սկիլլա և Քարիբդիս

Ողիսևսն անցնում էր երկու ժայռի մոտով: Մեկի վրա Սկիլլան էր, որն ուներ կնոջ դեմք և կուրծք, բայց կողքերից՝ վեց շան գլուխ ու տասներկու ոտք: Մյուս հրվանդանի վրա Քարիբդիսն էր, որն օրը երեք անգամ ջուրը ներս էր քաշում ու հետ թափում (Hom. Od. 12.73–126, 12.222–259, Apollod. E7.20-21):

Փիլոն, լին. 1.76 [51].

Քանզի այն որ ի վերայ Սկիլլայն ասացեալ է քերթողին, «սա քեզ ոչ մահկանացու, այլ՝ անմահ չար է<sup>3</sup>»:

Այն, որ բանաստեղծն ասել է Սկիլլայի մասին. «Սա քեզ համար ոչ թե մահականացու, այլ անմահ չար է»:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 328 = Alex. α 3.30.2.1-4.

Քանզի ի գաւառայնոցն կին ոմն ծնաւ մանուկ՝ վերին կողմանն մարմնոյն ունէր զամե-

τῶν γὰρ ἐγχωρίων γυναικῶν τις ἔτεκε βρέφος, ὃ τὰ μὲν ἄνω μέλη τοῦ σώματος ἕως τοῦ ὀμφα-

Այդ երկրի բնակիչներից մի կին ծնեց մի մանկան, որի մարմնի վերևի մասում ամեն

<sup>1</sup> Ղ. Ալիշանը Փիլոնի մի մեկնությունից (առանց աղբյուրը նշելու) հետևյալ հատվածն է մեջբերել. «Յուշկապարիկ՝ համբարու է. կէս անձինն կնոջ է և կէսն թռչնոյ, և յոյժ քաղցրաձայն է, և ի ծովու բնակէ. ոմանք ասեն՝ հաւ է քաղցրաձայն, անապատասէր, կամ դև մարդատեսիլ. ոմանք Յուշկապար, պորտի վերն մարդոյ է, անդի վայրն՝ իշոյ» (Ղ. Ալիշան, *Հին հայաստանի և հնդկաստանի կրօնք հայոց*, Վենետիկ, 1895, էջ 187-8). մեջբերել է նաև Վահրամ Բաբունու հետևյալ հատվածը. «Ի ցոյ և իշոյ գՅուշկապարիկն» (անդ, էջ 186):  
<sup>2</sup> Երաժշտությունը հայտնագործել էին թրակացիները. տես՝ դրվագ 9, ինչպես և աստղագիտությունը՝ քաղղեացիները, թվաբանությունը՝ փյունիկացիները, իսկ երկրաչափությունը՝ եգիպտացիները. տես՝ Գ-ախթ, Սահմանք ԺԷ [132]:  
<sup>3</sup> Hom. Od. 12.118. ἡ δὲ τοι οὐ θνητῆ, ἀλλ' ἀθάνατον κακὸν ἔστω.

նայն ինչ մարդոյ մինչև ցարտն, և զներքոյսն՝ վայրենաց գազանաց: Եւ էր բոլոր տիպ կերպարանաց նման Սկիւլայ:

λοῦ εἶχε πάντα παιδός, τὰ δὲ ὑποκάτω θηρίων ἀγρίων προτομαῖς ἐστεφανωμένα, ὥστε εἶναι ὄλον τὸν τύπον τῆ γραφομένη Σκύλλη παραπλήσιον.

ինչ մինչև պորտը մարդու (մանկան) նման էր, իսկ ներքևի մասերը՝ վայրի գազանների (պսակված էին վայրի գազանների գլուխներով): Նրա ողջ կերպարանքը նման էր Սկիւլային (+ որի մասին գրվել է):

Գրիգոր Նսագ., ճառ 4.94.8-14 [113-114] = PG 35.628.4-11.

Ոչ ոք երբեք ասաց ընտանեգոյն ... զծովային չարն զկորիւնն, որ հաւաքէր շուրջանակի և զփախուցեալսն. և սակայն վերագոյնն, ասէ, զնա քաղցր և մարդասէր, և ի տեսանելն ոչ անհեշտալի, վասն զի աղջիկ էր առ մեզ իմն ազգականութիւն ունելով, միշտ յայնմանէ շնական գլուխք և գազանայինք, ոչ ինչ էր բարի զգեցուցանող յափշտակելովն, և ոչ ինչ ի վտանգսն զանազանեալք ի հակառակադիր Քարիդեայն:

οὐδεις πώποτε εἶπεν ἡμερον... τὸ θαλάττιον κακὸν τὴν Σκύλλαν, ὅτι ἐξ ἐν κύκλῳ καὶ φευκτοτάτας· καίτοι γε τὰ ἄνω, φασίν, αὐτῆς χρηστὰ καὶ φιλόανθρωπα, καὶ εἰς ὄψιν οὐκ ἀηδῆ· κόρη γὰρ ἦν πρὸς ἡμᾶς συγγενὲς ἔχουσα· αἱ δὲ ἀπὸ τούτου κυνώδεις κεφαλαὶ καὶ θηριώδεις οὐδενὸς ἦσαν ἀγαθοῦ, στόλους ὄλους ἀρπάζουσαι καὶ μηδὲν εἰς κίνδυνον διαφέρουσαι τῆς ἀντιθέτου Χαρύβδεως.

Ոչ ոք երբեք ընտանի չի անվանել ... ծովային չար կորյունին (Սկիւլային)<sup>1</sup>, որ շուրջանակի հավաքում էր (վեց [գլուխ ուներ] շուրջանակի)<sup>2</sup> նաև փախածներին (վերին աստիճանի փախչելի [գլուխներ])<sup>3</sup>, սակայն նրա վերին մասը, ասում է, հաճելի էր ու մարդասեր, և տեսքն էլ տհաճ չէր, քանի որ նա աղջիկ էր՝ մեզ ազգակից, բայց նրանից ելնող շնական և գազանային գլուխները ոչ մի լավ բան չունեին. հափշտակում էին (ամբողջական նավատորմեր)<sup>4</sup> և վտանգի ժամանակ ոչնչով չէին տարբերվում հանդիպակաց Քարիդեիսից:

Նոննոս 3.49-50 [45-46] = Nonnos 4.52.1-53.13.

Առասպելեալ լինի ի Տիւրքենական ծովուն գազան ինչ գոլ, որ է կին գեղեցիկ մինչև ցարտն, և յայսկոյս շան գլուխք բնաւորեալք ի նմա վեց, և այլ մարմին նորա աւճատեսակ է. գորմէ ասեն, թէ զնաւորդս ի ծովուն յայնմիկ ուտէր անխնայապէս: Առ սիկեղական և տիւրքենական ծո-

Μυθεύεται ἐν τῷ Τυρρηνικῷ πελάγει θηρίον, ὃ ἐστὶ γυνὴ μὲν περικαλλῆς μέχρι τοῦ ὀμφαλοῦ, ἔνθεν δὲ καὶ ἔνθεν κυνῶν κεφαλαὶ προσπεφύκασιν αὐτῇ· ἔξ· τὸ δὲ ἄλλο αὐτῆς σῶμα ὀφιδῶδες. ὃ, φησί, θηρίον τοὺς παραπλέοντας τὰ πελάγη ταῦτα κατήσθιεν ἀφειδῶς καὶ θηριωδῶς. Περὶ τὸ Σικελικὸν τοῦτο καὶ Τυρρη-

Առասպելներ են պատմում, թե Տիրքենական ծովում մի գազան կա, որ մինչև պորտը գեղեցիկ կին է, իսկ այս կողմում (այստեղ-այնտեղ) նրան կցված է վեց շան գլուխ. և նրա մնացած մարմինը օձաձև է: Նրա մասին ասում են, թե այդ ծովում նավարկողներին անխնա (+ ու գազանավարի) ուտում է:

<sup>1</sup> Աննա Շիրինյանի կռահմամբ՝ թարգմանիչը շփոթել է այդ անունը սկյալազ «կորյուն» բառի հետ:  
<sup>2</sup> Շիրինյանի կարծիքով՝ «էք են-ի փոխարեն թարգմանիչը սխալմամբ կարդացել է իջն (օջո բայի անցյալ կատարյալն է):  
<sup>3</sup> Խոսքը նրա տեսակետի գրությունների մասին է: «Փախչելի»՝ այսինքն որոնցից մարդ ուզում է փախչել, տեսալոր, անցանկալի:  
<sup>4</sup> Շիրինյանը ենթադրում է, որ շփոթվել են στόλος («նավատորմ») և στολίζω («հագցնել», «զարդարել», հմմտ. «զգեցուցանող») բառերը:

վուն է խոր ինչ, յորում տեղ-  
 ուղ ծովն լինի անպովտ և ու-  
 քիայ, և բաժանեալ լինի  
 ջուրն, մինչ զի գյատակս ծո-  
 վուն ըստ այնմ կողման հնար  
 լինել տեսանել: Եւ անպովտ է  
 իբր վերաքարշումն և լա-  
 փումն ջրոյն, քանզի ջուրն  
 ճողպարեալ լինի առ ոմանս  
 դատարկս վիմաց և դարձեալ ի  
 դուրս բղխեալ լինի, որ և կոչի  
 ուքիա: Եւ էր այնպիսի տե-  
 ղին նաւորդաց լի վշտազնու-  
 թեամբ և մահուամբ. քանզի  
 բոլոր կորուսեալ լինէին  
 նաւքն յայնմ տեղուղ, թէ պա-  
 տաճէր ի դուրել նաւուն լինել  
 անպովտ կամ ուքիա: Յա-  
 դաբս այսորիկ և Հոմերոսս ա-  
 սէ. «Իսկ յայսկոյս՝ քածն, և  
 յայնկոյս՝ արամազդեան Քա-  
 րիբդէն»: Այլ հակադարձեալ  
 կոչեաց զՔարիբդէն, ընդդիմա-  
 դրեալ ընդ քածին:

νικὸν πέλαγός ἐστὶ τις τόπος, ἐν  
 ᾧ ἢ θάλασσα γίνεται ἄμπωτις  
 καὶ ῥαχία. καὶ δίσταται τὸ ὕδωρ  
 ὥστε τὸν πυθμένα τῆς θα-  
 λάσσης κατὰ τοῦτο τὸ μέρος, εἵ-  
 γε δυνατόν, ὀραῖσθαι. ἄμπωτις  
 δὲ ἐστὶν οἶονεὶ ἀνάποσις τις καὶ  
 ἀναρρόφησις: τὸ δὲ ὕδωρ ὑπο-  
 νοστεῖ ἔν τισι κοιλώμασι τῶν  
 πετρῶν καὶ πάλιν ἐκρήγνυται. ὁ  
 καὶ καλεῖται ῥαχία. ἦν δὲ οὗτος  
 ὁ τόπος τοῖς πλέουσιν ἐπικίνδυ-  
 νος καὶ θανάτου μεστός. ὀλο-  
 βρύχιον γὰρ τὸ πλοῖον ἐγίνετο  
 ἐν τούτῳ τῷ τόπῳ, εἰ συνέβη,  
 πλέοντος τοῦ πλοίου, γενέσθαι  
 ἀμπώτιδα καὶ ῥαχίαν. περὶ τού-  
 των Ὅμηρος: Ἔνθεν μὲν Σκύλ-  
 λη, ἐτέρωθι δὲ διὰ Χάρυβδις.  
 ἀντίθετον δὲ ἐκάλεσε τὴν Χά-  
 ρυβδὶν πρὸς τὴν Σκύλλαν παρα-  
 βαλῶν.

Սիկիլական և Տիրրենական ծո-  
 վի մոտ կա մի խորը (չիք)  
 տեղ, ուր ծովը դառնում է տե-  
 դատվություն և մակընթացու-  
 թյուն<sup>1</sup>, և ջուրը բաժանվում է,  
 այնպես որ այդ կողմում ծովի  
 հատակը հնարավոր է լինում  
 տեսնել: Տեղատվությունը ջրի  
 վեր քարշումն ու կլանումն է,  
 քանի որ ջուրը թաքնվում է  
 ժայռերի ինչ-ինչ խորշերում և  
 կրկին դուրս է բխում, որը և  
 կոչվում է մակընթացություն:  
 Այդ վայրը նավարկողների հա-  
 մար լի էր վտանգով ու մահ-  
 վամբ, քանի որ նավերն ամ-  
 բողջովին կործանվում էին  
 այդ վայրում, եթե նավի լողա-  
 լու ժամանակ պատահում էր  
 տեղատվություն կամ (և) մակ-  
 րնթացություն: Դրա մասին  
 նաև Հոմերոսն է ասում. «Այս  
 կողմում Քածը (Սկիլլան), իսկ  
 այն կողմում՝ Արամազդյան  
 (աստվածային) Քարիբդիսը»<sup>2</sup>:  
 Քարիբդիսին կոչեց հանդիպա-  
 կաց՝ հակադրելով նրան Քածին  
 (Սկիլլային)»:

## 150. Կալիպսոյի կղզում

Ողիսևսը յոթ տարի մնաց Կալիպսոյի կղզում (Apollod. E7.24):

Թեոն 84 = Theon 86.10.

... զոր արար Հոմերոսս յՈղի-  
 սոջ, զի սկսաւ ի ժամանակացն  
 ըստ որս Ողիսևս առ Կալիփ-  
 սէն շրջէր...

ὅπερ ἐν Ὀδυσσεΐα Ὅμηρος πε-  
 ποιήκεν· ἤρξατο μὲν γὰρ ἀπὸ  
 τῶν χρόνων, καθ' οὓς Ὀδυσ-  
 σεὺς ἦν παρὰ Καλυψοῖ.

... ինչ որ արեց Հոմերոսը  
 «Ողիսական»-ում, քանի որ  
 սկսեց այն ժամանակներից,  
 երբ Ողիսևսը Կալիպսոյի մոտ  
 էր գտնվում:

<sup>1</sup> «Ամպովտ» և «ուքիայ» հույարեն ἄμπωτις և ῥαχία բառերի ստաուդարումն են:

<sup>2</sup> Hom. Od. 12.235:

## 151. Պենելոպեի փեսացուները

Հնմերոսը պատմում է (Hom. *Od.* 16.245–253), որ Ոդիսևսի բացակայությամբ հարյուր ութ փեսացու ձգտում էին ամուսնանալ Պենելոպեի հետ: Տուն վերադառնալով՝ Ոդիսևսն իր որդի Տելեմաքոսի հետ նետահարեց նրանց (Hom. *Od.* 22):

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 114.

Եւ անդ էր տեսանել նոր ոմն Ոդիսևս և զՊենելոպայ սեղեխսն, զի սատակելով ելանէր արտաքս:

Այնտեղ կարելի էր տեսնել մի նոր Ոդիսևսի և Պենելոպեին փեսացուներին. քանզի սպանելով դուրս էր գալիս:

Հմմտ. Alex. β 1.21.14-15.

ὥστε θεωρεῖν νέον ἄλλον Ὀδυσσέα τὸν Ἀλέξανδρον τοὺς ἐπὶ τῇ Πηνελόπῃ μνηστῆρας ἀναιροῦντα. Ἐξέρχεται...

Այնպես որ կարելի էր տեսնել մի նոր, ուրիշ Ոդիսևս- Աղեքսանդրոսին, որ սպանում էր Պենելոպեի փեսացուներին: Դուրս է գալիս...<sup>1</sup>:

Alex. Rec. Byz. poet. 957-958.

ὥστε κ' αὐτὸν προσθεωρεῖν μέγιστον Ὀδυσσέα τὸν δυνατῶς φονεύσαντα μνηστῆρας Πηνελόπης.

Այնպես որ կարելի էր տեսնել նրան՝ որպես մեծագույն Ոդիսևսի՝ Պենելոպեի փեսացուներին սպանելիս:

Մովսէս Խորենացի Բ 63 [195].

Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ոդիսևս՝ զՊենելոպայ զսեղեխս սատակելով:

Այնտեղ կարելի էր տեսնել մի նոր Ոդիսևսի՝ Պենելոպեի փեսացուներին սպանելիս:

## 152. Պանի ծնունդը

Հերոդոտոսը պատմում է (Herodot. 2.145), որ Պենելոպեի Հերմեսից ունեցավ Պան որդուն: Սեկ այլ տեղեկության համաձայն (Tzet. *Sch. Lyc.* 772.7)՝ նա ծնվեց բոլոր փեսացուների հետ կենակցելուց, որտեղից էլ նրա Պան՝ «բոլոր» անունը:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.26 [203] = PG 35.705.26.

Ծաղր առնեմ զքո զՊայն:

Γελῶ σοῦ τὸν πᾶνα.

Ծիծաղում եմ քո Պանի վրա:

Գրիգոր Նազ., ճառ 4.77.3 [85] = PG 35.601.37-39.

Զպանծալին զՊայն, յամենայն յառթացն զմի աստուածն, և զանծալի Պանին՝ բոլոր ձեռք տօն յմի աստուածն, և τὸν σεμνὸν Πᾶνα<sup>2</sup>, τὸν ἐκ πάντων μνηστῆρων ἓνα θεὸν, καὶ ուղողներից [ծնված] մեկ

<sup>1</sup> Հունարեն β խմբագրության մեջ «որ» չկա, և «դուրս եկավ»՝ հաջորդ նախադասության սկիզբն է: Այդ տեքստի ճշգրիտ համարժեքն է Մովսես Խորենացու ստորև մեջբերվող հատվածը, որ հավանաբար նա փոխառել է «Ալեքսանդրի պատմության» դեռևս չխմբագրված տարբերակից:

<sup>2</sup> Հունարեն πᾶν-ը πᾶς դերանվան չեզոք սեռն է՝ «բոլոր, ամեն» իմաստով:

զանունն առեալ զթշնամանսն, որպէս էր արժանաւոր:

ὄνομα λαβόντα τὴν ὕβριν, ὥσπερ ἦν ἄξιον.

աստժուն, նաև «թշնամանք»<sup>1</sup> անունն առածին, ինչպես որ պատշաճ էր:

Նոննոս 3.38 [41] = Nonnos 4.40.1-8.

Պենելոպեյէ կին էր Ողիւսեայ. սորա յածելով ի մոլութեանն ուր յածեալն եղև, բազում ոմանք եկին՝ կին խաւսել զՊենելոպեյէ: Եւ նա աւր յաւրէ պղերգացեալ լինէր, ոչ և միւսմ ումեք կամեցեալ ամուսնանալ, վասն զի Ողիւսեայ սպասէր: Արդ ամենեքին պաշարելով զնա՝ շաղաշարեցան ընդ նմա, և յղացեալ՝ ծնաւ զՊան. վասն որոյ և Պան կոչեցեալ լինի, քանզի ի բազմաց եղև սերմանեալ: Ջսա արդ աստուած անուանեցին, կոչելով նոխազոտն Պան:

Πηνελόπη γυνή γέγονε τοῦ Ὀδυσσεώς. τούτου πλανωμένου τὴν πλάνην ἦν ἐπλανήθη μετὰ τὸν Τρωϊκὸν πόλεμον, πολλοὶ τινες ἦλθον μνηστευσόμενοι τὴν Πηνελόπην. ἡ δὲ ἡμέραν ἐξ ἡμέρας ἀνεβάλλετο μηδενὶ θέλουσα γαμηθῆναι διὰ τὸ περιμένειν τὸν Ὀδυσσεά. πάντες οὖν φραζάμενοι συγγεγόνασιν αὐτῇ, καὶ ἐγκυμονήσασα, ἔτεκε τὸν Πάνα. διὸ καὶ Πάν καλεῖται, ὅτι ἐκ πάντων ἐσπάρη. τοῦτον δὲ ἐθεοποίησαν. οὗτος δὲ ἐστὶν ὁ Πάν ὁ τραγόπους.

Ողիւսեան ուներ Պենելոպեյ կնոջը: Մինչ սա թափառում էր այնպես, ինչպես իրեն վիճակված էր (+ Տրոյական պատերազմից հետո), շատերը եկան՝ Պենելոպեյի ձեռքն ուզելու: Եվ նա օր օրի ձգձգում էր՝ չցանկանալով ոչ մեկի հետ ամուսնանալ, քանի որ սպասում էր Ողիւսեային: Այդժամ բոլորը, պաշարելով, կենակցեցին նրա հետ, և նա հղիացավ ու նա ծնեց Պանին: Դրա համար էլ Պան կոչվեց, քանզի շատերից (բոլորից) էր սերմանվել: Սրան աստված անվանեցին՝ կոչելով այժի ոտքերով Պան:

153. Հռոմի հիմնադրումը

Ըստ Վերգիլիուսի «Էնեական»-ի՝ տրոյացի իշխան Էնեասը, որ Անքիսոսի և Ափրոդիտեի որդին էր, եկավ Իտալիա ու հաղթեց տեղի բնակիչներին: Նրա սերունդները տիրեցին այդտեղ՝ հիմնելով Ալբա Լոնգա քաղաքը. նրանցից մեկը՝ Ամուսիլուսը, իր եղբոր դուստր Հռեա Միլվիային ստիպեց դառնալ օջախի աստվածուհի Վեստայի քրմուհին, ուստի նա պարտավոր էր երեսուն տարի կուսութուն պահել: Սակայն պատերազմի աստված Մարսից նա ունեցավ Հռոմուլուսին և Հռեմուսին, որոնց Ամուսիլուսը ստիպեց Տիբեր գետը նետել: Մանուկներին մի էգ գայլ սնուցեց: Հետագայում նրանք նոր քաղաք հիմնելու տեղ էին փնտրում, և տեղի համար վեճում Հռոմուլուսը սպանեց եղբորը, հետո էլ հիմնադրեց Հռոմը:

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 136.

Ասկանիոս էնեայ՝ քաղաք շինեաց զԱղբան:

էնեասի որդի Ասկանիոսը հիմնադրեց Ալբա քաղաքը:

Հմմտ. Sync. 207.9-10.

Λατίνων β΄ ἐβασίλευσεν Ἀσκάνιος ἔτη λζ΄, ὁ υἱὸς Αἰνείου, ὃς ἔκτισε πόλιν Ἄλβαν.

Լատինացիներին երկրորդը թագավորեց էնեասի որդի Ասկանիոսը՝ երեսունյոթ տարի, որը հիմնեց Ալբա քաղաքը:

<sup>1</sup> Առասպելի մի տարբերակի համաձայն, Պանը Չևսի և Հիբրիսի որդին էր (Tzetz. Sch. Lyc. 772): Այստեղ Պանը, և ոչ թե նրա մայրն է կրում «քշնամանք» (օբրիզ) անունը, որի անձնավորումն է Հիբրիսը:



Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 9.

Ջամենեսին իսկ ուրոյն զատ ի միմեանց կարգեցից, որք յենեայ, որք յետ առնլոյ Իդրոնի դատինացւոց թագաւորեցին, և յետոյ հռոմայեցիք կոչեցան: Եւ յետ նոցա կարգաւ զայնոսիկ, որք յԹոմիդայ, որք զՀոսիմ քաղաքն շինեցին:

Առանձին-առանձին կպատմեմ բոլորի մասին, որոնք սերում են էնեասից. նրանք Իլիոնի առումից հետո թագաւորեցին լատինացիներին և հետո կոչվեցին հռոմեացիներ: Եվ նրանցից հետո՝ հերթականությամբ հռոմոլուսից սերողների մասին, որոնք շինեցին հռոմ քաղաքը:

Հմմտ. Sync. 230.6-7.

Από Ῥωμύλου οἱ πρότερον καλούμενοι Λατῖνοι Ῥωμαῖοι προσηγορεύθησαν.

Նախկինում հռոմոլուսից լատինացիներ կոչվածները կոչվեցին հռոմեացիներ:

Sync. 2.226.16-18

Ῥωμύλον φασὶ κατὰ τὸ τέλος τῆς ζ΄ ὀλυμπιάδος βασιλεῦσαι τῶν Λατίνων ἀπὸ Αἰνείου, Ῥώμην τε κτίσαι καὶ μετονομάσαι τὴν πόλιν καὶ τὸ ἔθνος τῷ ἰδίῳ ὀνόματι Ῥωμαίους, τοὺς πρότερον λεγομένους Λατίνους.

Ասում են՝ հռոմոլուսը յոթերորդ օլիմպիականի վերջում թագաւորեց լատինացիներին՝ էնեասից հետո, նաև հիմնադրեց հռոմը և քաղաքն ու ժողովրդին իր անունով կոչեց հռոմեացիներ, որ նախկինում կոչվում էին լատինացիներ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 367-374 = Dion. Hal. Ant. Rom. 63.1.4-71.5.1.

Իդրոն ասէ առաւ իսկ և իսկ ի գլուխ ելանելոյ ամարայնոյն՝ էժ. առուրք յառաջ քան զձմերական փոփոխմունսն լինելոյ՝ ի եղափէքովիդրոն ամսոյ, որպէս ավէնացիք զժամանակն վարեն... Իսկ յԼէ. աւր անցանելոյ յառնլոյն, թուի ինձ՝ քաղաքին յանձանձիջս արայեցւոց լինել. և հրեշտակահնաց անդր ի մերժելոցն առնել, և երգմնի և դաշնաւոր ընդ նոսա լինել: Ի միում ևս ամին յառաջ քան զառնուլն յետ աշունն հաւասարելոյ աւուրցն չուեալ տրովացւոց գնացին յերկրէն. և պարգեալ անցանէին ընդ Եդէսպոնտոս. իջեալ ի Թրակ՝ անդ անցուցանէին զժամանակս ձմերանոյն. գտեղի առեալ մնային և այ-

Ἴλιος μὲν γὰρ ἐάλω τελευτῶντος ἧ ἡδὴ τοῦ θέρους, ἑπτακαίδεκα πρότερον ἡμέραις τῆς θερινῆς τροπῆς, ὀγδόη φθινοντος μηνὸς Θαργηλιῶνος, ὡς Ἀθηναῖοι τοὺς χρόνους ἄγουσι... ἐν δὴ ταῖς ἑπτὰ καὶ τριάκοντα ταῖς ἀπὸ τῆς ἀλώσεως διαγενομέναις τὰ τε περὶ τὴν πόλιν οἶομαι διοικήσασθαι τοὺς Ἀχαιοὺς καὶ τὰς πρεσβείας ἐπιδέξασθαι τὰς παρὰ τῶν ἀφροσθηκῶν καὶ τὰ ὄρκια ποιήσασθαι πρὸς αὐτούς. τῷ δ' ἐξῆς ἔτει, πρῶτῳ δὲ μετὰ τὴν ἄλωσιν ὑπὸ τὴν μετοπωρινὴν ἰσημερίαν ἄραντες οἱ Τρῶες ἐκ τῆς γῆς περαιοῦνται τὸν Ἑλλησποντον καὶ καταχθόντες εἰς τὴν Θράκην αὐτοῦ διατρίβουσι τὴν χειμερινὴν ὥραν δεχόμενοι τε τοὺς ἐπισυνιόντας ἐκ τῆς φυ-

Իլիոնն, ասում է, գրավվեց հենց ամռան վերջին, 17 օր ձմեռային (ամառային) արևադարձից առաջ, էլափբոլիոն (թարգելիոն) ամսին<sup>1</sup>, ինչպես ավենացիներն են ժամանակը հաշվում ... Իսկ գրավումից հետո 37 օրվա ընթացքում, ինձ թվում է, քաղաքի գործերը վարում էին արեացիները՝ և՛ հեռացածներից պատվիրակույթյուններ ընդունելով, և՛ նրանց հետ դաշինք կնքելով: Հաջորդ տարի, որ առաջինն էր գրավումից ի վեր, աշնանային գիշերահավասարից հետո, տրոյացիները գնացին երկրից և կտրեցին-անցան Հելլեսպոնտոսը. ափ դուրս գալով Թրակիայում՝ ձմեռն այնտեղ անցկացրին՝ ընդունելով իրենց

<sup>1</sup> Ատտիկյան օրացույցում էլափբոլիոնն իններորդ ամիսն էր, թարգելիոնը՝ տասնմեկերորդը:

լոցն ևս, որ ընդ նոսա Էին փախստականք. և կազմ և պատրաստ կային միւսանգամ նաւարկելոյ: Ի սկզբան գարնանոյն ի նաւ մտեալ գնային ի Թրակայ. և իբրև ի գլուխ հանէին զմիջոցի վայրացն նաւարկութիւն մինչև զՍիկիդիա, անդ հասեալ՝ իսկ և իսկ տարին վախճանէր. և անցուցանէին անդ գերկրորդ ևս ճմեռնն. ի քաղաքս խառն ընդ եղիմացիս ի սիկիդացոց աշխարհն բնակէին: Իբրև ժամանակք նաւարկութեանց հասանէին, չուեալ ի կղզւոյն՝ անցանէին ընդ Տրուէնական ծովն համատարած. և իբրև գայն ի գլուխ հանէին, հասանէին ի Ղովբենտոս՝ յաբորիգենացոց ծովեզրն՝ յընդմիջել ամարայնոյն. և առնուին գաշխարհն, և բնակէին ի Ղաւիւնիոն. և կատարէին գերկրորդ տարի յառէն Իդիոնի... Իսկ Էնիաս մեհնիւրք և այլ ևս կազմածովք գտեալ կազմէր զբազում վայրս... Իսկ ի միւսում տարւոջն՝ որ է երրորդ յելիցն, տրովացոց միայն թագաւորեաց: Բայց ի չորրորդումն ի վախճանել Ղաոտինայ՝ զթագաւորութիւնն իսկ յինքն առնոյր՝ վասն խնամութեանն ընտանութեան և ժառանգութեան ի Ղաւիւնիայ գալոյ յետ Ղաոտինեայ մահուն... Պատերազմի ինչ և սաստիկ կռուոյ վասն նորին իրաց գոռալոյ, Ղաոտինոս մեռանի, և Տուռնոս, և այլք բազումք. սակայն ունէին որ ընդ Էնէայն Էին. և ի նմանէ գոր ի խնամութենէն եկն իշխանութիւնն՝ առնոյր Էնիաս. թագաւորեալ ամս Գ. յետ Ղաոտինայ վախճանին՝ ի չորրորդ ամին մեռանէր ի պատերազմի... Յետ Էնէայ ի մարդկանէ վճարելոյ՝ յւթնե-

ղից ևս, որ ընդ նոսա Էին փախստականք. և կազմ և պատրաստ կային միւսանգամ նաւարկելոյ: Ի սկզբան գարնանոյն ի նաւ մտեալ գնային ի Թրակայ. և իբրև ի գլուխ հանէին զմիջոցի վայրացն նաւարկութիւն մինչև զՍիկիդիա, անդ հասեալ՝ իսկ և իսկ տարին վախճանէր. և անցուցանէին անդ գերկրորդ ևս ճմեռնն. ի քաղաքս խառն ընդ եղիմացիս ի սիկիդացոց աշխարհն բնակէին: Իբրև ժամանակք նաւարկութեանց հասանէին, չուեալ ի կղզւոյն՝ անցանէին ընդ Տրուէնական ծովն համատարած. և իբրև գայն ի գլուխ հանէին, հասանէին ի Ղովբենտոս՝ յաբորիգենացոց ծովեզրն՝ յընդմիջել ամարայնոյն. և առնուին գաշխարհն, և բնակէին ի Ղաւիւնիոն. և կատարէին գերկրորդ տարի յառէն Իդիոնի... Իսկ Էնիաս մեհնիւրք և այլ ևս կազմածովք գտեալ կազմէր զբազում վայրս... Իսկ ի միւսում տարւոջն՝ որ է երրորդ յելիցն, տրովացոց միայն թագաւորեաց: Բայց ի չորրորդումն ի վախճանել Ղաոտինայ՝ զթագաւորութիւնն իսկ յինքն առնոյր՝ վասն խնամութեանն ընտանութեան և ժառանգութեան ի Ղաւիւնիայ գալոյ յետ Ղաոտինեայ մահուն... Պատերազմի ինչ և սաստիկ կռուոյ վասն նորին իրաց գոռալոյ, Ղաոտինոս մեռանի, և Տուռնոս, և այլք բազումք. սակայն ունէին որ ընդ Էնէայն Էին. և ի նմանէ գոր ի խնամութենէն եկն իշխանութիւնն՝ առնոյր Էնիաս. թագաւորեալ ամս Գ. յետ Ղաոտինայ վախճանին՝ ի չորրորդ ամին մեռանէր ի պատերազմի... Յետ Էնէայ ի մարդկանէ վճարելոյ՝ յւթնե-

ղից ևս, որ ընդ նոսա Էին փախստականք. և կազմ և պատրաստ կային միւսանգամ նաւարկելոյ: Ի սկզբան գարնանոյն ի նաւ մտեալ գնային ի Թրակայ. և իբրև ի գլուխ հանէին զմիջոցի վայրացն նաւարկութիւն մինչև զՍիկիդիա, անդ հասեալ՝ իսկ և իսկ տարին վախճանէր. և անցուցանէին անդ գերկրորդ ևս ճմեռնն. ի քաղաքս խառն ընդ եղիմացիս ի սիկիդացոց աշխարհն բնակէին: Իբրև ժամանակք նաւարկութեանց հասանէին, չուեալ ի կղզւոյն՝ անցանէին ընդ Տրուէնական ծովն համատարած. և իբրև գայն ի գլուխ հանէին, հասանէին ի Ղովբենտոս՝ յաբորիգենացոց ծովեզրն՝ յընդմիջել ամարայնոյն. և առնուին գաշխարհն, և բնակէին ի Ղաւիւնիոն. և կատարէին գերկրորդ տարի յառէն Իդիոնի... Իսկ Էնիաս մեհնիւրք և այլ ևս կազմածովք գտեալ կազմէր զբազում վայրս... Իսկ ի միւսում տարւոջն՝ որ է երրորդ յելիցն, տրովացոց միայն թագաւորեաց: Բայց ի չորրորդումն ի վախճանել Ղաոտինայ՝ զթագաւորութիւնն իսկ յինքն առնոյր՝ վասն խնամութեանն ընտանութեան և ժառանգութեան ի Ղաւիւնիայ գալոյ յետ Ղաոտինեայ մահուն... Պատերազմի ինչ և սաստիկ կռուոյ վասն նորին իրաց գոռալոյ, Ղաոտինոս մեռանի, և Տուռնոս, և այլք բազումք. սակայն ունէին որ ընդ Էնէայն Էին. և ի նմանէ գոր ի խնամութենէն եկն իշխանութիւնն՝ առնոյր Էնիաս. թագաւորեալ ամս Գ. յետ Ղաոտինայ վախճանին՝ ի չորրորդ ամին մեռանէր ի պատերազմի... Յետ Էնէայ ի մարդկանէ վճարելոյ՝ յւթնե-

բորդի իսկ ամին յետ գիղիոնն առնլոյ, Եւբդէոն առ զղատինացոց պետութիւնն, որ անուանեցաւ Ասկանիոս ի փախստին... Յերեսներորդի և յութերորդի ամին թագաւորութեանն՝ ի վախճանել Ասկանայ, առ զթագաւորութիւնն Սիդուրոս՝ եղբայր Ասկանայ յետ Էնեայ մահուն լեալ ի Ղաւինեայ դստերէ Ղատինայ... Յետ ունելոյ Սիդուայ միով սխալ յլ. ամէ զիշխանութիւնն Էնիաս որդի նորին յաշորդեաց զհարստութիւնն. որ միով պակաս քան զԼ. ամ թագաւորեաց: Եւ յետ նորա Ծ. և զմի ամ կալաւ Ղատինոս: Եւ յետ նորա Աղբաս միով սխալ ամս Խ.: Եւ յետ Աղբանայ Եպիսոս (Կապետոս) Զ. ընդ Ի. ամաւ: Ապա Կաղպիս՝ երկու սխալ ի յերեսնէ: Եւ յետ նորա Կաղպետոս մինչև յերեքասան ամ կալաւ զիշխանութիւնն: Ըստ նմանէ Տիբերիոս Ը. ամեայ ժամանակ թագաւորեաց: Սա վախճանեացաւ ի կուրին, որ առ գետեգեր ուրեմն ասի եղեալ, ձիոյ տարեալ արկեալ ի յորձանուտ գետոյն, իւր անուանակից թողոյր զգետն, որ յառաջագոյն Աղբաս կոչէր, և ապա Տիբերիս: Եի Տիբերի պայազատ Ագրիպաս թագաւորեաց ամս ԽԱ.: Եւ յետ Ագրիպայ՝ Ամոզիոս բռնակալ խստապարանց և յԱստուծոյ ասելի՝ միով պակաս քան զԻ.: Որոյ զգիսն անկոսնեալ՝ կազմէր փայլատականց նմանութիւնս, և ճայնատուրս հանգոյն որոտմանց բարբառոց, ահաբեկեալ զմարդիկ՝ թէ աստուած իցէ, արժանի առնէր. անձրեաց և փայլատականց ի նորա տունն ձեպելոյ, ծովալիճն, որ մաւտ յապարանս նորա էր, անյոյս

Ասկանիոս, μετὰ τὸν Αἰνείου θάνατον γενόμενος ἐκ Λαύνας τῆς Λατίνου θυγατρὸς ... Σιλουίου δ' ἐνὸς δέοντα τριάκοντα ἔτη κατασχόντος τὴν ἀρχὴν Αἰνείας υἱὸς αὐτοῦ διαδεξάμενος τὴν δυναστείαν ἐνὶ πλείω τριάκοντα ἐτῶν ἐβασίλευσεν. Μετὰ δὲ τοῦτον ἐν καὶ πεντήκοντα Λατίνος ἤρξεν ἔτη. Ἄλβας δὲ μετὰ τοῦτον ἐνὸς δέοντα τετταράκοντα ἔτη. μετὰ δὲ Ἄλβαν Κάπετος ἔξ ἐπὶ τοῖς εἴκοσιν. ἔπειτα Κάπυς δυεῖν δέοντα τριάκοντα. μετὰ δὲ Κάπυν Κάλπετος ἄχρι τρισκαίδεκα ἐτῶν κατέσχε τὴν ἀρχὴν. ἐξῆς δὲ Τιβερίνος ὀκταετῆ χρόνον ἐβασίλευσεν. τελευτῆσαι δ' οὗτος ἐν μάχῃ παρὰ ποταμῷ γινομένη λέγεται. παρενεχθεὶς δὲ ὑπὸ τοῦ ρεύματος ἐπόνυμον ἑαυτῷ κατέλιπε τὸν ποταμὸν Ἄλβουλαν καλούμενον πρότερον. Τιβερίνου δὲ διάδοχος Ἀγρίππας ἐν καὶ τετταράκοντα ἐβασίλευσεν ἔτη. μετὰ δὲ Ἀγρίππαν Ἀλλώδιος τυραννικόν τι χρῆμα καὶ θεοῖς ἀπεχθόμενον ἐνὸς δέοντα εἴκοσιν, ᾧ περιφρονοῦντι τὰ δαιμόνια κατεσκευάστο κεραυνῶν τε μιμήματα καὶ κτύποι βρονταῖς ἐμφερεῖς, οἷς δεδίττεσθαι τοὺς ἀνθρώπους ὡς θεὸς ἠξίου. ὄμβρων δὲ καὶ κεραυνῶν εἰς τὸν οἶκον αὐτοῦ κατασκηψάντων τῆς τε λίμνης, παρ' ἣν οἰκῶν ἐτόγγανε, πλημμύραν οὐκ εἰωθυῖαν λαβούσης κατακλυσθεὶς πανοίκιος ἀπόλλυται. καὶ νῦν ἔτι διαλαμπύσης τῆς λίμνης ἐν μέρει τινί, ὅταν ὑπονοστήσῃ τὸ νᾶμα καὶ σταθερὸς ὁ βυθὸς γένηται, παστάδων ἐρείπια καὶ ἄλλα οἰκήσεως ἴχνη φαίνεται. Ἄουεντίνος δὲ παρὰ τούτου τὴν δυναστείαν διαδεξάμενος, ἀφ' οὗ τῶν ἐπτὰ λόφων τις ἐπόνυμος ἐγένετο τῶν συμπεπολισμένων

ըում, լատինացիների իշխանությունը գրավեց Եվրիկոնը, որ փախուստի ժամանակ վերանվանվել էր Ասկանիոս... Երբ Ասկանիոսը վախճանվեց իր թագավորության երեսունութերորդ տարում, իշխանությունը վերցրեց Ասկանիոսի եղբայր Սիվիուսը, որ ծնվել էր Լատինոսի դուստր Լավինիայից Էնեասի մահվանից հետո... Սիվիուսին, քսանինը տարի իշխելուց հետո, հաջորդեց նրա որդի Էնեասը, որը թագավորեց երեսունից մեկ տարի պակաս: Նրանից հետո հիսունմեկ տարի իշխեց Լատինոսը, իսկ նրանից հետո՝ Ալբասը՝ երեսունինը տարի: Ալբասից հետո՝ Եպիսոսը (Կապետոսը)՝ քսանվեց տարի, ապա՝ Կաղպիսը (Կաղիսը), երեսունից երկու տարի պակաս: Նրանից (Կաղիսից) հետո Կաղպետոսը իշխանությունը պահեց տասներեք տարի: Հետո ութ տարի թագավորեց Տիբերիոսը: Սա զոհվեց կովում, որ, ասում են, տեղի ունեցավ մի գետի մոտ, քանի որ ձին տարավ գցեց նրան գետի հորձանուտը (հոսանքից քշված *փ/ս*. քանի որ ձին... հորձանուտը), և իր անունով կոչված թողեց գետը, որ նախկինում կոչվում էր Ալբաս (Ալբուլա), իսկ հետո՝ Տիբերիս (*չ/ք* իսկ հետո Տիբերիս): Տիբերիոսուի հաջորդ Ագրիպասը թագավորեց քառասունմեկ տարի, իսկ Ագրիպասից հետո՝ Ամոլիոսը (Ալուդիոսը), որ խիստ (բռնակալ) բարք ուներ և ասելի էր աստծուն (աստվածներին), քսանից մեկ տարի պակաս: Անարգելով աստվածներին՝ նա կայծակի նմանություն էր ստեղծում ու ամպրոպ հիշեցնող ճայներ արձակում և համարում, թե ահա-

սովորութեամբ ի հեղեղ դարձեալ՝ ողողանէր գտունն. և այնպէս կործանեալ համօրէն տամբն հանդերձ սատակէր: Եւ այժմ իսկ ի ծովալճին ի կողմանս միում, յորժամ խաղացք շուրջն ցածնուցուն, և խաղաղեալ խորն հանդարտիցէ, առաջատից նշմարանք երևին, և այլ ևս շինուածոց կերպարանք: Իսկ ի սմանէ Աւենտինոս առ զհարստութիւնն, յորմէ մի յւթն բլրոցն անուանեցաւ, որ ի մէջ քաղաքին հռոմայեցոցն են. զԼէ. ամ կալաւ զիշխանութիւնն: Յետ սորա Պրոկաս ամս ԻԸ.: Ապա Ամոզիոս, որ դատախազութեամբ ունէր զթագաւորութիւնն. քանզի Նէմէտորայ անկ էր, որ էր նորա երէց եղբայր. զԽԲ. ամս բռնակալ լինէր: Եւ ի մեռանել Ամոզի յՌոմեղայ և յՌեմայ ազնուական օրիորդէն որդւոցն, զորմէ յետոյ ևս ասացի, յետ նորա մահուն՝ առնոյր աւրինաւք զհարստութիւնն Նէմէտովր հայր մաւր պատանեկացն: Եւ ի միւսում ամի իշխանութեանն Նէմէտովրի՝ յերեքհարիւրորդում յերեսներորդում յերկրորդում ամի յետ զԻղիոն առնլոյ՝ վարատականս առաքէին Աղբանացիք ի պետութեան Ռոմիղայ և Ռեմայ և շինէին զՀռոմ ի նմին ամին՝ յւթներորդում ողոմպիադին...

ἐγένετο τῶν συμπεπολισμένων τῇ Ῥώμῃ, τριάκοντα καὶ ἑπτὰ ἔτη τὴν ἀρχὴν κατέσχευ. Πρόκας δὲ μετὰ τοῦτον ἔτη εἴκοσι καὶ τρία. ἔπειτα Ἀμόλιος οὐ σὺν δίκη τὴν βασιλείαν κατασχὼν Νεμέτορι προσήκουσαν, ὃς ἦν αὐτῷ πρεσβύτερος ἀδελφός, δύο καὶ τετταράκοντα ἔτη δυναστεύει. Ἀμολίου δὲ ἀναιρεθέντος ὑπὸ Ῥωμόλου καὶ Ῥώμου τῶν ἐκ τῆς ἱερᾶς κόρης γενομένων, ὡς αὐτίκα λεχθήσεται, μετὰ τὸν ἐκείνου θάνατον ἀπολαμβάνει τὴν κατὰ νόμον δυναστείαν Νεμέτωρ ὁ τῶν νεανίσκων μητροπάτωρ. τῷ δ' ἐξῆς ἔτει τῆς Νεμέτορος ἀρχῆς, δευτέρῳ δὲ καὶ τριακοστῷ καὶ τετρακοσιοστῷ μετὰ τὴν Ἰλίου ἄλωσιν, ἀποικίαν στείλαντες Ἀλβανοὶ Ῥωμόλου καὶ Ῥώμου τὴν ἡγεμονίαν αὐτῆς ἐχόντων κτίζουσι Ῥώμην ἔτους ἐνεστώτος πρώτου τῆς ἐβδόμης Ὀλυμπιάδος...

բեկում է մարդկանց՝ իբր ինքն աստված է: Սակայն նրա տան վրա անձրև ու կայծակ տեղաց, և նրա ապարանքի մոտ գտնվող լիճն անսովոր կերպով շրաշատ դառնալով՝ տունը հեղեղեց, և նա, ամբողջ տնով կործանվելով, մեռավ: Անգամ հիմա լիճը մի կողմում (+ թափանցիկ է դառնում), երբ շրեբի հոսանքներն իջնում են ու խորքը հանդարտվում է, և երևում են սենյակների ավերակներ ու շինությունների (բնակության) այլ հետքեր: Սրանից ստանալով տերությունը՝ Ավենտինուսը (Ավենտինուսը), որի անունով կոչվեց Հռոմի քաղաքամեջի (Հռոմով միավորված) յոթ բլուրներից մեկը, իշխանությունը պահեց երեսունյոթ տարի: Սրանից հետո Պրոկասն էր՝ քսանութ տարի: Այնուհետև Ամուլիուսը, անիրավությամբ գրավելով թագավորությունը, որ պատկանում էր նրա ավագ եղբայր Նեմետորին, քառասուներկու տարի բռնակալ եղավ: Երբ Ամուլիուսը սպանվեց մի ազնվական օրիորդից ծնված Հռոմուլուսի և Հռեմուսի ձեռքով, ինչի մասին հետո կպատմվի, նրա մահվանից հետո իշխանությունն օրինավոր կերպով ստացավ պատանիների մայրական պապ Նեմետորը: Նեմետորի իշխանության հաջորդ տարում՝ Իլիոնի առումից հետո երեք հարյուր երեսուներկուերորդ տարում, Ալբայի բնակիչները Հռոմուլուսի և Հռեմուսի գլխավորությամբ գաղութ հիմնեցին և կառուցեցին Հռոմն այն թվականին, որ յոթերորդ օլիմպիադայի տարին էր...

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 172 = Sync. 226.14.

Ռոմոս և Ռոմիլոս ծնան Արէի Պօմոս կաի Պօմոլոս զՅԵՆՆԻ- Արեսն ու Իլիան ունեցան  
և Էիլիայ: Թիսան Մրի կաի Մրի: Լուծուսին և Լուծուսին:

Սամուէլ Անեցի 53.

Յետ Գ. ամաց առնլոյն զԵղիոն թագաւորէ լատինացւոց, Բ. ամաւ յառաջ քան զՍամուսովն, որ է ԻԹ. ամ Տաւտանեայ, զառաջինն Ենիաս ամս Գ.:

Իլիոնի առումից երեք տարի անց լատինացիներին առաջինը՝ երեք տարի, թագավորեց Էնեասը Սամսոնից երկու տարի առաջ, որը Տավտանեսի քսանիներորդ տարին է:

Միխայէլ Ասորի Ա 57.

Թագաւորեցին լատինացիք, որ կոչին Լուծմայեցիք: Առաջին թագաւորն Անիաս անուն:

Թագավորեցին լատինացիները, որ կոչվում են Հոմեացիներ: Առաջին թագավորի անունն էնեաս էր:

Միխայէլ Ասորի Բ 38.

Թագաւորեցին լատինացիքն, որ կոչեցան Լուծմայեցիք: Առաջին թագաւորն Անիաս՝ ամս երեք:

Թագավորեցին լատինացիները, որ կոչվեցին Հոմեացիներ: Առաջին թագավորի անունն էնեաս էր՝ երեք տարի:

Միխայէլ Ասորի Բ 35.

Թագաւորէ Լուծմայեցւոց Ենիաս և այլ թագաւորք 16 մինչև ցՌոմիլոս, որ զԼուծ շինեաց ամս 426:

Հոմեացիներին թագավորեց Էնեասը և այլ թագավորներ՝ մինչև Լուծուսուս, որը Հիմնադրեց Լուծը 426 թվականին:

Միխայէլ Ասորի Ա 80.

Եգեկիա ... ամս քսան և ինն. և թագաւորեաց լատինացւոցն Լուծուսուս, և շինեաց զԼուծմ յանուն իւր. կամ ըստ ոմանց յանուն դստերն որում անունն էր Ռոմէ<sup>1</sup>:

Եգեկիա ... քսանինը տարի. լատինացիներին թագավորեց Լուծուսուսը և Հիմնադրեց Լուծն իր անունով, կամ ըստ ոմանց՝ իր դստեր անունով, որի անունն էր Ռոմե:

Միխայէլ Ասորի Բ 47.

Թագաւորեաց ի վերայ լատինացւոցն Ռոմելոս, ամս ինն և տասն: Այս Ռոմելոս յոյժ ամբարտաւանեալ ի վարս իւր՝ երկնառաք հրով այրեցաւ արքունեաւք իւրովք:

Լատինացիներին տասնինը տարի թագավորեց Լուծուսուսը. այս Լուծուսուսը, վարքով ամբարտաւան դառնալով, իր արքունիքի հետ այրվեց երկնքից առաքված հրով:

<sup>1</sup> Միխայել Ասորու ասորերեն սկզբնագրում, ըստ Շաբոյի ֆրանսերեն թարգմանության, հատվածն այսպես է. «Իտալիայի այս թագավորները կոչվում էին լատինացիներ, մինչև որ Հռոմուսը կառուցեց Հռոմը և այնտեղ մեծ շինարարություն ծավալեց ... Ողջ ժողովուրդն այսպիսով կոչվեց հռոմեացիներ» (Chronique de Michel le Syrien, livre IV, chapitre XVI, p. 81):

Առաքել, Լուծումն 348.

Ի Հուսում քաղաք կին մի երկու որդիս ծնաւ պոռնկութեամբ, և տարեալ ընկեց արտաքոյ պարսպին՝ զի մի գիտասցեն մարդիկք՝ թէ ի նմանէ է. զոր եկեալ գայլքն տարան զմանկունան և սնուցին, և ի չափ հասակի հասեալ արձակեցին. և այն երկու մանկունքն եղեն իշխանք և շինաւղք Հուսումայ, որոց անուանքն են Ռեմոս և Ռեմուլոս:

Մի կին Հուսում քաղաքում երկու որդի ծնեց պոռնկական կապից և տարալ գցեց պարսպից դուրս, որպեսզի մարդիկ չիմանան, որ իրենից են: Գայլերը եկան, տարան մանուկներին ու սնուցեցին և, երբ նրանք մեծացան, ազատ արձակեցին: Եվ այն երկու մանուկները դարձան Հուսումի իշխաններն ու հիմնադիրները. նրանց անուններն են՝ Հեմոս և Հեմուլոս:

## 154. Նարկիսոս

Նարկիսոսը բնուացի շատ գեղեցիկ որսորդ էր: Նա հպարտանում էր, որ մերժում է բոլորի սերը: Հատուցման աստվածուհի Նեմեսիսը վրեժ լուծեց՝ ստիպելով նրան նայել լճակի մեջ և, տեսնելով իր արտացոլված պատկերը, ինքնասիրահարվել: Անհույս սիրուց նա հավից-մաշվեց ու մեռավ (*Ov. Met.* 3, *Paus.* 9.31.7) կամ ինքնասպան եղավ, և նրա արյունից բուսնեց նարգիզ ծաղիկը (*Conon* 24 *apud Phot. Bibl.* 186.134b-135a):

Գրիգոր Մագիստրոս 37 (ՁԱ).3.

Բայց քեզ գերազանժ պանծալովդ ըստ Նարկիսեայ յորսոց դարձեալ պատահեսցի աղբիւր:

Բայց քեզ, որ պարծանքով հպարտանում ես, թող Նարկիսոսի պես որսից վերադառնալիս աղբյուր պատահի:

Հմմտ. Philostr. *Imag.* 1.23.1.1-5.

Ἡ μὲν πηγὴ γράφει τὸν Νάρκισσον, ἡ δὲ γραφὴ τὴν πηγὴν καὶ τὰ τοῦ Ναρκίσσου πάντα. μειράκιον ἄρτι θήρας ἀπηλλαγμένον πηγῆ ἐφέστηκεν ἔλκον τινὰ ἐξ αὐτοῦ ἡμέρον καὶ ἐρῶν τῆς ἐαυτοῦ ὄρας, ἀστράπτει δέ, ὡς ὀρᾶς, ἐς τὸ ὕδωρ.

Աղբյուրը պատկերում է Նարկիսոսին, իսկ նկարը (Նարկիսոսին արտացոլող աղբյուրը պատկերող որմնանկարը)՝ կ'աղբյուրը, կ'Նարկիսոսի ողջ պատմութիւնը: Հենց նոր որսից վերադարձած պատանին կանգնած է աղբյուրի մոտ՝ ինքն իր միջից մի տեսակ տենչանք ճառագելով ու սիրահարվելով իր գեղեցկությանը. և, ինչպես տեսնում ես, շողարձակում է ջրի մեջ:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 1. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

#### 1.1. Աստվածները և նրանց հատկանիշները

##### 1.1.1. Ձև-Արամազդ

Գործք ԺԴ 11-12 = Acta 14.11-13.

Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս, և զՊաւղոս Հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին: Իսկ քուրմն Դիայ որ կայր առաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ի դուռն հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել:

ἐκάλουν τε τὸν Βαρναβᾶν Δία, τὸν δὲ Παῦλον Ἑρμῆν, ἐπειδὴ αὐτὸς ἦν ὁ ἡγούμενος τοῦ λόγου. ὁ τε ἱερεὺς τοῦ Διὸς τοῦ ὄντος πρὸ τῆς πόλεως ταύρου καὶ στέμματα ἐπὶ τοὺς πυλῶνας ἐνέγκας σὺν τοῖς ὄχλοις ἤθελεν θύειν.

Բառնաբասին կոչում էին Դիոս (Ձևս), իսկ Պողոսին՝ Հերմես, քանի որ նա էր գլխավոր խոսողը: Իսկ Ձևսի քուրմը, որ քաղաքի դիմաց էր, ցլեր ու պսակներ բերելով դռների մոտ, բազմության հետ միասին ցանկանում էր զոհ մատուցել:

Եւսեբիոս, Փրոնիկոն Ա. 25.

զԲեղայն, որ յունարէն Դիոս թարգմանի, իսկ հայերէն Արամազդ:

Բելին, որ հունարեն թարգմանվում է՝ Ձևս, իսկ հայերեն՝ Արամազդ:

Հմմտ. Sync. 30.14.

Τὸν δὲ Βῆλον, ὃν Δία μεθερμηνεύουσι.

Բելին, որ թարգմանվում է՝ Ձևս:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 364.

Ոչ գիտեմ, թէ ով է աստուածն, քանզի եցոյց մեզ զԱրամազդայ և զԱմոնայ կերպարանն. քանզի զԱրամազդայ պատկերն արծիւ նմանեցուցանէին և զԱմոնայն՝ վիշապ:

Չգիտեմ, թէ ով է աստվածը, քանի որ ցույց է տվել մեզ Արամազդի (Ձևսի) և Ամոնի կերպարանքը: Արամազդի պատկերն արծվի էին նմանեցնում, իսկ Ամոնինը՝ վիշապի:

Փիլոն, լին. 2.64.

Ոմանք կարծեն աղեղն ասել զ'ի յոմանց կոչեցեալ Արամազդայ գաւտի, ի ձևոյն զհաստատուն նշանակ առեալ վասն ծիածանին... Իսկ Արամազդայ գաւտիդ առանձինն գատ որիչ բնութիւն ինքն ըստ ինքեան ոչ ունի, այլ է՝ արեգակնային ճառագայթիցն երևոյթ ի գէջ յամպ... Բայց սակայն և զայն երկրորդ անգամ

Ոմանք կարծում են, թէ աղեղ է կոչվում այն, ինչ ուրիշներն անվանում են Արամազդի (Ձևսի) գոտի, ձևի միջոցով հստակ ակնարկ անելով ծիածանին... Իսկ Արամազդի գոտին ինքնին առանձին բնութիւն չունի, այլ արեգակնային ճառագայթների երևալն է խոնավ ամպի մեջ... Սակայն, երկրորդ, նաև պետք այն ասել,

ասելի է, զի և ի տուրնջեան՝ զի ամպոյ մթացելոյ՝ Արամազդայ գաւտին յառաջագոյն ոչ երևի:

որ անգամ ցերեկով, երբ ամպը մթնում է, Արամազդի գոտին չի երևում:

Թովմա Արծրունի Ա Ա [64].

Ուխտ յաւիտենից հաստատեալ՝ զաղեղն իմ եղից յամպս, որ է ծիածանդ, զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ գաւտի Արամազդայ: Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ, զիւրդ իցէ, զի Արամազդ ի գաւտոյ իւրմէ խաշիցի հրամանով Բէլայ:

Հավիտենական ուխտ հաստատելով. «Իմ աղեղը դնելու եմ ամպի մեջ» (Ծնն. Թ 13), որը ծիածանն է: Ոմանք այն համարում են ամպից գառված հուր, իսկ տարրապաշտների որդիները՝ Արամազդի գոտի: Իսկ եթե Բելն Արամազդի հրամանատուն լինի, ինչպե՞ս կլինի, որ Արամազդը Բելի հրամանով իր գոտուց զրկվի<sup>1</sup>:

### 1.1.2. Կրոնոս-Բել-Նեբրովթ<sup>2</sup>

Մովսէս Խորենացի Ա 7 [27].

Ասեմ զԿռոնոսդ անուն և զԲէլ՝ Նեբրովթ լեալ է:

Բայց ես ասում եմ, որ Կրոնոս և Բել կոչեցյալը Նեբրովթն (Ծնն. Ժ 8-12) է:

Դրասխ. Բ [364].

Նեբրովթն, որ է Բէլ:

Նեբրովթը, որ Բելն է:

Դաւիթ Բաղիշեցի 299.

Բաբ. սա որդի Նեբրովթայ, որ էր Բէլ և Կռոնոս:

Բաբը որդին էր Նեբրովթի, որը Բելն էր և Կրոնոսը:

<sup>1</sup> «Ձրկվել» բայն է իր թարգմանության մեջ օգտագործել մաս Վ. Վարդանյանը (Թովմա Արծրունի և Անանուն, *Պարմություն Արծրունյաց փան*, բնագիրը պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վարդանյան, Երևան, 1985, 33): Նույն ձևով՝ «лишился», թարգմանել է Մ. Դարբինյանը (Товма Арцруни и Аноним, *История дома Арцруни*, перевод с древнеармянского, вступительная статья и комментарии М. О. Дарбинян-Меликян, Ереван, 2001, 85): «Խաշեմ»/«խարշեմ» բայը նշանակում է՝ «այրել», «եփել», բայց դա այստեղ բոլորովին անհասկանալի է: Բնագիրը կարող է աղավաղված լինել:

<sup>2</sup> Հմմտ. Ծնն. Ժ 8-9. «Եւ Քուշ ծնաւ զՆեբրովթ. նա սկսաւ լինել հսկայ ի վերայ երկրի: Եւ նա էր սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ»: Հրեական ավանդության մեջ Նեբրովթի կերպարը մեկնաբանվել է՝ որպես Աստծո ղեմ ապստամբի. Փիլոնի թարգմանիչն Աստվածաշնչի նշված հատվածի ἐναντίον κυρίου բառերը թարգմանել է՝ «սկայ որսորդ ընդդէմ Աստուծոյ» (Փիլ. լին. 2.82, էջ 165. ἐναντίον նախադրությունը կարելի է հասկանալ և՛ որպես «առջև», և՛ որպես «ընդդէմ»): Այդպիսի թարգմանությունը համապատասխանում է Փիլոնի մեկնաբանությանը. տե՛ս Փիլ. լին. 2.82 [165-166]. «Ընդէ՞ր Քուշ ծնանի զՆեբրովթ. որ սկսաւ սկայ որսորդ լինել ընդդէմ տեառն, և վասն այնորիկ ասասցեն, իբրև զՆեբրովթ՝ սկսայ որսորդ ընդդէմ աստուծոյ: Յիրաւի ունելով զցան և զցիր բնութիւնն, զոր հոգևոր կապ ոչ ամփոփեալ պնդէ, և ոչ ոգոյն և ոչ բնութեանն և ոչ բարուց հաստատութեանն հայր, զօրէն հսկայի զերկրայինսս յարգելով և պատուելով քան զերկնայինսն, զայն որ ի վերայ հսկայիցն և տիտանեանցն առասպելն է՝ ճշմարիտ առնեն»: Այստեղից հասկանալի է դառնում նույնացումը Կրոնոսի հետ, որը նույնպես ապստամբել էր իր հայր Ուրանոսի դեմ՝ կտրելով նրա ամորձիքը (տե՛ս դրվագ 2): Կրոնոսի հետ Բելի նույնացումն այնքան էլ սովորական չէ. վերը նա նույնացվել է Չևսի հետ: Հմմտ. մաս ստորև՝ հավելված 1.1.7-ում Օձնեցուց մեջբերված հատվածը, որտեղ նույնացվում են Չևսը, Բելը և Նեբրովթը:



### 1.1.3. Հերակլես

Եւսեբիոս, Քրոնիկոն Բ 106 = Sync. 122.8-9.

Հերակլէս ի Փիւնիկէ ճանաչէր, Դեսանդաս յորջորջեալ. որ և ցայժմ իսկ ի գամրաց և ի հեղիացւոց անուանի:

Ἡρακλέα τινές φασιν ἐν Φοινίκῃ γνωρίζεσθαι, Διβδᾶν (Scal. Διωδᾶν) ἐπιλεγόμενον. ὃς καὶ μέχρι νῦν ὑπὸ Καππαδόκων, καὶ Ἰλίων (marg. Ἡλιαίων) οὕτω καλεῖσθαι.

Հերակլեսը հայտնի էր Փյունիկիայում՝ Դեսանդաս (Դիբդաս /Դիոդաս)<sup>1</sup> մականունով. այդպես է այժմ կոչվում կապադովկացիների և իլիոնցիների մոտ:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա 58-59.

Նաբուգոդոնոսորոս, որ ուժեղագոյն էր քան զՀերակլէս:

Նաբուգոդոնոսորը, որ ավելի ուժեղ էր, քան Հերակլեսը:

Մովսէս Խորենացի Բ 8 [114].

Մեծագաւրն Նաբուգոդոնոսոր, որ ուժգնագոյն էր քան զՀերակլէս:

Մեծագոր Նաբուգոդոնոսորն ավելի ուժեղ էր, քան Հերակլեսը:

Ասողիկ Ա Ե [659].

Նաբուգոդոնոսոր ուժգնագոյն քան զԵրակլէս:

Նաբուգոդոնոսորն ավելի ուժեղ էր, քան Հերակլեսը:

Մովսէս Խորենացի Ա 31 [85].

Վահագն ... Զայս երգելով ոմանց փանդոամբ, լուաք մերովք իսկ ականջաւք: Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեսայ նահատակութիւնսն նմա երգէին:

Վահագն ... Մենք մեր ականջով ենք լսել՝ ինչպէս են ոմանք սա երգում փանդիւններով: Դրանից հետո երգի մեջ ասում էին, թե կռվել է վիշապների հետ ու հաղթել, և Հերակլեսի սխրանքներին շատ նման բաներ էին երգում նրա մասին:

Յովհաննէս Դրասխ. Բ (368)

զՎահագն, զոր ի կտնտոցահար աղբբախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել, և ընդ քաջին Հերակլեսայ նահատակութեանցն գնա համեմատել:

Վահագնին, որի մասին կտնտոցի լարերի ձայնով ուղեկցվող երգերում համբավում էին, թե կռվել է վիշապների դեմ ու հաղթել, և համեմատում էին նրան քաջ Հերակլեսի սխրանքների հետ:

Դաւիթ Բաղիշեցի 307.

Վահագն... ասեն, հանգոյն Հերակլայ, և ընդ վիշապաց կռուեալ և յաղթեալ:

Վահագնը, ասում են, Հերակլեսի նման կռվել է վիշապների դեմ և հաղթել:

<sup>1</sup> Եվսեբիոսի լատիներեն թարգմանության մեջ Հիերոնիմուսը կոչում է նրան Desanaus. տե՛ս *Hieronymi Chronicon, Patrologia Latina*, tom. 154, p. 517-518: Հնդկաստանում կար մեկ այլ Հերակլես, որն ուներ անհասկանալի «Դիրսանես» մականունը՝ Διρσάνης (Plin. Nat. 6.16, 22; Hesych. s.v. Δορσάνης.):

Մովսէս Խորենացի Բ 8 [115].

Տուրք անուն կոչեցեալ ... կարի իմն անյարմար թուէին և նմա երգ բանից վասն ուժգնութեանն և սրտեայ լինելոյն, որք ո՛չ Սամսոնի և ո՛չ Հերակլեայ և ո՛չ Սաղծկին յարմարին այս գրոյցք:

Տորք կոչեցյալը ... նրա ուժի և քաջասիրտ լինելու պատճառով երգերը նրա մասին պատմում են չափազանց անպատշաճ բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են վայել, ո՛չ Հերակլեսին և ո՛չ Սաղծիկին:

### 1.1.4. Ապոլլոն

Վարք Անտոնի 111-112.

Բարևոք կոչէք զաստուածն ձեր Ապոլոն, այն է կորստական, որ և ոչ զանձն գիտաց պահել:

Լավ եք ձեր աստծուն կոչում Ապոլլոն, այսինքն՝ կորստյան մատնող<sup>1</sup>. նա նույնիսկ ինքն իրեն չկարողացավ պահպանել<sup>2</sup>:

Սոկրատէս 262 = Socr. HE 3.18.3-7.

Քանզի զորս ըստ Անտիոքիա մեհեանն բանալ հրամայել աւճուճն առնուլ որ ի Դափնին Ապոլոնէ փութայր: Իսկ դէն որ բնակեալ էր ի տաճարին երկնչելով ի դրացւոյն, Բաբիդասս ասեմ ի վկայէն, ոչ առնէր պատասխանի, քանզի մերձ էր տապանն յորում մարմին սրբոյն կայր թաքուցեալ:

τὰ γὰρ κατὰ τὴν Ἀντιόχειαν ἰερὰ τῶν Ἑλλήνων ἀνοιγῆναι κελεύσας, χρησμὸν λαβεῖν παρὰ τοῦ ἐν Δάφνῃ Ἀπόλλωνος ἔσπευδεν. Ὡς δὲ ὁ ἐνοικῶν τῷ ἱερῷ δαίμων τὸν γείτονα δεδοικῶς, λέγω δὴ Βαβυλᾶν τὸν μάρτυρα, οὐκ ἀπεκρίνατο, πλησίον γὰρ ἦν ἡ σορὸς ἢ τὸ σῶμα τοῦ μάρτυρος κρύπτουσα...

[Հուլիանոս կայսրը], հրամայելով բանալ Անտիոքի (+ հեթանոսների) մեհյանները, շտապում էր գուշակութուն ստանալ Դափնեում գտնվող Ապոլլոնից: Իսկ տաճարում բնակվող դեռ, վախենալով հարևանից, այսինքն՝ Բաբիլաս վկայից, չէր պատասխանում, քանզի մերձակայքում էր տապանը, որի մեջ թաքնված էր սրբի մարմինը:

Մովսէս Կաղանկատուացի Ա ԺԱ [56].

Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ. Ոչ ինչ բաւական քեզ բաւեմ ասել, որ քան զարեգակն ի վեր գտանիս ... յիրաւի սմա յոյնք Ապոլոնին կարգացին:

Գյուտ եպիսկոպոսի նամակը սուրբ Վաչեին. Ոչինչ չեմ կարող ասել քեզ, որ արեգակից բարձր ես ... հույները սրան իրավացիորեն Ապոլլոն կոչեցին:

### 1.1.5. Ասկլեպիոս

Գրիգոր Նազ., ճառ 5. 5.9 [166] = PG 35.669.34.

զԱւճակալն քո:

τὸν Ὀφιοῦχόν σου.

Քո օճակալին:

<sup>1</sup> Հույները հաճախ Ապոլլոնի անունը ժողովրդական ստուգաբանությամբ կապում էին ἀπόλλυμι – «կորստյան մատնել» բայի հետ:  
<sup>2</sup> Հասկանալի չէ, թե ինչ է ակնարկվում վերջին հատվածում:

Նոննոս 4.1 [66] = Nonnos 5.1.38.

Աւձակալ ասի գոլ Ասկղեպիոս՝ վերատեսուչ բժշկականին:	λέγεται εἶναι οὗτος ὁ Ὀφιοῦχος ὁ Ἀσκληπιός, ἔφορος τῆς ἰατρικῆς.	«Օձակալ» է կոչվում Ասկղեպիոսը՝ բժշկութեան արվեստի վերատեսուչը:
---	--	--

Թովմա Արծրունի, Ը [95].

Ջանազան ծաղկանց, ոչ միայն ի տեսիլ խողտման աչաց և ի զուարճումն հոտոտեկեաց, այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց՝ Ասկղեպեայ վարժամբ:	Ջանազան ծաղիկների, որոնք ոչ միայն ուրախացնում են աչքերն ու զվարճացնում հոտոտելիքը, այլև բժշկական հնարամիտ գիտելիքներով ծառայում են Ասկղեպիոսի հմտութեամբ դեղեր պատրաստելուն:
--	--

### 1.1.6. Անահիտ

Ագաթանգեղոս Ե [1330].

... Եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտաւն մատուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր և թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց, որ է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ծնունդ է մեծի արին Արամազդայ:	... Եթե հանձն չառնես աստվածներին պաշտամունք մատուցել. մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որ մեր ազգի փառքն է ու կենսատուն, որին բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ՝ հունաց թագավորը: Նա է բոլոր զգաստությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնութեան և դուստրը մեծ, քաջ Արամազդի:
---	---

Թադէոսի վկայաբանութիւն 13.

Արամազդ և Անահիտ մեծ աստուածքն, որ են շինութիւն աշխարհիս և փառք մեր թագաւորացս:	Արամազդ և Անահիտ մեծ աստվածները, որոնք մեր երկրի շինությունն ու մեր թագավորների փառքն են:
---	---

Թադէոսի վկայաբանութիւն 16.

... Չար պաշտամանց ձերոց, որ ձանեալք էք Անահտայ կուամոլ դիւացն:	... Ձեր չար պաշտամունքի, որ նվիրել եք կուամոլ Անահիտ դևին:
--	--

Թադէոսի վկայաբանութիւն 9.

Զի՞նչ պակաս էր ձեզ, զի թողէք զմեծ աստուածն Անահիտ, և զմայր աստուածոցն Պիսիդոսին:	Ի՞նչն էր ձեզ պակաս, որ թողեցիք մեծ Անահիտ աստուածն և աստվածների մայր Պոսեյդոսին <sup>1</sup> :
--	--

<sup>1</sup> Պոսեյդոնի «աստվածների մայր» բնորոշումը շփոթության հետևանք է. այն հավանաբար նախապես վերաբերել է Անահիտին:

### 1.1.7. Տարբեր աստվածներ

Փիլոն, Նախախնամութիւն 74.

Գողոց Հերմէս է ամուր ապաստանի, և շանց՝ Գողերի վստահելի ապավենը Հերմեսն է, անառակներինը՝ Արեսը, և բոլորի առաջնորդն Արամազդն (Ջևան) է:

Գրիգոր Նազ., ճառ 4.122 [151-152] = PG 35.661.15-17.

Ի բաց հատցէ գործատու- Եπικοπτέτω τὸν θυμὸν Ἄρης, Թող Արեսը դեն նետի գայթիւնսն Արէս, գարբեցութիւնսն Դիոնիսոս, գաւտարատեցութիւնսն Արտեմիս... մέθην Διόνυσος, μισοξενίαν Ἄρτεμις...

Սոկրատէս 283-4 = Socr. HE 3.23.138-141.

Ոչ ամաչեն բազում մարդիկ աստուածացեալս. և եթէ քաղցունս պատճառով կամ արդարս. գարբեցութեան ծառայեալս զԻռակղոսն ասեմ և զԴիոնիսոսն. և զԱսկղիպիոսն: οὐκ αἰσχύνονται πολλοὺς ἀνθρώπους ἀποθεώσαντες, καὶ εἶθε γε κἂν χρηστοὺς τὸν τρόπον, ἢ δικαίους, ἢ σώφρονας. ἀλλὰ ἀνάγνους, ἀδίκους, μέθην δεδουλωμένους, Ἡρακλέας φημί καὶ Διονύσους καὶ Ἀσκληπιούς. Ջեն ամաչում՝ բազմաթիվ մարդկանց աստվածացնելով, ինչպէս, արժանապես՝ (+ պիտանի մարդկանց), կամ արդարների (+ կամ ողջախոհների, բայց նաև՝ անմաքուրների, անարդարների), արբեցությանը ծառայողների. խոսքս Հերակլեսների, Դիոնիսոսների և Ասկլեպիոսների մասին է:

Սոկրատէս 284 = Socr. HE 3.23.158-162.

Եւ եցոյց Պիւթիայն գայս. «ՋՋևս աստուածոց հւպատոս, և զԱթինա գէծնունդն: Պատուեցէք, ի մահկանացուաց մարմնի թագաւոր, զոր Ջևս անճառելի սերմամբք սերմանեաց, գործակից, աւգուտ մահկանացուաց զԱդեքսանդր թագաւոր»: ἀνεῖλεν ἡ Πυθία τάδε. Ζᾶνα θεῶν ὕπατον, καὶ Ἀθηνᾶν Τριτογένειαν / Τιμᾶτε, βροτέω τ' ἐν σώματι κρυπτόν ἄνακτα, / Ὅν Ζεὺς ἀρίσταις γοναῖς ἔσπειρεν, ἀρωγὸν / Εὐνομίης θνητοῖσιν Ἀλέξανδρον βασιλῆα. Պիթիան գուշակեց հետևյալը. «Աստվածներից գերագույնին՝ Ջևսին ու Տրիտոնածին՝<sup>2</sup> Աթենային պատվեցեք, և մահկանացու մարմնի մեջ (+ ծալտված) արքային, որին Ջևսն է սերմանել անճառելի (լավագույն) սերմով՝ մահկանացուների գործակից, օգնական (օրինապահություն տվող) Ալեքսանդրոս թագավորին»:

<sup>1</sup> «Հւպատոս» փոխառություն է հունարեն ὕπατος – «գերագույն» բառի: <sup>2</sup> «Ջէծնունդն» ընթերցումն աղավաղված է. «Տրիտոնածին» ենթաբառանել ըստ հունարենի. հմմտ. Աթենայի «Տռիտածին» մակդիրը դրվագ 12-ում:

Եղիշէ, Գտիչք 1014.

Ափրողիտա պոռնկութիւն բազմացոյց. Ապողոնն գարանց սպանումն, Արտեմիս՝ զկանանց, Հերմէս՝ գողոց դարան:

Ստեփանոս Սիւնեցի, Գերմ. [531].

Ի ներքս մտանէ և անկարգութիւն և առասպելաբան աստուածաստեղծ վիպասանութիւն հեթանոսաց. զոր յաղագս Դիոսի և Ապողոնեայ և Հերակղեայ զրաբանեն, և ծննդոց նոցին:

Օձնեցի, Պաւղիկ. 38.

Բայց ամբարշտագոյն... այս էր հեթանոսականացն... Ի համեմատութիւն գալով առ միմեանս մարդիկն, որով իւրք նուազեալ գտանէին առ ընկերն՝ նորին պատճառաւ յարարչութեան աստիճանի զգերագանցեալն հանեալ զնէր, և խելագարեալ, ինքն արարած խոստովանիւր լինել: Ըստ այսմ աւրինակի քաղղէացուցն տեսեալ գտիտանեանն գայն վիթխարի և աշխոյժ, վաթսնականգնեան գոլով ըստ երկայնութեան հասակին, իսկ լայնութեամբն վեցաքանակս ունելով կանգունս, վասն որոյ զգերամբարձեալն մարմնոյն տրամադրութեամբ՝ աստուածաւրէն իմն պատուով պատուեցին, և սորա խաւար չարապաշտութեանն զբոլոր տիեզերս ընդ իւրև կալեալ կուրացոյց: Ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով գնորա անուն, քուշացիք Նեբրովթ կոչելով, բաբելացիք՝ Բէլ, փղշտացիք՝ Բահաղ, եղղենացիք՝ Դիոս, պարսիկք՝ Որմբղդ, հայք՝ Արամագղ... Աստուածս անուանեցին զԿոռնոս վասն յոխորտաբար առ կուրարութիւնն յարձակելոյ, զԱրէս՝ վասն արին գոլոյ, զՀերմէս՝ վասն քաջախաւսնակ ճոռոմաբանութեանն, զՋևս՝ վասն անընդհիմամարտ ներհակացն զուզախառնութեան, զայլս՝ վասն այլ իւրիք քաջաբաստիկ զբնականսն ունելոյ որակութիւնս, յորոց անուն և զկուռս պատկերակերպս քանդակեալս աստուածս անուանեցին:

Ափրողիտեն տարածեց պոռնկությունը, Ապոլլոնը՝ տղամարդկանց, Արտեմիսը՝ կանանց սպանությունը<sup>1</sup>, իսկ Հերմեսը գողերի ապաստանն է:

Մեջտեղ է գալիս նաև հեթանոսների անկարգությունն ու առասպելաբան աստվածաստեղծ վիպասանությունը՝ այն ստերը, որ պատմում են Ջևսի, Ապոլլոնի ու Հերակլեսի և նրանց սերունդների մասին:

Բայց հեթանոսների էլ ավելի մեծ ամբարշտությունը հետևյալն էր... Երբ մարդիկ համեմատվում էին միմյանց հետ և մեկը որևէ բանով ընկերոջը զիջում էր, դրա պատճառով գերագանցողին վերաբերվում էին իբրև արարչի, իսկ ինքը խելահեղորեն իրեն արարած էր հայտարարում: Այսպես քաղղեացիները, տեսնելով այն տիտանյանին՝ վիթխարի և աշխույժ, վաթսուն կանգուն հասակով և վեց կանգուն լայնությամբ, մարմնի այսպիսի հսկայական կազմվածքի համար նրան մի տեսակ աստվածային պատվով պատվեցին, և սրա խավար չար պաշտամունքն ամբողջ տիեզերքն իրեն ենթարկելով կուրացրեց: Յուրաքանչյուրը նրանունը փոխեց իր լեզվի համեմատ. Քուշի հետնորդները Նեբրովթ կոչեցին, բաբելացիները՝ Բել, փղշտացիները՝ Բահաղ<sup>2</sup>, հելլենացիները՝ Դիոս (Ջևս), պարսիկները՝ Որմբղդ, հայերը՝ Արամագղ... Աստվածներ անվանեցին Կոռնոսին՝ կուվի մեջ հոխորտաբար նետվելու, Արեսին՝ արի լինելու, Հերմեսին՝ շատախոս ճոռոմաբանության, Ջևսին՝ հսկառակ սեռից չդիմադրողների հետ խառնակվելու, ուրիշներին՝ ինչ-որ այլ նպաստավոր բնական հատկանիշներ ունենալու համար. նրանց անունով նաև պատկերակերպ կուռքեր քանդակելով՝ դրանք աստվածներ անվանեցին:

<sup>1</sup> Ակնարկվում է Նիոբեի որդիների սպանությունն Ապոլլոնի և դուստրերինը՝ Արտեմիսի ձեռքով (դրվագ 82):  
<sup>2</sup> Հմմտ. Թոմոց ԻԲ 41. «Եհան գնա յարձանն Բահաղու»:

Թովմա Արծրունի Ա Ե (93).

Դու [Երուանդ] ի թագաւորելդ քո որոյ երդմունսն արարեալ յԱրտեմի և յԱրամազդ...

Դու [, Երուանդ,] քո թագաւորելու ժամանակ երդվեցիր Արտեմիսով և Արամազդով...

Գրիգոր Մագիստրոս. 47 (ԽԹ).4.

զԵլլենացւոց զբազմավէպ առասպելաբանութիւնս, որ յաղագս Կռաւնեայ, Արամազդայ, Եռակլի, Դիոնիսեայ, Ապոլոնի, Աքիլայ, Դեմետրի, Աթենայ, Պոսիդոնի, Կեկրոփսայ, Մողպեայ, ևս և Բեղա, Արտեմա:

Հույների բազմազան առասպելները՝ Կրոնոսի, Արամազդի, Հերակլեսի, Դիոնիսոսի, Ապոլլոնի, Աքիլլեսի, Դեմետրի, Աթենայի, Պոսեյդոնի, Կեկրոպսի, Եվմոլպոսի (՞)<sup>1</sup>, Արտեմիսի մասին:

Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց, 601ա

Նա ասէ, որ մեր Աստուած է, ոչ է իբր Հեթանոսաց աստուածսն, զի ոմն Տրոյ իշխէ և ոմն Չրոյ. Պիսիդոն ծովու է արարիչ և Հեփեսոս Տրոյ, Դեմետր երկրի և Փայթիոն երկնի:

Նա, ասում է, որ մեր Աստվածն է, նման չէ Հեթանոսների աստվածներին, քանի որ մեկը Տրին է իշխում, մյուսը՝ Չրին. Պոսեյդոնը ծովի ստեղծողն է, Հեփեսոսը՝ Տրի, Դեմետրը՝ երկրի և Փայթիոնը՝ երկնքի:

Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց, 788ա

Հեթանոսաց աստուածաբանքն երկնի այլ իշխան ասէին, և ծովու այլ և երկրի գայլ ոք. նոյնպէս Տրոյ և այլ տարեբց, քանզի յերկինս ասէին իշխել զԱրամազդ, ի ծով զՊիսիդոն, և Տրոյ արարիչ զՀեփեսոս: Եւ ըստ այսոցիկ մոլորեցան ի գանազան կռոց երկրպագութիւն:

Հեթանոսների աստվածաբանքն ասում էին, որ երկնքի իշխանը մեկն է և ծովինը մեկ ուրիշը և երկրինը՝ այլ ոք. նույնպես է Տրի և մյուս տարրերի պարագայում, քանզի երկնքում, ասում էին, իշխում է Արամազդը, ծովում՝ Պոսեյդոնը, և հոլը ստեղծողը Հեփեսոսն է: Եվ ըստ այդմ մոլորվելով գանազան կռուքեր էին երկրպագում:

## 1.2. Պատկերներ, բազիմներ, մեխաններ

Գործք Առաքելոց ԺԹ 24-34.

Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմիս դից. և տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ. որ ժողովեացն իսկ և զձեռագէտս արուեստին, և ասէ. Արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ: Եւ տեսանէք՝ և լսէք եթէ

Δημήτριος γάρ τις ὀνόματι, ἀργυροκόπος, ποιῶν ναοὺς ἀργυροῦς Ἀρτέμιδος παρείχετο τοῖς τεχνίταις οὐκ ὀλίγην ἐργασία, οὗς συναθροίσας καὶ τοὺς περὶ τὰ τοιαῦτα ἐργάτας εἶπεν, Ἄνδρες, ἐπίστασθε ὅτι ἐκ ταύτης τῆς ἐργασίας ἡ εὐπορία ἡμῖν ἐστίν, θεωρεῖτε καὶ ἀκούετε ὅτι οὐ μὴ

Դեմետրիոս անունով մեկը՝ արծաթագործ, Արտեմիս դիցուհու արծաթե մեհաններ էր սարքում և վարպետներին ոչ քիչ շահ բերում. հավաքելով նրանց և այդ արվեստի մասնագետներին՝ ասաց. «Ո՛վ մարդիկ, դուք ինքներդ գիտեք, որ մեր շահն այս գործից է. նաև տեսնում ու

<sup>1</sup> «Մողպեայ»՝ հավանաբար Եվմոլպոսի անունն է՝ աղավաղված (տե՛ս դրվագ 114). Եվմոլպոսը, ինչպես և Աքիլլեսն ու Կեկրոպսը, աստված չէ: Իսկ «ևս և Բեղա»՝ աղավաղված ընթերցում է, որը դժվար է մեկնաբանել:

ոչ միայն գեփեսացւոց, այլ գրեթէ ամենայն իսկ ասիացւոց՝ Պաւղոսս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս, ասել թէ ոչ են աստուածք ձեռագործք: Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմս՝ գալ ի յանդիմանութիւն. այլ և զմեծին աստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարեալ. նա՛ և քակելոց ևս իցէ մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիայ՝ և տիեզերք պաշտեն: Եւ զայս իբրև լուան, լի եղեն բարկութեամբ, աղաղակէին և ասէին, մեծ է Արտեմիս եփեսացւոց: Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ. դիմեցին առ հասարակ ի թատրոնն, յափշտակեցին զՔայրոս և զԱրիստարքոս մակեդոնացի՝ զուղղեկիցսն Պաւղոսի: Բայց Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն: Ոմանք և յասիակետացն՝ որ էին նորա բարեկամք, յղէին առ նա՛ և աղաչէին, մի տալ զանձն ի թատրոնն: Այլք այլ իմն աղաղակէին յամբոխին. զի էր ժողովն նոցա խռովեալ. և բազումք ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն ոյր ժողովեալ իցեն: Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զԱղեքսանդրոս. և իբրև ածին զնա յառաջ հրեայքն, Աղեքսանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր պատասխանի առնել ամբոխին: Իբրև գիտացին թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբրև ժամ երկուս աղաղակել, թէ մեծ է Արտեմիս եփեսացւոց:

Սարգիս Կուռդ, Կաթ. 266.

... Որք Յեփեսոս քաղաքի աղաղակէին բարկութեամբ և ասէին. Մեծ է Արտեմիս եփեսացւոց, և լցաւ քաղաքն խռովութեամբ, և դիմեցին առ

նոն Էփեսոս *ἀλλὰ* σχεδὸν πάσης τῆς Ἀσίας ὁ Παῦλος οὗτος πείσας μετέστησεν ἱκανὸν ὄχλον, λέγων ὅτι οὐκ εἰσὶν θεοὶ οἱ διὰ χειρῶν γινόμενοι. οὐ μόνον δὲ τοῦτο κινδυνεύει ἡμῖν τὸ μέρος εἰς ἀπελεγμὸν ἔλθειν, ἀλλὰ καὶ τὸ τῆς μεγάλης θεᾶς Ἀρτέμιδος ἱερὸν εἰς οὐθὲν λογισθῆναι, μέλλειν τε καὶ καθαιρεῖσθαι τῆς μεγαλειότητος αὐτῆς, ἣν ὅλη ἡ Ἀσία καὶ ἡ οἰκουμένη σέβεται. Ἀκούσαντες δὲ καὶ γενόμενοι πλήρεις θυμοῦ ἔκραζον λέγοντες, Μεγάλη ἡ Ἄρτεμις Ἐφεσίων. καὶ ἐπλήσθη ἡ πόλις τῆς συγχύσεως, ὥρμησάν τε ὁμοθυμαδὸν εἰς τὸ θέατρον συναρπάσαντες Γαῖον καὶ Ἀρίσταρχον Μακεδόνας, συνεκδήμους Παύλου. Παύλου δὲ βουλομένου εἰσελθεῖν εἰς τὸν δῆμον οὐκ εἶων αὐτὸν οἱ μαθηταὶ τινὲς δὲ καὶ τῶν Ἀσιαρχῶν, ὄντες αὐτῶ φίλοι, πέμψαντες πρὸς αὐτὸν παρεκάλουν μὴ δοῦναι ἑαυτὸν εἰς τὸ θέατρον. ἄλλοι μὲν οὖν ἄλλο τι ἔκραζον, ἣν γὰρ ἡ ἐκκλησία συγκεχυμένη, καὶ οἱ πλείους οὐκ ᾔδεισαν τίνος ἕνεκα συνεληλύθεισαν. ἐκ δὲ τοῦ ὄχλου συνεβίβασαν Ἀλέξανδρον, προβαλόντων αὐτὸν τῶν Ἰουδαίων. ὁ δὲ Ἀλέξανδρος κατασεισας τὴν χεῖρα ἤθελεν ἀπολογεῖσθαι τῷ δῆμῳ. ἐπιγνόντες δὲ ὅτι Ἰουδαῖός ἐστιν φωνῆ ἐγένετο μία ἐκ πάντων ὡς ἐπὶ ὥρας δύο κραζόντων, Μεγάλη ἡ Ἄρτεμις Ἐφεσίων.

... Ովքեր Եփեսոս քաղաքում գայրացած աղաղակում էին և ասում՝ «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»: Եվ քաղաքը լցվեց խռովությամբ,

լսում եք, որ այս Պողոսը, համոզելով ոչ միայն Եփեսոսի, այլև համարյա ողջ Ասիայի բազմաթիվ մեծ բազմությունների, դարձի է բերել՝ ասելով, որ ձեռագործներն աստվածներ չեն: Եվ սա ոչ միայն սպառնում է, որ մեր կողմը կարհամարհվի, այլև՝ որ Արտեմիս մեծ դիցուհու մեհյանը ոչինչ կհամարվի, նաև՝ որ կվերանա մեծությունը նրա, ում պաշտում է ողջ Ասիան և աշխարհը»: Երբ լսեցին սա, բարկությամբ համակվեցին և աղաղակում էին. «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»: Եվ քաղաքը խռովությամբ լցվեց, միահամուռ սլացան թատրոն՝ բռնելով Պողոսի ուղեկիցներ մակեդոնացի Քայոսին և Արիստարքոսին: Իսկ երբ Պողոսը ցանկացավ մտնել ամբոխի մեջ, աշակերտները թույլ չտվեցին: Ասիայի պետերից ոմանք էլ, նրա բարեկամները լինելով, նրա մոտ մարդ էին ուղարկում և խնդրում, որ թատրոնում չելևա: Ամբոխում տարբեր բաներ էին աղաղակում, քանի որ նրանց հավաքը խառնիճաղանջ էր և նրանցից շատերը չգիտեին, թե ինչի համար են հավաքվել: Ամբոխի բազմությունից դուրս քաջեցին Աղեքսանդրոսին և, երբ հրեաները նրան առաջ բերեցին, Աղեքսանդրոսը ձեռքով նշան արեց և ցանկանում էր պատասխանել ժողովրդին: Երբ իմացան, թե այդ մարդը հրեա է, բոլորը միաձայն մոտ երկու ժամ աղաղակեցին, թե՛ «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»:

Հասարակ ի թիատրոնն, և յափշտակեցին զԳա-  
յիոս Դեբրացի և զԱրիստարքոս Մակեդոնացի՝  
զուղղեկիցսն վասն Պաւղոսի:

Սարգիս Կունդ, Կաթ. 268.

ԶԴեմետրեայ վկայեալ յամենեցունց և յեկե-  
ղեցւոյն. Դեմետրիոսս այս որ յԵփեսոս արծա-  
թազործ, որ Հանդերձ արուեստակցաւքն գոր-  
ծէր մեհեանս արծաթի, իբր զտապանակ փո-  
քունս լինէր Արտեմեայ դիցն կուռս արծաթի:  
Բազում պատիւ էր նմին յԵփեսոս, որ զտաճար  
նորին հրդեհեալ, և տրամեցոյց զնոսա, և զա-  
նուն այրելեացն ոչ կամէր յիշել, այլ ասէին,  
թէ այն էին կամք նորա:

Եզնիկ. III.Ե [487].

Հեթանոսութեան սկիզբն ի Սէրուքայ ժամանա-  
կաց անտի եղև, զի ո՛ր լաւ ոք եկեալ յաշխարհ՝  
մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն  
զպատկերն երանգաւք ի նկարու Հանէին, և  
անտի ուսեալ տիմարաց՝ տակաւ ի պաշտաւն  
առնուին... Հասանէր յԵփեսոսացիս և ի Բաբե-  
լոնացիս և ի Փոլիզացիս և ի Փիլնիկեցիս  
գործ դրաւագործութեան և խորհուրդք նո-  
րին, և ապա՝ ի Հելլէնս, որ են Յոյնք, առ Կրո-  
պեաւ<sup>1</sup> և ևս յետոյ՝ առաւել աստիք առ Կրո-  
նաւն և Բէաւ և Դիաւ և Ապոլոնիւ և առ այ-  
լովք բազմաւք, զորս մի ըստ միոջէ «աստ-  
ուածս» անուանէին:

Եզնիկի այս հատվածը գրեթե թարգմանված է Եպիփանիոս Կիպրացուց՝ Epiph. Anac. 1.163-164.

Ἐλληνισμός, ἀπὸ τῶν χρόνων τοῦ Σερούχ ἐναρ-  
ξάμενος ... εἰδώλων μέντοι γε ἐναρξασμένων τάτ-  
τεσθαι, τὰ τῶν ἀνθρώπων γένη οἷς τότε στοιχή-  
σαντες ἐθεοποιούν, διὰ μὲν χρωμάτων διαγρά-  
φοντες τὴν ἀρχὴν καὶ ἀπεικονίζοντες τοὺς πάλαι  
παρ' αὐτοῖς τετιμημένους ἢ τυράννους ἢ γόητας ἢ  
τινάς τι δρᾶσαντας ἐν βίῳ μνήμης δοκοῦν ἄξιον,  
δι' ἄλκῆς τε ἢ σωματων εὐρωστίας... Αἰγύπτιοι δὲ  
ὁμοῦ καὶ Βαβυλώνιοι καὶ Φρύγες καὶ Φοίνικες  
ταύτης τῆς θρησκείας πρῶτοι εἰσηγηταὶ γεγόνα-

և միահամուռ սլացան թատրոն ու բունեցին  
Պողոսի ուղղեկիցներ Դեբրացի Գայոսին և Մա-  
կեդոնացի Արիստարքոսին:

Դեմետրիոսի մասին վկայել են բոլորը և եկե-  
ղեցին: Այս Դեմետրիոսը, որ Եփեսոսում ար-  
ծաթազործ էր, իր արվեստակիցների հետ միա-  
սին արծաթե մեհյաններ էր սարքում. Արտե-  
միս աստվածուհու արծաթե փոքր կուռք կար՝  
տապանակի նման: Նա մեծ պատիվ ուներ Ե-  
փեսոսում. նրա տաճարը հրդեհել էին, և դա  
նրան վշտացրել էր, ու նա չէր ցանկանում  
հրդեհի անունը տալ, և ասում էին, թե այդ էր  
նրա կամքը:

Հեթանոսության սկիզբն եղավ Սերուքի ժամա-  
նակներից ի վեր (Հմմտ. Ծնն. ԺԱ. 21), քանի  
որ երբ աշխարհ եկած ամեն լավ մարդ մեռնում  
էր, նրա քաջությունը հիշելու համար նրան  
պատկերում էին գունազարդ նկարներում, և  
հիմար մարդիկ, սովորելով, աստիճանաբար  
սկսում էին պաշտել... Կուռքեր սարքելու  
գործն ու դրա հետ կապված գաղտնածեսերը  
Հասան եգիպտացիներին, բաբելացիներին,  
փոլոզացիներին և փոլնիկեցիներին, ապա՝  
հելլեններին, որ հույներն են, Կեկրոպսի օրոք  
և նրանից էլ հետո. ավելի սովորական մարդիկ՝  
Կրոնոսի, Հուեայի, Զևսի, Ապոլլոնի և շատ ու-  
րիշների ժամանակ, որոնց մեկ առ մեկ «աստ-  
վածներ» էին անվանում:

<sup>1</sup> Եզնիկ 299 [499 [91] ]. ուղղված է՝ «Կեկրոպես». հմմտ. զրվագ 13, 100:



σιν, ἀγαλματοποιίας τε καὶ μυστηρίων, ἀφ' ὧν τὰ πλεῖστα εἰς Ἑλληνας μετηνέχθη ἀπὸ τῆς Κέκροπος ἡλικίας καὶ καθεξῆς, μετέπειτα δὲ καὶ ὑστέρῳ πολὺ τοὺς περὶ Κρόνον καὶ Πέαν, Δία τε καὶ Ἀπόλλωνα καὶ τοὺς καθεξῆς θεοὺς ἀναγορευσαντες.

Բուզանդ 3.ԺԴ [296].

... Յառուրս յորում կործանեաց զբազինս մեհե-  
նիցն Հերակլեայ, այս ինքն Վահագնի:

Ագաթանգեղոս ձԹ [1679].

Եւ անդ կործանեցին զբազինն Զևս դիցն Ա-  
րամազդայ, հաւրն անուանեալ դիցն ամենայ-  
նի:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 133.

Արամազդայ և Անահտայ գոլ մեհեան:

Աղեքսանդրի պատմութիւն Բ 382.

Այդ մեհեան Արամազդայ և Անահտայ է:

Հմմտ. Alex. a 1.33.6.1.

Διὸς καὶ Ἡραος ἱερόν.

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 172.

Անահտայ բարձրաձեղուն շինեալ որոշեալ է  
բազին հին, յորս՝ Հերակլիտ:

Հմմտ. Alex. a 1.46a4.26-27.

ὁ βωμὸς οὗτός ἐστιν ὃν βλέπεις Ἡραος. / ὑψηλὰ \*  
\* κέκμηκε βωμὸν ἀρχαῖον.

Հմմտ. Alex. Rec. Byz. poet. 2329-2330.

ὃν βλέπεις πάλιν δὲ βωμόν, Ἀλέξανδρε φρενήρη,  
Ἡρασιλόφου τέτμηται βῶλος ἀρχαῖος οὗτος.

ու փյունիկացիները դարձան այդ կրոնի սկզբնավորողները, նաև՝ կուռքեր սարքելու և գաղտնածեսերի, որոնցից շատ բաներ փոխանցվեցին հելլեններին Կեկրոպսի ժամանակից, իսկ հետո շատ ավելի ուշ՝ Կրոնոսի, Հռեայի, Զևսի, Ապոլլոնի և շատ ուրիշների ժամանակ, որոնց մեկ առ մեկ «աստվածներ» էին անվանում:

... Այն ժամանակ, երբ կործանեց Հերակլեսի, այսինքն՝ Վահագնի մեհյանի բազինները:

Եվ այնտեղ կործանեցին բազինը Զևս-Արամազդ պատժոյ, որը բոլոր աստվածների հայրն էր անվանված:

Արամազդի (Զևսի) և Անահիտի մեհյանն է:

Այդ մեհեանն Արամազդինն ու Անահիտինն է:

Զևսի և Հերայի մեհյանն է:

Անահիտի բարձրաձեղուն հին բազինն է, որի մեջ Հերակլիտոսն է<sup>1</sup>:

Այս բազինը, որ տեսնում ես, Հերայինն է. բարձր \* \* կառուցել է հին բազինը<sup>2</sup>:

Բազինը, որ կրկին տեսնում էր, խելամիտ Աղեքսանդրոս, Հերայի բլրի (°) այս հին հողը կտրվել է<sup>1</sup>:

<sup>1</sup> «Որի մեջ Հերակլիտոսն է» խոսքերն աղավաղման արդյունք են:

<sup>2</sup> Նախաբառային երկրորդ կեսն աղավաղված է:

Աղեքսանդրի պատմութիւն Ա 249.

... զՀռոքսիանէս, զոր ընտրեցեր և վարկար արթոռակից լինել քեզ, երկիր պագցուք իբրև Անաստայ, յորժամ Արամազդ զՀռոքսանէս յամուսնութիւն իւր ածէ:

... Ռոքսանեին, որին քեզ արթոռակից ես ընտրել և համարել, կերկրպագենք ինչպես Անասիտին (Հերային)՝ երբ Արամազդը Ռոքսանեին կնության է առնում<sup>2</sup>:

Աղեքսանդրի պատմութիւն Բ 410.

Հռոքսանէ, զոր ի կենակցութիւն քեզ ընդունիմք և երկրպագանեմք իբրև Անաստայ, և զքեզ՝ որպէս զԱրամազդ:

Ռոքսանե, որին ընդունում ենք համատեղ արելու և երկրպագում ենք՝ ինչպես Անասիտին (Հերային), իսկ քեզ՝ ինչպես Արամազդին:

Հմմտ. Alex. a 2.22.10.-11.

Ῥωξάνην δέ, ἣν ἔκρινας σύνθρονον εἶναί σοι, ὡς ἐκέλευσας προσκυνοῦμεν, ὅταν Ζεὺς αὐτὴν εἰς τοὺς γάμους ἄξῃ.

Ռոքսանեին, որին քեզ արթոռակից ես ընտրել, ինչպես հրամայել ես, երկրպագում ենք՝ ասես Ջևսը նրան կնության է առնում:

Սոկրատէս 46 = Socr. HE 1.17.11-12.

Ափռողիտա ըստ տեղւոյն տաճար յարդարեալ կանգնեցին կուռս:

Ἀφροδίτης κατ' αὐτοῦ ναὸν κατασκεύασαντες ἐπέστησαν ἄγαλμα.

Ափրողիտեին տեղում տաճար հիմնելով՝ կուռքեր կանգնեցրին:

Սոկրատէս 54 = Socr. HE 1.18.40-41.

մեհեանն Ափռողիտայ աւերեաց...

ἱερὸν τῆς Ἀφροδίτης καθε- λών...

ավերեց (ավերելով) Ափրողիտեի մեհեանը...

Ագաթանգեղոս ձԸ-ձԹ.

Սուրբն Գրիգոր խաղայր գնայր... յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբազինսն Անաստական դիցն... ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի, ի թագաւորաբնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց: Եւ անդ կործանեցին զբազինն Ջևս դիցն Արամազդայ, հաւրն անուանեալ դիցն ամենայնի... Եւ ապա յետ այսորիկ անդէն ի սահմանակից գաւառն Եկեղեաց ելանէր... փշրէին զոսկի պատկերն Անաստական կանացի դիցն... Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, եւ քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի:

Սուրբ Գրիգորը ուղևորվեց... Արտաշատ քաղաք, ավերելու այնտեղ Անասիտ աստվածուհու բազինը ... Ապա գնաց-հասավ Անի կոչվող բերդը՝ հայոց թագավորների գերեզմանների հանգստարանը: Եվ այնտեղ կործանեցին բազինը Ջևս-Արամազդ աստծո, որ կոչվում էր բոլոր աստվածների հայրը... Եվ դրանից հետո նա գնաց սահմանակից Եկեղյաց գավառը... փշրեցին Անասիտ աստվածուհու ոսկե պատկերը ... Եվ այդտեղից անցան Գայլ գետի մյուս կողմը և քանդեցին Արամազդի դուստր Նանեի մեհեանը Թիլ ավանում:

<sup>1</sup> Նախադասության երկրորդ կեսն աղավաղված է:  
<sup>2</sup> Այս հատվածն աղավաղված և իմաստագուրկ է թվում:

Ուխտանէս Ա ԿԸ [501].

(Սուրբն Գրիգոր) յԱնաստական մեհեանս երթեալ՝ որ յԱրտաշատ քաղաքն լինէր, և գայն ի հիմանց տապալեալ աւերեցին... Եւ ապա հասեալ յամուրս Անի, անդ կործանեցին զպատկերն Արամազդայ, որ հայրն կոչէր դիցն ամենայնի: Եւ անդէն երթեալ ի գաւառն Եկեղեաց, փշրեցին զոսկի պատկերն Անաստականից դիցն: Եւ ապա անցեալ ընդ Փայլ գետ՝ քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն Աւանի: Եւ անտի գային հասանէին ի գեղն Բակառիճ կոչեցեալ. և անդ աւարեալ զՄիհրական մեհեանն որդւոյն Արամազդայ:

Մովսէս Սիւնեցի 444.

Գրիգոր... զկուռս փշրեաց որ յանուն Անաստայ էր:

Մովսէս Խորենացի Բ 12 [122.7-15].

Եւ խաղայ [Արտաշէս] այնուհետև յարեմուտս և ձերբակալ առնէ զԿրիստոս թագաւոր լիդիացոց: Եւ գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզաւծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոդոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէն Վահուհեաց՝ զԱպոդոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Սկիւղեայ և ի Դիպինոսէ կրետացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարաւն, յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի:

Ուխտանէս Ա ԻԹ [471].

(Արտաշէս) ձերբակալ առնէ զԿրիստոս թագաւոր Լիդացոց: Եւ գտեալ անդ պատկեր զԱրտեմիդայ. և տայ բերել յաշխարհն Հայոց և կանգնեալ յԱրմաւիր:

Մովսէս Խորենացի Բ 12 [123.8-12].

Բայց և յԵլլաղայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեսոտու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուրս լինել յաշխարհս՝ լսեն զբաւթ

(Սուրբ Գրիգորը) գնաց Անասիտի մեհեանը, որ Արտաշատ քաղաքում էր, և, տապալելով այն, հիմնավեր արեցին: Ապա, հասնելով Անիի բերդը, այնտեղ կործանեցին Արամազդի պատկերը, որ կոչվում էր բոլոր աստվածների հայրը: Եվ, այնտեղից գնալով Եկեղյաց գավառը, փշրեցին Անասիտ աստվածուհու ոսկե պատկերը: Հետո, անցնելով Փայլ գետը, քանդեցին Արամազդի դուստր Նանեի մեհեանը թիլ ավանում: Այնտեղից եկան հասան Բագառիճ կոչվող գյուղը. այնտեղ ավարի առան Արամազդի որդի Միհրի մեհեանը:

Գրիգորը փշրեց կուռքը, որ Անասիտի անունն էր կրում:

Եվ այնուհետև [Արտաշեսը] գնում է արևմուտք և ձերբակալում է լիդիացիների Կրիստոս թագավորին: Եվ, Ասիայում գտնելով Արտեմիսի, Հերակլեսի ու Ապոլլոնի պղնձաձույլ ոսկեզօծ արձանները, հրամայում է բերել մեր երկիրը, որ կանգնեցնեն Արմավիրում: Վահուհեաց ցեղի քրմապետները վերցրին ու կանգնեցրին Ապոլլոնի և Արտեմիսի արձաններն Արմավիրում, իսկ կրետացի Սկիլլիսի ու Դիպինոսի քանդակած Հերակլեսի արձանը, համարելով իրենց նախնի Վահագնը, կանգնեցրին Տարոնում՝ իրենց սեփական Աշտիշատ գյուղում, Արտաշեսի մահից հետո:

Արտաշեսը ձերբակալեց լիդիացիների Կրիստոս (Կրեսոս) թագավորին: Եվ գտնելով այնտեղ Արտեմիսի պատկերը՝ հրամայեց բերել Հայոց երկիրը և կանգնեցրեց Արմավիրում:

Բայց Հունաստանում, վերցնելով Զևսի, Արտեմիսի, Աթենայի, Հեփեսոտոսի և Ափրոդիտեի արձանները, հրամայեց բերել Հայաստան: Զհասցնելով մտնել մեր երկիրը՝ նրանք լսեցին

մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկե-  
նուն զպատկերսն յամրոցն յԱնի:

Ասողիկ Ա Ե [662].

Բայց և յԵլլադայ առեալ զպատկերսն Դիոսի,  
զԱրտեմիդեայ, զԱթենայ, զԵփեսոսու և զԱփ-  
րողիտեայ տայ բերել ի Հայս. որք ոչ ժաման-  
եալ միջամուխ լինել յաշխարհս մեր՝ լուեալ  
զբաւթ մահուանն Արտաշիսի. փախուցեալ ան-  
կանին զպատկերսն յամուրն յԱնի:

Մովսէս Խորենացի Բ 14 [127-128].

Առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ: Իսկ  
քրմացն, որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ած-  
եալ, զի մի՛ ի խորագոյն Հայս վարիցին՝ պատ-  
ճառեցան ըզձութիւնս, իբր թէ դիքն անդէն  
կամիցին զբնակիւն: Որում հաւանեալ Տիգրան,  
կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի  
յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիլ, և զԱրտե-  
միդայ զմիւս պատկերն յԵրիզայ, և զԵփես-  
ոսուն ի Բագայառինջ: Բայց զԱփրողիտեայ  
զպատկերն, իբրև Հերակլեայ տարփաւորի, առ-  
նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց  
կանգնել յաշտից տեղիսն:

Մխիթար Անեցի 10 [81].

Սա, յետ սպանման հաւրն, ժողովէ զզաւրս Հա-  
յոց ընդդէմ երթալ զաւրացն Յունաց և ընդ-  
դէմ բախեալ ի վերջ՝ նահանջէ: Եւ ինքն  
չուեալ գայ յԱնի, որ կոչի Կամախ, և զԱրտե-  
միդեայ պատկերն կանգնէ յԵրիզայ:

Մովսէս Խորենացի Գ 33 [297].

Առնու զԹագն Թէոդոս: Սա քակեաց զմեհեանս  
կռոցն մինչև յատակս, զփակեալսն միայն ի  
սրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալն Արե-  
գական և Արտեմեայ և Ափրողիտեայ ի Բիւ-  
զանդիոն:

Պատմութիւն Հռիփսիմեանց 2195.

Եւ նոքա գնացին ի գլուխ լերինն Պաղատոյ,  
զոր ասէին սաստիկ յոյժ ի նմա լեալ դիւացն,  
տուն Արամազդայ և Աստղկան՝ մեծարէին:

Արտաշեսի մահվան բոթը և, փախցնելով,  
պատկերները գցեցին Անի ամրոցում:

Բայց Հունաստանում, վերցնելով Զևսի, Արտե-  
միսի, Աթենայի, Հեփեսոսի և Ափրողիտեի  
պատկերները, հրամայեց բերել Հայաստան:  
Չհասցնելով մտնել մեր երկիրը՝ նրանք լսեցին  
Արտաշեսի մահվան բոթը և, փախցնելով,  
պատկերները գցեցին Անի ամրոցում:

Առաջին հերթին ցանկացաւ մեհեանսն շինել:  
Իսկ Հունաստանից եկած քրմերը, մտածելով,  
որ իրենց չտանն Հայքի խորքերը, գուշակու-  
թյուններ վկայակոչեցին՝ իբր թե աստվածներն  
այնտեղ են կամենում բնակվել: Ինչին համա-  
ձայնելով՝ Տիգրանը կանգնեցրեց Օլիմպիական  
Զևսի արձանն Անի ամրոցում, Աթենայինը՝  
Թիլում, և Արտեմիսի մյուս արձանը՝ Երիզա-  
յում, իսկ Հեփեսոսինը՝ Բագայառինջում: Իսկ  
Ափրողիտեի պատկերը, իբր Հերակլեսի տար-  
փածուի, հրամայեց կանգնեցնել Հերակլեսի  
պատկերի մոտ զոհաբերության տեղում:

Սա (Տիգրանը) հոր սպանությունից հետո հա-  
վաքեց հայոց զորքերը, գնաց հույների զորքի  
դեմ, բախվեց նրանց հետ և նահանջեց: Ինքը  
գնաց Անի, որ կոչվում է Կամախ, և Արտեմիսի  
պատկերը կանգնեցրեց Երիզայում:

Թագավոր դարձավ Թեոդոսիոսը: Սա հիմնադա-  
տակ արեց կուռքերի մեհեանսները Բյուզանդի-  
ոնում, որոնք սուրբ Կոստանդիանոսը միայն  
փակել էր. դրանք կոչվում էին Արեգակի, Ար-  
տեմիսի և Ափրողիտեի:

Եվ նրանք գնացին Պաղատ լեռան գլուխը. ա-  
սում էին, թե այնտեղ շատ դեւեր կան, որոնք  
մեծարում էին Արամազդի ու Աստղիկի տունը:

Մովսէս Խորենացի Բ 86 [232-233].

Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս ... կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն, գետոյն հզաւրի ընդ մէջ անցանելով. զոր սովոր էին երկրպագել այգուն այգուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երևէր. իսկ եթէ ոք զոհել կամէր՝ անցեալ ընդ գետն առաջի մեհենիցն զոհէր:

Ահարոն Վանանդեցի 993.

Իսկ երանելոյ Նունէի ... կործանեալ զամպրոպային պատկերն Արամազդեայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն, գետոյն հզաւրի ի մէջ անցանելով, զոր սովոր էին երկրպագել այգոյն յիւրաքանչիւր տանեաց, զի հանդէպ նոցա երևէր:

Վրթանէս Քերթով 497.

Ի մեհեանս կոոցն է դրոշմեալ Որմիզդը, որ է Արամազդը, և պոռնկութիւնք իւր և կախարհութիւնք ... ի մեհեանս կոոցն Անահիտ և պղծութիւնք իւր և պատիրք... ի մեհեանս սնտիրցն Աստղիկ և Ափրոզիտէս, զոր մայր ցանկութեանց կոչեն ամենայն հեթանոսք, և արբեցութիւնք նոցա և անառակութիւնք:

Թովմա Արծրունի Ա Ը (96).

Արտաշէս ... ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի, շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, ի վերայ նորա կանգնէ Աստղիկ պատկերն, և մաւտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոոցն:

Անանիա Նարեկացի, Ներբողեան 644.

Դու և զարամազդական սուտանուն աստուծոյն զգիւաբնակն պատկեր զգիւանունն Դիոսի կործանեցեր և զ'առ ի նորայն բնակեալսն բազնի դիւացն բազմութիւն արտահալած արարեալ՝ անդր ևս քան զկովկասականն բնակեցուցեր լերամբ:

Իսկ երանելի Նունեն, հավատարիմ մարդիկ գտնելով ... կործանեց ամպրոպային Արամազդի արձանը, որ քաղաքից մեկուսի վայրում էր կանգնած, և մեծ գետն անցնում էր երկուսի միջով. սովոր էին այն ամեն առավոտ երկրպագել յուրաքանչյուր տանիքից, քանզի դրանց դիմաց էր երևում, իսկ եթե մեկը կամենար զոհաբերություն անել, անցնում էր գետը և զոհ մատուցում մեհյանի առաջ:

Իսկ երանելի Նունեն ... կործանեց Արամազդի ամպրոպային պատկերը, որ քաղաքից մեկուսի վայրում էր կանգնած, և մեծ գետն անցնում էր երկուսի միջով. այն սովոր էին երկրպագել այգաբացին յուրաքանչյուր տանիքից, քանզի դրանց դիմաց էր երևում:

Որմիզդը, որ Արամազդն է, պատկերված է կուռքերի մեհյանում, նաև՝ նրա պոռնկություններն ու կախարհությունները ... կուռքերի մեհյանում Անահիտն է և նրա պղծություններն ու պատրանքները... սնտիր բաների մեհյաններում Աստղիկն ու Ափրոզիտեն են, որին բոլոր հեթանոսներն անվանում են ցանկությունների մայր, և՛ նրանց արբեցություններն ու անառակությունները:

Արտաշեսը ... երեք մասի ճյուղավորված փոքր գոգաձև հովտում, որ երեք բլուրներից է ցած իջնում, կառուցեց մի բարձր սնամեջ աշտարակ և դրա վրա կանգնեցրեց Աստղիկի պատկերը, իսկ մոտակայքում՝ գանձատուն, կուռքերին հովանավորելու համար:

Դու կործանեցիր նաև արամազդական սուտանուն աստված դիվանուն Ջևսի դիվաբնակ պատկերը և, հալածելով նրա բազնի մոտ բնակվող դևերի բազմությունը, բնակեցրիր Կովկասյան լեռից այն կողմ:

Գրիգոր Մագիստրոս 1.109-916.

Երթան ի հեթանոսս և խորտակեն զմեհենանին, / Ըզկուոց արմատ բառնան ի յարմատոյ Արտեմիդին, / Զպատկերն Արամազդայ, զԱփրոզիտեայ և զՀերակլին, / ԶՀերմէս և զԱպոզոն և զԿուոնոս կըլեալ զորդին, / ԶԱմոն գեգիպտացին և ըզԴեմետր Աթենացին, / ԶԱրէս մարդախոշոշ և զԱքելաս Հոմերոսին, / ԶՀեփեստոս գտակ հրոյ, զԻւր խեղ անդամն ի դարբնոցին:

Գրիգոր Մագիստրոս 17 (ՀԷ).12

Իսկ տաճարացն հրաշակերտութիւն ... նեցուկք և մոյթք սեանցն ... հռովմայեցի նախուստ գտեալք, և զոմանս ի տաճարացն Ապոզոնի և Երակլի կապտեալ, և զկարծրութիւն անկոփ վիմացն սխրալի կոփեալ կենդանատեսակս:

Մխիթար Անեցի 18 [96].

Տաճկաց գտեալ զայլ կուռս ... Իսկ աւճապաշտ քրմացն, ոչ հաւանեալ զկուռս աւտարաց քրմաց յիւրեանց տանն կացուցանել... արտաքոյ դրանն կացուցին զնա, ի վերայ վիմին, ի միոյ ոտան վերայ կալով և զմիւսն ի վեր ունելով, իբր թէ այնպէս է պատկեր Ռամանայ, իբրև գեփեստեայ պատկերն: Եւ թէ՛ նա ինքն է Ռամանն, Եփեստոս ի դամասկացուոցն անուանեալ:

Վարդան, Հաւաքումն ԼԴ [64].

Քանզի ի գաւրանալ քրիստոնէութեանն, զկուռս Դամասկոսի, զՌեմանա, որ նա ինքն է Հեփեստոս կաղ, տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ տաճիկք տարան ի մեհեանս աւճիցն, և քուրմք աւճիցն ոչ կամեցան անդ դնել, այլ հանեալ արտաքոյ արարին տեղի միոյ ոտից ի վերայ վիմի, և անդ եղին:

Վարդան, Ճառք 45-46.

«Կուռս» կոչէ զճոյլածոյս և զկուածոյս և զկոփածոյս զամենայն, որ յոսկոյ և արծաթոյ և

Գնում են հեթանոսների մոտ, խորտակում մեհյանները, վերացնում կուռքերի արմատները՝ սկսած Արտեմիսից, պատկերներն Արամազդի, Ափրոզիտի ու Հերակլեսի, Հերմեսի ու Ապոլլոնի, և որդիներին կուլ տված Կրոնոսի, եգիպտացի Ամոնի և աթենացի Դեմետերի, մարդասպան Արեսի և Հոմերոսի Աքելլեսի<sup>1</sup>, կրակը հայտնագործող Հեփեստոսի՝ դարբնոցում իր խեղված անդամներով:

Իսկ տաճարների հրաշալի կերտվածքը ... սյուների հռոմեական նեցուկներն ու մույթերը ... նախապես գտնելով, մի քանիսը գողանալով Ապոլլոնի և Հերակլեսի տաճարներից, անտաշ կարծր քարերը հիանալի կերպով տաշեցին՝ կենդանիների ձև տալով:

Տաճիկներն ուրիշ կուռք գտան ... Իսկ օձապաշտ քրմերը, չցանկանալով ուրիշ քրմերի կուռքերն իրենց տանը դնել... այն տեղադրեցին դուռից դուրս, քարի վրա՝ մի ոտքի վրա կանգնած, իսկ մյուսը վեր պահած, իբր թե դա Ռամանի<sup>2</sup> պատկերն է, իբր՝ Հեփեստոսի պատկերը: Ասում էին, թե դա Ռամանն ինքն է՝ դամասկացիներից Հեփեստոս կոչվածը:

Երբ Քրիստոնեությունը զորացավ, Դամասկոսի Ռեմանի կուռքը, որն ինքը՝ կաղ Հեփեստոսն է, տարան զցեցին անապատում. տաճիկները, այն գտնելով, տարան օձերի մեհյանները, և օձերի քրմերը չցանկացան այնտեղ դնել, այլ, դուրս հանելով, մի ոտքի տեղ պատաստեցին քարի վրա և այնտեղ գետեղեցին:

«Կուռքեր» է կոչում այն բոլոր ձուլածո, կուածո և կոփածո պատկերները, որ ոսկուց, արծա-

<sup>1</sup> Հոմերոսի հերոս Աքիլլեսն այստեղ դասված է աստվածների շարքը:  
<sup>2</sup> Հավանաբար խոսքը «Ռահման»-ի մասին է, որ Ալլահի մակդիրներից մեկն է:

ի քարանց, և ի փայտից, և ի կաւոյ գործեցին Տեթանոսք խաւարեալք ի մտաց ի խաբէլութենէ դիւաց... Իսկ թշնամին ճշմարտութեան ... որ ինչ գեղեցիկ և պիտանի թուէր, զայն Աստուած Հաւանեցուցանէր պաշտել: Վասն որոյ առին ի պաշտաւն զմասունս արարածոց. ոմանք զԱրեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին և այլ՝ զԼուսին և Արտեմիս ճայնեցին, կէսք՝ զերկուս կիսագունդ երկնից և մանկունս Զրուանայ կարգացին, այլ՝ զամենայն երկին և Կռոնոս անուանեցին, ոմանք զբազմաստեղս և որդիս Զրուանայ ասացին, ոմանք զաւդտ և Ադոնիս ճայնեցին, կէսք զերկիր և՝ Դեմետր, ոմանք զՉուր և Պիսիդոն կոչեցին, այլք զՀուր և Հեփեստոս անուանեցին, այլք զմոլորական և զանմոլար աստեղս և զանազան զանուանս կոչեցին: Եւ այսու ոչ շատացան, այլ և արարին զկերպարանս նոցա ձեռագործս և երկիր պագին նոցա:

Դաւիթ Բաղիչեցի 317.

(Տրդատ) եկն Յեկեղեաց գաւառն զոհս մատուցանել ի դական պատկերին Անահտայ՝ կնոջն Արամագղայ:

Դաւիթ Բաղիչեցի 359.

Սովաւ ազատեցաք յերկրպագութենէ կռոց Անահտա գաղրոտոյ կնոջ Արամագղայ:

Դաւիթ Բաղիչեցի 310.

Թագաւորեաց Տիգրան ... ի քեռ այր իւր Հաւատայ զՄաթաք և զՄիջերկրեայս, բերէ ընդ ինքեան զկուռս նոցա յաշխարհս մեր զԴիոսին յԱնի, զԱրտեմիդեա, զԱփրոդիտեա և Հեփեստոսին յայլ տեղիս:

Թից, քարերից, փայտից ու կալից սարքել են Տեթանոսները, ում միտքը խավարել էր դեւերի խաբէությունից... Իսկ ճշմարտութեան թշնամին ... ինչ որ գեղեցիկ ու պիտանի էր թվում, Համոգում էր պաշտել որպէս Աստված: Այդ պատճառով սկսեցին պաշտել արարված բաները. ոմանք պաշտեցին արեգակը և կոչեցին Վահագն (Ապոլլոն), ուրիշները՝ լուսինը և անվանեցին Արտեմիս, ոմանք՝ երկնքի երկու կիսագնդերը և կոչեցին դրանք «Զրվանի մանուկներ», մյուսները՝ ամբողջ երկինքն ու անվանեցին Կրոնոս, ոմանք՝ աստղաբույլերն ու ասացին, թե դրանք Զրվանի որդիներն են, ոմանք՝ օդը և անվանեցին այն Ադոնիս, որոշ մարդիկ՝ երկիրը և Դեմետր (անվանեցին), ոմանք՝ Չուրը և կոչեցին այն Պիսիդոն, ուրիշները՝ Հուրը և Հեփեստոս անվանեցին, ուրիշները՝ մոլորակներն ու անշարժ աստղերը և կոչեցին դրանք զանազան անուններով: Եւ սրանով չբավարարվեցին, այլ նաև պատրաստեցին նրանց ձեռագործ պատկերները և երկրպագեցին դրանք:

(Տրդատը) եկավ Եկեղյաց գավառը զոհ մատուցելու Արամագղի կնոջ՝ Անահտի ի դական պատկերին:

Սրա օգնութեամբ կազատվենք Արամագղի գաղբելի կին Անահտի կուռքը երկրպագելուց:

Թագավորեց Տիգրանը ... իր քրոջ ամուսնուն վատահեց Մաթաքն ու Միջերկրայքը և իր հետ մեր երկիրը բերեց նրանց կուռքերը. Զևսինը տեղադրեց Անիում, Արտեմիսինը, Ափրոդիտինը և Հեփեստոսինը՝ այլ վայրերում:

## 1.3 Ծեսեր

### 1.3.1. Դողմանի սրբավայրը և Չևսի կաղնին

Հունաստանի հյուսիս-արևմուտքում՝ Էպիրոսում գտնվում էր Դելփիից հետո երկրի երկրորդ պատգամատունը՝ Չևսի սրբավայրը Դողմենում, որտեղ գուշակություններ էին անում «խստղ» կաղնու և պղնձե կաթսաների միջոցով:

Գրիգոր Նազ., ճառ 5.32.1 [201] = PG 35.704.42-43.

Ոչ ևս բարբառի կաղնին, ոչ ևս կաթսայն դիւթէ: Օւժ է՛ տ փե՛ցցետ Ժրժ, ս՛ժ է՛ տ Լե՛ծի յանտէտ:

Կաղնին այլևս չի խոսում, կաթսան այլևս դիւթություն չի անում:

Նոննոս 4.12-14 [70] = Nonnos 5.14.1-14.

Դողմենէ քաղաք է շինեալ ի ցամաքի, յորում էր կաղնի մի նուերեալ Չևսայ, և ի նմա էր դիւթարան կանանց ելոց մարգարէութեաց, և մտանէին խնդրողք դիւթութեանն առ կաղնին, և շարժելով կաղնոյն՝ բարբառէին կանայքն, թէ գայս ինչ խաւսի Չևս: Ի Դովդոնէ պատմին և կատսային իրք, քանզի ասի ի բարձրաւանդակի ուրեմն կացեալ անդրի, ցուպ կրելով, և մերձ առ նա կատսայն: Արդ խնդրողք դիւթութեանն գալով ի տեղին՝ ըզձանային, և յորժամ կամէր աստուածն հրամանատրել նոցա՝ անդրիւնդն այն գաւազանաւն հարկանէր զկատսայն: Ապա հնչեցեալ կատսային՝ ձայն ինչ յաւաւոր բացակատարէր. և փչումն ընկալեալ մարգարէութեացն՝ ասէին նոցա, զոր ինչ դեւն ազգէր ի միտս նոցա:

Δωδώνη πόλις ἐστὶ ἐν τῇ Ἠπειρῷ κειμένη, ἐν ἣ ἴστατο δρυὺς ἱερὰ τοῦ Διός. καὶ ἐν ταύτῃ ἦν μαντεῖον, γυναικῶν οὖσων τῶν προφητῶν. καὶ εἰσήεσαν οἱ μαντευόμενοι παρὰ τὴν δρῦν καὶ ἐκινεῖτο ἡ δρυὺς δῆθεν. καὶ λοιπὸν ἐφθέγγοντο αἱ γυναῖκες λέγουσαι ὅτι Τὰ δὲ λέγει ὁ Ζεὺς ... ἐν τῇ Δωδώνῃ ἦν καὶ τὰ περὶ τοῦ λέβητος, λέγεται δὲ τοιοῦτόν τι εἶναι. ἐν τῇ Δωδώνῃ λέγεται ὅτι ἐν ὕψει τινὶ ἴστατο ἀνδριάς βαστάζων ῥάβδον, καὶ παρ' αὐτὸν λέβητος τις ἴστατο. οἱ οὖν μαντευόμενοι ἤρχοντο παρὰ τὸν τόπον τοῦτον καὶ ἠῦχοντο. ὅτε οὖν ἤθελε χρησιμωδῆσαι αὐτοῖς ὁ θεός, ὁ ἀνδριάς ἐκείνος ἔπαιε τῇ ῥάβδῳ τὸν λέβητα. εἶτα ἤχει ὁ λέβητος, καὶ ἐκ τοῦ λέβητος ἤχος τις ἀπετελεῖτο ἐναρμόνιος, καὶ ἐνεφοροῦντο αἱ προφήτιδες, καὶ ἔλεγον ἃ αὐταῖς ὁ δαίμων ἐνέβαλλεν.

Դողմենն քաղաք է՝ ցամաքում (Էպիրոսում<sup>1</sup>) կառուցված (տեղակայված), որում կար Չևսին նվիրված մի կաղնի և կողքը՝ մարգարեութի կանանց գուշակարան: Եվ գուշակութուն հայցողները մոտենում էին կաղնուն, ու կաղնին (+ իրապես) շարժվում էր: Եվ (+ այնուհետև) կանայք արտասանում էին, թէ՛ «Չևսն այսինչ բանն է ասում»: Դողմենում պատմվում է նաև կաթսայի մասին. քանզի (Դողմենում) ասվում է, թե մի բարձունքի վրա կանգնած էր գավազան բռնած մի արձան, իսկ նրա կողքին՝ կաթսան: Արդ գուշակութուն հայցողները, գալով այդտեղ, աղոթում էին: Եվ երբ աստվածը կամենում էր նրանց գուշակութուն տալ, այն արձանը գավազանով հարվածում էր կաթսային: Հետո կաթսան հնչում էր, և կաթսայից հոգաբաշխ (ներգաշնակ) ձայն էր արձակվում: Եվ մարգարեութիները, համակվելով շնչով, ասում էին նրանց, թե ոգին իրենց ինչ է ներշնչել:

<sup>1</sup> Էպիրոս քաղաքի անունը թարգմանիչն ընկալել է որպես հասարակ անուն՝ «ցամաք»:



Ո՞ւր... գԴոդոնեայ զկաղնոյն  
զաղճատանսն:

ποῦ... Δωδωναίας δρυὸς ληρή-  
ματα.

Որտե՞ղ է Դոդոնեի կաղնու-  
դատարկաբանությունը:

Նոննոս 1.12 [10] = Nonnos 39.12.1-4.

Դովդոնիայ քաղաք էր առ Հին  
ցամաքան: Ի սմա էր կաղնի  
մի, յորում ասի Արամազդայ  
հովանանալ, և դիւթականու-  
թիւն պարգևել կաղնոյն, որ-  
պէս զի ի շարժմանէ ոստոցն և  
տերեւոցն յայտնել անյայտիցն  
և պիտանացուաց նշանակու-  
թիւնք:

Ἡ Δωδώνη πόλις ἐστὶ περὶ τὴν  
παλαιὰν Ἑπειρον. ἐν ταύτῃ ἦν  
δρυς, ἐν ἣ ἔλέγετο ὁ Ζεὺς ἐπι-  
σκιάζειν καὶ μαντεῖαν διδόναι  
τοῖς χρήζουσι μαντείας. ἐξ αὐ-  
τῆς τῆς δρυὸς κινήματα τινα  
μαντικὰ ἐξήχουμενα.

Դոդոնեն քաղաք էր Հին ցա-  
մաքի (Էպիրոսի) մոտ: Սրա-  
նում կար մի կաղնի, որի հո-  
վանու տակ էր, ասում էին,  
մտել Արամազդը (Զևսը) և  
գուշակության գորություն  
պարգևել կաղնուն (գուշակու-  
թյուն անողներին), այնպես  
որ ճյուղերի և տերեւների շար-  
ժումից հայտնի է դառնում  
անհայտ ու պիտանի բաների  
նշանակությունը (այդ կաղ-  
նուց ինչ-ինչ մարգարեական  
շարժումներ են հնչում):

Գրիգոր Մագիստրոս 3 (Թ).12.

Ոչ կաղնին արամազդեան:

Ոչ արամազդյան (Զևսի) կաղնին:

Գրիգոր Մագիստրոս 71 (ԺԴ).5.

Արամազդեանն կաղնին:

Արամազդյան (Զևսի) կաղնին:

Գէորգ. 346.

Եղիցի քեզ ամենայն խաչածև պաշտելիք ...  
Պաշտեսցեն ի քէն և ազգ իշոյ վայրենեաց և  
տնականաց, զի յայտնապէս զնշան խաչին  
կրեն ի վերայ թիկանց, և ապա եկեսցես յան-  
տառս տնկոց, զի բազումք են խաչանմանք, և  
պաշտեսցես և պատուեսցես զնոսա ոչ իբրև  
զխաչ Քրիստոսի, այլ իբրև զկաղնին Արամազ-  
դայ:

Թող ամեն խաչածև բան քեզ պաշտելի լինի ...  
Թող քեզնից պաշտվի վայրի ու ընտանի էշերի  
ցեղը, քանի որ դրանք մեջքի վրա բացահայտ  
կրում են խաչի նշանը. ապա թո՛ղ, անցի՛ր ծա-  
ռերով անտառներին, քանի որ շատերն են խա-  
չանման, պաշտի՛ր ու պատվի՛ր դրանք ոչ որ-  
պես Քրիստոսի խաչը, այլ՝ որպես Արամազդի  
կաղնին:

1.3.2. Սպարտայում Արտեմիս Օրթիայի<sup>1</sup> պաշտամունքի ժամանակ նրա բազիլը պետք է  
ներկվեր մարդկային արյունով. Սպարտայի ավանդական օրենսդիր Լիկուրգոսից (մ.թ.ա. մոտ  
820–730) հետո դա արվում էր պատանիների գանահարումով (Plut. *Lyc.* 18.1, Paus. 3.16.9-11,  
Xen. *Rep. Lac.*2.9.1):

<sup>1</sup> «Օրթիա» Սպարտայում պաշտվող Արտեմիսի մակդիրն էր, որ կապվում է ծրծոց «ուղիղ, ճիշտ» անվանի և  
ծրծո «ուղղորդել» բայի հետ:

Եւ ոչ լակոնացւոցն երիտա- սարգացն ի վերայ բազնին ա- րիւնոռչտ լեալ քըքովքն և զայնոսիկ միայն չարաչար ա- րիացեալք, առ որս պատուի աստուածուհին և նոյն կոյսն, վասն զի և նոքին զխենչոռ- թիւնն պատուեցին, և զյանդգնութիւնն սպասաւո- րեցին:

καὶ Λακωνικῶν ἐφήβων ἐπιβώ- μιον αἶμα, ξαινομένων ταῖς μάστιξι, καὶ τοῦτο μόνον κακῶς ἀνδριζομένων οἷς τιμᾶται θεά, καὶ ταῦτα παρθένος. Οἱ γὰρ αὐ- τοί, καὶ μαλακίαν ἐτίμησαν, καὶ θρασύτητα ἐσεβάσθησαν.

Եվ արդյո՞ք ոչ բազնային ար- յունը լակոնացի երիտասարդ- ների, որոնք խարազանվում են մահակներով՝ այն բանե- րում միայն հազիվ արիու- թյուն ցուցաբերելով, որոնցով պաշտվում է աստվածուհին և նույն ինքը՝ կույսը: Քանի որ նրանք և՛ թուլությունը պատ- վեցին, և՛ հանդգնությանը ծառայեցին:

Նոննոս 1.8 [8] = Nonnos 39.8.1-6.

Ղակեդեմոնացիքն, առ ժուժ- կալութիւն կրթելով՝ տաւն առնէին, յորում տանջէին զմիմեանս գանիւք փոկոց, և յարիութիւն այսպէս հրահան- գէին. քանզի, եթէ ժուժկալք աստանաւր գտանէին՝ համա- րէին և առ պատերազմունսն նույնպիսիս լինել: Այլ պատ- ուէին լակոնացիքն ի տաւնս տանջանաւք այսպիսեաւք զԱրտեմիս, զի զնա ասէ կոյս աստուածուհի, զի ժուժկալ է և գեր ի վերոյ ամենայն զանգի- տութեան և ներախտու- թեան...

Οἱ Λακεδαιμόνιοι πρὸς καρτε- ρίαν γυμναζόμενοι ἑορτήν ἐ- ποιοῦν ἐν ἧ΄ ἐμάστιζον ἀλλή- λους. καὶ ἀνδρείαν τινὰ ἐκ τού- του ἐπαιδεύοντο ἵνα καρτερικῶς ἔχοιεν περὶ τοὺς πολέμους. ἐτίμων δὲ οἱ Λάκωνες ἐν τῇ ἐ- ορτῇ τῶν μαστίγων τὴν Ἄρτε- μιν. ταύτην γὰρ λέγει παρθένον θεόν. Καρτερικὴ γὰρ καὶ ὑπερά- νω πάσης δειλίας καὶ ἐμπαθεί- ας...

Լակեդեմոնացիները, մարզվե- լով տոկուն լինելու համար, տոն էին կազմակերպում, որի ժամանակ գանահարում էին միմյանց. քաջությունն էին այսպես մարզում, քանի որ, ե- թե այստեղ տոկուն էին գտնվում, համարվում էր, թե պատերազմներում էլ նույն- պիսին կլինեն (որպեսզի պա- տերազմներում էլ տոկուն լի- նեն): Լակոնացիները տոների ժամանակ այսպիսի տանջան- քով Արտեմիսին էին պատ- վում, քանզի [Գրիգորը] նրան անվանում է կույս աստվածու- հի, քանզի նա ժուժկալ է և վեր ամեն տեսակի երկչոտու- թյունից ու կրքից:

Գրիգոր Նազ., ճառ 4.70.10-12 [74] = PG 35.592.10-18.

Որ Ղակոնացիսն գովես գերի- տասարդս գգեալս քքովքն և ի վերայ բազնին զարիւնն զվա- յելչական զաստուածուհին զսուրբն և զկոյսն:

ὁ τοὺς Λακωνικοὺς ἐπαινῶν ἐ- φήβους ξαινομένους ταῖς μάστι- ξι, καὶ τὸ ἐπιβώμιον αἶμα τέρ- πον θεᾶν ἀγνήν καὶ παρθένον.

Որ գովում ես իրենց մահակ- ներով խարազանող լակոնացի երիտասարդներին և բազնի վրայի արյունը՝ վայելչական սուրբ և կույս աստվածուհուն (սուրբ և կույս աստվածու- հուն հաճելի<sup>1</sup>):

<sup>1</sup> Ὁμορφιάδ ἐν τέρπον («որ հաճելի է») և τερπνὴν («վայելչական») բառերը:

Ղակեղեմոնացիքն ախորժե-  
լով ժուժկալս և արիս գոլ զիւ-  
րեանցն քաղաքացիս և ման-  
կունս իւրեանց, կրթէին զնո-  
սս՝ տանջեալ փոկովք, և քան-  
ցէին գանիւք առ բազինսն, և  
ոչ նուաղելոյն, այլ առաւելա-  
պէս ժուժկալին պարգևս հա-  
տուցանէին:

Οἱ Λακεδαιμόνιοι βουλόμενοι  
καρτερικοὺς καὶ ἀνδρείους εἶναι  
τοὺς ἐαυτῶν πολίτας καὶ παῖδας,  
ἐγύμναζον ταῖς διαμαστιγῶσσει,  
καὶ τῷ ἐπὶ πλεόν καρτεροῦντι  
ἄθλον ἐδίδοτο.

Լակեղեմոնացիները, ցանկա-  
նալով, որ իրենց քաղաքացի-  
ներն ու երիտասարդները սո-  
կուն և քաջ լինեն, մարզում  
էին նրանց՝ գանահարելով,  
բզկտելով գաներով բազիննե-  
րի մոտ, և ոչ թե նվաղածին,  
այլ (չիք բզկտելով գաներով  
բազինների մոտ, և ոչ թե  
նվաղածին, այլ) առավել սո-  
կունին էին մրցանակ տալիս:

Անանիա Նարեկացի, Ներբողեան 640.

Այլ այսու տեսցի և զակոնացուց երիտասար-  
դացն գզեալ ուսք քթովքն, զի ի վերայ բազինն  
արիւնացայտ լինելն ջախջախմամբք զվայելչա-  
կանն պատուելով զաստուածուհի գուրբն  
զայն և զկոյսն:

Սրանով թող երևա նաև, թե ինչպես են լակո-  
նացի երիտասարդներն ուսերը մահակներով  
խարազանում, որպեսզի ծեծվելով բազնի վրա  
արյուն ցայտեցնեն՝ պատվելով այն վայելչա-  
կան սուրբ կոյս աստվածուհուն:

Պլատոն, Օրին. 15 = Sch. Plat. Leg. 633.b<sup>1</sup>.

Տակաւին արդ և գչորրորդն ես  
իսկ փորձեցից ասել զայն ինչ  
որ առ ժուժկալուժիւնքն խոշ-  
տանգանս, որ լինէին առ  
բազինն արդարուհոյն Արտե-  
միդեայ, այնմ որ գքաղաքա-  
վարուժիւնն ուղղէր. քանզի  
առաջի կայր սորա քայանա-  
յուհին բերելով ինչ առ ձեռս  
թաքուցեալ, որ է մինչ ցայժմ  
անծանաւթ, և եթէ նուազա-  
գոյն քան գոր պատշաճն էր՝  
խոշտանգիւր, քանզի շարժել  
զձեռսն ոչ իշխէր ունելով ի  
վերայ գլխոյ խոշտանգեալն,

καρτερήσεις. τὰς διαμαστιγώσεις  
φησί. ἐγένοντο δ' αὐται πρὸς τῷ  
βωμῷ τῆς Ὀρθωσίας Ἀρτέμιδος,  
τῆς τὴν πολιτείαν ἀνορθούσης.  
παρειασθήκει γὰρ ἡ ταύτης ἰέρεια  
φέρουσά τι ἐπὶ τῆς χειρὸς  
κεκρυμμένον, ὃ μέχρι τοῦ νῦν  
ἄγνωστόν ἐστι, καὶ εἰ μὲν ἦττον  
τοῦ δέοντος ἐμαστιγοῦτο, κινεῖν  
γὰρ τὰς χεῖρας οὐκ ἐτόλμα, ἔχων  
ταύτας ἐπὶ τῆς κεφαλῆς ὁ μαστι-  
ζόμενος, ἐβαρεῖτο ἐκεῖνη ὑπὸ  
τοῦ φερομένου, δεόντως δὲ τὴν  
δίκτην εἰ ὑπεῖχεν, κούφως ἢ ἰέ-  
ρεια διετίθετο.

Այժմ կփորձեի որպես չորրորդ  
նշել սոկունուժյունը խոշտան-  
գումների հանդեպ, որ  
(սոկունուժյուն. դրանք [Պլա-  
տոնն] անվանում է խոշ-  
տանգումներ. դրանք *ի/ի*  
Այժմ... հանդեպ, որ) տեղի էին  
ունենում արդար (ուղղորդող)  
Արտեմիսի բազնի մոտ. նա  
ուղղուժյուն էր տալիս վար-  
քին, քանզի առջևում կանգ-  
նում էր նրա քահանայուհին՝  
ձեռքում թաքուն ինչ-որ բան  
բռնած, որը մինչ այժմ անծա-  
նոթ է. և եթե խոշտանգվողն ա-

<sup>1</sup> Պլատոնի «Օրենքներ»-ի այս սրբյուղան (և դրան հաջորդող ևս երկուսը) թարգմանել է «Օրենքներ»-ի հայերեն թարգմանության մեջ. այն մեկնությունն է հետևյալ հատվածում «սոկունություն» (καρτερήσεις) բառի. "Ἐτι τοῖνον καὶ τὸ τέταρτον ἐγωγε πειρώμην ἂν λέγειν, τὸ περὶ τὰς καρτερήσεις τῶν ἀλγηδόνων πολὺν παρ' ἡμῖν γιγνόμενον, ἔν τε ταῖς πρὸς ἀλλήλους ταῖς χερσὶ μάχαις καὶ ἐν ἀρπαγαῖς τισιν διὰ πολλῶν πληγῶν ἐκάστοτε γιγνομένων (Plat. Leg. 633.b.5-9) – «Այժմ նաև կփորձեի որպես չորրորդ նշել ցավի հանդեպ սոկունությունը, որ մեզանում հաճախ է հանդիպում՝ ձեռքերով միմյանց հետ մենամարտելիս և ամեն անգամ բազմաթիվ հարվածներով զուգակցվող որոշ առևանգումների ժամանակ»: Հայերեն այս հատվածը մոտավոր է թարգմանված. «Եւ այսպիսիս առ մեզ յոյժ լի-  
նէր՝ և՛ մարտքն որ առ միմեանց էր, և՛ յափշտակութիւնք ոմանց ընչից, ի ձեռն բազում խոշտանգանաց...» – «Եվ այսպիսի բան մեզանում հաճախ էր հանդիպում՝ և՛ միմյանց հետ մարտեր, և՛ որոշ ունեցվածքի հափշտակում-  
ներ՝ բազում խոշտանգումների միջոցով»: Այս մոտավոր թարգմանությանը հաջորդում է սրբյուղայի վերոբերյալ թարգմանությունը:

ծանրանայր աստուածուհին առ այնմ որ առաջի կայր՝ զիրն ունելով ի ձեռինն, և պատշաճապէս այնմ համբերելով խոշտանգանացն, թեթեալէս տրամակայիւր առ քահանայուհին:

վելի քիչ էր խոշտանգվում, քան պատշաճ է, քանզի չէր հանդգնում ձեռքերը շարժել՝ դրանք պահելով գլխի վրա, աստուածուհին (նա) տրտմում էր նրա միջոցով, ով իր առջև էր՝ իրը ձեռքում բռնած (բռնածի միջոցով), իսկ եթե մեկը պատշաճորեն էր դիմակայում այդ խոշտանգումներին (պատժին), նա քահանայուհուն գոհ տեսք էր տալիս:

1.3.3. Փռյուգիական մայր-աստվածուհի Կիբելեն, որի պաշտամունքն ուղեկցվում էր էքստատիկ ծեսերով, նույնացվել էր հունական Հռեայի հետ (Apollod. 3.5.1 [3.33]):

Գրիգոր Նազ., ձեռ. Մ 2600, 11բ Մ 946, 5ա-բ. = PG 36.337.19-23.

Ոչ փոխաբանուցն ի բաց հատումն և փողք և կորիւբանդք, և որք միանգամ յաղաքս Հրոնէի մարդիկ մոլին, ձաւնիչք մաւրն աստուածոցն և ձաւնեալք որ ինչ մաւրն այսպիսեացն պատշաճէ:

οὐδὲ Φρυγῶν ἐκτομαί, καὶ αὐλοὶ, καὶ Κορύβαντες, καὶ ὅσα περὶ τὴν Ῥέαν ἄνθρωποι μαίνονται, τελοῦντες τῇ μητρὶ τῶν θεῶν, καὶ τελοῦμενοι, ὅσα τῇ μητρὶ τῶν τοιούτων εἰκόσ.

Արդյո՞ք ոչ փռյուգիացիների՝ իրենց խոցելն ու սրինգները, և կորիբանտները, և այն մարդիկ, որ Հռեայի համար մոլուցքի մեջ են ընկնում՝ աստվածների մորը ձոն մատուցողներն ու ստացողները, ինչպես որ պատշաճ է (+ այդպիսիների) մորը:

Նոննոս 1.2 [4] = Nonnos. 39.2

Ի Փոբիզիա պաշտեալ կայ մայր աստուածոցն Արամազդայ, Պոսիդոնի, Պիուտոնի, և Հերայ. արք մայր աստուածոցս այսոցիկ էր, այլ Կրոնոսի կին էր: Սմա ի Փոբիզիայ լինէին ձաւնմունք, և կատարողք սոցունց, իբր ափշեալք հեշտութեամբ՝ զմարմինս իւրեանց յաւչէին սրով, ի ձեռն փողոյ հրճուեցուցանելով զինքեանս և յարուցանելով կայտառագոյն ի հարուածսն: Իսկ մինչև ցարդ եղղենացիք, առ լեռնակողմանս կարիացուց, անզգամք ոմանք աղճատեալք հատանեն զինքեանս, նախնի սովորութեամբ ըմբռնեալք:

ἐν τῇ Φρυγίᾳ ἐσεβάσθη Ῥέα ἡ μήτηρ τῶν θεῶν, Διὸς, Ποσειδῶνος καὶ Πλούτωνος καὶ Ἥρας, μήτηρ τῶν θεῶν τούτων, γυνὴ δὲ τοῦ Κρόνου. ταῦτη οὖν ἐν τῇ Φρυγίᾳ ἐγίνοντο τελεταί τινας. καὶ ἐνθουσιῶντες καὶ οἱ τελοῦντες καὶ οἱ τελοῦμενοι, καὶ ἐξιστάμενοι ἑαυτῶν, κατέτεμον ἑαυτοὺς ὑπὸ ξιφῶν, μὴ αἰσθανόμενοι, ὅτι τέμνουσιν ἑαυτοὺς. καὶ ἄλλοι δὲ τινες ἠϋλον, καταθέλγοντες αὐτοὺς καὶ παρεγείροντες περὶ τὴν ἐκτομήν. ἄχρι δὲ τοῦ παρόντος τινὲς περὶ τὰ ὄρεινὰ τῆς Καρίας Ἑλληνας ἀλόγιστοι κατατέμνουσιν ἑαυτοὺς, τῷ παλαιῷ ἔθει τούτῳ κρατοῦμενοι.

Փռյուգիայում մեծարվում է (էր) աստվածների՝ Արամազդի, Պոսեյդոնի, Պիուտոնի և Հերայի մայրը (+ Հռեան). նա այդ աստվածների մայրն էր ու Կրոնոսի կինը: Փռյուգիայում նրան խորհրդածեսեր էին նվիրվում, և դրանք կատարողները (+ և հաղորդակցվողները) իրենց մարմինները ողջնչված խոցոտում էին սրով (+ չզգալով, որ իրենց կտրում են), սրինգով (իսկ ուրիշները սրինգ էին փչում) իրենք իրենց խանդավառելով և դրդելով հարվածել: Եվ մինչև օրս էլ Կարիայի լեռների կողմերի որոշ հույներ խելահեղորեն խոցոտում են իրենց (+ այդ) հնավանդ սովորությամբ տարված:

1.3.4. Աթենքում ամեն աշուն տոնում էին այսպես կոչված Ապատորիան, որ տևում էր երեք կամ չորս օր և որի ժամանակ նախորդ տարի ծնվածներին մտցնում էին ֆրատրիաների<sup>1</sup> ցուցակների մեջ: Երրորդ օրը կոչվում էր «կուրենտիս». մանուկները («կորաները»՝ աղջիկները, և «կուրոսները»՝ տղաները) այդ օրը դառնում էին ֆրատրիայի անդամ, իսկ դպրոցական տղաները մրցում էին՝ բանաստեղծություններ արտասանելով:

Պղատոն, Տիմ. 81-82 = Plat. *Tim.* 21.b.1-7.

Ես էի տասնամեայ՝ յորում հասակի կուրեացի գոլ հանդիպէի յԱպատուրեանց: Արդ սովորութիւն տաւնին որ հանապազ էր, և յայնժամ պատահեցաւ, զի նահատակեցուցանէին հարքն զմանկունս իւրեանց ի հագներգութիւնս: Բազմաց արդ քերթողաց բազում քերթուածս ասացան, և մանաւանդ ըստ այնմ ժամանակին՝ զԱղոնի քերթուածսն, զի նոր էին, բազումք ի մանկանցն երգեցաք:

ἐγὼ δὲ πη μάλιστα δεκέτης, ἢ δὲ Κουρεῶτις ἡμῖν οὕσα ἐτύγγανεν Ἀπατουρίων. τὸ δὴ τῆς ἑορτῆς σύνηθες ἐκάστοτε καὶ τότε συνέβη τοῖς παισίν, ἄλλα γὰρ ἡμῖν οἱ πατέρες ἔθεσαν ῥαψωδίας. πολλῶν μὲν οὖν δὴ καὶ πολλὰ ἐλέχθη ποιητῶν ποιήματα, ἅτε δὲ νέα κατ' ἐκεῖνον τὸν χρόνον ὄντα τὰ Σόλωνος πολλοὶ τῶν παίδων ἤσαμεν.

Ես տասը տարեկան էի, երբ պատահեց Ապատուրիայի կուրենտիս տոնը: Արդ, ամեն անգամ տոնի ժամանակ սովորություն կար, և այդ անգամ էլ պատահեց, որ հայրերը տղաներին արտասանելու համար մրցանակներ էին նշանակում: Արտասանվեցին բազում քերթվածներ, ինչպես, օրինակ՝ Աղոնի ոտանավորները, որ այդ ժամանակ նոր էին. տղաներիցս շատերը երգեցինք:

Պղատոն, Տիմ. 82, ծան. մեկնութիւն<sup>2</sup>.

Եւ յԱպատուրեանս տաւն է յԱթենս [յօր. յԱթենայ] յիշատակելով զԴիոնիսոսս, և յայնմ տաւնին կարգէին զմանկունսն պաշտաւնեայս տաճարին, որք անուանէին Կուրէացիք:

Եվ Ապատուրիան տոն է Աթենքում, որ հիշատակում է Դիոնիսոսին. և այդ տոնի ժամանակ տաճարի պաշտոնյաներ էին կարգում մանուկներին, որոնց անվանում էին կուրեացիներ:

Հմմտ. Sch. Plat. *Tim.* 21b.2-13.

Ἀπατούρια ἑορτὴ Ἀθήνησιν εἰς Διόνυσον... ἐν ταύτῃ γὰρ τοὺς κούρους ἐνέγραφον εἰς τοὺς φράτερας, τριετείς ἢ τετραετείς ὄντας. ἐν ᾗ καὶ τῶν παίδων οἱ ἐντρεχέστεροι ποιήματα ἄττα ἤδον, τὰ τῶν παλαιῶν ῥαψωδοντες.

Ապատուրիան տոն էր Աթենքում՝ նվիրված Դիոնիսոսին... Դրա ժամանակ երեք կամ չորս տարեկան տղաներին գրանցում էին ֆրատրիաների մեջ, նաև ամենավարժ տղաները երգում էին քերթվածքներ՝ հագներգելով հների ստեղծագործությունները:

1.3.5. Ափրոդիտեին վերագրվել են կախարդության հետ առնչվող ծեսեր:

Մովսէս Կաղանկատուացի Բ ԽԱ [320].

Յայնժամ քաղեայքն և կախարդքն և վհուկքն Ափրոդիտեայ մուլեկան կախարդութեամբն

Այն ժամանակ գուշակներն ու կախարդներն ու Ափրոդիտեի վհուկները սկսեցին մուլեկան կա-

<sup>1</sup> Ֆրատրիաներն Աթենքի տոհմատարածքային բաժանումներն էին. երեքական ֆրատրիա կազմում էին ավելի խոշոր միավոր՝ «փիլի» (որանք չորսն էին), իրենք էլ բաժանվում էին երեսնական «գեմոս»-ի («տոհմի»):  
<sup>2</sup> Փաստորեն այս մեկնությունը ծագում է հունարեն սրբիլայից:

սկսան դիւթութիւնս առնել ստապածոյճ գետ- նակոչութեամբքն՝ ուռութս և բարբաջմունս իմն յաւրինէին:

Խարդությամբ դյութութուն անել. ստահող մոգությամբ կախարդանք ու ինչ-որ բարբա- ջանքներ էին հորինում:

#### 1.4 Եզրվպոյսան առակներ

Ն. Մառը հայ առակագրոթյանը նվիրված եռահատոր աշխատոթյան առաջին հատորի մի գրութի նվիրել է առակների ժողովածուներում տեղ գտած և հայ մատենագիրների (Փավստոս Բուզանդ, Գավիթ Անհաթ, Հովհան Մամիկոնյան, Թովմա Արծրունի, Ստեփանոս Ասողիկ, Գրիգոր Մագիստրոս) հիշատակած Եզրվպոսի առակներին, որոնք հայկական ավանդոթյան մեջ կոչվել են «Առակք Ոլոմպիանայ»<sup>1</sup>: Օլիմպիանոս անունով հույն առակագիր չկա: Այդ անու- նով հայտնի միակ հեղինակը ճարտասան էր, Լիբանիոսի ուսուցիչը: Մառի կարծիքով այդ ա- ռակները հայ գրականոթյան մեջ թափանցել են որպէս ճարտասանական գրականոթյան ու- ղեկիցներ: Եվ քանի որ «Գիրք պիտոյից» ճարտասանական ձեռնարկից բացակայում են դրա նախորինակ Ափրոնիոսի ձեռնարկի առաջին երկու գրութներին համապատասխանող գրութնե- րը, որոնցից առաջինը նվիրված է առակին, ապա, Մառի կարծիքով, այն հավանաբար առանձ- նացվել է և շրջանառվել որպէս ինքնուրոյն ժողովածու:

##### 1.4.1. Ծայի առակը

Aesop. *Fab.* 103.1b.1-11.

πρόσταγμα παρὰ τοῦ Διὸς ἐξῆλλθεν ἐν τῷ ποταμῷ διέλθωσι καὶ λουθῶσι καὶ θεάσει αὐτῶν τὴν καλλονήν. ὁ δὲ Ζεὺς τοῦτο τὸ δόγμα ἐπιθεῖς ἦλ- θον πάντα τὰ ὄρνεα λουθῆναι ἐν τῷ ποταμῷ. καὶ λουόμενα ἔπιπτον τὰ πτερὰ τῶν ὀρνέων. ὁ δὲ κο- λιοὺς καὶ αὐτὸς ἀπελθὼν λουθῆναι ἤθελεν ὁμοιω- θῆναι καὶ τοῖς λοιποῖς καὶ εὐειδέσιν ὀρνέοις. ἐκ τῶν πιπτόντων ὀρνέων τὰ πτερὰ περιωρεύσας περιεβάλλετο ἑαυτόν, ἵνα φαίνη καὶ αὐτὸς τῷ Διὶ ὡς τὰ λοιπὰ ὄρνεα. ἄνεμος δὲ φυσήσας ἔρριψε τὰ πτερὰ τοῦ κολιοῦ καὶ πάλιν κολιοὺς τοῖς πᾶσιν ὤφθη καὶ ἠσχύνθη κολιοὺς ἔκτοτε φανείς.

Զևսից հրահանգ եղավ, որ նրանք գնան գետի մոտ ու լողանան, իսկ ինքը կգնի նրանց գե- դեցկութունը: Զևսն այդ հրամանն արձակեց, և բոլոր թռչունները գնացին գետում լողանա- լու: Եվ թռչունների լվացվող փետուրները թափվում էին: Սև ագռավը, ինքն էլ գնալով լողանալու, ուզում էր նմանվել մյուս՝ գեղե- ցիկ թռչուններին: Իր շուրջը կիտելով թռչուններից ընկած փետուրները՝ իր վրա էր գնում, որպեսզի ինքն էլ Զևսին թվա մնացած թռչունների նման: Քամի փչեց ու սև ագռավի փետուրները թափեց, և կրկին նա բոլորի աչ- քին սև ագռավ երևաց ու ամոթահար եղավ՝ սև ագռավ երևալով:

Գրիգոր Նազ., ճառ 4.107.14-16 [130] = PG 35.644.14-17.

Եթէ ոչ յամենայնէ զրկու- թիւն ընդունել յայնցանէ է հարկաւոր, և զճային կրել՝ մերկ լինել ի յաւտարացն ի բաց բարձեցելոց փետրոց և ամաւթալի:

”H p̄ssa st̄eresθai tout̄on an̄agk̄i kai t̄o tout̄o kolioīoũ p̄aschein, ḡymnoũs eĩnai t̄on al- lotrīon periaireθéntas pte- r̄on kai asch̄imonaç;

Թե՞ պետք է զրկվել այդ ա- մենից և ճայի (սև ագռավի) բախտին արժանանալ՝ մեր- կանալ օտարների ընկած փե- տուրներից և խայտառակվել:

<sup>1</sup> Н. Марр, *Сборники притч Вардана*, часть I, СПб, 1893, 429-510: “Эзоповские басни”.

Յաղագս ճային և թևոցն հաւաքման. Ընտրութիւն էր, ապ, յաղագս գեղեցկութեան հաւուց, և Զևս էր քննիչ ընտրութեանն: Արդ՝ աւր սահմանեցաւ, յորում պարտ էր գումարել հաւուցն առ Զևս: Եւ յառաջնում սահմանեալ աւուրն եկին հաւքն ի գետս լուանալ, զի իւրաքանչիւրոցն փայլեցէ բնական գեղեցկութիւնն: Իսկ ճայ անուանեալ հաւք քաջ մանաւանդ փոքր է մարմնով և տգեղ տեսակաւ. այլ յանկեալ թևոց հաւուցն զինքեամբ շուրջ բարդեալ՝ եկն և նա առ Զևս, որպէս զի առցէ զգեղոյն յաղթութիւն: Եւ հողմոյ շնչեալ՝ ցրուէ զայլասեռս ի թևոցն, և մերկացեալ ի գեղեցկութենէն, ունելով զ'առ ի բնութենէն տգեղութիւն՝ լի եղև ամալթով:

Ἱστορία ἢ κατὰ τὸν κολοῖδὸν καὶ τὰ πτερὰ αὐτοῦ. Κρίσις ἦν, φησί, περὶ κάλλους ὀρνέων, καὶ ὁ Ζεὺς διαιτητὴς ὑπῆρχε τῆς κρίσεως. ἦν δὲ ὀρισθεῖσα ἡ ἡμέρα ἐν ἣ ἔδει συναλισθῆναι τὰ ὄρνεα παρὰ τὸν Δία. τῇ προτεραΐᾳ δὲ τῆς ὀρισθείσης ἡμέρας παρὰ τοὺς ποταμοὺς φοιτήσαντα τὰ ὄρνεα τοῖς νόμασιν ἀπενίζοντο τὰ πτερὰ ἵνα τὸ φυσικὸν ἐκάστω διαλάμψη κάλλος. ὁ δὲ κολοῖδός (ἔστι δὲ τοῦτο τὸ ὄρνεον εὐμάλα μικρὸν μὲν τὸ σῶμα, ἀκαλλῆς δὲ τὸ εἶδος) τῶν ἐκπεσόντων παρὰ τοῖς ὕδασι πτερῶν περιθεις ἑαυτῷ, ἦκε καὶ αὐτὸς παρὰ τὸν Δία, ὡς ληψόμενος τοῦ κάλλους τὸ νικητήριον. ἀνέμου δὲ ὧδε πνεύσαντος καὶ ἀποσκεδάσαντος τὰ ἀλλόφυλα τῶν πτερῶν, γυμνὸς εὐρέθη τοῦ κάλλους· ἔχων δὲ τὴν ἐκ φύσεως αὐτῷ περικειμένην ἀμορφίαν, οὕτω τῆς αἰσχύνης ἀπήλασεν.

Ճայի (սև ագռավի) և փետուրների<sup>1</sup> հավաքման մասին: Թռչունների գեղեցկության մրցույթ էր, առում է, և Զևսը մրցույթի դատավորն էր: Սահմանվել էր այն օրը, երբ բոլոր թռչունները պիտի հավաքվեին Զևսի մոտ: Սահմանվածի նախորդ օրը թռչունները եկան գետերի մոտ լվացվելու (փետուրները լվանալու), որպեսզի ամեն մեկի բնական գեղեցկությունը փայլի: Իսկ ճայ (սև ագռավ) կոչվող թռչունը հատկապես փոքր է մարմնով ու տեսքով տգեղ: Ուրիշ թռչունների (Չրերի մոտ) ընկած փետուրներից իր շուրջը կիտելով՝ նա էլ եկավ Զևսի մոտ, որպեսզի ստանա գեղեցկության մրցանակը: Եվ երբ քամի փչեց, ցրեց օտար փետուրները, և նա գեղեցկությունից մերկացավ: Ստանալով իր բնածին տգեղությունը (+ այսպես)՝ նա ամոթով մնաց:

Մառ, Առակք Ուրմպիանայ (Եզովպոսի առակներ), 136-137.

Քարոզ ի հաւս հասանէր յՈւրմզդէ յաւր գալ առ նա յերևելի առ ի գեղեցկութեան ընտրութիւն, զի ամենայնի լիցի, որ յաղթն է հաւուց՝ թագաւոր: Եւ լի էին այնուհետև աղբերք և գետք հաւուք, ի նոսա զինքեանս պճնելով, և զանվայելուչս թևոցն հանելով, և թողուին ամենեքեան որ միանգամ ի զարդ մատչէր: Այլ ճայ՝ արուեստիւ հնարէր, զի զայլոց հաւուց զթևս զիւրեաւ բարդեալ և յարմարեալ, կարի յոյժ գեղեցիկ և զարմանալի երևէր, և բազմատեսիլ էր իբրև բուրաստան պայծառութեան թևաւքն խորխտացեալ. և զարմանալի էր ամենայն հաւուց, զարմանալի էր և զիցն, և ամենայն կամաւք տեղի տուեալ յաղթութեան: Իսկ

Ուրմզդդից թռչունների մոտ մի բանբեր եկավ՝ ասելով, որ մի օր գնան նրա մոտ՝ գեղեցկության մրցույթի, որպեսզի հաղթողը դառնա թռչունների թագավորը: Այնուհետև բոլոր աղբյուրներն ու գետերը լի էին թռչուններով, որոնք բոլորը պճնվում էին դրանց մեջ և, հանելով անվայելուչ փետուրները, թողնում նրանք, որ հարիւր էին իբրև զարդ: Իսկ ճայը խորամանկություն գործեց. ուրիշների փետուրները գնելով իր վրա և հարմարեցնելով՝ շատ գեղեցիկ ու զարմանալի երևաց. և պարտեզի պես գույնզգույն էր՝ հպարտանալով թևերի պայծառութամբ: Նա զարմանալի էր թվում բոլոր թռչուններին, զարմանալի՝ և աստված-

<sup>1</sup> Հույարեն πτερόν նշանակում է՝ «փետուր», բայց նաև՝ «քն»: Թարգմանիչը սխալվել է՝ ընտրելով երկրորդ իմաստը, ինչը մենք ուղղում ենք մեր աշխարհաբար թարգմանության մեջ:

գիշերահասան իբրև այլով ամենայնիւ իմաստուն էր, և յայնժամ զթեւն ծանեաւ, և մատուցեալ ի բաց եհան, և ի ցոյց ամենայն հաւուցարար զգործն, մինչև իւրաքանչիւր ոք մատուցեալ զիւրն ի բաց հանէր, և մերկ ճայն երևեցաւ խաղ ամենայն հաւուց:

Գիրք պիտոյից, Վերջաբան 248.

Ձայն աւետաւոր հրատարակէր առ մետասան երամս աւղապարիցն, ի վեհագոյն վեհիցն պետաւորէ՝ երազապէս ժամանել ի յաւրն երևելի. որ ոք ի ձենջ իցէ գէղաղէշ ի վայելուչ դիտաւորութեան՝ ի հասարակացն գումարութեան առցէ զթագից աստիճան: Ոյց թեւածեալ փութապէս ճախրէին համաչուելով սեռք թեւահերձացն ըստ իւրաքանչիւր հոմերամ տեսակացն՝ հասանել ի տեղիս լոգարանացն. իջեալ առ հեզասահ վտակաւ խաղիցն յորդահոսան յստակագոյն աղբերացն, և ծայրալիւր վայրաւք վայելչացեալք, երամ երամ գնդիւքն բանակէին: Որոց հանդէսք ներանձիցն բոլորակամ քատակապէս առ ի զարդան պաճուճանացն զանհաւասարան ի փետրոցն յաւրինելով՝ պանծային զգերապատիւն առնուլ ձիրս: Անդ տխրեանդ հաւն խարդաւանեալ զ՛առ ի յայլոցն արտաքաղելով, բաղադրելով յիւրում սեւաթոյր սարասին, ի մէջ բերակերպ հաւուցն պայծառանայր՝ դիտաւորեալ բոլորիցն նորահրաշ, որ ծաղկազարդ երանգաւքն պաճուճանաց և գերապանծ հրճուանաւք զզարդուց բոցափայլիւր ի հասարակացն: Առ որ հնչելով գերանաւէտ զճայն համագունդ ժողով գումարելոցն՝ նուիրէին նմա վիճակին յաւետ ըստ արժանի արքայական ճոխութեան: Իսկ խորամանկ թռչունն գիշերասէր ի հոչակելին մերձակաց գոլով, պարատեսող խոհականութեամբ ծանաւթանայր իւր իրանն երանգի: Իսկոյն առեալ ի բաց գերծանելով համանման իւրոյինն ներգոյից, բացաղբելով աւրէն հոմագին արտայայտէր զբապանծ խրոխտանս պերճացելոյն: Հետեւելով և այլքն անգիտասարաս իւրեանցասարաս երանգոց գիտակ ելով ըստ մաւտագագայ իրադիտողին՝ զիւրաքանչիւր համանգամայն կապտէին: Երգ այպանելի և ծաղրական անգարդ յարտուստն զարդարանաց, և մերկագոյն յիւրոցն սարասից՝ ծաղրերաստս յոքնագան հաւուցն եղանիւր:

ներին, ու բոլորը հաղթանակը կամավոր նրան գիշեցին: Իսկ գիշերային թռչունը, քանի որ ամեն բանում իմաստուն էր, այնժամ փետուրը ճանաչեց և մոտենալով հանեց այն՝ բոլոր թռչուններին ի ցույց դնելով եղածը, մինչև որ յուրաքանչյուրը մոտեցավ ու իրենը հանեց, և ճայը երևաց մերկ՝ բոլոր թռչունների ծաղրի առարկա:

Վեհերից վեհագունն պետի ավետող ճայնն ազդարարեց օղագնացների տասնմեկ երամներին՝ շտապ ժամանել այսինչ օրը. «Ձեզանից նա, որ ընդհանուր ժողովում ամենագեղեցիկը կլինի, կստանա թագակրի աստիճան»: Փետրավորների տարբեր տեսակներ, իրենց նմանների երամներով թեւածելով, ճախրում-չվում էին՝ հասնելու լոգարանների վայրը: Իջնելով հեզասահ մաքուր ու հորդահոս աղբյուրների մոտ և վայելելով արգավանդ վայրերը, նրանք հավաքվում էին երամ-երամ: Այդ աշխույժ խմբերը, միաբան ու միանման ձևով զարդարվելով, հարգարելով անհավասար փետուրները՝ պարծենում էին՝ հուսալով ստանալ գերագունն պատվավոր պարգևը: Այդժամ մուսյլ գուններով մի թռչուն, նենգությամբ քաղելով ուրիշների փետուրները և կցելով իր սեւաթույր հարգարանքին՝ բազմատեսակ թռչունների մեջ գեղեցկացավ ու բոլորից հրաշագեղը երևաց. և նա փայլում էր ամենքի առջև պաճուճանքի ծաղկազարդ երանգներով ու զարդերի փառահեղ ցնծությամբ: Այդ առիթով հավաքվածների բազմությունը, երանության ճայն արձակելով, նրան ըստ արժանվույն արքայական ճոխ պատիվներ շնորհեց: Իսկ խորամանկ գիշերասեր թռչունը, պատվելիին մոտ գտնվելով, խորթափանց խոհեմությամբ ճանաչեց իր սեփական գունավորումը: Իսկոյն վերցրեց ու դուրս քաշեց իր վրա եղածների նման փետուրները՝ ցուցադրելով իր պճնված ազգակցի սնափառ ինքնագոհությունը: Նրա հետեւությամբ մյուսներն էլ, մոտիկից դիտելով, ճանաչեցին սեփական երանգները, և յուրաքանչյուրն իր բոլոր փետուրները դուրս քաշեց: Հնչեց զարդերից զրկվածին այպանող ու ծաղրող մի երգ, և, իր զարդերից մերկացած, նա բազմաթիվ թռչունների ծաղրի առարկան դարձավ:



Վարդան Այգեկցի, ԻԸա Աւտարափետուր ճայեկ [Բ 36].

Արամաստ չաստուածն ասաց, թէ հաւքտ ամենայն էկեալ ի յայս անուն ուի?? լակցիք (լվացիք<sup>6</sup>) և սանդրվեցէք. և ես դամ տէսանեմ. և որն որ գեղէցիկ թւի, գայն հաւանց թագաւոր դնեմ. և էկեալ՝ ամէնէքեան զարդարեալքն. էկեալ յետոյ ճայն և յամէնեցուն փետրէն առեալ՝ զանձամբն շարեալ և զարդարեալ առաւել քան զամենայն. և տեսեալ հաւքն զարմացան և ասացին, թէ այլ սոյնպէս գեղեցիկ հաւ չենք ի տէսել. և սաքն էր արթուն հաւ. էկեալ ի մաւտ տէսեալ զիւր փետուրն ճանաչեաց և ամէնէքեան զիւրեանց առին. և մնաց ճան սեւթոր մի: Այսպէս է ամենայն մարդ, որ այլոց ընչիւք և կամ գիտութեամբ պարծենայ:

Արամազդ չաստուածն ասաց, որ բոլոր թռչունները գան այսինչ տեղը, լվացվեն ու սանրվեն. «Եվ ես կգամ ու կտեսնեմ, և ով գեղեցիկ թվա, նրան թռչունների թագավոր կնշանակեմ»: Եվ բոլորը եկան զարդարված: Հետո եկավ ճայը և, բոլորից փետուրներ վերցնելով, շարեց իր վրա ու բոլորից շատ զարդարվեց: Թռչունները տեսան, զարմացան ու ասացին, թէ՝ «Ուրիշ այսքան գեղեցիկ թռչուն չենք տեսել»: Իսկ սագն արթնամիտ թռչուն էր. մոտ եկավ, տեսավ իր փետուրը, ճանաչեց, և ամենքն իրենցն առան: Եվ ճայն այսպես սեւթույր մնաց: Այսպես է ամեն մարդ, որ ուրիշների ինչքով կամ գիտութեամբ է պարծենում:

#### 1.4.2. Արամազդի և օձի առակը

Aesop. *Fab.* 248.1.1-7.

τοῦ Διὸς γαμοῦντος πάντα τὰ ζῶα ἀνήνεγκαν δῶρα, ἕκαστον ὅτι ἐδύντο. ὄφις δὲ ἔρπων ρόδον ἀναλαβὼν τῷ στόματι ἀνέβη. ἰδὼν δὲ αὐτὸν ὁ Ζεὺς ἔφη. "τῶν ἄλλων πάντων τὰ δῶρα λαμβάνω. ἀπὸ δὲ τοῦ σοῦ στόματος οὐ λαμβάνω". ὁ λόγος δηλοῖ, ὅτι τῶν πονηρῶν αἱ χάριτες φοβεραὶ εἰσιν.

Երբ Զևսն ամուսնանում էր, բոլոր կենդանիներն ընծաներ բերեցին: Օձը եկավ սողալով և բերանում վարդ բուսած: Տեսնելով նրան՝ Զևսն ասաց. «Մնացած բոլորի նվերներն ընդունում եմ, իսկ քո բերանից չեմ ընդունում»: Առակս ցուցանե, որ չար մարդկանց ծառայություններն ահավոր են:

Վարդան Այգեկցի, ԶԶ. Արամազդ և աւճ [Բ 104].

Արամազդն արար հարսանիս որդոյ իւրոյ. և գային ամենայն կենդանիքն և բերէին ընծայ և ոփիտք. գայ աւճն և բերէ անուշայհոտ տերևս գեղեցիկ՝ զվարդն տերևովն. և նայ ի բաց վարեաց զաւճն և ասաց. ոչ է արժան առնուլ ինչ ի թունալից բերանոյ քումէ: Տուցանէ առակս, թէ ոչ է պարտ առնել ի պղծոյ և անզղջից, որ ոչ կամին դիմել առ Աստուած ապաշխարութեամբ և արտասոււաք:

Արամազդն իր որդու հարսանիքն էր անում. բոլոր կենդանիները գալիս էին և ընծաներ բերում: Եկավ օձը և բերեց գեղեցիկ անուշահոտ տերևներ՝ տերևով վարդ: Իսկ նա վանեց օձին և ասաց. «Պետք չէ նվեր վերցնել քո թունալից բերանից»: Առակս ցուցանե, որ պետք չէ բան վերցնել պիղծ ու չզղջացող մարդկանցից, որոնք չեն կամենում Աստուծան դիմել ապաշխարութեամբ և արտասոււաքով:

#### 1.4.3. Շան և սուվերի առակը

Aesop. *Fab.* 136.2.1-6.

κύων κρέας φέρων ποταμὸν διέβαινε. Θεασάμενος δὲ τὴν ἑαυτοῦ σκιάν κατὰ τοῦ ὕδατος ὑπέλαβεν ἕτερον κύνα εἶναι μείζον κρέας κατέχοντα καὶ ἀφείξ τὸ ἴδιον ὄρμησε τὸ ἐκείνου λαβεῖν.

Մի շուն միսը բերանին գետն էր անցնում: Տեսնելով իր սովերը ջրում՝ ենթադրեց, թե դա մի ուրիշ շուն է, որ մի ավելի մեծ կտոր միս է բռնել, և, թողնելով իր միսը, նետվեց այն խլե-

συνέβη δὲ αὐτὸν ἀπολέσαι ἀμφοτέρων, τὸ μὲν, δι-  
ότι οὐδὲν ἦν, τὸ δέ, ὅτι ὁ κατεῖχεν ὑπὸ τοῦ ρεύ-  
ματος κατεσύρε.

լու: Եվ այնպես եղավ, որ երկուսն էլ կորցրեց՝  
մեկը, որովհետև չկար, մյուսն էլ, որովհետև  
հոսանքը տարավ:

Գրիգոր Մագիստրոս 16. (ՀԳ).8-9.

Արդ կամ հրամայեա՛ բերել մեզ ի խոստացեալ  
ձկանցդ պարգևաց, կամ զանյուսալին մեզ ան-  
հասիցդ ընկալցուք զիր, զի մի՛ նքթեալս զաւ-  
րէն Պաղմենիդեայն շան, որ ի կամուրջն ելեալ  
և կող ի բերանն իւր կալեալ, գստուերն ի գե-  
տին տեսեալ, տենչայր ըղձացեալ այնմ հասա-  
նել, ի բաց ընկեցեալ և յստորս վազեալ, և ոչ  
այնմ հասեալ, նքթեալ հոլովիւր ի գետէն: Զոր  
Պաղխոսի կենդանագրեալ ի Պարմենիդայ տա-  
ճարին մերձ մակագրեալ խրատականս այսպի-  
սեաց անիմաստ տուփման:

Այժմ կամ հրամայիր բերել մեզ խոստացածդ  
ձկների պարգևներից, կամ էլ թող մենք ան-  
հույս նամակ ստանանք մեզ անհասանելի բա-  
ների մասին, որպեսզի չլինի թե քաղց զգանք  
Պարմենիդեսի (՞) շան պես, որը, բարձրանալով  
կամրջին և բերանում կող բռնած, տեսնելով  
ստվերը գետի մեջ՝ նրան հասնելու իղձով  
լցվեց, գցեց և ցած վազելով, չհասավ նրան ու  
քաղցած քշվեց գետով: Պաղքոսը նկարեց դա  
Պարմենիդեսի տաճարում և խրատական մակա-  
գրուլթյուն կցեց այսպիսի անիմաստ ցանկու-  
թյան մասին<sup>1</sup>:

Վարդան Այգեկցի, ՃՀԳ. Թագաւոր և շուն և շուքն [Բ 208-209].

Թագաւոր մի բարի և բարեմիտ՝ ճաշ արարեալ  
յեզր գետոյն. և շուն մի սոված եկն առ թագա-  
ւորն. և նա ետ հաց մի սուրբ: Եւ առեալ շանն  
գնայր ընդ եզր գետոյն. ետես ՚ի շուրն զիւր  
շուքն իբրև զայլ շուն և զհացն ՚ի բերան  
նորա: Եւ շունն ազահեալ մոռացաւ զհացն, որ  
՚ի բերանն էր. վազեաց ՚ի գետն. զի առցէ  
զհացն ՚ի միւս շանէն. և ո՛չ եգիտ. զի շուքն  
էր: Եւ զայն հացն, զոր ունէր, գետն տարաւ. և  
շունն ելեալ երթայր սովամահ:

Մի բարի և բարեմիտ թագաւոր ճաշ էր պատ-  
րաստում գետափին: Մի սոված շուն եկավ թա-  
գաւորի մոտ, և նա մի կտոր մաքուր հաց տվեց  
նրան: Շունը վերցրեց, գնաց գետափ, շրի մեջ  
տեսավ իր ստվերը՝ որպես մեկ այլ շուն, բերա-  
նում էլ՝ հաց: Շունն ազահուլթյամբ մոռացավ  
իր բերանում եղած հացը, վազեց գետը, որպես-  
զի վերցնի հացը մյուս շնից, և չգտավ, քանի  
որ դա իր ստվերն էր: Եւ այն հացը, որ ինքն  
ունեիր, գետը տարաւ, և շունը դուրս եկավ ու  
գնաց սովահար:

### 1.5. Աստվածները որպես բնական երևույթների և եղանակի այլաբանություն

Աղեքսանդրի պատմութիւն Ա 323 = Alex. α 3.26.7.

Արամազդ ոչ դադարեաց տե-  
ղաով աւուրս քառասուն:

Ζεύς οὐκ ἐπαύσατο ὕων ἡμέρας  
τεσσαράκοντα.

Զևսը (անձրևը) չէր դադարում  
տեղալ քառասուն օր:

Փիլոն, տեսական 6 = Philo, Cont. 3.

Իսկ արդ արդևք զայնոսի՞կ  
որք գտարերս պատուեցին,  
զերկիր, զշուր, զաւր, զհուր,  
որոց և մականուանս եղին,

ἀρά γε τοὺς τὰ στοιχεῖα τιμῶν-  
τας, γῆν, ὕδωρ, ἀέρα, πῦρ; οἷς  
καὶ ἐπωνυμίας ἔθεντο ἑτέρας ἔ-  
τεροι, τὸ μὲν πῦρ Ἵφαιστον πα-

Արդյո՞ք նրանց, ովքեր պատ-  
վում էին տարրերը՝ երկիրը,  
շուրը, օդը, հուրը, նրանք  
տարբեր մականուններ գրե-

<sup>1</sup> Անհասկանալի է, թե ինչու է Մագիստրոսն այստեղ ավելացրել Պարմենիդեսի անունը: Հայտնի էր նախասոկ-  
րատյան փիլիսոփա Պարմենիդեսը, որի անունով է կոչվում Պլատոնի տրամախոսություններից մեկը: Պաղքոսն էլ  
է առեղծվածային կերպար. այդպիսի հունական անուն առհասարակ ավանդված չէ:

այլս՝ այլք : Զհուրն՝ Հեփեստոս, առ ի լուցանելն և բորբոքել կարծեմ թէ կոչեցին: Իսկ Հերա՝ զաւր, առ ի համբառնալն և վերամբարձիլ առ ի բարձրութիւն իմն, և զՅուր՝ Պոսիդոնա<sup>1</sup>, ինձ թուի թէ վասն ըմպելին լինելոյ, իսկ զերկիր՝ Դեմետրա, ըստ որում մայր ամենայնի թուի գուլ, կենդանեաց և տնկոց:

Փիլոն, Ժ բան 237 = Phil. Decal. 54-56.

Քանզի կոչեն ոմանք զերկիր Աղջիկ, Դեմետրայոյդ, և զծով՝ Պոսիդոնայ, ծովային դևս ընդ իշխանութեամբ նորա ստեղծանեն, և սպասաւորութեանն նորա ժողովս մեծամեծս, արուաց և իգաց. և օղոյի օղոգ. և զհուր՝ Հեփեստոս. և արեգական զՎահագն, և լուսնին զԱրտեմիս, և արուսեակ՝ զԱստղիկ, և Փայլածոց՝ զՀերմէս, և այլոց աստեղաց զԻւրաքանչիւր ուրուք զանուանցն կոչմունս՝ առասպելազրացն ընձեռեցին:

Գրիգոր Նազ., ճառ 4.116.5-9 [142-143] = PG 35. 653.40-45.

Զիարդ Ովկիանոս ընդ Տեթիւայ հաշտի ի ձեռն Երայ նախահոգութեանն զարդարեցելոյ, վասն զի վտանգ էր ամենայնի ժամանակ ինչ ողջախոհանալն նոցա, եթէ ընդ ցամաք բնութիւնն և խոնաւ հաշտել կարաւտանայցեն, զի մի առաւելութեամբ միովն ամենայն խառնակեցի:

րὰ τὴν ἕξαψιν, οἶμαι, καλοῦντες, Ἦραν δὲ τὸν ἀέρα παρὰ τὸ αἶρεσθαι καὶ μετεωρίζεσθαι πρὸς ὕψος, τὸ δὲ ὕδωρ Ποσειδῶνα τάχα που διὰ τὸ ποτόν, τὴν δὲ γῆν Δήμητραν, παρόσον μήτηρ εἶναι δοκεῖ πάντων φυτῶν τε καὶ ζώων.

Καλοῦσι γὰρ οἱ μὲν τὴν γῆν Κόρην, Δήμητραν, Πλούτωνα, τὴν δὲ θάλατταν Ποσειδῶνα, δαίμονας ἐναλίους ὑπάρχους αὐτῶ προσαναπλάττοντες καὶ θεοραπείας ὀμίλους μεγάλους ἀρρένων τε καὶ θηλειῶν, Ἦραν δὲ τὸν ἀέρα καὶ τὸ πῦρ Ἦφαιστον καὶ ἦλιον Ἀπόλλωνα καὶ σελήνην Ἄρτεμιν καὶ ἑωσφόρον Ἄφροδίτην καὶ στίλβοντα Ἑρμῆν· καὶ τῶν ἄλλων ἀστέρων ἐκάστου τὰς ἐπωνυμίας μυθολογῶν παρῆδοσαν.

πῶς μὲν Ὠκεανὸς Τηθύϊ καταλλαγήσεται διὰ Ἦρας πορνικῶς κοσμουμένης. ἐπειδὴ κίνδυνος τῷ παντὶ χρόνον τινὰ σωφρονούντων αὐτῶν. εἴτ' οὖν τὴν ξηρὰν φύσιν καὶ τὴν ὑγρὰν καταλλάττεσθαι δεοί, μὴ τῷ πλεονασμῷ τοῦ ἑτέρου τὸ πᾶν συγχεθῆ.

ցին: Հուրը նրանք կոչեցին Հեփեստոս, կարծում եմ՝ այրելու և բորբոքվելու համար, օղը՝ Հերա՝ վեր բարձրանալու և ճախրելու<sup>2</sup>, Յուրը՝ Պոսիդոն, հավանաբար՝ ըմպելի լինելու համար, հողը՝ Դեմետեր, քանի որ թվում է, թե նա բոլորի՝ կենդանիների և բույսերի մայրն է<sup>3</sup>:

Ոմանք երկիրը կոչում են Դեմետերի դուստր Աղջիկ (Կորա), Դեմետեր, (+ Պլուտոն), ծովը՝ Պոսիդոն. ստեղծում են նաև նրա իշխանության տակ գտնվող ծովային ոգիներ և նրան սպասավորող արու ու էգ արարածների մեծ բազմություններ, օղը՝ Հերա<sup>4</sup>, հուրը՝ Հեփեստոս, արեգակը՝ Վահագն (Ապոլլոն), լուսինը՝ Արտեմիս, արուսյակը՝ Աստղիկ (Ափրոդիտե), Փայլածուն՝ Հերմես: Առասպելագիրներն անուններ են տվել նաև մյուս աստղերից յուրաքանչյուրին:

Ինչպես է Օվկիանոսը հաշտվում Տեթիսի հետ՝ Հերայի օգնությամբ զարդարված կանխատեսություն (պոռնիկական ձևով<sup>5</sup>), քանի որ ինչ-որ ժամանակ նրանց ժուժկալությունն ամեն ինչի համար վտանգավոր կլիներ, եթե կարիք ունենային չոր ու խոնավ բնությունները հաշտեցնելու, որպեսզի ամեն բան չխառնակվի մեկի գերակայությամբ:

<sup>1</sup> «Պոսիդոն» հունարեն անվան հայցական հոլովածնի տառադարձումն է:  
<sup>2</sup> Հավանաբար ակնարկվում է Ջևսի՝ Հերային Օլիմպոսից կախելու պատմությունը. տե՛ս դրվագ 11:  
<sup>3</sup> Հունարեն սկզբնազրույց աստվածների անունները բացատրված են նրանց հետ որոշ հնչյունական առնչություն ունեցող բառերով:  
<sup>4</sup> Աղավաղված է. վերականգնում ենք ըստ հունարենի:  
<sup>5</sup> Հավանաբար քարգանձիչը պոռնիկոս-ի փոխարեն կարդացել է քոմիթեուտիկոս կամ քոմիթեիա:

Ովկիանոսս Հայր է ամենեցունց աստուածոցն, և Տեթրա՝ մայր, քանզի այր և կին են Տեթրա և Ովկիանոսս, և եթէ բաժանեցան երբեմն ի միմեանց, այլ ի ձեռն միջնորդութեանն Հերայ եղև կանխաւ շարամերձութիւն սոցունց և սիրելութիւն: Այլ առասպելս նշանակէ, թէ Ովկիանոս է գէշ բնութիւնն, իսկ Տեթրա՝ չորն, որ է երկիր, և կենդանութիւն ոչ լինելով՝ կորուսեալ լինին ամենայնք: Ապա Հերա, որպէս վերատեսուց գոլով լծակցութեանն, զի Հերաս ըստ նոցա աւագ է, Հաշտեցուցանէ զերկու տարերսն, և եղանի կենդանածնութիւն:

Չկեանո՛ς πατήρ ἐστὶ πάντων τῶν θεῶν, ἢ δὲ Τηθύς μήτηρ ἀνδρόγυνον δὲ ὁ Ὁκεανὸς καὶ ἡ Τηθύς καὶ ὅτι πάλαι διέστησαν ἀπ’ ἀλλήλων, διὰ δὲ δυσωπίσεως τῆς Ἥρας γίνεται πάλιν συνάφεια αὐτῶν καὶ φιλία. ὁ δὲ μῦθος, φησὶν, αἰνίττεται ὅτι ὁ Ὁκεανὸς μὲν ἐστὶν ἡ ὑγρὰ φύσις, ἢ δὲ Τηθύς ἡ ξηρά, τουτέστιν ἡ γῆ. καὶ ὅτι πάλαι τῆς ὑγρᾶς φύσεως μὴ συγγινομένης τῆ γῆ, οὐδὲν ἐζωογονεῖτο, καὶ ἀπώλλυτο πάντα. εἶτα ἡ Ἥρα, ὡς ἔφορος οὖσα τῆς συζεύξεως, καταλλάττει τὰ δύο στοιχεῖα, καὶ γίνεται λοιπὸν ζωογονία.

Օվկիանոսը բորբ աստվածների Հայրն է, իսկ Տեթրա՝ մայրը, քանզի Տեթրան ու Օվկիանոսն այր ու կին են, և վաղուց միմյանցից բաժանվել են, և Հերայի միջնորդությամբ կրկին Հաստատվել է նրանց կապն ու սերը: Այս առասպելն ակնարկում է, որ Օվկիանոսը խոնավ բնություն է, իսկ Տեթրա՝ չոր, այսինքն՝ հողը: Եվ քանի որ երկար ժամանակ խոնավ բնությունը չի խառնակվում երկրի հետ, նա ոչինչ չի ծնում, և բորբը կորստյան են մատնվում: Հետո Հերան, լծակցության վերատեսուց լինելով,՝ քանի որ Հերան ըստ նրանց ոգն է (չէք քանի որ... ոգն է), – Հաշտեցնում է երկու տարրերը, և տեղի է ունենում կենդանածնություն:

Ղևոնդ 19 [845].

Կոչէ զՏաճատ իշխանն և զսպարապետն Բագարատ և զՆերսէ՛՛՛՛՛՛՛ Կամսարական և գայլսն ի նախարարացն Հայոց յաւուրս տապախառն ծագման Հեփեսոտեայ Հրագագաթան:

Կանչում է Տաճատ իշխանին և Բագարատ սպարապետին և Ներսես Կամսարականին և ուրիշ Հայ իշխաններին՝ Հրագագաթ Հեփեսոտսի տապախառն ծագման օրերին:

Գրիգոր Նարեկացի, Ապ. 914.

Նա և ահագնութիւնք աշխարհապարունակ, երկրապարփակ, տիեզերապատ պտուտկացն Պիսիդոնի:

Նաև աշխարհը պարունակող, երկիրը պարփակող, տիեզերքը պատող Պոսեյդոնի (ծովի) պտուտակածև ալիքների ահագնությունը:

Գրիգոր Նարեկացի, Մծբ. 996.

Ընդ երկնայնոցն կցորդեցաւ ... զթանճրութիւն Դեմետրի էհերձ, զերկիր բաժանեաց նշանաւ խաչին շեշտակի, քան թէ Մովսէս գծովն գաւազանաւն:

Հաղորդակցվեց երկնայինների հետ ... պատուեց Դեմետրի (երկրի) թանճրությունը, խաչի նշանով բաժանեց երկիրն ավելի շեշտակի, քան Մովսեսը ծովն էր բաժանել գավազանով:

Գրիգոր Լուս., Գանձ. 991.

Եւ ուռմամբ ահագին սաստիւ բախմամբ հզաւրին բազկաց / Հերձեալ պատառեալ զթանճրու-

Եվ հզոր բազուկներն ահագին ուռեցնելով ու սաստիկ հարվածելով, հերձելով պատուեց Դե-

թիւն Դեմետրի դիմաց, / Եւ փշրեալ խորտակեաց ըզկարծեցեալ գլուխ հըզաւրին, / Եւ սուզեալ ընկղմեաց ի խորըս ներքին սանդարամետին:

մետերի (երկրի) երեսի թանձրութիւնը, և փշրելով խորտակեց կարծեցեալ հզորի գլուխը, և սուզելով ընկղմեց այն դժոխքի ամենախորքերը:

Գրիգոր Մագիստրոս 29 (Մ).6.

Ծայրացեալն մեր մակղասական հանդերձ զաւրուն Պրիմիւթէ յուսացուցանէ զմեզ յայսպիսուամն տատանական տեւել կենդանութիւն:

Մեր գերագույն հրամանատար Պրոմեթէսը (տաք եղանակը) իր գորքով հանդերձ հույս է ներշնչում մեզ, որպեսզի հարատեւենք այսպիսի հեղհեղուկ կյանքում:

Գրիգոր Մագիստրոս 30 (ՄԱ).2.3.

Ժամանել, մինչ տակաւին Աթենայ իւրովն հարսնացեալն զարդու պերճ և պաճոյճ սաղարթանայր բոլորն իւրածին յոգնաբեղուն շարակայացեալ զարմիւ, տայր մեզ աջալուրջ իմն և սխրալի աւգնականութիւն, և ընդարձակագոյն դրունս յամենայնի չու պարել ընթացիւք: Ապա մերձ առ Ծոփս յորջորջեալ աշխարհ հուպ մերձ եղելոյ՝ հասանէ աթլոյժն խիզախամբ իւրովն ճանշաճերմակ և սալամբակն երիվարաւ մակաւասար մենամարտիկն այն և գոռոզն Պիսիդոն յայսպիսի հեծեալ և, ընդ ինքեան առեալ զքաջավազիկն երկնաչու և վրնշապապչեակ զքաւչն քաղեան, աճապարեալ նահանջեաց զղէմ հառ, և Հեփեսոսս ի փախուստ եղեալ հանդերձ Պրոմէդէի:

Հասնել, մինչ Աթենան, հարսնանալով իր պերճ ու պաճուճավոր զարդով, տակավին ծաղկում էր իր ողջ՝ իրենից ածանցված ու իրեն շրջապատող ցեղով և մեզ զվարթ ու հրաշալի օգնութիւն էր ընձեռում և արագ ընթացքով սլանալու ընդարձակ դռներ: Ապա, երբ նա գտվում էր Ծոփք կոչվող երկրի մերձակայքում, աշխույժ խիզախումով վրա հասավ այն միայնակ մարտնչող ու գոռոզ Պոսեյդոնը<sup>1</sup> հեծած իր ճանճի պես սև ու սպիտակ և սալաճև սմբակներով երիվարը, և, իր հետ վերցնելով արագավազ, օդի մեջ ճախրող պապաչող նոխազին, աճապարանքով նահանջի դեմն առավ, և Հեփեսոսը Պրոմեթէսի հետ<sup>2</sup> փախուստի դիմեց:

Գրիգոր Մագիստրոս 53 (ԼԲ).14-16.

Մինչ տակաւին Հեփեսոսս մանուկ է և Պրիմիթոս երիտասարդ և Աթենա կոյս ոչ պառաւեալ, աճապարեա՛ աւգնականութեամբ նոցա, զի պարեսցի բակառաբար պարթեւն, և ծերունին մի՛ ի ծամելիս անկցի հազարացուց, և մի՛ Կռաւնոս հասցէ հանդերձ հիւսիսային զաւրովն, ընդ ինքեան բերեալ զՊիսիդոն, մակավազիկ առնելով ի վերայ աւանաց՝ շահատակել աւժանդակ և հզաւր բռնութեանն: Քանզի քաջ գիտեմք, եթէ Պրիմիթոս այժմ ուշ եղեալ է խաղալ չու մաւտ առ Բաբելոն և անդուստ ի ծայրս հարա-

Մինչ տակավին Հեփեսոսը մանուկ է, Պրոմեթէսը երիտասարդ, և Աթենա կույսը չի պառավել, շտապի՛ր օգնել նրանց, որպեսզի պարթեւը շուրջապար բռնի և ծերունին հազարացիների ատամների տակ չընկնի, և Կրոնոսը<sup>3</sup> չհասնի հյուսիսային գորքով՝ իր հետ բերելով Պոսեյդոնին, հարձակվելով ավանների վրա, վրա վազելով հզոր սաստկութեամբ: Քանզի մենք քաջ գիտենք, որ Պրոմեթէսն այժմ մտադիր է տեղափոխվել Բաբելոնի մոտերքն ու այնտեղից՝ ծայր հարավ, և Պոսեյդոնը պատրաստվում է

<sup>1</sup> Այսինքն՝ անձրևոտ եղանակը:  
<sup>2</sup> Այսինքն՝ տաք եղանակը:  
<sup>3</sup> Այսինքն՝ ցուրտը. հմմտ. Eustath. Ad Hom. II. 3.640.19 Κρόνος και Τιτάνες ὑπερβολαί ψυχρότητος («Կրոնոսն ու Տիտանները ցրտի չափազանցությունն են»):

ւոյ, և Պիսիդոն Հանդերձ սպիտակափառն զաւրովք շահատակել Հանդերձեալ է, և Կուսնոս յայծի հեծեալ ի վրնջապապջակն քաղ սալասմբակ: Եւ յայսմանէ զարհուրեալ իւրաքանչիւր ոք յանբան կենդանեացն որջս և խորս և ամբարս յարմարեն:

Գրիգոր Մագիստրոս 54 (ԼԴ).

Առ նոյն եպիսկոպոսն Մոկաց վասն ահագին ցրտոյ և սառնամանեաց:

Յուզիկն ոլոմպեան Ապոլինար, հեծեալ յԱրտեմեանն ալոջ, գայ հասանէ միամարտ ի վերայ Աթենայ: Խոկացեալ գայս արին, տրամախոհէր մրցանակ, զի ծանուցեալ էր մանկանն զփախուստն Աթենայ, զհեռագոյնն ի հարաւ շահատակէ, խիզախեալ, զի աւարել կարացցէ: Եւ եկեալ սորա չու, թեթեալոյն իւր զաւրու զմնացեալսն ի բանակէ և յաղխէ սուղ ինչ աւարեալ կապտեաց և բանակեաց ըստ իւրում հայրենական զաւրութեանն: Իսկ Կուսնոս բուրբ բանակաւն մնայ առ հիւսիսիւ խորանաւք և սպիտակափառ վահանաւք և փողովք ահագին գոչմամբ և թմբկաւք, հրաշալի հեծեալ ի ճանջաներմակն երիվար և, զԿուսնեանն կուսպոզ բարձրեղջեր նոխազ ի կառս իւր լծեալ, և մահաշունչ հոտ քաղուն քարգոնական նժուզին նախ բուրէ քան զկառսն: Եւ այժմ առաքեալ հրեշտակ և թե նամակին պարապնդեալ, և կնիք կապարեայ մակկոփեալ Ապոլինար առ Կուսնոս, եթէ «Մե՛ր, պնդեա՛, փոյթ հասի՛ր ծառացելովք քո ամպովք, զի ես կալայ բանակեալ: Աթեան չոգաւ ի Բասրա, ի լրտեսաց ոմն երեկ մեզ ազդեաց, ստուգեաց յետ մետասան աւուրց»: Այլ Կուսնոս եկեալ, պաշարէ կցորդաբար առ միմեանս հասեալ, իսկ Հեփեսոսս և Պուլմիդեան սակաւ ինչ առ մեզ յարաբացուցն թողեալ զաւրս և ի թիովպացուց, որ թէ ոչ արտաքոյ կարող են մրցել, այլ ի քաղաքս և ի դղեակս աւզնեսցեն, տալով մեզ աւզնականութիւն և ի ժամանակի ի ձեռն փութահասիկ կունդուռաց. չոգան խնդիր Պուլմիդեայ և Աթենայ: Եւ դովրացին կարծեմ, թէ և նա մեզ մահուամբ իւրով ձեռնտու լինի: Եւ մկնաճարական ճողպրեալ պարառաբար յեղափոխեն,

հարձակվել իր սպիտակ գորքով, և Կրոնոսը հեծել է այժը՝ սալաձև սմբակներով պապաչոզ նոխազը: Եվ սրանից սարսափած՝ անբան կենդանիներից ամեն մեկը որջեր, փոսեր ու պատսպարաններ են մտնում:

Նույն Մոկքի եպիսկոպոսին՝ ահավոր ցրտի ու սառնամանիքի մասին:

Օլիմպիական Ապոլլոնը, Արտեմիսի ուլը հեծած, գալիս հասնում է Աթենայի հետ մենամարտելու: Այսպիսի մտադրությամբ քաջը հաղթանակ էր ակնկալում, քանի որ երիտասարդին տեղեկացրել էին Աթենայի փախուստի մասին. նա հարձակում գործեց հեռավոր հարավի վրա՝ խիզախելով, որպեսզի կարողանա ավարի առնել: Իր թեթև գորքով եկավ, ինչ որ մնացել էր բանակից ու մարդկանցից՝ կողոպտեց և հավաքեց ըստ իր հայրենական հզորության: Իսկ Կրոնոսն<sup>1</sup> իր ողջ բանակով մնում է Հյուսիսային վրաններում՝ սպիտակափայլ վահաններով ու փողերով, աղմուկ-աղաղակով ու թմբուկներով, ճանճի պես սև ու սպիտակ հրաշալի երիվարը հեծած, և կրոնոսյան կեռ ու բարձր եղջյուրներով նոխազին իր կառքին լծած. և արքայական նժույզի այծերի մահաշունչ երամակը կառքից առաջ է ընկնում: Այժմ Ապոլլոնը Կրոնոսի մոտ սուրհանգակ է ուղարկում և նամակին թե է փակցնում ու կապարե կնիքով կնքում, թե՛ «Մե՛ր, շտապի՛ր, փութով հասի՛ր քո ծառացյալ ամպերով, քանի որ ես բանակի համար տեղ եմ գրավել: Աթենան գնացել է Բասրա, լրտեսներից մեկը մեզ դա ստույգ հայտնել է տասնմեկ օր անց»: Իսկ Կրոնոսը գալիս, պաշարում է, անմիջապես հասնում են իրար, Հեփեսոսսն ու Պրոմեթևսն էլ, մեզ մոտ մի քիչ արաբական ու եթովպական գորք թողնելով<sup>2</sup> (դրանք չեն կարող կռվել դրսում, այլ միայն՝ օգնել քաղաքներում և ամրոցներում՝ մեզ օժանդակութուն տալով ժամանակին և արագավազ սուրհանգակների միջոցով), գնում են փնտրելու Պրոմեթևսին և Աթենային: Եվ տավրացին (Արտեմիսը), կար-

<sup>1</sup> Այսինքն՝ ցուրտ եղանակը:  
<sup>2</sup> Հավանաբար ակնարկվում են տաք երկրներից փչող քամիները:

մակստորական սպառազինեալ մեր և յասրեան արեանցն և յամենեին յոռեացն հիքից և անկուածուկ յոքնորական զրահիւք և ի խոտաբուխ խաւարտածին այծեաց աւղափառ կորզեալ շարամանեալ սաղաւարտաւք, զի ի դիմի հարցուք որմզդական զաւրուն: Բայց Դիոնիսէս, նախանձեալ Ապողինարի և Մենոսի և Հուդամանդեայ, գաղտնի սէր Աթենայ և Պուրմիդեայ հանդերձ Հեփեստիւ կապեալ, թողու մեզ զաւր թագնի: Եւ այսու յուսացեալ բաւեմք ակնկալութեան եռամսեայ աւուրբք: Ահա պնդեսցո՛ւք պարառաբար մարտիւ ամրացուցեալք զպատնէշ և զմահարձանս շահատակել առաքինաբար և զերիվարս կազմեսցո՛ւք իբր զքաջս, զի ի գալ արաբացուոցն ասպատակեսցուք ի հիւսիս, աւար առեալ զխորանս և զերիվարս և զնոխազս, զի նա երբէք ոչ ի մէնջ աւար տարեալ յիւրն աշխարհ, այլ որչափ եկեալ է Կուաւնոս ի սեփականս Աթենայ, յալթահարեալ նահանջի, զի սեփականս Աթենայ կուսին, կուսածին քաջախիզակ իմաստնոյն:

ծուծ եմ, մեզ իր մահով օժանդակուծ է: Եվ, մկնակերներին փախցնելով, ամբողջովին այլափոխուծ են, իսկ մենք վերից ու վարից սպառազինվուծ ենք և՛ բրդեյա հյուսած բազմապիսի զրահներով, և՛ ...<sup>1</sup>, և՛ խոտաբուս ու բանջարակերությամբ մեծացած այծերից կորզված մորթուց կարված սաղավարտներով, որպեսզի դիմակայենք որմզդական զորքին: Բայց Դիոնիսոսը<sup>2</sup>, նախանձելով Ապոլլոնին և Մինոսին ու Հուդամանթիսին<sup>3</sup>, գաղտնի բարեկամություն հաստատելով Աթենայի և Պրոմեթէսի հետ՝ Հեփեստոսով հանդերձ, մեզ թաքուն զորք թողեց: Եվ, սրա վրա հույս դրած, բավարարվուծ ենք երեք ամիս սպասելով: Ահա շտապենք՝ կուզով շուրջանակի ամրացնելով պատնէշներն ու աշտարակները, քաջաբար հարձակվենք, քաջերի պես շարենք երիվարներին, որպեսզի, երբ արաբները գան, ասպատակություն սփռենք դեպի հյուսիս՝ ավարառելով վրանները, երիվարներն ու նոխազները, և որպեսզի նա երբէք մեզանից ավար չտանի իր երկիրը, այլ քանի անգամ որ Կրոնոսը գա Աթենայի տիրույթները, պարտվելով նահանջի, քանզի դրանք խիզախ և իմաստուն կուսածին կույս Աթենայի սեփականությունն են<sup>4</sup>:

Գրիգոր Մագիստրոս 64 (ԻԳ).2-5.

Ոչ ահաւասիկ Պիսիդոն հնարեալ իւրովին փրփրածին հիքամորթ աւրիորդաւն մեղկութեամբ բաղխոհական հնարիւք տրամախոհէր, քանզի յորժամ ծանեաւ, եթէ յանկարծաւրէն ի թեմանայ Պուաւտիդէս Հեփեստոսիւ առաքիւր, և բեզեկ զՓայեթոն նախընթացիկ շահատակմամբ յղէր յասպատակ սորա, զնոյնս այս աւրիորդ առ ինքեան ելոյ տրամախոհէր խոկալով զերծանել: Եւ իբրու ոչ փութանակի զաւրէն (զաւրէր<sup>5</sup>) զերծանել բացանցութեանց սոցա

Պոսեյդոնն իր խայտառակ մերկ, փրփրածին օրիորդի հետ դեռևս մեղկությամբ խորամանկ հնարքներ չէր մտածել, քանզի երբ իմացավ, որ թեմանից<sup>5</sup> հանկարծակի առաքվուծ է Պրոմեթէսը (°) Հեփեստոսի հետ միասին, և արեգակը Փայեթոնին նախընթաց հարձակուծով ուղարկուծ է սրան ասպատակելու, մտածեց նրա հետ եղած այս նույն օրիորդին փախցնել: Եվ չէր կարող արագ փախցնել սրանց՝ փորլուծության վախից, քանի որ փորացավից լուծե-

<sup>1</sup> «Արեանցն և յամենեին յոռեացն հիքից և» հատվածը հասկանալի չէ:  
<sup>2</sup> Հավանաբար խոսքը գինու և նրա ջերմացնող հատկության մասին է:  
<sup>3</sup> Այս ակնարկը մեզ հասկանալի չէ:  
<sup>4</sup> Չնայած Ապոլլոնի, Աթենայի և Արտեմիսի՝ բնության տարերքի հետ կապված դերերը որոշակի չեն, այստեղ Աթենան տաք եղանակը խորհրդանշող Պրոմեթևսի և Հեփեստոսի դաշնակիցն է, իսկ Ապոլլոնն ու Արտեմիսը՝ ցրտի մարմնավորում Կրոնոսի: Պրոմեթևսին ու Աթենային գաղտնի զորակցում է նաև Դիոնիսոս-գինին՝ որպես ջերմացնող գորություն: Մինոսի և Հուդամանթիսի դերը դժվար է կռահել. նրանք սովորաբար օրենսդիր են ու դատավոր (տե՛ս դրվագ 68): Եղանակի փոփոխությունները Մագիստրոսը նկարագրել է որպես հակամարտող ուժերի պատերազմի դրամատիկ տեսարանների շարք:  
<sup>5</sup> Թեման տեղանունը հանդիպում է Աստվածաշնչում (Ծննդ. ԼՁ 11, 15, 42, Ամովս Ա 42, Ամբ. Գ 3). այդ՝ ցեղի անունով կոչված քաղաքը գտնվում էր Եդոմ երկրում, ներկայիս Հորդանանի տարածքում: Ենթադրաբար Թեմանը ներկայիս Մասան է, մի հին քաղաք, որ իր ծաղկումն է ապրել Ումայադների խալիֆայի (661-1031) ժամանակ:

յերկիրէն, ցուկեալ լուծական ըղորկաղուծեամբ, որ գրէ թէ վատաղուծեամբ կաւակերտ զանգամամբ խմորեալ, զաւրէն արաւսիւն: Քանզի նորա յորժամ մերձ ելոյ հուկ յըմբունումն, բազէի ի գուճս կոյս եղեալ, զծիրտն ծորեալ դիմացն ուղղակի ճահեցուցանէ, և ինքն թռուցեալ մնայ կենդանի: Այսբար բոզն այն Ափռուդիտէն փրփրածինն հանդերձ արբն Պիսիդոնիւ առ մեզ ի դաշտիս Մամիկոնեան ներգործեաց, որ և ապականեաց վաւաշ բորբորիտոն գիջամուլի պոռնիկն:

Գրիգոր Մագիստրոս 21 (Բ).28.

Բոցն յաչաղուծեան հնոցին որ առաւել քան զատրուշանին Զրադաշտին, զովացեալ, և կայծակն հրափայլուծեան վեհագոյն քան զՊոռմեդեայն և զՀեփեստոսին ցածուցեալ:

Գրիգոր Մագիստրոս 71 (ԺԴ).2.

Տագնապ տոչորման Պոռմիդեայ հասեալ Հեփեստիւ պաշարեաց:

Գրիգոր Մագիստրոս 16 (ՀԴ).5.

Սապէս կամելով մեր գյաւշուածս կիտին, զոմանս ի շամբուրս հարեալ ի վերայ Հեփեստեայ, զոմանս ի սանի հանդերձ Պոսիդոնիւ ամոքեալ, և զոմանս ի տապակի տրամադրական մակեղուտ ելով ելլաղացի իւղովք<sup>1</sup>, և զոմանս ծպտեալ ի մէջ Դիայ:

Կարապետ Սասնեցի 20-21.

Այլ և ոչ անտես արասցուք գերկիր ծընընդեան նորա, որ է գիրկ և գոգ՝ աշխարհին Հայոց. ծըծին և ծոցոյն ասիական մասինն. քառորդ սահմանեալ նահանկ, հարթայատակ վայր՝ շուրջանակի պարագայձ՝ պարփակեալ լերամբ ոռոգելով ի վերուստ և ի ներքուստ, Պիսիդոն ըստ կամաց պատրաստեալ ժառանգութեան նորա: Յորմէ զովացեալ Արտեմիս, վերընծիւղէ խոտս և դալարիս, զանազանս և ազգի ազգիս, երանկ երանկ և բազմագուճակ ծաղիկս՝ և ակտաւալած արմատս: Իսկ և Հերաս հանդարտագոյնս

լով ցուում էին՝ գրեթե ծեփելով կավախառն զանգվածով, ինչպես արօսը: Քանզի երբ նա արդեն բռնվելու վրա է, և բազեն իր ծնկների մոտ է, հաջողացնում է ծերտն ուղղակի նրա դեմքին ցայտեցնել, և ինքը թռչում ու ողջ է մնում: Այսպես արեց այն փրփրածին բոզ Ափրուդիտեն, Պոսեյդոն այրի հետ, մեզ մոտ՝ Մամիկոնյան դաշտում, որը և ապականեց այն վավաշոտ, ցանկասեր, անառակ պոռնիկը:

Նախանձի հնոցի բոցը, որ գերազանցում էր Զրադաշտի ատրուշանը, զովացել էր, և Պոռմեթիւսին ու Հեփեստոսին գերազանցող հրափայլուծիայն կայծակը՝ հանդարտվել:

Հեփեստոսի հետ վրա հասավ Պոռմեթիւսի տոչորման հոգսը:

Այսպէս մենք, կամենալով (եփել) ձկան պատառները, մի քանիսը շամփուրներով Հեփեստոսի (կրակի) վրա դրեցինք, մի մասը եփեցինք կաթսայի մեջ Պոսեյդոնով (ջրով), մի մասը՝ տապակի մեջ լցված ձիթապտղի յուղով, մի մասն էլ՝ թաքնված Ջլեսի մեջ:

Չանտեսենք նաև նրա [Մեսրոպի] ծննդավայրը, որը Հայաստանի գիրկն ու գոգն է, ասիական մասի կուրծքն ու ծոցը, որ սահմանված է որպես քառորդ նահանգ: Դա հարթահատակ, լեռներով պարփակված մի վայր է, որ ոռոգվում է վերևից ու ներքևից. Պոսեյդոնը (ջուրը) կամովին պատրաստում է նրա ժառանգությունը: Դրանից զովացած Արտեմիսը (հողը՝) զանազան ու պեսպես խոտեր և կանաչներ է աճեցնում, ամեն երանգի ու բազմագուճայն ծաղիկներ և հիվանդությունները վերացնող

<sup>1</sup> «Ելլաղացի իւղ» արտահայտությունը հավանաբար հնչողության մամուլային կազմվել է հունարեն ἔλαιον – «ձիթապտղի յուղ» բառից:



Հնչէ յերկնամիջակ կիտին, և Հեփեսոսս ոչ գաւրանա ի ժամադիտակին յաւէտ: Սակս որոյ սերմանեալքն ի նմա բերապատիկ արդիւնանան ... և համահաւասարէ Ադենա դրաստին Արամազդա՝ և դաշտին Ելեւիսնա:

Սարկաւագ, Լուծմունք, 38.

Բան. Պղուտոն և Փայիդոն: Լծ. Պղուտոնն գերեզման ասի և կամ դժոխք<sup>1</sup>, և Փայիդոնն՝ արեգակն<sup>2</sup>... Դարձեալ ասեն, թէ ոչ զՊղատոնի մահն մեռաւ, որ ասաց թէ՛ իմաստասիրութիւն է խոկումն մահու, և ոչ Փայիդոն բժիշկն կարէր բժշկել:

Առաքել, Լուծումն 436-7.

Բան. Պղոտին, այսինքն, գերեզման, Փայիթովն այսինքն արեգակն... Դարձեալ ասէ թէ ոչ զՊղատոնի մահն էր մեռեալ, որ ասաց թէ խոկումն մահու, և ոչ Փայիդոն բժիշկ կարէր բուժել:

արմտիք: Իսկ Հերան (օղը) ամենահանդարտ ձևով է փչում հասարակածի կետում, և Հեփեսոսը (տապը) ամենեին չի հզորանում ամառային արեադարձի վրա: Դրա շնորհիվ ինչ որ ցանվում է նրա մեջ, բյուրապատիկ բերք է տալիս ... և նա հավասարվում է Եդեմին՝ Արամազդի դրախտին ու Ելիսեյան դաշտին:

Մեջբերում. Պղուտոն և Փայեթոն: Լուծում. Պղուտոնն՝ նշանակում է գերեզման կամ դժոխք, իսկ Փայեթոն՝ արեգակ... Դարձյալ ասում են, թե նա Պլատոնի մահով չմեռավ, որն ասում էր, թե իմաստասիրությունը մահվան մասին մտածմունքն է, և Փայեթոն բժիշկը չի կարող դա բուժել:

Մեջբերում. Պլոտին (Պղուտոն), այսինքն՝ գերեզման, Փայեթոն, այսինքն՝ արեգակ... Դարձյալ ասում են, թե նա չէր մեռել Պլատոնի մահով, որն ասում էր՝ մահվան մասին մտածմունք, և Փայեթոն բժիշկը չի կարող դա բուժել:

## 1.6. Յոթնյակ Աթենան

Դաւիթ, Սահմանք 114.

Եւթն թիւը կոյս լսի, որպէս Աթենայ և ժամանակ: Եւ կոյս՝ վասն զի ամենայն թիւ ի ներքոյ տասնեկիդ կամ ծնանի զոք կամ ծնանի յումեքէ. իսկ Եւթն ոչ ծնանի զոք ի ներքոյ տասնեկիդ և ոչ ծնանի յումեքէ, որգոն, երկուք ծնանի զչորս ի ձեռն բազմապատկութեան, և երեք՝ զինն ... այսպէս և Աթենայ կոյս լսի, վասն զի ասէին արտաքինքն զԱթենայէ, թէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ:

Հմմտ. Dav. Prol. 53.18–19, 21-26.

ὁ δὲ ἑπτὰ ἀριθμὸς λέγεται καὶ καιρὸς καὶ Ἀθηνᾶ... Ἀθηνᾶ δὲ λέγεται, ἐπειδὴ ὥσπερ μυθεύουσιν τὴν Ἀθηνᾶν παρθένον εἶναι καὶ ἀμήτορα (ἐκ τῆς

Յոթ թիւը կոյս է կոչվում, ինչպես՝ Աթենան և ժամանակը. կոյս՝ որովհետեւ տասնյակից պակաս ամեն թիւ կամ ծնում է որեէ թիւ, կամ ծնվում է որեէ թիւից, իսկ յոթը ո՛չ ծնում է տասնյակից պակաս որեէ թիւ, ոչ էլ ծնվում որեէ թիւից՝ ինչպես երկուք բազմապատկման միջոցով ծնում է չորսը, երեքը՝ ինը ... այսպես և Աթենան կոյս է կոչվում, որովհետեւ արտաքիններն Աթենայի մասին ասում էին, թե Զևսի գլխից է ծնվել:

Յոթ թիւը կոչվում է ժամանակ և Աթենա ... Աթենա է կոչվում, որովհետեւ պատմում են, թե Աթենան կոյս է և անմայր (որովհետեւ, ինչ-

<sup>1</sup> Հմմտ. ծան. 71:

<sup>2</sup> Փայեթոնը ոչ թե Հելիոս-արեգակն էր, այլ նրա որդին (դրվագ 105):

<sup>3</sup> Պյութագորականները յոթ թիւը «հավերժակոյս» (ἀειπάρθεος) էին համարում, քանի որ այն առաջին տասնյակում ո՛չ բազմապատկիչ էր, ո՛չ էլ բազմապատիկ:

κεφαλῆς γὰρ τοῦ Διός, ὡς μυθεύουσιν, ἐξῆλλθε), τὸν αὐτὸν τρόπον καὶ ὁ ἑπτά ἀριθμὸς μόνος ἐκ τῶν ὄντων ἐντὸς τῆς δεκάδος οὔτε τίκεται κατὰ πολλαπλασιασμόν ἐξ ἄλλου ἀριθμοῦ οὔτε τίκεται κατὰ πολλαπλασιασμόν ἄλλον ἀριθμὸν ἐντὸς τῆς δεκάδος.

պես պատմում են, դուրս էր եկել Զևսի գլխից)։ նույնիերպ նաև յոթ թիվը միակն է տասնյակի ներսում եղածներից, որ ո՛չ ծնվում է այլ թվից բազմապատկումով, ո՛չ էլ տասնյակի ներսում մեկ այլ թիվ է ծնում բազմապատկումով։

Անանիա Նարեկացի, Ներբողեան 640.

Աթենայ իւրով անլծորդ ևթնեկիւն, որ և սա կոյս կոչիւր ըստ հեթանոսական առասպելաբան բաշաղանաց:

Աթենան՝ իր չլծորդվող յոթնյակով. սա նաև կույս էր կոչվում՝ համաձայն հեթանոսական առասպելաբան բարբաղանքների:

Գրիգոր Մագիստրոս 45 (ՀԸ).15.

Եւթնեակդ, գոր բանս Աթենայ անուանեաց:

Յոթնյակ, որ այն գրվածքն անվանել է Աթենա:

Գրիգոր Մագիստրոս 45 (ՀԸ).11.

... զԱթենայ զայն, որ յուղղոյն Արամազդայ ծնեալն էր, կոյսն ունելով զթիւն ևթեանն, ներքոյ տասնեկին, որ ոչ ծնեալն է և ոչ ծնանի գոք:

... Այն Աթենային, որ ծնված էր Զևսի ուղեղից, կույսին, որն ուներ յոթ թիվը. այն տասնյակից ներքև ո՛չ ծնված է, ո՛չ էլ ծնում է որևէ թիվ:

### 1.7. Ձևս Պիկոս

Հռոմեական առասպելաբանության մեջ Սատուրնուր (Կրոնոսի համարժեքը) ուներ Պիկոս անունով որդի, որը Լատիոսի թագավորն էր: Նա էլ ունեցավ Ֆավոնու որդուն (Verg. *Aen.* 7.46-49): Կիրկեն Պիկոսին փայտփորիկ<sup>1</sup> դարձրեց՝ իր սերը մերժելու համար (Verg. *Aen.* 7.189-191, Ovid. *Met.* 14.6): Բացի հնադարում թագավոր լինելուց, Պիկոսը համարվել է նաև աստվածություն՝ անտառային ոգի: Եվհեմերյան պատկերացումների<sup>2</sup> շրջանակում Պիկոսը, որպես Կրոնոսի որդի, նույնացվել է Չևսի հետ և համարվել աստրեստանցիների առաջին թագավորը: Իտալիայի թագավոր Պիկոս Չևսի գերեզմանին Կրեստում գրված էր. «Այստեղ հանգչում է փայտփորիկը, որը նաև Չևսն էր» (Diod. Sic. 6.5.3): Հովհաննես Մալալասը, Չևսից Ինաքոսի դուստր Իոնի գայթակղվելու առասպելը պատմելիս, Չևս Պիկոսին ներկայացնում է իբրև արևմտյան կողմերի թագավոր (Malal. 28)<sup>3</sup>:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա. [384-385] = Sync. 200.14-17.

Բայց ոմանք ասեն, թէ Պիկոս որդի Կրաւնայ թագաւորեաց նախ ի Ղաւրենտայ աշխարհին՝ մինչև ցայն տեղի, ուր այժմ Հռոմն կայ, ամս Լէ.: Եւ յետ նորա Փաւնոս որդի Պիկայ ամս ԽԴ.:

φασὶ Πείκον υἱὸν Κρόνου βασιλεῦσαι χώρας Λαυρέντου λζ', εἶναι δὲ τὴν χώραν ἕως τῆς νυκτὸς Ῥώμης πόλεως, μεθ' ὃν Φαῦνον τὸν υἱὸν αὐτοῦ Πείκου τοῦ καὶ Διὸς ἔτη μδ'.

Բայց ոմանք ասում են, որ Կրոնոսի որդի Պիկոսը թագավորեց նախ Լավրենտի երկրում, մինչև այն վայրը, ուր այժմ Հռոմն է՝ երեսունյոթ տարի: Եվ նրանից հետո Պիկոսի որդի Փավնոսը՝ քառասունչորս տարի:

<sup>1</sup> Լատիներեն picus նշանակում է՝ «փայտփորիկ»:

<sup>2</sup> Տե՛ս Առաջաբան, ծան. 1:

<sup>3</sup> Տե՛ս *RE* 20, s.v. “Picus” (G. Rohde), 1214-1218:

Փիլոն Տիրակացի 914.

Յառուրս Դեբովրայ մարգարէութեան, որ ընդ Բարակայ՝ որք ի Դիոնէ վիպասանին. ուստի Պիպկոս անուանեալ Ջևս՝ Կրօնայ ազգական՝ յարեմուտս թագաւորեաց. որ ունէր դասերս Երովպէմենոս, Անտիոպէ, Աղկմենէ, Սեղդենէ, Դանաովէ, Պերս[ս]ևս. ևս Ղէդա կին Ջևսայ. Ջևս կենդանութիւն կոչի, և Ղէդա՝ օդ, վասն տուրեառ շնչոց...

Դեբորա մարգարէութեան օրոք, որը Բարակի հետ էր, Ջևսի մասին հեքիաթներ պատմողներն էին: Կրօնոսի ազգական Ջևսը, որը կոչվում էր Պիկոս, թագավորեց Արեմուտքում. նա դուստրեր ուներ՝ Երովպէմենոս, Անտիոպէ, Աղկմենէ, Սեղդենէ, Դանայե, Պերսև: Եվ Ջևսի կինը Լեդան էր: Ջևսը կոչվում է կենդանություն, Լեդան՝ օդ՝ մեկընդմեջ շնչելու պատճառով<sup>1</sup>:

Գրիգոր Մագիստրոս 12. (ԾԸ).11.

Աթենայ կուսածին յուղղոյն Արամազդայ Պիկկոսին:

Աթենա կուսածինը՝ Արամազդ (Ջևս) Պիկկոսի ուղեղից:

2. ԱՄՔՈՂՋԱԿԱՆ ԱՆԴՐԱԳԱՐՁՆԵՐ ԻԼԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Վահրամ Բաբունի, Ստորոգ. 16.

Տեղն Տրովայ է, ուր էր պատերազմն, և ժամանակն յայնմ ժամանակի, յորժամ պատերազմն էր:

Տեղը Տրոյան է, որտեղ պատերազմն էր, և ժամանակը՝ այն ժամանակը, երբ պատերազմը տեղի ունեցավ:

Մովսէս Կաղանկատուացի Գ ԺԹ [398-400]<sup>2</sup>.

Ի գրեկոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի գտաւ այս պատմութիւն<sup>3</sup> սակս աւերման Ղիոն քաղաքի<sup>4</sup> և շինելն<sup>5</sup> Հռոմայ<sup>6</sup>:

Այս պատմությունը՝ Իլիոն քաղաքի ավերման և Հռոմը շինելու մասին, գտնվել է Ստեփանոս Սյունեցու գրվածքներում:

Ի ժամանակս Ապղանի դատաւորի առաւ Ղիոն<sup>7</sup> այսպէս. քաղաքս այս յԱքայեցւոց երկրին էր հուլայ յաշխարհն<sup>8</sup> Պողոպանիս (տարընթ. Պեղոս-

Իլիոնն առնվել է այն տարիներին, որ Ապղանը դատավոր էր, հետևյալ ձևով: Այս քաղաքը գտնվում էր աքեացիների երկրում՝ Պելոպոն-

<sup>1</sup> Ջևսի այս «դուստրերից» ոմանց անունները հիշեցնում են այն մահկանացու կանանց անունները, որոնց հետ Ջևսը մերձեցել էր. Եվրոպե (Միմոսի, Հռադամանթիսի և Սարպեդոնի մայրը, տես՝ դրվագ 64. գուցե «Երովպէմենոս»-ն առաջացել է Եվրոպե ու Միմոս անունների զուգադրումից, ինչպես ստորև՝ «Դանաովէ, Պերս[ս]ևս»), Անտիոպե (Չեթոսի և Ամփիոնի մայրը, դրվագ 84), Աղկմեն (Հերակլեսի մայրը, դրվագ 43), Դանայե (Պերսևսի մայրը, դրվագ 40). Պերսևսը բնականաբար Ջևսի որդին է: Մելենն լուսնի աստվածուհին էր, սակայն այստեղ այդ անունը հավանաբար աղավաղված է և հանդես է գալիս Սեմելի փոխարեն, որը Դիոնիսոսի մայրն էր (դրվագ 70): Լեդան ևս Ջևսի գայթակղած մահկանացու կանանցից մեկն էր: Լեդային այստեղ վերագրված է Ջևսի կին Հերայի խորհրդանիշը՝ օդը (տես՝ հավելված 1.5):

<sup>2</sup> Մովսէս Կաղանկատուացու պատմական երկի առանձին գլուխ կազմող այս պատմությունը Մատենադարանի թիվ 437 ձեռագրում (ԺԳ դ., թթ. 115բ-116ա) հանդես է գալիս որպես առանձին միավոր, և որպես այդպիսին էլ այն ընկալել է Պիտեր Բաուին՝ մի հոդված նվիրելով պատմության՝ նշված ձեռագրի տարբերակին և դրան կցելով նաև աշխարհաբար թարգմանություն. տես՝ Պ. Բաուի, «Տրոյական պատերազմի և Հռոմի հիմնադրման պատմության մի յուրօրինակ հայերեն տարբերակ», *Շնորհի ի վերուստ. Առասպել, ծես, պատմություն. հոդվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին*, Երևան, 2008 (էջ 51-61), էջ 60-61: Թիվ 437 ձեռագրի տարբերությունները Կաղանկատուացու բնագրից նշում ենք տողատակում: Փակագծերում բերում ենք Կաղանկատուացու քննական հրատարակության տողատակում նշված առանձին տարբերություններ:

<sup>3</sup> 437 չիք Ի գրեկոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի գտաւ այս պատմութիւն  
<sup>4</sup> 437 Իլիոնի փխ. Դիոն քաղաքի  
<sup>5</sup> 437 շինելոյն փխ. շինելն  
<sup>6</sup> 437 Հռոմա փխ. Հռոմայ  
<sup>7</sup> 437 Իլիոն  
<sup>8</sup> 437 + որ կոչի

պոնէս)<sup>1</sup> յարեմուտս Մակեդոնացւոց յերկրին Եւրոպայ: Ընդ այն ժամանակս ոչ գոյր թագաւոր<sup>2</sup> Յունաց, այլ միայն իշխանք տիրէին բոլոր աշխարհին: Եւ Ղիոն<sup>3</sup> էր քաղաք մեծ, որ ոչ գոյր համեմատ նորա ի վերայ երկրի: Յաւուրսն յայտասիկ ոմն երիտասարդ յիշխանաց քաղաքին գայ ի Թեսալոնիկէ քաղաք, որ է յարեւելս Մակեդոնի, ի պատճառս ինչ զբաւսանաց. և ընկալեալ եղև ի մեծամեծաց քաղաքին. և տուփեալ ի դուստր առն միոյ մեծի պատրեալ ածէ զնա ի Ղիոն<sup>4</sup> քաղաք<sup>5</sup>. զոր ծնողաց խնդրեալ<sup>6</sup> իմացան, եթէ յերիտասարդէն եղև յափշտակեալ<sup>7</sup> գրեն թուղթ առ Ղիոնացիսն<sup>8</sup> և առնուն պատասխանի<sup>9</sup> խտագոյնս: Եւ նորա ընթերցեալ յականջս ժողովրդեան իւրոյ՝ անդանաւր ի նախանձ բրդեցան<sup>10</sup> ամենեքեան<sup>11</sup>: Կոչեն յաւգնականութիւն զշրջակայսն ամենայն. և ժողովեալ անթիւ զաւրս<sup>12</sup> պատերազմին ընդ Ղիոնի<sup>13</sup> ամս ԺԵ. ապականելով<sup>14</sup> զամենայն երկիրն: Եւ նոցա այսմ բանից հաւանեալ<sup>15</sup> կազմեն երկվարս փայտեայս<sup>16</sup> թուով ԲԻ. փոր գործած<sup>17</sup>. Եւ մուծանեն ի ներքս<sup>18</sup> արս պատերազմողս զինուք իւրեանց թուով Խ. հազար. և զերկվարսն պատեալ ոսկով և արծաթով՝ զնէին ի վերայ սայլից և<sup>19</sup> տանէին<sup>20</sup> ի դուռն քաղաքին զկորստական պարգևսն<sup>21</sup>. և

նեսոս երկրի մոտ<sup>22</sup>, որ Մակեդոնացիներից արեմուտք է՝ Եվրոպայում<sup>23</sup>: Այն տարիներին հույները թագավոր չունեին, այլ միայն՝ իշխաններ, որ տիրում էին ամբողջ երկրին: Իլիոնը մի մեծ քաղաք էր, որի նմանը չկար աշխարհում: Այն օրերին քաղաքի իշխաններից մի երիտասարդ գալիս է Թեսալոնիկէ քաղաք<sup>24</sup>, որ Մակեդոնիայից արեւելք է, զվարճանալու նպատակով և ընդունվում է քաղաքի մեծամեծներից: Սիրահարվելով մեծերից մեկի դստերը<sup>25</sup>, խաբելով՝ տանում է նրան Իլիոն քաղաքը: Նրա ծնողները փնտրում են նրան ու իմանում, որ երիտասարդից է հափշտակվել, նամակ են գրում իլիոնացիներին և շատ խիստ պատասխան են ստանում<sup>26</sup>: Երբ նրա հայրն ընթերցում է այն իր ժողովրդի ականջներին, այդ ժամանակ բոլորը նախանձախնդրությամբ են համակվում: Շրջակա բոլոր հարեաններին օգնության են կանչում և, անթիվ զորք հավաքելով, տասնհինգ տարի պատերազմ են վարում Իլիոնի դեմ<sup>27</sup> ամբողջ երկիրն ավերելով: Եվ ապա մտածում են մեկ այլ ծրագիր. քաղաքացիներին ուղարկում են հաշտության առաջարկ՝ ասելով. «Մեծ են Իլիոնի աստվածները, և դրա համար մեր ուժը տկարացավ: Խաղա-

<sup>1</sup> 437 պովապանիս

<sup>2</sup> 437 թագաւորս

<sup>3</sup> 437 Իլիոն *փիւ*. Եւ Ղիոն

<sup>4</sup> 437 Իլիոն *փիւ*. ի Ղիոն

<sup>5</sup> 437 *չիք*

<sup>6</sup> 437 խնդրեն

<sup>7</sup> 437 *չիք* իմացան, եթէ յերիտասարդէն եղև յափշտակեալ՝

<sup>8</sup> 437 իլիոնացիսն

<sup>9</sup> 437 պատասխանիս

<sup>10</sup> 437 շրջել

<sup>11</sup> 437 *չիք*

<sup>12</sup> 437 օրս անթիւ *փիւ* անթիւ զաւրս

<sup>13</sup> 437 Իլիոն *փիւ*. Ղիոնի

<sup>14</sup> 437 ասերելով

<sup>15</sup> 437 հաւանել բանից

<sup>16</sup> 437 փայտե

<sup>17</sup> 437 գծուած

<sup>18</sup> 437 ներս

<sup>19</sup> 437 *չիք* զնէին ի վերայ սայլից և

<sup>20</sup> 437 տանին

<sup>21</sup> 437 պարգևսն

<sup>22</sup> Հունական առասպելում այսպես չէ. Տրոյան գտնվում էր Փոքր Ասիայում, և արեւացիները՝ հույները, արշավեցին այդ քաղաքի դեմ:

<sup>23</sup> Սա էլ սխալ տեղեկություն է, քանի որ Պելոպոննեսոսը Մակեդոնիայից արեւմուտք չէ, այլ՝ հարավ:

<sup>24</sup> Ըստ առասպելի՝ Պարիսը գնաց Սպարտա, որը Պելոպոննեսոսում է, այլ ոչ թե Պելոպոննեսոսից գնաց Թեսալոնիկէ, ինչպես այստեղ է:

<sup>25</sup> Ըստ առասպելի՝ Սպարտայի արքա Սենեկասի կին Հեղինեին:

<sup>26</sup> Իլիական պատերազմի պատմության մեջ նամակագրության դրվագ չկա:

<sup>27</sup> «Իլիական»-ում (Hom. II. 2.299-329) քաղաքն առնվում է պատերազմի տասներորդ տարում:

քարոզն աղաղակէր. «Այս են ընծայք աստուածոցդ Ղիոնի<sup>1</sup>»: Քսան կանգուն էր չափ բարձրութեան երկվարացն<sup>2</sup>, զորս ոչ կարէին մոծանել ընդ դուռն քաղաքին՝ քակէին մասն ինչ ի պարսպէն<sup>3</sup> և ի ժամադրութեանն<sup>4</sup> ելանելոյ արտաքս, զոր արարեալ ունէին, ընդ խրամն<sup>5</sup>, զոր հատին, մտանէ բազմութիւն զաւրացն ի քաղաքն<sup>6</sup> և մասնի քաղաքն ի բերան սրոյ՝ ծերք և տղայք<sup>7</sup>, իսկ զկանայս նոցա գերեալ՝ մտանեն ի նաւան դառնալ յերկիրն Ասիական, բայց<sup>8</sup> հողմ ուժգին յարեւելից եկեալ<sup>9</sup> վարէ զնաւան մղոնս երկու հազար և հինգ հարիւր և ընկենու<sup>10</sup> արտաքս յերկիր<sup>11</sup> աւտարական, որ կոչի<sup>12</sup> Իտալիա: Անտի<sup>13</sup> կամէին միւսանգամ նաւել յերկիր իւրեանց. իսկ գերեալ<sup>14</sup> կանայքն ի մէջ գիշերին հրով տոչորէին զնաւան՝ մինչև ոչ մնալ և ոչ մի<sup>15</sup>, զի մի երթիցեն ի ստրկութիւն: Եւ տեսեալ արանց<sup>16</sup> զեղեալսն<sup>17</sup>, յոչ կամաց դարեալ<sup>18</sup> յաշխարհին՝ ամուսնացան ընդ գերեալ<sup>19</sup> անայսն<sup>20</sup>: Եւ ետ բազում ժամանակաց

դուլթյուն հաստատենք այսուհետև և իրար երդում տանք ու պատվենք Իլիոնի աստվածներին նվերներով»: Եվ համաձայնելով այս խոսքերին՝ նրանք սարքում են փայտյա ձիեր՝ թվով 2000, ներսը դատարկ, և մեջը մտցնում են մարտիկներ իրենց զենքերով՝ թվով 40000, և, ձիերը ոսկով ու արծաթով երեսպատելով, դնում են սայլերի վրա և կորստյան տանող իրենց նվերները տանում քաղաքի դարպասի մոտ: Մունեստիկն ազդարարում է. «Սրանք են Իլիոնի աստվածների նվերները»: Ձիերի բարձրությունը քսան կանգուն էր, և չկարողացան դրանք քաղաքի դարպասով ներս մտցնել. քանդեցին քաղաքի պարսպի մի մասը<sup>21</sup>: Եվ դուրս գալու նշանակված ժամին զորքի բազմությունը մտնում է քաղաք այն ճեղքով, որ բացել էին, և քաղաքը սրի է մատնվում՝ ծերեր թե երիտասարդներ: Իսկ կանանց գերելով՝ նրանք բարձրանում են նավերի վրա՝ ասիական երկիր վերադառնալու համար: Բայց արևելքից

1 437 աստուածոցդ Իլիոնի ընծայք *ի/իւ*. ընծայք աստուածոցդ Ղիոնի  
2 437 և բարձրութեան երկվարացն էր քսան կանգուն *ի/իւ*. Քսան կանգուն էր չափ բարձրութեան երկվարացն  
3 437 պարսպէ քաղաքին *ի/իւ*. պարսպէն  
4 437 ժամադրութիւն *ի/իւ*. ի ժամադրութեանն  
5 437 զխրամն *ի/իւ*. ընդ խրամն  
6 437 *յ/իք* ի քաղաքն  
7 437 + առհասարակ  
8 437 *յ/իք*  
9 437 ելեալ  
10 437 ընկենու  
11 437 յերկիրն  
12 437 *յ/իք* աւտարական, որ կոչի  
13 437 *յ/իք*  
14 437 գերեալ  
15 437 *յ/իք* մինչև ոչ մնալ և ոչ մի  
16 437 արանցն  
17 437 գաղետսն  
18 437 դարեալ  
19 437 գերեալ  
20 Հմմտ. Եստերիստ Ա, 377-378. «Եւ Արիստոտելէս փիլիսոփայ զոմանս յարեացոց պատմէ, որք ի տրովացոց խաղացեալ ի Մաղդէն նաւարկէին. և սաստիկ ձմերայնովք պաշարեալք, ի հողմոց այսր անդ խուսափեալք՝ յամենայն կողմանս ծովուն մղորեալք, ի գոռիս հանեալ զայնիս ի տեղի Ուլիկեայ՝ որ կոչի Ղատիմոս, որ առ Տիրեմական համատարած ծովուն կայ. ուրախ լինէին ընդ ցամաք երկիրն տեսանել, ձգեալ հանեալ զնաւն. և անդ անցուցանել զժամանակ ձմերանոյն, և պատրաստել միսանգամ առ զարունն նաւարկել: Իբրև նաւքն զիշերի այրէին, չգտանէին հնար՝ թէ զհարդ չու առնիցեն, ահամայ կամաւք ի հարկէ զկեանս յաշխարհին՝ յոր հասին՝ հաստատեալ: Եւ այն այնպէս նոցա դիպէր ի կանանց գերեաց, զոր առեալ ածէին յԻլիոնէ. նոքա այրէին զնաւն, երկուցեալք թէ գուցէ յարայեցոց աշխարհն հասանիցէ երթալ բնակութեան, որպէս թէ աղախնութիւն լինիցի անկանել» = Dion. Halic. Antiq Rom. 1.72.3.1-5.1. Ἀριστοτέλης δὲ ὁ φιλόσοφος Ἀχαιοὺν τινας ἰστορεῖ τῶν ἀπὸ Τροίας ἀνακομισαμένων περιπλέοντας Μαλέαν, ἔπειτα χειμῶνι βιαίῳ καταληφθέντας τέως μὲν ὑπὸ τῶν πνευμάτων φερομένους πολλαχῆ τοῦ πελάγους πλανᾶσθαι, τελευτώντας δ' ἔλθειν εἰς τὸν τόπον τοῦτον τῆς Ὀπικῆς, ὃς καλεῖται Λατίνιον ἐπὶ τῷ Τυρρηρικῷ πελάγει κείμενος. ἀσμένους δὲ τὴν γῆν ἰδόντας ἀνεγκῶσαι τε τὰς ναῦς αὐτόθι καὶ διατρίψαι τὴν χειμερινὴν ὥραν παρασκευαζομένους ἕαρος ἀρχομένου πλεῖν. ἐμπρησθεισῶν δὲ αὐτοῖς ὑπὸ νύκτα τῶν νεῶν οὐκ ἔχοντας ὅπως ποιεῖσθαι τὴν ἄπαρσιν, ἀβουλήτῳ ἀνάγκῃ τοὺς βίους ἐν ᾧ κατήχθησαν χωρὶφ ἰδρύσασθαι. συμβῆναι δὲ αὐτοῖς τοῦτο διὰ γυναικας αἰχμαλώτους, ἃς ἔτυχον ἄγοντες εἰς Ἴλιον. ταύτας δὲ κατακαῦσαι τὰ πλοῖα φοβουμένης τὴν οἶκαδε τῶν Ἀχαιοῶν ἄπαρσιν, ὡς εἰς δουλείαν ἀφίξομένης (սակայն, թվում է, սա չէ տվյալ հատվածի աղբյուրը):  
21 Փայտյա ձիերի խորամանկության նկարագրությունը տրոյական ձիու պատմության արձագանքն է. վերջինիս մասին կարողում ենք արդեն ոչ թե «Իլիական»-ում, այլ Պրոկոբիս համառոտությամբ պահպանված «Փոքր Իլիա-

զմի ոմն ի միջոյ<sup>1</sup> ժողովրդեանն առաջնորդ իւրեանց կացուցանեն Հռոմելոս անուն, որ հեռագոյն ի ծովէն մղոնս ԻԵ. շինէ քաղաք յիւր անուն Հռոմ. սոքա են ազգ<sup>2</sup> Հռովմայեցւոց: Եւ այս<sup>3</sup> յետ չորեք հարիւր ԽԱ. ամաց եղև, յետ<sup>4</sup> առնլոյն գՂիոն<sup>5</sup>: Եւ յորժամ և<sup>6</sup> ԽԴ. ամ<sup>7</sup>, նստաւ թագաւոր ի Հռոմ Փիլիպպոս: Եւ երբ<sup>8</sup> Ռ. ամ էր<sup>9</sup> Հռոմայ շինելոյն և անտի փոխեաց<sup>10</sup> զթագաւորութիւնն ի Բիւզանդիա<sup>11</sup> Կոստանդիանոս<sup>12</sup>, որ այժմ կոչի Կոստանդնուպաւլիս:

փչող մի ուժգին քամի նավերը քշում է 25000 մղոն և գցում մի օտար երկիր, որ կոչվում է Իտալիա: Յանկանում էին այնտեղից նորից նավարկել դեպի իրենց երկիրը, իսկ գերի կանայք, որպեսզի չգնան ստրկութեան, կեսգիշերին հրկիզեցին նավերը, այնպես որ ոչ մեկը չմնաց: Կատարվածը տեսնելով՝ տղամարդիկ, հակառակ իրենց կամքի այդ երկրում մնալով, ամուսնացան գերի կանանց հետ<sup>13</sup>: Շատ ժամանակ անց առաջնորդ նշանակեցին ժողովրդի միջից մեկին՝ Հռոմուլոս անունով, որը ծովից 25 մղոն հեռավորութեան վրա իր անունով շինեց Հռոմ քաղաքը. սրանք հռոմեացիներն ազգն են: Եվ սա եղավ Իլիոնը գրավելուց 441 տարի հետո<sup>14</sup>: Եվ 44 թվականին Փիլիպպոսը թագավոր նստեց Հռոմում<sup>15</sup>: Եվ երբ Հռոմը հիմնադրելուց հետո մի հազարամյակ էր անցել, Կոստանտինոսը թագավորութունն այնտեղից [Հռոմից] տեղափոխեց Բյուզանդիոն, որ այժմ կոչվում է Կոստանդնուպոլիս:

կան»-ում (Procl. *Chrest.* 222–256), Կվինտուս Չմյունիացու «Իլիականին հետևող իրադարձությունները» պոեմում (Quin. Smyrn. *Posthom.* 12) և այլուր: Այստեղ թվերը խիստ չափազանցված են:

<sup>1</sup> 437 չիք

<sup>2</sup> 437 չիք Հռոմ. սոքա են ազգ

<sup>3</sup> 437 չիք

<sup>4</sup> 437 ամաց ԽԱ. զևս փիւ. չորեք հարիւր ԽԱ. ամաց եղև յետ

<sup>5</sup> 437 զելիոն

<sup>6</sup> 437 չիք

<sup>7</sup> 437 չիք

<sup>8</sup> 437 չիք և երբ

<sup>9</sup> 437 լցօ

<sup>10</sup> 437 փոխեց

<sup>11</sup> 437 Բիւզանդիոն

<sup>12</sup> 437 Կոստանդիանոս

<sup>13</sup> Հունական աղբյուրներում այդ գերի կանանց թվում Պրիամոսի քույրերն են (Strabo 6.1.12, Apoll. Ep.6.15c, Tzetz. *Sch. Lyc.* 921.1–16b):

<sup>14</sup> Հմմտ. Եստերիս, Քրոնիկոն, Ա 383-384. «հին շինուածոյն թոի թէ բաւական իսկ սասցաւ: Իսկ գլխոնոյն... Իսկ Կատովն Պարկիացի գլուխական ինչ ժամանակս չընտրէ. բայց փոյթ յանձին կալեալ՝ թէ և այլ ոք այնպէս գտանիցի գնախմեաց պատմութիւնն գումարեալ, ՆԼ. և Բ. ամաւր սաէ յետոյ քան զիդիական պատերազմ» = Dion. Halic. *Antiq Rom.* 1.73.5.7-74.1. *περι μὲν οὖν τῶν παλαιῶν κτίσεων ἰκανὰ ἡγοῦμαι τὰ προειρημένα. Τὸν δὲ τελευταῖον γενόμενον τῆς Πρωμῆς οἰκισμὸν ἢ κτίσιν... 1.74.2.1-5. Κάτων δὲ Πόρκιος Ἑλληνικὸν μὲν οὐχ ὀρίζει χρόνον, ἐπιμελῆς δὲ γενόμενος, εἰ καὶ τις ἄλλος, περὶ τὴν συναγωγὴν τῆς ἀρχαιολογομένης ἱστορίας ἔτεσιν ἀποφαίνει δυοὶ καὶ τριάκοντα καὶ τετρακοσίοι ὑστεροῦσαν τῶν Ἰλιακῶν:*

<sup>15</sup> Փիլիպպոս Արաբացին Հռոմի կայսրն է եղել 244-249 թթ.:

կաց զմի ոմն ի միջոյ<sup>2</sup> ժողովրդեանն առաջ-  
նորդ իւրեանց կացուցանեն Հռոմելոս անուն,  
որ հեռագոյն ի ծովէն մղոնս ԻԵ. շինէ քաղաք  
յիւր անուն Հռոմ. սոքա են ազգ<sup>3</sup> Հռովմայեց-  
ւոց: Եւ այս<sup>4</sup> յետ չորեք հարիւր ԽԱ. ամաց  
եղև, յետ<sup>5</sup> առնլոյն գՂիոն<sup>6</sup>: Եւ յորժամ և<sup>7</sup> ԽԴ.  
ամ<sup>8</sup>, նստաւ թագաւոր ի Հռոմ Փիլիպպոս: Եւ  
երբ<sup>9</sup> Ռ. ամ էր<sup>10</sup> Հռոմայ շինելոյն և անտի փո-  
խեաց<sup>11</sup> զթագաւորութիւնն ի Բիւզանդիա<sup>12</sup>  
Կոստանդինոս<sup>13</sup>, որ այժմ կոչի Կոստանդնու-  
պալիս:

փչող մի ուժգին քամի նավերը քշում է 25000  
մղոն և գցում մի օտար երկիր, որ կոչվում է  
Իտալիա: Յանկանում էին այնտեղից նորից  
նավարկել զեպի իրենց երկիրը, իսկ գերի կա-  
նայք, որպեսզի չգնան ստրկության, կեսգիշե-  
րին հրկիզեցին նավերը, այնպես որ ոչ մեկը  
չմնաց: Կատարվածը տեսնելով՝ տղամարդիկ,  
հակառակ իրենց կամքի այդ երկրում մնալով,  
ամուսնացան գերի կանանց հետ<sup>14</sup>: Շատ ժամա-  
նակ անց առաջնորդ նշանակեցին ժողովրդի  
միջից մեկին՝ Հռոմուլոս անունով, որը ծովից  
25 մղոն հեռավորության վրա իր անունով շի-  
նեց Հռոմ քաղաքը. սրանք հռոմեացիների  
ազգն են: Եվ սա եղավ Իլիոնը գրավելուց 441  
տարի հետո<sup>15</sup>: Եվ 44 թվականին Փիլիպպոսը  
թագավոր նստեց Հռոմում<sup>16</sup>: Եվ երբ Հռոմը  
հիմնադրելուց հետո մի հազարամյակ էր ան-  
ցել, Կոստանտինոսը թագավորութունն այն-  
տեղից [Հռոմից] տեղափոխեց Բյուզանդիոն,  
որ այժմ կոչվում է Կոստանդնուպոլիս:

διὰ γυναικας αιχμαλώτους, ἃς ἔτυχον ἄγοντες ἐξ Ἰλίου. ταύτας δὲ κατακαῦσαι τὰ πλοῖα φοβουμένης τὴν οἴκαδε τῶν Ἀχαιῶν ἄπαρσιν, ὡς εἰς δουλείαν ἀφιζομένης (սակայն, թլում է, սա չէ տվյալ հատվածի աղբյուրը):

<sup>1</sup> Փայսոյա ձիերի խորամանկության նկարագրությունը տրոյական ձիու պատմության արձագանքն է. վերջինիս մասին կարդում ենք արդեն ոչ թե «Իլիական»-ում, այլ Պրոկլոսի համառոտությամբ պատկանված «Փոքր Իլիական»-ում (Procl. *Chrest.* 222–256), Կվինտոս Չվյունիացու «Իլիականին հետևող իրադարձությունները» պոեմում (Quin. Smyrn. *Posthom.* 12) և այլուր: Այստեղ թվերը խիստ չափազանցված են:

<sup>2</sup> 437 չիք

<sup>3</sup> 437 չիք Հռոմ. սոքա են ազգ

<sup>4</sup> 437 չիք

<sup>5</sup> 437 ամաց ԽԱ. զևս *իի*. չորեք հարիւր ԽԱ. ամաց եղև յետ

<sup>6</sup> 437 գելիոն

<sup>7</sup> 437 չիք

<sup>8</sup> 437 չիք

<sup>9</sup> 437 չիք և երբ

<sup>10</sup> 437 լցո

<sup>11</sup> 437 փոխեց

<sup>12</sup> 437 Բիւզանդիոն

<sup>13</sup> 437 Կոստանդինոս

<sup>14</sup> Հունական աղբյուրներում այդ գերի կանանց թվում Պրիամոսի քույրերն են (Strabo 6.1.12, Apoll. Ep.6.15c, Tzetz. *Sch. Lyc.* 921.1–16b):

<sup>15</sup> Հմմտ. Եստերիոս, Քրոնիկոն, Ա 383-384. «հին շինուածոյն թոի թէ բաւական իսկ սասցաւ: Իսկ գլետնոյն... Իսկ Կատովն Պարկիացի գլունական ինչ ժամանակս չընտրէ. բայց փոյթ յանձին կալեալ՝ թէ և այլ ոք այնպէս գտա-  
նիցի գնախնեաց պատմութիւնն գումարեալ, ՆԼ. և Բ. ամաւր սաէ յետոյ քան զիդիական պատերազմ» = Dion. Halic. *Antiq Rom.* 1.73.5.7-74.1. *περὶ μὲν οὖν τῶν παλαιῶν κτίσεων ἱκανὰ ἡγοῦμαι τὰ προειρημένα. Τὸν δὲ τελευταῖον γενόμενον τῆς Πώμης οἰκισμὸν ἦ κτίσιν... 1.74.2.1-5. Κάτων δὲ Πόρκιος Ἑλληνικὸν μὲν οὐχ ὀρίζει χρόνον, ἐπιμελῆς δὲ γενόμενος, εἰ καὶ τις ἄλλος, περὶ τὴν συναγωγὴν τῆς ἀρχαιολογομένης ἱστορίας ἔτεσιν ἀποφαίνει δυοὶ καὶ τριάκοντα καὶ τετρακοσίοι ὑστεροῦσαν τῶν Ἰλιακῶν:*

<sup>16</sup> Փիլիպպոս Արարացին Հռոմի կայսրն է եղել 244-249 թթ.:

Մովսէս Կաղանկատուացու երկից բացակայում է հետևյալ հատվածը, որը պահպանվել է միայն ՄՄ 437 ձեռագրում<sup>1</sup>.

Այլուստ. Իլիոնական պատերազմն .ժե. ամ գուճարեցօ, և առօ ի Հերակլէ, և ի բագուճ գօրաց: Յօուերսն յայն եբրայեցոցն Եսեբոն Տովտանէս, սիկբնացիսն Պոլիփիլէս, ամենացոց Տանասթէս, եգիպտացոց Թովրիս<sup>2</sup>: Եւ յԻլիոնի առնլոյն մինչև յառաջին ուլուճալիաթն ամք ՆԵ. առ իշխանօսն ամենացոց Եսքիլօ. ի նորա ամին Բ. առաջին ուլուճալիաթն եգօ, յորում յաղթէր ի ստաղին Կոռիմբոս Հելենացի<sup>3</sup>:

Այլ աղբյուրից: Իլիական պատերազմը 15 տարի տևեց, և [Իլիոնը] գրավվել է Հերակլեսի ու բագմաթիվ գորքերի կողմից: Այն օրերին Եսեբոնը [իշխում էր] եբրայեցիներին, Տավտանեսը՝ [ասորեստանցիներին], Պոլիփիլեսը՝ սիկիոնացիներին, Տանասթեսը (Մենեսթեսը)՝ ամենացիներին, և Թովրիսը՝ եգիպտացիներին: Եվ Իլիոնի գրավումից մինչև առաջին օլիմպիականը 405 տարի է անցել, երբ Էսքիլոսն ամենացիների իշխանն էր. նրա երկրորդ տարում կազմակերպվեց առաջին օլիմպիականը, որի ժամանակ Հելենացի (Հելիացի) Կոռիմբոսը հաղթեց ստաղիոնում<sup>4</sup>:

Եղիշէ, Գտիչք 1014.

Իլիոն հուպ յաշխարհն Պոնուպոլիս<sup>5</sup> յարևմուտս մակեդոնացուց յաշխարհն Եւրոպիայ: Ի ժամանակին յայնմիկ յոյնք առանց թագաւորի իշխանաւք և ցեղապետաւք վարէին. յետ յնգետասան ամին պատերազմի ԽԲ.<sup>6</sup> մարդ ի Ս. երիվար արկին և եղին ի վերայ Ս. յերիվարն Ի. այր մուծին:

Իլիոնը մոտ է Պելոպոննեսոս երկրին՝ մակեդոնացիներից արևմուտք, Եվրոպայում: Այն ժամանակ հույներն առանց թագավորների ղեկավարվում էին իշխաններից ու ցեղապետներից: Տասնհինգ տարի պատերազմելուց հետո քառասուներկու (քառասուն հազար<sup>6</sup>) մարդ զրեցին երկու հազար ձիու մեջ և քսան այր նստեցրին երկու հազար ձիու վրա<sup>7</sup>:

Առաքել, Լուծումն 422.

Հարց. Զինչ է պոլիմիական փորձութիւն<sup>8</sup>: Պատասխանի. Հուրն է՝ բայց կրկին զպոլիմէական

Հարց. Ինչ է պրիամական փորձությունը: Պատասխան. կրակն է, բայց կրկնակի է պրիամա-

<sup>1</sup> Պահպանել ենք Մ 437 ձեռագրի ուղղագրությունը:  
<sup>2</sup> Հմմտ. Եսեբիոս, Քրոնիկոն, Ա 259. «(Թագաւորք Սիկոնացոց)... Քսաներորդ չորրորդ Պաղիփիլոէս ամս ԼԱ. առ սովա Իդիոն առաւ», Ա 271. «(Թագաւորք աթենացոց) մետասաներորդ՝ Մենեսթես Պետեայ Առնեայ՝ Երեքթեայ, ամս ԻԳ.: Առ որով Իդիոն առաւ», Բ 130-132. «Եբրայեցոց Եսեբոն ամս Է.: Ասորեստանեայց Տաւտամէս ամս ԻԳ.: Սիկոնացոց Պոլիփիլաէ: Աթենացոց Մենեսթես: Եգիպտացոց Ամենեսէս: Առ որով Իդիոն առաւ», Ա 216. «Իննուտասներորդ հարստութիւն դիոպոլիտացոց... Թուսվրիս, որ ի Հոմերոսէ Պաղիքոսն կոչի, այր կաշմբուռն զաւրատր, առ որով Իդիոն առաւ»: Հմմտ. Sync. 193.3. 'Εσέβων και 'Εσβάλ έκριναν τον 'Ισραήλ έτη ζ', Sync. 173.7. Σικωονίον κδ' έβασίλευσε Πολυφειδης έτη λα', Sync. 202.4. Αθηναίον ια' έβασίλευσε Μενεσθεύς, Sync. 80.15-21. 'Εννεακαιδεκάτη δυναστεία βασιλέων Διοσπολιτών... ζ' Θούωρις, ό παρ' Ομηρω Πόλυβος, Αλκάνδρας άνήρ, έφ' ού τό 'Ιλιον έάλω, έτη ζ':  
<sup>3</sup> Հմմտ. Եսեբիոս, Քրոնիկոն Բ 170. «Առ իշխանաւն աթենացոց Եսքիլայ յամին երկրորդի՝ առաջին Ողոմպիասն եղաւ, յորում յաղթէր ի ստաղին Կուռիքոս Հեղիացի», Ա 277. «Յեղիոնի առնլոյն մինչ ի հերակլիդացոց ի պելեպոնէսոս ասպատակն՝ ամք Չ. աւէ լինել Ապողոդորոս: Եւ յասպատակէն մինչև ցՅովնեայ շինուածն ամս Կ.: Եւ անտի մինչև ցՂիկուրգոս ամս ԾԾԹ. (...) Եւ ընդ ամենայն յԵղիոնի առնլոյն մինչև ցառաջին ողոմպիադն ամք ՆԷ.»: Եսեբիոս, Քրոնիկոն Բ 134. «835 ք. ՅԻդիոնի առնլոյն մինչև ցառաջին ողոմպիադն՝ ամք ՆԷ.»:  
<sup>4</sup> Հմմտ. Եսեբիոս, Քրոնիկոն Ա, էջ 274. «առաջին ողոմպիադն կարգեցաւ, յորում յաղթէր Կուռիքոս Հեղիացի ստաղին», էջ 281. «ի քսաներորդում ողոմպիադն յաղթեալ ի ստաղին Կուռիքոս Հեղիացի՝ նախ գրեցաւ և այն առաջին ողոմպիադ կարգեցաւ»:  
<sup>5</sup> Խոսքը Պանոպոլիս քաղաքի մասին չէ. հույները այդպես էին կոչում եգիպտական Khent-min (ղպտիերեն Khmin) քաղաքը, որ գտնվում էր Վերին Եգիպտոսում, Նեղոսի արևելյան ափին:  
<sup>6</sup> Հավանաբար «ԽԲ» աղավաղվել է «ԽՈ» (40000)-ից, ինչպես որ նախորդ մեջբերված բնագրում է:  
<sup>7</sup> Խորհրդավոր «Եղիշէին» վերագրված այս հատվածը թվում է նախորդ երկար պատմության համառոտ տարբերակ:  
<sup>8</sup> Այս հարցը մեկնում է Գավիթ Անհադթի «Սահմանք»-ի հետևյալ հատվածը. «(Պոլոսին) հարցեալ յուճմանէ, եթէ՝ աղէ ասա ինձ, ով Պոլոսին, թէ այնպիսին որ յիրում կենդանութեան ի պոլիմիականն անկա փորձութիւնս և զԵլիոն տեսն չարեաք ըմբռնեալ, և յետ վախճանելոյ գտաւ անթաղ ընկեցեալ, բարերջանիկ գո՞յ թէ ոչ?» = Dav. *Prol.*



փորձութիւնն: Նախ՝ զի ասեն, թէ վեց փորձութիւն կայր Հեթանոսաց զոր կամաւ կրէին, վասն ընտիր յայրն գտանելոյ. այսինքն՝ ի գնտան մտանէին, ի գետն անկանէին, ի սով, ի մերկութիւն, և յայլսն, և յորժամ զամենայն կատարէին, ի վերջն ի հուր անկանէին և կենդանի ի դուրս գային, և զայնպիսին ետելիտքն<sup>1</sup> և ի քաջ նահատակսն գրէին, որպէս և մարտիրոսքն և ճգնաւորքն գովին ի գիրս եկեղեցւոյ, այսպէս և նոքա առնէին, իսկ ի նոցանէ այր մի ընկեցաւ ի հուրն և այրեցաւ և մեռաւ, և Իլիոն գմարմինն ասէ, որ մոխիր եղև, և քամին տարաւ և ոչ թաղեցաւ: Դարձեալ պոփմէական փորձութիւն՝ զԻլիոն քաղաքին ասէ՝ որ է Հուսա քաղաք, զոր վասն միոյ աղջկան զոր տարան յԱղէքսանդրի քաղաքէն, և աղէքսանդրէացիք գնացին ի վերայ Հուսայ քաղաքին, զոր յառաջն Իլիոն կոչելու. և երկոտասան ամ պաշարեցին և առին զԻլիոն քաղաքն, և կոտորեցին և գերեցին զկանայսն և զմանկտիս նոցա, և գերիքն հնարս իմացան, յորժամ նաւէին գերիչքն. գերիքն հուր արկին և այրեցին զնան, և բազումք ծովահեղձք եղեն, և մնացեալքն եկին ի քաղաքն իւրեանց ի յԱղէքսանդրիայ. զայս ասէ պոփմէական փորձութիւն որ վասն Իլիոն քաղաքին:

կան փորձությունը: Նախ, ասում են, թե վեց փորձություն ունեին Հեթանոսները, որ կամավոր էին կրում՝ ընտիր այր գտնելու համար, այսինքն՝ մարդիկ գնդանն էին մտնում, գետն էին ընկնում, սովի, մերկության ու այլ բաների մատնվում և, երբ այդ ամենը կատարում էին, ի վերջո կրակի մեջ էին նետվում ու կենդանի դուրս գալիս, և այդպիսիք կատարյալ (քրիստոնյաների) և հերոսների թվին էին դասվում: Ինչպես մարտիրոսներին ու ճգնավորներին են գովաբանում եկեղեցու գրքերում, այդպես և նրանք էին անում: Իսկ նրանցից մի մարդ նետվեց կրակի մեջ, այրվեց ու մեռավ: Եվ Իլիոն է կոչում մարմինը, որը մոխիր դարձավ ու քամին տարավ, և որը չթաղվեց: Դարձյալ պոփմական փորձություն Իլիոն քաղաքի մասին է ասում, որ Հուսա քաղաքն է՝ մի աղջկա պատճառով, որին տարան Ալեքսանդրի քաղաքից: Եվ ալեքսանդրացիք գնացին Հուսա քաղաքի դեմ, որը նախկինում կոչվում էր Իլիոն, և տասներկու տարի պաշարեցին ու գրավեցին Իլիոն քաղաքը, կոտորեցին և գերեցին նրանց կանանց ու երեխաներին: Եվ գերիները հնարք գտան. երբ գերիները նավարկում էին, գերիները հրկիզեցին ու այրեցին նավը, և շատերը ծովում խեղդվեցին, մնացածներն էլ եկան իրենց քաղաք Ալեքսանդրիան: Այս է Իլիոն քաղաքին վերաբերող պոփմական փորձությունը:

#### Գրիգոր Դար. 204.

Իլիոն քաղաք ասէին յԱսիոյ կողմն ի ծովեզերայ մի, որ յայնմ ժամանակի չկայր այլ նման նմա, ի խոր կռապաշտ ժամանակին էր, մէկ աղջկան մի համար հնգետասան տարի պատերազմեցան և խաբէութեամբ հագիւ կարացին առնել, և յառման ի հիմանց կործանեցին և բրեցին ի ծովն լցին զքարինն:

Ասում էին, թե Ասիայի կողմում ծովեզերին գտնվում էր Իլիոն քաղաքը. այն ժամանակ նրա նմանը չկար: Դա խորը կռապաշտական ժամանակներում էր: Մի աղջկա համար տասնհինգ տարի պատերազմեցին և հագիւ կարողացան խաբէությամբ առնել այն, իսկ առնելով՝ հիմքից կործանեցին և փորեցին ու քարերը ծովը լցրին:

30.32-31.1. καὶ γὰρ οὗτος ἐρωτηθεὶς ἔκ τινος ὅτι "ὁ ἐν τῇ ζωῇ. πριαμικαῖς περιπεσοὺν συμφοραῖς καὶ Ἰλιάδα κακῶν περιβεβλημένος καὶ μετὰ τελευτὴν ἐρριμμένος ἄταφος εὐδαίμων ἐστὶν ἢ οὐ;" Հմմտ. նաև Գրիգոր Մագիստրոս, 19(9).26. «յորս անկայ փորձութիւն առաւել քան զպոփմականն», 24 (ԺԹ).3. «իբրոյ ի պոփմէականն գրէ զիս անկեալ փորձութիւնն», Սարկիսազ, Լուծմունք, 37. «Պրիմիական պատերազմն, զԵլիոն գմարմինն ասէ և կամ զքաղաքն» («Պրիամական պատերազմն Իլիոնը մարմին է ասում կամ քաղաք»):

<sup>1</sup> Այլուր չավանդված «ետելիտ» բառը թարգմանելով «կատարյալ (քրիստոնյա)»՝ այն կապում ենք հունարեն τέλειος («կատարյալ») ածականի հետ, որը մասնավորապես «կատարյալ (քրիստոնյա)» իմաստն ունի (Ա Կոր. Բ 6, հայերեն թարգմանված է՝ «ընդ կատարեալս»):

Որիսուս ալոսքիւք դաւաճանէ զԱգամեմնոն՝ յորժամ աքէացիքն ի ձեռն տրովարացւոցն ըմբռնեալք էին մարտիւն. և նա հրամայեաց զնաւքն ի ծով քարչել. և նա դժուարացեալ աւարգելով ասէ ցնա. «Իբրու անհմուտ ոմն պատերազմիս լինելով հաստատապէս զգեղեցիկ զնաւսդ առ թշնամիսն մերժես, քանզի մանաւանդ տրովարացւոցն լինիցին ըղձալի, և մեզ պատճառ արմատի խլելոյ, քանզի ոչ աքէացիքս յաղթեցին պատերազմիս՝ նաւացս ալոսպէս ձգելով, այլ դարձուցանեն զերեսս իւրեանց վաղվաղակի, և այսմ պատճառ քոյդ իցէ խորհուրդ՝ որպէս յայտնէ ոգեալդ առ ի քէն»:

Ὀδυσσεὺς γὰρ αὐτῷ λοιδορεῖ τὸν Ἀγαμέμνονα, τῶν Ἀχαιῶν τότε ὑπὸ τῶν Τρώων κατεχομένων τῆ μάχῃ, κελεύοντα τὰς ναῦς εἰς τὴν θάλατταν καθέλκειν, ὃ δὲ χαλεπαίνει τε αὐτῷ καὶ λέγει - ὅς κέλει πολέμοιο συνεσταότος καὶ αὐτῆς νῆας ἐυσέλμους ἄλλαδ' ἔλκειν, ὄφρ' ἔτι μᾶλλον Τρωσὶ μὲν εὐκτὰ γένηται ἐελδομένοισι περ ἔμπιπρῆ. οὐ γὰρ Ἀχαιοὶ σχήσουσιν πολέμου νηῶν ἄλλαδ' ἐλκομενάων, ἀλλ' ἀποπαπτανέουσιν, ἐρωήσουσι δὲ χάριτος. ἔνθα κε σὴ βουλή δηλήσεται<sup>1</sup>, οἷ' ἀγορεύεις.

Որիսուսը սրա համար է դավաճանում (նախատում) Ագամեմնոնին. երբ աքեացիներին տրոյացիները ներում էին մարտում, նա հրամայել էր նավերը դեպի ծով քարչել. Որիսուսն էլ զայրացած ասում է նրան. «Որպես պատերազմիս անհմուտ մեկը, գեղեցիկ նավերը թշնամիներից հեռացնում ես (Որ կովի բովում հրամայում ես գեղեցկատախտակամած նավերը դեպի ծով քարչել), չէ՞ որ տրոյացիների իղձերը կիրականանան, իսկ մեզ արմատախլի անելու պատճառ կլինի (կործանում բաժին կհասնի): Քանզի աքեացիները չեն հաղթի մարտում՝ նավերն ալոսպես (դեպի ծովը) քարչելով, այլ իրենց երեսները շուտ (չիք) հետ կդարձնեն (+ ու կովելուց կհրաժարվեն), և սրա (կործանման) պատճառը կլինի քո սոված խորհուրդը»:

## 2.1 Հոմերոսի «Իլիական»-ի դրվագներ քերականական և այլ երկերում

Տրոյայի արքա Պրիամոսը դիմում է Հեղինեին, որին առևանգել էր իր որդի Պարիսը, և որի համար հույները պատերազմով եկել էին Տրոյայի դեմ, խնդրում նրան նստել իր առջև ու ասում, որ այդ պատերազմի մեղավորն ինքը չէ, այլ աստվածները (Hom. II. 3.161-165):

Աքիլլեսը տեսնում է, թե ինչպես իր հարճը՝ Տրոյայից գերեվարված գեղեցկուհի Բրիսեիսը, Պատրոկլոսին սպանված տեսնելով, ողբում է նրա մահն ու ասում, որ նա իր թշվառ հոգուն ամենից սիրելին է՝ հիշելով, թե ինչպես Աքիլլեսը սպանեց իր ամուսնուն, իսկ Պատրոկլոսը խոստացավ իրեն Աքիլլեսին կնության տալ (Hom. II. 19.282-300):

Նեստորը, որը Տրոյայի դեմ պատերազմում պիլոսցիների ծերունի գորավարն էր և, իմաստուն լինելով, խորհուրդներ էր տալիս հույներին, լսեց մարտնչող հույների ու տրոյացիների աղաղակը և դիմեց բժիշկ Մաքսոնին. «Ասա՛ ինձ, քաջդ Մաքսոն, ի՞նչ կլինեն այս բաները, / Նավերի մոտ սաստկացել է քաջ այրերի աղաղակը, / Բայց դու այժմ հանգիստ նստի՛ր ու հրագոյն գինի՛ ըմպիր, / Քաջագանգուր Հեկամեդէն քեզ տաք լոգանք կպատրաստի / Եվ կլվա արյունածոր քո վերքերը» (Hom. II. 14.3-7):

<sup>1</sup> Hom. II. 14.96-102.

Հասարակ վանգ լինի ըստ յե-  
ղանակս երիս. <1> յորժամ ի  
ձայնաւոր երկայն յանգիցի ...  
որգան՝ «ինձ բնաւ ես ոչ դու  
իրիք պատճառ, արև, այդ աս-  
տուածքն». <2> կամ յորժամ  
աղաւտի և աղաւտացելոյ ձայ-  
նաւորի վերաբերիցին երկու  
ձայնորդք ... Հիգան՝ «Պատ-  
րոկղէ ինձ հիքիս յոյժ սիրե-  
ցեալ անձին». <3> կամ յոր-  
ժամ սուղ իցէ ... որպիսի՝  
«զՆեստոր ոչ խաբեաց խա-  
չիւն թէպէտ և յուճպ էր»:

Κοινή συλλαβή γίνεται κατὰ  
τρόπους τρεῖς, <1> ἤτοι ὄτ' ἂν  
εἰς φωνῆεν μακρὸν λήγη... οἷον  
“Οὗ τί μοι αἰτίη ἐσσί' θεοί νύ  
μοι αἴτιοί εἰσιν” (Hom. Il.  
3.164). <2> ἢ ὄτ' ἂν βραχεῖ ἢ  
βραχυνομένῳ φωνήεντι ἐπιφέ-  
ρηται δύο σύμφωνα... οἷον  
“Πάτροκλέ μοι δειλῆ πλειῖστον  
κεχαρισμένε θυμῷ” (Hom. Il.  
19.286), <3> ἢ ὄτ' ἂν βραχεῖα  
οὔσα... οἷον “Νέστορα δ' οὐκ ἔ-  
λαθεν ἰαχῆ πίνοντά περ ἔμπης”  
(Hom. Il. 14.1).

Վանկն ընդհանուր<sup>1</sup> է լինում  
երեք եղանակով. <1> երբ ա-  
վարտվում է երկար ձայնավո-  
րով ... ինչպես՝ «դու բնավ իմ  
աչքում մեղավոր չես, արև<sup>2</sup>,  
աստվածներն են մեղավոր».  
<2> կամ երբ կարճ կամ կար-  
ճացած ձայնավորին կցվում է  
երկու բաղաձայն ... ինչպես՝  
«Պատրոկլոս, իմ թշվառ հո-  
գուն հույժ սիրելի՛».  
<3> կամ երբ կարճ է ... ինչպես՝ «Նես-  
տորին աննկատ չմնաց այն  
աղմուկը, չնայած խմում էր»:

Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեկնիչները նրա մեջբերած այս առանձին տո-  
ղերն ավելի լայն համատեքստի մեջ են մեկնաբանում, թվում է՝ ուղիղ դիմելով «Իլիական»-ին:  
Սակայն մեկնություններում առաջ են եկել անճշտություններ և իմաստի աղավաղումներ:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Դավթի մեկնությունից) Ժ.5.

... ինձ բնաւ ես ոչ դու իրիք պատճառ, արև՛, ... դու բնավ իմ աչքում մեղավոր չես, արև՛,  
այլ՝ աստուածքն: ... դու բնավ իմ աչքում մեղավոր չես, արև՛,  
այլ՝ աստվածները:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Դավթի մեկնությունից) Ժ.8.

Պատրոկղէ՛, ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ Պատրոկլոս՛ս, իմ թշվառ հոգուն հույժ սիրելի:  
անձին:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Դավթի մեկնությունից) Ժ.12.

ԶՆեստոր ոչ խաբեաց խա<ւ>չիւն, թեպէտ և Նեստորին աննկատ չմնաց այն աղմուկը, չնա-  
յուճպ էր: ... չնայած խմում էր:

Գրիգոր Մագիստրոս, Քերակ. (մեջբերում Դավթի քերականի մեկնությունից) Ժ.14-17.

Յայտ են և պատմութիւնք առաջնոցն. Պրիա- Առաջին տեսակի համար հայտնի պատմու-  
մոս Տրովացի, որոյ գլխին յափշտակեալ էր թյուն կա: Տրոյացի Պրիամոսը, որի կնոջը  
հելլենացուցն: Որդի նորա Պրիամոս, քննելով հափշտակել էիր հույները: Նրա որդի Պրիամո-

<sup>1</sup> Հունարեն կարճ, երկար ու «ընդհանուր» (որը կարող է և՛ երկար, և՛ կարճ լինել) վանկերի (վանկերի երկարությունը միշտ չէ, որ համընկնում է դրանց մեջ եղած ձայնավորների երկարությանը, և դրանց ճիշտ տարբերակումն ընկած է հին հունական տաղաչափության հիմքում) մասին դատողությունների հայերեն թարգմանությունը խիստ բռնազորոսի է. էլ ավելի արտառոց է դրանց լուսաբանումը Հոմերոսից թարգմանված բանաստեղծական հատվածների միջոցով: Բնականաբար, հայերեն թարգմանության մեջ կարճ, երկար և «ընդհանուր» վանկերի այդ հատկանիշն արտացոլված չէ:  
<sup>2</sup> Հոմերոսի և Դիոնիսիոսի սկզբնազրում «արև» բառը բացակայում է: Թարգմանության մեջ դրա ներմուծումը բոլորովին խաթարել է իմաստը:

զ'ի վերայ եկելոցն զգործս, ասելով ցաղջիկն. «Ե՛կ այսր, արդ զի ոչ ես դու այսմ պատճառք»: Իսկ երկրորդին՝ Աքիլլես հելլենացի և Պատրոկղէ դայեկորդին նորա. և իբրև ետես Աքիլլես զՊատրոկղէ մեռեալ հանդերձ քաջութեամբ, լալով զհարճն Աքիլլես, թե «Բեզ յամուսնութիւն տամ Աքիլլես»: ասէ՝ «Ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին»: Իսկ յերրորդումն՝ Նեստոր ոմն ծեր, հմուտ պատերազմի, զոր տուեալ ցՄաքսոն ոմն բժիշկ վիրաւորեալ, զի դարմանեսցէ. որոյ դարմանելով զվէրսն, տայր նմա ըմպել խաշելոյ իրի շուր, զոր ասէր, թե սեաւ գինի է. իսկ նորա ըմպեալ ծանեաւ, թե ոչ է գինի, այլ խաշոյ:

Վարդան, Քերակ. 99-100.

Հասարակ վանդ լինի ըստ յեղանակս երիս... <1> Յորժամ ի ձայնաւոր յերկայն յանգիցի ... որզան՝ ինձ, բնաւ, ոչ, ես, դուն, ի, ըիք, պատ, ճառ, ա, բև, այլ աս, տու, անքն: Պրիամոս Տրոյացոյ հարճն առաւ ի հելլենացոցն ծառայ, և ապականեալ թողին զնա պղծեալ. և Պարիս, որդի նորա, տեսեալ ասէ ցկինն՝ «Մի՛ ամաչեր, զի դու չես իրք արարեալ, այլ աստուածքն մատնեցին վասն մեղաց մերոց, որ չետուն մեզ յաղթութիւն. մի՛ ամաչեր, այլ եկեսջիր ի տուն քո»: <2> Եւ կամ յորժամ աղաւտի և աղաւտացելոյ ձայնաւորի վերաբերիցին երկու ձայնորդք... հիզան «Պատ, բոկ, դէ, ինձ, հի, քոյս, կա, ըի, յոյժ, սի, բե, ցեալ անձին»... «Եւ ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին»: Եւ վանգիցն աւրինակ է՝ Պատրոկղէ, Աքիլլես. զի սա դայեկորդի էր և քաջութեամբ մեռաւ ի պատերազմի, և կինն, որ էր հարճն Աքիլլայ, զոր խոստացեալ էր տալ նմա, լայր զնա: Եւ Աքիլլես մխիթարել զնա կամելով ասէր, թէ՝ «Ինձ հիքիս, այսինքն՝ ողորմելոյս, ա՛յլ աւելի վնաս նորա մահն է. մի՛ լար, ոչ ատեամ զքեզ»: <3> Եւ կամ յորժամ սղիցի և եզերիցի ի մասն բանի և զհետինն ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, որպիսի՞ զՆես, տոր, ոչ, խա, բեաց, խաւ, շիւնն, թէ, պէտ, և, յուճպ էր... Եւ աւրինակն պատմութիւն է բան չափածու, զի Նեստոր ոմն ծեր և հմուտ ի պատերազմի, և հարաւ ի պատերազմ

սը (Պարիսը), քննելով իր դեմ եկածներէ գործերը, ասաց աղջկան. «Ե՛կ այստեղ, քանի որ դու չես մեղավոր սրա համար»: Իսկ երկրորդ տեսակինը՝ հելլենացի Աքիլլեսն ու նրա դայեկորդի Պատրոկլոսը. երբ Աքիլլեսը տեսաւ քաջութեամբ զոհված Պատրոկլոսին, իսկ իր հարճը լալիս էր, թե՛ «Բեզ Աքիլլեսին ամուսնութեան եմ տալիս», ասաց. «Իմ թշվառ հոգուն հույժ սիրելի»: Իսկ երրորդ տեսակինը՝ ոմն ծեր Նեստոր, պատերազմին հմուտ, ում տվել էին ոմն Մաքսոնի՝ վիրավորված բժշկի, որպեսզի բուժի. որը, բուժելով վերքը, նրան խմել տվեց խաշած մի բանի շուրը, ինչի մասին ասաց, թե սև գինի է: Իսկ նա, խմելով, իմացավ, որ գինի չէ, այլ՝ խաշո՛ւ<sup>1</sup>:

Վանկն ընդհանուր է լինում երեք եղանակով... <1> Երբ ավարտվում է երկար ձայնավորով ... ինչպես՝ «Դու բնավ իմ աչքում մեղավոր չես, արև՛, աստվածներն են մեղավոր»: Պրիամոս տրոյացու հարճին հելլենացիներն իրենց ծառան դարձրին և, պղծելով, թողեցին նրան. և նրա որդի Պարիսը, տեսնելով, ասաց կնոջը. «Մի՛ ամաչիր, քանի որ դու չես այդ բաներն արել, այլ աստվածները մեզ մատնեցին մեր մեղքերի համար, մեզ հաղթանակ չտվեցին. մի՛ ամաչիր, այլ ե՛կ քո տունը»: <2> Կամ երբ կարճ կամ կարճացած ձայնաւորին կցվում է երկու բաղաձայն ... ինչպես՝ «Պատուրուկո՛ւս, իմ թըշվառ հոգուն հույժ սիրելի» ... «Իմ թշվառ հոգուն հույժ սիրելի»: Վանկերի օրինակներ են Պատրոկլոսը, Աքիլլեսը. սա դայեկորդի էր և քաջութեամբ մեռավ պատերազմում, և կինը, որ Աքիլլեսի հարճն էր, ում խոստացել էր ամուսնացնել նրա հետ, ողբում էր նրան: Եվ Աքիլլեսը, կամենալով նրան մխիթարել, ասում էր. «Ինձ՝ թշվառիս, այսինքն՝ ողորմելիս համար է՛լ ավելի մեծ վնաս է նրա մահը. մի՛ լար, ես քեզ չեմ ատում»: <3> Եվ կամ երբ կարճանում է ու ավարտվում խոսքի մասով, և հաջորդը սկսվում է բաղաձայնով. օրինակ՝ «Նեստորին չը-խա-բեց աղ-մու-կը, չը-նա-յած խը-մում էր»: ... Այս օրինակը մի չափածո պատմություն է, թե՛ ոմն ծեր և պա-

<sup>1</sup> «Խաշոյ» ընթերցումն առաջացել է «խաշիւն»-ից, որը «Իլիական»-ի տողի թարգմանութեան մեջ համապատասխանում է հույարեն «աղմուկ» բառին:

մին: Եւ ետուն զնա ի բժիշկ ոմն Մաք[աւ]ոն անուն, և նա ետ նմա հաց և սեաւ զինի: Եւ մինչդեռ ի յուճապ էր՝ կազմեցան զաւրք գաղտնաբար ի նմանէ, զի չիմանայ և զհետ երթայցէ և մեռցի ի վերացն: Եւ ոչ կարացին վասն արեւութեան նորա, զի թէպէտ և յուճապ էր՝ իմացաւ զխաւշիւնն, և Ֆիլիսոֆայ ոմն ետես զայն այնպէս և նմա գով ասաց չափածու բանիւ:

Յովհաննէս Երզնկացի 182-183.

Յայտնեն և պատմութիւնք առաջնոցն. Պրիամոս տրովացի, զորոյ զկինն յափշտակեալ էր հելլենացւոցն, որդի նորա Պարիս, քննելով զի վերայ եկելոցն զգործն, ասելով ցաղջիկն՝ «Ե՛կ այսր. արդ, զի ո՛չ ես դու այսմ պատճառք»: Իսկ երկրորդին՝ Աքիլլես հելլենացի և Պատրոկղէ դայեկորդի նորա: Եւ իբրև ետես Աքիլլես զՊատրոկղէ մեռեալ հանդերձ քաջութեամբ, լալով զհարճն Աքիլլեայ, ասէ, թէ՛ «Քեզ յամուսնութիւն տամ Աքիլլեայ», ասէ՛ «Ինձ հիքիս՝ կարի յոյժ սիրեցեալ անձին»: Իսկ յերրորդումն՝ «Նեստոր ոմն ծեր, հմուտ պատերազմի, զոր տուեալ զՄաքսոն<sup>1</sup> ոմն բժիշկ վիրաւորեալ զի դարմանեսցէ». որով դարմանելով զվէրսն՝ տայր նմա հաց և սեաւ զինի: Բայց իբրև յոյժ ամբոխէր գործ պատերազմին, ոչ սիրելի լինէր նմա ըմպումն զինւոյն, քան թէ երթալ ի գործ պատերազմի:

Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. 187-188.

Պրիամոս տրովացի, զորոյ զկինն յափշտակեալ էր հելլենացւոցն որդի նորա Պարիս՝ քննելով զի վերայ եղելոցն զգործն, ասելով ցաղջիկն՝ «Ե՛կ այսր: Արդ՝ զի ոչ ես դու այսմ պատճառք»: «Պատրոկղէ՛, ինձ հիքիս, կարի յոյժ սիրեցեալ անձին»: Քանզի իբրև ետես Աքիլլես զՊատրոկղէ մեռեալ, լալով զհարճն Աքիլլեայ, թէ զքեզ յամուսնութիւն տամ Աքիլլեայ, ասէ. «Ինձ՝ հիքիս, կարի յոյժ սիրեցեալ անձին»... Նեստոր ոմն ծեր՝ հմուտ պատերազմի,

տերազմում հմուտ Նեստորին պատերազմում խոցեցին: Եվ տվեցին նրան ոմն Մաքսոն անունով բժշկի, և նա նրան հաց ու սև զինի տվեց: Եվ քանի դեռ նա խմում էր, նրանից գաղտնի զորք կազմվեց, որպեսզի նա չիմանա և չհետևի ու վերքերից չմեռնի: Եվ նրա քաջութեան պատճառով դա չկարողացան, քանի որ չնայած նա խմում էր, աղմուկը լսեց: Եվ մի փիլիսոփա նրան այդպես տեսավ ու նրա գովքն ասաց չափածոյով:

Առաջին տեսակի համար հայտնի պատմութիւն կա. Տրոյացի Պրիամոսը, որի կնոջը հափշտակել էին հույները: Նրա որդի Պարիսը, քննելով իր դեմ եկածների գործերը, ասաց աղջկան. «Ե՛կ այստեղ, քանի որ դու չես մեղավոր սրա համար»: Իսկ երկրորդ տեսակինը՝ հելլենացի Աքիլլեսն ու նրա դայեկորդի Պատրոկոսը. երբ Աքիլլեսը տեսավ քաջութեամբ զոհված Պատրոկոսին, իսկ իր հարճը լալիս էր ու ասում, թէ՛ «Քեզ Աքիլլեսին ամուսնութեան եմ տալիս», ասում է. «Իմ թշվառ հոգուն հույժ սիրելի»: Իսկ երրորդ տեսակինը՝ ոմն ծեր Նեստոր, պատերազմին հմուտ, որը վիրավոր տրված էր ոմն բժիշկ Մաքսոնին, որպեսզի նա բուժի. վերքը բուժելով՝ նրան հաց ու սև զինի տվեց: Բայց երբ մարտը շատ թեթեւացավ, նրան այլևս հաճելի չէր զինի խմելը, այլ՝ կուրծքն ալը:

Տրոյացի Պրիամոսը, որի կնոջը հափշտակել էին հույները. նրա որդի Պարիսը, քննելով իր դեմ եկածների գործերը, ասաց աղջկան. «Ե՛կ այստեղ, քանի որ դու չես մեղավոր սրա համար»: «Պատրոկոսն, իմ թշվառ հոգուն հույժ սիրելի՛». երբ Աքիլլեսը տեսավ զոհված Պատրոկոսին, իսկ իր հարճը լալիս էր, թէ՛ «Քեզ Աքիլլեսին ամուսնութեան եմ տալիս», ասաց. «Իմ թշվառ հոգուն հույժ սիրելի»: ... Ոմն ծեր Նեստոր, պատերազմին հմուտ, որը վիրավոր

<sup>1</sup> «գՄաքսոն» ձևն այստեղ ու Հովհաննէս Ծործորեցու, Եսայի Նշեցու հատվածներում (մաև Դավիթ Ձեյթունցու «գմաքսան»-ը) Մագիստրոսի մեկնության «գՄաքսոն» ձևի աղավաղված տարբերակն է: Հոմերոսի պոեմի դրվագի՝ մեկնիչների այս ձևափոխած տարբերակում խոսվում է վիրավոր Նեստորին Մաքսոն բժշկին բուժման տալու մասին: Սակայն Հոմերոսի մոտ հենց Մաքսոնն էր վիրավորվել:

զոր տուեալ զՄաքաոն բժիշկ վիրաւորեալ, լսէր պատերազմի, ոչ սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյն, քան թէ երթալ ի գործ պատերազմին: Իսկ այլք ասեն, թէ տայր նմա ըմպել ի խաշելոյ իրի շուր և խաբէր, թէ սեաւ գինի է նորա ըմպեալ, ծանեաւ թէ ոչ է գինի:

Յովհաննէս Քոնեցի 163.

Պատրոկղէ՛, ինձ հիքիս յոյժ սիրեցեալ անձին... զՆեստոր ոչ խաբեաց խաշոյն, թէ և յուժպ էր:

Եսայի Նչեցի, Քերակ. 99.

Յայտնի են և պատմութիւնք առաջնոյն. Պրիամոս Տրովացի, զորոյ զկինն յափշտակեալ էր Հելլենացւոցն, որդի նորա Պարիս, քննելով զ'ի վերայ եղելոցն զգործն, ասելով ցաղջիկն՝ «Ե՛կ այսր, արդ զի ոչ ես դու այսմ պատճառք»: Իսկ երկրորդին՝ Աքիլլեա Հելլենացի և Պատրոկղէ դայեկորդի նորա. և իբրև ետես Աքիլլեա զՊատրոկղէ մեռեալ Հանդերձ քաջութեամբ, լալով զհարճն Աքիլլեայ, թէ «զքեզ յամուսնութիւն տամ Աքիլլեայ», ասէ՝ «Ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին»: Իսկ յերրորդումն՝ Նեստոր ոմն ծեր, հմուտ պատերազմի, զոր տուեալ զՄաքաոն բժիշկ վիրաւորեալ, զի դարմանեսցէ. որոյ դարմանելով զվէրսն, տայր նմա Հաց և սեաւ գինի: Բայց իբրև յոյժ ամբոխէր գործ պատերազմին, ոչ սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյն, քան թէ երթալ ի գործ պատերազմին: Իսկ այլք ասեն, թէ տայր նմա ըմպել ի խաշելոյ իրի շրոյ և խաբէր՝ թէ սեաւ գինի է. նորա ըմպեալ ծանեաւ թէ ոչ է գինի, այլ խաշոյ:

Դաւիթ Զեյթունցի 89-91.

Պրիամոս տրովացի, զորոյ զկինն յափշտակեալ էր Հելլենացւոցն, պղծեալ և թողին զնա, և որդին նորա Պրիամոս քննելով զ'ի վերայ եղելոցն գործն, ասելով ցաղջիկն՝ «Ե՛կ այսր, արդ զի ոչ ես դու պատճառ, այլ աստուածքն, որ ոչ ետուն մեզ յաղթութիւն»... Իբրև ետես Աքիլլեա զՊատրոկղէ մեռեալ լալով զհարճն, վասն զի Աքիլլեայ դայակի որդի է Պատրոկղէ և քաջութեամբ մեռաւ ի պատերազմին, և հարճն իւր, զոր խոստացեալ էր տալ նմա, լայր զնա, և Ա-

տրված էր ոմն վիրավոր բժիշկ Մաքաոնին, լսեց մարտի աղմուկը, և նրան հաճելի չէր գինի խմելը, այլ՝ կուլի գնալը: Իսկ ուրիշներն ասում են, թե նա նրան խմել տվեց խաշած մի բանի շուրն ու խաբեց, թե սև գինի է նրա խմածը, նա էլ իմացավ, թե գինի չէ:

Պատրոկլո՛ս, իմ թշվառ հոգուն հույժ սիրելի ... Նեստորին չխաբեց խաշուն, չնայած խմում էր:

Առաջին տեսակի համար Հայտնի պատմութիւն կա. տրոյացի Պրիամոսը, որի կնոջը հափշտակել էին հույները: Նրա որդի Պարիսը, քննելով իր հետ պատահածը, ասաց աղջկան. «Ե՛կ այստեղ, քանի որ դու չես մեղավոր սրա համար»: Իսկ երկրորդ տեսակինը՝ Հելլենացի Աքիլլեսն ու նրա դայեկորդի Պատրոկլոսը. երբ Աքիլլեսը տեսավ քաջութեամբ զոհված Պատրոկլոսին, իսկ իր հարճը լալիս էր, թե՛ «Քեզ Աքիլլեսին ամուսնութեան եմ տալիս», ասաց. «Իմ թշվառ հոգուն հույժ սիրելի»: Իսկ երրորդ տեսակինը՝ ոմն ծեր Նեստոր, պատերազմին հմուտ, որը վիրավոր տրված էր ոմն բժիշկ Մաքաոնին, որպեսզի նա բուժի: Վերջը բուժելով՝ նրան Հաց ու սև գինի տվեց: Բայց երբ մարտը շատ թեժացավ, նրան այլևս հաճելի չէր գինի խմելը, այլ՝ կուլի գնալը: Իսկ ուրիշներն ասում են, թե նա նրան խմել տվեց խաշած մի բանի շուրն ու խաբեց, թե սև գինի է. իսկ նա խմելով իմացավ, թե գինի չէ, այլ խաշու:

Պրիամոս տրոյացին, որի կնոջը Հելլենացիները հափշտակել էին և, պղծելով, թողել նրան. և նրա որդի Պարիսը, քննելով իր հետ պատահած գործը, ասաց աղջկան. «Ե՛կ այստեղ, դու չես մեղավոր, այլ՝ աստվածները, որ մեզ հաղթանակ չտվեցին»... Երբ Աքիլլեսը տեսավ զոհված Պատրոկլոսին և հարճին, որ լալիս էր. քանի որ Պատրոկլոսն Աքիլլեսի դայակի որդին էր ու քաջութեամբ զոհվեց պատերազմում, և իր հարճը, որին խոստացել էր ամուսնացնել նրա հետ,

քիլլեա մխիթարելով զնա ասէ. «Պատրոկղէ, ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին», այսինքն ողորմելոյս կամ թշուառականիս յոյժ սիրեցեալ անձին: Ի Հոմերոնէ, զոր ասեն ի պատմութենէ, եթէ Նեստոր ոմն ծեր, հմուտ պատերազմի, զոր տուեալ զմաքսան բժիշկ վիրաւորեալ զի դարմանեսցէ, որոյ դարմանելով զվէրսն, տայր նմա հաց և սեաւ գինի, բայց իբրև խաւշիւն ամբոխի լսէր ի պատերազմի, այսինքն յոյժ ամբոխումն գործոց պատերազմի լսելի լինէր նմա և ոչ սիրելի լինէր նմա ըմպումն գինւոյն, քան թէ երթեալ ի գործ պատերազմին: Այս պատմութիւն ըստ մեկնութեան Դավթի այսպէս եղեալ է: Այլ Մագիստրոս, որ մեկնութիւն քերականին շարադրեաց առ միմեանս, այսպէս եղեալ է, թէ տայր նմա ըմպել ի խաշոյ իրի ջուր, զոր ասէր, թէ գինի է սեաւ, իսկ նորա ըմպեալ ծանեաւ, թէ ոչ է գինի, այլ խաշոյ: Եթէ այսպէս է և թէ այնպէս, ոչ է մեզ հարկիւ պիտանի պատմութիւնք սոցա, այլ վասն վանգաւորութեան եղեալ է Հոմերոս:

ողբում էր նրան: Եվ Աքիլլեսը, մխիթարելով նրան, ասում է. «Պատրոկլոս, հույժ սիրելի իմ թշվառ հոգուն», այսինքն՝ «հույժ սիրելի ողորմելիս կամ թշվառականիս հոգուն»: Հոմերոսի պատմությունից ասում են, թե ոմն ծեր և պատերազմում հմուտ Նեստորին տվեցին ոմն Մաքսոն վիրավորված բժշկին, որ բուժի: Նա էլ, վերքերը բուժելով, նրան հաց ու սև գինի տվեց: Բայց երբ նա կռվի ժամանակ լսեց ամբոխի աղմուկը, այսինքն՝ նրան լսելի դարձավ պատերազմի սաստիկ աղմուկը, նրան այլևս հաճելի չէր գինի խմելը, այլ՝ կռվի գնալը: Այս պատմությունն այսպես է գրված ըստ Դավթի մեկնության: Իսկ Մագիստրոսը, որ քերականական մեկնությունները կողք-կողքի դրեց, գրել է, թե նրան խմել տվեց մի խաշած բանի ջուրը և ասաց, որ դա սև գինի է, իսկ նա խմելով իմացավ, որ ոչ թե գինի է, այլ խաշու: Այսպես թե այնպես՝ մեզ սրանց պատմությունները, հարկավ, պիտանի չեն, այլ Հոմերոսը դրանք գրել է վանկաչափության համար:

### 3. ՕԼԻՄՊՈՍԸ ՑՆՅԵԼԸ

Հոմերոսի «Իլիական»-ում Ջևան Օլիմպոս լեռան վրա, հավանություն տալով Թետիսի՝ իր որդի Աքիլլեսի համար վրեժ լուծելու խնդրանքին, շարժեց գլուխն ու հոնքերը, և Օլիմպոսը ցնցվեց (Hom. II. 1.528-530):

Գրիգոր Նազ., ճառ 4.116.26-28 [144] = PG 35.656.19-21.

Զի՞նչ և սեաւ յաւնացն ակնարկութիւն, և անապական վարսիցն շարժումն զբովանդակ զՈլիմպոսն սասանեցուցանելն:

Τίς δὲ ἢ τῶν κυανέων ὄφρουων ἐπίνευσις, καὶ ἢ τῶν ἀμβροσίων τριχῶν συγκίνησις, ὄλον Ὀλυμπον κατασείουσα;

Ի՞նչ է սև հոնքերի տարուբերումը և անապական վարսերի շարժմամբ ողջ Օլիմպոսը սասանելը:

Աղեքսանդրի պատմութիւն Ա. 136 = Alex. α 1.33.13.

Որպէս ասաց սքանչելի երգիչն այն Հոմերոս. «Եւ կապուտակային յաւնաւքն ակնարկեաց Զրուանեան, և սքանչելի աստուածային վարսքն շարժեցան անմահ գլխոյն թագաւորին, և մեծապէս շարժեալ տատանեցաւ Ոլիմպոս»:

ὡς ὦδι που ὁ ἀοίδιμος Ὅμηρος. ἦ καὶ κυανέσιν ἐπ' ὄφρουσι νεῦσε Κρονίων / ἀμβρόσια δ' ἄρα χαῖται ἐπερρώσαντο ἄνακτος / κρατὸς ἀπ' ἀθανάτοιο, μέγαν δ' ἐξέλιξεν Ὀλυμπον (Hom. II. 1.528-530).

Ինչպես (+ մի ժամանակ) ասաց այն սքանչելի երգիչ Հոմերոսը. «Եվ Զրվանի (Կրոնոսի) որդին տարուբերեց կապուտակային վարսքերը, և շարժվեցին թագավորի անմահ գլխի սքանչելի աստվածային վարսերը, և Օլիմպոսը սաստիկ շարժվելով տատանվեց»:

Գրիգոր Մագիստրոս 40 (Խ).11.

Թողում զՀոմերոսին, որ առ Աքիլլաս աստուա-

Թողում եմ Հոմերոսի՝ Աքիլլեսին վերաբերող

ծաբանական հանդէս և առ Արամազդը, որ գլու՛մայիտս գրէ շարժել ի խիզախել դիւցազանն և յակնարկել յաւնիցն:

աստվածաբանությունը և Արամազդին (Զևսին) վերաբերող [խոսքերը], որ գրում է, թե հերոսի քաջությունից և հոնքերը տարուբերելուց Օլիմպոսը շարժվում է:

Գրիգոր Մագիստրոս 33 (ԾԴ).19.

... շարժեալ զվարսն, իբրու երբեմն Կուանոս յակնարկելն գլու՛մայիտս:

... շարժելով վարսերը, ինչպես մի ժամանակ Կրոնոսը հոնքերի շարժմամբ [սասանեց] Օլիմպոսը:

Գրիգոր Մագիստրոս 9 (Հ).102.

ՅԱրամազդայ ակնարկութենէն ասէ գլու՛մայոս տատանեալ և զնա երկնի որդի, որպէս զԿուոնոս հայր իւր:

Հիշատակում է Արամազդի՝ հոնքերը շարժելուց Օլիմպոսի ցնցվելը, և նրան՝ որպես Երկնքի (Ուրանոսի) որդի, ինչպես նաև՝ նրա հայր Կրոնոսին<sup>1</sup>:

Գրիգոր Մագիստրոս 26 (ՀԱ).50.

... Ասել քեզ իբրու զԴիւայն Արամազդն այն, յորմէ և Որմիզդն սերեալ, քանզի ի սմա ասէ Հերմէս ակնարկութեամբ տատանել զԳլու՛մայոս:

... Քեզ ասել՝ ինչպես այն Զևս Արամազդը, որից և Որմիզդն էր սերում<sup>2</sup>, քանզի սրա մասին Հերմեսը (Հոմերոսը) ասում է, թե հոնքերը շարժելով սասանում էր Օլիմպոսը:

Յովհաննէս Երզնկացի, Քերակ. 137.

... քերթողականն ... «Սևաթիւրաւք ակնարկեաց և յաւնիւքն զակն և անաստուած վարուք շարժեցան...»:

... բանաստեղծական խոսքերը ... «սևաթուր հոնքերը շարժեց, և անաստված ձևով ցնցվեցին...»:

#### 4. ԿԱՆԳԱՎԼԷՍ ԵՎ ԳԻԳԵՍ, ՄԻԴԱՍ, ԱԲԱՐԻՍ

Հերոդոտոսը պատմում է Լիդիայի արքայի՝ իր կնոջը խիստ սիրահարված Կանդավլեսի և նրա հավատարիմ ծառա Գիգեսի առասպելական պատմությունը (Herodot. 1.8-14): Իսկ ըստ Պլատոնի՝ հովիվ Գիգեսը մի հրաշագործ մատանի գտավ, որն ավի մեջ շրջելով անտեսանելի էր դառնում: Դրա օգնությամբ նա գալթակոեց թագուհուն և, Կանդավլեսին սպանելով, տիրացավ գահին (Plat. Resp. 2.359a–2.360d): Միդասը Փոյուզիայի թագավորն էր: Նա ազահությունից աղոթեց, որ իր հպումից ամեն ինչ ոսկի դառնա, և սովամահ եղավ (Arist. Pol. 1.1257b): Աբարիսն առասպելական իմաստուն ու բժիշկ էր, Ապոլլոնի քուրմը, որ շրջում էր Ապոլլոնին խորհրդանշող աղեղով և ոչինչ չէր ուտում (Herod. 4.36):

Գրիգոր Նազ. Ի Բաս. 175-176.

Այսպէս կարծեմ լեալ առասպել, յորմէ Լիւզացուցն բռնացաւ, կամ Ոմիդեայ ոսկով երբեմն՝ յաղագս որոյ կորեաւ՝ Հանդիպեալ աղաւթիցն և զամենայն ոսկի ստացեալ, միւս ևս Լիւզացի

Այսպես կարծում եմ, թե առասպել է, ըստ որի՝ դարձավ լիդիացիների բռնակալը, կամ մի ժամանակ Միդասը՝ ոսկով, որի պատճառով կործանվեց՝ աղոթքով իր նպատակին հասնելով և

<sup>1</sup> Այստեղ շփոթություն կա. Զևսը Կրոնոսի որդին էր, իսկ Կրոնոսը՝ Ուրանոսի:

<sup>2</sup> Իրականում «Որմիզդն» «Արամազդ» անվան տարբերակ էր:



առասպել, քանզի Աբարիդեայ Հաւատարիմ ինչ արդեաւք ասեմ, որ յաղագս հիւսիսոյ:

ամեն ինչ իբրև ոսկի ստանալով. սա մեկ այլ լիզիական առասպել է: Քանզի ճշմարիտ ի՞նչ կարող եմ ասել Աբարիսի վերաբերյալ, որ Հյուսիսի մասին է<sup>1</sup>:

Հմմտ. Greg. Naz. in Bas. 21.3.1-4.2.

ὧ πλεον ἐφρονοῦμεν ἢ τῆ στροφιῇ τῆς σφενδοῆς ὁ Γύγης, εἴπερ μὴ μῦθος ἦν, ἐξ ἧς Λυδῶν ἐτυράν- νησεν. ἢ τῷ χρυσῷ ποτε Μίδαζ, δι’ ὄν ἀπώλετο, ἐπιτυχῶν τῆς εὐχῆς καὶ πάντα χρυσὸν κτησάμε- νος, ἄλλος οὗτος Φρύγιος μῦθος. Τὸν γὰρ Ἀβάρι- δος οἶστος τὶ ἂν λέγοιμι τοῦ Ὑπερβορέου.

Այդ մասին (քրիստոնյա լինելու) ավելի շատ էինք մտածում, քան Գիգեսը՝ մատանին շրջելու, եթե դա առասպել չէր, որի օգնությամբ ինքը դարձավ լիզիացիների բռնակալը, կամ մի ժամա- նակ Միդասը՝ ոսկու, որի պատճառով կործանվեց՝ աղթքով իր նպատակին հասնելով և ամեն ինչ իբրև ոսկի ստանալով. սա մեկ այլ փոյուզիական առասպել է: Քանզի ի՞նչ կարող եմ ասել Հիպեր- բորեացի Աբարիսի աղեղի մասին...

Գիրք պիտոյից IV.2. «Եղծ Կանտուղեայ» [63].

Բայց զմիս (պատմութիւն) զոր համբաւէս (Հերոդոտոս), զԿանտուղէս թագաւոր լիզաց- ւոց լեալ, անցեալ պարադիտեսցուք: Վասն զի նա, ասէ, առաւել քան զարժանն յիւրումն տարփէր ամուսնի, մինչ կարծել գերագոյն քան զբնաւ կանանց նորայն գեղեցկութիւն. և բաղձայր փափաքանաւք, զի և այլք տարա- զգեստ ի հանդերձիցն տեսանեն զնէ. և այն- պէս յանգէտս, ասէ, աղէկարծումն ժամանակի մերկ զնէ իւրումն մարտակցին ցուցանէր Գիւ- գեայ: Ընդ որ յետոյ զգացեալ զառականս կնոջն առնել իմն զրուցի զայրանայր ցաս- մամբ, և խորհուրդ ընդ տեսողին ունելով, հրաման տայր, բայ, նմին, զի թէ ոչ զԿանտու- ղէսն սպանցէ՝ զայրն ներա, ինքն սրով վախ- ճանեսցի: Եւ պատմէր, թէ նորա հաւանեալ թա- գուհւոյն, նենգութեամբ դրժեալ սպանանէր զթագաւորն, և զկինն՝ կին առնէր, և զլիզաց- ւոցն յաջորդէր իշխանութիւն:

Սակայն դիտարկենք մի պատմություն, որում նա (Հերոդոտոսը) պատմում է, թե Կանդավլես- սը լիզիացիների թագավորն էր: Քանի որ նա իր կնոջ հանդեպ ավելի մեծ կիրք էր տածում, քան հարկն է, այնպես որ կարծում էր, թե նրա գեղեցկությունը գերազանցում է բոլոր կա- նանց, փափագում էր, որ ուրիշներն էլ նրան առանց հագուստի տեսնեն: Եվ այդպես, նրա անգիտությամբ, ասում է, մի անսպասելի պա- հի նրան մերկ ցույց տվեց իր թիկնապահ Գի- գեսին: Պատմվում է, որ հետո կինը, իմանալով խայտառակության մասին, խիստ զայրացավ և, իրեն տեսնողի հետ խորհրդակցելով, հրամա- յեց նրան, ասում է, սպանել իր ամուսին Կան- դավլեսին, ապա թե ոչ՝ ինքը պետք է սրի զոհ դառնար: Եվ պատմում է, թե նա, համաձայնե- լով թագուհու հետ, նենգաբար դարանից սպա- նեց թագավորին, իսկ կնոջ հետ ամուսնացավ և լիզիացիների հաջորդ իշխանավորը եղավ:

Թեոն 98 = Theon 92.2-6.

Յորսդի Գիգէսն առ Կանդաւ- լէսն ասէ՝ «Տէ՛ր, զի՞ ազնիւ ա- սես ոչ առողջն, հրամայելով ինձ գտիկինն զիմ տեսանել մերկ. ևս համանգամ, մակձայ-

ὠς καὶ ὁ Γύγης πρὸς τὸν Καν- δαύλην λέγει· “δέσποτα, τίνα λόγον ἔχεις οὐχ ὑγίεια, κελεύων δέσποιναν τὴν ἐμὴν θεήσασθαι γυμνὴν; ἅμα δὲ χιτῶνι ἐκδυομέ-

Ինչպես Գիգեսն է ասում Կանդավլեսին. «Տէ՛ր, ինչո՞ւ ես անողջամիտ բան ասում՝ հրամայելով ինձ իմ տիրու- հուն մերկ տեսնել: Եվ, դրա

<sup>1</sup> «Որ հյուսիսի մասին է». Աբարիսի «Հիպերբորեացի» (Մերբորեոս) մականունը թարգմանիչը հասկացել է որպես ὑπὲρ βορέου բառակապակցություն (βορέας «հյուսիսային քամի, հյուսիս» բառից):

նէ, զի մերկանալով մերկանայ  
և զպատկառանսն կիրնն»:

νφ συνεκδύεται καὶ τὴν αἰδῶ  
γυνή."

Հետ մեկտեղ, ավելացնում է  
(*չիք*). չէ՞ որ մերկանալով (+  
հագուստից) կիրնը մերկանում  
է նաև ամոթից»:

Եւսեբիոս, Քրոնիկոն Ա, 103 = Sync. 287.15.

Լիդացւոց թագաւորք ... Դ. Λύδων βασιλεῖς ... δ' Καν-  
Կանդաւղէս ամս էժ.: δαύλης ἔτη ιζ'.

Լիդիացիների թագավորները  
... Չորրորդը՝ Կանդաւսը՝  
տասնյոթ տարի:

Սամուէլ Անեցի 46.

Լիդացւոց ... Դ. Կանդաւղէս ամս ժէ.: Ջայսմ  
զԿանդաւղէսայ վէպ համբաւէ Հերոդոտոս, թէ  
տուփեալ յիւր զուգակիցն, կարծէր քան զամե-  
նայն կին գեղեցիկ գոլով նմա, և մերկ ի հան-  
դերձէն գաղտ ցուցանէր զնա Գիգեա, զոր ի-  
մացեալ զայն ամուսնոյն՝ ցասամբ զեղոյր  
ընդ առականսն, տայր սպանանել զԿանտու-  
ղայ՝ կին լինելով ինքն Գիգեայ:

Լիդիացիների [[թագավորները] ... 4. Կանդավ-  
լեսը՝ տասնյոթ տարի: Այս Կանդավլեսի մասին  
Հերոդոտոսն առասպել է պատմում, թե, կիրք  
տածելով իր կողակցի հանդեպ, կարծում էր, որ  
նա բոլոր կանանցից գեղեցիկ է. և առանց  
հագուստի ցույց տվեց նրան Գիգեսին, ինչի  
մասին իմանալով՝ կիրնը ցասումով լցվեց խայ-  
տառակության համար և հրամայեց սպանել  
Կանդավլեսին՝ ինքը դառնալով Գիգեսի կիրնը:

## 5. ԱԼԿԻՈՆ

Արիստոտելը «Կենդանիների պատմություն» երկում գրում է «ալկիոն»՝ ծղնի թռչնի և «ալ-  
կիոնի օրերի» մասին (Arist. *Hist. Anim.* 542b.4–17):

Բարսեղ, Վեցաւրեայք 270–271.

Աղկիոն դարձեալ թռչուն, որ ծովեզերք բնակէ,  
և անդէն առ ծովեզերքն դնէ բոյն յաւազոյն  
վերայ, և արկանէ զձուս, և ի մէջ ձմերայնոյն  
նստի ի ձուս թխել, յորժամ բռնութիւնք հող-  
մոցն և դառնաշունչ սառնամանիքն ամբոխեալ  
զծովն՝ ալէկոծ առնիցեն զեզերսն: Եւ յայնպի-  
սի մրրկեալ ժամանակի կակղանան բռնու-  
թիւնք հողմոցն, և ցածնուն ալիքն ամբո-  
խեալք, և դադարէ ծովն ի խռովութենէ մինչև  
տկար թռչունն աղկիոն թխէ զձուս զեթն աւր:  
Եւ ի կատարել ևթն աւուր հանէ զձագսն ի մե-  
ռեալ խճեպոցն ի կենդանութիւն: Եւ յորժամ  
հանիցէ զձագսն, զեթն աւր ևս ջանայ սնուցա-  
նել և զարգացուցանել: Այս ամենայն պարգևք  
առ տկար թռչունն յամենատեսն Աստուծոյ  
տեսչութենէն, որ ամենայնի առաջնորդէ, և  
զայս ամենայն տեսչութիւն, որ ի վերայ տկար  
թռչնոյն լինի, ամենայն նաւորգք իմանան, և

Ալկիոնը թռչուն է, որ ապրում է ծովեզերին և  
այնտեղ ավազի վրա բույն դնում ու ձու ա-  
ծում: Եվ ձմռանը ձվերի վրա թուխս է  
նստում, երբ հողմերի զորությունն ու դառ-  
նաշունչ սառնամանիքը ծովը խռովում են և  
ծովեզերքն ալէկոծում: Այդպիսի փոթորկալից  
ժամանակ հողմերի զորությունը թուլանում է,  
խռովված ալիքները՝ նվազում, և ծովը չի ալե-  
կոծվում, մինչև որ տկար ալկիոն թռչունը  
ձվերը յոթ օր թխսի: Երբ յոթ օրը լրանում է,  
նա ձագերին մեռյալ կճեպներից հանում է ի  
կենդանություն, և երբ հանում է ձագերին,  
յոթ օր ևս ջանում է սնել ու աճեցնել: Այս բո-  
լոր պարգևները տկար թռչունին ամենատես  
Աստծո հոգատարությունից են, որ առաջնոր-  
դում է ամենքին: Եվ բոլոր նավորդներն իմա-  
նում են այս ողջ հոգատարությունը տկար  
թռչունի հանդեպ ու սույն օրերը կոչում ալկի-

զաւուրան զայնոսիկ յանուն աղկիրն թռչնոյ անուանեն, և այնպէս կոչեն՝ աղկիրնի աւուրք:

ոն թռչունի անվամբ. այդպես էլ անվանում են՝ «աղկիրնի օրեր»:

Վանական վարդապետ, ձեռ. ՄՄ 5611, 37բ.

Հարց. աղկիրնն, պատասխանի. հաւ է որ արկանէ զձուն յեզր ծովուն. է աւր ձու ածէ և անկթիթ ակամբ ի վերայ հայեալ. հանէ զձագսն է. աւր. և ի նոյնքան սնուցանէ և թուցանէ. յանհողմութիւն գուշակելով. զոր աղկիրնի աւուրք անուանեն, և սայ աւրինակ տեսութեան Աստուծոյ և մարդոյս ըստ աղաւթից և պատարազի:

Հարց. աղկիրն (աղկիրն): Պատասխան. թռչուն է, որ ձու է ածում ծովեզրին. յոթ օր ձու է ածում և անթարթ աչքով նայում վրան: Յոթներորդ օրը ձագեր է հանում և նոյնքան ժամանակ սնուցում ու թուցնում՝ գուշակելով հանդարտ եղանակ, որն անվանում են «աղկիրնի օրեր»: Եվ սա օրինակ է Աստծո հոգատարութեան և մարդու աղոթքի ու պատարազի:

Բարոյախաւս (հետագա հավելում) 202.

Աղկիրնն հաւ է, որ արկանէ զձուն յեզր ծովուն անքթիթ ակամբ ի վերայ հայեալ, հանէ զձագն յէ. աւր, և ի նոյնքան սնուցանէ, յանհողմութիւն գուշակելով, զոր աղկիրնի աւուրք անուանեն: Եւ է սա աւրինակ տեսութեան աստուծոյ. և մարդոյս յատուկ աղաւթից և պատարազի:

Աղկիրնը (աղկիրնը) թռչուն է, որ ձու է ածում ծովեզրին՝ անթարթ աչքով նայելով վրան. յոթերորդ օրը ձագեր է հանում և նոյնքան ժամանակ սնուցում՝ գուշակելով հանդարտ եղանակ, որն անվանում են «աղկիրնի օրեր»: Եվ սա օրինակ է Աստծո հոգատարութեան և մարդու հատուկ աղոթքի ու պատարազի:

## 6. ՀԱՅԿԻ ԹՈՌ ԿԱԴՄՈՍԸ

Մովսես Խորենացու ծննդաբանությունից սկսած պատմիչները հիշատակում են Հայկ նահապետի թոռանը՝ նրա Արամանյակ որդու որդի Կադմոսին, որը պապի հետ մասնակցեց Բելի դեմ կռվին, պապից ստացավ ասորական հողերն ու «Կադմոսի տան» հիմնադիրը դարձավ: Այս Կադմոսն առնչություն չունի Թեբեի հիմնադիր Կադմոսի հետ (դրվագ 63), սակայն անունների նույնությունն ակնառու է:

Գ. Խալաթյանցի կարծիքով՝ հայ պատրիարքների անունների մեծ մասը հորինել է Խորենացու և Անանունի ընդհանուր աղբյուրի հեղինակը՝ ազդվելով Աստվածաշնչից. յոթերորդ դարից սկսած հայկական աղբյուրներում հիշատակվում է Կադմեան նախարարությունը, որի համար այդ հեղինակը նահապետ է հորինել՝ հեմվելով Աստվածաշնչի «Կեդմա» (Ծնն. ԻԵ 15, Ա Սնաց. Ա 31) կամ «Կեդեմ» (Եզեկ. ԻԵ 4, 10) տեղանվան վրա, որ երբայերեւ նշանակում է՝ «արևելք»<sup>1</sup>:

Ըստ Հր. Աճառյանի՝ Կադմոս անունն ասորական ծագում ունի<sup>2</sup>:

Ն. Ադոնցը բխեցնում է Կադմոս անունը kadum («առաջին») բառից, և ըստ նրա՝ Խորենացու «տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդոյն Արամանեկայ» (Ա 10) նշանակում է՝ «տվեց առաջին կամ ավագ որդի Արամանյակին»: Կամ էլ նա ենթադրում է, թե այդ անունը սերում է ասորերեն kasdim ձևից. դա kasd բառի հոգնակին է, որտեղից նաև Kardu-x-oi և Gordu-eni անունների kard հիմքն է<sup>3</sup>:

<sup>1</sup> Г. Халатянц, *Армянский эпос в истории Армении Мовсеса Хоренаци*, Москва, 1896, с. 78-79.

<sup>2</sup> Հ. Աճառյան, *Հայոց անչնանունների քառաբան*, հ. 2, էջ 574:

<sup>3</sup> Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, С-Пб, 1908, с. 418, прим. 3.

Գ. Չահուկյանը Կադմեանք նախարարական տոհմի անվան հետ Խորենացու կապած Կադմոս անվան ծագման երկու հնարավոր բացատրություն է առաջարկել<sup>1</sup>: Ըստ առաջինի՝ այն սերում է սեպագիր արձանագրություններում ավանդված Kadmuhi երկրի անունից. այն պետք է որ խուռական բնակչություն ունեցած լինի, իսկ հունական Կադմոսի հետ զուգադիպությունը պատահական է, «թեև Խորենացին հունական ձևը նկատի է առել»: Մյուս բացատրությունը նմանեցնում է անունը հայասերեն Qadmasa (Qadkusa) քաղաքանվանը և թրակական καδμιλος (κασμιλος, κασμειλος, κασμυλος) դիցանվանը (որից լեզվաբանները բխեցնում են καδμος անձնանունը): Չահուկյանը նշում է նմանությունը նաև հայասերեն մեկ այլ քաղաքանվան՝ Kašmiaha / Qadmaša-ի հետ: Եթե դա պատահական չէ, ապա Կադմոս անունը կարող էր ծագել Հայաստանի կազմում նշանակալից տեղ ունեցած թրակյան տարրից:

Ա. Պետրոսյանը<sup>2</sup>, նշելով արևմտասեմական *qdm* («առաջին», «հին», «արևելք») հիմքը, նաև հնարավոր ծագումը կադմուխիացիներից, որոնք խուռերի խմբերից մեկն էր, նկատում է, որ «ոս» վերջավորությունը վկայում է հունական աղբյուրի մասին՝ համեմատության համար բերելով հարավային Հայաստանի Տավրոս, Չագրոս, Աոնոս, Արտոս, Գրգոս (Գրգուռ) լեռնանունները, որոնք կարող էին սերել հունարենին մոտ սուբստրատային մի լեզվից:

Չհավակնելով որևէ նոր բացատրություն առաջարկել՝ նշենք, որ ինչ ծագում էլ ունենա Հայկի թոռ Կադմոսի անունը, հունական առասպելների հերոսի անվան ազդեցությունն ակնհայտ է:

#### Մովսէս Խորենացի Ա. 10 [33].

Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ:

Գնաց բնակվեց մի լեռան ստորոտում, դաշտավայրում, որտեղ նախկինում ցրված մարդկանցից քչերն էին բնակվում: Հնազանդեցնելով նրանց՝ Հայկն այդտեղ կալվածքում բնակութեան տուն շինեց և ժառանգություն տվեց Արամանյակի որդի Կադմոսին:

#### Մովսէս Խորենացի Ա. 11 [34-36].

Ապա զաւրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետեակ զաւրաց. գայ Հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ... Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբարք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր:

Ապա Տիտանյան Բելն արշավեց նրա դեմ հետեակ զորքերի բազմությամբ: Եկավ Հասավ Հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մերձակայքը: Կադմոսը փախավ Հայկի մոտ... Եվ Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմում ընտիր այրերի, Արամանյակին երկու եղբայրներով կարգադրեց կանգնել աջ կողմում, իսկ Կադմոսին և իր որդիներին ևս երկուսին՝ ձախ կողմում, քանի որ նրանք քաջ տիրապետում էին աղեղին ու սուսերին:

#### Մովսէս Խորենացի Ա. 12 [37].

Զկնի այսորիկ դառնալ ասէ Հայկին ի նոյն տեղի բնակութեան, և Կադմեայ թոռին իւրում բազում ինչս յանկածէ պատերազմին պարգևէ:

Սրանից հետո, ասում է, Հայկը վերադարձավ բնակութեան նույն վայրը և իր թոռ Կադմոսին պատերազմի ավարից շատ ունեցվածք պարգևեց:

<sup>1</sup> Գ. Չահուկյան, «Խորենացու Պատմության առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները», ՊԲՀ, 1981, 3 (48-63), էջ 56:

<sup>2</sup> Армен Петросян, *Армянский эпос и мифология*, Ереван, 2002, с. 197.

Մովսէս Խորենացի Ա 14 [46].

Եւ քանզի զարեւելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարեւելս, և որք ի Կաղմեայ տանէն՝ զԱսորեստանին:

Մովսէս Խորենացի Բ 8 [112-113].

Եւ յարեւելից կողմանէ, զեզերք հայկական խաւսիցս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի Կաղմեայ տանէն:

Սեբէոս Ա [455-456]<sup>1</sup>.

Գայ հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին. և Կաղմոս փախստական գնաց ի Հարք առ հայր իւր ազդ առնել նմա ... Առնու Հայկն զԱրամենակ և զԿաղմոս զորդի իւր ... Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. և չոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, և բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչև ցայժմ: Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ գնա կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում, որդւոյ Արամենակայ եղբար Հարմայի:

Ուխտանէս Ա ԺԵ [461].

Հայկս այս ... ապստամբեալ ի Բելայ՝ գնայ յերկիրն Արարադայ ի կողմն հիւսիսոյ... և կացեալ անդ ժամանակ ինչ, ապա տայ գտեղին Կաղմայ թոռին իւրում, և ինքն գայ ի գաւառն, որ կոչի յիւր անունն Հարք. շինէ զեղ մի, և անուանէ յիւր անունն՝ Հայկաշէն: Յետ այսորիկ ելանէ Բել և գայ ի պատերազմ գնաց (ի վերայ) Հայկին: Զայս իմացեալ քաջին Հայկայ յազդմանէ Կաղմեայ թոռին իւրոյ, ելանէ իւրայնաւքն հանդերձ ի պատերազմ Բելայ:

Որովհետև նա արեւելյան և հարավային ազգերը նվաճել ու հանձնել էր այս երկու ցեղերին, Սիսականներին՝ արեւելքը, իսկ Կաղմոսի տան հաջորդներին՝ Ասորեստանի կողմերը:

Եվ արեւելյան կողմից, հայերեն խոսողների սահմանի մոտ, երկու կողմնակալ մի-մի բյուրմարդկանցով՝ նահապետական տների սերունդներին, Սիսակյանների և Կաղմոսի տներից:

Եկավ հասավ Արարադի երկիրը՝ նրանց հայրենի տունը, որ շինված էր լեռան լանջին: Եվ Կաղմոսը փախավ-գնաց Հարք՝ իր հոր մոտ, նրան լուր տալու ... Հայկը վերցրեց Արամենակին և նրա որդի Կաղմոսին ... Եվ Հայկը վերադարձավ իր տեղը, և Հայկը գնաց գրավեց Արարադի երկիրը և իր տոհմով բնակվեց այնտեղ մինչև այժմ: Եվ մեռնելիս նա իր կալվածքը ժառանգություն տվեց իր թոռ Կաղմոսին՝ Հարմայի եղբայր Արամենակի որդուն:

Այս Հայկը ... Բելից ապստամբելով, գնաց Արարադի երկիրը, հյուսիսային կողմում... Եվ, որոշ ժամանակ մնալով այնտեղ, այդ վայրը տվեց իր թոռ Կաղմոսին: Եվ ինքը գնաց այն գավառը, որն իր անունով կոչվում է Հարք. մի գյուղ շինեց և այն իր անունով կոչեց Հայկաշէն: Դրանից հետո Բելը պատերազմով գնաց Հայկի դեմ: Քաջ Հայկը, իմանալով այս մասին իր թոռ Կաղմոսից, յուրայինների հետ կռվի դուրս եկավ Բելի դեմ:

<sup>1</sup> Սա համարվել է Մեթեոսի երկին ուշ կցված առաջին վեց գլուխներից մեկը՝ Անանունի «Պատմութիւն նախնեաց», որի զուգահեռները Խորենացու «Հայոց պատմության» հետ բացատրվում են ընդհանուր աղբյուրի օգտագործմամբ (Բ. Халатянц, *Армянский эпос в истории Армении Мовсеса Хоренаци*, с. 58-105): Հ. Պողոս Անանյանը (*Մեթեոսի պատմութեան գրքի մասին քննի մը լուսարարութիւններ*, Վիեննա, 1972, էջ 109-134) և Ալեքսան Հակոբյանը («Մեթեոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը և Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը», *ՀԱ*, 2005, էջ 213-270) կարծիք են հայտնել, որ այդ վեց (իսկ ավելի ճիշտ՝ չորս) գլուխները պատկանում են Մեթեոսի գրչին:

Գրիգոր Մագիստրոս 78 (ՁԳ).

Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանըն Հայկայ: / Աճապարեա՛ և փուլթա՛, զի ես Կաղմեանն Արամեան<sup>1</sup>:

Սամուէլ Անեցի 55.

Շինէ տուն կալուածոյ ի լեռնոտան, և տայ Կաղմեայ որդւոյ Արամանեկայ:

Սամուէլ Անեցի 60.

... յարեւելից կողմանէ գերկուս նահապետութիւնս, զՍիսակեանն և որ ի տանէն Կաղմեայ:

Շնորհ. Վիպասան. 547.

Արամանեակ անդրանկացեալ, / Որով Արմէնք մեք կոչեցեալ, / Քանզի յաղթող ազգաց եղեալ / Եւ քաջութեան անուն առեալ: / Եւ ի սմանէ Կաղմոս ծնեալ, / Այն, որ զԲելայն գալ զեկուցեալ, / Ջոր և Հայկինն ծանուցեալ, / Արիաբար զգիմի հարեալ:

Ստեփանոս Օրբ. Դ [54]

Իսկ յարեւելից կողմանէ (Վաղարշակ) կարգէ մեծ և առաջին նահապետութիւն զՍիսական տոհմ, ընդ սմա և զԿաղմեանն:

Ահա քեզ բաժին է ընկել Բելի և Թորգոմյան Հայկի կռիվը: Աճապարի՛ր և փուլթա՛, քանի որ Կաղմոսի ու Արամի տոհմից ես:

Բնակավայր շինեց լեռան ստորոտում և ժառանգություն տվեց Արամանյակի որդի Կաղմոսին:

... արեւելյան մասում երկու նահապետական տուն՝ Սիսակյանների և Կաղմոսի սերունդները:

Արամանյակը (Հայկի) անդրանիկ որդին էր, որի շնորհիվ մենք կոչվում ենք արմեններ, քանզի ազգերի հաղթող ենք եղել և ստացել քաջության անունը: Սրանից ծնվեց Կաղմոսը, որը հայտնեց Բելի գալուստը, ինչին տեղեկանալով՝ Հայկն արիաբար դիմադրեց:

Իսկ արեւելքում Վաղարշակը կարգում է մեծ և առաջին նահապետությունը՝ Սիսական տոհմը, սրա հետ նաև՝ Կաղմյանը:

<sup>1</sup> Սա «Նորին առ որդին իր զարանալ ի պատերազմին հասանելոյ ի չարաբաստ ծերունոյն Նիկալայ. այլ և պարսաւանք անարոյն ծերոյ» բանաստեղծությունն է, մարտակոչ՝ դիմագրավելու Նիկոլայոսի հրամանատարությամբ բյուզանդական հրոսակների ներխուժմանը:

## ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

- Ազաթանգեղոս – Ազաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց*, Բ Հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1289-1735
- ԱՀարոն Վանանդեցի – ԱՀարոն Վանանդեցի, *Պատմութիւն սրբոյ նշանին Նունէի Վրաց տան առաջնորդի, Մատենագիրք Հայոց*, Թ Հատոր, Թ դար, Անթիլիաս-Լիբանան, 2008
- Աղեքսանդրի պատմութիւն Ա, Բ – *Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ*, Հայկական խմբագրութիւններ, աշխատասիրութեամբ Հ. Սիմոնյանի, Երևան, 1989, խմբագրութիւն Ա, Բ
- Անանիա Նարեկացի, Ներբողեան – Անանիա Նարեկացի, *Ներբողեան ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, Մատենագիրք Հայոց*, Ժ Հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009
- Անանիա Շիրակացի – Անանիա Շիրակացի, *Յաղագս կաթին ծրոյ, Մատենագիրք Հայոց*, Դ Հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 733-734, 757-758 (Համառօտ խմբագրութիւն)
- Աշխարհացոյց – Մովսէս Խորենացի, *Աշխարհացոյց, Մատենագիրք Հայոց*, Բ Հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2123-2192
- Առաքել, Լուծումն – Առաքել Սիւնեցի, «Լուծումնք, Յաղագս Սահմանացս Դաւթի», Հետեյալ գրքում՝ *Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթ փրկիսօփայի*, Մադրաս, 1797, էջ 147-658
- Առաքել Սիւնեցի, Քերակ. – Առաքել Սիւնեցի, *Յաղագս քերականութեան Համառուտ լուծումնք*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Լոս Անճելոս, 1982
- Ասողիկ – Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական, Մատենագիրք Հայոց*, ԺԵ Հատոր, Ժ դար, *Պատմագրութիւն*, Երևան, 2011, էջ 617-829
- Արիստիդէս – *Խօսք սրբոյն Արիստիդէայ իմաստասիրի Աթենացոց*, լատին թարգմանութեամբ, Վենետիկ, 1878
- Բարոյախաւս – G. Muradyan, *Physiologus, the Greek and Armenian Versions with a Study of Translation Technique* (Hebrew University Armenian Studies 6), Leuven – Paris – Dudley, MA, 2005
- Բարսեղ, Վեցաւրեայք – Բարսեղ Կեսարացի, *Յաղագս վեցաւրեայ արարչութեան*, աշխատասիրութեամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984
- Բուզանդ – Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց*, Ե դար, Ա Հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 273-428
- Գէորգ. – Գէորգ Լոռեցի, «Տեառն Գէորգեայ Հայոց վարդապետի և Հոգեշնորհ փրկիսօփայի պատասխանի թղթոյն Յովհաննիսի Ասորեոց պատրիարքի», *Գիրք թղթոց*, երկրորդ հրատարակութիւն, աշխատասիրութեամբ Ն. Պողարեանի, Երուսաղէմ, 1994, էջ 624-656
- Գիրք պիտոյից – *Գիրք պիտոյից*, աշխատասիրութեամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993
- Գրիգոր Դար. – *Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ*, հրատարակեց Մեսրոպ վարդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915
- Գրիգոր Լուս., Գանձ. – «ԿԸ. Կանոն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին», *Մատենագիրք Հայոց*, ԺԴ Հատոր, *Գանձարան*, Գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2008
- Գրիգոր Մագիստրոս – Գրիգոր Մագիստրոս, *Թողթք և չափաբերականք*, *Մատենագիրք Հայոց*, ԺԶ Հատոր, ԺԱ դար, Երևան, 2013, էջ 85-385
- Գրիգոր Մագիստրոս, Քերակ. – Գրիգոր Մագիստրոս, *Մեկնութիւն քերականին*, *Մատենագիրք Հայոց*, ԺԶ Հատոր, ԺԱ դար, Երևան, 2013, էջ 386-471
- Գրիգոր Նարեկացի, Ապ. – *Պատմութիւն Ապարանից սբ. խաչին*, *Մատենագիրք Հայոց*, ԺԲ Հատոր, Ժ դար, *Գրիգոր Նարեկացի*, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 913-929
- Գրիգոր Նարեկացի, Մժք. – *Ներբող ի սբ. Յակոբ Մժքնայ բան նուիրական գովեստի*, *Մատենագիրք Հայոց*, ԺԲ Հատոր, Ժ դար, *Գրիգոր Նարեկացի*, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 990-1005
- Գրիգոր Նազ., ճառ 4, 5 – *Sancti Gregorii Nazianzeni Opera, Versio Armeniaca II, Orationes IV et V*, ed. a B. Coulie, Brepols–Turnhout–Leuven, 1999 (Corpus Christianorum, Series Graeca 37, Corpus Nazianzenum 6)
- Գրիգոր Նազ. ի Բա. – Գրիգոր Նազիանզացի, «*Ի Բասիլիոս*». տե՛ս Կ. Мурадян, “Древнеармянский перевод ‘Эпитафии’ Василия Кесарийского,” *Кавказ и Византия* 2, Ереван, 1980, 115-217
- Գրիգոր Տղա, «Բան ողբերգական վասն առնմանն Երուսաղէմի», – Գրիգոր Տղա, *Բանաստեղծութիւններ և պոեմներ*, աշխատասիրութեամբ Ա. Ե. Մնացականյանի, Երևան, 1972
- Դաւիթ Բաղիչեցի – Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ.*, հ. II, Երևան, 1956, էջ 287-378. Դաւիթ Բաղիչեցի (17րդ դ.)

- Դաւիթ Զեյթունցի – Դաւիթ Զեյթունցի, *Մեկնութիւն քերականի*, աշխատասիրութեամբ Ե. Կ. Մելքոնյանի, Երևան, 1981
- Դաւիթ, Պորփ. – Դաւիթ Անյաղթ, *Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի, Համահավաք քննական բնագիրը, Թարգմանութիւնը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրութիւնները* Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1976
- Դաւիթ, Սահմանք – Դաւիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, աշխատասիրութեամբ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960
- Դաւիթ, Ստորոգ. – Դաւիթ Անյաղթ, *Երկասիրութիւնք իրլիստփայականք*, աշխատասիրութեամբ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, 193-300՝ *Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի*
- Դիոն. Թրակ.՝ Քերակ. – Նիկողայոս Ադոնց, *Երկեր Հինգ Հատորով. Գ. Հայերէնագիրտական ուսումնասիրութիւններ*, Երևան, 2008 (լուսապատճէն վերարտադրութիւնը հետեւեալ գրքի՝ *Н. АДОНИЦ, Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, Ադոնցի ուսումնասիրութեան՝ Օ. Վարդապետեանի Հայերէն թարգմանութեամբ), էջ 221-249
- Եսայի Նչեցի, Քերակ. – Եսայի Նչեցի, *Վերլուծութիւն քերականութեան*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Երևան, 1966
- Եզնիկ – Eznik de Kolb, *De Deo*, ed. L. Mariès et Ch. Mercier, Paris, 1959
- Եղիշէ, Գտիչք – *Գտիչք չարեաց հեթանոսաց սրբոյն Եղիշայի, Մատենագիրք Հայոց*, Է Հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 1014
- Եւսեբիոս, Քրոնիկոն Ա, Բ – *Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակականք երկամասնեայ*, աշխատասիրութեամբ Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1818
- Թաղէոսի վկայաբանութիւն – Անանուն, *Վասն վկայաբանութեան Թաղէոսի առաքելոյն, քարոզութեանն և դաշտեանն ի Հայս և կատարման որ ի Քրիստոս, Մատենագիրք Հայոց*, Գ Հատոր, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 5-18
- Թեոն – *Թեոփիեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց*, Հանդիպաղիր Հունարեն բնագրով, աշխատութեամբ Հ. Մանանդյանի, Երևան, 1938
- Թէոփորետոս – Թէոփորետոս Կիւրացի, *Մեկնութիւն Եզեկիէլի մարգարէութեան*, աշխ. Յ. Քեոսեյանի, Երևան, 2000
- Թովմա Արծրունի – Թովմա Արծրունի և Անանուն, *Պատմութիւն Արծրունեաց տան, Մատենագիրք Հայոց*, ԺԱ Հատոր, Ժ դար, *Պատմագրութիւն*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 15-313
- Թովմա Մեծոփեցի – Թովմա Մեծոփեցի, *Պատմագրութիւն*, աշխատասիրութեամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999
- Կարապետ Սասնեցի – Կարապետ եպ. Սասնացոյ, *Ներբողեան յաղագս վարուց և մահուան ս. վարդապետին Մեսրոբայ, Հրատարակեց Մ. Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ*, 1908
- Մառ, Առակք Ոլոմպիանայ (Եզովպոսի առակներ) – Н. Я. Марр, *Сборники притч Вардана*, ч. 1, СПб, 1893, сс. 429-510
- Մեկնութիւն Սահմանաց Դաւթի – *Մատենագիրք Հայոց*, ԺԷ Հատոր, ԺԱ դար, Երևան, 2014, էջ
- Միխայէլ Ասորի Ա – *Տեառն Միխայէլի պատրիարքի ասորոց ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1870
- Միխայէլ Ասորի Բ – *ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի ասորոց պատրիարքի*, Երուսաղէմ, 1871
- Մինաս Համդեցի – *Մինաս վարդապետի Համդեցոյ Ազգաբանութիւն Հայոց*, Վաղարշապատ, 1870
- Մխիթար Այրիվանեցի – Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց*, Ի լոյս էած Մ. Էմին, Մոսկուա, 1861
- Մովսէս Խորենացի – *Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տիգրիս, 1913
- Մովսէս Կաղանկատուացի – Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց*, ԺԵ Հատոր, Ժ դար, *Պատմագրութիւն*, Երևան, 2011, էջ 27-437
- Մովսէս Սիւնեցի – Մովսէս Սիւնեցի, *Պատասխանի թղթոյն Սահակայ, Մատենագիրք Հայոց*, Դ Հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 437-444
- Յովհաննէս Դրասխ. – Յովհաննէս Դրասխանակերտցի, *Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց*, ԺԱ Հատոր, Ժ դար, *Պատմագրութիւն*, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 315-615
- Յովհաննէս Երզնկացի, Ճառք – Յովհաննէս Երզնկացի, *Մատենագրութիւն*, Հ. Ա., *Ճառեր և քարոզներ*, բնագրերը Հրատարակութեան պատրաստեցին Արմենուհի Երզնկացի Տէր-Սրապեանը և Էզովպոյ Բաղդասարեանը, Երևան, 2013
- Յովհաննէս Երզնկացի, Քերակ. – Յովհաննէս Երզնկացի (1230-1298), *Հավաքումն մեկնութեան քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Լոս Անճելըս, 1983
- Յովհաննէս Ծործորեցի, Քերակ. – Յովհաննէս Ծործորեցի (1283-1340), *Համառատ տեսութիւն քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Լոս Անճելըս, 1984



- Յովհաննէս Որոտնեցի, Հաւաքումն – Օ. Վարդապարտյան, «Հովհաննէս Որոտնեցու Հաւաքումն յայտնաբերանութեան ի Փիլոնէս իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան»», *Բանբեր Մատենադարանի*, 17, 2006, էջ 213-259
- Յովհաննէս Որոտնեցի, ձառք – Սուրբ Հովհաննէս Որոտնեցի, *Մեկնողական և իմաստասիրական ճառեր*, քննական բնագրերը և առաջաբանը Անուշ Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009 (Եկեղեցական մատենագրություն Դ)
- Յովհ. Սարկաւազ, Առ ձագն որ կոչի սարեկ – Ա.Գ. Աբրահամյան, *Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը*, Երևան, 1956
- Յովհաննէս Քոնեցի – Յովհաննէս Քոնեցի, *Յաղագս քերականին*, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, ներածութիւնը Լ.Ս. Խաչիկյանի և Ս.Ա. Ավագյանի, Երևան, 1977
- Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց – ձեռ. ՄՄ 1526 (1293-1294 թթ.)
- Ներսէս Պալիանենց – Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ.*, հ. II, Երևան, 1956, էջ 173-194. Ներսէս Պալիանենց (17-րդ դ.)
- Նոննոս – (Nonnos), *Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz*, herausgegeben von A. Manandian, Marburg, 1903
- Շնորհ. Վրպասան. – *Ներսեսի Շնորհալոյ Բանք չափաւ*, Վենետիկ, 1928, էջ 542-608՝ «Վրպասանութիւն նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ»
- Ուխտանէս – Ուխտանէս Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց*, ԺԵ հատոր, Ժ դար, *Պատմագրութիւն*, Երևան, 2011, էջ 439-616
- Պատմութիւն Հռիփսիմեանց – Մովսէս Խորենացի, *Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, Մատենագիրք Հայոց*, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2193-2196
- Պղատոն, Տիմէոս, Եւթիփոնոն – *Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք. Եւթիփոնոն, Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմէոս*, Վենետիկ, 1877
- Պղատոն, Օրին., Մինոս – *Պղատոնի տրամախօսութիւնք յաղագս օրինաց և Մինովս*, Վենետիկ, 1890
- Պորփ. – Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւթ, *Վենետիկ* 1932, էջ 133-156, «Ներածութիւն Պորփիրի»
- Սամուէլ Անեցի – Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ*, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, Առաջաբանը՝ Կարէն Մաթևոսեանի, Երևան, 2011
- Սարգիս Կունդ, Կաթ. – Սարգիս Կունդ, *Մեկնութիւն կաթողիկեայ թղթոց*, աշխ. Հ. Քյոսեյանի, խմբ. Գ. Տեր-Վարդանյանի, Էջմիածին, 2003 (Նոր կտակարանի գրքերի մեկնութիւններ 17)
- Սարկաւազ, Լուծմունք – Յովհաննէս Սարկաւազ իմաստասէր, *Լուծմունք «Սահմանաց գրոց»*, Երևան, 2004
- Սեբէոս – Սեբէոս, *Պատմութիւն, Մատենագիրք Հայոց*, Դ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 449-565
- Ստեփանոս Սիւնեցի, Գերմ. – Ստեփանոս Սիւնեցի, *Յաղագս ժողովոյն... պատասխանի թղթոյն հոռոմոց Գերմիանոսի պատրիարքի Կոստանդնուպոլսի, Մատենագիրք Հայոց*, Զ հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 521-542
- Ստեփանոս Սիւնեցի, Եզեկ. – Ստեփանոս Սիւնեցի, *Պատճառք և թելադրութիւն Ստեփանոսի Իմաստասիրի առաջի տեսչանն Եզեկիէլի, Մատենագիրք Հայոց*, Զ հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 130-155
- Ստեփանոս Օրբ. – Ստեփանոս Օրբելեան, *Պատմութիւն նահագին Սիսական*, ի լոյս ընծայեաց Կարապետ Շահնազարեանց, ի գործատան Կ. Կ. Շահնազարեանց, Թիֆլիս, 1910
- Սոկրատէս – *Սոկրատայ Աքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն*, Վաղարշապատ, 1897
- Վարդան Այգեկցի – Ն. Մառ, *Ժողովածոյք առակաց Վարդանայ*, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894
- Վահրամ Բաբունի, Ստորոգ. – Վահրամ Բաբունի, *Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտէլի*, համահավաք քննական տեքստը Գ. Գրիգորյանի, Երևան, 1967
- Վանական վարդապետ, ձեռ. ՄՄ 5611
- Վարդան, Աշխարհացոյց – *Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի*, աշխատասիրութեամբ Հ. Պէրպէրեանի, Փարիզ, 1960
- Վարդան, Քերակ. – Վարդան Արևելցի, *Մեկնութիւն քերականի*, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Երևան, 1972
- Վարդան, Հաւաքումն – *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի*, Վենետիկ, 1862
- Վարդան, ձառք – Վարդան Արևելցի, *ձառքն ներբողեանք* (Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրութիւններ Բ), Երևան, 2000

- Վարք Անտոնի – «Վարք սրբոյն Անտոնի անապատականի», *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց*, հատոր Դ, Վենետիկ, 1813 էջ 57-102
- Վրթանէս Քերթող – Վրթանէս Քերթող, *Յաղագս պատկերամարտից, Մատենագիրք հայոց*, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 493-500
- Փիլոն, տեսական, Ժ բան – *Փիլոնի Հեբրայեցոյ ճառք որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ*, Վենետիկ, 1892
- Փիլոն, լին. – *Փիլոնի Եբրայեցոյ Մեկնութիւն ծննդոց և ելից, ճառք ի Սամփոն, ի Յովնան, աշխատասիրութեամբ Մ. Աւգերեանց*, Վենետիկ, 1826
- Փիլոն, Նախախնամութիւն, Լիւս. – *Փիլոնի Եբրայեցոյ Ա, Բ Յաղագս նախախնամութեան, Գ Յաղագս կենդանեաց*, աշխատասիրութեամբ Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1822
- Փիլոն Տիրակացի – Փիլոն Տիրակացի, *Փամանակագրութիւն, Մատենագիրք հայոց*, Ե հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 897-969
- Օձնեցի, Ատենաբանութիւն – Յովհան Օձնեցի, *Ատենաբանութիւն, Մատենագիրք հայոց*, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 21-36
- Օձնեցի, Պաւղիկ. – Յովհան Օձնեցի, *Ընդդէմ Պաւղիկեանց, Մատենագիրք հայոց*, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 37-36
- Ael. Var. Hist. – *Claudii Aeliani de natura animalium libri xvii, varia historia, epistolae, fragmenta*, vol. 1, ed. R. Herscher, Graz, 1991
- Aesch. Pers., Th. – *Aeschyli tragoediae*, ed. G. Murray, Oxford, 1960, pp. 53-95: *Persae*, 155-200: *Septem contra Thebas*
- Aesop. Fab. – *Corpus fabularum Aesopicarum*, vols. 1.1, 1.2, ed. Hausrath & H. Hunger, Leipzig, 1959, 1979
- Agath. – *La version grecque ancienne du livre arménienne d' Agathange*, edition critique par G. Lafontaine, Louvaine-la-Neuve, 1973
- Alex. α – *Historia Alexandri Magni - recensio vetusta*, ed. W. Kroll, Berlin, 1926
- Alex. β – *Der Griechische Alexanderroman – Rezension b*, ed. L. Bergson, Stokholm, 1965
- Alex. Rec. Byz. Poet. – *Das byzantinische Alexandergedicht nach dem codex Marcianus 408* ed. S. Reicmann, Meisenheim am Glan, 1963
- Aphth. – *Aphthonii Sophistae Progymnasmata*, Ch. Walz. *Rhetores Graeci*, vol. I, Stuttgartiae, 1832, pp. 55-120
- Ap. Rhod. Argon. – *Apollonii Rhodii Argonautica*, ed. H. Fraenkel, Oxford, 1970
- Apollod. – Apollodorus, *The Library*, with an English Translation by sir James George Frazer, in two volumes, Cambridge mass. – London (Loeb Classical library)
- Apollod. E – Ապոլլոդորոսի «Դիցաբանական գրադարանի» չպահպանված վերջին հատվածի համառոտ տարբերակը (Epitome), նույն գրքում
- Arist. Mete. – *Aristotelis metereologicorum libri quattuor*, ed. F.H. Fobes, Hildesheim, 1967
- Aristoph. Ran. – *Aristophane*, vol. 4, Paris, 1967, pp. 85-157: *Ranae* (Les Belles Lettres)
- Arrian. Alex. – *Flavii Arriani quae exstant omnia*, ed. A.G. Roos, vol. 1, Leipzig, 1967: *Alexandri Anabasis*
- Athen. – *Athenaei Naucratis Deipnosophistarum libri XV*, 3 vols, ed. G. Kaibel, Stuttgart, 1965-1966
- Call. Lav. Pall. – Callimachus, vol. 2: *In lavacrum Palladis (hymn 5)*, ed. R. Pfeiffer, Oxford, 1953
- Cat. – *The Poems of Catullus*, ed. H. Gregory & Z. Gay, New York: Covici-Friede, 1931
- Clem. Alex. Protr. – Clément d'Alexandrie, *Le protreptique*, ed. C. Mondésert, Paris, 1949 (*Sources chrétiennes* 2)
- Dav. Prol., in Porph. – A. Busse, *Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, Berolini, 1904
- Dav. in Cat. – A. Busse, *Eliae (olim Davidis) in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias Commentaria*, Berolini, 1900
- Dict. Cret. – Dictys Cretensis, *Ephemeridi belli Trojani a Lucio Septimio ex graeco in latinum sermonem translati*, ed. W. Eisenhut. Leipzig: Teubner, 1958
- Diod. Sic. – *Diodori bibliotheca historica*, 5 vols., ed. F. Vogel & K.T. Fischer, Leipzig, 1888-1906
- Dion. Halic. Antiq Rom. – *Dionysii Halicarnasei antiquitatum Romanarum quae supersunt*, 4 vols., ed. K. Jakoby, Leipzig, 1885, 1888, 1891, 1905
- Epiph. Anac. – Epiphanius, Bände 1-3: *Ancoratus und Panarion*, ed. K. Holl, Bd. 1, Leipzig, 1915: *Anacephalaeosis*
- Eratosth. Catast. – *Pseudo-Eratostheni Catasterismi*, ed. A. Olivieri, Leipzig, 1897 (Mythographi Graeci 3.1)
- Eur. Ba., Hec., Herc., Ion, Iphig. Taur., Med., Phoen. – *Euripidi fabulae*, vol. 1, Oxford, 1984, pp. 93-15: *Medea*, pp. 339-398: *Hecuba*, vol. 2, Oxford, 1981, pp.117-174: *Hercules*, pp. 243-304: *Iphigenia Taurica*, pp. 307-373: *Ion*, vol. 3, Oxford, 1994, pp. 83-179: *Phoenissae*, p. 291-351: *Bacchae*

- Eus. *Praep. Evang.* – Eusebius Werke, Band 8: *Die Praeparatio evangelica*, ed. K. Mras, Berlin, 1954-1956
- Eustath. in Hom. *Il.* – *Eustathii archiepiscopi Thessalonicensis commentarii ad Homeri Iliadem pertinentes*, ed. M. Van der Valk, vols. 1-4, Leiden, 1971-1987
- Frazer – Apollodorus, *The Library*, with an English Translation by sir James George Frazer, Cambridge Mass. – London, vol. 1, 1967 (Loeb Classical library), vol. 2, 1963
- Greg. Naz. in Bas. – Grégoire de Nazianze, *Discours funèbres en l' honneur de son frère Césaire et de Basile de Césarée*, ed. F. Boulenger, Paris, 1908
- HH Dem. – *The Homeric Hymns*, eds. T. W. Allen, W.R. Halliday & E.E. Sikes, Oxford, 1936, pp. 2-20: *In Cererem*
- Herodot – Hérodote, *Histoires*, 9 vols., ed. F.E. Legrand, Paris, 1960-1968
- Hes. fr. – "A New Hesiodic Fragment", ed. R. Renehan, *Classical Philology*, 21, 1986, p. 221
- Hes. *Op.* – *Hesiodi opera*, ed. F. Solmsen, Oxford, 1970, pp. 49-85: *Opes et dies*
- Hes. *Theog.* – Hesiod, *Theogony*, ed. M.L. West, Oxford, 1966
- Hesych. – *Hesychii Alexandrini Lexicon*, ed. K. Latte, vols. 1-2, Copenhagen, 1953, 1966
- Hippol. *Chron.* – Hippolytus, *Chronicon, Hippolytus Werke*, vol. 4, ed. R.Helm, Berlin, 1955 (*Die griechischen christlichen Schriftsteller* 46)
- Hom. *Il.* – *Homeri Ilias*, ed. T.W. Allen, vol. 2-3, Oxford, 1931
- Hom. *Od.* – *Homeri Odyssea*, ed. P. von der Mühl, Basel, 1962
- Hor. *Carm.* – Horatius, *Carmina*, ed. Fr. Vollmer. Teubner: Leipzig, 1917
- Hyg. *Fab.* – Hyginus, *Fabulae*, ed. Marshall, Leipzig, 1993
- Luc. *Demon.* – Lucian, vol. 1: *Demonax*, ed. E.M. Harmon, Cambridge Mass., 1961
- Marm. Par. – *Das Marmor Parium*, Herausgegeben und erklärt F. Jacoby, Berlin: Weidmannsche Buchhandlung, 1904
- Nonnos – *Pseudo-Nonniani in iv orationes Gregorii Nazianzeni commentarii*, ed. N. Smith, Brepols-Turnhout, 1992 (Corpus Christianorum. Series Graeca 27)
- Oros. *Hist.* – *Pauli Orosii Historiarum adversum paganos libri VII*, recensuit et commentario critico instruxit C. Zangemeister, Vindobonae, 1882
- Ov. *Ars Am.* – Ovidius Naso, *Ars amatoria*, ed. R. Ehwald, Oxford, 1907
- Ov. *Fasti* – P. Ovidius Naso, *Tristia, Ibis, Ex Ponto libri, Fasti, Halieutica*, ex recognitione R. Merkelii, Lipsiae, 1864, pp. 201-338: *Fasti*
- Ov. *Met.* – P. Ovidius Naso, *Metamorphoses*, ed. H. Magnus, Gotha, 1892
- PG 35 – *Patrologiae graecae cursus completus*, ed. Migne, tomus 35, pp. 532-664: Gregorius Nazianzenus, *Contra Julianum imperatorum* 1 (orat. 4), pp. 664-720: *Contra Julianum imperatorum* 2 (orat. 5)
- Phil. *Cont., Decal., Spec.* – *Philonis Alexandrini opera quae supersunt*, ed. L. Cohn, vol. 4, Berlin, 1962, 269-307: De decalogo; vol. 5, Berlin, 1962, 1-265: De specialibus legibus; vol. 6, Berlin, 1962, 46-71: De vita contemplativa
- Phil. *Prov.* – Philo, vol. 9, ed. by F.H. Colson, Cambridge. Massachusetts, 1967, pp. 454-506: *De providentia* (Fragments)
- Phil. *QuGen* – *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca* (Les œuvres de Philon d'Alexandrie 32), ed. F. Petit, Paris, 1978
- Philostr. *Her.* – *Flavii Philostrati opera*, vol. 2: *Heroicus*, ed. S.L. Kayser, Leipzig, 1964
- Philostr. *Imag.* – *Philostrati majoris Imagines*, ed. O. Benndorf & K. Schenkl, Leipzig, 1893
- Phot. *Bibl.* – Photius, *Bibliothèque*, 8 vols., ed. R. Henry, Paris, 1959-1977
- Pind. *Fr. Dith., Isth., Nem., Ol., Pyth.* – *Pindari carmina cum fragmentis*, ed. H. Maehler, Leipzig, 1971, pp. 2-58: *Olympia*, pp. 59-121: *Pythia*, pp. 122-162: *Nemea*, pp. 163-190: *Isthmia*, pp. 72-88: *Fragmenta, Dithyrambi*
- Plat. *Euthph., Leg., Tim.* – *Platonis opera*, vol. 1: *Euthyphro*, ed. J. Burnet, Oxford, 1967, vol. 5: *Leges*, ed. J. Burnet, Oxford, 1967, vol. 4: *Timaeus*, ed. J. Burnet, Oxford, 1968
- Plut. *Lyc.* – *Plutarch's Lives*, vol. 1, ed. B. Perrin, Cambridge, Mass., 1967, pp. 204-302: *Lycurgus*
- Plut. *De mus.* – *Plutarchi moralia*, ed. K. Ziegler, vol. 6.3, Leipzig, 1966, pp. 1-37: *De musica*
- Plut. *Thes.* – *Plutarchi vitae parallelae*, vol. 1.1, ed. K. Ziegler, Leipzig, 1969, pp. 1-35: *Thesaeus*
- Porph. – *Porphirii Isagoge et in Aristotelis categorias commentarium*, ed. Adolfus Busse (*Commentaria in Aristotelem Graeca*, IV.2), Berolini, 1887
- Poprph. *VP* – *Porphirii philosophi platonica opuscula selecta*, ed. A. Nauck, Leipzig, 1886, pp. 17-52: *Vita Pythagori*

- Procl. *Chrest.* – *Recherches sur la Chrestomathie de Proclus*, vol. 4, ed. A. Severyns, Paris, 1963 (Les Belles Lettres), pp. 67-74, 77-85, 87-97: *Chrestomathia (epitome)*
- RE – Pauly & Wissowa, *Realencyclopädie der classischen Altertumswissenschaft*
- Quint. Smyrn. – Quintus Smyrnaeus, *Posthomerica*, ed. F. Vian, 3 vols., Paris, 1963-1969 (Les Belles Lettres)
- Scalig. – Եվսեբիոսի «Քրոնիկոնի» առաջին մասի՝ Ժողեֆ Սկալիգերի վերականգնած տարբերակից<sup>1</sup> մեջբերած հատվածներին վերաբերող Ավգերյանի նշումը
- Sch. Ap. Rhod. *Argon.* – *Scholia in Apollonium Rhodium vetera*, ed. K. Wendel, Berlin, 1974
- Sch. Dion. Per. – *Scholia in Dionysii periegetae orbis descriptionem (scholia vetera)*, in: *Geographi Graeci minores*, Hildesheim, 1965, vol. 2, pp. 428-457
- Sch. Eur. *Hec., Or., Androm.* – *Scholia in Euripidem (Scholia vetera)*, ed. 2 vols., Berlin, 1966, vol. 1, pp. 10-91: *In Hecubam*, pp. 94-241: *In Orestem*, vol. 2, pp. 247-322: *In Andromacham*
- Sch. Hom. *Il.* – *Scholia in Iliadem (scholia vetera)*, in: *Homeri Ilias*, ed. K.G. Heyne, 2 vols., Oxford, 1834
- Sch. Plat. *Leg., Tim.* – *Scholia in Platonem (scholia vetera)*, ed. W.C. Greene, Haverford, Pennsylvania, 1938, pp. 296-380: *Leges*, pp. 277-289: *Timaeus*
- Sen. *Her. Fur., Her. Oet.* – *L. Annaei Senecae Tragoediae*, recensuerunt R. Peiper & G. Richter, Lipsiae, 1867, p. 1-56: *Hercules furens*, pp. 365-454: *Hercules Oeteus*
- Serv. Verg. *Aen.* – *Servii Grammatici qui fertur in Vergilii carmina commentarii*, ed. G. Thilo & H. Hagen, 3 vols., Leipzig: Teubner, 1881
- Sibyl. – *Die Oracula Sibyllina*, ed. J. Geffcken, Leipzig, 1902 (*Die Griechischen christlichen Schriftsteller* 8)
- Socr. *HE* – *Sokrates Kirchengeschichte*, Herausgegeben von G. Ch. Hansen, Mit Beiträgen von M. Širinjan, Berlin, 1995
- Soph. *Trach.* – *Sophocle*, ed. A. Dain & P. Mazon, vol. 1, Paris, 1967 (Les Belles Lettres), pp. 14-60: *Trachinae*
- Stat. Achil. – Statius, *Achilleid*, ed. O. A. W. Dilke, Cambridge: The University Press, 1954
- Strabo – *Strabonis Geographia*, 3 vols., ed. A. Meineke, Graz, 1969
- Suid. – *Suidae Lexicon*, 4 vols., ed. A. Adler, Stuttgart, 1967-1871 (*Lexicographi Graeci* 1.1-1.4)
- Sync. – Georgius Syncellus, *Ecloga chronographica*, ed. A.A. Mosshammer, Leipzig, 1984
- Theodoretus, in *Ez.* – *Theodoreti Cirensis Interpretatio in Ezechielem*, PG 81
- Theoc. *Id.* – Theocritus, *Idyllia*, ed. A.S.F. Gow, Cambridge, 1965
- Theon – Aelius Theon, *Progymnasmata*, texte établi par M. Patillon, avec l'assistance, pour l'Arménien de G. Bolognesi, Paris, 1997 (Les Belles lettres)
- Tzetz. *Sch. Lyc.* – *Scholia in Lycophronem (scholia vetera et recentiora partim Isaac et Joannis Tzetzae)*, in: *Lycophronin Alexandra*, vol. 2, ed. E. Sheer, Berlin, 1958
- Verg. *Aen.* – Vergil: *Aeneid*, ed. S.J. Harrison, with Introduction, Translation, and Commentary, Oxford 1991
- Verg. *Ge.* – Publius Vergilius Maro, *Georgicon*, ed. J.B. Greenough, 1900
- Xen. *Rep. Lac.* – *De republica Lacaedemoniorum*, ed. E.C. Marchant, in *Xenophontis opera omnia*, vol. 5, Oxford, 1969
- Борухович – В.Г. Борухович, “Античная мифология и ‘Библиотека’ Аполлодора” (Приложение), в кн.: Аполлодор, *Мифологическая библиотека*, издание подготовил В. Г. Борухович, Ленинград: Наука, 1972 (Литературные памятники), с. 108-109
- МС – *Мифологический словарь*, гл. ред. Е.М. Мелетинский, Москва: Советская энциклопедия, 1990

<sup>1</sup> *Thesaurus temporum, Eusebii Pamphili Caesariae Palaestinae episcopi Chronicorum canonum*, Amstelodami, 1606 գրքում Ժողեֆ Սկալիգերն Եվսեբիոսի «Քրոնիկոնի» երկրորդ մասը կազմող ժամանակագրական աղյուսակների՝ Հիերոնիմոսի լատիներեն քարզմանության և իր հայտնաբերած հունարեն բեկորների հիման վրա վերականգնել է հունարեն բնագիրը:

**ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ  
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Համակարգչային ձևավորումը՝  
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ**